Հ. ԿՈՐԱԿՈՍՅԱՆ

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

9(С)16
Ա-53

Ֆ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

(XIX դարի 70-ական թթ.)

8917

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—1978

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հարյուր տարի առաջ բալկանյան սլավոններ-ի հակաթուրքական պայքարի նոր պոռթկումը Արևելյան Ճգնաժամը և 1877—1878 թվականներ-ի ռուս-թուրքական պատերազմը լայն արձագանք գտան հայ ժողովրդի մոտ թե՛ Արևելյան, թե՛ Արևմտյան Հայաստանում։ Այդ իրադարձությունները հսկայական դեր խաղացին հայ ժողովրդի հակասուլթանական ազգային-ազատագրական պայքարի վերընթացի, նրա քաղաքական ինքնաճանաչման, սեփական իրավունքները պաշտպանելու չափազանց բարդ պրոցեսում։ Ռուսական զենքի օգնությամբ արևմտահայությունն ազատագրելու, Արևելյան Հայաստանի հետ միավորվելու, մի միասնական տարածքի վրա համախմբվելու ձգտումը զորեղ լիցք ստացավ. թևակոխեց իր զարգացման նոր փուլը։ Ամբողջ խորությամբ նորից դրսևորվեց հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը։

Սակայն այն ժամանակվա պատմական իրադրության, միջազգային ասպարեզում ուժերի որոշակի փոխհարաբերության հետևանքով միայն Ռուսաստանին չէր վերապահված կտրելու գորդյան հանգույցը, ասելու վճռական խոսքը։ Արևելյան հարցի շուրջը ծավալված կատաղի մրցապայքարում վճռական դեր ունեին Եվրոպայի մեծ

տերությունների կառավարությունները, արևմտաեվրոպական դիվանագիտությունը, որոնք գաղութատիրական, նվաճողական քաղաքականություն էին վարում, խոչընդոտում Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ազատագրմանը։ Արևմտահայության վիճակի բարենորոգման, օսմանյան տիրապետությունից ազատագրվելու հարցը՝ «Հայկական հարցը», մուտք գործեց միջազգային մեծ քաղաքականության ոլորտը, դարձավ դիվանագիտության քննարկումների առարկա, և նրա լուծումը խճճվեց միջպետական ախոյանության ու հակասությունների ոստայնում։

Բուրժուական դիվանագիտությունը հայկական հարցն արծարծում էր միայն Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու, ռազմաքաղաքական, տնտեսական օգուտներ քաղելու միտումով, բայց երբեք հայ ժողովրդի ազատագրությանը նպաստելու համար։ Ինչպես հաստատվեց պատմական փորձով, հայ ժողովրդի փրկությունը կապված էր Ռուսաստանի դեմոկրատական, առաջադիմական ուժերի, հեղափոխական պրոլետարիատի պայքարի ու հաղթանակի հետ։

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս մենագրության մեջ փորձել ենք վեր հանել և լուսաբանել միջազգային իրադրության, թուրքական իրականության այն պրոբլեմները, հարցերը, դեպքերի ընթացքը և դեմքերի գործունեությունը, որոնք առնչվում են արևմտահայության քաղաքական ճակատագրին, հայկական հարցի շուրջը դիվանագիտության գործողություններին։

Միջազգային հարաբերությունները ժողովուրդների, պետությունների միջև քաղաքական, տնտեսական, իրավական, ռազմական, կուլտուրագաղափարական փոխհարաբերությունների մի բարդ ու հակասական ամբողջություն են։ Քննարկվող թեման ազնրվում է Ռուսաստանի-

արևմտաեվրոպական տերությունների և Օսմանյան կայսրության դիվանագիտական փոխհարաբերություններին։ Մենք ջանացել ենք պատմական այդ ժամանակահատվածին բնորոշ խնդիրների բարդ կծիկի մեջ, միջազգային քաղաքականության ոլորտում վեր հանել հայկական հարցի շուրջը կատարվածը։ Ամենևին հավակնություն չունենք սպառիչ, վերջին խոսքն ասելու այն բոլոր հարցերի վերաբերյալ, որոնք արծարծվել են մենագրության մեջ, մանավանդ որ թեմայի տարբեր ասպեկտները քննարկվել և լուսաբանվել են բազմաթիվ ուսումնասիրություններում։

Թե որքանով է հաջողվել իրականացնել մեր նպատակադրումը, թող դատեն մասնագետները, ընթերցողները, որոնց դիտողությունները շնորհակալությամբ հաշվի կառնենք թեմայի հետագա ուսումնասիրության ընթացքում։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Արևելյան հարցի պատմությունից։ Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի վերելքը 1875—76 թթ.։ Ապստամբությունները Բոսնիայում, Հերցեգովինայում և Բուլղարիայում։ Ռուսաստանի օգնությունը սլավոնական ժողովուրդներին։ Արևմտահայության ծանր վիճակը։ Բալկանների իրադարձությունների ազդեցությունը հայ ժողովրդի ազատագրական ոգորումների վրա։ Հայ ժողովրդի ավանդական ռուսական կողմնորոշման նոր փուլը։ **«Նոր օսմանները» ճնշված ժողովուրդների իրավունքների** կատաղի հակառակորդներ։ Անգլիան և արևելյան ճգնաժամը։ Բիքոնսֆիլդի կառավարությունը Օսմանյան կայսրության պաշտպանի դերում։ Ավստրո-Հունգարիայի քաղաքականությունը Բալկաններում։ Միջազգային դիվանագիտության գործողությունները արևելյան ճգնաժամի պահին։ Հայկական հարցը դիվանագիտական արծարծման խանձարուրում։

Դարեր շարունակ արևելյան բռնակալությունների հարվածներից բզկտված հայ ժողովուրդը XIX դար էր հասել ապրելու և գոյատևելու համար հերոսական ոգորումների, մահու և կենաց հիգերի շնորհիվ։ Արևմտյան Հայաստանը հենում էր սուլթանական Թուրքիայի, իսկ Արևելյան Հայաստանը՝ շահական Պարսկաստանի բռնակալական լծի տակ։ Հայ ժողովրդի հեռատես զավակներն իրենց հայրենիքի փրկության խնդիրը վաղուց ի վեր կապում էին Հյուսիսի՝ Ռուսաստանի, հովանավորության և պաշտպանության հետ։ Ռուսաստանն էր համարվում այն փրկարար ուժը, որն արևելյան բռնատիրական կարգերի ճանկերից կարող էր ազատել, համաշխարհային քաղաքակրթությանը հաղորդակից դարձնել և առաջընթացի ափ դուրս բերել յաթաղանի հարվածներից նվաղող հայ ժողովրդին։ Ցարական Ռուսաստանի արևելյան քաղաքականությունն օբյեկտիվորեն համընկնում էր Անդրկովկասի ժողովուրդների, առանձնապես հայ ժողովրդի ձգտումների հետ։

Անկախությունից և պետականությունից զուրկ հայ ժողովուրդը չէր կարող միջազգային հարաբերություններում, դիվանագիտության պրակտիկայում սուբյեկտ հանդիսանալ։ XIX դարի սկզբից Հայաստանը միջազգային դիվանագիտությանն առնչվեց, դիվանագիտական հարաբերությունների օբյեկտ դարձավ առաջին հերթին Պարսկաստանի և Օսմանյան կայսրության հետ Ռուսաստանի պետական հարաբերությունների միջոցով։ 1828 թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրով պատերազմում պարտված պարսից շահը Ռուսաստանին զիջեց Երևանի և Նախիջևանի խանությունները։

Այս իրադարձությունը հայ ժողովրդի համար ունեցավ բախտորոշ նշանակություն, նրա հետագա զարգացման գործում առաջադիմական դեր խաղաց։ Հայության մի հատվածին հնարավորություն ընձեռվեց անհամեմատ խաղաղ պայմաններում ապրել ու գոյատևել ռուսական պետության հովանու ներքո։ Հիմք դրվեց Ռուսահայաստանին։ Նա հաղորդակից դարձավ ռուսական մեծ մշակույթին և առաջադիմական շարժումներին, մեկընդմիշտ փրկվեց իր գլխին կախված ավանդական սրից։ Հայությունն ազդվին հակվեց Ռուսաստանի կողմը, նրա մեջ գտավ իր ֆիզիկական գոյության երաշխիքը։

Ահա թե ինչու այսօր մեր հանրապետության աշխատավորությունը երախտագիտության խոր զգացումով է նշում Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-

ամյակը, մեծարում և հավերժացնում է հիշատակն այն գործիչների, ովքեր ջանացին ու պայքարեցին հայ ժողովրդի փրկության, ռուս ժողովրդի հետ նրա հավերժական դաշինքի համար։

Հարյուր հիսուն տարվա պատմության բարձունքից ավելի բյուրեղացած, առավել հստակ է երևում այդ ակտի մեծագույն նշանակությունը մեր ժողովրդի պատմական ճակատագրում։ Անհերքելի ճշմարտություն է, որ ռուսական պետության սահմաններում գոյավորված Ռուսահայաստանն է այսօր դարձել Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն, հայության հայրենիքն իր հաստատուն ներկայով և պայծառ գալիքով։

Այլ ընթացք ունեցավ Օսմանյան կայսրությանը ենթակա արևմտահայության պատմական ճակատագիրը։ XIX դարի սկզբին Օսմանյան կայսրության սահմաններում, գլխավորապես Արևմտյան Հայաստանում, իրենց պապենական հողերի վրա ապրում էին ավելի քան 3 միլիոն հայեր։ Դա XIX դարի սկզբին էր։ Իսկ եթե հաշվենք ժողովուրդների բնականոն աճի նվազագույն նորմաներով, այժմ պետք է լիներ... Բայց Թուրքիայում այսօր կա 100—150 հազար հայություն։ Տասնամյակների ընթացքում իրականացված զանգվածային կոտորածները թուրքական բռնակալ կառավարողներն ավարտեցին իմպերիալիզմի դարաշրջանում առաջին հրեշավոր գենոցիդով։ Արևմտահայ ժողովուրդը բնաջնջվեց, տեղահանվեց, ցաքուցրիվ արվեց։ Սա է Թուրքիա—Ռուսաստան պատմական զուգահեռների գլխավոր տարբերությունը, սա է պատմության դասը։ Սա պետք է լինի XIX դարի ամբողջ ընթացքի, XX դարի առաջին երկու տասնամյակի միջազգային դիվանագիտության հետ հայ ժողովրդի քաղաքական առնչության պատմության ուսումնասիրության ելակետը։

XIX դարի առաջին տասնամյակներից ռուս-թուրքական պետական հարաբերություններում, այնուհետև Օսմանյան կայսրություն—եվրոպական պետություններ դիվանագիտական ակտերում սկզբում հիշատակվում էին հայկական տարածքները, հետո միայն՝ հայերը, Հայաստանը։ Հայաստանը միջազգային իրավունքի սուբյեկտ չէր, այլ մեծ տե-

բությունների ռազմական բախումների, դիվանագիտական մրցապայքարի օբյեկտ։

1829 թ. սեպտեմբերին Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև Ադրիանապոլսում կնքված պայմանագիրը վերաբերում էր նաև Հայաստանին։ Այդ դիվանագիտական փաստաթղթի 4-րդ հոդվածով Թուրքիան ճանաչում էր Երևանի և Նախիջևանի միացումը Ռուսաստանին, վերջինիս էին անցնում Ախալքալաքի և Ախալցխայի շրջանները։ Թե՛ ռուս-պարսկական, թե՛ ռուս-թուրքական պատերազմների ժամանակ հայերը «սիրո թևերով թռչում էին դեպի ռուսական գնդերը և ամենահնարավոր ծառայություններն էին մատուցում ոչ թե ինչ-որ ակնկալություններից դրդված, այլ այն հոգեկան մղումների թելադրանքով, ինչը վեր է մարդկային ամեն տեսակի հաշվենկատությունից»։ Այսպես է գրել ռուս պատմաբան Սերգեյ Գլինկան (113, էջ 18—26)։ Արդեն այն ժամանակ Թուրքահայաստանի արևելյան մասի հայ ազգաբնակչության ներկայացուցիչները բանակցությունների մեջ էին մտել Անդրկովկասի ռուսական իշխանությունների հետ, ձգտելով, որ «ռուսական տիրապետությունը տարածվեր նաև Թուրքահայաստանի վրա»։ 1829—30 թթ. Անդրկովկաս գաղթեցին և ռուսահպատակ դարձան ավելի քան 100 հազար թուրքահայեր (31, էջ 39—40)։

Այս պայմանագրում միաժամանակ արտահայտվեց ռուսական զենքի հաջողության ու եվրոպական դիվանագիտության բացասական դերի իրարամերժ բնույթը։ Եվրոպական տերությունների, առաջին հերթին Անգլիայի, ճնշման տակ Ռուսաստանն Օսմանյան կայսրությանը վերադարձրեց պատերազմի իրավունքով գրաված Կարսը, Բայազետը, Էրզրումը։ Սա հայերին վերաբերող եվրոպական դիվանագիտության խաղացած առաջին բացասական գործողություններից մեկն էր, որն այնուհետև կրկնվելու էր տասնամյակներ շարունակ՝ նորանոր աղետներ պատճառելով հայ ժողովրդին։

Օսմանյան կայսրության հետ եվրոպական տերությունների ու Ռուսաստանի հարաբերությունները, թուրքական տիրապետության դեմ ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի օգտագործումը, այդ կայսրության հաշվին

ռազմաքաղաքական և տնտեսական առավելությունների հասնելու նրանց մրցապայքարը դիվանագիտության պատմության մեջ հայտնի է «Արևելյան հարց» անվանումով։ Արևելյան հարցի բուն շարժառիթը օսմանյան բռնապետության բնույթը, նրա տիրապետության տակ դարեր շարունակ ճնշված և կեղեքված ժողովուրդների ազատագրական մաքառումներն էին, որոնք նոր թափ էին ստացել XIX դարի սկզբից։ Թուրքահպատակ քրիստոնյաներին օգնելու պատրվակով եվրոպական դիվանագիտությունը կառչեց այդ պայքարից՝ փլուզում ապրող Օսմանյան կայսրությունում արտոնյալ դիրքեր նվաճելու, նրա տրոհումից օգտվելու համար։

Հարյուր հիսուն տարի շարունակ «Արևելյան հարցը» տերությունների ախոյանության, համաշխարհային քաղաքականության առանցքային խնդիրներից մեկն էր։ Թուրքական կայսրության անկման ու քայքայման պրոցեսը շատ վաղուց էր սկսվել (1, հ. X, էջ 61)։ Սակայն «Արևելյան հարց» տերմինն առաջին անգամ օգտագործվեց սրբազան դաշինքի Վերոնայի կոնգրեսում (1822 թ.)՝ Թուրքական տիրապետության դեմ հույն ժողովրդի ազգային-ազատագրական շարժման վերելքի, Բալկաններում ստեղծված դրության հարցի քննարկման ժամանակ։

Անգլիական դիվանագիտությունը մեջտեղ բերեց Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անկախությունը հարգելու և պահպանելու խնդիրը, որը «ստատուս քվո» անվան տակ տասնամյակներ շարունակ դառնալու էր դիվանագիտական պրակտիկայում ամենահաճախ կրկնվող արտահայտությունը, ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի արգելակը։ Կ. Մարքսը գրում է, որ «սկսած 1815 թվականից Եվրոպայի մեծ տերությունները ոչ մի բանից այդքան խիստ չէին սարսափում, որքան ստատուս քվոյի խախտումից» (1, հ. IX, էջ 393)։ Իսկ ստատուս քվոյի քաղաքականությունն Օսմանյան կայսրության սուլթանական իշխանության կողմից քրիստոնյա հպատակների ճնշման հավերժացումն էր (1, հ. IX, էջ 411)։

Արևելյան հարցի երկրորդ փուլն ընդգրկում է Ղրիմի պատերազմից մինչև XIX դարի վերջը։ Այս միջոցին էլ հայկական հարցը դարձավ եվրոպական դիվանագիտության քննարկման առարկա, ըստ էության վերածվեց Արևելյան հարցի բաղկացուցիչ մասի։

1856 թ. մարտի 18—30-ի Փարիզի տրակտատում, որը Ղրիմի պատերազմի արդյունքների դիվանագիտական ամփոփումն էր, ուղղակի նշում չկար հայերի, Հայաստանի մասին, բայց անմիջականորեն վերաբերում էր արևմտահայության ճակատագրին։ Ընդհանուր առմամբ պարտվելով անգլո-ֆրանս-թուրքական կոալիցիայի դեմ մղած պատերազմում, ռուսական բանակը հաղթանակներ էր տարել Կովկասյան ճակատում, թուրքական տիրապետությունը թոթափել էին Կարսն ու հայկական այլ շրջաններ։ Փարիզի տրակտատով ի չիք դարձվեցին ռուսական զենքի այդ հաջողությունները, նորից Թուրքիային վերադարձվեցին հայկական այն հողերը, որոնց ազատագրումն օսմանյան լծից բախտորոշ նշանակություն կունենար հայ ժողովրդի հետագա քաղաքական և տնտեսական կյանքում։ Թուրքական տիրապետության տակ հեծող հայերի գոյատևման, ազատագրական ակնկալություններն ի դերև ելան Անգլիայի և Ֆրանսիայի գաղութատիրական քաղաքականության հետևանքով։

Հսկայական կայսրությունն ամենատարբեր սոցիալ-տընտեսական կացութաձևերի, անհավասար զարգացած երկրամասերի, բազմաթիվ ժողովուրդների, ազգությունների ու ցեղերի կոնգլոմերատ էր։ Պատահական չէ, որ այն «հիվանդ մարդ», «կարկատված կայսրություն» անվանումներն էր ստացել։ Ամբողջ XIX դարի ընթացքում Օսմանյան կայսրությունը գալարվում էր ներքին ցնցումներից ու հակասություններից, արտաքին հարվածներից։

Օսմանյան կայսրության հետամնաց հասարակական-տնտեսական կարգը, սուլթանի անսահմանափակ բռնապետական ռեժիմը, կոռուպցիայի և քայքայման այդ սիստեմը, որն աչքի էր ընկնում տարրական կարգուկանոնի, դեմոկրատական ազատությունների բացակայությամբ, ոչ-թուրք ժողովուրդների ազգային ու կրոնական իրավունքները կոպտորեն ոտնահարելու բազմամյա պրակտիկայով, անհաշտելի հակասության մեջ էր ազգային վերածննդի և տնտեսական զարգացման ծարավի ճնշված ժողովուրդների ձգտումների հետ։

Մինչև XIX դարի 70-ական թվականները Օսմանյան կայսրության ներսում բարենորոգումների նպատակով ձեռնարկված բոլոր միջոցառումներն ավարտվեցին անհաջողությամբ։ Օսմանյան իրականության մեջ տակավին չէին ստեղծվել սոցիալ-տնտեսական այն նախադրյալները, դասակարգային-քաղաքական այն ուժերը, որոնք դառնային ամբողջ պետությունը բարենորոգելու հենարան, ապահովեին կապիտալիստական ուղիով երկրի համընդհանուր զարգացումը։ Բուրժուական հասարակության ծիլերը հանդիպում էին միջնադարյան նորմերով կառավարվող պետականության, մահմեդական արտոնյալ վերնախավի դիմադրությանը, թոշնում առանց քիչ թե շատ էական դեր խաղալու երկրի առաջընթացում։ Կապիտալիստական Եվրոպան Օսմանյան կայսրության տնտեսական ոլորտն էր ներխուժում կապիտուլյացիոն առանձնաշնորհումների միջոցով, իրեն ենթարկում թուրքական շուկան, ֆինանսները, միաժամանակ կոնսերվացնում հինը, իրենց դարն ապրած արտադրահարաբերությունները, խեղում կապիտալիզմի բնականոն զարգացումը։ Սեփական արդյունաբերություն ստեղծելու երկչոտ փորձերը Օսմանյան կայսրությունում ձախողվում էին, հանդիպելով սուլթանական իշխանության, ինչպես նաև եվրոպական կապիտալի դիմադրությանը։

Ֆ. Էնգելսը նշել է, որ թուրքական, ինչպես նաև յուրաքանչյուր այլ արևելյան տիրապետություն անհամատեղելի է կապիտալիստական հասարակարգի հետ, քանի որ հավելյալ արժեքը ոչնչով «ապահովված չէր սատրապների ու փաշաների գիշատիչ ճանկերից»։ Թուրքիայում բացակայում էր բուրժուական նախաձեռնող գործունեության «հիմնական պայմանը՝ առևտրականի անձի և նրա սեփականության անվտանգությունը» (1, հ. X, մ. II, էջ 22)։

Օսմանյան կայսրության տարածքի վրա սփռված են ազգությունների, ժողովուրդների քաղաքակրթության, հոգևոր ու նյութական ստեղծագործության բազմաթիվ կոթողներ, հուշարձաններ, եկեղեցիներ, ամրոցներ, կամուրջներ, ջրանցքներ, ճանապարհներ, դամբարաններ և անթիվ ու անհամար գրավոր արձանագրություններ։ Սրանք ստեղծվել էին թուրքական տիրապետությունից առաջ և ավերվել գլխավորապես

նրանց օրոք։ «Հռոմեական կայսրության անկումը» աշխատության հեղինակ Գիբբոնը XVIII դարի վերջին հայերի մասին գրում էր, որ նրանք զրկված էին նույնիսկ ստրկական վիճակի հանգստությունից, որ իր պատմության առաջին քայլերից մինչև ներկա պահը Հայաստանը հավերժ պատերազմների թատերաբեմ է հանդիսացել։ Դաժան քաղաքականությունն ամայացրել էր Տավրոսի ու Երևանի միջև ընկած հողերը, և հազարավոր քրիստոնեական ընտանիքներ քշվել էին իրենց երկրի սահմաններից դուրս (115, էջ 199—200)։

Թուրքական մութ դիշերը ոչ մի լույս, ոչ մի առաջադիմություն չհանդուրժեց ստրկացված ժողովուրդների զարգացման համար։

XIX դարի 70-ական թվականներին ճանապարհորդելով Արևմտյան Հայաստանում, ռուս ժուռնալիստ Գ. Գրադովսկին գրել է. «Տեսնելով թուրքահայերի ներկա կենցաղը, զարմանում ես, թե զարգացման ինչպիսի ցածր աստիճանի վրա է գտնվում այդ քրիստոնյա և ի բնե շնորհալի բնակչությունը»։ Նա նշում է, որ Արևմտյան Հայաստանում բնակարանները մնացել էին Քսենոֆոնի նկարագրած ժամանակների վիճակում և եզրակացնում. «Թուրքական տիրապետությունն ակնհայտորեն ժամանակին քիչ չի օգնել ոչնչացնելու Հայաստանի փայլուն անցյալը» (151, էջ 6)։

Երկրի բնակչությունը բաժանված էր երկու հատվածի՝ իրավատեր մահմեդականների և իրավազուրկ-հպատակ քրիստոնյաների։ Ազգության գաղափարն ամփոփված էր կրոնի մեջ։ Տիրապետությունը ոչ թե թուրք ազգին կամ ժողովրդին էր պատկանում, այլ՝ իսլամին, նրա անունից խոսող ու գործող կեղեքիչ դասակարգին։ Թրքությունն ու իսլամությունը իրրև հոմանիշ էին ըմբռնվում ճիշտ այնպես, ինչպես հայությունն ու առաքելականությունը։

XIX դարում թուրքական իրականության մեջ գլխավոր խնդիր էր համարվում մահմեդականների և քրիստոնյաների միջև քաղաքացիական-իրավական հավասարության հաստատումը։ Սա չափազանց բարդ պրոցես էր։ Եվրոպական երկրներին հատուկ դասակարգային պայքարը թուրքական իրականության մեջ աղճատված երանգավորում ուներ։ Այս հանդամանքը խոչընդոտող դեր խաղաց ոչ միայն ամբողջ

երկրի առաջադիմական զարգացման, այլև բուն թուրքական բուրժուական ազգի բնականոն կազմավորման պրոցեսում։

Ինչպես նկատել է Ռոզա Լյուքսեմբուրգը, «բուրժուական կարգերի ամենատարրական նախադրյալների, ինչպես, օրինակ, անձի ու սեփականության ազատության, օրենքի առաջ թեկուզ ձևական հավասարության, եկեղեցուց անջատված քաղաքացիական իրավունքի, հաղորդակցության ժամանակակից միջոցների և այլնի բացակայությունը՝ այս ամենը բացարձակապես անկարելի էր դարձնում կապիտալիստական արտադրաձևերի առաջանալը»։ Օսմանյան կայսրությունը չէր կարող որպես ամբողջություն վերակառուցվել։ «Ճնշումը և թուրքական պետության համատեղ պատկանելության դժբախտությունը գնալով ավելի ու ավելի էր մեծանում։ Եվ այս բոլորը հանգեցրեց տարբեր ազգությունների բնական ձգտումին՝ պոկվել ամբողջությունից և անկախ գոյությամբ բնազդաբար բռնել սոցիալական ավելի բարձր զարգացման ուղին» (35, էջ 141—142)։

Օսմանյան կայսրության համապետական բարեփոխության փորձերի անհաջողությունից հիասթափությունը, անպտուղ սպասումները ոչ-թուրք ազգություններին մղում էին դեպի թուրքական պետությունից անջատվելու ուղին։ Սակայն այդ անջատումը տեղի էր ունենում ապստամբությունների, արյան ու կոտորածների միջոցով, բայց ոչ երբեք խաղաղ ճանապարհով։ Ճնշված ժողովուրդների մեծամասնության առաջատար ուժերն իրենց իրավունքների ճանաչումը փնտրում էին ոչ թե կայսրության ներսում, ինքնավարության կամ ֆեդերատիվ կապերի, այլ անպայման նրա սահմաններից դուրս, միմիայն անջատման մեջ։

Մինչև XIX դարի 70-ական թվականները սուլթանների իշխանության դեմ ապստամբել էին համարյա բոլոր հպատակ ժողովուրդները՝ հույները, սերբերը, բուլղարները, չեռնոգորցիները, բոսնիացիները, ալբանները, կրետացիները, եգիպտացիները, հայերը, մակեդոնացիները, ռումինները, լիբանանցիները, սիրիացիները, եմենցիները, մոլդավացիները և ուրիշներ։ Հույներն ապստամբվել են 1770, 1798, 1801, 1812, 1820—1829 թվականներին։ Միայն 60 տարվա համառ պայքարից ու զարհուրելի կոտորածներից հետո հույները, այն

էլ ոչ ամբողջապես, ազատագրվեցին թուրքական լծից։ Սերբերը, սկսած 1804 թվականից, 40 տարի պայքարեցին իրենց ազատության համար։ Մշտական կռիվների և կոտորածների մեջ էին Լիբանանն ու Սիրիան, Չեռնոգորիան և Մակեդոնիան, Հերցեգովինան ու Բոսնիան։ Ուժերն անհավասար էին։ Թուրքական պետականությունը սրով ու արյան բաղնիքներով էր դիմավորում հանուն ազատության յուրաքանչյուր ելույթ։

Թուրքիայի պետական օրգանիզմի քայքայմամբ նրանից անջատվում և ընձյուղներ էին արձակում այն առողջ տարրերը, որոնց նա ի վիճակի չէր ո՛չ պատվաստել մարդկային արյունով ներծծված թուրքական հողին, ո՛չ հարմարեցնել թուրքական բռնակալության բիրտ պայմաններին (138, էջ 144—145)։ Տակավին 1861 թվականին ռուս արևելագետ Պ. Ա. Չիխաչևը սեփական ուսումնասիրությունների և դիտումների հիման վրա եկել էր այն եզրակացության, որ թուրքական կայսրությունն անհնար էր պահպանել, քանի որ նրանում ապրող ճնշված ազգություններն առավել մեծ տրվյալներ ունեին զարգացման և լավագույն ապագայի համար։ «Իրապես, հենց որ քրիստոնյաներն ստանան քաղաքացիական և քաղաքական բոլոր իրավունքները,— գրում էր նա,— նրանք իսկույնևեթ կգառնան պետական իշխանության տերերը և երկրի բարօրության շարժիչները» (171, էջ 173—174)։

Այս էր պատճառը, որ թուրքական կառավարողները սոսկում էին ոչ միայն ազգային շարժումներից, այլև յուրաքանչյուր առաջադիմական վերափոխությունից, քանի որ դրանով իսկ արտոնյալները կկորցնեին իրենց տիրապետող դիրքերը։ Կ. Մարքսն իր «Ազգությունները Թուրքիայում» հոդվածում գրել է, որ մահմեդական մոլեռանդությամբ վարակված թուրքական «խաժամուժը» արգելակում էր Թուրքիային կանգնելու առաջադիմության ուղու վրա, որ նա «խանդավառությամբ պաշտպանում էր իր երևակայական գերազանցությունը և իր ավանդական արտոնությունը՝ անպատիժ կերպով էքսցեսներ կատարելով քրիստոնյաների նկատմամբ» (1, հ. IX, էջ 374)։ Կ. Մարքսը նշել է, որ «Թուրքի բնածին ատելությունը «գյաուրի» նկատմամբ անընկճելի է»։ Թուրքերն իրենց համարում էին «տիրապետող ռասա», իսկ հպա-

տակ քրիստոնյաներին՝ «իրենցից անչափ ցածր կանգնած էակներ» (1, հ. X, էջ 660)։ Նման իրավիճակը ոչ միայն հասել էր XIX դար՝ Եվրոպայում կապիտալիզմի բուռն զարգացման դարաշրջանը, այլև շարունակվեց մինչև XX դարի առաջին տասնամյակները։

Թուրքերը XIX դարի ամբողջ ընթացքում քրիստոնյա ազգություններից ետ էին մնում ոչ միայն սոցիալ-տնտեսական և կուլտուրական մակարդակի, այլև ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչման, ազգային գաղափարների զարգացման առումով (124, էջ 187)։

Ֆրանսիացի բանաստեղծ, պատմաբան և քաղաքական գործիչ Լամարթինն իր «Ճանապարհորդություններ Արևելքում» գրքում գրել է. «Օսմանյան կայսրությունն իրականում ամենևին էլ կայսրություն չէ— դա տարբեր ռասաների դրժբախտ հավաքածու է առանց նրանց միջև որևէ բնական կապի, առանց օրենքների, տարբեր շահերով, առանց միասնության և համերաշխության։ Դուք տեսնում եք, որ նույնիսկ կյանքի միակ շնչառությունը, որը կենդանացնում է նրանց, հենց կրոնական մոլեռանդությունն է, և դա էլ հանգչում է։ Դուք տեսնում եք, որ չարագուշակ և կուրացած վարչությունը խժռում է նվաճողների ռասային...» (158, էջ 222)։

Մինչև XIX դարի 70-ական թվականները օտարերկրյա կապիտալիստներն Օսմանյան կայսրությունում արդեն կարևոր տնտեսական և քաղաքական դիրքեր էին գրավել։ Կապիտուլյացիաները, փոխառությունները և կոնցեսիաները, նեղուցների վրա միջազգային հսկողությունը, Փարիզի 1856 թվականի պայմանագրում ռեֆորմների իրականացման մասին հատուկ հոդվածը և այլն վկայությունն են այն բանի, որ Բ. Դուռը որոշակի կախվածության մեջ էր կապիտալիստական աշխարհից։

Օսմանյան ժառանգությանը հավակնող տերությունների պայքարը կանխել էր այդ հսկայածավալ երկրի վերածումը որևէ հզոր տերության գաղութի։ Սակայն սուլթանների տերությունը չուներ լիարժեք անկախություն և մոնոպոլիստական կապիտալիզմի արշալույսին արդեն վերածվել էր օտարերկրյա կապիտալի կիսագաղութի։

Եվրոպական դիվանագիտությունն ընդհանուր առմամբ հանդես էր գալիս Օսմանյան կայսրության քրիստոնյաների պաշտպանության, խնամակալության նշանաբանով։ Կապիտուլյացիոն իրավունքի արտոնությունները տասնյակ տարիների ընթացքում ստեղծել էին շահույթ կորզելու մի ամբողջ սիստեմ։ Օսմանյան օրենքները պարտադիր չէին կապիտուլյացիոն իրավունքից օգտվող օտարերկրացիների համար։ Թուրքիայում նրանց ոտքի տակի հողը ֆրանսիական էր, անգլիական, բայց ոչ թուրքական։ Նրանք գործում էին օսմանյան պետությունում, բայց ենթարկվում էին իրենց երկրների քաղաքացիական օրենքներին։ Կապիտուլյացիոն իրավունքից օգտվող տերությունների արդյունաբերական ձեռնարկությունները, նավագնացությունը, առևտրական գործառնություններն ազատված էին մաքսերից։ Այս ամենն էր, որ կորցնել չէին ուզում արևմտաեվրոպական մեծ տերությունները։ Այս ամենն էր, որ առանձնահատուկ էր դարձնում Օսմանյան կայսրության դերը միջպետական հարաբերություններում։

Այլ էր Ռուսաստանի դերը մասնավորապես բալկանյան սլավոնների, հայերի և վրացիների հակաթուրքական ազատագրական մաքառումների հարցում։ Բալկանյան ժողովուրդների պայքարի հաջողությունը, թուրքական դժնդակ լծից նրանց ազատությունը պայմանավորված էին Ռուսաստանի ռազմաքաղաքական օգնությամբ։ Հայ ժողովրդի մասնակի ազատագրումն արևելյան բռնապետության ճիրաններից, նրա հետագա ազատագրական ոգորումները նույնպես աղերսվում են Ռուսաստանի արևելյան քաղաքականության հետ։

Եվրոպական տերությունների և Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների շահերի միջև, ինչ խոսք, առկա էր բացահայտ հակադրություն։ Առաջիններն ուզում էին Թուրքիայից անջատված երկրներն իրենց ենթարկել, երկրորդները՝ սեփական կամքով տնօրինել իրենց բախտը։ Սակայն Թուրքիան ամենամեծ շարիքն էր, որն ինչ-որ մի պահ մոռացության էր տալիս եվրոպական «քաղաքակիրթ» գաղութարարներից սպասվող վտանգը, նույնիսկ ստեղծում շահերի ժամանակավոր և արտաքին ընդհանրություն։ Թուրքական

897

լուծը թոթափել ձգտող ճնշված ժողովուրդները, նրանց հասարակական-քաղաքական ակտիվ ուժերը «բարդ և հեռուն տանող խորհրդածությունների մեջ չէին ընկնում»։ «Եվ քանի որ Թուրքիայում տեղի ունեցող ապստամբությունները հենց մասսայական շարժումներ էին, ապա նրանք փարվում էին առաջին իսկ ընձեռված միջոցին, որը համապատասխանում էր տվյալ պահին իրենց շահերին, եթե այդ միջոցը մինչև իսկ եվրոպական ստոր դիվանագիտությունը լիներ» (35, էջ 145)։

Սովետական արևելագետ-թուրքագետ Երեմեևը վերջերս հրատարակած իր ուսումնասիրության մեջ անում է հետևյալ ուշագրավ հետևությունը. «Թուրքիայի ժողովուրդների ազգային շարժումների նկատմամբ եվրոպական տերությունների քաղաքականությունը թեև չափազանց հակասական էր և առաջին հերթին համապատասխանում էր այդ տերությունների շահերին, այնուամենայնիվ, արթնացնում էր Թուրքիայի ճնշված ժողովուրդների ինքնագիտակցությունը, խթանում նրանց վերելքը» (124, էջ 187)։

Նվաճողական ծրագրերի հետամուտ եվրոպական կառավարությունների, տիրապետող դասակարգերի վարած քաղաքականությանը հակառակ, եվրոպական դեմոկրատական միտքը, արծարծելով Օսմանյան կայսրության քայքայման գաղափարը, ցանկանում էր նրա տեղում տեսնել ազատագրված ժողովուրդներ և ոչ թե եվրոպական պետությունների գաղութներ։ Այնինչ եվրոպական դիվանագիտությունը, արտահայտելով տիրապետող դասակարգերի ձգտումները, իրեն համարում էր տրոհվող պետության բախտը տնօրինող։ Սակայն դա չէր նշանակում, թե դիվանագիտությունն էր հրահրում հակաթուրքական շարժումը, ինչպես շարունակում է մատուցել թուրքական պատմագրությունը, ինչպես ժամանակին միակողմանիորեն գրել են նաև մեզ մոտ։ Ընդհակառակն, դիվանագիտությունն անում էր ամեն ինչ «հիվանդի» վիճակը վատացնելու, հարցի լուծումը հնարավորին չափ բարդացնելու և դժվարացնելու համար։ Թուրքական սուլթաններն օգտվում էին դիվանագիտության հարուցած արհեստական բարդացումներից և ճկունորեն խաղում հակասությունների, եվրոպական դիվանագիտական հավասարակշռության վրա։ Այնպես որ դիվանագիտության դերի չափազանցումը կամ ժխտումը երկուստեք պատմական ճշմարտության ոտնահարում է նշանակում։ Ռոզա Լյուքսեմբուրգի դիպուկ արտահայտությամբ, «դիվանագիտությունը տվյալ դեպքում մի վառվող տաշեղ էր նետում դարերի անդորրությունից և շահագործումից լեռան չափ դիզված բոցավառ նյութի մեջ» (35, էջ 143)։

Թուրքական բռնապետության դեմ ազատագրական պայքարի դրոշակակիրները բալկանյան ժողովուրդներն էին, որոնք ամբողջ XIX դարի ընթացքում մահու և կենաց կռիվ մղեցին հանուն իրենց ազատության և անկախության։ Այդ կռիվը տեղի էր ունենում եվրոպական տերությունների և Ռուսաստանի շահախնդիր ակտիվ միջամտությունների, կատաղի մրցապայքարի պայմաններում։ Ազատության ճանապարհին սլավոնական ժողովուրդների ամեն մի առաջընթաց քայլ տեղի էր ունենում եվրոպական դիվանագիտության՝ չար «ստնտուի», և՛ հրահրիչ, և՛ կաշկանդիչ հակասական գործողությունների պայմաններում։

Հետևողական հեղափոխական շարժումը միշտ իր ճանապարհին հանդիպում էր եվրոպական միապետների ընդհանուր ճակատին։ Ամեն ինչ պայմանավորվում էր եվրոպական հավասարակշռությամբ, թուրքական կայսրության փլուզումից ավելի շատ օգուտ քաղելու տերությունների ձգտումով։ Ռուսական քաղաքականությունը Բալկաններում, որն օբյեկտիվորեն խթանում էր հակաթուրքական պայքարը, հանդիպում էր եվրոպական տերությունների մեքենայություններին։ Հաղթում էր ռուսական զենքը, հարցերի լուծմանը հավակնում էր եվրոպական դիվանագիտությունը։

Հայկական հասարակական, քաղաքական շրջաններն սկզբից չափավոր, բայց և չափազանց զգայուն, ապա ավելի ակտիվորեն արձագանքում էին բալկանյան ժողովուրդների ազատագրական ոգորումներին, ոգեշնչվում նրանց հաջողություններից, իրենց ձգտումների և պայքարի բովում մշտապես փայփայում նրանց փորձը (61, էջ 280—281)։

*

* *

70-ական թվականների արևելյան ճգնաժամի պահին Բալկաններում Թուրքական տիրապետության տակ գտնվում էին Բուլղարիան, Մակեդոնիան, Բոսնիան, Հերցեգովինան, Ալբանիան, Էպիրոսը և Թեսալիան։ Սերբիան և Ռումինիան թեև ինքնուրույն էին դարձել, սակայն անվանապես շարունակում էին կախման մեջ մնալ սուլթանի գերիշխանությունից, հարկատու էին նրան։

Ասիայում, բացի բուն Թուրքական Անատոլիայից, կամ Փոքր Ասիայից, սուլթանը տիրում էր Միջագետքին, Արևմտյան Հայաստանին, Քուրդստանին, Սիրիային, Պաղեստինին, Լիբանանին և Արաբիայի մի մասին։ Աֆրիկայում սուլթանի իշխանությանը ենթարկվում էր Տրիպոլին (Լիբիան), իսկ Եգիպտոսն ու Թունիսը համարվում էին վասալ երկրներ։

Օսմանյան կայսրության բնակչության թիվը, մանավանդ նրա հպատակների ազգային պատկերը երբեք հնարավոր չի եղել ճշտել։ Սա ոչ միայն մարդահամար չանցկացնելու արդյունք էր, այլև իշխանությունների կողմից գիտակցաբար այն խեղաթյուրելու, աղավաղելու հետևանք։ Պատահական չէ, որ ուսումնասիրողների բերած տվյալները չափազանց հակասական են, երբեմն իրարամերժ։

Օսմանյան կայսրության բնակչությունը 70-ական թվականների սկզբին մոտավորապես 43 միլիոն էր, որից՝ 25 միլիոնը մահմեդական, 15 միլիոնը քրիստոնյա և այլն (224, էջ 19—21). Թուրքերը մահմեդական ազգությունների մեջ մեծամասնություն չէին կազմում։ XIX դարի առաջին տասնամյակներին Օսմանյան կայսրությունում հայ բնակչությունը ոչ միայն չէր աճել, այլև պակասել էր։

Ֆրանսիացի պրոֆեսոր Վալրանի հաշվարկներով, Թուրքիայում հայերի թիվը XIX դարի սկզբին 5 միլիոնի էր հասնում (189, էջ 84)։ Ուբիչինին 1845 թվականին Օսմանյան կայսրության հայերի թիվը հաշվում էր երկուսուկես միլիոն, որից 400 հազարը՝ Կ. Պոլսում և Բալկանյան թերակղզում, իսկ մնացածը՝ Ասիայում (166)։ Փարիզի «Թան» թերթի թղթակիցը 1878 թվականի գարնանը գրում էր, որ չէր կա-

ցող 30 տարվա ընթացքում աճ չունենալ։ Քննելով երկրի սոցիալ-տնտեսական պայմանները, պանդխտությունը, մյուս արհավիրքների բացասական դերը, նա գտնում էր, որ այդ ժամանակահատվածում հայերի թիվն ավելացել էր ընդամենը 20 տոկոսով և կազմում էր 3 միլիոն (80, № 4, 1877—78, էջ 449—450)։ Այլ տվյալներով, 1860-ական թվականներին հայերի թիվն Օսմանյան կայսրությունում 4 միլիոն էր կազմում (36, էջ 10)։ 60-ական թվականների վերջին Մկրտիչ բեյ Դադյանը նույն թիվն էր ցույց տալիս՝ 3 միլիոն 400 հազար, որից 150 հազարը՝ բուն Կ. Պոլսում (162, էջ 8)։ Կարելի է ասել, որ 70-ական թվականներին Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թիվը երեք միլիոնից պակաս չէր, ընդ որում նրա գերակշիռ մասն ապրում էր բուն երկրում՝ Արևմտյան Հայաստանի իր պապենական հողի վրա (80, № 1, 1877—78, էջ 359)։

Ըստ պատրիարքարանի տվյալների, այն ժամանակ Օսմանյան կայսրությունում հայերի թիվը 3 և կես միլիոն էր, որից Մեծ Հայքում՝ 1,3 միլիոն, Փոքր Ասիայում և Կիլիկիայում՝ 600 հազար, Փոքր Հայքում (Սվաս և Կեսարիա)՝ 670 հազար և այլն։ Պատրիարքարանի տվյալներում ցույց էր տրված, որ Վանի ու Էրզրումի վիլայեթներում ապրող 1,3 միլիոն հայերի կողքին ապրում էին 530 հազար թուրք, 120 հազար քուրդ և 82 հազար զանազան ցեղերի ներկայացուցիչներ (73, էջ 428—431)։

Բայց չէ որ XVII դարի վերջերին, ֆրանսիացի Տավերնիեի վկայությամբ, Հայաստանում մահմեդական տարրը հաշվվում էր բնակչության ընդամենը մեկ հինգերորդ մասը, իսկ մնացյալը հայեր ու ասորիներ էին (22, էջ 55)։

Ճանապարհորդ Տավերնիեն 1672 թվականին, Շահ Աբբասի արշավանքից հետո անցնելով Հայաստանով, մեկ թուրքի դիմաց հիսուն հայի էր հանդիպում։ Երկիրն իրապես հայերի երկիր էր, Հայաստան էր։ Երկու դար անց փոփոխությունն ակնբախ էր։ Օսմանյան կայսրության տիրապետության դժնի պայմանները խաթարում էին ժողովուրդների բնականոն զարգացումը։

Ռուս հեղինակ Սկալկովսկին նշում է, որ չափազանցված է պաշտոնական այն տվյալը, թե Եվրոպայում, Աֆրի-

կայում և Ասիայում Օսմանյան կայսրության ամբողջ տերիտորիայի վրա Թուրքերի թիվն ամբողջ բնակչության 40 տոկոսն էր կազմում։ Նա գտնում է, որ իրականում կայսրության բնակչության միայն մեկ քառորդն էին կազմում Թուրքերը (159, էջ 257)։ Բալկաններում «տասներկու միլիոն սլավոններ, հույներ, ռումիններ, առնաուտներ ենթարկված են մեկ միլիոն Թուրքերի...»,— գրում էր Կ. Մարքսը «Ազգությունները Թուրքիայում» հոդվածում, 1853 թվականի մարտի 22-ին։ Նշելով, որ սլավոնները Թուրքիայում տառապում էին մահմեդականների լծից, Մարքսը սրանց անվանում էր «ռազմական օկուպանտներ»։ «Ռազմական օկուպանտների այս դասակարգն իր ձեռքերում միավորում է բոլոր հասարակական ֆունկցիաները, ինչպես ռազմականը, նույնպես և քաղաքացիականը և դատականը» (1, հ. IX, էջ 373, 396—397)։

Թուրքական այս հսկայածավալ կարկատած տերությունը 70-ական թվականների կեսերին նոր, աննախընթաց ցնցումների մեջ էր. ճնշված ժողովուրդների ազգային ու սոցիալական շարժումները դարձել էին ավելի համապարփակ, և նրանց հուժկու հարվածներից երերում էր օսմանյան դարավոր գահը։ Ինչպես նշել է Կ. Մարքսը, Ղրիմի պատերազմից հետո Օսմանյան կայսրությունը «ուժասպառ էր, բռնված սոցիալական և քաղաքական քայքայման խոր պրոցեսով...» (1, հ. X, էջ 600)։ Նա մատնացույց էր անում այդ պետության բոլոր սասպարեզներին հատուկ արատները, խոցերը, հակասությունները։

Թուրքական ֆեոդալական սիստեմը խոր ճգնաժամ էր ապրում նախ և առաջ Բալկաններում։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացումն այստեղ կատարվում էր ֆեոդալական բիրտ շահագործման, ազգային ու կրոնական վայրագ ճնշումների, արյունահեղությունների պայմաններում։ Որպես կանոն, հողատերերը, պաշտոնյաները մահմեդական օսմաններն էին կամ մահմեդականացած սլավոնները, իսկ աշխատավոր գյուղացիությունը, քաղաքի արհեստավորությունն ու բուրժուազիան՝ քրիստոնյա սլավոնները։ Պայքարը հնի և նորի միջև տեղի էր ունենում ոչ միայն սոցիալ-դասակարգային, այլև կրոնաազգային հողի վրա։ Սրան

ավելանում էր Օսմանյան կայսրությունում որոշակի արատներից, կապիտուլյացիոն իրավունքից օգտվող եվրոպական կապիտալիստների շահախնդիր գործունեությունը, որը սոցիալ-տնտեսական զարգացման պրոցեսներին հաղորդում էր բարդ և հակասական բնույթ։

Այս պայմաններում սլավոնական ժողովուրդների երեկվա պարտիզանական կռիվների՝ չետեների, հայդուկների ջոկատների հիմքի վրա հակաթուրքական շարժումը դարձել էր ավելի համապարփակ, իր շարքերը ներգրավելով գյուղացիական հոծ զանգվածներին, բուրժուազիային, մտավորականությանը։ Առանձնապես հուժկու էր դառնում բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը, որն ուներ ընդգծված հեղափոխական-դեմոկրատական բովանդակություն։ Վասիլ Լևսկու, Խրիստո Բոտևի և մյուսների ջանքերով բուլղար ժողովուրդը ոտքի էր ելնում մահու-կենաց կռիվ մղելու Թուրքական պետության դեմ՝ հանուն իր ազատության և անկախության։

Սոցիալ-տնտեսական և կուլտուրական անհամեմատ բարձր զարգացման հասած սլավոնական ժողովուրդներն ընդվզում էին ֆեոդալական կապանքների դեմ, ձգտում էին լույսի, առաջադիմության և ինքնուրույնության, մահու-կենաց կռիվ էին մղում անկախություն նվաճելու, սեփական պետականություն ստեղծելու համար։

Օսմանյան տիրապետությունից ազատագրվող ժողովուրդներն իրենց արյունահեղ ու դժվարին պայքարի մեջ օժանդակություն էին հայցում ռուսական զենքից, որը մեկ անգամ չէ, որ հաղթող էր դուրս եկել Թուրքիայի դեմ մղած պատերազմներից։ Ազատարար ռուսական զենքի հանդեպ ստեղծվել էր անսահման հավատ։ Ռուսաստանը փրկության աղբյուր էր Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների համար։

Անդրադառնալով ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին և նրա հարվածների տակ Օսմանյան կայսրության քայքայման պրոցեսին, Կ. Մարքսը նշել է, որ Հունաստանը ձգտում է ինքնուրույնության, Հայաստանի առանձին մասերն ընկնում են Ռուսաստանի իշխանության տակ, Մոլդավիան, Վալախիան և Սերբիան հե-

տեղական նորեն ընդունում են Ռուսաստանի հովանավորությունը։ Այնուհետև նա գալիս է այն եզրակացության, որ «...Թուրքերի ներկայությունը Եվրոպայում ինքնին լուրջ խոչընդոտ է Թրակիական-իլիրիական թերակղզու բնական հարստությունների զարգացման համար (1, հ. IX, էջ 374)։ Մի այլ առիթով նա նշել է, որ «սլավոնների մրցակիցները թուրքական և առնաուտական բարբարոսներն են, որոնք վաղուց իրենց ցույց են տվել որպես ամեն մի առաջադիմության անուղղելի հակառակորդներ» (1, հ. IX, էջ 395)։

Օսմանյան կայսրության փլուզման, նոր պետությունների գոյավորման խնդիրը նորից վերածվում էր միջազգային քաղաքականության, եվրոպական դիվանագիտության առավել սուր, պատերազմական հրդեհով հղի պրոբլեմի։ Արևելյան հարցի զարգացման նոր փուլն էր սա, երբ իմպերիալիզմի դարաշրջանը թևակոխող կապիտալիստական պետություններն ավելի ինտենսիվ, ավելի անզիջում գոտեմարտի էին բռնվում աշխարհի վերաբաժանման, ազդեցության ոլորտների նվաճման, օսմանյան ժառանգությանը տիրանալու համար։ Միջնադարյան բռնակալության ճիրաններից ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարը միահյուսվում էր եվրոպական դիվանագիտական մրցապայքարի հետ, երբեմն աղճատվում, բայց ընդհանուր առմամբ զարգանում էր վերընթաց ուղիով։

XIX դարի 70-ական թվականներին Բալկաններում առանձնապես միահյուսվում և բախվում էին Եվրոպայի ցամաքային տերությունների շահերը։

Ռուսաստանի նպատակն էր ազատ ելք ունենալ դեպի Միջերկրական ծով, ապահովել իր հարավային սահմանները։ Ռուսաստանի շահերն այս տեսակետից համընկնում էին թուրքական բռնապետության դեմ Բալկաններում ծավալված ազգային-ազատագրական կռիվների հետ։ Ավստրո-Հունգարական կայսրությունը, որի կազմի մեջ մտնում էին մի շարք ոչ գերմանական ժողովուրդներ՝ հունգարներ, սլավոններ, ռումիններ, բոլոր միջոցներով ջանում էր խեղդել այդ պայքարը, խոչընդոտել սլավոնական որևէ պետության ստեղծմանը Բալկաններում։ Ռուսաստանը բալկանյան սլավոնների պաշտպանի, իսկ Ավստրո-Հունգարիան՝ հետադիմական հակառակորդի դերումն էին։ «Ոչ միայն Հունաստանի և Թուրքիայի հույները, այլև սլավոնները ի դեմս Ռուսաստանի տեսնում են իրենց բնական պաշտպանին»,— գրել է Կ. Մարքսը (1, հ. IX, էջ 389)։

Ավստրո-Հունգարիայի հակառուսական դիրքորոշմանը զուգընթաց Բալկաններում և Մերձավոր Արևելքում ռուսական քաղաքականության գլխավոր հակառակորդն Անգլիան էր։ 1870 թ. ֆրանս-պրուսական պատերազմում Ֆրանսիայի պարտությունը բրիտանական գաղութատերերին հույս էր ներշնչում ազատվել նրա ավանդական մրցակցությունից Արևելքում, մասնավորապես, իրենց անբաժան տիրապետությունը հաստատել Միջերկրական ծովի արևելյան ավազանում, Օսմանյան կայսրության վրա։ Սա էր գլխավոր դրդապատճառը, որ Բրիտանական կառավարությունը XIX դարի 70-ական թվականներին հանդես էր գալիս Օսմանյան կայսրության տերիտորիալ ամբողջականության պաշտպանի դերում, հուսալով այն վերջնականապես իրեն ենթարկել և՛ քաղաքականապես, և՛ տնտեսապես։ Ստատուս քվոյի քաղաքականությունը հետադիմական, արգելակիչ դեր էր խաղում սուլթանական իշխանության դեմ պայքարի դրոշ պարզած ժողովուրդների կյանքում, մանավանդ XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին, երբ «Թուրքիայում արտադրաուժերի և սոցիալական հարաբերությունների զարգացումը հանգեցրեց կապիտալիստական հարաբերությունների, ինչպես և ընդհանուր կուլտուրական մակարդակի առավել աճի ճնշված ազգային փոքրամասնությունների, և ոչ թե թուրքերի մոտ» (124, էջ 195)։

Բալկաններում հակաթուրքական ազգային-ազատագրական շարժման վերելքը և եվրոպական տերությունների շահերի բախումը խոր ճգնաժամ առաջացրին, որը շարունակվեց երեք տարի՝ 1875—1878 թթ., սպառնալով ամբողջ Եվրոպան ներքաշել պատերազմի հրձանուտը։

Նոր փուլ էր թևակոխել հակաթուրքական պայքարը Բոսնիայում և Հերցեգովինայում։ 1874—1875 թվականներին այստեղ, հակաֆեոդալական, ազգային-ազատագրական կռիվները լայն մասշտաբներ ընդունեցին։ Ապստամբ գյու-

ղացիների և արհեստավորների զինված խմբերը պարտությունների մատնեցին սուլթանական կանոնավոր բանակի ջոկատներին։ Բ. Դոան ավանդական խորամանկ քայլերը, բարենորոգումներ իրականացնելու մասին խոստումներն այլևս ի վիճակի չէին պահպանելու նախկին վիճակը։

XIX դարի 60—70-ական թվականներին եվրոպական դիվանագիտության տերմինաբանության մեջ տարածված աֆորիզմը՝ «à la Turca» (Թուրքավարի) արտահայտությունը, որն ընկալվում էր «ամեն ինչ խոստանալ և ոչինչ չանել» իմաստով, ամենագործածականն էր Թուրքական գործերի վիճակն արծարծող թերթերի և գրքերի էջերում։

1875 թվականին Բոսնիայի ու Հերցեգովինայի ապստամբները մի մանիֆեստով դիմեցին Եվրոպային։ Այնտեղ ասված էր. «նա, ով անձնական փորձով չի ճանաչում Թուրքական բռնակալությունը, նա, ով ականատես չի եղել քրիստոնյա ազգաբնակչության տառապանքներին, չի կարող նույնիսկ մոտավոր կերպով պատկերացնել, թե ինչ է «ռայան», այդ անլեզու էակը, որը ծնված է հավիտենական գերության համար։ Մեր հողի ամեն մի կտորը ողողված է մեր նախնիների արյունով ու արցունքով։ Այսօր այդ «ռայան» վճռել է կռվել իր ազատության համար կամ մեռնել մինչև վերջին մարդը»։

Բոսնիայի և Հերցեգովինայի ապստամբ ջոկատներում Թուրքերի դեմ կռվում էին գարիբալդիականներ։ Թուրքերի դեմ կռվում էին նաև մահմեդականներ, ինչը վկայությունն է այն բանի, որ շարժումն ուներ շեշտված սոցիալական բովանդակություն (142, էջ 67)։

Բուլղարիան ըմբոստ ելույթներով արձագանքեց Բոսնիայի և Հերցեգովինայի իրադարձություններին։ Իսկ Բ. Դուրը ձգտում էր արյան սարսափներով լռեցնել մի բուռ ժողովրդի, որը համարձակվել էր ձայն բարձրացնել հանուն մարդկային իրավունքների, կյանքի երաշխիքներ պահանջել։

1875 թվականի սեպտեմբերին Թուրքական սատրապներն արյան մեջ խեղդեցին Ստարա-Զագորայի բնակչության ապստամբությունը Բուլղարիայում։ 1875 թվականի բուլղարական ապստամբական ելույթների ժամանակ սուլթանական բաշիբոզուկները միայն մեկ ամսվա ընթացքում 180-ից

ավելի գյուղեր ավերեցին և հրդեհեցին (19, էջ 16)։ Տասնյակ-հազարավոր մարդիկ տեղահանվեցին, մնացին անօթևան կամ կոտորվեցին։ Թուրքական իշխանությունները բռնագրավեցին բուլղար գյուղացիների անասունները (145, էջ 53)։ «Նոր օսմանների» ապագա պարագլուխ Միդհատն ու իր կողմնակիցները Բուլղարիայում շինծու առիթներով կախում էին կամ բանտարկում բոլոր նրանց, ովքեր ընկնում էին իրենց ձեռքը, իսկ Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Հենրի Էլիոտը բուլղարներին էր մեղավոր հռչակում (128, էջ 8, 10)։

1876 թվականի ապրիլին բուլղարները շատ ավելի հուժկու թափով հակաթուրքական պայքարի դրոշ պարզեցին։ Սուլթանը դիմեց արյունահեղության։ Անգլիական Կապույտ գրքի տվյալներով, կոտորվեց 12 հազար, իսկ ըստ սլավոնական աղբյուրների՝ 45 հազար մարդ (142, էջ 69)։ Թուրքական պատժիչ զորամասի հետ տեղի ունեցած մարտի ժամանակ զոհվեց ապստամբ պարտիզանների հրամանատար Խրիստո Բոտևը։ Բուլղար գյուղացիների և արհեստավորների ապրիլյան ապստամբությունը պարտվեց ոչ միայն ուժերի անհավասարության, այլև Թուրքոֆիլական վերնախավի, առաջին հերթին՝ շորբաջիների, դավաճանության հետևանքով։ Այնուամենայնիվ, լուրջ քայլ էր արված ազգային-ազատագրության ճանապարհին։

1876 թվականի հունիսի վերջին Սերբիայի և Չեռնոգորիայի կառավարությունները հայտարարեցին ապստամբների հետ իրենց համերաշխության մասին, Թուրքիայից պահանջեցին դադարեցնել պատժիչ գործողություններն ապստամբների դեմ։ Բ. Դուրը մերժեց կատարել այդ պահանջը, և Սերբիան ու Չեռնոգորիան պատերազմ հայտարարեցին նրան՝ սատար կանգնելով իրենց եղբայրներին։ Չնայած չեռնոգորցիների հաջողությանը, Թուրքական բանակի գլխավոր ուժերը կենտրոնացվեցին Սերբիայի դեմ և մի շարք ռազմական հաղթանակներից հետո սպառնացին գրավել Բելգրադը։

Ռուսաստանում հասունանում էր Ղրիմի պատերազմում կրած ծանր պարտության հետևանքները վերացնելու, Բալկաններում և Առաջավոր Ասիայում ռազմաքաղաքական, տնտեսական դիրքերը վերականգնելու և ամրապնդելու

մասնությունը, «Դրա հետ մեկտեղ ցարական կառավարությունը ձգտում էր իր շահերին համապատասխան օգտագործել ռուսական հասարակության լայն շրջանների անկեղծ համակրանքը սլավոնական ժողովուրդների հանդեպ, հույս ունենալով, որ Թուրքիայի հետ հաղթական պատերազմը կկանխի երկրում հասունացող հեղափոխական շարժումը և կամրապնդի ինքնակալությունը» (105, էջ 171)։

Ալեքսանդր II-ի և նրա գլխավոր խորհրդական կանցլեր Գորչակովի կարծիքով, հասել էր ժամանակը՝ թոթափելու Ռուսաստանի համար ստորացուցիչ Փարիզի պայմանագրի պայմանները և Ռուսաստանի ազդեցությունը հաստատելու Բալկաններում ու Սև ծովի նեղուցների շրջանում։ Ռուսական կառավարությունը սլավոնների համար այնպիսի բարենորոգումներ էր պահանջում, որոնք հավասարազոր էին ինքնավարության։ Ընդ որում Պետերբուրգը ձգտում էր այդ նպատակին հասնել առանց պատերազմի, խաղաղ միջոցներով։ Թուրքիային գրգռելով պատերազմի, անգլիական դիվանագիտությունը ձգտում էր այն բանին, որ պատերազմը հյուծեր և առավելագույնս թուլացներ նրան, իսկ ակնկալվող ռազմական պարտությունները ստիպելու էին սուլթանին՝ օգնություն հայցել Անգլիայից։ Գործի էր կոչված անգլիական դիվանագիտության բազմադարյա փորձը (172, էջ 97)։

Ղրիմի պատերազմից հետո Կ. Պոլսում անգլիական ազդեցությունը չափազանց ուժեղացել էր։ Սակայն, անգլիական փորձված դեսպան Հենրի Էլիոտի հետ մրցակցության մեջ մտած՝ Կ. Պոլսի ռուսական դեսպան Ն. Պ. Իգնատևը 12 տարի՝ 1864—1876 թթ., հաջողությամբ իրականացնում էր իր միսիան, աստիճանաբար ազդեցիկ դիրք գրավելով արտասահմանյան տերությունների դեսպանների շարքում։ Ռուս գեներալ Բորբիկովը վկայում է, որ նա իր եռանդուն ու ճկուն գործունեությամբ կարողացել էր հասնել այն բանին, որ ամեն մի միջազգային գործի շուրջ սուլթանը խորհրդակցում էր նրա հետ։ Իգնատևին նա անվանում է շնորհալի, բայց և ինքնավստահ դիվանագետ (153, հ. 153, 1913 թ., էջ 489—490)։ «Թուրքական արևելքով կանցլեր Ա. Մ. Գորչակովը քիչ էր հետաքրքրվում, դրա համար Ն. Պ. Իգնատևն իր գործողություններում լիակատար տնօրեն էր»

(133, էջ 4)։ Անգլիական դեսպան Հենրի Էլիոտն ուշի-ուշով հետևում էր Իգնատևի ակտիվ գործողություններին, հակամիջոցների դիմում (111, էջ 152—155)։ Նրա սիրաբանությունը «նոր օսմանների» հետ պատճառաբանված էր սուլթանի վրա ռուսական ազդեցության ուժեղացումով։

Ցարական կառավարությունը Սերբիային օգնելու խնդիրը համարեց օրակարգի հարց։ 1876 թվականի սեպտեմբերին մասնակի զորահավաքի հրաման արձակվեց։ Պաշտոնական բնույթ տրվեց Ռուսաստանում ծայր առած կամավորական շարժմանը։

Հիրավի, Բալկաններում ծավալված հակաթուրքական շարժումը լայն արձագանք էր գտնում Ռուսաստանում։ Սլավոնական ժողովուրդներն իրենց հաջողության հույսը կապում էին նախ և առաջ ռուս ժողովրդի օգնության հետ։ Ռուսական մամուլը, առաջադեմ մտավորականները մեծագույն համակրանքով էին գրում ու խոսում սլավոն եղբայրներին օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին։ Բալկանյան թերակղզու աշխատավոր ժողովուրդը՝ ռայան, իր հայացքն ուղղել էր դեպի Ռուսական կայսրությունը, նրանից էր օգնություն ակնկալում (100, էջ 599)։

Ռուսաստանը հանդես էր գալիս որպես թուրքական տիրապետությունը խորտակող ժողովուրդների դաշնակից և օբյեկտիվորեն նպաստում նրանց առաջընթաց զարգացման պրոցեսին։ Ինչ խոսք, ռուսական ցարիզմն ուներ իր տնտեսական ու քաղաքական, ռազմաստրատեգիական շահերն ու պլանները։ Սակայն նրա քաղաքականությունը համընկնում էր ինչպես Բալկանյան թերակղզու ճնշված ժողովուրդների, այնպես և Օսմանյան կայսրության արևելքում հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին։ Մանավանդ, պատմական առումով վաղուց արդեն հաստատված էին ռուսական քաղաքականության դրական արդյունքներն այդ ժողովուրդների ճակատագրում։ Ֆ. Էնգելսը նշել է, որ ինչպես Բալկանների քրիստոնյաները, այնպես և Կովկասյան լեռնաշղթայից հարավ թուրքական տիրապետության տակ գտնվող մանր քրիստոնեական պետությունները և քրիստոնեություն դավանող հայերը պատրաստակամությամբ էին արձագանքում ռուսական առաջխաղացմանը (1, հ. XVI, մ. II, էջ 9)։

Վերջին հաշվով, առանց Ռուսաստանի ռազմաքաղաքական և բարոյական օժանդակության բացառվում էր թուրքական բռնակալական պետության դեմ մարտերի ելած սերբերի ու չեռնոգորցիների, բուլղարների և մակեդոնացիների երկարամյա և ժողովուրդներին արյունաքամ անող կռիվների հաջողությունը: Ռուսաստանն էր հակաթուրքական պայքարի դրոշ պարզած ժողովուրդների հույսը, ոգեշնչման աղբյուրը, շարժման հաջողության գրավականը:

Ինչ խոսք, ցարիզմը չէր կարող բնական և հետևողական դաշնակից լինել ժողովուրդների ազատագրական մաքառումներին: Պատահական չէ, որ տարիներ անց Ալեքսանդր III-ը իրենց գլխավոր սխալը համարում էր այն, որ կառավարությունների հետ համագործակցելու փոխարեն դաշնակցել էին ժողովուրդների հետ:

*

* *

Բալկանյան ժողովուրդների հակաթուրքական ազգային-ազատագրական այդ բուռն պայքարի պայմաններում, նրա որոշակի ազդեցության տակ վերելք ապրեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը, խորացավ նրա ինքնաճանաչման, սոցիալ-քաղաքական իրավունքներ նվաճելու, պետականություն ստեղծելու պրոցեսը:

Արևելյան ճգնաժամն է՛լ ավելի խթանեց հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությանը: Թուրքական բռնակալության ծանր լուծը թոթափելու, սոցիալական, կրոնական վայրենի հետապնդումներից ազատվելու, ազգային միավորման նպատակով կատարվող ճիգերը թևակոխեցին մի նոր փուլ: Հայրենիքի գաղափարն սկսում էր դառնալ համազգային, ընդգրկում ժողովրդի տարբեր դասակարգերին ու խավերին՝ աշխատավոր գյուղացիությանը, բուրժուազիայի տարբեր շերտերին, մտավորականությանը:

Թուրքական տիրապետությունից ազատագրվելու պայքարն օրգանապես կապված էր ազգարային հարաբերություններում հասունացած խոր կոնֆլիկտի հետ: Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումների հիմքում ընկած էին ինչպես ազգարային հարցի. այնպես և ազգային ինքնուրույնություն նվաճելու խնդիրները: Արևմտյան Հայաստանում աշխատավոր գյուղացիության հարստահարությունների, անօրինականությունների դեմ բողոքները, ընդվզումները, գյուղացիական ելույթները ֆեոդալական արտադրահարաբերությունները բուրժուականով փոխարինելու նպատակ էին հետապնդում: Դա միահյուսվում էր կրոնական և ազգային ճնշումները վերացնելու ձգտման հետ:

«Ուրիշի դրոշի տակ» հոդվածում Վ. Ի. Լենինը հիմնավոր պատասխան է տալիս այդ շրջանում սոցիալ-քաղաքական ուժերի բախումների, թուրքական տիրապետության դեմ ծավալված շարժումների էությանն ու հետապնդած նպատակներին: «Ոչ միայն 1855, 1859, 1864, 1866, 1870 թվականների, այլև 1877 թվականի (ռուս-թուրքական) և 1896—1897 թվականների պատերազմների (Հունաստանի դեմ Թուրքիայի պատերազմի և հայկական ելուզումների) ժամանակ, պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակությունն են եղել ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության «ջղաձգումները»,— գրել է նա: Վ. Ի. Լենինը հիմնավորել է պատմական այն ճշմարտությունը, թե այդ շարժումների ժամանակ գլխավոր դասակարգը, հիմնական մասնակից ուժը բուրժուազիան էր, որը «գնում էր վերընթաց գծով և որը միայն ինքը կարող էր ճնշող ուժով դուրս գալ ֆեոդալական-աբսոլյուտիստական հիմնարկությունների դեմ»: Նա ցույց է տալիս, որ «զանազան երկրներում, տարբեր շերտերով ներկայացնելով ունեվոր ապրանքարտադրողներին, այդ բուրժուազիան տարբեր աստիճանի պրոգրեսիվ էր և երբեմն (օր.՝ իտալական բուրժուազիայի մի մասը 1859 թվականին) նույնիսկ հեղափոխական, բայց դարաշրջանի ընդհանուր դիծը հենց բուրժուազիայի պրոգրեսիվությունն էր, այսինքն՝ ֆեոդալիզմի դեմ մղվող նրա պայքարի չլուծվածությունը, անավարտությունը» (2, հ. 21, էջ 175):

Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական կռիվն ընդդեմ թուրքական տիրապետության՝ ֆեոդալիզմի կապանքները խորտակելու ծարավի բուրժուազիայի պայ-

քարն էր, թեև այն պարուրված էր և՛ ազգային, և՛ կրոնական շղարշով, մանավանդ որ քրիստոնյաներին ազատագրելու մասին Ռուսաստանի հռչակած լոզունգն այդ պայքարին արտաքուստ հաղորդում էր միակողմանի բնույթ։ Հայ ժողովրդի ազատագրական մաքառումներն արձագանքում էին Բալկանների փորձին ու պրակտիկային, բայց որոշակի, մինչև վերջ հասունացած ծրագրային բնույթ չունեին, տարբեր հանգամանքների բերումով հզոր հորձանքի չէին վերածվում։ Թեև Օսմանյան կայսրության բռնակալության դեմ բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումներին հատուկ էին միևնույն նպատակները, միևնույն խնդիրները, սակայն դրանք տեղի էին ունենում միմյանցից տարբեր աշխարհագրական, սոցիալ-տնտեսական, ազգային և ռազմաքաղաքական առանձնահատուկ պայմաններում։ Ահա թե ինչու Արևմտյան Հայաստանում հակաթուրքական ազատագրական պայքարը նույն ելքը չունեցավ, ինչը տեղի ունեցավ Բալկաններում։

Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ ժողովուրդների ազատագրության գործը հարթ պրոցես չէ, որ «ամեն մի դարաշրջանում լինում են և կլինեն առանձին, մասնակի շարժումներ մերթ դեպի առաջ, մերթ դեպի ետ, լինում են և կլինեն զանազան շեղումներ միջին տիպի և միջին տեմպի շարժումներից։ Մենք չենք կարող իմանալ, թե ինչպիսի արագությամբ և ինչպիսի հաջողությամբ կզարգանան տվյալ դարաշրջանի առանձին պատմական շարժումները։ Բայց մենք կարող ենք իմանալ և մենք գիտենք, թե որ դասակարգն է կանգնած այս կամ այն դարաշրջանի կենտրոնում, որոշելով այդ դարաշրջանի գլխավոր բովանդակությունը, նրա զարգացման գլխավոր ուղղությունը, տվյալ դարաշրջանի պատմական իրադրության գլխավոր առանձնահատկությունները և այլն» (2, հ. 21, էջ 172)։ Իսկ Թուրքական բռնակալության դեմ ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարը կոիվ էր հանուն առաջադիմության, ընդդեմ միջնադարի, հանուն ազատության և անկախության։

Մշտապես պետք է հիշել Վ. Ի. Լենինի խոսքերն այն մասին, թե «մարքսիստները երբեք չեն բացառել ֆեոդալական-աբսոլյուտիստական ուժերի դեմ մղվող բուրժուական ազգային-ազատագրական շարժումների պրոգրեսիվությունը» (2, հ. 21, էջ 167)։ Ի վերջո Արևմտյան Հայաստանի շուրջ ծավալված ամբողջ շարժումը՝ արևմտահայ աշխատավոր գյուղացիության ընդվզումները, պոլսահայ և կովկասահայ բուրժուազիայի ու նրա ձայնափողերի հարցադրումները, ոգևորությունները, ծրագրերը՝ այս ամենը առաջադիմական նպատակներ էին հետապնդում։

Բալկանյան ժողովուրդները, թեև գալարվում էին սոցիալ-դասակարգային կոիվների, հակասությունների, ազգային ու կրոնական երկպառակությունների, արտաքին քաղաքական բարդ ներհակությունների մեջ, սակայն կարողանում էին ազգային-ազատագրության գործնական գաղափարախոսության համազգային հուժկու ճակատ ստեղծել և դրանք նպատակամղել գլխավոր խնդրի իրականացմանը՝ օտարերկրյա լուծը թոթափելուն։ Իսկ Արևմտյան Հայաստանում այդ պրոցեսը տեղի էր ունենում շափազանց բարդ պայմաններում։

Հայ ժողովրդի տարբեր հատվածները գտնվում էին սոցիալ-տնտեսական զարգացման, քաղաքական, ազգային, պետական տարբեր մակարդակների վրա։ Համազգային ճակատի ստեղծումը, ազատագրական ոգորումների համաձուլումն ու հաջողությունը պայմանավորված էին բազմաթիվ օբյեկտիվ խոչընդոտների հաղթահարումով։

«Ամբողջ աշխարհում ֆեոդալիզմի դեմ կապիտալիզմի տարած վերջնական հաղթանակի շրջանը կապված է ազգային շարժումների հետ,— գրել է Վ. Ի. Լենինը։— Այդ շարժումների տնտեսական հիմքն այն է, որ ապրանքային արտադրության կատարյալ հաղթանակի համար անհրաժեշտ է, որ բուրժուազիան նվաճի ներքին շուկան, անհրաժեշտ է պետական համախմբում այն տերիտորիաների, որոնց բնակչությունը խոսում է միևնույն լեզվով, վերացնելով այդ լեզվի զարգացման և գրականության մեջ այն ամրացնելու դեմ եղած բոլոր արգելքները» (2, հ. 20, էջ 492—493)։ Իսկ հայ ժողովրդի համար այդ պրոցեսն աղճատվում էր որոշակի խոչընդոտների հետևանքով։ Ազգային բուրժուազիայի կողմից ներքին շուկայի նվաճումը, սեփական տարածքի վրա ժողովրդի պետական համախմբման փորձերն արդյունք չէին տալիս՝ հանդիպելով ներքին և արտաքին զորեղ արգելքների։

Սովետական ազգագրագետ-պատմաբան Դ. Երեմեևը հավաստում է, որ Արևելյան Անատոլիան անհամեմատ ավելի դանդաղ էր ներքաշվում համաթուրքական շուկայի մեջ և իր սոցիալ-տնտեսական զարգացումով ետ էր մնում մնացյալ Թուրքիայից։ Դա դանդաղեցնում էր ազգային պրոցեսները՝ առանձին ժողովուրդների ազգային կոնսոլիդացիան և ասիմիլյացիան։ Ճանապարհների բացակայությունը խոչընդոտում էր նատուրալ տնտեսության քայքայմանը գյուղում։ Արևմտահայերի ազգային համախմբման պրոցեսը դանդաղում էր, քանի որ կապիտալիստական հարաբերությունները զարգանում էին ոչ թե արևելաանատոլիական հայերի, հայ ժողովրդի այդ համեմատաբար կոմպակտ զանգվածի մոտ, այլ, գլխավորապես, Կենտրոնական և Արևմտյան Անատոլիայի քաղաքներում ապրող հայերի մոտ, այսինքն՝ հայկական բնակչության մեծամասնություն ունեցող շրջաններից կտրված հայերի մոտ (143, էջ 55)։

Հայկական բուրժուազիայի տնտեսական ակտիվության կենտրոններ էին դարձել Թիֆլիսը, Բաքուն, Կ. Պոլիսը, Իզմիրը, Եվրոպայի և Ասիայի այլ քաղաքներ։ Իրերի բերումով հայ բուրժուազիան կենսականորեն չկապվեց հայկական գավառի հետ։ Նրա առևտրաարդյունաբերական կապերը տարածվեցին ամենուր, բայց ոչ Հայաստանում։ Հետևաբար, նա չէր կարող ամբողջապես և ընդհուպ շահագրգռված լինել ժողովրդի հասարակական-քաղաքական գործերով։ Տերիտորիալ տեսակետից նա հեռու էր Հայաստանից, տնտեսական շահերի համար արտաքին շուկաներ էր որոնում։ Հայ բուրժուազիայի կապիտալը Հայաստանում չէր ներդրվում, նրա ազդեցությունը գյուղի վրա չափազանց թույլ էր։

Օսմանյան կայսրությունում հայ փողատեր կապալառու-սարաֆները (սեղանավորները), որոնք ամիրայություն անունն էին ստացել, ամբողջապես կապված էին կառավարությունից հարկահանության իրավունք ստացող փաշաների, պաշտոնյաների հետ, զբաղված էին փողի վաշխառությամբ։ Նրանք հոգում էին սուլթանի հարեմի, ռազմական և այլ ծախսերը, Բ. Դոան հետ մտել էին դրամապարտային խճճված հարաբերությունների մեջ։ Հայոց դրամատերերն իրենց գումարները մեծ մասամբ դնում էին ոչ թե արդյունաբերության կամ առևտրի մեջ, այլ վաշխառուական, տոկոսաբեր շրջանառության մեջ։ Որպես Բ. Դոան ֆինանսական մերձավորներ, ամիրաները մեծ ազդեցություն ունեին ազգային գործերի վրա։ Նրանք իրավունքներ էին բանեցնում ոչ միայն Կ. Պոլսում, այլև գավառներում։

Կ. Պոլսում և առափնյա մյուս քաղաքներում կենտրոնացած հայ խոշոր բուրժուազիան միջնորդ առևտրով էր զբաղվում, կապված էր արևմտաեվրոպական շուկաների հետ, իր ձեռքում էր կենտրոնացրել Կ. Պոլսի առևտրի և ֆինանսների զգալի մասը։ Նա խոնարհաբար ծառայում էր ինչպես թուրքական պետականությանը, այնպես և օտարերկրյա կապիտալին։ Պոլսահայ ամիրաների, սարաֆների որդիները թանզիմաթի տարիներին, 1856 թվականից հետո, դարձել էին էֆենդիներ՝ թուրքական պետական պաշտոնյաներ, մերվել թուրքական վերնախավին։

Մինչդեռ արևմտահայ աշխատավոր զանգվածները կամայականություններից հարստահարությունից, անիշխանությունից, արյունից ու բռնություններից փրկություն էին փնտրում Ռուսաստանի հովանու տակ անցնելու միջոցով, հայ մեծատունները, փողատեր վերնախավը փարթամ կյանք էին վարում Բոսֆորի ափերին։ Մ. Փորթուգալյանը գրել է, որ Բոսֆորի ափերին ապրող հայ երիտասարդները Հայաստանի տեղն անգամ չգիտեին. «Թե հարցնես որ ինչպիսի՞ տեղ է այդ Հայաստանը, կտեսնես որ բնավ մի որոշ գաղափար չունի»։ Նա ասում էր, թե ավելի շատ Վիկտոր Հյուգոյի բանաստեղծություններն ու Գլադստոնի ճառերը գիտեին, բայց Հայաստանի մասին ունեին աղոտ պատկերացում (79, էջ 16—17, 42—43)։

Հիրավի, Կ. Պոլսում և Իզմիրում վիճակն այլ էր։ Գավառահայության ծանր պայմանները հեռու էին հարուստ դասակարգի տեսադաշտից։ Ազգային ջոջերը, էֆենդիները, պալատական սեղանավորները, զանազան փաշաների բարեկամները, թանկագին քարերի ու արդուզարդի վաճառականներն ունեին բազմահարկ և բազմասրահ ապարանքներ, մանկլավիկներ, մառանապետներ, ապրում էին եվրոպական ճոխության մեջ, դեսպանների հսկողության տակ, օրն անցկացնելով թատրոններում և խնջույքներում։ Նրանց փար-

թամ սեղաններից սնվում էին թուրք պաշտոնյաները, փաշաները։ Նրանք չէին կարող ըմբռնել ժողովրդի ցավը։ Ընդհակառակն, նրանք կողոպտում, հարստահարում էին ժողովրդին, դառնալով հարկահավաք կապալառուներ, գավառական կառավարիչներ և այլն։ Բնականաբար, սրանք «հավատարիմ» էին «բարեխնամ կառավարությանը»։ Սրանցից ոմանք արժանացել էին նաև կառավարական բարձր պաշտոնների, շքանշանների։

Փողատեր-վաշխառուական դասն իր ցանցերով պատել էր ամբողջ երկիրը և հաճախ ձեռք-ձեռքի տված կառավարության պաշտոնյաների, ազնվականության և հոգևորականության հետ, երկաթե ճանկերով կորզում էր աշխատավոր ժողովրդի քրտինքի արդյունքները։

Կայսրության արևելյան նահանգներում սուլթանի պետական հիմնարկությունները լիիրավ իշխանություն չունեին։ Թանզիմաթից հետո կատարված որոշ քայլերն արդյունք չտվին։ Օրինակ, 1842—1847 թթ. Աբդուլ Մեջիդը հատուկ բանակ ուղարկեց կիսանկախ քրդական ցեղապետներին հնազանդեցնելու համար։ Սակայն կախաղանները չօգնեցին։ Մոսուլից մինչև Սղերդ՝ Բիթլիսում ու Վանում շարունակում էին տերությունները անել քրդական ցեղապետները, որոնք իսկական պատուհաս էին նստակյաց աշխատավոր ժողովրդի համար։ Այդ նրանք էին կոտորում նեստորական ասորիներին, որոնց կտրված ականջներով լիքը պարկերը տանում էին Պետերբուրգ՝ ցույց տալու կատարված գաղանությունները (22, էջ 22—23)։

70-ական թվականներին արևմտահայերի արտագաղթը շարունակվում էր։ Պանդխտությունը մեծ չափեր էր ընդունել։ Սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, հարստահարությունները ու կեղեքումները հայ աշխատավոր մարդկանց ստիպում էին վարձու աշխատանք փնտրել օսմանյան տերության և այլ երկրների մեծ քաղաքներում։ 1870 թվականին, ազգային պատրիարքարանի տվյալներով, միայն Կ. Պոլսում 30 հազար հայ պանդուխտ կար (51, էջ 3)։

Քաղաքական իշխանության վաղուց ի վեր բացակայությունը խոր կնիք էր դրել արևմտահայ իրականության վրա։ Օսմանյան կայսրությունում հպատակ հայ ժողովրդին իշխանությունների մոտ ներկայացնում էր հայ եկեղեցին՝ Կ. Պոլսի պատրիարքարանը, որն իբրև պատմաիրավական մի հաստատություն ճանաչվել էր Բ. Դռան կողմից, որոշակի դեր էր խաղում նաև ազգի աշխարհիկ գործերում։

Ամենաբարձր ազգային վարչական մարմինը «Ազգային ընդհանուր ժողովն էր», որն ընտրում էր պատրիարքին, հաստատում Սիսի և Աղթամարի կաթողիկոսներին։ Երեսփոխանների մեծ մասը առևտրականներ, բանկիրներ, կրոնականներ էին։ Կային նաև պաշտոնյաներ, ուսուցիչներ, փաստաբաններ, բժիշկներ և ուրիշներ (9, № 8, 1884)։

Սուլթան Մեջիդի 1854 թվականի օգոստոսի 26-ի հրովարտակից հետո հայերի գերագույն խորհուրդը կազմեց մի առանձին մարմին՝ «Սահմանադրական հանձնաժողով» անվան տակ, որը ձեռնամուխ եղավ ազգային կանոնադրություն մշակելուն։ Տարիների քաշքշուկից հետո ստեղծված կանոնադրությունը Ռուսինյանի կողմից մկրտվեց որպես «Ազգային սահմանադրություն», որը վերջապես գործի կոչվեց 1863 թվականին։ Ռոլեն Ժեքմենը դիպուկ գնահատական է տվել սահմանադրությանը, գտնելով, որ դա թուրքական կառավարության սովորական այն գործողություններից էր, երբ փառավոր պիտակներ էին փակցնում դատարկ տուփերի վրա։ Այստեղ կար 150 հոդված, որոնցից և ոչ մեկը չէր երաշխավորում աշխատավոր հայ ժողովրդի իրավունքներն ազգային ու սոցիալական հետապնդումներից և կամայականություններից։ Սահմանադրությունը կազմելուց հետո անցած մեկուկես տասնամյակի ընթացքում այն սահմանափակվում էր Կ. Պոլսի սահմաններում, անուշադրություն մատնելով բուն երկրում՝ Հայաստանում, աշխատավոր զանգվածների սոցիալ-ազգային ծանր վիճակը։ Փաստորեն Կ. Պոլսի առևտրավաշխառուական բուրժուազիան, փողատեր և պաշտոնատեր վերնախավը կրոնահամայնքային սկզբունքով փորձել էր ապահովել իր իրավունքները թուրքական պետականության շրջանակներում։ 1870 թվականի հոկտեմբերից մի երկու երեսփոխան ներկայացնում էին գավառահայությունը, բայց դա զուտ ձևական ներկայացուցչություն էր։ Ազգային սահմանադրությամբ հայ ժողովուրդը քաղաքացիական իրավունքներ չստացավ։

Ժամանակին Մկրտիչ Խրիմյանը Ազգային սահմանադրության մասին ասում էր, թե այն «խմբագրվել է մայրաքաղաքիս մեջ և այն անձանց հեղինակությամբ, որոնք ավելի Եվրոպա կճանչնան, քան Հայաստանի աշխարհացույցը», որ հայերը միայն Բոսֆորի վրա չէին բնակվում, այլև գավառներում։

Ռոլեն Ժեքմենը նկատում է, որ հայկական Ազգային սահմանադրությանն ավելի կհամապատասխաներ հայկական համայնքի ստատուտ կամ ռեգլամենտ տերմինը (151, էջ 18)։ Վերջին հաշվով, այդ փաստաթղթում բացակայում էր ազգի հավաքական իրավունքների ճանաչումը։

Պատրիարքարանին կից ստեղծվել և գործում էին կրոնական և ազգային ժողովներ, որոնք որոշ հարցեր քննարկում էին համատեղ նիստերում։ Պատրիարքն ընտրվում էր ընդհանուր ժողովի կողմից, բայց հաստատվում էր Բ. Դռան հատուկ ֆերմանով (հրովարտակով)։

Ազգային սահմանադրությանը համապատասխան, պատրիարքարանը ժողովների հետ միասին ղեկավարում էր արևմտահայության մշակութային-կրթական, բարեգործական, կրոնական, մասամբ նաև դատական գործերը։ Բայց, ընդհանուր առմամբ, այն լիարժեք իրավունակ մարմին չէր։

Հարկ չկա ապացուցել, որ Կ. Պոլսի՝ հայոց «պատրիարքական գահը խաղալիք դարձած էր ամիրաներու քմահաճույքին» (81, էջ 182)։ Սակայն կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց փոխվում էին նաև պատրիարքարանի և ազգային ժողովի շուրջը համախմբված բուրժուական վերնախավի մոտեցումները, հասարակական-քաղաքական երևույթների ընկալումները, հարցադրումները, ազգի խնդիրներին նրա մասնակցության ձևերը։ 1870-ական թվականներին ավելի զգալի էին այդ փոփոխությունները, երբ ազգի քաղաքական ճակատագրին փորձում էին ուղղություն տալ բուրժուականացող կղերականության ղեկավարները։

Այսպիսով, հայ բուրժուական ազգի կազմավորման պրոցեսը տեղի էր ունենում բարդ, առանձնահատուկ պայմաններում, զգալի չափով հայության բնաշխարհից հեռու, օտար գործոնների և միջավայրի ազդեցությունների ներքո, երբ ժողովրդի տարբեր մասերն անջատված էին մեկը մյուսից,

պատնեշված պետական անջրպետներով։ Բուն երկրում չէին գտնվում նրա մտավոր ուժերը, որոնք սփռված էին այլ երկրների քաղաքային կենտրոններում։ Որտեղ բուրժուազիան էր, այնտեղ էլ մտավորականությունն էր, այնտեղ էլ կազմավորվում էր բանվոր դասակարգը։ Սա պատմական հանգամանքների բերումով առաջացած օբյեկտիվ ռեալություն էր։

Հայ մշակութային շարժումը, քաղաքական-հասարակական միտքը ընձյուղվում, արմատներ էր նետում դրսում։ Մտավորականության կենտրոնները հարյուրավոր, հազարավոր կիլոմետրերով հեռու էին գյուղացիական զանգվածներից։ Թերթերը լույս էին տեսնում, թատրոնները գործում էին գլխավորապես բուն երկրից դուրս։ Ուսումնառության գլխավոր հաստատությունները նույնպես ստեղծվել էին ոչ բուն երկրում։

Ազգի միավորմանը, հայրենիք ստեղծելու գաղափարներին հայ հասարակության տարբեր հատվածների, դասակարգերի ու խավերի մոտեցումները տարբեր էին։ Օտարերկրյա լուծը թոթափելու համար համազգային զորեղ ճակատ չէր ստեղծվում։ Հայ հասարակական-քաղաքական միտքն ազգությունը դեռևս չէր ըմբռնում ու ընկալում քաղաքականապես։ Տակավին չէր հասունացել շահերի համազգայնության գաղափարը։ Պոլսահայ մտավորականության մեծ մասը թեև բռնել էր մշակութային զարգացման ուղին, բայց տակավին հեռու էր քաղաքական կատեգորիաներով դատելու մակարդակից։

Խոսելով Կ. Պոլսի հայ հասարակական-քաղաքական գործիչ Գրիգոր Օտյանի մասին, Արփ. Արփիարյանը գրում է, որ նա «Թուրքիո մեջ քրիստոնեի մը վերապահված բախտավորության գերագույն աստիճանին հասած էր, օսմանյան փառքերն ու պատիվները կշռայլվեին իրեն. ազդեցիկ ձայն ուներ Թուրք նախարարներու խորհրդի մեջ. կյանքի հեշտությունները չէին պակսելու իրեն...»։ Սակայն նա «իր ամեն մեկ բառը զգուշությամբ արտասանելու էր չկատաղեցնելու համար իր տերերը՝ տաճիկ փաշաները...»։

Մենք պատահականորեն չհիշեցինք այս գործչին, քանի որ նա ազդեցիկ դիրք ուներ Կ. Պոլսի հայկական վերնախա-

վում, զգալի դեր խաղաց հայկական հարցի դիվանագիտական արծարծման առաջին շրջանում, բայց «երբեք հայ ժողովրդին ընկերական խնդիրներովը չզբաղեցավ», «անմղունակ աղջկան մը պես փափուկ մնաց, պատրանքներով միշտ առլի» (26, № 4, 1900)։ Սրա օրինակով էլ կարելի է դատել պոլսահայ մյուս ազդեցիկ գործիչների մասին, որոնք հավակնում էին ուղղություն տալ սեփական ժողովրդի քաղաքական ճակատագրին։

Այնուամենայնիվ, ազգի ինքնաճանաչման սկսված պրոցեսն անկասելի էր։ Հայկական հասարակական-քաղաքական կյանքը լի էր լավատեսական ձայներով։ Խիստ պահպանողական հոսանքների կողքին թրծվում էին վերընթաց ուժերը, որոնք իրենց հերթին տարբեր ուղիներ էին մտորում իրենց գրվածքներում, ոմանք տնտեսական և բարոյական խաղաղ զարգացումը համարում էին միակ ապահով և շիտակ ուղին դեպի աստիճանական բարելավումը։ Ուրիշներն անմիջական գործողությունների կոչ էին անում, մյուսները հեղափոխական մարտերի պատրաստվելու և միայն պատեհ առիթի դեպքում ոտքի կանգնելու կողմնակից էին։

Հայ հասարակական-քաղաքական մտքի անդաստանում խոր ակոս էր թողել հեղափոխական դեմոկրատ Միքայել Նալբանդյանը։ Ճնշվածների համար «ազգությունն է նոցա միակ դրոշը, որ կարող է բացվել բռնակալության ընդդեմ» (60, հ. 1, էջ 463)։ Նրա այս խոսքերը միս ու արյուն էին դառնում շատերի համար։ Հայ իրականության համար ավելի շոշափելի էր դառնում այն իրողությունը, որ «մարդկության պատմության մեջ ոչ մի ժամանակ այնպես սաստիկ ու որոշակի երևացած չէ ազգությունը, ինչպես ներկայումս։ Ազգությունը կարծես թե դարձել է մի ամենօրյա հաց...» (60, հ. 3, էջ 90)։

*
* *

Հայ իրականության մեջ Միքայել Նալբանդյանն առաջինն էր, որ դրեց հայրենի հողի հարցը և ազգության խնդիրը կապեց «մի կտոր հող ձեռք բերելու» անհրաժեշտության հետ։ Ազգությունն առանց հայրենիքի ապագա չունի։

Սակայն, մեր մի կտոր հողը՝ «մեր հայրենիքը», գերության մեջ էր։ Ազատությունը մեծագույն բարիք էր, ուստի պետք է ազատ լինեն և՛ հայրենիքը, և՛ ազգը, և՛ անհատը։

1861 թվականին «Երկու տող»-ի մեջ Մ. Նալբանդյանը գրում էր. «...պաշտպանել հայի առաթուր կոխված իրավունքը՝ է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը։ Եվ այս նպատակին հասնելու համար՝ չէ պիտի ընկրկինք ոչ բանի և ոչ աքսորի առաջ և, ոչ միայն բանիվ և գրչով, այլև զենքով և արյունով...»։

XIX դարի 40—60-ական թվականներին լայն թափ ստացած ինքնաճանաչման, վերածնության պրոցեսը, երբ ասպարեզ էր իջել աշխարհաբար լեզվի հարցը, զարգանում էր դպրոցը, ճիգեր էին արվում սահմանելու ազգի գաղափարը և այն անջատելու կրոնից, այժմ նոր որակ էր ստանում։ Հայ հասարակական-քաղաքական մտքի վրա ամենախոր ներգործություն էին ունենում ռուս մեծ հեղափոխական դեմոկրատները, Ռուսաստանում տեղի ունեցող առաջադիմական երևույթները։ Հիշենք նաև, որ 70-ական թվականներին ձևավորվեց անկախ Իտալիան, միավորվեց Գերմանիան։ Ազգային հարցը խմորվում էր Բալկաններում, որտեղ նրա լուծման ուղիներ էին փնտրում նախ և առաջ սլավոնները։ Բուրժուական առաջադիմական այս պրոցեսները մեկուսացված չէին կատարվում, դրանք արձագանք էին գտնում ամենուր և վարակիչ օրինակ հանդիսանում շատերի համար։

Եվրոպական հեղափոխականների ազդեցության տակ էր, որ Ղևոնդ Ալիշանը ոգեկոչեց.

«Ի զե՜ն, ի վրե՜ժ, օ՜ն անդր,
հառաջ,
Ի զե՜ն, ի վրե՜ժ, մի
ձախ, մի աջ»։

Փաստ է, որ եթե 1862-ին տեղի չունենար Զեյթունի նշանավոր ապստամբությունը, չէր հասունանա և ասպարեզ չէր իջնի նաև հայոց հարցը։ Այդ տարվա հուլիս-օգոստոսին Զեյթունի պարզած ապստամբական դրոշն ստիպեց Բ. Դոանը 1863 թվականի մարտի 17-ին կյանքի կոչել հայոց Ազգային սահմանադրությունը։ «Հայկական Զեյթունը Հայաստանի համար խաղում է համարյա նույն դերը, ինչ Զեռնոգորիան

սերբ ժողովրդի համար»,— գրել է ռուս գեներալ Գ. Ի. Բոբրիկովը (93, էջ 256)։ «Հայաստանը և հայ անունը առաջին անգամ հանդես եկան եվրոպական մամուլի մեջ Զեյթունի անցքերի ժամանակ, երբ մի բուռ լեռնական ժողովուրդ յուր արիական դիմադրությամբ ցույց տվեց, որ հայ արյունը բոլորովին չի սառել Հայկի որդոց երակների մեջ» (80, № 2, էջ 370)։

Գարեգին Սրվանձտյանը հերոսական Զեյթունի ազդեցության տակ բացականչում էր. «Չի՛ լանք, եղբայրներ, ափսոս են մեր աչքերը. թո՛ղ լան հին գլուխները... Աշխատանք, ուրեմն կոխե՛ ու կոխվի՛ր. զա՛րկ ու զարկվի՛ր»։ Նա հանգում էր այն եզրակացության, որ միայն արյուն թափելով է հնարավոր աճեցնել «հայության ազնիվ բողբոջները»։

«Արծվի Վասպուրականի»-ի էջերում արձագանք էին գտնում 1862 թ. Զեյթունի ապստամբության դեպքերը։ Ասվում էր, թե «նոքա մեզ քաջություն թող տան, մենք հավ չենք, մենք էլ մարդ ու մարդու զավակ ենք... Ազգի համար պիտի աշխատես, էլ ուրեմն, դու քեզ համար չես, քո ծնողաց համար չես... Ազգինն ես»։ Ազգ և հայրենիք հասկացությունները դառնում են Մ. Խրիմյանի մտածողության առարկան։ Նա գոչում էր. «Արթնացե՛ք, Հայկա որդի՛ք, արթնացե՛ք»։

1860-ական թվականներին Կ. Պոլսում արդեն մտավորականության մի ստվար ջոկատ կար։ Եվրոպայի համալսարանական կենտրոններում կրթված, հասարակական-քաղաքական բուռն ընդվզումներին հաղորդակից այդ հայ երիտասարդ մտավորականները փորձում էին ուղղություն տալ ազգային գործերին։ Ռուսահայ հատվածն ավելի մեծ չափով էր տոգորված ազգային զարթոնքով։ Խ. Աբովյանը, Ս. Նազարյանցը, Մ. Նալբանդյանը, Գ. Արծրունին, Գամառ Քաթիպան, Բաֆֆին՝ մի կողմից, Ղ. Ալիշանը, Մ. Մամուրյանը, Գր. Չիլինկիրյանը, Մ. Փորթուգալյանը, Մ. Խրիմյանը, Գ. Օտյանը և ուրիշներ՝ մյուս կողմից, չնայած սոցիալ-քաղաքական հարցերում նրանց հայացքների, մոտեցումների տարբերություններին, ծառայում էին հայ ազգի կազմավորման ու առաջընթացի գործին, նրան պատվաստում ինքնաճանաչման և ազատասիրության ոգի։

1860 թվականի Ազգային սահմանադրությունը կյանքի կոչող դեմքերը (Սերվիչեն, Պալյան, Օտյան, Ռուսինյան և ուրիշներ) ձգտում էին հայության մշակութային ինքնավարության, Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի համար տանելի կյանքի պայմաններ ստեղծել։ Տարբեր էին ուղղությունները, շատ էին վեճերը, տարակարծությունները, գրժտությունները։ Բայց ընդհանուր գիծը մասնակցությունն էր ազգի ինքնաճանաչման պրոցեսին։

70-ական թվականներին ժողովրդի ուժերի համախմբումն ու ազգի զարթոնքն էր արտահայտում Մ. Պեշիկթաշլյանը՝ գրելով.

«Տո՛ւր ինձ քո ձեռքդ, եղբայր եմք մենք.
Երբ ալևոր Մայր Հայաստան
Տեսնա զ՝որդիք յուր քով ի քով,
Սրտին խորունկ վերքն դաժան
Քաղցր արտասվաց բուժին ցողով»։

1871—72 թթ. Վանում հիմնված «Միություն ի փրկության» գաղտնի ընկերության կոչում ասված էր, թե ոտնահարվում է հայի պատիվը, պղծվում եկեղեցին, առևանգվում են հարս ու աղջիկներ, «մեր ազգության սերունդը ջընջել կճգնին», որ «կամ պետք է մեռնիլ և չտեսնել այս սարսափելի վիճակը և կամ վերակենդանություն ստանալ ի ծոց հայրենյաց»։

Հայաստանում ուսում տարածելու նպատակով երիտասարդները 1876 թվականին կազմեցին երեք ընկերություն՝ Արարատյանը, Դպրոցասիրաց արևելյանը և Կիլիկյանը։ Իսկ աղջիկներն ստեղծեցին իրենց երկու՝ Ազգանվեր հայուհյաց և Դպրոցասեր տիկնանց ընկերությունները։

Սակայն Մոսկվայից ու Պետերբուրգից եկող լույսը, Կ. Պոլսի ու Փարիզի հայ առաջադեմ մարդկանց ճիգերը, այնուամենայնիվ, դժվարությամբ էին հասնում բուն երկիր, հայ աշխատավոր զանգվածներին։ 1870-ական թվականներին կատարված փորձերը՝ Մ. Փորթուգալյանի ջանքերը, «Միացյալ ընկերություն հայոց»-ը, Խրիմյանի Վարագա վանքի տպարանը, «Արծվի Վասպուրականի»-ն, միայն սաղմնային փորձեր հանդիսացան։ Նրանք ի վիճակի չեղան

շարժման մեջ դնել արևմտահայության զանգվածները։ Ժողովուրդը չընդգրկվեց մեկ ընդհանուր հորձանքի մեջ։ Բուն երկիրը շարժման կենտրոն չդարձավ, արևմտահայ աշխատավոր խավը դեռևս պատրաստ չէր ո՛չ կազմակերպչորեն, ո՛չ հավաքական ուժով։ Զենքի դիմելը, մասսայական շարժումը դեռ միս ու արյուն չէին դարձել հայ զանգվածների համար բուն երկրում։

70-ական թվականներին Բալկանների և Արևմտյան Հայաստանի միջև տարբերությունն այն էր, որ ազատագրության գործի ղեկավարմանը հավակնող՝ Կ. Պոլսի բուրժուականացող կղերականության պարագլուխներն իրենց նպատակին էին ձգտում՝ խղճմտանք, գթություն հայցելով, իսկ բալկանյան ժողովուրդները՝ զենք շաչեցնելով։ Կ. Պոլսի հայ ազգային վերնախավն ազգային իրավունքների ճանաչում էր մուրում, այն էլ շափավոր, կիսատ-պռատ պահանջներով։ Մինչդեռ բալկանյան սլավոնները զանգվածային պարտիզանական շարժում էին ծավալել, Արևմտյան Հայաստանում բացակայում էր կազմակերպված, համընդհանուր կռիվը տիրող թուրքական կարգերի դեմ։ Քաջարի Զեյթունի ժամանակ առ ժամանակ բռնկվող զինված ելույթները ոգևորում էին, օրինակ ծառայում, բայց չէին վերածվում համազգային կռվի ընդդեմ ֆեոդալական բռնապետության։

Տերությունները քանիցս հրապարակ էին իջնում մեկ Լիբանանի քրիստոնյաների, մեկ սլավոնների իրավունքների «պաշտպանության» հարցադրումներով։ Սակայն Եվրոպական դիվանագիտության գործողություններում տակավին չէր հիշատակվում Հայաստանը։ Ռոլեն Ժեքմենը նկատում է, որ դա հետևանք էր այն բանի, որ «հայերը փոխանակ ապստամբեին, սահմանափակվում էին բողոքներով» (151, էջ 16)։ Կ. Պոլսի «Մասիս»-ը խոստովանում էր. «Հայոց պակասություններեն մին և գլխավորն այս էր, որ շարժման և կենդանության նշան չէին տար, ցույցեր չէին ըներ, որով իրենց թշնամիները մինչև իսկ հավակնեցան հայ չկա ըսելու»։ Թերթը եզրակացնում էր. «Ուստի այսուհետև որչափ շարժին, որչափ կենդանության նշաններ ու ցույցեր տան, տարակույս չկա՝ որ այնչափ ևս իրենց գոյությունը պիտի հաստատեն Եվրոպիո առջև, և իրենք դիրենք ճանչցնել պիտի տան»։ Թերթը հարց էր դնում զարկ տալ ներքին առաջադիմությանը, «որպեսզի ազգային ոգին զարթնու յուր խոր թմրութենեն» (53, №2171, 1878)։

Անցած դարի 70-ական թվականներին ավելի որոշակի, ավելի ընդգծված էր դառնում թուրքական պետական մարմինների հակահայկական քաղաքականությունը։ Բ. Դուրը բացահայտ քաջալերում էր արևելյան վիլայեթներում թուրք պաշտոնյաների և քուրդ ֆեոդալական վերնախավի ճնշումները, հարստահարությունները, հրկիզումները, կոտորածները։ Հակահայկականությունն ավելի ու ավելի որոշակիորեն դառնում էր պետական քաղաքականություն։

Դեռևս 1869 թվականին Ֆուադ փաշան իր մահից մի քանի օր առաջ սուլթան Ազիզին ներկայացրած քաղաքական կտակում գրել է, թե «...Օսմանյան կայսրությունը վտանգի մեջ է... Մեր հայրերի գործած անընդունելի սխալները (իմա՝ քրիստոնյաներին չվերացնելը— Զ. Կ.) այսօր մեզ դնում են չափազանց տագնապալի կացության մեջ»։ Նա փրկությունը տեսնում էր բոլոր հպատակներին անխտիր թուրքացնելու մեջ։ «Մասնավորապես հայերը հակում ունեն ոտնձգության և խելացի կլինի նրանց եռանդը չափավորել, ասպարեզ տալով միայն նրանց, ովքեր պարկեշտորեն կընդունեն մեր կայսրության միասնավոր սկզբունքը» (74, էջ 115—116)։

Եվրոպայից դուրս մղվելու ռեալ վտանգը, ասիական տերիտորիայում ներփակվելու հեռանկարը թուրքական կառավարողներին մղում էին դաժանության, հպատակ, բայց կենտրոնախույս ժողովուրդների ազատատենչ ոգին ճզմելու, բիրտ ուժի միջոցով նրանց իրենց ենթարկելու գործողությունների։ «Թուրքիան թուրքերին» սկզբունքը հանդիպել էր բալկանյան սլավոնների կատաղի դիմադրությանը և այլևս հնարավոր չէր կիրառել Եվրոպական Թուրքիայում։ Դա պետք է արվեր ասիական գավառներում։ Սա հնարավոր էր միայն հայերին վերացնելու ճանապարհով։ «1870—1877, երբ տակավին ո՛չ հայ հեղափոխություն գոյություն ուներ, և ո՛չ հայ կամավոր կովկասյան սահմանագլխին վրա, հայկական բնաջնջումի ծրագիրը գործադրության էր դրված արդեն։ Այդ թվականներին պատրաստված տեղեկագիրները, վավերա-

կան ու փաստացի, ցույց են տալիս, թե թալան, առևանգում, մարդասպանություններ սովորական դարձած, պետականացած իրողություններ էին» (55, էջ 20—21)։

Հայկական խնդրի աշխուժացմանը հետևեց մի այլ թուրք պետական գործչի՝ Սայիդ փաշայի, բանաձևը. «Հայկական խնդիրը պիտի լուծենք հայերը ջնջելով»։

Հակահայկական քաղաքականության տիպիկ օրինակ էին սովորական դարձած հրկիզումները, երբ ոչնչացվում էր հայերի ունեցվածքը, խաթարվում էր առևտուրը, վայրենի միջոցներով արգելակվում կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացումը։ 1876 թվականի դեկտեմբերին հրդեհվեցին և թուրքական խուժանի կողմից կողոպտվեցին Վանի շուկայի 500-ից ավելի խանութները։ Այս փաստը նաև տնտեսական մրցակցությունը վարչական վայրենի մեթոդներով վերացնելու արտահայտություն էր։ Ներքին շուկայում հայկական բուրժուազիայի դերի մեծացումից անհանգստացած մի թուրք բարձրաստիճան պաշտոնյա՝ Խուրշիդ էֆենդին, գրել է. «Հոս, Վանի մեջ, հայերուն ձեռքն են բոլոր արհեստներն ու երկրագործությունը։ Տաճիկները նպարավաճառ են միայն, և անոնք ալ շատ սակավաթիվ... Տաճիկները կուղեն տիրոջ պես ապրիլ, և բան մը չեն ըներ, ժամանակնին սրճարաններն ու պանդոկները կանցնեն» (62, № 10, 1898)։

* * *

1850—1870 թթ., քսան տարվա ընթացքում, 537 թաքրիր (բողոքագիր) է գրվել ու ներկայացվել Բ. Դռանը հայկական բնակչության հարստահարությունների մասին (62, № 11, 1900)։ Այս բողոք-գանգատները որևէ արդյունք չունեցան. հարստահարությունները, զեղծումները շարունակվում էին։ Կ. Պոլսի հայոց ազգային մարմինները բողոքագրեր էին ստանում պաշտոնյաների զեղծումների, կանանց ու մանուկներին բռնի մահմեդականացնելու, առևանգումների, մարդասպանության և այլ չարիքների, եկեղեցիների կառուցումը, զանգահարությունը կամ հուղարկավորությունն արգելելու և այլնի մասին։ Հարստահարությունները, հակահայկական մյուս խժդժություններն այնպիսի չափեր ընդունեցին, որ տակավին 1870 թվականի նոյեմբերի 27-ին Կ. Պոլսի հայոց ազգային ընդհանուր ժողովը մի հատուկ հանձնաժողով կազմեց «այդ ցավալի դեպքերը քննելու և մանրամասն տեղեկագրելու համար»։

1870 թվականին այդ հանձնաժողովի գլուխ կարգվեց տակավին երիտասարդ Ներսես Վարժապետյանը։ Նա ծնվել է Կ. Պոլսի արվարձան Խասգյուղում 1837 թվականի հունվարին։ Ներսեսը հայտնի էր որպես կրթված, կարդացած և բանիմաց մարդ։ Հիմնավորապես գիտեր հայերեն, ֆրանսերեն, լատիներեն և հունարեն, հիանալի խոսում էր «տաճկաց սալոնական և հարեմական լեզվով» և 20 տարեկան հասակում հաջողությամբ ուսուցչություն էր անում Կ. Պոլսի հոգևոր դպրոցներում։ Քսանհինգ տարեկան հասակում նա ամուսնացավ և աշխարհիկ կյանք վարեց։ Բայց շուտով, կնոջ մահից հետո, Վարժապետյանը հայր Ներսես դարձավ. 1870-ին վարդապետ ձեռնադրվեց, հետո հասավ հայոց պատրիարքի պաշտոնին (1874)։ Հայտնի է, թե նա ինչպիսի կրքոտությամբ էր կռվում կաթոլիկների ղեկավար Հասունի դեմ՝ հանուն ազգային եկեղեցու իրավունքների, բացահայտում նրա խարդախությունները։ «Տիֆլիսկի վեստնիկ» թերթը նրան համեմատել է Ռիշելյեի դպրոցի հոգևորականների հետ, քանի որ «քաղաքագիտական նրբություններ ունեցող մարդ էր» (57, № 89, 1878)։ Այն ժամանակ ասում էին, թե Ներսեսը ազդեցություն էր գործել թուրքական սահմանադրականների վրա։ Ներսեսը հոգևոր ուսումնարաններ էր հիմնել Ադրիանապոլսում, Տարսոնում և Նիկոմիդիայում։ Հետագայում Արփիար Արփիարյանը գրել է, որ Ներսես Վարժապետյանը թեև «Հայաստանը մոտեն չէր ճանչնար, բայց իր պերճախոսությամբ, գրավիչ դեմքովը, ծանրաբարո երևույթովը համակրանք և հարգանք կվայելեր. ամեն ոք կատարյալ վստահություն ուներ անոր զգացումներու և մտավոր կարողությանցը վրա» (62, № 10, 1900)։

Կ. Պոլսի հայոց պատրիարքի պաշտոնը չէր պարփակվում կրոնական ոլորտներում, այլև ուներ որոշակի ազդ-

ցին դեր ազգի հասարակական, կրթական և մշակութային գործերում։ Ինչ խոսք, իր կրոնական, իմաստասիրական ու քաղաքական հայացքներով նա ազատամիտ գաղափարների հակառակորդ էր, բայց համերաշխեց չափավոր բարենորոգումներ պահանջողների հետ։ Հայոց հարցի դիվանագիտական արծարծումը համընկնում է Ներսես Վարժապետյանի պատրիարքության ժամանակաշրջանին, և հետևապես, նրա գործունեության այդ ասպեկտը չի կարող դուրս մնալ խնդրի քննարկման տեսադաշտից։

Հակոբ Պարոնյանը, «Ազգային ջոջեր» շարքում անդրադառնալով Ներսես Վարժապետյանին, գրել է. «Սա ինքն է, որ հայկական խնդիրն հարույց և մինչև այսօր անձնվիրությամբ կաշխատի յուր ազգին կացությունը բարվոքելու համար։ Ասոր օրովն է, որ պատրիարքարանն հարաբերության մեջ մտավ դեսպանատուններուն հետ...» (68, հ. III, էջ 202)։

Հայաստանի հարստահարությունների քննիչ հանձնաժողովը փաստերով և հանգամանալի ուսումնասիրությամբ պարզեց գավառահայության կացության մանրամասները, մատնանշեց այն վարչական բարեկարգությունները, որոնց գործադրությունը պետք է նպաստեր հայկական նահանգներում օրինականության հաստատմանը։

Տեղեկագրում դիվանական թղթերի, հավաքական թաքրիրների ու պաշտոնական տեղեկությունների հիման վրա ցույց էր տրվում աշխատավոր ժողովրդի հարստահարությունները, թուրք պաշտոնյաների և քուրդ բեկերի անօրինություններն ու կամայականությունները։ Փաստեր էին արձանագրված այն մասին, թե արքունական շինությունների համար դրամ և մարդ էին պահանջում կամայականորեն, թնդանոթները տեղափոխելու համար անասունների փոխարեն մարդկանց էին լծում, անհիմն հարկեր գանձում, զապթիեները տներում և եկեղեցիներում բռնություններ էին գործադրում, կանանց ու անչափահաս երեխաներին բռնի մահմեդականացնում, հովանավորում հարստահարությունները և այլն։

Տեղեկագիրը բաժանված էր երկու մասի։ Առաջին մասն իր մեջ պարունակում էր գավառում տեղ գտած հարստահարությունների ամբողջ 20 տարվա արձանագրությունների

հավաքածուն և ընդգրկում մինչև 1872 թվականի ապրիլ ժամանակահատվածը։ Իսկ երկրորդ մասը՝ «Երկրորդ տեղեկագիր գավառական հարստահարությանց ի խորհրդարանական հանձնախմբեն ա.ռ «Ազգային ժողովն»» պարունակում էր 1872-ից մինչև 1876 թ. սեպտեմբերի 1-ը, այսինքն՝ 5 տարվա ընթացքում կատարված հարստահարությունների արձանագրությունները։ Պետք է ընդգծել, որ այդ թաքրիրների հիմնական բովանդակությունը բողոքն էր սոցիալական անարդարությունների, հարստահարիչ-կապալառուների, տասանորդ հարկի գանձման անարդարությունների, բռնությունների, բռնաբարությունների և այլնի դեմ։ Սա ֆեոդալական կապանքների, թուրքական դաժան իրականության դեմ պայքարի մի ձև էր, բայց ամենևին ոչ արդյունավետ ձև։

1876 թվականի օգոստոսի 24-ին Բ. Դոանը հղած իր թաքրիրի մեջ Ներսես պատրիարքը բողոքում էր հողային հարստահարությունների դեմ և «դարմանը խորհել կառաջարկեր»։ Ներսես պատրիարքը Բ. Դոանն առաջարկում էր մի խառը հանձնաժողով ուղարկել նահանգները և, նրա եզրակացությունները քննելով, գործնական քայլերի դիմել։ Պատրիարքարանից պահանջվեց ճշգրտել վայրերը, հողերը, մարդկանց անունները։ Ցուցակագրություն կատարվեց Վանից—Տրապիզոն, Քղիից մինչև Կեսարիա, ցույց տալով հայերից հափշտակված հողերի քարտեզը։ Սակայն թուրքական կառավարությունը խնդիրը թողեց անհետևանք։

«Հայ ժողովուրդն իր բնիկ երկրին մեջ փչացնելու գլխավոր միջոցներեն մեկը եղած է որշափ հնար է ընդարձակ սահմաններով հող կորզել հայոցմե և անիրավաբար զանոնք մահմեդականներուն փոխանցել» (62, № 16, 1900)։ Այս հողերի մի մասը անցնում էր չերքեզական վերնախավին (209, էջ 28)։

Հետագայում Գրիգոր Զոհրապը գրել է, որ «հայերու բողոքը քուրդ ժողովուրդին դեմ չէ եղած, այլ քուրդ աղաներուն, բեյերուն, դերեբեյներուն դեմ, որոնց ամեն մեկը կներկայացնեին առանձին իշխանություններ» (4, № 205, 1910)։ Ռուս-թուրքական պատերազմին նվիրված երկհատոր մեծածավալ աշխատության մեջ ֆրանսիացի հեղինակները հաստատում էին, որ Էրզրումի, Վանի, Դիարբեքիրի երկու

միլիոն բնակչությունից 1.330 հազարը հայեր էին։ «Այս 1.330 հազար քրիստոնյաները,— ասված է գրքում,— թուրքական վատ կառավարման հետևանքով, մեթոդապես և մշտապես ենթարկվում են այդ երկրում բնակվող 200 հազար քուրդ քոչվորների ճնշմանն ու հարստահարմանը։ Այս քրդերը մշտապես զինված են և վատ են մշակում հողը, որովհետև կարծում են, թե շատ ավելի հեշտ է ստիպել աշխատել իրենց համար նստակյաց ժողովրդին» (213, էջ 1121—1122)։

Ո՛չ ժողովրդի ընդվզումներն ու աղերսանքները, ո՛չ պատրիարքի ըստ պատշաճի արած դիմում-բողոքները, ո՛չ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի նիստերում հռետորների պերճախոս ճառերը, ո՛չ «սուլթանի արևշատության» համար բարեմաղթությունները գործնական ազդեցություն չէին ունենում։ Բ. Դուռն ամեն անգամ խուսափողական պատասխաններ էր տալիս, բավարարվում ցուցադրական քայլերով։

Աշխատավոր մարդկանց ճիչերը, աղերսանքները հասնում էին մինչև Բոսֆորի ափերը, ազգային ժողովի քննարկման և մամուլի հրապարակման նյութ դառնում, վերածվում հարատև պրոբլեմի, բայց, ինչպես ասում են, սայլը տեղից չէր շարժվում։ Թեև հարստահարությունների դեմ բողոքներն ազգային երանգ էին ստանում, բայց իրականում ակնբախ էր նրանց սոցիալ-դասակարգային բովանդակությունը։

Թուրքական հարստահարությունների դեմ բողոքներ կազմելու, գավառահայության իրավունքներն ըմբռնելու և պաշտպանելու գործում որոշակի դեր խաղաց Մկրտիչ Խրիմյանն իր գրչով ու գործով։ Ի տարբերություն շատ-շատերի, նա քաջ ծանոթ էր բուն երկրի իրավիճակին, գավառահայության կեղեքումներին։ Եվ տեղին էր ասվում, որ «Հայաստանի վիճակին մոտեն անծանոթ Ներսես Վարժապետյան պատրիարքական աթոռին վրա Հայրիկին տեղը չէր կրցած բռնել» (62, № 17, 1900)։

Մկրտիչ Խրիմյանը արդեն վաղուց ազդեցիկ դեմք էր և մեծ ժողովրդականություն էր վայելում իր ազգային գործունեությամբ, հրապարակումներով, գավառահայության հարստահարությունների դեմ իր բողոք-գանգատներով։ Նա վանեցի էր։ Ժամանակին Վան-Վարագում հիմնել էր ժառանգավորաց վարժարան, 1857-ին լույս ընծայել «Արծվի Վասպուրականի»-ն, 1862 թվականին՝ «Արծվիկ Տարոնոյ» ամսաթերթը։ Թեև հոգևորական էր (հանդիսացել էր Մշո թեմի առաջնորդ, 1868-ից եպիսկոպոս, 1869—1873 թթ. Կ. Պոլսի հայոց պատրիարք), սակայն ակտիվ ազգային-հասարակական գործունեություն էր ծավալել ժողովրդի լուսավորության, ինքնաճանաչման համար՝ ընդդեմ հետամնացության, թուրքական դժնի իրականության, հարստահարությունների և բռնությունների։ Նրա հրապարակումներում քննարկվում էին հայրենիքի գաղափարը, երկրի առաջադիմական զարգացման, թուրքական իշխանությունների, քոչվորական ցեղերի հակահայկական չարագործություններին վերջ դնելու խնդիրները։

Մ. Խրիմյանին պատրիարք ընտրելու գործում որոշակի դեր էր խաղացել Գրիգոր Օտյանը, որը թուրքական սադրագամ Ալի փաշայի դիմադրությունը հաղթահարել էր իր հեղինակությամբ, ասելով, թե՝ «Ես նրան երաշխավորում եմ» (62, № 10, 1900)։ Խրիմյանն ընթանում էր ազգի շահերը պաշտպանելու ուղիով։ Դա նշանակում է, որ Օտյանը և նրա համախոհները Կ. Պոլսի պայմաններում, թեև երկչոտ ու զգույշ, բաժանում էին նրա հայացքներն ու հարցադրումները։ Այն տարիներին Օտյանների բնակարանը Կ. Պոլսի հայկական ազդեցիկ գործիչների հավաքատեղին էր, ուր հաճախ այցելում էր նաև Խրիմյանը։

1869-ին Պոլսո հայոց պատրիարք ընտրվելով, Խրիմյանն ավելի ուժգնությամբ շարունակեց իր բողոքները Բ. Դռան մոտ՝ ««հայկական խնդրի» նկատմամբ, որ միջազգային հարց մը դառնալ առաջ, երկայն ատեն ծեծվեցավ թուրք կառավարության և հայոց միջև» (67, էջ 122)։ Նա ճանապարհորդել էր ամբողջ երկրում, քաջածանոթ էր գավառահայության վիճակին, սոցիալ-ազգային կեղեքումներին և անարդարություններին։ Նրա հիմնական հարցադրումը հանգում էր մի բանի՝ օրենքի առաջ մահմեդականների հետ քրիստոնյաների իրավահավասարությանը։ Պատահական չէր, որ 1873 թվականին նրան ստիպեցին հրաժարական տալ պատրիարքի պաշտոնից։ Արդեն այն ժամանակ գրում էին, որ նա ժողովրդի մեջ տարածեց «ազգի և հայրե-

նիքի» գաղափարը (57, № 177. 1878)։ Իր քարոզներում նա հայաստանցի ժողովրդին, պանդուխտ-մշակներին կոչ էր անում Կ. Պոլսից վերադառնալ հայրենիք, զենք վերցնել հարստահարիչների դեմ (57, № 152, 1878)։

Խրիմյանի առաջին գործը «Հրավիրակ այրարատյան»-ն էր, որտեղ նա օտարության մեջ գտնվող հայերին հրավիրում էր գնալ նախնյաց երկիրը, հիանալ նրա բնությամբ ու գեղեցկություններով, ծանոթանալ մոխիրների տակ ընկած և բազմաթիվ կոթողների մեջ մարմնացած նախնիների գործին, փառքին։ Իր գրական երկում նա ճանապարհորդում էր պատմական Հայաստանի դարերի մեջ, հիշեցնում Մեսրոպին, Մամիկոնյաններին, հրավիրում հայ զավակներին ոչ միայն հիշել նրանց, այլև խմբվել հայրենիքի շուրջը, վերականգնել այն։

Վանի շուկայի հրկիզման առիթով Խրիմյանը գրեց «Վանգույժ»-ը։ «Դեռևս հրազենների թնդյունը չէր լսվում Հայաստանի դաշտերում, որ հայի կյանքն ու ստացվածքը ապգային ատելության և կրոնական մոլեռանդության զոհ գնացին,— ասում էր նա։

—...Ամբողջ հայ գյուղեր ու քաղաքներ մոխրակույտի տակ ծածկվեցան, անթիվ ու անհամար հայերի անմեղ արյունը հեղեղի պես հոսեցավ, ...հազարավոր հայ ընտանիքներ վերահաս մահից ազատվելու համար, արտասուքն աչքերին ստիպվեցան իրենց պապերի երկիրը թողնել. թշվառ արարածներ, որոնք այս բոպեիս էլ մեր աչքերի առաջ թափառում են անտուն, անտեր, տկար ու քաղցած...»։ Նա կշտամբանքի խոսք էր ասում ժողովրդին՝ անշարժության և հեղության համար, ընդվզումի, դիմադրելու կոչ էր անում։ «Օ՜հ, մինչև ե՞րբ անսամ քեզ, որ ինքնազոհ մեռնիլ սորվիս, աշխարհ սորվեցավ այդ դասը, իր մրցանակն առավ, դու դեռ անուս մանուկ մնացիր» (80, № 2, 1877—78)։

Մի փոքր անց նա գրեց «Հայգույժ»-ը, որտեղ ցույց տալով, որ հայերը կոտորվում են, մորթվում, քանի որ «անգեն, անեղջյուր, անասպար կապրիք», դիմում էր նրանց, ասելով. «Դուք մարդ եք, ձեռք և բազուկ ունիք, միթե անզգացած մեռե՞ր է ձեր սրտմտության հոգին»։ Նա զենք, բազուկներ գործադրելու կոչ էր անում։

Խրիմյանի աչքից չէր վրիպել այն հանգամանքը, որ Անգլիայի բռնած դիրքը հայերին ոչ մի օգուտ չէր տալու, և զուր էին հայերը նրա պաշտպանության վրա մեծ հույսեր դնում։ «Եփրատ, Եփրատ,— աղաղակում էր Խրիմյանը,— ակունքներուդ վրա ընկած դիակները արյան հեղեղներ թավալգլոր բերելով քո ծոց կթափես, և դա տուր ալիքներուդ թող գլորե, տանե մինչև օվկիանա ափունք, հայոց աշխարհի անմոռուչ բողոքն է այդ։ Կլսե՞ արդյոք և կտեսնե՞ աշխարհի արյան հանդիսատես Լոնդոն, թե այդ է շահ մեծին Անգլիո» (57, 11/23. X. 1878)։

Այլ կերպ էր վարվում «ազգի երևելիների» մեծամասնությունը՝ Կ. Պոլսի էֆենդիները, կոմպրադոր վաճառականները ու բանկիրները։ Ապստամբության, ըմբոստության ոգին օտար էր փափուկ կյանք վարող մարդկանց, որոնք շարունակում էին հավատարիմ մնալ աղերսագրերի, խնդրագրերի տակտիկային և դրա մեջ էին տեսնում փրկության ուղին։ Նրանք դեմ էին պայքարի բալկանյան մեթոդներին, սարսափում էին զինված ելույթներից և իրենց գործողություններով հայկական կյանքի սուր անկյունները բթացնելու, ամեն ինչ չափավորության հունով տանելու համար էին գործում։

Ժողովրդի գլխին նրանք ստրկամիտ օրորներ էին կարդում։ Պատրիարքարանը արևմտահայերին հնազանդություն էր քարոզում, հաճոյասիրություններ անում ու ներբողներ կարդում սուլթանի հասցեին այն պահին, երբ չեռնոգորցիները, բոսնիացիները և բուլղարները մահու-կենաց կռվի էին ելել ընդդեմ բռնապետության։ Այդ ոգով էր գրված Ներսես պատրիարքի 1876 թվականի հուլիսի կոնդակը, որտեղ նա կրոնի, լեզվի, ազգային ապահովության համար «մենք պարտական ենք օսմանյան պետությանը» արտահայտություններն էր շռայլում։ Իսկ հայ երեսփոխանները միաբերան ձայնակցում էին նրան, հայտարարելով, թե հավատարիմ են օսմանյան պետությանը։ Այս փաստաթուղթը Գրիգոր Արծրունին անվանեց «խայտառակ ու ամոթալի» քայլ։

Բուլղարական ըմբոստ օրինակը ոգևորել էր շատերին։ Բայց թուրքական դարավոր տիրապետությունն այնքան էր

մաշել համարձակության ոգին, այնքան էր բթացրել սեփական ուժերով, անձնազոհաբար գործելու գիտակցությունը, որ համբերելու, սպասելու և երազելու մտայնությունը տիրապետող էր դարձել։

Այնուամենայնիվ, դեռևս 1876 թվականի դեկտեմբերի 10-ին, Կ. Պոլսի դեսպանաժողովի օրերին, ազգային ժողովը հանձնարարեց պատրիարքին գործել այն ուղղությամբ, որպեսզի օսմանյան կայսերական կառավարությունը նույնպիսի առանձնաշնորհումներ տա հայ ազգին, ինչպիսիք նախատեսվում էին երկրի մյուս քրիստոնյա հպատակների համար։ Նպատակն էր բարելավել նրա վիճակը, կանխել զբրկանքները, որպեսզի «բողոքի առիթ» «չընծայեն հայոց» ազգին (10, Ժ նիստ, 6. X. 1878)։ Ամեն ինչ արվում էր կանխելու համար ըմբոստությունը, «օրինազանցությունը»։

Համիդը Ներսես պատրիարքին ասում էր, թե իբր սիրում էր բոլոր հպատակներին, մանավանդ հայոց ազգին, թե բոլորն էլ օսմանցի են, և ինքը իբր խտրություն չէր դնում իսլամ և քրիստոնյա ժողովուրդների միջև։ «Օսմանիե» շքանշանով պարգևատրելով պատրիարքին, դրական խոսքեր շռայլելով հայերի հասցեին, սուլթանն ուզում էր հաճոյանալ հայկական վերնախավին, բթացնել նրա զգաստությունը, արտաքին աշխարհից նրա ունեցած հույսերը։ Միաժամանակ իր իսկ՝ սուլթանի գիտությամբ և անմիջական մասնակցությամբ հակահայկական ծրագրեր էին մշակվում և գործի դրվում։

Բալկանների իրադարձությունների զարգացումը, Ռուսաստանի դերի մեծացումը, միջազգային դիվանագիտության ակտիվ քայլերը գործողությունների էին մղում նաև Կ. Պոլսի երեկվա անտարբերներին։ Առաջանում էին նոր շափանիշներ, նոր մտածելակերպ, նոր հույսեր և հնարավորություններ։ Նոր թափ էր ստանում այն մտայնությունը, թե հայ ժողովուրդը թուրքական տիրապետության ծանր բեռից կարող է փրկվել միայն Ռուսաստանի օգնությամբ, միայն ռուսական դրոշի ներքո։

Ահա թե ինչու 1876 թվականի վերջերին ազգային ժողովը քննարկեց Ռուսաստանին դիմելու և բարենորոգումների համար նրա օգնությունը խնդրելու հարցը։ Մշակվեց

մի փաստաթուղթ, որն ուղարկվեց էջմիածին, կաթողիկոսի միջոցով Պետերբուրգ հասցնելու համար։

1876 թվականի ավարտին «թուրքասեր» հորջորջված պատրիարքը դիմեց Կ. Պոլսի դեսպանաժողովին, նրա միջամտությունը խնդրելով նաև Հայաստանի կացության բարվոքման համար։ Նույն պահին հայկական մամուլը նույնպիսի առանձնաշնորհումներ էր պահանջում, ինչպիսիք քննարկվում էին Բուլղարիայի համար՝ Ռուսաստանի նախաձեռնությամբ։

*
* *

Թուրքական տիրապետության շղթաները խորտակելու, արևմտահայությանն ազատագրելու անհամեմատ ավելի արմատական, ավելի համարձակ հարցադրումներով հանդես եկան ռուսահայերի հասարակական ուժերը։ Վերհիշվում էին անցյալի դասերը, Ռուսաստանի օգնությամբ հայրենիքը վերստանալու ծրագրերը, Պետրոս Մեծի, Եկատերինա II-ի, Իսրայել Օրու, Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի, Ներսես Աշտարակեցու, Խաչատուր Աբովյանի անուններն ու գործը։ Այստեղ տիրապետող էր դառնում այն մտայնությունը, թե Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը, Ռուսաստանին միանալու միջոցով օսմանյան տիրապետությունից ժողովրդի փրկվելը հնարավոր էին միմիայն Պետերբուրգի, ռուս ժողովրդի ու պետականության միջոցով։

Գրիգոր Արծրունու «Մշակ» թերթը դարձավ Ռուսաստանի օգնությամբ արևմտահայության ազատագրության պատգամախոսը, քաղաքական հրապարակախոսության առաջամարտիկը։ Ինչ խոսք, նրա էջերում ավելի դյուրին էր գրել մի այլ պետության ներքին ու արտաքին իրադրության մասին, քննարկել թուրքական դժնի իրականության խնդիրները, տարածության վրա դեղատոմսեր առաջարկել։ Հրապարակախոս Գրիգոր Արծրունին իր հոդվածներում բալկանյան սլավոնների օրինակին հետևելու, թուրքական լծի դեմ ընդվզելու խնդիր էր առաջադրում։

Հատկապես 1876 թվականից սկսած «Մշակ»-ի էջերը լայնորեն բացվեցին այդ թեմայի համար։ Եթե մինչ այդ

Արևմտյան Հայաստանը դեռևս անծանոթ էր մնում ռուսահայերին, ապա շնորհիվ Արծրունու, Բաֆֆու և շատ ուրիշների գրվածքների հետաքրքրությունը մեծապես շարժվեց Թուրքահայ եղբայրների նկատմամբ։ Նրանց քաղաքական ճակատագրի, աղատագրության գործը համակեց շատ-շատերի։ Հակաթուրքական պայքարի վերընթացի պայմաններում այն դառնում էր տիրապետող և ազդեցիկ ուղղություն։

Գամառ-Քաթիպան «վանեցի գեղջուկի» բերանով կոչ էր անում.

«Եղբայրք հայեր, առե՛ք խոփը, տվե՛ք
դարբնին կռելու,
Կռել-կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը
փրկելու»։

Գր. Արծրունին գրում էր. «Մի՞թե վերջապես Թուրքահպատակ հայերը չեն հասկանա, որ Թուրքիայի այժմյան անմխիթար դրությունը այնքան հարմար է մարդկային իրավունքները պահանջելու համար, որ գուցե դարերով այդ տեսակ հարմար դրություն դարձյալ պատահելու չէ։ Ամոթ կլինի հայերին, եթե նրանք իրենց իրավունքները պաշտպանելու և նոր իրավունքներ սեփականացնելու համար ձայն չեն բարձրացնի...»։ Արծրունին գտնում էր, որ հայությունը Թուրքական լծի տակ այնպես էր ճնշված, նվաստացած, որ կրավորական էր դարձել, ի վիճակի չէր բողոքելու, ըմբոստանալու։ Նա դրսի հզոր ուժ էր փնտրում, որն օգնության ձեռք մեկներ։ Այդ ուժը նա համարում էր Ռուսաստանը։

Վկայակոչվում էին Պետրոս I-ի խոսքերը հայերի մասին. «Ձեզ, հանուն քրիստոնեության, որպես քրիստոնյաների, հնարավոր չէ մերժել հովանավորությունը»։ Մյուսները վերհիշում էին Եկատերինա II-ի բարյացակամությունը, որը 1791 թվականի փետրվարին գեներալ Կախովսկուն հրամայել էր կառուցել Գրիգորիոպոլիսը՝ «համաձայն աշխատասեր հայ ժողովրդի կյանքի պայմաններին և հիմնարկների բնույթին» (148, էջ 390)։

«Մշակ»-ը քննադատում էր Թուրքական իրականությունը, Կ. Պոլսի վերնախավին ու մտավորականությանը, ազգային ժողովի և Ներսես պատրիարքի գործունեությունը։

Արծրունին ցույց էր տալիս, որ նրանք փոխանակ զբաղվեին հայրենիքի խնդիրներով, ամբողջ ուշն ու միտքը նվիրել էին եվրոպական իրականությանը նմանվելուն։ Նա պահանջում էր, որ ազգային ժողովը Կ. Պոլսից տեղափոխվեր բուն երկիր, Հայաստանի քաղաքներից մեկը։

Գր. Արծրունին անդրադառնում էր Արևմտյան Հայաստանի տնտեսական աշխարհագրությանը, հիմնավորում բնական հարստությունների շահագործման տնտեսական նշանակությունը, քննում բուսական և կենդանական աշխարհի հարցերը։ Նա բացատրում էր այդ հարստությունների շահագործման հնարավորությունը Թուրքական կառավարման կամայականությունների պայմաններում։ Նա հատկապես շեշտը դնում էր կապիտալիստական արտադրության, առևտրի և արհեստների բնագավառներում հայերի ակտիվ դերի հեռանկարի վրա (88, էջ 19, 20, 24)։

1877 թվականին «Փորձ»-ը գրում էր. «Այն գաղափարը, թե յուրաքանչյուր ժողովուրդ, որ յուր ազգային առանձնություններն ունի, իր ծագումն ու լեզուն, յուր փորձն ու սովորությունները, յուր պատմական ավանդությունները, յուր հայրենի երկրի սահմանները, իրավունք ունի անկախության ձգտել և մի քաղաքական մարմին կազմել...» (80, № 1, 1877—78, էջ 352)։

Մամուլի էջերը լի էին վիճաբանություններով, ռուսահպատակ և Թուրքահպատակ հայության դրության, նրանց ապագայի շուրջ զուգահեռներով և իրարամերժ տեսակետներով։ Սակայն մի բան պարզ էր՝ որ թե՛ արևմտահայ ժողովուրդը, թե՛ ռուսահայ հասարակական-քաղաքական առաջադիմական միտքը փրկության միակ ուժը համարում էին Ռուսաստանը։ Նույնիսկ Էրզրումի անգլիական հյուպատոս Թեյլորը խոստովանում էր, որ Արևմտյան Հայաստանում գավառահայությունն ամբողջապես ռուսասեր էր (73, էջ 145)։ Ռուսահայ հասարակական շրջանները, շնչին բացառությամբ, այն կարծիքին էին, այն հույսն էին փայփայում, որ Ռուսաստանը չպետք է անտարբեր մնար անլուր տառապանքների ենթարկված արևմտահայության նկատմամբ։

Ռուսական մամուլը 1876 թվականից սկսած անդրադառնում էր արևմտահայության դրությանը, աշխուժորեն քննե-

նարկում Թուրքական լծից նրա ազատագրման ուղիները։

Հօգուտ հայերի ռուսական թերթերից առաջինը ձայն բարձրացրեց «Մոսկովսկիե վեդոմոստի»-ն։ Այնուհետև հանդես եկավ «Պրավոսլավնոյե օբոզրենիե» ամսագիրը, որը 1877 թվականի մարտին պահանջում էր Փոքր Ասիայում վերականգնել «հայկական թագավորությունը»։ Ամսագիրը հերքում էր այն կարծիքը, թե իբր Թուրքահպատակ ժողովուրդներն անպատրաստ էին քաղաքական կյանք վարելու, և ապացուցում, որ այդ «անպատրաստ կարծիքը պաշտպանում ու տարածում է խորամանկ Անգլիան, որ հարմար ժամանակի է սպասում այդ երկրները կուլ տալու» (80, № 1, 1877—78, էջ 356)։ «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» թերթը 1877 թվականի մայիսի 1-ին առաջնորդող հոդվածում Եվրոպական Թուրքիայի սլավոնների և հույների անկախության խնդրի հետ մեկտեղ պաշտպանում էր հայերի անկախության գաղափարը։

Երբ Ալեքսանդր II-ը Մոսկվայում արտասանած իր ճառում ի լուր աշխարհի հայտարարեց, թե Կ. Պոլսի դեսպանաժողովի անհաջողության դեպքում ինքը որոշել է նույնիսկ միայնակ զենքի դիմել Թուրքիայի սլավոնների «ազատության» համար, նրան արձագանքեցին նաև հայերը։ Թիֆլիսում Գրիգոր Արծրունու նախաձեռնությամբ մի խնդրագիր ներկայացվեց Կովկասի փոխարքա Միխաիլ Նիկոլաևիչին (1876 թ. դեկտեմբերի 3-ին), որտեղ ցարի հովանավորությունն էր խնդրվում Թուրքիայում «մահմեդականությունից միշտ ճնշված հայոց ազգի» նկատմամբ (73, էջ 150—151)։ Այդ փաստաթղթում հույս էր հայտնվում, որ Հայաստանը կստանար ներքին կառավարման ինքնավարություն։

Այնտեղ մասնավորապես ասված էր. «Բնակվելով ռուսաց տերության հովանու տակ և վաղուց արդեն վայելելով մեզ համար թանկագին պետության հովանավորության տակ հանգստության և խաղաղության պարգևները, մենք՝ Թիֆլիս քաղաքի հայերս, դրդված քրիստոնեական մարդասիրական զգացմունքից, չենք կարող անտարբեր մնալ դեպի այն անելանելի տանջանքները, որ կրում են Ասիական Թուրքիայի սահմաններում բնակվող մեր ցեղակիցները և համադավանները, որտեղ ո՛չ սեփականությունը, ո՛չ քրիստոնյաների

կյանքը, ո՛չ նրանց ընտանիքի, կանանց ու աղջիկների պատիվը ոչնչով չի ապահովված»։ Այնուհետև Ալեքսանդր II-ից խնդրում էին իր հզոր ձեռքով պաշտպանել նաև հայերին մյուս քրիստոնյաներին հավասար՝ «այն միջոցներով, որ նախախնամությունը հանձնել է նորին մեծությանը և որ նա ավելի հարմար կհամարի» (57, № 48, 1876)։

Ռուսաստանին դիմելու, նրանից օգնություն հայցելու քայլերին զուգընթաց, առաջին գործողություններն էին արվում Եվրոպային Հայաստանը ծանոթացնելու, հայ ժողովրդի ծանր, ողբերգական կացությունը պարզելու և պրոպագանդելու ուղղությամբ։

Կ. Մարքսը ցույց է տվել, որ Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի համեմատությամբ Ռուսաստանում շատ ավելի շուտ պատկերացում կազմեցին Թուրքիայի սոցիալ-քաղաքական բնույթի, նրա ներքին ռեալ դրության մասին։ Նա գրել է, որ արևմտյան դիվանագետներն ավելի լավ չգիտեին Թուրքիայի ներքին կացության վիճելի հարցերի, քան լուսնի մարդկանց մասին։ Ճիշտ է, XIX դարի 20—40-ական թվականներին գերմանական բանասերները զգալի բան արին թուրքական պատմության և գրականության, իսկ անգլիական լիազորներն ու վաճառականները՝ կայսրության սոցիալական դրության պարզաբանման ուղղությամբ։ Սակայն Կ. Մարքսը գրել է, որ արևմտաեվրոպական դիվանագետները շարունակում էին կառչել ավանդություններին և չըմբռնել իրավիճակը (1, հ. IX, էջ 387—388)։

Հիրավի, Եվրոպայում վատ գիտեին Օսմանյան կայսրության ներքին նահանգների վիճակը, ազգային փոխհարաբերությունները, մասնավորապես, արևմտահայության ծանր կացությունը։ «Եվրոպայի ուշադրությունը միայն բուլղարների վրա էր, որոնք ավելի մոտ և ավելի աչքի առջև էին և որոնց տառապանքը բնականաբար ավելի մեծ արձագանք էր գտնում մոտակա երկրներում։ Բայց բուլղարները հայոց կրածը չկրեցին։ ...Իսկ Փոքր Ասիո հեռավոր գավառներում, որ հսկողությունից դուրս է, Թուրք պաշտոնյաներն ուզածն ավելի համարձակ են անում» (53, № 2144, 1878)։

«Մի՞թե եվրոպական դատարանի առաջ բարձրագույն աղաղակը և հրացանը ավելի մեծ նշանակություն ունեն,

քան համեստ խոսքն ու գրիչը»,— այսպես է գրել «Փորձ»-ը իր առաջին համարում (80, № 1. 1877—78, էջ 356)։ Հայկական մամուլի էջերում փորձում էին հերքել անգլիական աղբյուրների կողմից տարածվող այն ստահոդ լուրերն ու տեսակետները, թե հայկական հուզումները, բողոքները իբր «ռուսական գրգռությունների արդյունք էին» (181, № 1, 1877, էջ 375)։

Հնդկահայ մեծահարուստ վաճառական Մեթ Աբգարը Լոնդոնում ֆրանսերեն լույս ընծայեց մի հիշատակագիր, որի մեջ փաստեր բերելով գավառահայության հարստահարությունների մասին, հարց էր բարձրացնում, որ Եվրոպան Բալկանների քրիստոնեության հետ մեկտեղ զբաղվեր Թուրքահպատակ հայերի վիճակով (202)։ 1876—1877 թթ. եվրոպական մամուլում նույնպես Թուրքահայաստանի մասին նյութեր տպագրվեցին։ Բելգիական թերթերից մեկը գրում էր «ազատ Հայաստանի» ստեղծման անհրաժեշտության մասին, որն օգտակար կլիներ թե՛ Ռուսաստանին, թե՛ Անգլիային։ «Փորձ»-ը վստահ էր, որ Թուրքական կառավարությունն էլ էր համաձայնվելու դրան, որովհետև «նա պարտավոր է վարձատրել վերջապես հայոց ազգի բազմադարյան մեծամեծ ծառայությունները և անվրդով հավատարմությունը» (80, № 1, 1877—78, էջ 363—366)։

Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի նիստերում բարենորոգումների շուրջ տեղի ունեցած քննարկումները, վիճաբանություններն աննկատ չէին մնում արևմտաեվրոպական դիվանագետներին։ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը խորհուրդ էր տվել Կ. Պոլսում իր դեսպանին՝ ներազդել Բ. Դռան վրա բարենորոգումների ծրագիրը տարածելու։ Նաև կայսրության արևելյան նահանգներում, տկարացնելու համար Ռուսաստանի ձգողական ուժը հայերի մոտ (16, էջ 90)։ Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Հենրի Էլիոտին պատրիարք Ներսեսն ակնարկում էր այն մասին, որ հայերի վիճակն ավելի լավ չէր ապստամբ սլավոնների վիճակից, թե «դժվար չէր» նմանօրինակ ապստամբական շարժում առաջ բերել հայերի կողմից՝ «եվրոպական տերությունների համակրությունը գրավելու համար» (73, էջ 130—131)։ Այսպիսի դիրքորոշումը ջուր էր լցնում Բ. Դռան քաղաքակա-

նությանն այդ պահին, որը հենց ապստամբության փաստն էր օգտագործում Եվրոպային հեղափոխական շարժման վտանգով սարսափեցնելու և սլավոնների պահանջները մերժելու համար։

Կ. Պոլսի դեսպանաժողովի օրերին լորդ Սոլսբերիին ներկայացվեց անգլիական քահանա Քրթիսի «Հանուն Թուրքիայի հայերի—հայերն ու Արևելյան հարցը» անգլերեն գրքույկը, որը հրատարակվել էր Լոնդոնում։ Այս քայլի նպատակն էր դեսպանաժողովի ուշադրությունը հրավիրել նաև հայոց վիճակի վրա։ Դեսպանները, սակայն, բավարարվեցին միայն Եվրոպական Թուրքիայի քրիստոնյաների խնդրի քննարկումով։

*

* *

Ներքին և արտաքին քաղաքական բարդացումների հետևանքով խոր ցնցումների մեջ էր Թուրքական վերնախավը։ Կայսրության մոտալուտ խորտակման վտանգն ինքնըստինքյան փրկության ուղիների տարբերակներ էր առաջադրում։ Նորից հրապարակ էին բերվում Թուրքական նախորդ ռեֆորմատորների ծրագրերը պետությունը վերակառուցելու, բարենորոգելու մասին։

Թուրքական ազգային բուրժուազիան, նախորդ շրջանի համեմատությամբ, այնուամենայնիվ որոշակի զարգացում էր ապրել և համապետական միասնական հիմքի վրա երկրի բոլոր ժողովուրդներին օսմանցիության լոզունգի ներքո համախմբելու ծրագրեր էր փայփայում։ Այս հողի վրա 70-ական թվականներին աշխույժ գործունեություն ծավալեցին 1868 թվականից Թուրքական քաղաքական կյանքի ասպարեզ իջած «նոր օսմանները» (Եվրոպայում սրանց հենց սկզբից «ժեոն թյուրքեր»՝ «երիտթուրքեր» էին անվանում)։ Սրանց վտարանդի ներկայացուցիչները Եվրոպայում գրական-հասարակական ու քաղաքական գործունեություն էին ծավալել ու քննարկում էին սեփական հայրենիքի հետագա ճակատագրի խնդիրները։ Դրանց պարագլուխ դարձավ Միդհատ փաշան։

Օսմանյան կայսրությունն ապրում էր մի պահ, երբ նրա արտաքին քաղաքական իրավիճակը սերտորեն միախառնվում էր ներքին քաղաքական անկայուն դրության հետ։ Ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների հարվածների տակ, բուն Թուրքական վերնախավում, բուրժուակալվածատիրական շրջաններում տեղի էր ունենում արժեքների վերագնահատման, պետությունը փակուղուց դուրս բերելու ուղիներ փնտրելու պրոցես։ Այս դրությունն արտաքին ուժերն ուզում էին օգտագործել յուրովի, իրենց շահերին համապատասխան։

Անգլիական դիվանագիտությունը Միդհատին և նրա համախոհներին փայփայելու ու խրախուսելու միջոցով ձգտում էր ընդգիմանալ Բալկաններում ազգային պետությունների ստեղծման, ռուսական քաղաքականության օգնությամբ Բալկաններում Թուրքական տիրապետության վերացման պրոցեսին։ Միդհատն ու «նոր օսմանները» պետք է բարենորոգումների, սահմանադրություն հռչակելու միջոցով ապահովեին կայսրության պահպանումը, կանխեին ռուսական ազդեցության միջոցով սլավոնական ժողովուրդների զարգացման, ինքնուրույն ուղի դուրս գալու հնարավորությունը։ Նրանք հանդես եկան պետության մեջ Թուրք տարրի գերիշխանության, իսլամ. հիմքերի ամրապնդման հետևողական պահանջով։ Այս մտայնությունն ունեցող մարդիկ էին, որ 1876 թվականին առաջ բերին օսմանյան սահմանադրությունը, հռչակելով ամբողջ պետությունը բարենորոգելու իրենց մտադրությունը։

Սրա հանդեպ վերապահ դիրք բռնեցին բալկանյան ժողովուրդները, որոնք արդեն ընթանում էին անջատման և իրենց սեփական պետություններն ստեղծելու ուղիով։ Կ. Պոլսի հայոց վերնախավը, ընդհակառակն, հիմնականում հույսը կապում էր համապետական և ընդհանուր բարենորոգումների իրագործման հետ։ Կ. Պոլսի հայկական վերնախավի «ազգային վարչության» առջև խնդիր էր ծառացել ճշտել անելիքը՝ հենվե՞լ կառավարության վրա, հարե՞լ «նոր օսմանների» ծրագրին, թե՞ միանալ քրիստոնյա հպատակների շարժմանը և դիմել տերությունների միջամտությանը։ Սրանք իրարամերժ, հակոտնյա ուղղություններ էին, և Կ.

Պոլսի հայությունն էլ իր դասակարգային շահերին ու պատկանելությանը համապատասխան հարել էր տարբեր ուղղություններին, չդրսևորելով ո՛չ միասնություն, ո՛չ որոշակի դիմագիծ։

«Միդհատ փաշան,— գրել է սովետական պատմաբան Ֆադեևան,— հանդես էր գալիս Օսմանյան կայսրությունում Թուրքերի կողմից նվաճված ժողովուրդների վրա Թուրքական տիրապետության պաշտպանի դերում և այդ հարցում համերաշխում էր սուլթանական-ֆեոդալական վերնախավի հետ, որը շահագրգռված էր ոչ Թուրքական նահանգներում Թուրքական իշխանության պահպանման մեջ» (168, էջ 145—156)։ Եվրոպական կրթություն ստացած, ֆրանսիական գրականությանը, ժամանակի քաղաքական ուսմունքներին ծանոթ «նոր օսմանների» առաջատար դեմքերը, ըստ էության, չունեին սոցիալ-քաղաքական, տնտեսագիտական որոշակի, կուռ հայացքներ։ Թուրքական բուրժուական ազգի կազմավորման պրոցեսի այս առաջին մոնետիկները հենց սկզբից տուրք ավեցին Թուրքերի ազգային բացառիկության շովինիստական քարոզներին։ Նրանք երբեք չկարողացան վեր կանգնել կրոնական մտածելակերպից ու չափանիշներից, մշտապես երազելով Թուրքիայի վաղեմի հզորության վերականգնման մասին։ Զուրկ սոցիալ-դասակարգային լայն հենարանից, նրանց հայացքները պարփակվում էին նեղ շրջանակներում։ Ժողովրդի ծայրահեղ հետամնացությունը, կրոնական կապանքները, պետության ռազմատոստիկանական բնույթը, դեմոկրատական ազատությունների իսպառ բացակայությունը բացառում էին շարժման զանգվածային բնույթը։ Ժամանակին տեղին են նկատել, որ նրանք զորավարներ էին առանց բանակի, գաղափարախոսներ՝ առանց ժողովրդի։ Բնականաբար, նրանց շարժումն էլ պետք է մնար վերնախավային, կրեր դավադրական բնույթ։

Փարիզում հիմնադրված «Հյուրրիեթ» (Ազատություն) թերթի շուրջ համախմբված «նոր օսմանները» հանդես եկան սուլթան Աբդուլ Ազիզի դեմ, նրան մեղադրելով պետությունը վատ կառավարելու մեջ։ Արդարև, այդ սուլթանը հայտնի էր իր ցոփ կյանքով։ Սուլթան Մեջիդի կառուցած թատրոնը նա վերածել էր ախոռի, իսկ աքլորների ու որսի շների հա-

մար հսկայական շենքեր էր կառուցել իր պալատի հարևանությամբ։ Նույնիսկ մի աթոռի վրից «Օսմանիև» շքանշան էր կախել՝ նշելով նրա «արիությունը» (27, էջ 110)։ «Նոր օսմանները» մի կոչ հրապարակեցին, որտեղ ազգային ճնշումների, ապստամբական շարժումների, երկրի ծանր դրության միակ մեղավորը հռչակեցին սուլթանին։

Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Հենրի Էլիոտը փաստորեն դարձել էր Միդհատի խորհրդականը։ Անգլիական դաղութատերերը հուսով էին, որ «նոր օսմանների» միջոցով կհաջողվեր իրենց ենթարկել ամբողջ Օսմանյան կայսրությունը։ Իսկ նրանց հակասլավոնական դիրքորոշումը ուղղակիորեն համընկնում էր անգլիական շահերին։

1876 թվականի մայիսի 30-ին պալատական հեղաշրջումով Աբդուլ Ազիզը գահընկեց արվեց։ Դերիդուրը Աբդուլ Ազիզին անվանում է «բթամիտ և ագետ մարդ», որի գլխավոր զբաղմունքը հարեմի քմայքներն էին։ Նրա օրոք նահանգների մեծամասնությունում փաշաներն իրենց պահում էին ինչպես միապետներ, պետական գանձարանը մշտապես դատարկ էր, թեև սուլթանը վաշխառուական պայմաններով միլիարդների հասնող փոխառություններ էր վերցնում եվրոպական պետություններից և հետո հայտարարում էր իր անվճարունակության մասին։ Վարչական օրգաններն ու դատարանը գտնվում էին կամայականության ճիրաններում (118, էջ 450—451)։

Սկզբում սուլթան հռչակվեց Մուրադ V-ը, որը Միդհատին և նրա կողմնակիցներին երաշխիքներ տվեց պաշտպանելու սահմանադրական շարժումը։ Նա համաձայնվել էր թագավորել, բայց չկառավարել։ Շուտով հայտարարվեց, որ նա հոգեկան հիվանդ է և Սերբիայի ու Չեռնոգորիայի հետ սկսված պատերազմի պահին իշխանությունից հեռացվեց։

1876 թվականի օգոստոսի 31-ին գահ բարձրացավ տրիբահռչակ Աբդուլ Համիդ II-ը, որը հետագայում «արյունոտ», «կարմիր» սուլթան անվանումն ստացավ։ Քաղաքական լարված վիճակից դուրս գալու, «նոր օսմանների» օժանդակությունից օգտվելու նպատակով Համիդը նրանց մեծ խոստումներ տվեց, սահմանադրական կարգերի կողմնակից

ձևացավ։ Այդպիսի տակտիկան նրան պետք էր նաև զուտ արտաքին-քաղաքական, դիվանագիտական խնդիրներ լուծելու համար։ Չէ որ այդ պահին Կ. Պոլսում հավաքված արևմտաեվրոպական դիվանագետները ռեֆորմների նախագծեր էին մշակում Բալկանների համար, իսկ սահմանադրության հռչակմամբ խորամանկ սուլթանը նպատակ ուներ կանխել եվրոպական դիվանագիտության միջամտությունը կայսրության ներքին գործերին։

Միդհատ փաշան նշանակվեց պրեմիեր մինիստր (սադրազամ կամ մեծ վեզիր) և ձեռնամուխ եղավ սահմանադրության մշակմանը։ Այս գործում նրան օգնում էր Գրիգոր Օտյանը, որին բազմաթիվ աղբյուրներ վերագրում են Թուրքական սահմանադրության գլխավոր հեղինակի պատիվը։

1876 թվականի դեկտեմբերի 23-ին Կ. Պոլսում, միջազգային կոնֆերանսի բացման օրը, հրեատանային համազարկերն ազդարարեցին սահմանադրության հռչակումը։ Կոնֆերանսում Թուրքական պատվիրակը հայտարարեց, որ սուլթանը կայսրության բոլոր քաղաքացիներին շնորհում է սահմանադրական իրավունքներ, և որ դրանով իսկ դիվանագետների հավաքը կորցնում է իր նշանակությունը։

Սակայն ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ սահմանադրությունը, նրա հեղինակների հավատամքը։ Սահմանադրության մեջ հատուկ հոդվածով իսլամը հռչակված էր պետական կրոն։ Ճնշված ազգությունների իրավունքները չէին ճանաչվում։ Սահմանադրության առաջին հոդվածում ասված էր, թե «Օսմանյան կայսրությունը մի անբաժանելի ամբողջություն է կազմում, որով և ոչ մեկ մասը չի կարող անջատվել որևէ պատճառով» (69, էջ 48)։ Ութերորդ հոդվածը սահմանում էր, որ կայսրության բոլոր հպատակները, անկախ իրենց հավատից, կոչվում են օսմանցիներ։

Նամըկ Քեմալը, Ալի Սուավին, այնուհետև Միդհատ փաշան և մյուսները ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ բռնեցին բացորոշ թշնամական դիրք։ Նրանք կատաղությամբ էին լցված Օսմանյան կայսրությունից անջատվելու յուրաքանչյուր ճնշված ժողովրդի ազատագրական մաքառումների դեմ, փորձում էին նույնիսկ տեսականորեն

հիմնավորել ազգային-ազատագրական շարժումների պատմական աննպատակահարմարությունը, հետամտում էին պանօսմանիզմի գաղափարը (146, էջ 125—127)։

Այսպիսով, բալկանյան ժողովուրդները, արաբներն ու հայերը իրենց պայքարի ճանապարհին հանդիպում էին ոչ միայն սուլթանի սրին ու եվրոպական դիվանագիտության խաղերին, այլև թուրքական կյանքի վաղվա օրը կանխորոշելու հավակնող ուժերի թշնամական դիմադրությանը։ Թուրքական ներքին իրականության մեջ նրանք զրկված էին որևէ առաջադիմական ուժի օժանդակությունից։

«Ազգային հարցում «նոր օսմանների» քաղաքականությունը,— գրում է սովետական թուրքագետ Յու. Պետրոսյանը,— ինչպիսի ֆրազներով և լոզունգներով էլ որ նա քողարկվեր, գործնականում հանգում էր հայերի, արաբների, քրդերի, հույների և Օսմանյան կայսրության մյուս ժողովուրդների վրա թուրքական տիրապետության պահպանմանը» (146, էջ 129)։ Սովետական պատմաբան Շպարոն գրել է, որ «նոր օսմանները» ձգտում էին սուլթանական միահեծան իշխանությունը փոխարինել սահմանադրական միապետությամբ, բուրժուական ռեֆորմների միջոցով ճանապարհ հարթել երկրի կապիտալիստական զարգացման համար, ազատվել օտարերկրյա կախվածությունից։ Նույնիսկ նրանցից առավել ռադիկալները՝ Նամըկ Քեմալը և Զիա բեյը, շխոսելով արդեն առավել չափավոր բուրժուական ռեֆորմատոր Միդհատ փաշայի մասին, կայսրության ամբողջականության կողմնակիցներ էին և խստիվ դեմ էին սլավոններին, արաբներին, հայերին և սուլթանական ռազմաֆեոդալական բռնակալության կողմից ճնշված մյուս ժողովուրդներին ինքնուրույնություն շնորհելուն (172, էջ 59—60)։ «Նոր օսմանների» քաղաքական հայացքները հետագայում փոխանցվեցին երիտասարդ թուրքերին, որոնք ավելի ընդգծված թշնամական դիրք բռնեցին կայսրության ճնշված ժողովուրդների նկատմամբ։ Յու. Պետրոսյանը նկատել է, որ «նոր օսմանները» Թուրքիայի քաղաքական հողում ցանեցին թուրքական նացիոնալիզմի այն սերմերը, որոնք հետագայում դարձան պանթուրքիզմի ռեակցիոն գաղափարախոսությունը (146, էջ 130)։

Այսօր էլ թուրք պատմաբանները ջանք չեն խնայում ժխտելու հայկական հարցի ծագման ու զարգացման օրինաչափությունը։ Նրանք մի կողմից փորձում են ապացուցել, թե սուլթանական իշխանությունը լավագույն վերաբերմունք ուներ արևմտահայության նկատմամբ, մյուս կողմից, կեղծելով պատմական իրականության ճշմարիտ պատկերը, արտաքին գործոններին են վերագրում հայկական հարցի ծագումը։ Որպես կանոն, թուրքական հրատարակությունների գլխավոր թիրախը Ռուսաստանն է, նրա արևելյան քաղաքականությունը, որի գործողություններով է պայմանավորվում հայկական հարցի այս կամ այն դրսևորումը։

Ջրմբռնելով հասարակական զարգացման օրինաչափությունները, հակագիտական դիրքերից գովերգելով Օսմանյան կայսրությունը, ափսոսալով նրա փլուզման համար, թուրք հեղինակները ժխտում են ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի օրինաչափությունը, ազատության և ինքնորոշման նրանց ձգտումների իրավունքը։ Այստեղից էլ այն մշտական նենգափոխումներն ու կեղծիքները, որ բնորոշ են թուրքական հեղինակների թե՛ երեկվա, թե՛ այսօրվա գործերին։

Թուրք պատմաբան Սադի Կոչաշը 1967 թվականի մայիսին «Ջումհուրիեթ» թերթի մի քանի համարներում հրապարակեց իր «Հայերը պատմության ընթացքում և հայ-թուրքական հարաբերությունները» պատմական ակնարկաշարը։ Այստեղ ամեն ինչ խեղաթյուրված է։ Հեղինակը գործադրել է բոլոր ջանքերը կեղծելու պատմական փաստերը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։ Այս հեղինակի նպատակադրման մեջ գլխավորը հայերին վատաբանելն է։ Անդրադառնալով XIX դարի 70-ական թվականների իրադարձություններին, նա արդարացնում է սուլթանի քաղաքականությունը։ Այնուհետև նա առանց այլևայլության գրում է, թե «օսմանցիները ոչ մի տերիտորիա չեն խլել հայերից և չեն միացրել իրենց երկրին»։ Սադի Կոչաշը կրկնում է հայերի Արևմտյան Հայաստանում մեծամասնություն չլինելու հին երգը, խոսում է հայերի նախկին հավատարմության և հետագա դավաճանության, Ռուսաստանի հրահրիչ դերի, պատրիարքարանը հակակառավարական, հեղափոխական

կենտրոնի վերածվելու և այլնի մասին, բայց հարկ չի համարում հաշվի նստել ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և դրա համար նրանց մղած երկարատև պայքարի փաստերի հետ։

Տակավին Թուրքիայում չի գտնվել մի հեղինակ, որն ընդուներ Օսմանյան կայսրությունից ճնշված ժողովուրդների անջատվելու օրինաչափությունն ու անհրաժեշտությունը։ Թուրք պատմաբանների գրվածքները զուտ պատմողական, հեքիաթանման բաներ են, քան պատմության փաստերի, երևույթների ուսումնասիրություն։ Որպես կանոն, հայերին վերաբերող գրվածքներում մի որևէ օրինակով հեղինակները փորձում են ընթերցողներին ցույց տալ, թե իրենք հայ բարեկամներ են ունեցել, նրանց շատ են սիրել, հետո նրանք ընկել են ուրիշների ազդեցության տակ և հակաթուրքական գործունեություն ծավալել։ Այսպիսի օրինակով է սկսում և վերջացնում Սադի Կոչաշը։

1973 թվականին վերահրատարակվեց Աբդուլլահ Ցամանի «Հայկական հարցը և Թուրքիան» գիրքը, որտեղ փորձ է արվում ապացուցելու, թե հայկական հարցն իբր արհեստականորեն արտաքին ուժերի, օտարերկրյա տերությունների կողմից հրահրված երևույթ էր։ Սեփական իրավունքների համար հայերի մղած պայքարը մատուցվում է որպես հանցանք, որպես դավաճանություն։

1973 թվականին Ստամբուլում լույս տեսավ Ալթան Դելիորմանի «Հայկական կոմիտեները Թուրքերի դեմ» գրքույկը։ Հեղինակը նույն տեսակետն է զարգացնում, հայկական շարժումը կապում է օտարերկրյա իմպերիալիստների սադրանքների հետ, որոնք, իբր, ստեղծեցին հայկական հարցը։ Ալթան Դելիորմանին դուր չի գալիս, որ ժամանակին հայ երիտասարդներն ուսում ստացան Ռուսաստանում և Եվրոպայում, տարվեցին ազգային զգացումներով, հայրենիքի գաղափարով։ Նկարագրելով այս կեղծագիրը թուրք երիտասարդությանը գրգռում է հայ ժողովրդի դեմ, նրան մղում թշնամական գործողությունների։

Քննարկվող հարցերին նվիրված՝ ժամանակակից թուրք հեղինակների գրքերում ամենատարբերական ճշմարտությունները ներկայացվում են ծուռ հայելու մեջ։ Նրանցից մեկը

պնդում է, թե հայկական շարժում չէր կարող առաջանալ Թուրքիայում, քանի որ այնտեղ հայերն «ապրում էին հանգստության և երջանկության մեջ», որ այն արհեստականորեն հարուցել են եվրոպական տերությունները ու Ռուսաստանը՝ նրանից օգուտներ քաղելու համար (155, էջ 93)։ Ինչ խոսք, հայկական հարցն իրենց շահերին համապատասխան օգտագործելու մեջ շահագրգռված էին և այդ միտումով էին գործում տերությունները։ Բայց բուն հարցը մի ամբողջ ժողովրդի ազատագրության, օտարերկրյա լուծը թոթափելու խնդիրն էր՝ պայմանավորված միանգամայն բնականոն և օրինաչափ դրդապատճառներով։

Բնորոշ է, որ Միդհատ փաշան և նրա համախոհներն Աբդուլ Ազիզի դեմ իրենց պայքարի մեջ հենվում էին հոգևորականության վրա, փողոց ցույցի հանելով հոգևոր ուսումնարանների սովորողներին (սոֆտաներին), որոնց թիվը միայն Կ. Պոլսում հասնում էր 25—30 հազարի (118, էջ 46)։

Միդհատ փաշան հայտնի էր իր վայրագ դաժանություններով տակավին Դանուբյան վիլայեթի կուսակալի պաշտոնը վարելիս, երբ ստացավ «բուլղարասպան» մականունը։ Չէ որ իշխանության գլուխ անցնելով Միդհատ փաշան և նրա համախոհները 1876 թվականին կառավարական հատուկ նիստում որոշեցին բուլղարական մտավորականությանը, առաջին հերթին Ռուսաստանում կրթություն ստացած ուսուցիչներին, ոչնչացնելու մասին։

Միդհատի գլխավորած սահմանադրական շարժումը ոգևորել էր նաև հայ գործիչներից շատերին, որոնք սահմանադրության մեջ փրկություն էին որոնում սուլթանական գահենից։

«Ժամանակ և խորհուրդք» գրքույկում Մ. Խրիմյանը գրել է.

«...Հասավ, հասավ այն ազատաբեր ժամանակ. քեզ ավետիս կուտամ, ժողովուրդ, լուծ լեզուդ և փակված բերանդ բաց այսուհետև, խոսիր և գրե որչափ սահմանադիր օրենք քեզ ազատություն կուտա, խոսիր երբ կզրկվես, խոսիր դատավորաց առաջ, երբ ապերախտ ձեռք զքեզ կապտակեն, խոսիր և իրավունք խնդրե»։ Նա հավատում էր, որ սահմանադրությունը՝ «ահավասիկ այս զարգացած մանուկն է, որ

Եվրոպիո քաղաքակրթություն կներմուծեն մեր հին աշխարհ. հին ժողովուրդ նոր օրենքով կվերանորոգի...» (67, էջ 123)։

Ե՛վ Խրիմյանը, և՛ մյուս գործիչները կարծում էին, որ սահմանադրության կիրառումով լուծվելու էր հայկական հարցը։ Ընդհանուր բարենորոգումներ և ոչ թե անջատում՝ այսպիսին էր նրանց մտածելակերպն ու ծրագիրը։ Նրանք երազում էին «արդար» ու «հավասար», վերածնված տեսնել Օսմանյան կայսրությունը։

Շուտով հիասթափությունը համակեց այդ լավատեսներին։ Խրիմյանը գրեց «Վանգույժը», հետո՝ «Հայգույժը», որտեղ, ըստ էության, հերքեց երեկվա սպասումները։

Այո՛, ոմանք ոգևորված էին միդհատյան սահմանադրությամբ։ Բայց կային նաև մարդիկ, որոնք ըմբռնելով թուրքական ազգայնականության էությունը, կանխատեսում էին միդհատականների ապագա գործելակերպը։ Դեռևս 1878 թվականին հայկական շրջաններում արդեն լսվում էին ձայներ, թե «երբ ժեռն թուրքերը տեր դառնան կացությանը... իրենց առաջին գործը կլինի տաճկահայությանը բնաջնջել միատարր թրքություն հաստատելու համար, որպեսզի Ռուսաստանը Բալկանների օրթոդոքս կամ սլավոն ժողովուրդների ազատագրության գործը գլուխ հանելուց հետո Կովկասի սահմանակից և կրոնակից թրքահայությանը նաև ազատագրելու պատրվակներ չստեղծի...» (22, էջ 105)։

«Թուրքերը ժամանակին հեղափոխություն չարին Կ. Պոլսում»,— ասել է Կ. Մարքսը 1876—1877 թթ. իրադարձությունների կապակցությամբ։ «Այն ժողովուրդը,— գրել է նա,— որը բարձրագույն ճգնաժամի այդ պահերին ունակ չէ հեղափոխական եղանակով կտրելու հանգույցը, այդպիսի ժողովուրդը կործանված է» (1, հ. IX, էջ 380)։

Արդեն 1877 թվականի փետրվարին Աբդուլ Համիդը պաշտոնանկ արեց Միդհատին և հեռացրեց երկրից։ Իսկ 1878 թվականի սկզբին Աբդուլ Համիդը որոշեց ընդհանրապես ազատվել այդ օրապակաս պառլամենտի կաշկանդիչ գոյությունից։ Փետրվարի 14-ին այն փակվեց և այլևս չգումարվեց մինչև 1908 թվականը։ Նա կատաղությամբ մինչև վերջ հետապնդեց սահմանադրականներին, գործի դնելով թույնն ու դաշույնը, կեղծիքն ու շողոքորթությունը։ Ում

շուրթերից ժամանակին «սահմանադրություն» բառն էր լսել, բոլորին ազատեց պաշտոններից (141, էջ 398)։ Ոմանք ձերբակալվեցին, ոմանք անցան Եվրոպա՝ խույս տալով հետապնդումներից։

Մի քանի տարի անց նա խաբեությամբ Կ. Պոլիս հրավիրեց Միդհատին, հետո՝ 1881 թվականի հունիսին դատավարություն սարքեց նրա ու համախոհների նկատմամբ։ Միդհատն աքսորվեց Արաբիա, Թաիֆ, որտեղ 1883 թվականին խեղդամահ արվեց սուլթանի գործակալների ձեռքով։ Սահմանադրության հայր Միդհատի գլուխը արկղով Կ. Պոլիս ուղարկվեց, որի վրա գրված էր՝ «Ճապոնական զարդարանքներ փղոսկրից՝ նորին կայսերական մեծության համար»։

*

* *

Արևելյան ճգնաժամի մեջ նորից ազդեցիկ դեր էր խաղում Մեծ Բրիտանիան։ Ժամանակի այդ հզոր տերությունը կատաղի հետևողականությամբ ամրապնդում էր իր դիրքերը Արևելքում, ձգտում ընդլայնել իր ազդեցության ոլորտները, գաղութային տիրույթների սահմանները։ Անգլիան, Մարքսի խոսքերով ասած, «կապիտալի մայր երկիրն էր», որն աչքի էր ընկել գաղութային քաղաքականության իր դաժան մեթոդներով։

Վ. Ի. Լենինը գրել է, որ XIX դարի վերջին երրորդը նոր իմպերիալիստական դարաշրջանին անցման ժամանակաշրջան էր։ Իսկ Անգլիան կապիտալիստական աշխարհի առաջատար երկիրն էր։ Մոնոպոլիաները և ֆինանսական կապիտալն Անգլիայում կազմավորվել են նախ և առաջ այն ձեռնարկություններում, որոնք զբաղված էին գաղութային հումքի մշակումով։ Անգլիան եվրոպական մյուս տերություններից առաջ էր անցել կապիտալի արտահանման մեծ չափերով և առաջինը ոտք դրել իմպերիալիզմի ուղին։ «Անգլիայի առանձնահատկությունն արդեն դարի կեսից այն էր, որ այդտեղ առկա էին իմպերիալիզմի գոնե երկու ամենախոշոր բնորոշ գծերը՝ (1) անծայրածիր գաղութներ և (2) մոնոպոլ

շահույթ (համաշխարհային շուկայում մոնոպոլ դրության հետևանքով)» (2, հ. 23, էջ 139)։

XIX դարի 60-ական թվականներից անգլիական արդյունաբերական բուրժուազիայի մեծ խմբեր լիբերալ կուսակցությունից չվել էին պահպանողականների ճամբարը։ Սա կապված էր ինչպես արդյունաբերական առաջնությունն Անգլիայի կողմից կորցնելու վտանգի, այնպես և նրա իմպերիալիստական վերընթացի հետ։ Փոխվել և ավելի մարտունակ էին դարձել անգլիական կառավարող դասակարգերի տրամադրությունները։ Հիասթափվելով լիբերալ դոկտրինայից, տնտեսության գործերին պետական նվազ միջամտության գաղափարից, նրանց շարքերում մեծացել էր ուժեղ իշխանություն ունենալու կողմնակիցների թիվը։ Այդպիսի գծի կողմնակից էր պահպանողական կուսակցությունը։ Այդ կուսակցության պարագլուխը հրեա Դիզրաելին էր (1876 թվականին Վիկտորիա թագուհին նրան շնորհեց լորդի տիտղոս՝ լորդ Բիքոնսֆիլդ անունով)։ 1874—1880 թթ. Անգլիայում իշխանությունը գտնվում էր նրա գլխավորած կուսակցության ձեռքում։ Սա անգլիական գաղութային քաղաքականության ինտենսիվ ծավալման շրջանն էր, երբ բուրժուազիայի ճընշող մեծամասնությունը նոր գաղութների նվաճման և նրանցում իր դիրքերի ամրապնդման մեջ էր տեսնում Անգլիայի փրկությունը տերությունների հարաճուն մրցակցության մեջ։

1874 թվականի ընտրությունների ժամանակ Դիզրաելին գաղութներ նվաճելու քաղաքականությունը՝ «իմպերիալիզմը», հռչակեց իր գլխավոր լոզունգը։ Երկրորդ անգամ կառավարության գլուխ կանգնելով (առաջին անգամ Դիզրաելին պրեմիեր էր 1868 թվականի մարտ—դեկտեմբերին), նա գլխավորեց անգլիական գաղութային էքսպանսիայի հարձակողական վերընթացը։ Նրա օրոք Անգլիան պատերազմներ էր մղում Հնդկաստանում և Հարավային Աֆրիկայում, Աֆղանստանում և Իռլանդիայում, աշխարհի այլ մասերում։ Նա ճկունորեն զուգակցում էր անգլիական կապիտալիզմի բարձր ոլորտների, բիրժայի, արքունիքի, գաղութային պաշտոնեության, զինվորականության, նաև խոշոր հողատերաընվականության շահերը, լիբերալ պացիֆիստական լոզունգներին հակադրում Մեծ Բրիտանիայի իդեալը, որն իշխում էր հսկայական գաղութային աշխարհի վրա (152, էջ 25)։ Դիզրաելիի խորհրդով էր, որ 1877 թվականին, իր թագավորության 40-ամյակին, Վիկտորիա թագուհին ընդունեց Հնդկաստանի կայսրուհու տիտղոսը, իսկ ինքը նրա ձեռքից ստացավ լորդի ու պերի տիտղոս և դիվանագիտության պատմության մեջ մտավ որպես լորդ Բիքոնսֆիլդ։ Ինչ փույթ, որ այդ տարի նույն Հնդկաստանում միլիոնավոր մարդիկ զոհվեցին քաղցից և ժանտախտից։ Պահպանողականների պարագլուխը պահանջում էր բոլոր միջոցներով ընդլայնել և ամրապնդել բրիտանական գաղութային կայսրությունը։ Քաղաքական այդ գիծը ժողովրդին մատուցվում էր որպես Անգլիայի շահերը հաջողությամբ պաշտպանող «փայլուն վարպետություն»։

1870—80-ական թվականներին սուր ախոյանություն էր ծավալվել Անգլիայի և Ֆրանսիայի միջև Օսմանյան կայսրության լայնածավալ տարածքների համար, որոնք վատ էին իրացված և վատ էին կառավարվում Կ. Պոլսի սուլթանական իշխանության կողմից։ Օգտվելով 1870—71 թթ. Ֆրանս-պրուսական պատերազմում Ֆրանսիայի կրած պարտությունից, Դիզրաելիի կառավարությունն ամենայն գաղտնապահությամբ և մանրակրկիտ ծրագրով հող էր նախապատրաստում Սուեզի ջրանցքի և Եգիպտոսի վրա Վիկտորիա թագուհու իշխանությունը տարածելու համար։

1875 թվականին Դիզրաելին գաղտնի համաձայնությամբ Եգիպտոսի նախավերջին խեդիվ Իսմայիլ փաշայից 4 հազար ֆունտ ստեռլինգով գնեց Սուեզի ջրանցքի բաժնետոմսերի 40 տոկոսը և հիմք դրեց Եգիպտոսի վրա անգլիական տիրապետության սկզբնավորմանը։

Բալկանյան իրադարձությունների ժամանակ անգլիական կառավարությունը չափազանց նախանձախնդիր հետևում էր դեպքերի զարգացմանը։ Օսմանյան կայսրության ավանդական հովանավորները, ստատուս քվոյի քաղաքականության ասպետները, նորից հանդես եկան սուլթանական ռազմաֆեոդալական ռեժիմը պահպանելու և հավերժացնելու պաշտպանությամբ։ Անգլիան հակասլավոնական քաղաքականության գլխավոր սյուներից մեկն էր։ Նա ընդդիմանում էր այն բանին, որ Ռուսաստանը հաջողության հասներ ճընշ-

ված ժողովուրդների պայքարին օժանդակելու գործում։ Իսկ Ռուսաստանը սևծովյան նեղուցներից հեռու պահելու խնդիրը ամբողջ XIX դարում անգլիական պետական գործիչները համարում էին իրենց քաղաքականության կենսական հարցերից մեկը։ Ահա թե ինչու Լոնդոնի թուրքոֆիլները ստահոդ լուրեր էին տարածում, շարախոսում այն մասին, թե, իբր, բոսնիական, բուլղարական ապստամբությունները ռուսական գործակալների սարքած գործեր էին (158, էջ 20)։

Տակավին XVIII դարի վերջին Ուիլյամ Պիտ ավագն անգլիական պառլամենտում հայտարարել էր, թե հրաժարվում է վեճի մեջ մտնել «այն հիմարների հետ», որոնք առաջարկում էին վերացնել Օսմանյան կայսրությունը։ Նրան է պատկանում թուրքական պետությունը «եվրոպական սիստեմի մեջ» ներառելու գաղափարը (83, էջ 18)։ Պիտի կարծիքով, «թուրքական պետության գոյությունն անհրաժեշտ էր եվրոպական հավասարակշռության համար»։

Հետո նրան կրկնեցին ուրիշները՝ ֆրանսիացի Գիզոն, անգլիացի Պալմերստոնը և ուրիշներ։

XIX դարի առաջին տասնամյակներին Եվրոպայի քաղաքական մթնոլորտն ու միջպետական հարաբերությունները այնպիսին էին, որ Անգլիայի նախաձեռնությամբ Օսմանյան կայսրությանը սկսեցին վերաբերվել ոչ թե որպես առաջադիմության արգելակի, այլ եվրոպական հավասարակշռության անհրաժեշտ պայմանի, սկսեցին խոսել ոչ թե նրա քայքայման, այլ բարեփոխման մասին։ Դրան զուգընթաց, իհարկե, առաջ էին քաշվում նաև հակառակ հարցադրումներ։ Կ. Մարքսն ուշադրություն է դարձրել 50-ական թվականներին Անգլիայի հասարակական-քաղաքական շրջաններում լսվող այն ձայներին, որոնք գտնում էին, որ Օսմանյան կայսրության «քրիստոնյա բնակչության ատիճանական զարգացումը դեպի քաղաքակրթություն և կառավարման անկախ ձևր համապատասխանում են ամբողջ աշխարհի շահերին» (1, հ. IX, էջ 401)։ Սակայն պաշտոնական ուղեգիծը չէր փոփոխվում։

XIX դարի 70-ական թվականներին Բիքոնսֆիլդը փաստորեն շարունակում էր Պալմերստոնի քաղաքականությունը, որը 1853 թվականին հայտարարել էր. «Մենք օժանդակում ենք Թուրքիային մեզ համար և մեր սեփական շահերին համապատասխան» (86, էջ 29)։

Այսօր էլ անգլիական պատմագրությունը շարունակում է այդ ուղեգիծն արդարացնելու միտումը։ Օրինակ, ժամանակակից արևելագետ Մ. Անդերսոնը փորձում է իր ընթերցողներին համոզել, որ անգլիական նման քաղաքականության դրդապատճառը պայմանավորված էր դեպի Արևելք ռուսական առաջխաղացումով։ Նա չի թաքցնում պատմական այն իրողությունը, որ շնորհիվ Մեծ Բրիտանիայի և եվրոպական մյուս տերությունների Օսմանյան կայսրությունը շարունակեց պահպանել իր տիրապետությունը ազատության և անկախության ծարավի ժողովուրդների նկատմամբ (174, էջ 1—2)։

Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների համար դա ճնշումը հավերժացնելու քաղաքականություն էր։ Քանի դեռ այդպիսի մոտեցումը պահպանվելու էր որպես արևմտյան դիվանագիտության ղեկավար սկզբունք, «Եվրոպական Թուրքիայի բնակչության ինը տասներորդ մասը Ռուսաստանի մեջ տեսնելու էր իր միակ հենարանը, իր ազատարարին, իր մեսիային»,— գրել է Կ. Մարքսը (1, հ. IX, էջ 393—394)։ Անգլիացի պատմաբան Սետոն-Վաթսոնը ընդունում է, որ Ռուսաստանը լույս և քաղաքակրթություն էր տարածում Արևելքում, բայց շեշտում է, որ նրա առաջխաղացումն Անգլիայի կառավարողների կողմից ընկալվում էր որպես վտանգ Հնդկաստանի համար (217, էջ 4—6)։

Ժամանակին «Թուրքական հարց» վերնագրով իր մի հոդվածում Կ. Մարքսը ծաղրել է անգլիական «Դեյլի նյուս» թերթը, որը քաղաքական նպատակներով գովաբանում էր թուրքական ամեն ինչը, իրերի ռեալ կացությունը ներկայացնում ծուռ հայելու մեջ։ Այստեղ է, որ Մարքսը հարց է տվել. Ո՞վ է առևտրականը Թուրքիայում։ Համենայն դեպս ոչ թուրքը։ Երբ նրանք գտնվում էին նոմադների նախնական համայնական վիճակում, առևտուրը վարելու նրանց մեթոդը քարավանների կողոպուտն էր։ Այժմ, երբ նրանք դարձել են մի քիչ ավելի քաղաքակրթված, այն ամեն տեսակի կամայական և ճնշիչ հարկահանությունն է։ Հույները, հայերը,

սլավոնները և ֆրանկները, որ տեղավորվել են ծովային մեծ նավահանգիստներում, իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը և վճռականապես ոչ մի հիմք չունեն շնորհակալություն հայտնելու Թուրքական բեյերին և փաշաներին այն բանի համար, որ այդ հնարավորությունն իրենց է տրվել։ Թող հեռացնեն բոլոր Թուրքերին Եվրոպայից, առևտուրը դրանից չի տուժի։ Իսկ ընդհանուր քաղաքակրթության զարգացո՞ւմը։ ...Սլավոնական և հունական բուրժուազիան է քաղաքներում և առևտրական կետերում ամեն տեսակի քաղաքակրթության իսկական հիմքը... Բնակչության այս մասն է դառնում ավելի հարուստ և ազդեցիկ, իսկ Թուրքերն ավելի ու ավելի մղվում են ետին պլան։ Եթե նրանք մենաշնորհ չունենային քաղաքացիական և զինվորական պաշտոնների նկատմամբ, ապա շուտով իսպառ կանհետանային։ «...Փաստն այն է,— եզրակացրել է Կ. Մարքսը,— որ հարկ կլինի այս կամ այն ձևով Թուրքերին վերջ դնել» (1, հ. IX, էջ 391—392)։ Իսկ անգլիական գաղութարարներին այս ճշմարտությունը քիչ էր հետաքրքրում։ Նրանց զբաղեցնողը Մեծ Բրիտանիայի աշխարհակալական ծրագրերն էին։

1870-ական թվականներին Արևելյան հարցը անգլիացիներն ըմբռնում և մեկնաբանում էին որպես հնդկական հարց։ «Միջերկրական ծովը դեպի մեր հնդկական կայսրությունը տանող մեծ ճանապարհներից մեկն է, և որ այդ ծովը, ճիշտ այնպես, ինչպես և նրա հետ կապված մյուս ծովերը, պետք է ազատ և անվտանգ լինեն»,— հայտարարել էր Բիքոնսֆիլդը (147, էջ 48)։ Ծովերի «ազատություն» և «անվտանգություն» բառերի տակ նա, իհարկե, անգլիական գերիշխանություն էր հասկանում։ Նա իր կառավարության անդամներին համոզում էր, թե Անգլիայի շահերին համապատասխան անհրաժեշտ էր Բաթումի կամ Սինոպի նման մի նավահանգիստ ունենալ Սև ծովի ափին, որը Մալթայի և Ջիբրալթարի դերը կատարեր և կանխեր այդ կողմից հնարավոր ամեն մի սպառնալիք բրիտանական ծովային տիրապետությանը Միջերկրականի ավազանում (217, էջ 90)։

Լոնդոնի մտահոգությունը 1875—76 թվականներին այն էր, որ փուլ եկող Թուրքական կայսրությունից լավագույն մասն ընկեր Անգլիայի ձեռքը, որ Կ. Պոլիսն ու նեղուցները

չանցնեին Ռուսաստանին (100, էջ 607)։ Լոնդոնը չէր ուզում, որ փուլ գար Թուրքական պետականությունը։ Թուրքիան անգլիական մանուֆակտուրային արտադրանքի լավ շուկա էր։ Թուրքիայի գոյությունը Լոնդոնին պետք էր Արևելքում բրիտանական տիրապետության ապահովության համար։

Երբ 1876 թվականի մայիսի 13-ին Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի ներկայացուցիչներ Գորչակովը, Անդրաշին և Բիսմարկը հրապարակեցին Բեռլինի հուշագիրը, որով Թուրքական կառավարությունից պահանջվում էր երկու ամսով զինադադար կնքել ապստամբների հետ և բանակցությունների միջոցով հասնել համաձայնության, Բիքոնսֆիլդի կառավարությունը մերժեց միանալ տերությունների տեսակետին։ Երբ Վիկտորիա թագուհին տարակուսանք հայտնեց այդ կապակցությամբ և տատանվեց անգլիական նավատորմը Թուրքական ջրերն ուղարկել, Բիքոնսֆիլդը պատասխանեց նրան. «Ձերդ գերազանցության նավատորմը հրաման չի ստացել Միջերկրական ծովում պաշտպանելու քրիստոնյաներին կամ Թուրքերին, այլ Ձերդ պայծառափայլության կայսրությունը։ Եթե նորին գերազանցությունը հավանություն տա Բեռլինի հուշագրին, ապա Կ. Պոլիսը կօկուպացվի Ռուսաստանի կողմից, և Թուրքական նավատորմը կանցնի Ռուսաստանի հովանավորության տակ» (217, էջ 35)։

1876 թվականի դեկտեմբերին, Կ. Պոլսի խորհրդաժողովի առթիվ, Բիքոնսֆիլդը Դերբիին ուղղված մի նամակում բողոքում էր Սոլսբերիից, որն, իբրև թե, ընկել էր Իգնատևի ազդեցության տակ, թե լրիվ չէր գիտակցել, որ իր խնդիրն էր ռուսներին հեռու պահել Թուրքիայից և իդեալական գոյություն չապահովել Թուրքիայի քրիստոնյաների համար (217, էջ 13)։ Ուշադրություն դարձրեք, «չապահովել», երբ դրանից հետո, տարիներ շարունակ անգլիական դիվանագետները շաղակրատում էին քրիստոնյաների դրության բարելավման անհրաժեշտության մասին։

Իհարկե, Թուրքիայի նկատմամբ անգլիական քաղաքականությունը չափազանց մանվածապատ և զգուշավոր քայլերի մի միասնություն էր։ Փաստերը վկայում են, որ թե՛ Բիքոնսֆիլդը, թե՛ նրա համախոհները արևելյան ճգնաժամի

սրվելու պահին արդեն ունեին գործողությունների իրենց տարբերակները։ Նրանք ինչ-որ տեղ հակված էին նաև Օսմանյան կայսրությունը որպես պետություն վերացնելուն։ Սակայն ի՞նչ գնով, ի՞նչ բաժին վերցնելով Անգլիայի. ահա խնդիրը։ Վերջին տարիներս կատարված ուսումնասիրություններն այդ են վկայում։ Օրինակ, 1876 թվականի սեպտեմբերին Սոլսբերին, հակառակ Կ. Պոլսում դեսպան Էլիոտի կարծիքի, գտնում էր, որ Անգլիան ոչինչ չէր շահի Թուրքիային պաշտպանելուց, որ դաշինքը նրա հետ նույնիսկ խայտառակություն էր, որ «թուրքական ատամը պետք է հեռացվի, եթե այն նույնիսկ պահելու բան է»։ Բիքոնսֆիլդը չէր անտեսում Օսմանյան կայսրության մոտալուտ փլուզման հնարավորությունը և դրա շուրջ «անկեղծ բանակցություններ» վարելու մասին էր խոսում։ 1877 թվականի փետրվարի 20-ին նա Շուվալովին ասել էր, թե Օսմանյան կայսրության «օրերը հաշվված են. պետք չէ արագացնել նրա անկումը, բայց անհրաժեշտ է լրջորեն մտածել այն բանի վրա, թե ինչ կկատարվի դրանից հետո, և նախապատրաստվել» (172, էջ 35, 37, 105)։ Իսկ հրապարակավ Բիքոնսֆիլդը թուրքանպաստ հայտարարություններ էր անում։

Երբ համայնքների պալատում լորդ Հարդինգտոնը հարձակումներ գործեց վարչապետի քաղաքականության վրա, ցույց տալով խաղաղությանն ուղղված ռուսական առաջարկների տրամաբանվածությունն ու անհրաժեշտությունը, Բիքոնսֆիլդը պատասխանեց, որ ստեղծված իրադրության մեջ Թուրքիան կա՛մ պետք է պահպանվեր, կա՛մ բաժան-բաժան արվեր։ Բայց նա կոչ արեց հավատարիմ մնալ անգլիական ավանդական քաղաքականությանը, պահպանել նրա տերիտորիալ ամբողջականությունը, իբր պատերազմից խուսափելու համար։

«Մեր դիրքավորումն ամբողջապես տարբեր է մյուս կառավարությունների դիրքավորումից»,— ասում էր նա (217, էջ 149, 154, 155)։ Այդ քաղաքականությունը պայմանավորված էր ոչ թե թուրքական սուլթանի նկատմամբ Անգլիայի բարյացակամությամբ, այլ Բալկաններում և նեղուցների շրջանում Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը սահմանափակելու ցանկությամբ։

Անգլիական կառավարությունը հակված էր դեպի թուրքերը այն պահին, երբ Բոսնիան, Հերցեգովինան, Չեռնոգորիան Սերբիայի օգնությամբ ազատության դրոշ պարզեցին, կռվի ելան թուրքական տիրապետության դեմ։ Բայց հաշվի նստելով հակաթուրքական հասարակական կարծիքի հետ, որին տոն էին տալիս վիգերը, Բիքոնսֆիլդը ներշնչեց Բ. Դոանը Եվրոպային «զվարճացնել դայթակղիչ ծրագրերով, որոնք չէին կատարվելու, բայց ծայրահեղ դեպքում ստիպելու էին համբերությամբ զինվել» (118, էջ 454)։

Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Մարտենսը գրել է, որ Անգլիան գործում էր քաղաքակրթության ու ճշնշվածների դեմ, հանդես գալով Օսմանյան կայսրության, «ասիական տգիտության», «կամայականության և հանցագործությունների պաշտպանությամբ» (138, էջ 171—178)։

Հիրավի, երբ անգլիական լիբերալ «Դեյլի նյուս» թերթի թղթակից Մակգահանն իր թղթակցություններով ցույց էր տալիս Բուլղարիայում թուրքական գազանությունները, Բիքոնսֆիլդը պառլամենտի ամբիոնից և թերթերի էջերում ոչ միայն տարակուսանք էր հայտնում այդ սարսափելի լուրերի մասին, այլև փորձում էր հերքել ճշմարտացի փաստերը, դրանք անվանում «սենսացիոն, ուշադրության անարժան բամբասանքներ»։ Նույն ձևով էր իրեն պահում Կ. Պոլսի անգլիական դեսպան սըր Հենրի Էլիոտը։ Անգլիացի ժուռնալիստը գրում էր, որ Ռուսաստանը հանդես էր գալիս հանուն մարդկության և քրիստոնեության, «իսկ անգլիական քրիստոնյան հանուն բարբարոսության և բռնակալության, հանուն չարի և գազանության» (128, էջ II, 62, 210)։ Էլիոտն «աչքի ընկնող դավադիր էր և պետական հեղաշրջումների սիրահար» (111, էջ 155)։ Ճարպիկ դեսպանը Միդհատին հիպնոզել էր իր բազմախոստում զրույցներով անգլիական օրինակով Թուրքիան վերակառուցելու հնարավորության շուրջ (224, էջ 83)։

Ոգևորվելով անգլիական կառավարողների դիրքով, Բ. Դուոն ավելի էր սաստկացնում բռնությունները ապստամբների նկատմամբ։ Իսկ Հ. Էլիոտը ցինիկաբար գրում էր արտաքին գործերի մինիստր լորդ Դերբիին, որ «10—20 հազար բուլղար զոհերը սովորական երևույթ են այդ կիսաքաղաքա-

կրթված ասիական երկրում... և այդ զոհերը չպետք է բավարար պատճառ հանդիսանան այն բանի համար, որպեսզի մենք փոխենք մեր միակ ճիշտ քաղաքականությունը, որը միայն կարող է պահպանել մեր շահերը (217, էջ 63)։

Անգլիացի պատմաբան Սետոն-Վաթսոնը գրել է, որ Թուրքերը «անխտիր կախում և գնդակահարում էին բուլղարներին», իսկ դեսպան Էլիոտն իր հեռագրերում կեղծում և ժխտում էր Թուրքերի բարբարոսությունները։ Գլադստոնը պառլամենտում քննադատում էր Էլիոտին այն բանի համար, որ նա ճշտորեն չէր կատարում իր՝ որպես դեսպանի պարտականությունները (217, էջ 66—69)։

Բուլղարական սարսափների օրերին անտարբերության վիճակից դուրս եկավ և Արևմտյան Եվրոպայի հասարակական կարծիքը։ Այլևս ոչ ոքի չէր կարող խաբել ընդգծված հակառուսական կամպանիան. Թուրքական դաժանությունները, կատարված շարագործությունները փաստ էին՝ հայտնի դարձած բոլորին։ Անգլիական պառլամենտում վիճաբանությունները չէին դադարում, Գլադստոնը հրապարակեց իր «Բուլղարական սարսափները և Արևելյան հարցը» գրքույկը (1876), որտեղ անարգանքի սյունին էր գամում սուլթաններին, փաշաներին, նրանց ենիչերիական գործողությունները։

Գլադստոնը բանաձևերի նախագծեր էր առաջարկում պառլամենտի համայնքների պալատի նիստերում, քննադատում կառավարության քաղաքականությունը։ Նա հիշեցնում էր XIX դարի 20-ական թվականներին Կանինգի ընդունած մի արձանագրությունը, որով հանձնարարվում էր եվրոպական տերությունների կոնցերտին՝ «իրենց միացյալ հեղինակությամբ իրագործել... փոփոխություններ Թուրքիայի կառավարության մեջ» (217, էջ 181—182)։

Մատնացույց անելով այն փաստը, որ բուլղարական կոտորածների կազմակերպիչներ Շեքեթը, Թուանը և Ահմեդ աղան դեռևս անպատիժ էին մնում, որ ինքը չէր հավատում բարենորոգումների մասին Թուրքերի խոստումներին, իսկ անգլիական կառավարությունը համերաշխում էր Թուրքական իշխանությունների գործողություններին, Գլադստոնը կրկնում էր Շեքսպիրի խոսքերը Թուրքական «չուլ ու փալասի» (bag and baggage) մասին, որ 1821 թվականին դիվանագիտության տերմինաբանության շրջանառության մեջ էր դրել Կանինգը՝ ասելով. «Ես ուզում եմ, որ սուլթանն իր «չուլ ու փալասով» քշվի Ասիայի խորքերը» (209, էջ 348)։

Անգլիայում միջկուսակցական ախոյանությունը որոշակի չափով խորացավ Թուրքական գործերի կապակցությամբ։ Կատաղի պայքար ծավալվեց լիբերալ Գլադստոնի և պահպանողական Բիքոնսֆիլդի կողմնակիցների միջև։ Այն ծավալվեց պառլամենտում, հետո դուրս բերվեց մամուլի էջերը։ Բալկանների իրադարձություններում դիրքորոշումը դարձավ ազգային քաղաքականության առանցքային խնդիրներից մեկը։

Գլադստոնն ավելի ճկուն էր գործում, քողարկվում հումանիստական ֆրազեոլոգիայով։ Անգլիական բուրժուազիայի դասակարգային շահերի պաշտպանությունը լիբերալ ֆրազներով քողարկելու գործում նա բացառիկ ունակություն դրսևորեց։ Դա էր պատճառը, որ տասնյակ տարիներ անց նրա անունը շարունակում էր հոլովվել նախասովետական հայկական թերթերում և գրքերում։ Բոստոնում անգլերեն լույս տեսած «Արմենիա» ամսագիրը բացվում էր նրա խոսքերով. To serve Armenia is to serve civilization.— Ծառայել Հայաստանին, նշանակում է ծառայել քաղաքակրթությանը։

Անգլիական մամուլը լի էր հակասական ձայներով։ «Թայմս»-ը գրել է. «Մենք մերժում ենք, որ միայն Ռուսաստանը բացառիկ պրոտեկտորատի իրավունք ունենա Բ. Դոնքրիստոնյա հպատակների նկատմամբ»։ Այլ թերթերի էջերում նյութեր էին տպագրվում, որտեղ Եվրոպայում Թուրքիայի մնալը խայտառակություն էր համարվում (126, էջ VIII, 54)։

Անգլիացի պատմաբան Սետոն-Վաթսոնը արել է այն ուշագրավ դիտողությունը, որ XIX դարի 70-ական թվականների հասարակական կարծիքը հագեցված չէր այնպիսի սարսափներով, ինչպես 90-ական թվականների կամ առաջին համաշխարհային պատերազմի հայկական զանգվածային կոտորածների ժամանակ և բուռն էր արձագանքում այդ իրադարձությունների անհերքելի ապացույցներին (217, էջ 71)։

1876 թվականի հուլիսի 5-ին անգլիական պառլամենտի համայնքների պալատում Ջեյմս Բրայսը, պատասխանելով Բիքոնսֆիլդին, ասում էր. «Եթե կառավարության քաղաքականությունը հանգում է թուրքական կայսրության ամբողջականության և անկախության պահպանմանը անգլիական փողերի և զինվորների օգնությամբ, ապա ես ենթադրում եմ, որ քսանամյա փորձից հետո Անգլիայում կգտնվեն շատ քչերը, որ կպաշտպանեն մեր կառավարության նման քաղաքականությունը։ Եթե մեր կառավարությունը հովանավորի և բարոյապես պաշտպանի Թուրքիային, նույնիսկ իր իսկ հպատակների հետ պայքարում, որոնք ուզում են ազատագրվել թուրքական ատելի լծից, ապա ես կարծում եմ, որ այդ դեպքում անգլիական ժողովուրդը չի պաշտպանի իր կառավարությունը» (126, էջ 28)։

«Թուրքերը նման չեն ո՛չ Հնդկաստանի հեղ մահմեդականներին, ո՛չ Սիրիայի ասպետ սալահէդդիններին և ոչ էլ Իսպանիայի քաղաքակիրթ մավրերին։ Ուր մտել են նրանք, այնտեղ թողել են արյունաներկ հետքեր, ուր հաստատել են իրենց տիրապետությունը, այնտեղ խեղդվել է քաղաքակրթությունը»,— գրում էր Գլադստոնը, կառավարությանը կոչ անելով չպաշտպանել սուլթանին (112, էջ 9—10)։

Սակայն Անգլիայում հասարակական կարծիքի բողոքի ձիչերը միախառնվում էին միջկուսակցական պայքարի, քաղաքական ախոյանության աղմկարարության հետ, կորչում անգլիական կառավարության իմպերիալիստական գործողությունների խորամանկ խաղերի մեջ։ Բիքոնսֆիլդն ամեն ինչ անում էր, որպեսզի թուրքական ջարդարարների հետ մեկտեղ մեղավոր հռչակվեին «անիշխանական» բուլղարները, մյուս ապստամբ ժողովուրդները։

*

* *

Բալկանյան թերակղզու մատույցներում Ռուսաստանի ամենահետևողական, ամենահամառ հակառակորդը Ավստրիան էր (1, հ. XVI, մ. II, էջ 27)։ Ավստրո-Հունգարական ինքնակալությունը սարսափում էր ինչպես հեղափոխական

շարժման տարածումից, այնպես և իր սահմաններին սլավոնական մեծ պետության ստեղծումից։ Դրանով իսկ նա օբյեկտիվորեն նպաստում էր Բալկաններում թուրքական տիրապետության պահպանմանը։ Վիեննան Գերմանիայում և Իտալիայում կրած պարտություններին փոխհատուցում էր փնտրում Բալկաններում։ Այս քաղաքականությունը խորամանկորեն հրահրում էր «երկաթյա կանցլեր» Բիսմարկը, որը թեև հավաստիացնում էր արևելյան գործերում Գերմանիայի շահախնդրության բացակայության մասին, բայց իրականում ամեն ինչ անում էր ռուս-թուրքական բախումն արագացնելու, անգլո-ռուսական հակամարտությունը սրելու, Եվրոպայում իրեն մենաշնորհ դիրք ապահովելու համար։

XIX դարի սկզբին ազնվականական-դինաստիական արտաքին քաղաքականությանը փոխարինելու էր գալիս ազգային արտաքին քաղաքականության գաղափարը։ Սակայն 70-ական թվականներին միջազգային հարաբերություններում դեռևս շարունակվում էին պայքարն ու կոմպրոմիսները բուրժուական և դինաստիական քաղաքականությունների միջև։

Բիսմարկն իր հուշերում գրել է, որ Ռուսաստանի և Ավստրիայի պատերազմները Թուրքիայի հետ ամրապնդեցին այդ տերությունների հզորությունը և եթե Գերմանիան «հավատարիմ մնար թուրքական կայսրության հետ այդ պայքարի սկզբունքին», ապա Եվրոպան կամ քրիստոնեական աշխարհն ավելի լավ վիճակում կլիներ Արևելքի հարցում, քան այժմ, երբ այնտեղից մեզ սպառնում է «մեծագույն վտանգ»։ Բիսմարկն ակնարկում էր Ռուսաստանի կողմից առկա վտանգը։ Նա գտնում էր, որ քանի դեռ «թուրքական հարցը դուրս չի եկել Թուրքիայի սահմաններից, չի շոշափում Գերմանիայի այն շահերը, որոնց համար արժեր պատերազմել» (90, հ. 1, էջ 141, 230)։

Ռուսաստանը ձգտում էր Բալկաններում ստեղծել ինքնուրույն սլավոնական մեծ պետություն։ Ռուսաստանի և Ավստրիայի շահերը հակոտնյա էին, բայց ցարական կառավարությունը նախընտրեց դիվանագիտական ճանապարհով համաձայնության հասնելու ուղին։ Միջազգային բարդ

իրագրությունը, իհարկե, չէր բացառում, որ Եվրոպայից «Թուրքերի վտարումը կհասցնի եվրոպական պատերազմի» (126, էջ 68)։

«Արևելյան հարցը լուծելու իր փորձերում բուրժուամիապետական Եվրոպան ելակետ էր ընդունում ոչ թե Թուրքիայի կողմից ստրկացված քրիստոնեական ժողովուրդների, այլ իր շահերը, և ընդ որում մեծ մասամբ միանգամայն անհաշտելի շահերը» (149, էջ 238)։

Արդեն 1876 թվականին ակնբախ էր, որ «Դիվանագիտությունը լարել էր իր բոլոր ուժերը, որպեսզի հեռացնի որոշ ժամանակով ահեղ Արևելյան հարցի լուծումը» (109, էջ 1)։ Արևելյան հարցը միանգամից լուծելու փորձերը կարող էին Ռուսաստանին պատերազմի մեջ ներքաշել Եվրոպայի կեսի հետ։ Ռուսաստանում առանձնապես անհանգստանում էին Բալկանների հարցում ավստրո-մադյար-գերմանական հակառուսական դաշինքից։

Սակայն երբ բռնկվեց բուլղարական ապստամբությունը, եվրոպական մայրաքաղաքներում շատերին համակեց այն մտայնությունը, թե լավ է կորչի Թուրքիան, քան հեղափոխական ալիքը տարածվի Եվրոպայում։ Բուրժուակալվածատիրական դիվանագիտության պարագլուխները դեմ չէին «բանական», «զգույշ» ձևերով ու միջոցներով ձեռնամուխ լինել Օսմանյան կայսրության տերիտորիալ վերաձևմանը, միայն թե կանխվեր հեղափոխության վտանգավոր ալիքը։ Արդեն հասունանում էր այն տրամադրությունը, որ վտանգավոր է Օսմանյան կայսրության ամբողջականության մտահոգության պատճառով մշտապես պահպանել նրա տարբեր մասերում հարատևող հեղափոխական օջախները։ Կ. Մարքսը դիպուկ է նկատել, թե Ռուսաստանն ավելի շատ էր վախենում մայրցամաքում համընդհանուր պատերազմի հետևանքով ծագելիք հեղափոխությունից, «քան սուլթանը՝ ցարի հարձակումից» (1, հ. IX, էջ 399)։

Պետերբուրգի առաջարկությամբ 1876 թվականի սկզբին Բեռլինում հանդիպեցին Բիսմարկը, Անդրաշին և Գորչակովը։ Երկար բանակցություններից հետո ստորագրվեց այսպես կոչված «Բեռլինի հուշագիրը», որի նախագիծը կազմել էին ռուս դիվանագետները։ Ըստ Գորչակովի ձևակերպման, երեք կայսերական արքունիքները հանդեցին այն եզրակացության, որ «Թուրքական կայսրությունը պահպանվելու էր, բայց քրիստոնյաների վիճակի լուրջ բարելավմամբ։ Այլ խոսքերով՝ բարելավված ստատուս քվո» (122, հ. 1, էջ 233)։

Հուշագիրը Թուրքական կառավարությունից պահանջում էր երկու ամսով զինադադար կայացնել ապստամբների հետ և ապա իրագործել ապստամբների պահանջած բարենորոգումները տերությունների հյուպատոսների հսկողության ներքո։ Երեք տերությունները երաշխավորում էին այդ բարենորոգումների իրագործումը և անհրաժեշտության դեպքում «իրական միջոցներ էին ձեռնարկելու շարիքի հետագա զարգացումը կանխելու համար»։

Ֆրանսիան և Իտալիան համերաշխեցին ընդունված ծրագրին։ Անգլիան մերժեց այն։ Բիքոնսֆիլդը գտնում էր, որ այդ քայլով «զրոյի է հավասարեցվում Բ. Դոան հեղինակությունը» (172, էջ 51)։ 1876 թվականի մայիսի 30-ին հուշագիրը պետք է հանձնվեր Բ. Դոանը։ Սակայն նույն գիշերը Կ. Պոլսում կազմակերպված հեղաշրջումով սկզբում գահընկեց արվեց, հետո սպանվեց սուլթան Աբդուլ Ազիզը։

Շատերին թվում էր, որ Աբդուլ Ազիզի վերացումով «Արևելյան հարցը» մոտենում էր իր հանգուցալուծմանը։ Օսմանյան կայսրության անձեռնմխելիության և անկախության ամենաջերմ երկրպագուներն անգամ սկսեցին տարակուսել այդ հսկայածավալ տերությունը փրկելու հնարավորության հարցում։ Պետերբուրգում համոզված էին, որ Նիկոլայ I-ի ժամանակների «հիվանդն» արդեն մահվան հոգեվարքի մեջ է (111, էջ 172—173)։ Այս մտայնությունն ավելի խթանեց եվրոպական արքունիքների դիվանագիտական ակտիվությունը։ Նրանց համակել էր Օսմանյան հսկայածավալ կայսրության փլուզման և նրանից առավել օգուտ քաղելու լավատեսությունը, երբեք չմտածելով, որ, ինչպես ֆրանսիացի Թիերն էր նկատել, «Թուրքիայի դիակը հիսուն տարի անընդմեջ վարակելու էր Եվրոպան», որ «հիվանդ մարդու» ժառանգության հարցը հեշտ կլուծվեր, եթե Թուրքիայում լիներ ոչ թե մեկ, այլ երկու Կ. Պոլիս (159, էջ 235, 263)։ Հիրավի, «անբուժելի հիվանդը» շատ ավելի երկար էր ապրելու, քան կարծում էին նրա «բժիշկները»։

1876 թվականի հուլիսի սկզբին Ռայխշտատդում Ալեքսանդր II-ի և Ֆրանց-Իոսիֆի հանդիպման ժամանակ կայացած համաձայնությամբ որոշվեց, որ ապստամբների նկատմամբ թուրքական հաջողության դեպքում երկու պետությունները հանդես էին գալու սերբերի պաշտպանությամբ։ Իսկ եթե փլուզվեր Օսմանյան կայսրությունը, ապա Ավստրիան ստանալու էր Բոսնիան և Հերցեգովինան, իսկ Ռուսաստանն իրեն էր վերադարձնելու 1856 թվականին կորցրած Բեսարաբիայի մի մասը։ Բուլղարիան և Ռումինիան ինքնավար էին դառնալու։ Կ. Պոլիսն ազատ քաղաք էր հռչակվելու։ Ռուսաստանը պարտավորվում էր Եվրոպական Թուրքիայից տերիտորիալ նվաճումներ չկատարել, ճանաչում էր Ավստրո-Հունգարիայի շահերը Բալկանյան թերակղզու արևմտյան մասում։

1875—1876 թվականներին Թուրքիայից վասալային կախման մեջ գտնվող Ռումինիան չեզոք քաղաքականություն էր վարում։ Արևմտյան Եվրոպայի տերությունները մշտապես Ռումինիան դիտում էին որպես Ռուսաստանի ազդեցության տարածման և դեպի Բալկաններ նրա խորացման դեմ մի պատվար։ Ռումին պատմաբան Ա. Դ. Քսենոպոլը նկատում է, որ՝ «Եթե Անգլիան ցույց էր տալիս մեզ որևէ օժանդակություն, ապա դա անում էր բացառապես իր շահերի համար՝ Օսմանյան կայսրությունում, քանի որ մենք նույնպես նրա համար մնում էինք որպես այդ կայսրության մի մասը» (127, էջ 55)։

Ռուսաստանը խուսափում էր պատերազմից։ Ռուսական դիվանագիտությունը ջանքեր էր գործադրում խնդիրը լուծելու խաղաղ ճանապարհով, առանց զենքի գործադրման։ Պատահական չէ, որ մեկ տարի ութ ամիս ռուսական դիվանագիտությունը ջանքեր էր գործադրում Բալկանյան նահանգներում բարենորոգումների հարցում սուլթանին համոզելու ուղղությամբ։

1876 թվականին Կ. Պոլսի կոնֆերանսի ձախողումից հետո բալկանյան հարցում ռուս-թուրքական հարաբերությունները չափազանց վատացան։ Մոտալուտ էր պատերազմը։ Այնուամենայնիվ, ռուսական կառավարությունը որոշեց ևս մի փորձ անել՝ ստիպել Թուրքիային զիջումներ անել մեծ

տերություններին։ Այս նպատակով 1877 թվականի փետրվարին հատուկ միսիայով եվրոպական կառավարություններին այցելեց Ն. Պ. Իգնատևը։

Մի քանի փուլով բանակցություններ վարելուց հետո (1877 թ. փետրվարին Լոնդոնում, 1877 թ. մարտին Բուդապեշտում), 1877 թ. մարտի 31-ին Լոնդոնում ստորագրվեց վեց երկրների մի արձանագրություն, որը այսպես կոչված վերջին նախազգուշացումն էր Բարձր Դռանը։

Բիքոնսֆիլդն արձանագրության ստորագրումը պայմանավորեց ռուսական բանակի զորացրման անհրաժեշտությամբ։ Ի վերջո ընդունվեց կոմպրոմիսային որոշում։ Ռուսաստանը խոստանում էր զորացրել բանակն այն բանից հետո, եթե Թուրքիան երաշխիքներ տար Եվրոպայի խորհուրդներին անելու մասին։

Լոնդոնում ստորագրված և Կ. Պոլսի կոնֆերանսի որոշումները հաստատող արձանագրության մեջ ասվում էր այն մասին, որ եթե Թուրքիան բանակը քաշեր խաղաղ դիրքերը և ռեֆորմների ձեռնամուխ լիներ, ապա Ռուսաստանը բանակցություններ կսկսեր զինաթափման մասին։ Երկրորդում պետությունները հայտարարում էին, որ զինաթափման մասին որոշում չընդունվելու դեպքում Լոնդոնի արձանագրությունը կհամարվեր ուժը կորցրած։

1877 թվականի մայիսի 6-ին Դերբին մի նոտա հղեց Ռուսական կայսրությանը, որտեղ պարզելով Բրիտանիայի դիրքորոշումը չեզոք մնալու մասին, միաժամանակ ընդգծում էր նրա «առանձնահատուկ շահերը» հարգելու անհրաժեշտությունը։ Դերբին պնդում էր Սուեզի ջրանցքի անձեռնմխելիության, Կ. Պոլիսը չգրավելու, Պարսից ծոցի շրջանում անգլիական շահերը հարգելու և այլնի մասին (217, էջ 173)։

1877 թվականի ապրիլին անգլիական կառավարությունը մտածում էր Գալիպոլին, Կրետեն օկուպացնելու, Եգիպտոսի վրա իր իշխանությունը տարածելու մասին։ Ապրիլի 21-ին Բիքոնսֆիլդը կառավարությանն առաջարկեց օկուպացնել Դարդանելը՝ որպես «նյութական երաշխիք ընդդեմ Ռուսաստանի, որն իբր գրավելու էր Կ. Պոլիսը»։ Բիքոնսֆիլդի ռեալ մտադրությունն էր օգնել Թուրքիային «պահպանելու Բուլղարիան»,— գրել է Սալսբերին (217, էջ 170—171)։

Չնայած այն բանին, որ 1877 թվականի մարտի 31-ին (ապրիլի 12) Լոնդոնի դեսպանաժողովը զգալի դիջումների դիմեց՝ ծագած կոնֆլիկտը լուծելու, Չեռնոգորիայի և Թուրքիայի միջև խաղաղություն ապահովելու համար, այնուամենայնիվ, Միդհատի կառավարությունը անգլիացիների խորհրդով մերժեց տերությունների միջնորդությունը։ Սահմանադրական կառավարությունն ընդգծելով Թուրքիայի՝ իր ներքին հարցերը սեփական հայեցողությամբ լուծելու իբրև անկախ պետության իրավունքը, մերժեց օտարերկրյա հսկողությունն ու միջամտությունը իր ներքին գործերին, դա համարելով նվաստացուցիչ իր համար (69, էջ 51)։

Ռուսաստանին այլ բան չէր մնում, քան սլավոնական ժողովուրդների ազատագրության լոզունգի ներքո պատերազմ հայտարարել Թուրքիային։ Այդ մասին իր որոշումը Ալեքսանդր II-ը հրապարակեց 1877 թվականի ապրիլի 24-ին Քիշնևում։ Պատերազմի ծագման համար մեծ պատասխանատվություն էր կրում անգլիական կառավարությունը (182, էջ 519)։

Արևելյան ճգնաժամի, ռուս-թուրքական պատերազմի պահին Կ. Մարքսն անհանգստանում էր, թե չլինի այնպես, որ դրանից շահեր ցարական բռնակալությունը, արգելակվեր հեղափոխության վերելքը Ռուսաստանում։ Նա քանիցս ընդգծել է եվրոպական ռեակցիոն կառավարությունների և ցարիզմի սարսափը հեղափոխության վտանգից, որը կառաջանար Օսմանյան կայսրության հետ «սխալ» վարվելու դեպքում։

«Ի՞նչ է լինելու Եվրոպական Թուրքիայի հետ» հոդվածում Կ. Մարքսը գրել է. «Մեր ժամանակի պատմությունը և փաստերը ցույց են տալիս Եվրոպայում մահմեդական կայսրության փլատակների վրա ազատ, անկախ քրիստոնեական պետություն հիմնելու անհրաժեշտությունը։ Արդեն մոտակա հեղափոխական ցնցումն այդ ելքը կդարձնի անխուսափելի, վաղուց նախապատրաստվող կոնֆլիկտ առաջացնելով ռուսական միահեծանության և եվրոպական դեմոկրատիայի միջև» (1, հ. IX, էջ 397, 405)։ Նրա մտահոգությունն այն էր, որ այդ կոնֆլիկտից շահեին ոչ թե ռեակցիոն կառավարությունները, այլ ժողովուրդները, հեղափոխության գործը։

Կ. Մարքսը գտնում էր, որ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի պարտությունը կարագացներ «սոցիալական հեղաշրջումը Ռուսաստանում, որի տարրերը առկա են հսկայական քանակությամբ և «դրանով իսկ կառաջացներ շեշտակի բեկում ամբողջ Եվրոպայում» (1, հ. XV, էջ 379)։

Անդրադառնալով այդ խնդրին, Վ. Ի. Լենինը գրել է. «Միանգամայն բնական է, որ ժամանակակից դեմոկրատիայի տարրերը,— և Մարքսը, որպես նրանց ներկայացուցիչը, — ղեկավարվելով ֆեոդալիզմի դեմ պրոգրեսիվ բուրժուազիային (պայքարի ընդունակ բուրժուազիային) պաշտպանելու անվիճելի սկզբունքով, այն ժամանակ վճռում էին մի հարց՝ թե «որ կողմի հաջողությունը», այսինքն՝ որ բուրժուազիայի հաջողությունն է ավելի ցանկալի»։ Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ Մարքսը «բուրժուական ազգային և ազատագրական շարժումների հողի վրա կատարվող միջազգային կոնֆլիկտները «գնահատելիս» ղեկավարվում էր այնպիսի նկատառումներով, թե որ կողմի հաջողությունն է առավել կարող օգնել ազգային և ընդհանրապես համադեմոկրատական ժողովրդական շարժումների «զարգացմանը»։

Այնուհետև նա ընդգծում էր Կ. Մարքսի այն ձգտումը, որ առանձին ազգություններում բուրժուազիայի դեպի իշխանություն տանող վերելքի հիմքի վրա առաջ եկող ռազմական կոնֆլիկտների հողի վրա ընդարձակվեր և սրվեր բուրժուադեմոկրատական շարժումը, նրա մեջ ներքաշվեին «պլեբեյական» մասսաները, մանր բուրժուազիան ընդհանրապես։ Կ. Մարքսի մտահոգությունն այն էր, որ ցարիզմը չխոչընդոտեր հեղափոխական զարգացման խորացմանը, չճզմեր շարժման սոցիալական բազայի ընդարձակումը (2, հ. 21, էջ 175—176)։

Ռուսաստանը Թուրքական լծից քրիստոնյա ժողովուրդների ազատագրումը հռչակեց որպես պատերազմի նպատակ։ Ցարական կառավարությունը համոզված էր, որ այդպիսի հարցադրումը կարժանանար մեծ տերությունների համակրանքին։ Պատերազմը Ռուսաստանի համար համարվում էր պատվի խնդիր, քանի որ Բ. Դուռը հրաժարվեց «ենթարկ-

վել քրիստոնեական Եվրոպայի միահամուռ պահանջներին» (164, էջ 349—350)։ Այսպես էր ասված Ալեքսանդր II-ի մանիֆեստում։

Բիքոնսֆիլդը հայտարարեց, թե «սուլթանը պետք է տեր լինի իր երկրում»։ Սա բացահայտ դեմագոգիա էր։

Հիրավի, անգլիական քաղաքականությունը մեծապես նպաստեց այն բանին, որ Օսմանյան կայսրության կառավարողները կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծելու փոխարեն նախընտրեին արյունահեղությունը։ Այսպիսի արկածախնդրական դիրք բռնելու գործում մեծ աշխատանք էր տարել, Բ. Դոանը առարկայազուրկ խոստումներ տվել դեսպան Էլիոտը։ Երբ մավրը կատարել էր իր գործը, նա պետք է հեռանար ասպարեզից՝ իր հետ տանելով Բ. Դոանը շռայլած բանավոր հուսադրումներն ու խոստումները Ռուսաստանի դեմ Անգլիայի վճռական գործողությունների մասին։

1877 թվականի սկզբին Կ. Պոլսում անգլիական դեսպանի պաշտոնում Էլիոտին փոխարինեց սըր Հենրի Լայարդը։ Բիքոնսֆիլդի հետ ունեցած բարեկամական, մտերմական կապերի և իր ճարպկության շնորհիվ կարճ ժամանակում սուլթանի և Բ. Դոան վրա նա այնպիսի ազդեցություն նվաճեց, որ նրան անվանում էին վիցե-սուլթան (201, էջ 21)։

Լայարդը, ճանապարհորդելով Արևմտյան Հայաստանում մասնավորապես հնէաբանական աշխատանքներ կատարելով Վանի շրջանում, մեծ թվով հնություններ՝ արձանիկներ, արձանագրություններ և հայկական այլ հնագույն մասունքներ յուրացրել էր, ապա հանձնել բրիտանական թանգարանին (53, № 2167, 1878 թ.)։ Ճանապարհորդության ընթացքում հնէաբանությունից բացի նա զբաղվում էր աշխարհագրական, ռազմաստրատեգիական հարցերով, տվել էր նկարագրություններ, արել որոշակի հետևություններ (80, № 3. 1877—1878, էջ 356)։

Դեռևս Ղրիմի պատերազմի ժամանակներից հակառուսական քաղաքականության ջերմեռանդ պաշտպան Լայարդը շարունակեց իր նախորդի գործը, ամեն ինչ անելով սրելու ռուս-թուրքական հարաբերությունները։ Նա չափազանց սև դեր էր կատարելու արևմտահայության քաղաքական ճակատագրում։

Հայաստանում ճանապարհորդել, գրքեր էին հրապարակել նաև անգլիացիներ Ջեյմս Բրայսը (182) և կապիտան Բերնաբին (183)։ Թե՛ սրանք, թե՛ Լայարդը Մերձավոր Արևելքում անգլիական ծավալողական քաղաքականության առաջամարտիկներից էին։ 1877 թվականին թագավորական ինստիտուտում Հայաստանի մասին դասախոսությամբ հանդես եկավ Ջեյմս Բրայսը։ Նա 1876 թվականին ճանապարհորդել էր Կովկասում, բարձրացել Արարատի գագաթը, ծանոթացել իրերի դրությանը Հայաստանում։ 1877 թվականին նա հրապարակեց 11 գլուխներից բաղկացած իր գիրքը։ Հետագայում, 1896 թվականին, նա այդ գիրքը լրացրեց ևս մեկ գլխով, որն ընդգրկում է 1876—1896 թթ. հայկական հարցի շուրջ տեղի ունեցած անցուդարձը։

Ստանձնելով դեսպանի պաշտոնը, Լայարդը հայտարարեց, թե Անգլիան օգնելու էր Թուրքիային՝ իր ձեռքում պահելու Կ. Պոլիսը և նեղուցները (217, էջ 204) և բարենորոգումներ կատարելու քրիստոնյաների և մահմեդականների շահերին համապատասխան, ապահովելու էր Հնդկաստանի մատույցները՝ պահպանելով սուլթանի իշխանությունը Կ. Պոլսի, նեղուցների և Հայաստանի վրա։

Այսպիսով, ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրության ներսում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների ժամանակ արծարծվում, միջազգային հարաբերությունների հրապարակ էր հանվում նաև հայկական հարցը։ Արևմտահայության քաղաքական ճակատագիրն աղերսվեց միջազգային բարդ իրավիճակին, ընկղմվեց տերությունների միջպետական հակամարտության մեջ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1877—78 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Պատերազմի ընթացքը: Թուրքական բանակների պարտությունը բալկանյան և կովկասյան ռազմաճակատներում: Պատերազմը և արևմտահայությունը: Ոգևորությունը հայկական միջավայրում: Թուրքական իշխանությունների հակահայկական գործողությունները: Անգլիան և ռուս-թուրքական պատերազմը: Կ. Պոլսի հայկական վերնախավի զգուշավոր և փոփոխական կեցվածքը: Ադրիանապոլսի զինադադարը: Բալկանյան ժողովուրդների օրինակով արևմտահայության ինքնավարության խնդրի առաջադրումը: Սան-Ստեֆանոյի հաշտության նախնական համաձայնագիրը: 16-րդ հոդվածը և նրա հակասական ընկալումները:

Ռուս-թուրքական պատերազմը բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների բուռն վերելքի և Արևելյան հարցում միջազգային հակասությունների սրման հետևանքն էր: Ապավինելով անգլիական սին խոստումներին, Բ. Դուռը նախընտրեց ռազմական բախումը:

Պատերազմը տևեց տասը ամիս, ծավալվեց բալկանյան և կովկասյան ռազմաճակատներում՝ ընդգրկելով հսկայական տարածություններ և հարյուր-հազարավոր մարդկանց: Անգլիան ռազմական ու ֆինանսական օգնություն էր ցույց

տվել Օսմանյան կայսրությանը, նրա բանակը զինել և հանդերձավորել նորագույն զենքով և ռազմական տեխնիկայով (104, էջ 8): Թուրքական բանակում ծառայում էին անգլիացի սպաներ (138, էջ 567):

Առաջին ամիսների փոփոխական հաջողություններից հետո ռուսական զորքերին հաջողվեց բեկում մտցնել թե՛ բալկանյան և թե՛ կովկասյան ռազմաճակատներում: Ռուսական բանակն անցավ Դանուբը և գրավեց Բուլղարիան. գեներալ Գուրկոն գրավեց Շիպկայի լեռնանցքը և անցավ Բալկանյան լեռնաշղթան: Նա ընդհուպ մոտեցավ Ադրիանապոլսին և Կ. Պոլսին: Սուլթանի մայրաքաղաքում խսկական խուճապ սկսվեց: Թուրքական բանակին առժամանակ հաջողվեց պահել ճակատը և ստիպել Գուրկոյին նահանջել: Ռուսական բանակի թիկունքում մնացած Պլևնա ամրոցը դիմադրեց մոտ 6 ամիս, բայց 1877 թվականի դեկտեմբերի 10-ին զորահրամանատար Օսման փաշայի գլխավորությամբ հանձնվեց ռուսական բանակին: Սերբիան նորից ռազմական գործողություններ սկսեց թուրքական բանակի դեմ:

Ռուսական հաղթարշավը շարունակվեց: Գեներալներ Սկոբելևի, Ռադեցկու, Գուրկոյի և ուրիշների հրամանատարությամբ գործող զորախմբերը, բալկանյան սլավոնների կամավորական ջոկատների հետ միասին, հարվածներ էին տեղում թուրքական բանակներին: Ռուս զինվորը Շիպկայի և Պլևնայի համար մղված մարտերում անօրինակ խիզախության և արիության էջեր գրեց ռուսական զենքի հաղթանակների տարեգրության մեջ, իր արյան գնով ազատություն ավետելով բուլղար ժողովրդին: Գեներալ Գուրկոյի զորախումբը դեկտեմբերին հաղթահարեց Բալկանյան լեռնաշղթան և հունվարի 4-ին գրավեց Սոֆիան: Իսկ 1878 թվականի հունվարի 15—17-ին, Ֆիլիպոպոլսի տակ Սուլեյման փաշայի թուրքական զորախմբի ծանր պարտությունից հետո, ռուսական բանակը գրավեց Ադրիանապոլիսը և ընդհուպ մոտեցավ Օսմանյան կայսրության մայրաքաղաքի մատույցներին:

Փոքրասիական, կամ կովկասյան, ռազմաճակատում ռուսական բանակը սկզբում հաջողության հասավ: Թուրքերը նահանջեցին: 1877 թվականի ապրիլին Բայազետն առանց

գովի հանձնվեց ռուսական բանակին, իսկ մայիսի 5-ին գրոհով վերցվեց Արդահանը։ Սակայն մայիսի վերջին սկըսված Կարսի պաշարումն անհաջող անցավ. թուրքական բանակի հրամանատարությունը, մեծ ուժեր կենտրոնացնելով, առժամանակ հետաձգեց իր պարտությունը (104, էջ 15)։ Միայն նոյեմբերի 18-ին Կարսը կապիտուլյացիայի ենթարկվեց, և ճանապարհը դեպի Էրզրում բաց էր ռուսական բանակի առջև։ Զինադադարի պայմաններով Էրզրումը ռուսներին հանձնվեց 1878 թվականի փետրվարի 10-ին։ Արևելյան ճակատի թուրքական բանակի հրամանատար Մուխթար փաշան, որը պատերազմի սկզբին պարծեցել էր մի քանի օրվա ընթացքում գրավել Երևանի նահանգը, հասնել Թիֆլիս, գլխովին ջախջախվեց։ Ռուսական բանակը գերի վերցրեց 17 հազար թուրք զինվոր։

Թուրքական պաշտոնական վավերագրի մեջ ասվում է, որ «գրիչն ամաչում է նկարագրել» Կարսի մատույցներում թուրքական զորքի փախուստը, որը հանգեցրեց այդ ամրոցի հանձնմանը (156, էջ 77, 78, 84)։

Պատերազմի ժամանակ անգլիական կառավարությունն ամեն ինչ անում էր սուլթանական Թուրքիային հաջողություն ապահովելու համար։ Անգլիական լրտեսները, թուրքական գործակալների հետ միասին, ջանք չէին խնայում Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում Ռուսաստանի դեմ դժվարություններ հարուցելու, քայքայիչ աշխատանք կազմակերպելու համար։

Կ. Պոլսի թուրքական թերթերը սուտ լուրեր էին տարածում Անդրկովկասի հայության դրության մասին, մշտապես ձգտելով հակառուսական տրամադրություններ արմատավորել (19, էջ 68)։

Կովկասը Ռուսաստանին միանալուց հետո անգլո-թուրքական կառավարող շրջանները երբեք չէին դադարեցրել իրենց քայքայիչ գործունեությունը, որի գլխավոր նպատակն էր վերացնել ռուսական իշխանությունը Կովկասում։ Անդրադառնալով այս խնդիրներին, բացահայտելով անգլիական իմպերիալիստների քաղաքականության հակառուսական էությունը, սովետական պատմաբան Ս. Բուշուևը նկատում է, որ ցարիզմի արտաքին-քաղաքական հաշվարկների սխալականությունը 1876 թվականին այն էր, որ բավարար ուշադրություն չէր նվիրել Արևելքում անգլիական մեքենայություններին։ Դեռևս 1876 թվականի սեպտեմբերին իր արտասանած ճառերից մեկում Բիքոնսֆիլդը խաչակրաց արշավանքի կոչ էր անում ընդդեմ Ռուսաստանի (98, էջ 101—102)։

Սակայն անգլո-թուրքական գործակալության բոլոր ջանքերն ապարդյուն անցան։ Անդրկովկասի ժողովուրդները կյանքի փորձով ըմբռնել էին Ռուսաստանի և արևելյան բռնակալությունների տարբերությունը, ռուսական իշխանության հովանու տակ էին փնտրում իրենց ապահով կյանքի երաշխիքը։

«Ոչ մի կաթիլ անգլիական արյուն չէր թափվել արևելյան պատերազմի ժամանակ, իսկ Լոնդոնի կառավարության հոգացող միջամտությունը միայն երկարաձգեց պատերազմը և ավելացրեց զոհերի թիվը, Թուրքիային ոչ մի օգուտ չբերելով»,— գրում է գերմանացի պատմաբան Վերերը (100, էջ 623)։ Անգլիական իմպերիալիստներին Օսմանյան կայսրության ապահովությունը հետաքրքրում էր այնքանով, որքանով դա համապատասխանում էր իրենց շահերին։ Եղավ մի պահ, երբ Բիքոնսֆիլդն իր կառավարության անդամներին առաջարկեց պատերազմի մեջ մտնել Թուրքիայի կողմում (217, էջ 131)։ Սակայն նրա առաջարկությունը պաշտպանություն չգտավ։

Դեռևս պատերազմի ընթացքում անգլիական կառավարողները Եգիպտոսի օկուպացումը գործնական խնդիր էին համարում։ 1877 թվականի հուլիսի 11-ին թագաժառանգ իշխանուհին գրում էր մորը՝ Վիկտորիա թագուհուն. «Անգլիան սիրող բոլոր մարդիկ ծարավի են, որպեսզի բաց չթողնվի այդ հնարավորությունը և ոտքը պնդացվի Եգիպտոսում»։ Նրան լրացնում էր Բիքոնսֆիլդը, թագուհուն հաղորդելով, թե շուտով Բ. Դուրը հայտնելու էր Լոնդոնին Եգիպտոսի, Կրետեի և Կիպրոսի վրա հովանավորությունը Անգլիային զիջելու մասին (217, էջ 225)։

Դրանից առաջ՝ 1876 թվականի նոյեմբերին տեղեկանալով Եգիպտոսում անգլիական շահերը ճանաչելու Բիսմարկի պատրաստակամության մասին, Բիքոնսֆիլդը, վախենալով

Ֆրանսիայի դիրքից, Սոլսբերիին շատ անբոնազբոսիկ պատասխանում էր թե՝ «Մենք ավելի շուտ տեր կդառնանք Փոքր Ասիային, քան Եգիպտոսին»։ Նա այդ համոզմունքն ուներ 1877 թվականի հուլիսին, կռահելով, որ Բիսմարկը Էլզաս-Լոթարինգիայի դիմաց Ֆրանսիային փոխհատուցում էր խոստանում Եգիպտոսում (217, էջ 225—226)։

Պլևնայի անկումից հետո Լոնդոնում Թուրքական դեսպան Մուսուրուս փաշան այցելեց Բիքոնսֆիլդին, նրան խնդրելով փոխառություն տալ Բ. Դռանը՝ ապահովելու համար վերջնական պարտության կանխումը։ Բիքոնսֆիլդն այդ ֆինանսական օգնությունը պայմանավորեց տերիտորիալ փոխհատուցումով, և, ինչպես Սետոն-Վաթսոնն է գրում, Սերվերի և Լայարդի միջև բանակցություններ սկսվեցին Կրետե կղզու վրա բրիտանական կառավարման հաստատման հնարավորության շուրջ։ Այնուհետև Լայարդն իր նամակներում տարբեր առաջարկություններ էր անում Բիքոնսֆիլդին մեկ Կիպրոսի, մեկ Եփրատի դեռաբերանում գտնվող Մոհամերա կղզու գրավման մասին (217, էջ 243—244)։

Անգլիական գաղութարարները ռուս-թուրքական պատերազմից փորձում էին օգտվել՝ իրենց էքսպանսիան Առաջավոր Ասիայում ընդլայնելու, նոր տերիտորիաներ զավթելու համար։

*

* *

Պատերազմի ժամանակ արևմտահայ աշխատավորական զանգվածները նոր փորձություններ ու տառապանքների ենթարկվեցին։ Ինչ խոսք, որ պատերազմը չարիք էր նրա մասնակից բոլոր ժողովուրդների համար։ Քիչ չէին տուժում մահմեդական աշխատավոր մարդիկ։ Սակայն փոքրասիական ռազմաճակատում պատերազմական գործողությունները տեղի էին ունենում հայաշատ տարածքների վրա և մեծագույն վնաս պատճառում հայ աշխատավոր գյուղացիությանը, մանավանդ որ Թուրքական իշխանությունները շեշտված հակահայկական քաղաքականություն էին վարում։

Ս. Քիշմիշևը գրում է Թուրք կառավարողների հոգեբանության մեջ կատարված այն էական փոփոխության մասին, որ տեղի ունեցավ պատերազմի նախօրյակին և նրա ընթացքում։ «Համոզվելով, որ իրենց տիրապետությունն ամուր չէ Բալկանյան թերակղզում,— գրում է նա,— նրանք (թուրքական կառավարողները) գիտակցում էին, որ իրենց վերջին ապաստանը մնալու է Ասիան և այս նպատակով իրենց ասիական տիրույթների պաշտպանության համար նրանք չէին խնայում ո՛չ փող, ո՛չ միջոցներ» (134, էջ VI)։

Դր. Արծրունին դժգոհում էր այն բանից, որ եվրոպական մի շարք հեղինակներ Արևելյան հարցի լուծումը տեսնում էին Եվրոպայից Թուրքերին Փոքր Ասիա քշելու մեջ։ Նա գտնում էր, որ դրանով իսկ կզոհաբերվեին Փոքր Ասիայի հնդեվրոպական ցեղերը, որ դրանից ավելի կբարդանար Արևելյան հարցը։ «Այսօր ապստամբվել են Թուրքիայի եվրոպական հպատակները, հինգ, տասը տարի հետո կապըստամբվեն Թուրքիայի ասիական հպատակները»,— գրում էր նա (87, էջ 5)։

Պատերազմի հենց սկզբից Թուրքական իշխանությունները հատկապես բորբոքում էին քրդական վերնախավի հակահայկական մոլեռանդությունը, կողոպուտի բնազդները։ Մոսուլի, Տիգրանակերտի, Բիթլիսի և Վանի շրջաններից ռուսական զորքին ընդառաջ շարժվող քրդական անկանոն հրոսակախմբերը հրի ու սրի, կողոպուտի էին մատնում հայկական գյուղերը։ Դրա հետևանքով միայն Բայազետի և Ալաշկերտի գավառներում 30 հազար մարդ սպանվեց։ Իր վայրագություններով անուն հանեց հատկապես Խիզանի շեյխ Ջելալէդդինը։

Կանոնավոր թուրքական զորքի անվերջ բռնագրավումներին հետևում էին քրդական հրոսակների վայրագությունները ու ավերումները։ Քրիստոնյաների դրությունը պատերազմի հետևանքով շատ ավելի վատացավ, քան նախօրյակին էր (151, էջ 58)։

1877—78 թվականների պատերազմի ժամանակ Աղբակի, Ալաշկերտի, Մոկաց գավառներից 150-ից ավելի գյուղեր դատարկվեցին։ 3000 ընտանիք Ալաշկերտից հեռացավ՝ սովից ու համաճարակից կիսով չափ ոչնչացավ ճանապարհներին (51, էջ 2)։ Մոխիր դարձան Աղբակի 24 հայկական գյուղեր, կոտորվեցին հազարավոր աշխատավոր մարդիկ։

Հազարավոր կանայք ու աղջիկներ Ջելալէդդինի ու շեյխ Իբադուլլահի զորքերի կողմից գերեվարվեցին։

Լոնդոնի «Թայմս»-ի թղթակից Նորմանը 1877 թվականի օգոստոսի 24-ին հաղորդում էր, որ Իսմայիլ փաշայի բանակի զորամասերն Ալաշկերտի 122 հայկական գյուղերից ոտնատակ տվին, կողոպտեցին և ոչնչացրին 113-ը։ Մուշի շրջանում նույնպես բազմաթիվ հայկական գյուղեր քարուքանդ արվեցին (207)։ Մի այլ անգլիացի հեղինակ հավաստում է, որ Բայազետ քաղաքում թուրքերը կոտորել են 165 հայ ընտանիք։ Ռուսական զորքի նահանջից հետո այստեղ ոչնչացվեց 6 հազար մարդ (216, էջ 441)։

«Փորերը ճեղքած հայ կանայք», «ցցերի վրա հանված ծծկեր երեխաներ», այրված ծերունիներ, պատվազուրկ արված աղջիկներ և այլն։ «Ահա այսպես էին վարվում թուրքերն իրենց սեփական հպատակ քրիստոնյաների հետ»,— եզրակացնում է ռուս պրոֆեսոր Ֆ. Մարտենսը (138, էջ 383)։ Հայերի նկատմամբ կատարված բռնությունների համար նա թուրքական կառավարությանը համարում էր դարի «խայտառակությունը»։

Հիրավի, հսկայական էին արևմտահայության վնասները. մեծ էին մարդկային զոհերը։ Տնտեսապես քայքայված, թշվառության ճիրաններում գալարվող մարդկանց խմբերը լքում էին իրենց բնակավայրերը, բռնում գաղթի ճանապարհը։ Սովամահության զոհ դարձան տասնյակ-հազարավոր մարդիկ։ «Թե ռուսանալ հարկ է՝ ռուսանանք, բայց փրկվենք, թե գաղթել՝ գաղթենք, թե մեռնել՝ մեռնենք, թե կռվել՝ կռվենք, բայց փրկվենք, այս է մեր աղերս առ ձեզ և առ Աստված»,— գրում էին Վանի շրջանի գյուղացիները։

Այս ամենը տեղի էր ունենում հայերի հակաթուրքական կազմակերպությունների ստեղծումից դեռևս շատ առաջ։ Այս հանգամանքն արդեն հերքում էր թուրքական պաշտոնական վարկածն այն մասին, ըստ որի հայերի կոտորածն, իբր թե, նրանց «ըմբոստության» հետևանք էր։

«Ռուսական զինվորական իշխանությունները ձգտում էին բոլոր միջոցներով պաշտպանել Թուրքահայաստանի բնակչությանը պատերազմի սարսափելի աղետներից» (138, էջ 380—381)։ Ռուս սպաները, մտավորական մարդիկ մեծագույն համակրանքով էին վերաբերվում հայ ժողովրդի զավակներին, դրականորեն էին արտահայտվում Ռուսաստանին հայերի նվիրվածության մասին (123, էջ 43)։

Ճակատամերձ շրջաններում կատարված հուսահայկական խժդժությունները, խաղաղ բնակչության կոտորածներն ավելի ու ավելի էին ամրապնդում այն մտայնությունը, թե փրկության միակ հույսը Ռուսաստանն է, թե նրան ապավինելով է հնարավոր թոթափել թուրքական դժնի տիրապետությունը։ Ոմանք արդեն հանգում էին չարին ակտիվ դիմակայելու, ժողովրդի ազատության համար զենքի դիմելու գաղափարին։

*

* *

Երբ ռուսաց զորքերը մտան Արևմտյան Հայաստան, ամբողջ հայությունը տոգորվեց եղբայրական համակրությամբ և հուսադրող ակնկալությամբ դեպի ազատարարները։ Ջափազանց ոգեշնչող էր այն հանգամանքը, որ ռուսաց բանակի հրամանատարության կազմում էին ռազմական գործողությունների ժամանակ անուն հանած հայազգի գեներալներ Լորիս-Մելիքովը, Տեր-Ղուկասովը, Լազարևը, Շելկովնիկովը և ուրիշ զինվորականներ։ Նրանց անուններն իսկ ոգևորիչ էին։ Հալածական ժողովուրդն արդեն համոզված էր, որ հեռու չէ փրկությունը։ Ոգևորված եղբայրակիցների մոտալուտ ազատագրությամբ, կովկասահայերն օրհնում էին այն օրը, երբ պատմությունն իրենց կապեց հզոր Ռուսաստանի հետ։

Թուրքահայաստանում իրենց առաջին իսկ քայլերից ռուսական զորամասերը հանդիպեցին հայ աշխատավոր մարդկանց ջերմ ու գրկաբաց վերաբերմունքին։ Հայկական եկեղեցիներում աղոթում էին ազատարարների համար, խաչ ու խաչվառով դիմավորում սուլթանական բռնապետությունում ճնշված քրիստոնյաների պաշտպաններին (120, էջ 32)։ Հայ բնակչությունն այնպիսի բարյացակամությամբ էր շրջապատում ռուս զինվորներին, որ նրանք կարծում էին, թե իրենց տանն են և ոչ թե հակառակորդի տերիտորիայում (134, էջ 19)։ Հայերն օգնում էին ռուս զինվորներին, մթերք

մատակարարում (104, էջ 12), ճանապարհները ցույց տալիս, ջերմությամբ վերաբերվում իրենց ազատարար եղբայրներին։ Կրկնվում էր նույն բանը, ինչ 1829-ին էր եղել կամ 1853—1856 թվականներին։ Հայ ժողովրդի ողջ համակրանքը Ռուսաստանի կողմն էր։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Յուրի Վեսելովսկին մատնացույց էր անում պատմական այն ճշմարտությունը, թե առաջին անգամ չէ, որ թուրքահայերը ողջունում էին իրենց երկիրը մտնող ռուսական զորքերին ու նրանց ցույց տալիս հնարավոր օժանդակություն։ Նա հիշեցնում էր ռուս-պարսկական, ռուս-թուրքական նախորդ պատերազմների ժամանակ հայ ժողովրդի ռուսասիրական դիրքորոշումը, ռուսական բանակի շարքերում նրանց կամավոր մասնակցությունը պատերազմին։ Առանձնապես 1877—1878 թթ. պատերազմի ժամանակ, ընդգծում էր Յուրի Վեսելովսկին, «զգացվում էր փոքրասիական վիլայեթների հայ բնակչության ուժեղ ոգևորությունը, որը նորից հավատացած էր թուրքական լծից ազատագրվելու հնարավորությանը և մեծ հույսեր էր կապում ռուսական առաջխաղացման հետ» (101, էջ 10)։

«Այս դարի ընթացքում հայոց ազգն սա երրորդ անգամն է արդեն, որ հանդիպում է ռուսաց զորքերին Թուրքիայում, պարզած ձեռքերով սպասելով իր դառն վիճակի բարվոքումը։ Մահմեդական ստրկության բազմադարյան լուծը չկարողացավ կոտրել հայոց ժողովրդի մեջ քրիստոնեական քաղաքակրթության գաղափարները, որոնց կրողը հանդիսանում է նա Փոքր Ասիայում,— գրում էր «Գոլոս» թերթը։ — Թուրքական ստրկության լծի տակ ճնշվելով, հայոց ազգը ռուսաց զորքերի Հայաստանի խորքերում նորերումս արած շարժողությունների մեջ սպասում էր իր ազատության արշալույսը տեսնել» (57, № 113, 1878)։

Կռվելով ռուսական բանակի շարքերում՝ հայ զինվորները, կամավորները, հրամանատարները գիտակցում էին, որ պատերազմը մղվում էր իրենց ժողովրդի հողի վրա, ուստի ռուս զորքի հաջողությանը զուգընթաց նրանց սրտերում ծնվում և ամրապնդվում էին սեփական հայրենիքի ազատության հույսն ու հեռանկարները։ Ռուսահայության բոլոր դասակարգերն ու խավերը տոգորված էին Ռուսաստանի օգ-

նությամբ արևմտահայությունն ազատագրելու ոգևորիչ գաղափարներով։

Յուրի Վեսելովսկին գրում էր, որ Բալկանյան թերակղզու ճնշված ժողովուրդներին օգնելու, նրանց իրավունքները պաշտպանելու համար Ռուսաստանի պատերազմը Թուրքիայի դեմ հայ հայրենասերների սրտերում նույնպես հույս արթնացրեց, որ բուլղարներից ոչ պակաս ծանր դրության մեջ գտնվող արևմտահայությանը մոռացության չեն տա պատերազմի և թուրքահպատակ ժողովուրդների հարցերը որոշելիս։

Լավատեսական հույսերով համակված ռուսահայերը հաջողություն էին մաղթում ռուսական զենքին, թուրքական զորքերի ամեն մի պարտությունը նրանց մոտ ավելի հաստատուն էր դարձնում այն համոզմունքը, որ հեռու չէ թուրքական լուծը թոթափելու օրը (101, էջ 10, 15, 16)։ Երբ ռուսական զորամասերը մտան Էրզրում, քաջարի զեյթունցիները պատվիրակություն ուղարկեցին գեներալ Լազարևի մոտ՝ նրանից զենք ու օգնություն խնդրելու (49, էջ 87)։

Ռուսական զինվորական իշխանության հովանու տակ կյանքի միանգամայն այլ մթնոլորտ էր ստեղծվել Էրզրումում։ Էրզրումի ռուս նահանգապետ Դուխովսկու կինն իր հուշերում գրել է դրական այն փոփոխությունների, այն վերելքի մասին, որ տեղի էին ունեցել այդ քաղաքի հայերի հոգևոր կյանքում։ Գործել էր սկսել մի թատրոն, որի ներկայացումներին մասնակցում էին ինչպես տեղացի հայ արվեստասերները, այնպես և ռուս սպաների կանայք։ Բեմադրվել էին Մոլիերի պիեսներից մեկը, «Լենկթեմուրի արշավանքը Հայաստան» և այլ պիեսներ։ Ներկայացումներից հետո արտասանում էին հայ բանաստեղծների գործերը։ Դուխովսկայան նկարագրում է, թե հանդիսականներն ինչպիսի ծափահարություններով դիմավորեցին «Հայաստանը չի մեռնի, նա ազատություն կնվաճի» խոսքերը (123, էջ 82—83)։

Էրզրումցիներն իրենց մասնակցությունը բերեցին 1873 թվականին զոհված ռուս մարտիկների հուշարձանի կառուցմանը։

Այդ օրերին Կովկասի հայ մամուլն աննախընթաց վերելքի շրջան էր ապրում։ «Մշակ»-ը, «Փորձ»-ը, «Մեղու Հայաստանի»-ն գրում էին Թուրքահայ խնդրի միջազգային բոլոր ասպեկտների մասին։ Նրանց էջերում տպագրվում էին ակնարկներ, պատմվածքներ, ուսումնասիրություններ Թուրքահայ կյանքի տնտեսական, կուլտուրական պայմանների, պատերազմական իրադարձությունների մասին։ Աշուղները կովի ու զենքի գովքն էին անում։ Դամատ-Քաթիպայի բանաստեղծություններն ընդվզումի և ապստամբության մասին էին։ Հայ թերթերը մեծ գովեստով էին գրում ռուս բանակի շարքերում կռվող կամավորների մասին։ Ռուսների օգնությամբ հայրենիքը վերստանալու, միավորվելու, կազմակերպվելու, համախմբվելու խնդիրները տարբեր դիրքերից, տարբեր նրբերանգներով քննարկվում էին հրապարակով և մամուլի էջերում։ Ընդհանուր ոգևորության շրջան էր։ Ռուսական բանակի կողմից նոր գրավված հայկական գավառների բնակչությունը շփման մեջ մտավ կովկասահայության հետ։ Նրա ականջին հնչում էին «ազգ», «ազգասիրություն», «ազատություն» բառերը։

Դեպքերին ականատես Ատրպետը հետևյալ կերպ է նկարագրում ռուսական հաղթանակների ընկալումը Կ. Պոլսի հայկական միջավայրում.

«Քեռին գալիս է, քեռին եկել է, քեռին հասել է...

Սրանք էին ամեն մի երիտասարդի հրճվալի, խորհրդավոր արտասանած բառերը, երբ հանդիպում էին փողոցներում,— վկայում է Ատրպետը։

— Խալիֆին թաղեցին, սուլթանին ջնջեցին...» (11, էջ 1)։

Իսկ ազգի, ժողովրդի գործերը գլխավորելու հավակնող Կ. Պոլսի հայ մեծահարուստները, նրանց հետ համերաշխ՝ պատրիարքարանն ու ազգային ժողովը ղեկավարվում էին, նախ և առաջ, իրենց դասակարգային շահերով, դարերի ընթացքում իրենց համար ստեղծված առանձնահատուկ պայմաններով։ Նրանք չափազանց զգույշ էին, չափավոր։

Պատերազմի հայտարարումից անմիջապես հետո Ներսես պատրիարքը քաղաքական ժողովի հանձնարարությամբ սուլթանի և «օսմանյան հայրենիքի» հանդեպ «խոնարհության» և «հավատարմության» շրջաբերական ուղղեց հայ

ժողովրդին։ Հիշատակելով օսմանյան տերության համար ստեղծված ծանր պահը, կոնդակում այն միտքն էր շեշտվում, թե օսմանյան երկիրը պաշտպանել նշանակում է Հայաստանը պաշտպանել (73, էջ 116)։ Թուրքական թերթերը գովասանքի խոսքեր գրեցին պատրիարքի հասցեին։

Պատերազմի ընթացքում թուրքական կառավարությունը Կ. Պոլսի հայկական վերնախավին սիրաշահելու խորամանկ և զգուշավոր քաղաքականություն էր վարում։ Միդհատ փաշան այցելեց հայոց պատրիարքին։ Հանդիսավոր ճառեր և բարեմաղթություններ փոխանակվեցին։ Ներսես պատրիարքը հարց էր հարուցում մեծ վեզիրին՝ օգնել ազատվելու դերեբեյիների և քրդական աշիրեթների հարստահարություններից, որ հարստահարություններից ազատված հայն ամենայն արդյունավետությամբ կաշխատի երկրի վաճառականության, ճարտարվեստի, գիտության և մյուս բնագավառներում։ Միդհատը խոստումներ էր շռայլում՝ թե մի քանի գավառներում հայ կուսակալներ նշանակելով վերացնելու էր հայերի «երջանկության խոչընդոտները»։

Թուրքական պառլամենտի ամբիոնից որոշ հայ երեսփոխաններ հրապարակավ իրենց գոհունակությունն արտահայտեցին Թուրքական իշխանություններին։ Իսկ Բ. Դուռն այդ ելույթները թարգմանում էր եվրոպական լեզուներով, հրամցնում դիվանագիտությանն ու մամուլին, փորձելով ցույց տալ, թե իրենց վիճակից գոհ են ոչ միայն հայերը, այլև բոլոր քրիստոնյաները, և որ ոչ ոք իրավունք չուներ նրանց անունից բարենորոգումներ կամ ազատություն պահանջելու։

Եվ այս ամենը կատարվում էր Արևմտյան Հայաստանում ծայր առած զանգվածային ավերածությունների, կողոպուտի ու կոտորածների պայմաններում։ Իսկ Կ. Ութուճյանի «Մասիս» թերթը չէր համարձակվում ճշմարտությունները կոչել իրենց անունով և արևելյան նահանգներում կատարված հրկիզումների, բռնաբարությունների ու ավերածությունների պատասխանատվությունը փորձում էր հեռացնել կառավարությունից։

Հետագայում, անդրադառնալով պատերազմի ժամանակ Ներսեսի զգուշավոր դիրքորոշմանը, Արփիար Արփիարյանը

նկատում էր. «Կատաղեցնելով երկրին իշխանությունը, անոր պահանջումներուն ընդդիմադրությամբ, գրգռելով մահմեդական մոլեռանդությունը, Ներսես պատրիարքը պիտի կրնա՞ր ավելի օգտակար ըլլալ անզոր, լքյալ, խեղճ ժողովրդի մը» (62, № 19, 1. X, 1898, էջ 291)։

Սուլթանական կառավարության գործադրած ջանքերի նպատակն էր՝ կանխել սլավոնական ժողովուրդների օրինակով հայկական շրջաններում հասունացող ազատագրության և ինքնավարության տրամադրությունները։ Ռուսաստանից, Անդրկովկասից եկող փրկարար ազատություն հուսադրող վերընթացի ազդեցությունը բթացնելու նպատակով սուլթանական կառավարողներն անգլիական դիվանագետների հետ ձեռք-ձեռքի տված աշխատում էին Կ. Պոլսի հայ ազգային մարմինների, հարուստ վերնախավի համակրանքը շահելու միջոցով կանխել ռուսական հարաճուն ազդեցության տարածումը Փոքր Ասիայում։

Սակայն թուրքական բանակի պարտությունները, արևելյան նահանգներից կոտորածների մասին ստացվող լուրերը Կ. Պոլսի հայկական վերնախավի մեջ նույնպես էական հեղաբեկման հիմքեր էին տալիս։ Ի չիք էր դառնում հայկական հարուստ վերնախավի հետ մերձենալու և նրա շեղոքությունն ապահովելու ուղղությամբ Բ. Դռան գործողությունների դրական արդյունքների հնարավորությունը։ Վերջին հաշվով թուրքական պառլամենտում արևելյան նահանգներում հայկական կոտորածների պատասխանատու հռչակվեց թուրքական կառավարությունը։

Հիրավի, ռազմաքաղաքական իրադրությունն արմատապես փոխվել էր ի վնաս Օսմանյան կայսրության և փոփոխություն պետք է առաջանար նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի, ազգային վերնախավի երեկվա զուսպ, զգուշավոր դիրքավորման մեջ։

Այս ամենը հարուցեց նոր տրամադրություններ, նոր վարվելակերպ, խորացրեց թուրքական պետականության նկատմամբ եղած անվստահությունը։ Աստիճանաբար զարգանում էր այն մտայնությունը, թե առանց դրսի ուժերի ճնշման, առանց մեծ տերությունների հովանավորության և միջամտության հնարավոր չէր կյանքի անվտանգ պայմաններ ապահովել արևմտահայության համար։

Պատերազմի ընթացքում ակնբախ դարձավ օսմանյան պետության թուլությունը։ Այս պայմաններում, ինչ խոսք, անհամեմատ հմարձակ էին դառնալու նաև երևելիները, ազգային ջոջերը, որոնք, հայկական դատը հետապնդելով, մի կողմից՝ աշխատում էին սուլթանի սիրտը շահել, որպեսզի հայկական դիմումները նա ըմբռնացում չհամարեր, մյուս կողմից՝ բախել դիվանագիտության դռները՝ ցանկալի բարենորոգումներ ստանալու, «ազգի ցավերը» հոգալու նպատակով։

Ժողովուրդը պահանջում էր, որ պատրիարքարանը և ազգային ժողովը պաշտոնապես հայոց դատի պաշտպանությունը հանձնեին Ռուսաստանին։ Ռուսական բանակի մուտքը Ադրիանապոլիս և Էրզրում ցնցող տպավորություն գործեց Կ. Պոլսի հայկական վերնախավի վրա, շարժեց նրան տեղից, օրվա պահանջներին համապատասխան մղեց նոր գործողությունների։ Այնուամենայնիվ, նրա քայլերը լինելու էին բեկբեկուն և փոփոխական։ Զմռռանալով սիրաշահել սուլթանին և թուրքական կառավարությանը, պոլսահայության պարագլուխները հակվեցին ինչպես Ռուսաստանին, նույնպես և մյուս տերություններին դիմելու մտքին։

*

* *

1877 թվականի երկրորդ կեսին թուրքական բանակի պարտությունը թե՛ Բալկաններում և թե՛ Ասիական Թուրքիայում փաստ էր։ Խուճապը համակել էր ինչպես բանակին, այնպես էլ կայսրության տնօրեններին։ Վեճեր ծագեցին հաշտություն կնքելու կողմնակիցների և հակառակորդների միջև։ Ղեկավար գործիչներից ոմանք հաշտությունը ձգձգելու և արտաքին ուժերի միջամտությունը հրահրելու դիրքորոշում որդեգրեցին։ Սակայն սուլթանն արդեն այն կարծիքին էր, որ «առջևում ոչ մի լավ բան չի սպասվում։ Ջինադադարը կարող է փրկել մեզ» (156, էջ 78)։

Ստամբուլի փողոցներում խաղաղություն կնքելու մասին պլակատներ երևացին։ Խաղաղության կողմնակիցների գլուխ

կանգնեց մարշալ Մահմուդ Դամադը, որը հետագայում մեղադրվեց դավաճանության և ռուսական կողմնորոշման մեջ։ Նրան դատեցին, աքսորեցին, այնուհետև խեղդամահ արեցին Համիդի հրամանով։

Թուրքական բանակը պարտված էր։ Օսմանյան պետականությունն օրհասական օրեր էր ապրում։ Ռուսական բանակը հաղթական դիրք էր բռնել Կ. Պոլսի մատույցներում։ Արևմտյան Հայաստանում ճանապարհը բաց էր դեպի Էրզրում։ Թվում էր, թե սուլթանների տիրապետության փլուզումն օրերի հարց է։ Իրականանում էր Կ. Մարքսի կանխատեսումն այն մասին, որ Օսմանյան կայսրության փլուզումն անխուսափելի էր (1, հ. XXI, էջ 467)։

Աբդուլ Համիդը հաշտություն էր հայցում։ Բայց դա անում էր խորամանկորեն, քաշքշուկով, արևմտաեվրոպական մայրաքաղաքներից, մասնավորապես՝ Լոնդոնից, միջամտություն ակնկալելով։ Դա էր պատճառը, որ թե՛ զինադադարի, թե՛ խաղաղության պայմանագրի կնքումը ձգձգվեց. զինադադարը կնքվեց հունվարի 31-ին՝ Ադրիանապոլսում (177, էջ 213—220), իսկ հաշտության պայմանագիրը՝ մարտի 3-ին, Սան-Ստեֆանոյում։

Այս ժամանակամիջոցը հագեցած էր դիվանագիտական նրբին պայքարով, անգլիական, ավստրո-հունգարական կառավարությունների ակտիվ գործողություններով, որոնց նպատակն էր բոլոր միջոցներով կանխել ռազմական հաղթանակին համապատասխան Ռուսաստանի քաղաքական և դիվանագիտական վերընթացը, ավելի շատ օգուտներ քաղել Օսմանյան կայսրության հոգեվարքից։

Կարսի և Պլևնայի անկումից հետո Բ. Դուրը խուճապահար դիմեց եվրոպական կառավարություններին, խնդրեց միջնորդի դեր ստանձնել Ռուսաստանի հետ զինադադար կնքելու գործում։ Մասնավորապես, նա հույսը դրել էր Անգլիայի վրա. թագուհի Վիկտորիային Համիդը դիմել էր անձնական նամակով, խնդրելով նրա պաշտպանությունը։ Թուրքիայի ղեկավարները հակված էին համաեվրոպական բարդացումների մեջ փնտրել կայսրության փրկությունը (100, էջ 617, 619)։

Սակայն պատասխանն ուշանում էր, քանզի նրանք շարունակում էին աշխուժորեն քննարկել իրենց համար մաքսիմալ օգուտներ քաղելու տարբերակները։ Անգլիական դիվանագիտությունն ամեն ինչ անում էր, որպեսզի Լոնդոնին վճռական դեր ապահովեր խաղաղության պայմանների քննարկման ժամանակ։ Բիքոնսֆիլդը հրապարակավ հանդես գալով հայտարարեց, թե ռուս-թուրքական պատերազմի ժամանակ «Անգլիան պայմանական չեզոքություն պահպանեց, քանի որ դա շատ ավելի շահավետ էր Թուրքիայի համար» (107, էջ 54)։ Անգլիական գաղութարարները, ստանձնելով սուլթանի իրավունքների պաշտպանությունը, ձգտում էին առավելության հասնել Սև ծովի ավազանում, Մերձավոր Արևելքում, ամեն ինչ անում, որպեսզի ռուսական բանակը դուրս բերվեր Հայաստանից, տարվեր Դանուբից այն կողմ։

Անգլիական կառավարական շրջանների տրամադրությունն արտահայտվեց «Ստանդարտ» թերթի տպագրած հոդվածում (1877, 5/17 դեկտեմբերի)։ Անհանգստություն արտահայտելով թուրքական բանակի պարտության և Ռուսաստանի ազդեցության ուժեղացման կապակցությամբ, թերթը գտնում էր, որ Անգլիան չպետք է անտարբերությամբ դիտեր այդ ամենը։ Թերթն առաջարկում էր օկուպացնել Գալիպոլիի թերակղզին, ռազմածովային ուժեր ուղարկել Կ. Պոլիս։ Ենթադրվում էր 40-հազարանոց բանակ ուղարկել Կ. Պոլսի մատույցները, դեսանտ իջեցնել Բաթումի և Սուխումի շրջանում, հնդկական զորամասեր ուղարկել Հերաթի վրայով Միջին Ասիա, եթե Թուրքիան մերժեր խաղաղության ռուսական պայմանները, և ռուսական բանակը շարունակեր առաջխաղացումը դեպի Կ. Պոլիս (173, էջ 233)։

1877 թվականի ավարտին ցարական արքունիքում հանգամանորեն քննարկվում էին ապագա խաղաղության պայմանները, կազմվում ու մերժվում բազմաթիվ տարբերակներ։

1877 թվականի դեկտեմբերի վերջին Գորչակովը անգլիական դեսպան Լոֆտուսին բացատրեց, որ Բ. Դուրը խաղաղություն հայցելու համար պետք է ուղղակի դիմեր ռուսական բանակների գլխավոր հրամանատարներին Եվրոպայում և Ասիայում, որոնք և կհայտնեին զինադադարի պայմանները։ Ընդ որում ռուսական կանցլերն ասել էր, որ

կնքվելիք պայմանագիրը կունենա նախնական և ոչ վերջնական բնույթ։

Հունվարի 17-ին սուլթանի մոտ հավաքված արտակարգ ժողովը որոշեց զինադադար խնդրել Ռուսաստանից։ Սերվեր փաշան և Նամըկ փաշան ներկայացուցիչներ կարգվեցին ու մեկնեցին Կազանլիկ։ Մեծ վեզիր Էդհեմ փաշան, որը պատերազմը շարունակելու կողմնակից էր, պաշտոնից ազատվեց։

Երբ Սերվերը Լայարդին և ավստրիական դեսպան Զիչին հայտնեց ընդունված վճռի մասին, նրանք մյուս օրը, իրենց կառավարություններից ստացած հրահանգի համաձայն, հանդես եկան առանձին հաշտություն կնքելու դեմ։ Լայարդն ու Զիչը ուղղակի պաշարել էին թուրքական կառավարական մարդկանց և գիշեր ու ցերեկ գաղտնագրված հեռագրեր էին փոխանակում իրենց կառավարությունների հետ (57, № 16, 1878)։ Լայարդի խառնակիչ, նողկալի դերի մասին ժամանակին շատ է գրվել։ Դիվանագիտական փաստաթղթերում անգլիական պաշտոնական շրջանները խուսափում էին հրստակ երաշխիքներ տալ Բ. Դոանը, այնինչ Լայարդը սուլթանի և օսմանյան կառավարական անձանց հետ հանդիպումների ժամանակ, ինչպես ինքն էր խոստովանել, ձգտում էր «հույսեր առաջացնել» և «հասկացնել տալ», որ Անգլիան թույլ չէր տա Օսմանյան կայսրության կործանումը (213, էջ 748)։

Թուրքիայի հետ հաշտության խնդիրը ցարի նախագահությամբ հատուկ քննարկման ենթարկվեց։ Որոշվեց զինադադարից հետո անմիջապես բանակցությունների մեջ մտնել Բ. Դոան հետ՝ հաշտություն կնքելու համար, միաժամանակ մեծ տերություններին իրազեկ պահելով, որ այդ խաղաղությունը սոսկ «նախնական է» և որ ընդհանուր-եվրոպական հետաքրքրություն ներկայացնող բոլոր հարցերը վերջնականապես կլուծվեն ոչ այլ կերպ, քան Եվրոպայի գիտությամբ և մասնակցությամբ։ Այսպես էր արձանագրել խորհրդակցության մասնակից ռազմական մինիստր Դ. Ա. Միլյուտինն իր օրագրում 1878 թվականի հունվարի 4 (17)-ին (165, էջ 431)։

Նույն խորհրդակցությունում Ալեքսանդր II-ը հաստատեց Բ. Դոան հետ հաշտության նախնական պայմանագրի նախագիծը, որ կազմել էին դիվանագետներ Իգնատևը և Նելիդովը։ Դրանից հետո Իգնատևը ճանապարհվեց Ադրիանապոլիս, ուր արդեն հասել էր ռուսական-բալկանյան բանակի գլխավոր հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի շտաբը։

Վերջինս այդ օրերին Ալեքսանդր II-ին հեռագրով հարցում էր անում այն մասին, թե ինչպե՞ս վարվել Կ. Պոլսի հետ, եթե անգլիական նավատորմը մտներ Բոսֆոր, և Կ. Պոլսում օտարերկրյա դեսպան ափ հանվեր, եթե այնտեղ քրիստոնյաների կոտորած լիներ, և նրանք օգնության կանչեին։ Նա հաղորդում էր, որ ճանապարհը դեպի Կ. Պոլիս բաց էր (91, էջ 496)։

Հունվարի 8 (21)-ին Բ. Դոան լիազորներ Սերվերը և Նամըկը Կազանլիկում՝ ռուսական զորքերի գլխավոր հրամանատարի շտաբում ծանոթանալով հաշտության պայմանագրի նախագծին, բացականչեցին. «Սա Թուրքիայի վերջն է»։ «Ինքնուրույն Բուլղարիան նշանավորում է Թուրքիայի կործանումը, Եվրոպայում նրա տիրապետության վերջը և դրանից հետո թուրքերին ոչինչ չի մնում, քան նորից ետ վերադառնալ Ասիա»,— հայտարարում էր Նամըկ փաշան (165, էջ 433)։

Թուրքական լիազորները չհամաձայնելով Բուլղարիայի ինքնավարությանը, «նախամեծար կհամարեին ուրիշ ամեն պայման ընդունել, Կարսը և Կարինը Ռուսիո թողուլ, Դարդանելի նեղուցը Ռուսիո բանալ և ռազմական տուգանք տալ»։ Նրանք արդեն հիասթափված էին անգլիական սուտ խոստումներից, քանի որ Բուլղարիայի կորուստն իրենց համար կատարված փաստ էր (53, № 2087, 1878)։ Ահա թե ինչու նրանք կատաղած հայհոյում էին Անգլիային, որը նրանց դրդել էր պատերազմի, իսկ հիմա թողել բախտի քմահաճույքին։ Դրա համար էլ Սերվերին հեռացրին պաշտոնից, և նրան փոխարինեց Սավֆեթը (106, էջ 347, 453)։

Թուրքական լիազորները ժամանակ խնդրեցին հաշտության պայմանները սուլթանի հետ համաձայնեցնելու։ Իսկ սուլթանը չէր շտապում պատասխան տալ։

Նիկոլայ Նիկոլաևիչը տեղեկացնում էր Ալեքսանդր II-ին, որ իրադարձությունների նման զարգացման դեպքում բա-

ցառված չէ, որ կամա թե ակամա ռուսական զորքը շուտով կլինի Ցարգրադի պատերի տակ։ «Իմ համոզմունքն այն է, որ հասել է ժամանակը, երբ անհրաժեշտ է գնալ մինչև վերջ, այսինքն՝ մինչև Թուրքիայի սիրտը»,— եզրակացնում էր նա։ Կազանլիկում բանակցությունների ընդհատումը և դեպի Կ. Պոլիս ռուսական զորքերի ընդհանուր առաջխաղացումը միապետին միայն ուրախություն պատճառեցին։ «Եթե վիճակված է, ապա թող խաչը տնկեն Այա-Սոֆիայի վրա», — գտնում էր նա (165, էջ 434, 435)։

Օրերն անցնում էին, բայց դրությունը չէր պարզվում։

Հաջորդ հեռագրում գլխավոր հրամանատարը հաղորդում էր ցարին, որ ինքը Կ. Պոլիսը վերցնելու կողմնակից է, որ կանգ առնել այլևս հնարավոր չէ, մանավանդ որ Բ. Դոան լիազորները իրենց գործը համարում էին տանուլ տված։

Պատասխան հեռագրում (հունվարի 12-ին) Ալեքսանդր II-ը հավանություն է տալիս Կ. Պոլսի վրա հարձակումը շարունակելու մտքին։ «Զորքերի շարժումն ամենևին չպետք է կասեցվի մինչև խաղաղության հիմքերի և զինադադարի պայմանների մասին ձևական համաձայնագրի կնքումը»,— գրում էր Ալեքսանդր II-ը։ Նա գտնում էր, որ պետք էր երեք օր տրվեր՝ խաղաղության պայմանների մասին Բ. Դոան համաձայնությունը ստանալու համար, իսկ ժամկետի խախտման դեպքում խնդիրը լուծել Կ. Պոլսի պատերի տակ (91, էջ 496)։

Պատասխանելով գլխավոր հրամանատարի հարցադրումներին, ցարը նպատակահարմար էր գտնում օտարերկրյա նավատորմ Բոսֆոր մտնելու դեպքում բարեկամական կապեր հաստատել նրա հրամանատարի հետ՝ քաղաքում համընդհանուր ջանքերով կարգուկանոն հաստատելու համար։ Եթե Կ. Պոլսի բնակիչները կամ այլ տերությունների ներկայացուցիչները քաղաքում անդորր պահպանելու համար դիմեին գլխավոր հրամանատարին, նրան իրավունք էր վերապահվում այդ փաստն արձանագրել հատուկ ակտով և զորքերը մտցնել Կ. Պոլիս։ Եվ, վերջապես, Ալեքսանդր II-ը հիշեցնում էր՝ ոչ մի դեպքում չնահանջել, եթե Անգլիան Գալիպոլի զորք մտցնելու հարց հարուցեր։ Այդ միջոցին անգլիական դիվանագիտությունը, ինչպես վկայում է ռուս

գեներալ Բոբրիկովն իր հիշողություններում, ամեն ինչ անում էր «խառնելու» Ռուսաստանի «քարտերը» (91, էջ 496—497)։ Կ. Պոլսի շուրջը խուլ պայքարը շարունակվում էր։ Ցարը հատկապես շեշտում էր անգլիացիների հետ անմիջական ընդհարման մեջ մտնելուց խուսափելու անհրաժեշտությունը։

Նույն պահին կանցլեր Գորչակովը եվրոպական հինգ մայրաքաղաքների ռուսական դեսպանություններին հեռագիր էր հղել այն մասին, որ Կ. Պոլիս անգլիական էսկադրա ուղարկվելու պատճառով ռուսական կառավարությունը ստիպված էր զորք ուղարկել Կ. Պոլիս (91, էջ 497—498)։

Փետրվարի 3-ին Ալեքսանդր II-ը նորից անգլիացիների հետ զգույշ վարվելու, Կ. Պոլիս ժամանակավորապես զորք մտցնելու, իսկ անհրաժեշտության դեպքում միայն քաղաքամերձ որոշ ամրություններ գրավելու մասին էր հեռագրում։ Փետրվարի 4-ի պատասխան հեռագրում գլխավոր հրամանատարը գրում էր այն դժվարությունների մասին, որ ստեղծվում էին նահանջած և Կ. Պոլսում կուտակված թուրքական զորքերի մեծ թվի պատճառով։ Նա գրում էր, որ այլ էր բանը երկու շաբաթ առաջ, այլ է դրությունն այժմ, երբ Կ. Պոլսում լուրեր էին պտտվում եվրոպական կոնֆերանս հրավիրելու մասին, առանց որի իբր խաղաղությունը վերջնական չէր համարվելու (91, էջ 498)։

Փետրվարի 9-ին «Մասիս» թերթում Հակոբ Պարոնյանը նկատում էր, որ «Ռուսիա իր հապաղումներովը մեծ սխալ կգործե»։

Պարզ է, որ ռուսական զորքերը չմտան Կ. Պոլիս այն վտանգից դրդված, որ սպառնում էին Մեծ Բրիտանիան և Ավստրո-Հունգարիան։ Դեռևս 1877 թ. մայիսի 6-ին Դերբին Պետերբուրգի իր դեսպանին հաղորդել էր, որ Անգլիան ոչ մի դեպքում չէր համաձայնելու Ռուսաստանի կողմից Կ. Պոլսի գրավմանը (125, էջ 169—170)։

Ցարական արքունիքում Կ. Պոլիսը գրավելու դեմ էին արտահայտվում Գորչակովը, Միլյուտինը, որոնք զգուշացնում էին նոր բարդացումներից, որ կառաջանային եվրոպական տերությունների հետ փոխհարաբերություններում (165, էջ 435)։ Պետերբուրգում գրում ու խոսում էին անգլիական

«ուխտադրժությանն» ու «խարդավանքների» մասին (147, էջ 51)։

1878 թվականի հունվարի 24-ին բանակցություններ սկսվեցին նաև ասիական ռազմաթեմում։ Թուրքական լիազորները ռուսական հրամանատարությունից խնդրում էին դադարեցնել ռազմական գործողությունները։ Այդ պահին ռուսական զորքերը կանգնած էին Էրզրումի մատույցներում։

Թուրքական հրամանատարությունը հրաժարվեց հանձնել Էրզրում ամրոցը և խնդրում էր զինադադար երկու ամսով։ Ռուսական կողմը մերժեց։ Թուրքական կառավարությունը ձգձգում էր բանակցությունները, որովհետև զինադադարի յուրաքանչյուր պայմանը համաձայնեցնում էր անգլիական խորհրդականների հետ։ Այն բանից հետո, երբ թուրքական լիազորներն իրենց ստորագրությունը դրեցին Ադրիանապոլսի զինադադարի պայմանների տակ, փետրվարի 2-ին կովկասյան-փոքրասիական ռազմաճակատում նույնպես ռազմական գործողությունները դադարեցվեցին։ Փետրվարի 3-ին բանակցություններ սկսվեցին Հասան Կալեում, ուր ժամանել էին երկու կողմերի հանձնաժողովները։ Փետրվարի 21-ին, Ադրիանապոլսի զինադադարի պայմանների համաձայն, ստորագրվեց Էրզրումը ռուսական բանակին հանձնելու ակտը։ Սահմանի դեմարկացիայի շուրջը վիճաբանությունների ժամանակ ռուսական կողմը պնդում էր Բայազետի և Վանի սանջակներից թուրքական զորքը հանելու վրա։

Վերը նշեցինք, որ խաղաղության հիմնական պայմանները կազմել էին Ա. Ի. Նելիդովը և Ն. Պ. Իգնատևը։ 1877 թ. դեկտեմբերի 17(29)-ին Ալեքսանդր II-ը թեև հաստատեց նրանց կազմած նախագիծը, բայց դրանք չէին կարող վերջնական լինել, քանի որ տակավին պատասխան չէր ստացվել խաղաղության պայմանների մասին Վիլհելմ I-ին՝ Բեռլին և Ֆրանց-Իոսիֆին՝ Վիեննա հղած նամակներին։ Եվրոպայում և Փոքր Ասիայում Ռուսաստանին անցնելիք տերիտորիաների վերաբերյալ դեռևս չէին ստացվել բալկանյան և կովկասյան գլխավոր հրամանատարություններին ուղղված հարցման պատասխանները։ Այդ էր պատճառը, որ 1878 թվականի հունվարի 19(31)-ին Ադրիանապոլսում կնքված

պայմաններում վերջնականապես չէին ձևակերպված ռուսական պահանջները։ Ադրիանապոլիս մեկնելու պահին Իգնատևին դեռ հայտնի չէր ասիական սահմանների մասին Պետերբուրգի կարծիքը։ Այս հանգամանքը նրա համար դրժվար կացություն ստեղծեց բանակցությունների ժամանակ։ 1878 թվականի փետրվարի 2-ին թուրքական նոր լիազոր Սավֆեթ փաշայի հետ տեղի ունեցած առաջին հանդիպման ժամանակ նա պարզեց առայժմ պայմանագրի հիմնական կետերը՝ անուղղակիորեն հիշատակելով վնասների հատուցման, ռազմատուգանքի մասին։

1878 թվականի հունվարի վերջին Ալեքսանդր II-ը հաստատեց կովկասյան I նախագիծը և հրամայեց այն մուծել Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի մեջ։ Այն Իգնատևին հասավ միայն փետրվարի կեսերին։

Կովկասյան սահմանի, փոքրասիական տերիտորիալ նվաճումների խնդրի մասին սկզբում հանգամանալի զեկուցագիր էր կազմել կովկասյան բանակի գլխավոր հրամանատարությունը։ Սրա հիման վրա դեռևս Պետերբուրգում Իգնատևը ներկայացրել էր իր նկատառումները։ Իսկ այդ ամբողջը հիմք էր հանդիսացել ռազմական մինիստր Միլյուտինի և պետական կանցլեր Գորչակովի համար ցարի հաստատմանը ներկայացնելու իրենց նախագիծը։

Իգնատևը խաղաղության բանակցություններին մեկնեց՝ ձեռքի տակ ունենալով այդ փաստաթուղթը, որտեղ շարադրված էին հետևյալ նկատառումները.

Թուրքիայի սահմանամերձ շրջանները քարոտ են, ճանապարհազուրկ, մեծ ծախսեր կպահանջվեին։ Բնակչությունը գտնվում էր զարգացման ամենացածր աստիճանին։ Ընդգծվում էր, որ այդ տերիտորիաներն իրացնելու համար մեծ ծախսեր կպահանջվեին։ Այնուհետև շոշափվում էր խնդրի քաղաքական անհարմարության կողմը, այն, որ «մեր նվաճումները կանխամտածված կերպով կչափազանցվեին մեր հակառակորդների կողմից և նրանց առիթ կծառայեին այլ, մեզ համար համեմատաբար ավելի էական հարցերում դրժվարություններ հարուցելուն։ Առանձնապես կգրգռվեր Անգլիան, որը չէր դադարում հայտարարել Հնդկաստանի ճանապարհների, Պարսկաստանի հետ տրանզիտային առևտրի

և ընդհանրապես Ասիայում բրիտանական ազդեցության անձեռնմխելիության վերաբերյալ իր անհանգստությունը»։ «Այսպիսով,— ասված էր Ալեքսանդր II-ի կողմից հաստատված այդ հուշագրում,— մենք պետք է սահմանափակվենք ասիական Թուրքիայում միայն ամենաանհրաժեշտով և որքան ավելի քիչ վերցնենք, այնքան ավելի ապահովված կլինենք ավելորդ խայթոցներից և կորուստներից» (173, էջ 228—229)։

Փաստաթղթում խորհուրդ չէր տրվում խաղաղության պայմանների մեջ բացի Կարսից նաև Էրզրումի մուծումը։ Ընդգծվում էր Բաթումին առաջնություն տալու անհրաժեշտությունը։ Այնտեղ ասված էր. «Եթե Անգլիան դժվարություններ հարուցի Ալաշկերտի հարթավայրի առիթով, կարելի է զիջում անել։ Բայց այդպիսի զիջում անելով հնարավորություն կընձեռվեր հաստատուն կերպով օգուտներ ստանալ խաղաղության մյուս պայմանների գծով» (173, էջ 230)։ Փաստաթղթում վերապահում էր արվում, որ քարտեզագրական սպառիչ նյութի պակասի հետևանքով ցանկալի էր խաղաղության պայմանագրի մեջ սահմանները որոշել ընդհանուր առմամբ, նշելով Ռուսաստանին անցնող գլխավոր կետերը, իսկ մանրամասները թողնել հետագային։

Սակայն ի՞նչ բան էր այդ կովկասյան I նախագիծը, և ի՞նչ պայմաններ էին դրված նրա հիմքում։ Սա շատ կարևոր հարց է, որովհետև վերաբերում է թուրք-ռուսական սահմանների, հայկական տերիտորիաների խնդրին։

Սովետական պատմաբան Ս. Զեռնովը գրում է, որ «Փոքր Ասիայում տերիտորիալ գրավումների պրոբլեմը ինքնանպատակ չէր և 1877—1878 թթ. պատերազմում ռուսական կառավարության հատուկ խնդիրը չէր հանդիսանում» (170, էջ 137)։ Նա հիշատակում է, որ 1877 թվականի նոյեմբերին Ա. Ի. Նելիդովի կազմած նախագծով հողային փոխհատուցումն ընդգրկելու էր Ալդահանը, Կարսը, Բայազետը և Բաթումն իրենց օկրուգներով։ Ցարը հաստատել էր այդ նախագիծը նոյեմբերի 27-ին (170, էջ 137—138)։

Սրան զուգընթաց զինվորական և տնտեսական խորհրդականները կազմել էին նախագծեր, առաջարկություններ, որոնց հիմքում դրվում էին առաջին հերթին Ռուսաստանի զուտ ռազմաստրատեգիական, տնտեսական շահերի ապահովության սկզբունքը։ Այդ նախագծերից մեկը կազմել էր գեներալ-մայոր Ի. Ստերնիցկին։ Ըստ նրա կազմած մի տարբերակի՝ Ռուսաստանին էր անցնելու 32.186 վերստ² տարածություն՝ 278.281 բնակչությամբ, մասնավորապես, Բաթումը, Արդահանը, Արդանուշը, Արդվինը, Կարսը, Օլթին, Բայազետը, Կաղզվանը, Ալաշկերտը, Դիադինը՝ 1491 գյուղով, և Լազիստանի մի մասը։ Այս զեկուցագիրն էլ դարձավ կովկասյան I նախագիծը։

Ստերնիցկին մի այլ նախագծում առաջարկել էր վերը նշվածին ավելացնել նաև Էրզրում քաղաքը և շրջանը՝ մոտ 10.067 վերստ² տարածությամբ և 154.078 բնակչությամբ (140, էջ 85—86, 170, էջ 138—139)։

Ռազմական մինիստր Դ. Ա. Միլյուտինն ասիական սահմանի վերաբերյալ կազմել էր իր նախագիծը՝ 11(23) հունվարի 1878 թ.։ Նա անհրաժեշտ էր համարում Ասիական Թուրքիայում սահմանափակվել ամենաանհրաժեշտով։ Պատերազմի նպատակը «թուրքական քրիստոնյաների ազատագրումն է, և դրա համար Ռուսաստանը չպետք է Եվրոպային առիթ տա մեր մտադրություններն այլ կերպ մեկնաբանելու համար»։ Նա հատկապես զգուշացնում էր Անգլիայի թշնամական գործողություններից։ Բնորոշ է, որ նա ամենակարևոր պետական-տնտեսական խնդիրը համարում էր Բաթումի կցումը, իսկ մնացյալը՝ օժանդակ, ածանցյալ։ Նա դեմ էր Էրզրումի կցմանը, գրելով, թե նույնիսկ Բ. Դոնածայրահեղ զիջողականության դեպքում պետք չէ պնդել դրա վրա։ Արդեն հունվարին նա հակված էր անհրաժեշտության դեպքում զիջելու Ալաշկերտի հովիտը և Բայազետի օկրուգը, դրանց դիմաց ակնկալելով ավելի մեծ օգուտ քաղել հաշտության պայմանագրի մյուս կետերում (170, էջ 139—140)։

1878 թվականի հունվարի 11(23)-ին Իգնատևի անունով գրված նամակում ռազմական մինիստր Միլյուտինը հայտարարում էր, որ իր զեկուցագրին հավանություն է տվել Ալեքսանդր II-ը, և այն բանակցությունների ժամանակ պետք է ընդունվեր ի գեկավարություն։ Ս. Լ. Զեռնովը գրում է, որ այդ «պլանների հիմքում ընկած էին բացառապես

տնտեսական, ստրատեգիական և արտաքին-քաղաքական նկատառումներ, որոնք կապված էին ռուսական Անդրկովկասի արդյունաբերական և առևտրական զարգացման անհրաժեշտության հետ, ինչպես նաև Փոքր Ասիայում պետական սահմանի պաշտպանության ամրապնդման և էժանացման հետ» (170, էջ 140)։ Այսպիսի մոտեցումները պայմանավորված էին ինչպես արտաքին-քաղաքական հանգամանքներով միջազգային բարդացումներից խուսափելու մտահոգությամբ, այնպես և ռուսական պետական շահերի ժամանակի ըմբռնումներով, տնտեսական և ռազմաստրատեգիական նպատակահարմարությամբ, հասարակական կարծիքի հաշվառումով։

«Գոլոս» թերթը գրել էր, թե «Փոխանակ տիրապետելու մեզ օտար ու թշնամի ազգություններին, ավելի լավ կանենք, եթե մեր սեփական ազգը կրթենք և մշակենք այն երկրների հարստությունները, որոնք արդեն մեզ են պատկանում»։ «Սևեռնի վեստնիկ» և «Գոլոս» թերթերը Ռուսաստանի համար ամենևին օգտակար չէին համարում չափազանց տարածվել Ասիայում և իր առանց այն էլ ընդարձակ սահմաններն ավելի ևս մեծացնել։ Շարունակ տարածվելով, պնդում էին նրանք, ռուս ազգի բարոյական զորությունները թուլանում ու սպառվում են, հարկ է այդ ուժերը կենտրոնացնել և երկրի ներքին զարգացման համար գործի դնել։ «Որքան պակաս ասիականություն և մահմեդականություն մնա մեր մեջ, այնքան ավելի բախտավորություն է մեզ համար»,— գրում էր «Գոլոս» թերթը (80, № 3, 1877—78, էջ 360—361)։

Ստերնիցկու նախագծերում հիմնավորվում էին ապագա տերիտորիաների առևտրատնտեսական օգուտները Ռուսաստանի համար, ընդգծվում էր այն ռազմաստրատեգիական դրական կողմերը, որ ձեռք էին բերվում այդ նվաճումներով։ Ինչ խոսք, ռուս պաշտոնյա և զինվորական Ստերնիցկու առաջարկությունների, նախագծերի հիմքում դրվում էին ոչ թե հայ և վրացի ժողովուրդների տերիտորիալ միավորման, համախմբման խիստ դրական արդյունքները, այլ Ռուսաստանի համապետական շահերն ու ցանկալի լուծումները։

Նա հարց էր դնում նոր տերիտորիաները բնակեցնել Ռուսաստանից բերված բնակիչներով (140, էջ 86—87)։

Տերիտորիալ հարցերում առկա էին տարաձայնություններ։ Ոմանք ապացուցում էին ռազմաստրատեգիական տեսակետից Բաթումի պակաս կարևորությունը Էրզրումի համեմատությամբ։ «Բաթումն այն ժամանակ մեզ համար կարևոր ստրատեգիական նշանակություն չուներ» (104, էջ 8)։ Այս տեսակետին էր նաև Լորիս-Մելիքովը, որը պնդում էր Էրզրումը պահելու անհրաժեշտության վրա, ապացուցում տնտեսական տեսակետից Կաղզվանի աղահանքների և Սողանլուղի անտառային հարստությունների օգտագործման կարևորությունը (170, էջ 143)։ Սակայն այդ մոտեցումները երկրորդ պլան մղվեցին միջազգային-քաղաքական բարդացումների հետևանքով։

1878 թվականի սկզբին Անգլիան և Ավստրո-Հունգարիան հանդես եկան մի հայտարարությամբ, որտեղ չէին համաձայնում Թուրքիայի հետ Ռուսաստանի խաղաղության պայմաններին։ Զինադադարի շուրջ առաջին բանակցությունների պահին Լայարդը՝ «Դարդանելի նեղուցին ռուսաց պատերազմական նավերուն բացվելու առաջարկությունը լսելով՝ բանակցություններն անհաջող հանելու մեծ ճիգ թափեց» (53, № 2074, 1878)։ Իսկ Անգլիան ընդհանրապես դեմ էր, որ պատերազմի արդյունքների շուրջ բանակցությունները տեղի ունենային միայն երկու կռվող կողմերի՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Կ. Պոլսում դեսպան Լայարդն անում էր ամեն ինչ, որպեսզի զինադադարը Թուրքիայի և Ռուսաստանի միջև կնքվեր տերությունների մասնակցությամբ։ Երբ Գորչակովը մերժեց Ս. Պետերբուրգում անգլիական դեսպան Լոֆտուսին (1877 թ. XII) այդ բանում, Դերբին Լոնդոնում (1877 թ. XII 30-ին) զայրացած հայտարարեց ռուսական դեսպանին. «նշանակում է դուք մտադիր եք խաղաղություն կնքել Եվրոպայի գլխի վրայով— over the head» (114, էջ 328)։

Արդեն 1878 թվականի հունվարի 2(14)-ին Սոլսբերին հանձնարարում էր Պետերբուրգում անգլիական դեսպան Լոֆտուսին՝ իշխան Գորչակովին հայտնել, որ Թուրքիայի հետ Ռուսաստանի կողմից կնքվող որևէ համաձայնագիր,

որը խախտեր 1856 թվականի Փարիզի տրակտատի և 1871 թվականի Լոնդոնի կոնվենցիայի դրույթները, ենթակա էր եվրոպական տերությունների սանկցիային (85, էջ 9—10)։ Լոֆտուսը համարյա ամեն օր բացատրություն էր պահանջում Գորչակովից մեկ հաշտության ձգձգման, մեկ հաշտության պայմանների վերաբերյալ կամ հայտարարում Գալիպոլիի թերակղզու՝ ռուսական զորքերի կողմից չգրավելու երաշխիքների անհրաժեշտության մասին։ Վերջապես, նա իր կառավարության անունից հայտարարեց, որ Ռուսաստանի և Բ. Դռան միջև կնքված պայմանագիրը վերաբերում է 1856 և 1871 թվականների տրակտատներին և պետք է լինի «եվրոպական» պայմանագիր (an European treaty) և իրական չէր համարվի առանց վերոհիշյալ տրակտատները ստորագրած տերությունների համաձայնության (165, էջ 429)։ 1878 թվականի հունվարի 26-ին (փետրվարի 7-ին) Ալեքսանդր II-ը իր գլխավոր հրամանատարին գրում էր, որ չէր հավատում խաղաղության նախնական պայմանների մասին թուրքերի տված երաշխիքների անկեղծությանը, որ դրա մեջ տեսնում էր Անգլիայի, ինչպես նաև Ավստրիայի կողմից ներշնչված խորամանկ խաղ» (165, էջ 441)։

*
* *

Պատերազմի ավարտին հայկական միջավայրում լավատեսություն էր տիրում։ Տիրապետում էր այն մտայնությունը, որ Արևմտյան Հայաստանը զուրկ չէր մնալու այն արտոնություններից ու իրավունքներից, որոնք պետք է շնորհվեին կայսրության քրիստոնյա հպատակներին։

1877 թվականի վերջին Կ. Պոլսի հայկական ղեկավար շրջանները քաղաքական բարդ իրադրության մեջ պետք է վերջնականապես ճշտեին իրենց առաջիկա ուղեգիծը, որոշեին անելիքը։ Սա չափազանց դժվար խնդիր էր, հղի վտանգներով ու անսպասելի ծանր հետևանքներով։ Թեև թուրքական պետականությունը մահացու հարված էր ստացել և գալարվում էր հոգեվարքի մեջ, բայց և այնպես, ահարկու սարսափ էր տարածում ըմբոստության, ինքնուրույն քայլերի ձգտող մարդկանց վրա։

Այնուամենայնիվ, ռուսական օգնությամբ ազատագրվելու հույսը ռեալ էր դարձել։ Ռուսական կողմնորոշումը համակել էր նույնիսկ Կ. Պոլսի երեկվա երկչոտներին։ Արևմտահայկական նահանգների վաղվա օրը շատերն արդեն պատկերացնում էին ռուսական հովանու տակ (214, էջ 61)։

Երբ թուրքական բանակը պարտություն պարտության ետևից էր կրում, սուլթան Համիդը դիմեց իր կայսրության քրիստոնյաներին՝ նույնպես զենք վերցնել, բանակ գնալ և կռվել ռուսական բանակի դեմ։ Սուլթանական հրովարտակով զորակոչվում էին 17—45 տարեկան բոլոր քրիստոնյաները՝ «հայրենիքը պաշտպանելու համար»։ Սա մահմեդական ավանդույթի կոպիտ խախտում էր, քանի որ վաղուց ի վեր արգելված էր քրիստոնյաներին զենք կրել։ Համիդի քայլը պայմանավորված էր նաև արտաքին-քաղաքական դրդապատճառով։ Նա ուզում էր Եվրոպային ցույց տալ, որ Ռուսաստանի դեմ կռվում էին նաև քրիստոնյաները, և որ նրանց ազատագրության մասին հարցադրումները արժանի չէին ուշադրության։ Մի կողմից՝ արևելյան նահանգներում իր իշխանությունների միջոցով խրախուսում էր հակահայկական գործողությունները, մյուս կողմից՝ ստիպում հայերին ռուսների դեմ կռվի գնալ Բալկաններում։

1877 թվականի դեկտեմբերի վերջերին հայոց ազգային ժողովը մերժեց հայերին բանակ զորակոչելու վերաբերյալ հրապարակված կայսերական իրադեն։ Ճառով հանդես եկած Խորեն Նար-Պեյն ասում էր, որ առանց նախնական զինվորական ծառայության ու պատրաստության «թշնամու վրա ուղարկել, նշանակում է կամենում են մեզ սպանդարան ուղարկել»։ Իր ճառի մեջ նա հայտարարեց, որ թուրքական տերությունը «ոչ միայն մարմիններ ստրկացրեց, այլև հոգիներ պղծեց» (57, № 3, 1878)։

Ինչ վերաբերում էր հայրենիքի պաշտպանության հարցադրմանը, ապա հռետորները ցույց էին տալիս, որ Թուրքիան քրիստոնյաների համար հայրենիք չէր, որովհետև գործող օրենքների համաձայն նրանք միայն հող վարձողներ էին. «Մեր ոտքերի տակ գտնվող հողը մեզ միայն ժամանակավորապես է պատկանում և հայտնի հարկի վճարման պայմանով» (57, № 3, 1878)։ «Մեր ազգային շահը

պահանջում է Ռուսիայի դեմ զենք չբարձրացնել»,— այս էր օրվա կարգախոսը (57, № 4, 1878)։ Վերջապես, բացասական որոշում ընդունվեց։ Սուլթանի հրամանը մերժվեց։ Սա բացահայտ ընդդիմություն էր նրա կամքին։

Թուրքական մամուլում «դավաճան և ապերախտ» անվանեցին հայերին, մանավանդ որ հունաց պատրիարքը համաձայնություն էր տվել սուլթանի պահանջին։

Գրիգոր Արծրունին մատնացույց էր անում այն փաստը, որ «հայոց ազգային ժողովը շատ զգույշ է դարձել և սկսել է սաստիկ գնահատել Ռուսաստանի հաճությունը դեպի հայոց ազգը» (19, էջ 76)։

1877 թվականի դեկտեմբերի վերջերին Ներսես պատրիարքը ստեղծված բարդ իրավիճակից դրդված արտահայտվեց հրաժարական տալու իր ցանկության մասին։ Այնուհետև լռություն տիրեց, և ազգային ժողովի նիստեր տեղի չէին ունենում։ Հետո, հունվարի սկզբներին, նա ընդհանուր քաղաքական ժողով հրավիրեց և մի ընդարձակ տեղեկագիր կարդաց, որտեղ օսմանյան կառավարության առջև Լիբանանի օրինակով Հայաստանի ինքնավարության հարց էր հարուցվում։ Տեղի ունեցան վիճաբանություններ։ Այնուհետև որոշվեց մի շաբաթով հետաձգել խնդրի քննարկումը։ Սա կապված էր այն բանի հետ, որ հունվարի 17-ին նախ՝ պետք է բացվեր անգլիական պառլամենտը, որը որոշակի խոսք պետք է ասեր միջազգային իրադրության մասին, և հետո՝ թուրքական հավատարմատարները ռուսաց բանակատեղին էին մեկնել զինադադարի շուրջ բանակցելու։ Ուստի հարկ էր սպասել և տեսնել, թե քաղաքականությունն ինչ ընթացք էր ունենալու։

Մեծ վեզիրին ներկայացրած իր մի գրության մեջ Ներսեսը պարզել էր մշակված ծրագրի էությունը։ Այն ընկել էր Պետերբուրգի «Գոլոս» թերթի էջերը, այնտեղից արտատպվել «Մշակ»-ում։ Այդ ծրագիրը հանգում էր հինգ գլխավոր կետերի. 1. աշխատանքի ազատություն և ապահովություն, 2. անձնական ապահովություն, 3. սեփականության ապահովություն, 4. ուսումնարանների, եկեղեցու և ազգային սեփականության ապահովություն, 5. վերջապես, Հայաստանի վարչական կառավարման բարելավում՝ ժամանակի պահանջներին և հանգամանքներին համապատասխան (57, № 30, 1878)։

Այդ գրության մեջ ասված էր, որ քառասուն տարի շարունակ արված գանգատները մնացել էին անուշադրության մատնված, որ «Բ. Դուռը ոչ միայն երբեք չգնահատեց մեր անձնազոհությունը, այլև արհամարհեց մեր հավատարմությունը և փոխանակ մեզ պաշտպանելու, փոխանակ մեր վրեժն առնելու, նա խրախուսեց մեր դահիճներին։ Իսկ ճշմարիտը՝ Թուրքիայում հանցանքը վարձատրվում է, իսկ արդարությունը՝ պատժվում» (57, № 37, 1878)։

Առաջ անցնելով նշենք, որ 1878 թվականի հուլիսի 21-ին, Բեռլինի կոնգրեսից հետո, Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը նիստ գումարեց՝ լսելու Ներսես Վարժապետյանի հաշվետվությունը հայոց հարցի շուրջ տեղի ունեցածի մասին։ Նրա հիվանդության պատճառով երեսփոխան Մկրյանը ընթերցում էր պատրիարքի կազմած հաշվետու բացատրագիրը։ Անդրադառնալով հայկական հարցի սկզբնավորման պատմությանը, նա ապացուցում էր, որ «հայկական խնդիրն իր արդի ձևի մեջ ինքնիրեն չծնվեց, այլ ընդհանուր արևելյան խնդրից ծագեց»։ Նա փաստերով ցույց էր տալիս, որ հայոց խնդիրը տասը տարուց ավելի գոյություն ուներ, մինչդեռ Հերցեգովինան և Բոսնիան, Բուլղարիան դեռ խնդիր չէին արծարծել։ Դա հայոց «հարստահարությունների խնդիրն էր»։ «Ազգը անընդհատ տասը տարի, իր հանձնաժողովներով, իր քաղաքական և երեսփոխանական ժողովներով, իր պատրիարքներով», Բ. Դռնից հարստահարությունների վերացում էր հայցում։ Բոսնիա-Հերցեգովինան և Բուլղարիան ապստամբեցին։ Այնտեղ հարստահարությունների հետ մեկտեղ ծագեց ինքնավարության խնդիրը։ Բացատրագրում ընդգծվում էր, որ, ի տարբերություն Բալկանների, հայերն «օրինավորությունից դուրս չեկան», «ապստամբության դրոշ» չպարզեցին «իրենց օրինավոր տիրոջ»՝ օսմանյան տերության դեմ։ Ապացուցվում էր, որ ապստամբությունը քաջալերվել էր Օսմանյան կայսրությունը քայքայելու համար։ Պատրիարքը հակված էր կարծելու, որ ընդհանուր բարենորոգումների քաղաքականությունը, որ որդեգրեց Բ. Դուռը 1876 թվականին, մերժելով առանձին ռեֆորմներ շնորհել

բալկանյան ժողովուրդներին, ճիշտ էր (10, նիստ 6, 21. VII, 1878, էջ 61—62)։

Ներսես պատրիարքի հարցադրումը Լիբանանի օրինակով Հայաստանի ինքնավարության մասին «խառն ժողովի մեջ հափշտակված կուսակիցներ ունեցեր է, բայց տակավին չի ընդունվեր»,— Կ. Պոլսից հաղորդում էր «Մշակ»-ի թղթակիցը 1878 թվականի հունվարի 13-ին (57, № 15, 1878)։ Որոշվել էր նորից խորհել։ Թղթակիցն ավելացնում էր, որ «անգլիական կառավարությունը յուր Կ. Պոլսի դեսպան Լայարդի միջոցով կուզե խաղցնել հայերը...»։ «Ինչպես կարող ենք մենք հավատալ այն Լայարդին և այն անգլիական կառավարությանը, որ օսմանյան տերությունն էլ այդպիսի սուտ հույսեր տալով խաբեց և պատերազմի ամենադառն վտանգներին և մեծ կորուստների ենթարկեց»,— գրում էր նա (57, № 15, 1878)։

Անդրկովկասում այլ կերպ էին արձագանքում պոլսահայերի կրոնական ու քաղաքական ղեկավարների գործողություններին։ Մելիքզադեն (Ռաֆֆին) «Մշակ»-ում գրում էր. «Կ. Պոլսի պատրիարքը շողոքորթում է, կեղծավորում է, և հայ եկեղեցականի հատուկ սովորությամբ՝ ազգի շահերը իր փառքին է զոհում։ Պատրիարքը ստիպված է այսպես վարվել, մտածում են կարճատեսները։ Դիցուք թե, նա այնքան անձնազոհություն չունի, որ իր ժողովրդի իրավունքները պաշտպանելու համար, հունաց Գրիգորի նման իր պատրիարքարանի դռանը կախաղան հանվի, դիցուք թե, նրա լեզուն Կ. Պոլսում կապված է, բայց ո՞վ էր արգելում նրան թողնել Թուրքիայի մայրաքաղաքը, ընտրել մի եվրոպական քաղաք, թող այդ լիներ Լոնդոն, և այնտեղից իր ժողովրդի բողոքներին թարգման լիներ...» (57, № 22, 1878)։

Շատերն այն կարծիքին էին, որ «Թուրքական կառավարությունը նկատելով, որ Հայաստանի մի մասն իր ձեռքից գնում է և վերջնականապես Ռուսաստանին է անցնում, ավելի լավ էր համարում, որ այդ երկիրը Լիբանանի նման վարչական ձև ունենա և իր գերիշխանության տակ լինի»։ Գրվում էր այն մասին, որ դա վնասակար ուղի է. «Մենք ավելի հույս ունենք Ռուսիայի, քան այլ տերության պաշտպանության վրա» (57, № 42, 1878)։

Ֆրանսիական մի շարք թերթեր նյութեր էին տպագրել, ըստ որոնց՝ սուլթանն էր խորհուրդ տվել Ներսեսին ինքնավարության խնդիր հարուցել։ Իսկ Կ. Պոլսում լույս տեսնող ֆրանսերեն «Ստամբուլ» թերթի խմբագիրը հանգամանորեն քննարկում էր հայերին ինքնավարություն շնորհելու անհրաժեշտությունը, կոչ անելով «Անգլիայի պետական մարդկանց» զբաղվել այդ խնդրով, «առաջնորդվելով այժմյան քաղաքական հանգամանքներում հաշտության քաղաքականության ոգով» (57, № 44, 1878)։

Ազգային ժողովը մերժեց Ներսեսի ծրագիրն այն պատճառաբանությամբ, որ արևմտաեվրոպական երկրներից յուրաքանչյուրն ուներ իր շահերը, հանդես չէր գալու հայերի ազատության պաշտպանությամբ և այդ առաջարկությունը կմնար անհետևանք, բարդություններ առաջացնելով թուրքական կառավարության հետ։ «Հայերը կկորցնեին իրենց հավատարիմ հպատակության համարումը և կասկածելի կդառնային թուրքերի աչքում»։ Մյուսները գտնում էին, որ «հավատարիմների վրա» բռնակալները նայում էին որպես «մորթված զոհերի» վրա և երբեք չէին լուծում նրանց պահանջները։ Արդեն այն ժամանակ գրվում էր, որ «առանց արյունի, առանց զոհերի փրկություն չի լինում» (57, № 42, 1878)։

Ներսես պատրիարքն «առանց ընդհանուր և քաղաքական ժողովի հավանության և կամ չուզելով նրանց պատասխանատվության ենթարկել այսպիսի փափուկ ժամանակի մեջ», ինքն էր գնացել Բ. Դուռ և հայոց համար ինքնավարություն խնդրել «օսմանյան պետության դաշնակցելու պայմանով»։ Ինչպես Կ. Պոլսից հաղորդել էր «Մշակ»-ի թղթակիցը, «ամեն մարդ զարմացավ Ներսես պատրիարքի այդ անսովոր արիության վրա» (57, № 41, 1878)։ Քանի որ Ներսեսի ծրագիրը հավանություն չէր գտել ազգային ժողովում, տարածված կարծիք էր, թե նա այդ քայլն արել էր դեսպաններից ոմանց խորհրդով։

Խոսվում էր այն մասին, որ Թուրքաց տիրապետության և Անգլիայի հովանավորության ներքո Հայաստանի լայն ինքնավարության գաղափարը խրախուսվում էր անգլիական դեսպանատան թելադրությամբ։ Ահմեդ Վեֆիկ փաշայի և

Լայարդի այս մտահղացմանն իր մասնակցությունն էր բերել հայազգի Գր. Օտյանը։ Ծրագիրը մշակվել էր ֆինանսների մինիստրությունում։ Այս փոքրաթիվ խումբը, ինչպես արտահայտվել էր ավստրիացի թղթակիցը, Խրիմյանին ուղարկեց Եվրոպա (57, № 53, 1878)։ Հովհաննես Նուբյանը, Գրիգոր Օտյանը, Սերվիչենը համոզում էին Ներսեսին, թե ռուսական ծրագրերին չափից ավելի նվիրվածությունը կարող է հայերի կոտորած առաջացնել։ Ներսեսը վախեցավ, ընկրկեց և նրանց խորհրդին հետևեց։ Թուրքական կառավարությունը խորամանկորեն ոչ միայն չխանգարեց Ներսեսին՝ իրականացնել իր որդեգրած ուղեգիծը, Եվրոպա պատգամավորություն ուղարկելու նրա միտքը, այլև քաջալերեց նրան (81, էջ 211)։

Սուլթանը գիտակցում էր, որ Ռուսաստանը ռեալ ուժ ուներ իրեն ստիպելու, պարտադրելու զիջումներ անել հօգուտ հայերի։ Իսկ ինչ վերաբերում էր եվրոպական տերություններին, ապա հենց նրանց միջոցով էր նա ձգտում խանգարել Ռուսաստանի հետագա առաջխաղացմանը։ Հատկանշական է, որ Ներսես պատրիարքի առաջ քաշած ինքնավարության ծրագրի ստեղծման մեխանիզմը կռահում էին արդեն այն ժամանակ։ Այսպես, Կ. Պոլսից 1878 թվականի հունվարի 13-ին գրված մի նամակում հիշվում էր ազգային ժողովում Ներսեսի ծրագրի քննարկման մասին։ Զարմանք հայտնելով, թե ինչ պարագաներում առաջացավ այդ մոտեցումը, նամակի հեղինակն ասում էր՝ «չլինի թե Եզովպոսի առակի նման ստվերը մեծ տեսնելով ջրի մեջ, իրականությունը թողնենք և ստվերի ետևից երթանք»։ Այդպես էլ պատահեց։ «Անգլիական կառավարությունն իր Կ. Պոլիսի դեսպան Լայարդի միջոցով կուզե խաղցնել հայերը...»,— կարդում ենք այդ նամակում։— Մեր պատրիարքն էլ կկարծե, թե այդ կերպով ռուսական կառավարությունը պիտի ստիպվի ասել, թե որովհետև բուլղարներին համար իմ արած պահանջները հայերին ալ օրինակ եղեր են, ուրեմն հարկավոր է, որ Բուլղարիային ոչինչ չշահելով ետ քաշվեմ, որպեսզի չստիպվեմ Հայաստանը հայերին թողնել» (57, № 15, 1878)։

Ֆրանսիական «Թան» օրաթերթի Կովկասի թղթակիցը

դեռևս 1877 թվականի նոյեմբերի 22-ին բացորոշ գրել էր, թե Անգլիան թույլ չէր տա Հայաստանի կցումը Ռուսաստանին։ Եվ քանի որ հայերը շարունակում էին բողոքել հարստահարությունների դեմ, անգլիական կառավարությունը մշտապես խոսք էր բացում ինքնօրինության մասին Հայաստանի համար (204, էջ 754), բայց միայն խոսքով։ Իրականում Անգլիայի կառավարության համար կարևորը ռուսական պլանների ձախողումն էր։ Դեպքերին ականատես ռուս լրագրող Ա. Մոլչանովը նկատել էր, որ Անգլիան, իհարկե, «դեմ չէր», որպեսզի ռուս-թուրքական սահմանին ստեղծվեր «չեզոք իշխանություն», այսինքն՝ հայկական ինքնավար մի միավոր, որի օգտագործումով սահման էր դրվելու Ռուսաստանի առաջխաղացմանը դեպի հարավ (141, էջ 25—26)։ Ջ. Բրայսն այդ օրերին հրապարակած իր մի հոդվածում հիմնական մտահոգությունը համարում էր հայերի միջոցով «Ռուսիո դեպի Ասիա հառաջխաղացումը արգելելը»։ «Նրանց ազդեցությունը, որ արդեն հզոր է Փոքր Ասիայի մեջ,— գրում էր Բրայսը հայերի մասին,— հակառուս ազդեցություն պիտի լինի և նրանց գոհացումը ռուսական միջամտության պատրվակները պիտի ջնջի» (56, էջ 86)։

Նման ընթացքի վնասակարությունն ակնբախ էր։ «Թե որքան ձախող և որքան ազդավնաս ուղղություն եղավ այս ծրագիրը, այսօր կարելի չէ ուրանալ։ Այս ծրագիրը, որ դարձված էր անգլիական քաղաքականության սալի վրա, ռուսական դիվանագիտության դեմ ցցվող խոշընդոտի պես մեջտեղ դրվեցավ, իր ծագման օրերին, դրդապատճառներից մեկը եղավ այն մեծ աղետի, որին ենթարկվեցավ հայությունը Թուրքիայի ներքին գավառների մեջ» (56, էջ 86—87)։

Լայարդի և նրան հավատ ընծայող Գրիգոր Օտյանի և մյուս հայ գործիչների ջանքերին պետք է վերագրել Կ. Պոլսի էֆենդիների խմբի այցելությունը Մարմարա ծովը մտած անգլիական նավատորմի հրամանատար Էդինբուրգի դուքսին, նրա դատարկահնչուն հայանպաստ խոսքերը, հուսադրող բացականչությունները «հայկական ազգային իրավունքների» պաշտպանության և վերականգնման մասին (141, էջ 123—124)։ Փոքր չէր եղել Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Ֆուրնիեի դերը, որը հանդես էր գալիս Անգլիայի

ծայրահեղ կուսակից և, հետևապես, Ռուսաստանի հակառակորդ։ Իսկ Գերմանիայի դեսպան Ռեյսը, բնականաբար, չէր կարող չհետևել նրանց վարմունքին։

Արևմտաեվրոպական դիվանագետների բոլոր գործողություններն ունեին հակառուսական նպատակներ։ Նրանց կողմից հայերին տրված խոստումները ոչ մի գործնական իմաստ չէին պարունակում։ Կ. Պոլսում կային մարդիկ, որոնք զգուշանում էին անգլիական խաբկանքներից։ Նրանք խորհում էին, «թե Լայարդի թելադրություններին անսալով երբ խաբվենք և Ռուսիայի դեմ բողոքել ելնենք, Անգլիայի ինտրիգան կառավարությունը մեզ անպաշտպան կթողնի... և մենք իզուր Թուրքիայի ատելությունը հրավիրած կլինենք մեր խեղճ ազգի վրա» (57, № 15, 1878)։ Այս տողերը պատկանում են մի պոլսահայի, որի կարծիքով, անհրաժեշտ էր «պաշտպանություն հուսալ» Ռուսաստանից, «որովհետև նա մեզ սահմանակից մի տերություն է», «հարկավոր եղած ժամանակ կարող է» «նյութական միջոցներով էլ պաշտպանել», քանի որ «մեզ դրացի է և շատ անգամ զոհողություններ է հանձն առած արևելյան քրիստոնյա ազգերի պաշտպանության համար։ «Անգլիան ոչ մեզ մոտ է, ոչ էլ քրիստոնյաների պաշտպան»,— կարդում ենք նույն հեղինակի մոտ։ Նա գտնում էր, որ չպետք է «անխոհեմ և անքաղաքագետ շարժումներով» վնաս հասցնել մեր «սիրելի եղբայրակիցներին» (57, № 15, 1878)։ 1878 թվականի փետրվարին Գր. Արծրունին գրում էր, որ արևմտահայության վիճակը բարվոքելու «հույսը մենք միշտ դնում էինք և միշտ կդնենք միայն Ռուսաստանի վրա» (57, № 23, 1878)։

Մյուսները տուրք էին տալիս այլ մտայնության. «Մի՞թե եվրոպական դեսպանաժողովը գեյթունցիների... հայոց ազատության համար թափած արյունը պիտի մոռանա։ Ոչ, այդ արդարություն չէ, այդ կերպով Եվրոպան մեղապարտ կմնա ապագա սերունդի առջև» (57, № 28, 1878)։ Այսպես մտածողները ղեկավարվում էին զգացմունքային, բարոյական չափանիշներով, երկրորդ պլան մղելով գործնականությունը, նպատակահարմարությունը, ռազմաքաղաքական և պատմաաշխարհագրական չափանիշներն ու գործոնները։

Հատկանշական է, որ «Ստամբուլ» թերթը, որի հրատարակիչը անգլիացի էր, հարձակումներ էր գործում հայերի դեմ, նրանց ընդդիմությունը զինակոչության ապստամբություն համարում և խիստ պատիժներով սպառնում (57, № 4, 1878)։ Իսկ Միդհատ փաշան ու նրա զինակիցները պրոպագանդում էին միևնույն հայրենիքի որդիներ լինելու, օսմանցի լինելու, օսմանյան հայրենիքին հավատարմության գաղափարները։

Ռուսական բանակը, հաղթության դափնիներով ծածկված, կանգնած էր Ադրիանապոլսում։ Թուրքական վերնախավը, հուսահատված, մտածում էր այժմ միայն Կ. Պոլիսը փրկելու մասին։ Իսկ հայկական շրջանները, ռուսական բանակի ներկայությունից ոգևորված, դիմեցին գործնական քայլերի։ 1878 թվականի հուլիսին Կ. Պոլսի հայոց ազգային ժողովում ընթերցված բացատրագրում Ներսես պատրիարքը գրել էր, որ օսմանյան լիազոր ներկայացուցիչներն Ադրիանապոլիս դեռ չէին ուղևորվել, «ես ու իմ սրբազան եղբայրակիցներս գործել սկսեցինք» (10, 21, VII. 1878, էջ 63)։

Ոգևորություն էր տիրում Կ. Պոլսի հայկական շրջաններում։ Ճնշող մեծամասնությունը ռուսների օգնությամբ ազատություն էր ակնկալում։ Ռուսական «Օբզոր» թերթը գրել է, որ Խորեն Նար-Պեյը և Մաթևոս Իզմիրլյանը ռուսական կողմնորոշում ունեին և վայելում էին ազգային ժողովի մեծամասնության վստահությունը (57, № 84, 1878)։ Քննարկումներն ու վիճաբանությունները լայն թափ էին ստացել ինչպես մամուլի էջերում, այնպես էլ ժողովներում։

Այդ օրերին Գր. Արծրունին համոզված էր, որ «Ռուսաստանի համար ավելի հաճելի կլինի իր պետության սահմանների վրա տեսնել ինքնավարություն վայելող մի քրիստոնեական նահանգ, քան թե Թուրքաց անկարգ և վայրենի վարչություն իր սահմանների վրա ունենալ» (57, № 15, 1878)։

Ռուսական բանակի հաղթական ներկայությունը զոտեպնդում էր բոլորին։ Կ. Պոլսի թերթերն ազատ գրում էին Թուրքահայաստանի ինքնավարության մասին։ Օրթագյուղի հայոց թատրոնում Ադամյանն արտասանում էր Ռ. Պատկանյանի «Հիմի՞ էլ լռենք» և Մ. Նալբանդյանի «Ազատու-

թյուն» բանաստեղծությունները (57, № 43, 1878)։ Կ. Պոլսում «ազգային զգացումը շատ ոգևորված է այժմ»,— արձանագրում էր «Մշակ»-ի թղթակիցը (57, № 46, 1878)։

Հիրավի, Կ. Պոլսում մեծամասնության մոտ տիրապետող մտայնությունն այն էր, «թե շուտով հյուսիսային արծիվը՝ պարտված և ընկճված մահիկին իր պայմանները պիտի առաջարկեր հաշտություն կնքելու համար, և թե առաջիկա խաղաղությունը Թուրքիայի քրիստոնյաներին քաղաքական ազատություն պիտի բերեր» (73, էջ 258)։

Այժմ փորձենք պատկերացում տալ այն հանդիպումների և բանակցությունների մասին, որ հայ գործիչները վարում էին ռուս զիվանագետների և զինվորականների հետ։

Երբ 1878 թվականի հունվարին Բ. Դոան ներկայացուցիչները նախնական հանդիպումներ էին ունենում ռուսական բանակի հրամանատարության հետ՝ հաշտություն կընքելու շուրջ, Ադրիանապոլսի առաջնորդական փոխանորդ Գևորգ վարդապետ Ռուսչուգլյանը Ներսես պատրիարքի հրահանգներին համապատասխան նույնպես հանդիպումներ էր ունենում ռուսական նախկին հյուպատոս Մ. Կիրովի, Ն. Իգնատևի և ռուս այլ գործիչների հետ (73, էջ 270)։

Տարիներ անց՝ մահացած Գևորգ Ռուսչուգլյանի անձնական արխիվում հայտնաբերվեցին և «Ռազմիկ» թերթում տպագրվեցին նրա հուշերն այդ հանդիպումների մասին։ Փաստաթուղթը վերնագրված էր՝ «Նոր գոկուման մը հայկական խնդրի ծագման մասին. ծագումն հայկական խնդրույն»։ Նա գրում է, որ ինքն «աշխատեր էր» «սիրելի ազգի ազատության համար...» Ներսես սրբազանի հրահանգով, որն «ի վաղուց իր սրտին մեջ ազգին ազատության գաղափարն և հայկական խնդիրն հղացած էր, բայց ժամանակին անպատեհութենեն և քաղաքական խնդիրներեն կաշկանդյալ ըլլալով չէր կարող գործել ազատորեն և իրականացնել իր գաղափարներն» (72, 19.V.1907, № 152)։

Գաղտնապահության նկատառումներով Ն. Իգնատևի հետ տեսակցությունը տեղի է ունենում գիշերվա ժամը 2-ին։ Բարեմաղթություններից և թուրքական բանակի նկատմամբ տարված հաղթանակի շնորհավորանքներից հետո վարդապետն ասում է, որ Ռուսիան ազատեց բուլղար քրիստոնյաներին և ասիաբնակ հայերին, թե «քաղցր է մեզ հուսալ որ հայք ևս, ինչպես բուլղարք, այն ազատությունը կվայելեն, և որքան փափագելի է մեզ դիտնալ այս, քանզի մեր ամեն հարաբերություններն ընդ Կ. Պոլսո խզված լինելով՝ բնավ տեղեկություն մի չենք կարող ստանալ Հայաստանի մեջ բնակող մեր եղբարց վրա» (72, 19.V.1907, № 152)։

Երբ Ռուսչուգլյանն Իգնատևին հարցնում է, թե ինչ պետք է լինի հայերի ապագան, ռուս դիվանագետը պատասխանում է. «Ռուսական բանակը գրավել է մինչև Էրզրումը. Հայաստանի այդ մասն այժմ ազատություն է վայելում». բայց հայ ժողովուրդն ազգովին կամ Հայաստանի մեծ մասն առայժմ չի կարողանա ստանալ այն ազատությունը, որ ստացան բուլղարները։ Իգնատևը դա պատճառաբանում էր այսպես. «Հայերը անպատրաստ գտնվեցին և Հայաստանի մեջ դարձել են «մեռյալ տարերք»։ Նշելով, որ ինքը երեք տարի շարունակ հայոց դատի «պաշտպանն ու փաստաբանն է» եղել Կ. Պոլսում, Իգնատևը դժգոհում էր այն բանից, որ հայերի վերնախավը, նաև Նուպարը, չէին օգնել իրեն այդ գործում, իսկ գավառահայությունն էլ դատապարտված էր աղքատության, անտարբերության կամ պանդխտության։ Նա խորհուրդ էր տալիս չհուսահատվել, «պատրաստվել ուսմամբ, դաստիարակությամբ, համերաշխությամբ, գաղտնապահությամբ, նյութապես ու բարոյապես», պատրաստ լինել այն օրվան, երբ «քաղաքականությունը հայերին կառաջնորդի դեպի ազատություն»։ Նա ասաց. «Թող պատրիարքները ժամավաճառ չլինեն, թող սկսեն, գործելու ժամն է» (72, 19.V.1907, № 152)։

Մ. Կիրովի օգնությամբ թղթատար է ուղարկվում Ներսեսին, որին Ռուսչուգլյանը հաղորդում է 1878 թվականի հունվարի 20-ին Իգնատևի հետ ունեցած իր զրույցի բովանդակությունը։

«Մեզ համար հայտնի չէ, թե ի՞նչ կերպ հաջողած է Ներսես պատրիարք, կամ ի՞նչ զուգադիպություն եղած է, որ իմ նամակս ստանալե տասն օր վերջ վսեմ. Ստեփան փաշա Ասլանյան և Նուբյան Հովհաննես էֆենդին Բ. Դոան կողմանե մասնավոր պաշտոնով մը Ադրիանապոլիս եկան Սաֆվետ և Սերվեր փաշաներու տրամադրության տակ, Աղ-

բիանապոլսին մեջ մնացած հիվանդ թուրք զորքերը ի Կ. Պոլիս փոխադրելու»։ «Այս երկու անձինք,— շարունակում է Ռուսչուգլյանն իր հուշերում,— պատրիարքն հանձնարարյալ մի այլ պաշտոն ևս ունեին գաղտնի և որք 1878 թվականի հունվարի 31-ի թվակիր պատրիարքին հանձնարարականով իբր խորհրդական հայկական խնդրույն ինձ ներկայացան» (72, 27.V.1907, № 153)։

Այնուհետև նա վերհիշում է, որ «Մեր վսեմ. խորհրդականաց պատմեցինք կոմս Իգնատևի հետ մեր տեսակցության արդյունքը, նոքա ևս հայտնեցին մեզ ս. պատրիարքի գաղափարներն և հրահանգն թե՝ պատրիարքն կփափագի և կարտոնե Ռուսիո դեսպանին և դուքս Նիկոլա իշխանին ներկայացնել հայոց թշվառ և հարստահարյալ վիճակն, և Ռուսիո կայսեր գթությունն հայցել, որու ի շնորհս միայն հայերն, իբրև արևելյան քրիստոնյա ազգ, պիտի կարենան ազատության հասնել, նման բուլղարաց» (72, 27.V.1907, №, 153).

Այս մասին Սարուխանը գրում է, որ ռուսական պաշտոնական ներկայացուցիչների հետ բանակցելու համար նրանց գաղտնի պատվիրակներ էր կարգել Ներսես պատրիարքը, նպատակ դնելով պարզել և ապահովել Հայաստանի ապագա կացության բարելավումը։ Այս բանագնացներից առաջինը թուրքական բանակի զինվորական բժշկի, իսկ երկրորդը՝ կարմիր մահիկի ներկայացուցչի դերում էին։ Իրականում նրանք օժտված էին պաշտոնական լիազորություններով և ռուսական հրամանատարի մոտ հանդես էին գալիս պատրիարքի և հայության անունից (73, էջ 271)։

Ռուսական ցարի զութը շարժելու, բուլղարների ազատության օրինակին արժանանալու գործին մեծապես նպաստում էր Սարգիս Համամջյանը (Թուրքիայի արտաքին գործերի մինիստրության ընդհանուր քարտուղարը), որն այնուհետև կարգվեց Սաֆվեթ փաշայի և Բեռլինում թուրքական դեսպան Սաադուլլահ բեյի խորհրդական։

«Շատ ավելի դժվար է խելքի բերել հայերին, որոնք նույնպես պաշարում են ինձ իրենց խնդրանքներով և հաճախ ինձ դնում են դժվար կացության մեջ»,— Սան-Ստեֆանոյից հաղորդել էր Իգնատևը։ Վերջինիս գրառումներից մենք տե-

ղեկանում ենք, որ պատրիարք Ներսեսը Ադրիանապոլսի հովվապետի միջոցով անսքող շնորհավորական նամակ էր հղել ռուսաց գլխավոր հրամանատարին, որը նրան հանձնվեց հանդիսավոր կերպով։ Նա գրում է, որ Կ. Պոլսից իր մոտ էին ժամանել օտոմանյան բարձր պաշտոնյաներ՝ Նուրյան էֆենդին (պետական խորհրդի անդամ) և Ստեփան փաշան (Թուրքական ռազմական մինիստրության գլխավոր բժիշկը) կարմիր կիսալուսնի գործերի քողի տակ, իսկ «իրականում Հայաստանի ինքնավարություն ձեռք բերելու համար»։

Սրանք, Իգնատևին մանրամասն պատմելով Փոքր Ասիայում և Անատոլիայում հայերի ողբերգական վիճակի մասին, հայտարարել էին, որ հայ լուսավորչական հոգևորականությունը պատրաստվում է ցարի անունով մի խնդրագիր հղել Սվասի, Վանի, Մուշի և Էրզրումի մարզերին ինքնավարություն շնորհելու մասին (130, հ. 140, 1915, № 4, էջ 52)։ Իգնատևը հայ բանագնացներին իր զարմանքն էր հայտնել այդպիսի կտրուկ շրջադարձի համար, որ կատարում էին Կ. Պոլսի հայ պատրիարքարանի ղեկավարները։ Համոզվելով, որ Իգնատևին մոտիկից ծանոթ են նրանց բոլոր գործողությունները, որոնց ինքը մշտապես ձգտել է հակադրվել, նրա զրուցակիցները չէին էլ փորձում հակառակվել, այլ բացատրեցին, որ իրենց համոզմամբ հայերը, որպեսզի օգուտ քաղեն և նշանակություն ունենան Թուրքիայում, պետք է հավատարիմ մնան Բ. Դռանը, քանի դեռ կարելի էր հուսալ թուրքական կայսրության պահպանումը և բարենորոգումը Եվրոպայի կողմից նախատեսված վերափոխությունների միջոցով. «բայց քանի որ այժմ Թուրքիայի՝ որպես մեծ տերության գոյությունն անհնարին է դառնում, ապա հայերին անհամեմատ ձեռնտու է հասնել Հայաստանի վերածնությանը Ռուսաստանի հովանու ներքո»։ Օգտվելով այդ զրույցներից, Իգնատևը փորձեց ներշնչել իր հայ զրուցակիցներին «Բ. Դռան կողմից էջմիածնի պատրիարքի գլխապետությունը բոլոր հայ հոգևորականության և բնակչության վրա ճանաչելու անհրաժեշտությունը» (130, հ. 140, 1915, № 4, էջ 52—53)։

Առաջ անցնելով ասենք, որ հանդիպելով Սաֆվետ փաշայի կատաղի դիմադրությանը, նա հրաժարվեց այդ մըտ-

քից։ Հետագայում իր այդ քայլը նա բացատրում էր նաև ռուսական արքունիքի շահերով, գրելով, թե կաթողիկոսի միջազգային դերի մեծացումը վարչական դժվարություններ կհարուցեր Կովկասում (130, հ. 140, 1915, № 4, էջ 89)։

Այնուհետև, Իգնատևի գրառումներից իմանում ենք, որ այդ երկու բանագնացներին հետևեց մի նոր պատգամավորություն, որը պատրիարք Ներսեսի կողմից նամակ հանձնեց Ալեքսանդր II-ի անունով։ Նամակի գլխավոր բովանդակությունը հանգում էր այն խնդրանքին, որ Անատոլիայի հայերին շնորհվեր նույնպիսի ինքնավար կառավարում, ինչպիսին նախատեսվում էր Եվրոպական Թուրքիայի համար։

Ռուսչուգլյանը գրում է, որ արդեն տասն օր էր անցել պատրիարք Ներսեսին գրած իր նամակից, և ինքը շտապում էր կապի մեջ մտնել ռուսական ներկայացուցիչների հետ։ Կիրովի և Իգնատևի միջոցով նա խնդրում է Նիկոլայ Նիկոլաևիչին՝ մի պաշտոնյա ուղարկել հայկական եկեղեցի, որտեղ բարեմաղթություններ էին կատարվելու Ռուսաստանի հաջողության համար և հոգեհանգիստ զոհված ռուս զինվորների հիշատակին։

Ռուսչուգլյանը Նիկոլային է ներկայանում այն պահին, երբ նրա մոտ էին Իգնատևը և Նելիդովը։ Մեծ իշխանն ասում է, որ շատ գոհ էր «հայ հասարակությունից» ռուս զորքերին սիրալիր ընդունելություն ցույց տալու, նրանց առջև իրենց տների դռները բաց պահելու և նրանց դյուրություններ ընծայելու համար։ Նա ասաց, որ սիրում և հարգում էր հայերին, որ ուզում է այդ բարեմաղթության օրն անձամբ ներկա լինել եկեղեցում և խնդրում է այն հետաձգել, մինչև կավարտվեին պատերազմական գործողությունները։

Փետրվարի 8-ին Նիկոլայ մեծ իշխանը, Իգնատևը, Նելիդովը, 16 գեներալներ և բարձրաստիճան պաշտոնյաներ այցելում են հայկական եկեղեցին, մասնակցում հանդիսավոր արարողությանը, հյուրասիրվում թեյով։ Սկալոնը նույնպես նկարագրում է նրանց այցելությունն ու մասնակցությունը պատարագին։ Ըստ նրա հուշերի՝ եպիսկոպոսը «բարեհաճ տպավորություն էր» թողել իր կրթությամբ և ֆրանսերենի իմացությամբ։ Ողջունելով Նիկոլայ Նիկոլաևիչին, նա խնդրել էր հովանավորել հայերին, ասելով, թե մինչ այդ միակ

հովանավորը եղել էր աստվածը (161, էջ 247—248)։ Զրույցի ժամանակ Ռուսչուգլյանը չի կարողանում Հայաստանի աշխարհագրության և բնակչության մասին սպառիչ պատասխաններ տալ մեծ իշխան Նիկոլային. այդ պատճառով Սաֆվետ փաշայի թույլտվությամբ հրավիրվում են նաև Նուրյանը և Փափազյանը, որոնք համապատասխան բացատրություններ են տալիս հայկական գավառների մասին։ Մեկնելու պահին սեղմելով Ռուսչուգլյանի ձեռքը, Նիկոլայ Նիկոլաևիչն ասում է, որ «ոչ ես և ոչ եղբայրս կայսր չենք մոռանա զձեզ»։

Մյուս հանդիպման ժամանակ մեծ իշխանն ասում էր, որ չափազանց գոհ էր հայերի ընդունելությունից, որ մի քանի օրից լինելու էր Սան-Ստեֆանոյում՝ Գում-Գափուում գտնվող պատրիարքի նստավայրին շատ մոտ, և խնդրում էր նրան հայտնել, թե «Ձեր խնդիրն և հույսն ի դերև չպիտի ելնեն, անհոգ եղեք, եղբորս հետ բանակցության մեջ ենք» (72, 23.V.1907, № 153)։ Ռուսչուգլյանը գրում է, որ «այս կես պաշտոնական հայտարարություններն ավելի հույս տվին մեզ. ուրախությամբ մեկնեցա»։ Հետո, երկու օրից կոմս Իգնատևը նրան հրավիրում է իր մոտ և ուրախությամբ շնորհավորում. «աչքդ լույս, գոչեց կոմսը, գործերնիդ հաջող է, կայսեր հավանությունն ստացանք և Ձեր խնդիրն պիտի անցնե ի կարգս հոդվածոց ռուս-թուրք դաշնագրության մեջ»։ Նա հանձնարարում է մեծ իշխանի համար մի ծրագիր պատրաստել, թե՝ «Ի՞նչ են հայոց իղձն ու փափագը» (72, 23.V.1907, № 153)։

Թուրքական կառավարական շրջանները զարմացած էին, որ հայերը փորձում էին համագործակցել իրենց հաղթական թշնամու հետ։ Երբ այդ մասին Ռուսչուգլյանը ստիպված էր բացատրություններ տալ թուրքական պաշտոնական մարմիններին, նա անգիտանում էր, ամեն ինչ վերագրում ռուսական նախաձեռնությանը, հավաստում թուրքական իշխողների հինգհարյուրամյա տիրապետությունից հայերի «զոհունակությունը» (73, էջ 286)։

Այլ հեղինակներ նույնպես մատնանշել են այդ հանգամանքը, գտնելով, որ Ներսես պատրիարքը չէր կարող իր նախաձեռնությամբ Սան-Ստեֆանո գնալ, ռուսական հրա-

մանատարության հետ կապի մեջ մտնել և որ «այդ հանդուգն քայլն արած ըլլա առանց ռուսական թելադրության» (17, էջ 21)։ Սակայն առկա աղբյուրները հակառակն են ապացուցում։ Նախաձեռնությունը բխում էր հայերից։ Իգնատևն ընդառաջեց այդ նախաձեռնությանը հաղթական վերընթացի պահին։ Իսկ միջազգային իրադրության բարդացումներին զուգընթաց ստիպված էր չափավորել իր նախնական մտադրությունները։

Սա սկիզբն էր այն բարդ, միաժամանակ կեղծ իրավիճակի, որի մեջ ավելի ու ավելի խորանալու էին Կ. Պոլսի հայկական ղեկավար շրջանները, առերես թաքցնելով իրենց հետապնդած նպատակները Թուրքական կառավարությունից։ Իրարամերժ, հակասական իրավիճակը շարունակվում էր։ 1878 թվականի հունվարի 31-ին Ադրիանապոլսում զինադադարի կնքման արարողությանը Թուրքական կողմից, Թուրք լիազորների հետ միասին, մասնակցում էին Ս. Ասլանյանը և Հ. Նուրյանը։ Միաժամանակ նրանք իրենց համախոհ ազգակիցների հետ միասին մասնակցում էին հաշտության պայմանագրի մեջ հայերի մասին ի վնաս Օսմանյան կայսրության առանձին հոդված մուծելու ջանքերին։

*

* *

Զինադադար կնքելու շուրջ կատարված առաջին քայլերից մինչև Սան-Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումը, այսինքն՝ հունվարի սկզբից մինչև մարտի 3-ը, լի է բարդ ու խճճված իրադարձություններով ու միջպետական, դիվանագիտական պայքարով։

Նիկոլայ Նիկոլաևիչը երեք օր ժամկետ էր սահմանել հաշտության պայմանագիր կնքելու համար, այլապես սպառնում էր զորքերը շարժել Կ. Պոլսի վրա։ Թուրքական լիազոր ներկայացուցիչներ Սաֆվետը և Սաադուլլահը ամեն գնով դիմադրում էին ռուսական պահանջներին։ Նրանք, հատկապես, կատաղի դիրք բռնեցին ասիական տերիտորիաների, հայկական ինքնավարության հարցերում։ Գաղենկամպֆն այս ամենը վերագրում է Լայարդի ակտիվ գործողություններին (106, էջ 473—474)։

Սակայն Թուրքական կառավարողների համար խաղաղության բանակցություններում քաշքշուկն այլևս անհնարին էր դառնում։ Կ. Պոլսում սպառնալից վիճակ էր ստեղծվել։ Ականատեսները նկարագրել են այն քաոսային, խառնիճաղանջ դրությունը, որ ստեղծվել էր կայսրության մայրաքաղաքում։ Բալկաններից փախած և այստեղ խռնված, գոյության միջոցներից զուրկ, տիֆով վարակված գաղթականների թիվը հասնում էր 200 հազարի (213, էջ 883—884)։ «Հասարակաց օգնությունը գրեթե անբավական է անոնց թշվառությունը դարմանելու»,— այդ օրերին գրում էր Կ. Պոլսի «Մասիս» թերթը (53, № 2074, 1878)։

Կ. Պոլիսը տնքում էր սովյալների, տիֆով հիվանդների ճնշող բեռից։ Սոսկալի չափով աճել էին գները։ Ականատեսը Կ. Պոլսից հաղորդում էր աղքատության, անմաքրության, աշխատավոր մարդկանց ողբերգության մասին. «Ամեն փողոց լի է տաճիկ գաղթականներով, որոնք կեղտոտ են... Առավոտեն մինչև երեկո փողոցները քարահատակներու վրա տարածված կնստին. նոցա անմաքրության պատճառով մարդ չի կարող յուրյանց մոտեն անցնիլ առանց քիթը բռնելու։ Տիֆ հիվանդությունը տարածեցին այս կողմեր և բավական մեռնողներ կան» (57, № 65, 1878)։ Պետերբուրգի «Նովոյե վրեմյա» թերթի թղթակից Մոլչանովը նկատում էր, որ այդպիսի պայմաններում նույնիսկ կենդանի մարդկանց, երեխաների առուծախը շարունակվում էր. տասնչորս տարեկան աղջիկներին վաճառում էին 300—400 ֆրանկով (141, էջ 6, 47, 58)։

Երբ ռուսները մտան Սան-Ստեֆանո, սուլթան Աբդուլ Համիդը մյուս օրն ուզում էր Բրուսա փախչել։ Բոլոր կարգադրություններն արված էին, գանձերը տեղափոխելու համար պատրաստված։ Շոգենավը կազմ ու պատրաստ սպասում էր գաղտնի վայրում։ Սակայն անգլիական և ավստրիական դիվանագետները կանխեցին նրա այդ մտադրությունը (62, 17, 1.IX.1900)։

Սուլթանն այլևս այլ ելք չէր տեսնում ստեղծված վիճակից, քան խաղաղություն կնքելը։ «Ամեն մարդ հաշտություն կուզե և միայն Անգլիա կհակառակի ասոր»,— գրում էր Կ. Պոլսի «Մասիս»-ը (53, № 2105, 1878)։

Հունվարի 28-ին Սերվեր փաշան «Դեյլի Նյուս» թերթին տված ինտերվյուում մեղադրում էր Անգլիայի կառավարողներին, որոնք անդնդի եզրին հասցրին Թուրքիային։ «Մինչև այսօր ես Անգլիայի, անգլիական քաղաքականության, նրա հետ դաշինքի կողմնակից էի,— ասում էր նա։ ...Այժմ ես հրաժարվում եմ Անգլիայի հետ դաշինքից։ Ես դադարել եմ հավատալ անգլիական քաղաքականությանը, անգլիական կառավարությանը...»։ Նա հանդես էր գալիս Ռուսաստանի հետ հարաբերությունները համահարթելու, բարելավելու օգտին (213, էջ 750)։

Թուրքերը Ղրիմի պատերազմի ավանդույթների իներցիայով հավատացին անգլիական քաղաքականությանը, թույլ տալով իրենց տանել դեպի անդունդ։ Ահա թե ինչու, հանդիպելով ռեալ իրականությանը և գիտակցելով, որ Անգլիան միայն շահախնդրական նպատակներ էր հետապնդում, համընդհանուր հուսախաբությամբ և դժգոհությամբ լցվեցին անգլիական քաղաքականության դեմ։ Պատերազմի վերջին Անգլիան ավելի ատելի էր Թուրքիայում, քան Ռուսաստանը (213, էջ 750)։

Այլևս բանակ չկար պատերազմը շարունակելու։ Բայց Թուրքերը դեռ հույսեր էին փայփայում, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը՝ «այդպիսի տրակտատը մեռած տառ կմնար» (147, էջ 51), քանի որ անգլիական դիվանագետները շարունակում էին երաշխիքներ տալ, հակառուսական գործողությունների դիմել։ Մոլչանովը նկարագրում է, թե ինչպես մարտի 2-ին, պայմանագրի ստորագրման նախօրյակին, Բ. Դոան միջանցքներում վխտում էին անգլիացիները, ներս ու դուրս անում, փորձում ներազդել Թուրքական բարձրաստիճան պաշտոնյաների վրա՝ պայմանագրի ստորագրումը ձգձգելու համար (141, էջ 13, 25)։ Նախապես ասենք, որ նույնիսկ պայմանագրի ստորագրումից հետո Թուրքական կողմը հրապարակեց պայմանագրի տեքստի միայն հիմնական բովանդակությունը, արտատպելով այն Պետերբուրգի «Պրավիտելստվենն վեստնիկ»-ից, շարունակելով թաքցնել հասարակությունից հիմնական հոդվածների բովանդակությունը (141, էջ 14)։ Իսկ Թուրքական թերթերը զարգացնում էին այն տեսակետը, թե մինչև կոնգրեսը հավանություն

չտար, խաղաղության պայմանագիրն ուժի մեջ չէր մտնի (141, էջ 67, 68, 70)։ Սուլթանը դադարեցրեց մուհաջիրներին Փոքր Ասիա ուղարկելը, քանի որ Անգլիայի ներշնչումով Բուլղարիան ետ ստանալու հույսեր էր փայփայում։

Բ. Դուռը ձգտում էր գաղտնի պահել իր համար ոչ ձևընտու Սան-Ստեֆանոյի պայմանագրի բովանդակությունը, նաև սարսափելով հակակառավարական ելույթներից։ Այնուամենայնիվ, ռուս-անգլիական ռազմական ընդհարումը տակավին հավանական էր թվում, և միջազգային իրադրության սրման մեջ Թուրքերը հույսեր էին նշմարում։ Մյուս կողմից՝ անգլիական դիվանագետները սարսափում էին ռուսական զորքերի կողմից Կ. Պոլիսը գրավելու հնարավորությունից։

Վերջապես, 1878 թվականի մարտի 3-ին Կ. Պոլսից ոչ հեռու, Մարմարա ծովի ափին գտնվող Սան-Ստեֆանո ամառանոցային վայրում ստորագրվեց ռուս-Թուրքական խաղաղության պայմանագիրը (45)։ Այն անվանվեց նախնական, որովհետև Գորչակովը Իգնատիևին հրահանգել էր տրակտատին չտալ վերջնական բնույթ, այլ ստորագրել որպես «պրելիմինար»՝ նախնական, արձանագրություն, առանց մանրամասների, քանի որ «մյուս տերություններին կամ ամբողջ Եվրոպային վերաբերող բոլոր հարցերը ենթադրվում էր որոշել համատեղ, համաեվրոպական կոնֆերանսում» (165, էջ 436)։

Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրով Բ. Դուռը վերջնականապես ճանաչում էր Չեռնոգորիայի իշխանապետության անկախությունը։ Սերբիան ճանաչվում էր անկախ։ Բ. Դուռը ճանաչում էր Ռումինիայի անկախությունը։ Ստեղծվում էր ինքնավար Բուլղարիա՝ իր կառավարությամբ և զեմստվոյական զորքով։ Պայմանագրում ասված էր, որ «Բուլղարիայի իշխանը ազատորեն ընտրվելու է բնակչության կողմից և հաստատվելու է տերությունների համաձայնությամբ Բարձր Դռան կողմից»։ Օսմանյան զորքերը հեռանալու էին Բուլղարիայից, իսկ ամրոցները ենթակա էին քանդման։ Ճիշտ է, Բուլղարիան դեռևս որոշակի կախման մեջ էր լինելու սուլթանի իշխանությունից, ամենամյա տուրք էր վճարելու, բայց, բատ էության, դրված էր բուլղար ժողովրդի ազատագրության, սեփական հայրենիք և պետական

անկախություն ունենալու հիմքը։ Սա ռուսական զենքի հաղթանակի ամենամեծ արդյունքն էր։ Բուլղար ժողովրդի հերոսական ճիգերը, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, պսակվում էին հաղթանակով։ «Իր ազգային ազատագրությունը Բուլղարիան ստացել է ռուս ժողովրդից»,— գրել է բուլղար ժողովրդի մեծ զավակ Գեորգի Դիմիտրովը (167, էջ 3)։

Պայմանագրի 16-րդ հոդվածում ասված էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից» (45, էջ 92)։

Այս հոդվածը էականորեն տարբերվում էր Եվրոպական Թուրքիայի երկրամասերին վերաբերող ձևակերպումներից։ Այստեղ բառ անգամ չկար ինքնավարության, կոնկրետ անելիքների մասին։ Մինչդեռ Բալկաններին վերաբերող հոդվածների բովանդակությունը կոնկրետ սահմանումներ էր պարունակում։ 16-րդ հոդվածի սահմանումը այն էքսպրոմտի արդյունքն էր, երբ հայկական հարցը դիվանագիտության մարզում հարուցվեց հանպատրաստից։ Իգնատիևը դա բավարար էր համարում, ասելով, թե հայերի համար չափազանց նշանակալից էր, որ Օսմանյան կայսրության գոյության ամբողջ ընթացքում առաջին անգամ հայերի մասին հիշատակվեց միջազգային դաշնագրի մեջ, իսկ Բ. Դուռը հրապարակով ճանաչեց հայ ազգի գոյությունը Ասիական Թուրքիայում (34, էջ 76—77)։

Սան-Ստեֆանոյի պայմանագրով Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանին 1410 միլիոն ռուբլու ռազմատուգանք վճարել։ Սակայն պայմանագրի 19-րդ հոդվածում ասված էր. «Նկատի առնելով Թուրքիայի ֆինանսական դժվարությունները և համակերպվելով նորին մեծություն սուլթանի ցանկությանը, ամենայն ռուսաց կայսրը համաձայն-

վում է... գումարների մեծ մասի վճարումը փոխարինել... տերիտորիալ զիջումներով» (45, էջ 93—95)։ Այդ հոդվածի հիման վրա, 1100 միլիոն ռուբլու դիմաց Ռուսաստանին էին անցնում Բեսարաբիայի մի մասը, Արդահանը, Կարսը, Բաթումը, Բայազետը և մինչև Սողանլուղ հասնող տերիտորիան՝ Օլթի, Արդանուշ, Արդվին, Խումար, Կաղզվան, Ալաշկերտ քաղաքներով ու վայրերով։ Գումարի մնացած մասի վճարումը թողնվում էր երկու կողմերի միջև հետագա բանակցություններին և համաձայնությանը։ Կարսը՝ «Հայաստանի ամենահարուստ և ամենակուլտուրական մասը» (1, հ. IX, էջ 400) թոթափում էր թուրքական լուծը, անցնում Ռուսաստանին, միաձուլվում Ռուսահայաստանի հետ։ Իսկ Էրզրումը որպես գրավական վեց ամիս պետք է մնար ռուսական բանակի ձեռքում, մինչև որ թուրքերը վճարեին ռազմատուգանքը։

Թուրքական ներկայացուցիչները սուլթանի համաձայնությամբ առաջարկեցին ռազմատուգանքի մի մասի դիմաց տերիտորիալ զիջումներ անել։ Սակայն, եթե Դոբրուջան նրանք զիջեցին ոչ մեծ դիմադրությունից հետո, ապա Ասիական Թուրքիայի տերիտորիալ հարցերում ռուս դիվանագետները հանդիպեցին թուրքական լիազորների համառությանը։ Իգնատիևը գրում է, որ վերջիններս ղեկավարվում էին անգլիացիների խորհուրդներով, որոնք Բայազետի վրայով անցնող քարավանային ճանապարհը Ռուսաստանին չթողնելու համար էին պայքարում։ Նա իր հուշերում նկարագրել է, թե ինչպիսի դժվարությամբ հաջողվեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի մեջ մուծել Կարսը, Բաթումը, Բայազետը Ռուսաստանին հանձնելու մասին կետը (129, էջ 228—229)։

Պայմանագրի 24-րդ հոդվածով սահմանվում էր, որ ինչպես պատերազմի, նույնպես և խաղաղ ժամանակ Բոսֆորն ու Դարդանելը բաց կլինեն ռուսական նավահանգիստներից եկող և դեպի դրանք ուղղվող չեզոք երկրների առևտրական նավերի համար։

Հասել էր այն պահը, երբ հոդս էին ցնդում «Թուրքիայի անբաժանելիության մասին» խոսակցությունները, որ «Ֆրիդրիխ Էնգելսը համարում էր «ֆիլիստերական հին տիմա-

ությունն», «դիվանագիտական դատարկ բան» (1, հ. XXI, էջ 465)։

1878 թվականի մարտի 3-ին Ն. Պ. Իգնատևը հեռագրեց Կովկասի փոխարքա Միխաիլ Նիկոլաևիչին։ «Պատիվ ունեմ հայտնելու Ձերդ կայսերական մեծությանը, որ խաղաղության պայմանները հենց նոր ստորագրվեցին Սան-Ստեֆանոյում։ Կարսը, Բաթումը, Բայազետը, Արդահանը, Օլթին, Արդանուշը, Արդվինը, Ալաշկերտը, Կաղզվանը, Խումարը մնում են Ռուսաստանին։ Սահմանը որոշված է առաջին նախագծով» (170, էջ 146)։ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը հռչակվեց ռուսական դիվանագիտության «մեծագույն հաղթանակ» (153, հ. 153, 1913, էջ 78)։ Ս. Ջեռնովը գտնում է, որ այդ պայմանագիրը Ռուսաստանի դիվանագիտական կրեդոն էր, Արևելյան հարցի լուծման նրա պաշտոնական քաղաքական ծրագիրը։ Նեղուցների գրավումը չէր մտնում այդ ծրագրի մեջ։ Գլխավոր շեշտը դրվում էր Թուրքական տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների դրությունը բարելավելու վրա (170, էջ 136)։

Պատմության դասերը շատ ավելի հստակ են դարձնում այն գլխավոր խնդիրները, որոնք դրված էին Ռուսաստանի արևելյան քաղաքականության հիմքում։ Այդ քաղաքականության արդյունքն այն էր, որ Բալկաններում խորտակվում էր Թուրքական հեռադիմական տիրապետությունը, իսկ Անդրկովկասի և, մասնավորապես, Հայաստանի բնակչության համար հնարավորություն էր ստեղծվում ավելի արագ առաջադիմելու ռուսական պետականության հովանու ներքո։ Պատմականորեն միանգամայն արդարացի էր նաև Ռուսաստանի համառ պայքարը սևծովյան նեղուցներով ռուսական նավերի ազատ անցման իրավունքի համար։ Ինչպես նշում է սովետական արևելագետ Օ. Շպարոն, «Ռուսաստանի տնտեսական և քաղաքական թուլության հետևանքով ցարական կառավարությունը կարողացավ կատարել իր ծրագրի առաջին, օբյեկտիվորեն առաջադիմական մասը, բայց Բալկանյան պետություններին և Թուրքիային իր ազդեցության ոլորտում պահելը հետագայում չհաջողվեց» (172, էջ 15)։

* * *

Սակայն ինչպե՞ս ծնվեց և ինչո՞ւ այդպես ձևակերպվեց պայմանագրի 16-րդ հոդվածը։ Մի բան պարզ է, որ այն ամբողջապես չէր արտահայտում Իգնատևի նախնական մտադրությունն ու նախատեսածը։ Պարզ է նաև, որ բացասական դեր խաղաց Թուրքական լիազորների կատաղի դիմադրությունը։ Սակայն փորձենք առկա վկայությունների, սուղ տեղեկությունների հիման վրա մոտավոր պատկերացում տալ հայ ժողովրդի կենսական շահերի համար կարևոր այդ հոդվածի ստեղծման հանգամանքների մասին։

Ռուսչուգլյանը գրում է, որ պատրիարք Ներսեսից պահանջված ծրագիրն ու առաջարկությունները ուշացան։ Սրանից անհանգստացած, նա Փափազյանի և Նուբյանի հետ կազմում է մի խնդրագիր-ծրագիր, որով խնդրում է «Ազգային ինքնուրույնություն մը Հայաստանի այն գավառներուն համար, ուր կգտնվին բազմաթիվ հայեր՝ ինչպես Վան, Մուշ, Կարին, Տիգրանակերտ ևն.»։ Պատրիարքից ստացած իր լիազորագրին համապատասխան, Ռուսչուգլյանը այդ փաստաթղթերի մի օրինակը հանձնում է Իգնատևին, մյուսն ուղարկում Կ. Պոլիս՝ Ներսես Վարժապետյանին (72, 26.V.1907, № 154)։

Մի քանի օր հետո Իգնատևը Ռուսչուգլյանին պարզաբանում է հաշտության պայմանագրում հայերի մասին նախատեսված հոդվածի բովանդակությունը, միաժամանակ հայտնելով, թե «ահա այս հոդված կպարունակե հայուն ապագան, բայց տեսնելու էիք, թե ի՞նչ բողոքներով և աղաղակներով Սաֆվետ փաշան ընդունեց այս առաջարկությունը... և 36 ժամ միջոց ուզեց սուլթանին հավանությունը ստանալու և դաշնագիրը ստորագրելու համար. տեսնենք ինչ պիտի ընեն» (72, 26.V.1907, № 54)։ Սկալոնը հաստատում է, որ Իգնատևն ու Նելիդովը իրենց նախնական ձևակերպումով Հայաստանի համար վարչական ինքնավարություն էին նախատեսել (161, էջ 283—284)։

Ռուս ժուռնալիստ Մոլչանովը գրում է, որ Կ. Պոլսում լույս տեսնող անգլերեն «Լևանտ հերալդ» թերթը (այն լույս էր տեսնում Լայարդի հսկողության տակ) ինֆորմացիա էր

տպագրել մի պաշտոնատար ռուսի և մի հայի հանդիպման մասին։ Նա գրում է, որ խոսքը վերաբերում էր Ներսես պատրիարքին գեներալ Սկոբելևի տված այցելությանը։ Պատրիարքը հայտարարել էր ռուս գեներալին, որ «հայերը փրկություն են ուզում միայն Ռուսաստանից» (141, էջ 251—252)։ Սկալոնը վերհիշում է Սան-Ստեֆանոյում հայ մեծահարուստ, վառոդի գործարանատեր Առաքել բեյ Բաղյանի տան անցուդարձը։ Այդ տունը գլխավոր հրամանատարի նստավայրն էր, ուր ռուս զինվորական հրամանատարները հավաքվում էին թեյի, տեղի էին ունենում հանդիպումներ, երբեմն Առաքելի դուստրեր Դերուիզան և Մարիամն իրենց դաշնամուրային նվագով զբաղեցնում էին հյուրերին (161, էջ 266)։

Այդ տանը Նիկոլայ Նիկոլաևիչի հետ տեսնվելուց հետո պատրիարք Ներսեսը երկու ուղերձ հղեց Ալեքսանդր II-ին և կանցլեր Գորչակովին։ Այդ փաստաթուղթը կազմվել էր Գր. Օտյանի մասնակցությամբ, բայց նրա տակ դրվել էին ինը եպիսկոպոսների ստորագրություններ։ Ըստ էության, դա Ռուսաստանի ուշադրությունն ու հոգատարությունը հայցող մի աղերսագիր էր, որտեղ «կայսերական մեծության զորավոր պաշտպանությունն էին հայցում» «հայոց հասարակության» ինքնավարության համար։ Հիշենք, որ նույն պահին Գրիգոր Արծրունու նախաձեռնությամբ Թիֆլիսի հայերը նույնպես աղերսագիր էին հանձնել Կովկասի փոխարքային և նրա միջոցով տեղեկացել, որ Ալեքսանդր II-ը համաձայնվել էր ռուս-թուրքական համաձայնագրում հատուկ հոդված ձևակերպել հայերի մասին։

Ըստ էության, Ներսես պատրիարքի և նրա համախոհների դիմումների շնորհիվ դաշնագրի մեջ մուծվեց մի հատուկ հոդված։ Բայց նրա բովանդակությունը չէր արտացոլում այն լավատեսական հույսերը, որ նրանք փայփայում էին մինչ այդ։ Ինչպես նկատել է Մինաս Չերազը, «Սան-Ստեֆանոյի հոդվածն աղաչանքներե ծնած էր» (64, էջ 79—80)։

Երբ ռուսական բանակը հասավ Սան-Ստեֆանո, «անտարակույս Ներսես պատրիարքը չէր կարող շարունակել իր քաղաքականությունը... կացությունը փոխված էր ու հանրային կարծիքը գրգռված»։ «Տարրական խոհեմությունը սակայն կպահանջեր Ներսեսի հրաժարումը, և ընտրությունը տեղապահի մը, որ կարենար անցյալի մը կաշկանդումներեն ազատ գործել։ Ռուսիո մեր դիմումեն անհաջողություն ալ կարելի էր սպասել ու օր մը հայն ու թուրքը կրնային նորեն մեն մինակ իրարու հետ մնալ. ան ատեն շրջաբերականին պատրիարքը վերադարձնելով իր աթոռը, սուլթանին վստահելի հեղինակավոր միջնորդ մը կունենայինք թուրքերուն հետ մեր հարաբերության մեջ։ Նահանջելու պատահականությունը երբեք մեր հաշիվներուն մեջ չենք մտցներ» (62, 1. X. 1898, 19, էջ 291)։

Երբ Խորեն Նար-Պեյին Ներսես պատրիարքն ուղարկում է Սան-Ստեֆանո՝ գեներալ Իգնատևի մոտ՝ խնդրելու, որ վերջինս չմոռանա հայերի վիճակի ապահովության խնդիրը ներառել զինադադարի համաձայնագրի մեջ, ռուսաց դեսպանը նրան ասում է. «Օհ, թող անհոգ մնա monseigneur Ներսեսը. հայերի հոգը այնչափ քաշում եմ, որ արդեն մոռացրել եմ ահա այս հոդվածը», ցույց տալով իր ձեռակերպած 16-րդ հոդվածը (58, 1907, № 2, էջ 61)։ Պարզ դարձավ, որ հոդվածի բովանդակությունն էականորեն տարբերվում էր Ադրիանապոլսի զինադադարի պահին Իգնատևի արտահայտած մտքերից։

Ադրիանապոլսում խմբագրված հաշտության պայմանների նախնական տարբերակում Իգնատևը «վարչական ինքնօրինություն» էր նախատեսել «Կովկասի սահմանակից հայաբնակ գավառներին»։ Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածից հանվեց վարչական ինքնավարության մասին ձևակերպումը, և այն փոխարինվեց «տեղական կարիքներից հարուցվող բարելավումներն ու բարենորոգումները» առաձգական իմաստով։ Սարուխանը փոփոխությունը բացատրում է Պետերբուրգից համապատասխան համաձայնության բացակայությամբ, որը հետևանք էր անգլիական պահպանողական կառավարության բռնած հակառուսական և պրոթուրքական սպառնալից դիրքի (73, էջ 295)։

Սան-Ստեֆանո այցելած Ներսեսը փորձել էր նրան համոզել Հայաստանին ինքնավարություն շնորհելու խնդրում մտցնել որոշակի պարզություն։ Բայց նրա փորձերն ապարդյուն էին անցել։ Իգնատևը բավարարվել էր ընդհանուր կետ

ձևակերպելով չափավորել պահանջները թե՛ Թուրքական ընդդիմությունը հաշվի առնելով և թե՛ Պետերբուրգից որոշակի ցուցումներ չունենալու հետևանքով։ Ցարական իշխանությունները նույնիսկ դեռ չէին որոշել և հստակորեն չէին իրականացնում նվաճված հայկական տերիտորիաներում իրենց վարչական կառավարման ձևերը։

Ի տարբերություն Բուլղարիայի, Ասիական Թուրքիայում ռուսական բանակի հրամանատարության մեջ հատուկ օղակներ չկային քաղաքացիական գործերը վարելու համար։ Ֆ. Մարտենսը գրում է, որ «պորտֆելում պատրաստի նախագծեր չկային Հայաստանում տեղական կարգուկանոնի լրիվ վերափոխման համար»։ Նա նշում է, որ մինչև պատերազմի ավարտն այստեղ ռուսական զինվորական իշխանությունների գործողությունները մնացին որպես ժամանակավոր կարգադրություններ և ոչ ավելի։ Միայն Կարսում և Արդահանում քաղաքացիական-զինվորական վարչության տարբեր ստեղծվեցին (138, էջ 316—317)։

Ներսես պատրիարքը Նիկոլայ Նիկոլաևիչին այցելեց պայմանագրի ստորագրման նախորդ օրը։ Երբ նա խնդրեց հոդվածում կետ արձանագրել հայոց ինքնավարության համար, պատասխանն եղավ այն, թե չափազանց ուշ է, պայմանագիրն արդեն ձևակերպված է և մյուս օրն ստորագրվելու է։

Իսկ Գ. Արծրունին շտապում էր առաջնորդող նվիրել 16-րդ հոդվածին՝ «Հայաստանի ինքնավարությունը» վերնագրով, լավատեսորեն կարծելով, թե «Հայաստանը ունենալու է նահանգական ինքնավարություն», գրում էր, որ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը կարող է տեղափոխվել «Էրզրում կամ Վան, դառնա Հայաստանի տեղական, նահանգական ինքնավարության գլխավոր, կենտրոնական վարչություն» (57, № 37, 1878)։

Լավատեսությունն առկա էր, քանի որ բոլորի համար տեսանելի էր, որ «Ռուսները Սան-Ստեֆանոյի մեջ հայերուն մասնավոր համակրություն ցույց կուտան... Ռուս զորավարներ շատ անգամ այցելության կգան մեր պատրիարքությանը և գոհ կվերադառնան»,— գրում էր Կ. Պոլսի թղթակիցը (57, № 64, 1878)։

Այն պահին, երբ պարտված օսմանյան պետությունը գալարվում էր Ռուսաստանի հասցրած ռազմական հարվածներից, շատերը «Ռուսաստանի թևարկության տակ մտնելը հայ ազգի ապագա բարօրության միակ շոշափելի գրավականն էին ընդունում»։ Այս պատճառով էլ ռուսական իշխանությանն ապավինելով՝ նրա միջնորդությամբ Թուրքիայում տանելի կյանք ստեղծելը հայի համար միակ գործնական ճանապարհն էին համարում (73, էջ 354)։ «Ներսես պատրիարք այդ հոդվածին շնորհիվ ժողովրդական եղավ. հանրային կարծիքը իր հետն էր»։ Հայտնի չէր, թե այդ հոդվածի հետևանքներն ինչպիսին էին լինելու, բայց գտնում էին, թե «Հայաստան ինչ մը հանգիստ շունչ պիտի կրնար առնել» Ռուսիայի շնորհիվ (62, 1.X.1898, 19, էջ 291)։

16-րդ հոդվածի մասին Ներսեսը հետագայում ասում էր. «Իրենց տասը տարիե ի վեր արձակված աղաղակը վերջապես արձագանք կգտներ ու մեր հանուն ազգին ներկայացված խնդրույն մեկ մասը կլուծվեր ըստ սկզբան՝ և համազգային իրավանց կարգին մեջ կմտներ։ Այլևս մեր ազգային խնդիրը Արևելյան ընդհանուր խնդրույն հետ նոր կերպարանք և նշանակություն առած էր» (53, № 2156, 1878)։

Ատրպետը գրում է, որ հաշտության դաշնագիրը մասմաս արձանագրվելով, օրեցօր տպագրվում էր Կ. Պոլսի բազմալեզու լրագրերում և բորբոքում «խալիֆաթի ձրիակերներին»։ «Բայց ամենից մեծ անակնկալ էր և զայրացման վերին աստիճանին հասցրեց ժեռն Թուրքերին և սյունի ուլեմաներին... Այս հոդվածը մի անակնկալ ռումբ էր, որ պայթեց պետական պնակալեզների գլխին, ցնցեց ու սասանեց» (11, էջ 6)։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումից հետո մինչև Բեռլինի կոնգրեսի գումարումը ժամանակահատվածը սպասումների, ակնկալությունների, տարուբերումների, նոր մոտեցումներ մշակելու, նոր հույսեր փայփայելու ժամանակամիջոց էր հայկական խնդիրը արծարծող հայկական հասարակական ուժերի համար։ Սակայն իրողությունն այն էր, որ դիվանագիտության գաղտնիքներին անտեղյակ, անգլիական կառավարության խորամանկ, հակառուսական խաղերին անիրազեկ մարդիկ շարունակում էին վարդագույն հույ-

տեր կապել իրենց շահը փնտրող գաղութատեր կառավարությունների հետ, հիմքում ունենալով նրանց «քրիստոնեասիրությունը», «խիղճը» և «մարդասիրությունը»։ Սրանք շափանիշներ են, որոնցով երբեք չէին ղեկավարվում ընչաքաղց կապիտալիստների թե՛ այս, թե՛ այն խմբերը։ Եփոթ, հակասական մտքերի ու տրամադրությունների հորձանքի մեջ տարուբերվում էր հայոց ազգային քաղաքականության նավը։ Այնուամենայնիվ, չարիքը հայկական դիվանագիտության այս կամ այն վրիպումի կամ սխալի մեջ չէր։ Օսմանյան կայսրության ժառանգությանը տիրանալու մրցապայքարում բախվում էին ժամանակի զորեղ ուժերը, և նրանց կամքն էր վճռելու գործերի ընթացքը։

Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ելակետ էր ընդունում երկու փաստ՝ տեղական կարիքները պահանջում էին բարելավում և ռեֆորմներ. հայկական բնակչությանն սպառնում են քրդերն ու չերքեզները։ Այս երկու փաստին համապատասխան՝ Թուրքիան միջազգային կրկնակի պարտավորություն էր ստանձնում Ռուսաստանի հանդեպ՝ իրականացնել անհրաժեշտ բարենորոգումներ և բարելավումներ. ապահովել հայերի անվտանգությունը։ Այս պարտավորությունը պետք է կատարվեր «անհապաղ»։ Սակայն 16-րդ հոդվածը չէր հիշատակում Ռուսաստանի կողմից հսկողության եղանակը պարտավորության իրականացման նկատմամբ։ 16-րդ հոդվածի իմաստն այն էր, որ Արևմտյան Հայաստանը Ռուսաստանի ազդեցության ոլորտ էր դառնում, և հայ բնակչությունն էլ նրա հովանավորության տակ էր դրվում։

Հոդվածը չէր որոշում, թե որո՞նք էին հայկական նահանգների սահմանները, ո՞վ պետք է ճշտեր տեղական կարիքները, բարենորոգումների բնույթն ու ընդգրկումը։ Այստեղից պարզ էր, որ ռուսական կողմի առաջնահերթ խնդիրն էր՝ մնալ գրավված վայրերում, զորքի դուրսբերումը պայմանավորել բարենորոգումներ իրականացնելու անհրաժեշտությամբ։ 16-րդ հոդվածը մի կվան էր, մի հիմք, որպեսզի ռուսական բանակը չհեռանար գրաված հայկական նահանգներից։ Այն Ռուսաստանին հիմք էր տալիս ոչ միայն միջամտելու Փոքր Ասիայի քրիստոնյա բնակչության նկատմամբ Բ. Դոան իրականացրած քաղաքականությանը, այլև

ցուցադրում էր Եվրոպային, որ շահագրգռված է ոչ միայն սլավոնների, այլև բոլոր քրիստոնյաների վիճակի բարելավմամբ։

Թուրքական կողմը պաշտոնապես ճանաչում էր Օսմանյան կայսրության սահմաններում «Հայաստան» երկրի գոյությունը։ Ռուսաստանը հանդես էր գալիս որպես հայ ժողովրդի պաշտոնական հովանավոր և հսկողություն սահմանում թուրքահայերի նկատմամբ Բ. Դոան կողմից իրականացվող քաղաքականության վրա։ Արձանագրելով ռուսական զորքերի հեռանալուց հետո հայերի համար ստեղծվելիք հնարավոր դժվարություններն ու բարդացումները, ռուսական կառավարությունը, հոգատարություն հանդես բերելով արևմտահայության նկատմամբ, միջազգային իրավունքի ուժ էր հաղորդում Բ. Դոան կողմից «անհապաղ» բարելավումներ ու բարենորոգություններ իրականացնելու անհրաժեշտությանը։ Թուրքահայաստանի մի զգալի հատվածը, Ռուսաստանին միանալով, հնարավորություն էր ընձեռում հայ ժողովրդին՝ աճել ու զարգանալ Ռուսաստանի հովանու տակ։

Սան-Ստեֆանոյի հոդվածը ոգևորության նոր լիցք հաղորդեց հայությանը։ «Մասիս»-ը մարտի 7-ին գրում էր, որ այն «ամեն ազգասեր հայոց խնդակցութեանն արժանի է»։ «Այժմ, երբ ապստամբ գավառաց մեծամեծ արտոնություններ կշնորհվին, արդարություն չէր ըլլար հլու և հնազանդ ժողովուրդներ իրենց հին վիճակին մեջ թողուլ» (53, № 2093, 1878)։ Ինքնավարությունն արդեն այնքան ռեալ բան էին հաշվում, որ էրզրումում այդ առթիվ խնջույքներ էին տրվել և ուրախություններ կատարվել ի պատիվ այդպիսի ուրախալի անցքի (57, № 61, 1878)։

Մայիսի սկզբին «Գոլոս» թերթն ինֆորմացիա էր տպել ռուսաց գլխավոր հրամանատարի հետ Ներսես պատրիարքի հանդիպման մասին։ Վերջինս, խոր երախտագիտություն հայտնելով թուրքահայոց պատգամավոր Խորեն Նար-Պեյին Պետերբուրգում լավ ընդունելության համար, ռուսաց հրամանատարին մի տեղեկանք էր ներկայացրել Հայաստանի որոշ շրջաններից ռուսական զորքի քաշվելուց հետո կատարված անցուդարձի մասին։ Այնտեղ ասված էր Մուշի ս. Կարապետ վանքի կողոպուտի, Խնուսի սարսափների և այլ դեպ-

քերի մասին։ Պատրիարքը դիմեց մեծ իշխանին, ամենախոնարհաբար խնդրելով տեղեկություն տալ այս բաների մասին թագավոր-կայսրին։ «Միայն նրա մեջն են հայերը տեսնում իրենց փրկությունը և միայն իսկապես նրա վրա են դնում իրենց հույսերը»,— կրկնում էր Ներսեսը (57, № 77, 1878)։

Մյուս կողմից՝ «հայերը սաստիկ տրտնջում էին, որ Ռուսաստանը չխլեց ամբողջ Հայաստանը Թուրքերից»։ Նրանք վախենում էին, որ Ռումելիայից եկած գաղթականները դառնալու էին նոր հարստահարությունների և անօրինականությունների աղբյուր Արևմտյան Հայաստանում (57, № 47, 1878)։ Պարզ գծագրվում էր, որ ռեալ երաշխիքների բացակայության դեպքում Թուրքական կողմը ոչ միայն չէր հարգելու Սան-Ստեֆանոյի պայմանագրով ստանձնած պարտավորությունն այն մասին, «որ չի հալածի և թույլ չի տա հալածել այն Թուրքահպատակներին, որոնք պատերազմի ժամանակ կապեր են ունեցել ռուսական բանակի հետ», այլև մշակել և իրականացնել էր սկսել հայ ժողովրդին հալածելու և հետապնդելու լայն ծրագիր։

Արդեն մարտի 10-ին ռուսական «Գոլոս» թերթի թղթակիցը գրում էր Կ. Պոլսից. «Թուրքահայաստանի և Փոքր Ասիայի ազգաբնակչությունը, որ մեծ ուրախությամբ դիմավորում էր ռուսաց զորքերին, ենթարկվել և կրկին ենթարկվում է սանձարձակ մահմեդական ֆանատիկոսության բոլոր արարքներին և զոհ է դառնում այն հույսերին, որ նրանք դնում էին իրենց ազատարարների վրա»։ Թերթը հաղորդում էր Խնուսում կատարված նոր հարստահարությունների և բռնաբարություններ մասին։ «Անկարելի է մի առ մի թվել բարբարոսությունների և կողոպուտների դեպքերը... Բ. Դուռը անզոր է իր հպատակ-ավազակների դեմ»,— եզրակացնում էր թերթը (57, № 80, 1878)։ «Շաբաթ չանցնիր, որ Հայաստանի գավառներեն հարստահարության գանգատ չգա քուրդերուն դեմ» (53, № 2113, 1878)։

Արդեն այն ժամանակ արձանագրվում էր, որ չնայած 16-րդ հոդվածը պարտավորեցրել էր Բ. Դռանը՝ պաշտպանել հայերին քրդերի և չերքեզների հարձակումներից, բայց այդ ուղղությամբ ոչինչ չէր արվում։ Կ. Պոլսում մանրամասն

լուրեր էին հրապարակվել Խարբերդի և Զմշկածադի մեջ քրդերի կատարած բարբարոսությունների մասին, որոնց զոհ էին դնացել հայկական 91 գյուղեր (57, № 79, 1878)։

Այս փաստերն ստիպում էին մտածել ավելի կոնկրետ չափանիշներով, զուգահեռներ անցկացնել Բալկանների ժողովուրդներին և հայերին վերաբերող հոդվածների միջև, ավելի ընդհուպ խորհրդածել ինքնավար ազատ Հայաստան ունենալու մասին։ Հայկական շրջաններին 16-րդ հոդվածի շնորհածը խիստ չափավոր ու անորոշ էր ներկայանում այն պահին (57, № 79, 1878)։ Լեոն նկատում է, որ Բալկաններին վերաբերող հոդվածներում «իրենց իսկական անուններով թվարկված են Թուրքիայի անելիքները, հակառակ-անվանե հիշատակված են այդ շրջանի համար հարկավոր ռեֆորմները և թե ինչ ծավալով ու ծրագրով պիտի իրագործվեն այդ ռեֆորմները։ Մշուշապատ անորոշությունը միմիայն հայերին վերաբերյալ հոդվածի բովանդակությունն էր...» (34, էջ 78)։

Հենց որ Խնուսից ռուսական զորքերը դուրս բերվեցին, հայերի նկատմամբ բարբարոսական հարձակումներ կատարվեցին։ Ընդ որում, հիշատակելով այդ փաստերը, «Ստամբուլ» թերթը «Քուրդիստանի հայերը» հոդվածում այն գիծն էր անցկացնում, թե ինչ որ Հայաստան էր, անցավ Ռուսաստանին, որ Խնուսի և մյուս շրջանների հայերը պետք է պաշտպանություն որոնեին Թուրքական կառավարության մոտ։ «Մշակ»-ի թղթակիցը Կ. Պոլսից հաղորդում էր, որ ավելի հաճախակի է դարձել Քուրդիստան անվանման հիշատակությունը, Հայաստան Քուրդիստան բառերի «շփոթումը»։ Այս բանը նա անվանում էր Թուրքական կառավարության «նոր քաղաքական խաբեություն»։ «Ինչպե՞ս կարելի է Քուրդիստան անվանել օրինակ Վան գավառը, ուր Թուրքերը, քրդերը և բոշաները միասին հաշվելով, դարձյալ շատ պակաս են թվով, քան թե միայն հայերը։ Վանի մեջ Թուրք մանրավաճառներն անդամ հայերեն լեզվով կծախեն փողոցներ շրջած ժամանակ, ուր շատ Թուրքեր հայերեն գիտեն, մինչ շատ հայեր Թուրքերեն չգիտեն» (57, № 64, 1878)։

Մարդիկ արդեն այն ժամանակ գիտեին, թե ինչպիսի սարսափելի վիճակ է սպասում իրենց։ Ահավասիկ 1878

թվականի մարտին Էրզրումից գրված մի թղթակցությունում արտահայտված անհանգստության պատառիկներ, որ պատկանում է Գր. Նիկողոսյանի գրչին. «...Ասիայում, թշվառ հանգամանքների շնորհիվ, հայերը մտան մի նոր շրջան՝ ոչ ազգի, լացի, բռնության ու ստրկության, այլ նահատակության, կորստյան ու բնաջնջության։ ...Արդեն սրվում են բարբարոսների յաթաղանները Տաճկաստանում մնացող հայերի համար, որոնք... մնացել են հուսակտուր, բազուկները երկինք տարածած... Մեր գորքերը Խնուսից հեռացածին պես թափվում են քրդերը անպաշտպան հայերի վրա, թալանում տները մինչև վերջին թելը, կաթնակեր մանուկներին առնում են մզրախների վրա, ծերերին ու անգեն տղամարդկանց սրաճարակ անում, իսկ մնացածներին առնում ձիաների ետևը ու անհետանում...»։ «Հայերը ստիպված են կամ գաղթել, կամ մնալ և մեռնել...» (57, № 51, 1878)։

Հուսախաբությունը միախառնվում էր սպասելիքների, անորոշ լավատեսության հետ։ Ամիսներ անց Ներսես Վարժապետյանը, հիշեցնելով Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածի բովանդակությունը, ասում էր. «արդյոք ճիշտ մեր ուզածին պես եղա՞վ հիշատակությունը. ոչ». քաղաքականության մեջ «երբ չես կարող անել ինչ-որ ուզում ես, պետք է անես ինչ-որ կարող ես»։ Նա գրում էր, որ «մեր ազգային խնդիրը արևելյան ընդհանուր խնդրի հետ նոր կերպարանք ու նշանակություն ստացավ»։ Պատրիարքն ասում էր, թե «Սան-Ստեֆանոյի դաշնագրության 16-րդ հոդվածը երբ ձեռք անցուցինք, նոր ոգի առինք և ավելի եռանդությամբ սկսեցինք աշխատել։ Մեր գործը չէր լմնցած, այլ սկսած էր»։ Նա ասում էր, որ իմանալով Սան-Ստեֆանոյի պայմանագրի առաջիկա վերանայման անխուսափելիության մասին, հարկ համարվեց եվրոպական շահագրգռության միջոցով ավելին ստանալ։ Մասնավորապես ակնկալվում էր, որ Անգլիան փոխել կտար այն, ապահովելու համար Եփրատի հովտի անձեռնմխելիությունը (10, նիստ Ե, 21.VII.1878, էջ 63—64)։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածն աշխույժ քննարկումների առիթ տվեց։ Հայկական մամուլն իր էջերը լայնորեն բացել էր հեղինակների կարծիքների առջև, փորձելով պարզել հանելուկը, հասկանալ, թե 16-րդ հոդվածի

տակ ինչ էր հասկացվում և ինչ էր ենթադրվում Հայաստանի համար։ Գր. Արծրունին հոդվածի բովանդակությունը հետևյալ կերպ էր բացատրում. քրիստոնյա նահանգապետ, սեփական քաղաքային ու գյուղական վարչություններ, գույքի և անձի ապահովություն, դատարանի առջև քրիստոնյաների և մահմեդականների հավասարություն, հարկահանության մեջ կամայականության բացառում և այլն։ Քրդական, չերքեզական ավարառությունները կանխելու նպատակով Արծրունին չէր բացառում ինքնուրույն հայկական պահակազորք ունենալու իրավունքը (33, հ. III, էջ 51)։

Մի խոսքով, լավատեսներն աներկբայորեն 16-րդ հոդվածն ըմբռնում էին (որովհետև այդպես էին ուզում) որպես «Հայաստանի ինքնավարություն»։ Ուրիշներ փորձում էին պարզել իրականությունը, պրպտել առաջիկայում տեղի ունենալիքը, ըմբռնել այդ հոդվածին համապատասխան քաղաքականության նպատակները։

Ծովակալ Հորնբին մտավ Մարմարա ծով, հասավ Իշխանաց կղզիները։ Լայարդն ուժեղացրեց ճնշումը Ներսեսի վրա։ Անգլիական ինտրիգները մեծ չափեր ընդունեցին։ Առաջ քաշվեց ինքնավար Հայաստանի գաղափարը։ Սա կապահովեր նաև Հնդկաստանի մատույցները, կոմունիկացիաները, մտածում էին անգլիական դիվանագետները (194, էջ 16)։

Ռուսչուգլյանը գրում է, որ Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածն «ուղղակի մի բողոք էր սուլթանի կառավարության դեմ», որ հիմնված էր Ռուսաստանի ցարին ներկայացված ծրագիր-խնդրագրի վրա, և՛ ծանր, և՛ «գեշ տպավորություն» թողեց սուլթանի, Բ. Դոան և անգլիական կառավարության վրա։ «Ուստի թե սուլթանը և Բ. Դուռը մեծ խոստումներ տվեցին Ներսես պատրիարքին», խոստովանեցին, թե իրենք լավ գիտեն Հայաստանի կեղեքված և թշվառ վիճակը, որ հարստահարությունները կանխելու նպատակով տրամադիր են մի քանի գավառներում հայ կուսակալներ նշանակել և բարենորոգումներ մտցնելով «բարվոքել հայոց վիճակը»։ Նրանք համոզեցին դիմել Եվրոպային և բողոքել ոչ թե օսմանյան կառավարության, այլ քրդերի դեմ։ Նրանք համոզմունք էին հայտնում, որ եվրոպական դիվանագետների

առաջիկա կոնֆերանսը մի նպաստավոր հոդված կձևակերպի, և Բ. Դուռը «ավելի ուժով և սիրով պիտի գործադրի այդ բարենորոգումները»։

Ռուսչուգլյանը հավատում է, որ «Բ. Դուռն այսպես Անգղիո դեսպանին աջակցությամբ ջանաց համոզել պատրիարքին», քանի որ Անգլիայի կառավարությունը չէր ուզում, որ հայերը Ռուսիո քաղաքականությանը հետևին, որովհետև իր շահերին կվնասեր։ Անգլիան հայերին իր կողմը գրավելու համար «խոստացավ ամեն պաշտպանություն ընել Բեռլինի վեհաժողովին մեջ ի նպաստ հայկական խնդրին և մի ինքնօրինություն» շնորհել տերությունների հսկողության ներքո (72, № 154, 1907)։

Հիրավի, անգլիական դեսպան Լայարդը փետրվարի սկզբին հայոց պատրիարքին խորհուրդ էր տալիս պահանջել ինքնավարություն Թուրքահայաստանի համար, խոստանալով ապագա կոնֆերանսում պաշտպանել այդ երկրի իրավունքները։ Գրիգոր Արծրունին խմբագրական էր նվիրում այս հարցին։ Նա գրում էր. «մինչև այժմ եվրոպական բոլոր մեծ պետություններից Ռուսաստանը միակն էր, որ հոգում էր թե՛ խոսքով և թե՛ գործով Թուրքահպատակ քրիստոնյաների թշվառ դրության վրա»։ Իսկ այժմ նրանց մասին «սկսում է մտածել և հոգալ» նաև Անգլիան։ Արծրունին գրում էր, որ դա «պետք է ուրախացնի ամեն մտածող, զգացող, արդարություն սիրող մարդուն» (57, № 12, 1878)։ Արծրունին դյուրահավատությամբ ուրախանում էր, որ իբր ստեղծվում էր փոխըմբռնում Անգլիայի և Ռուսաստանի միջև հայոց հարցում։ Երկու օր անց՝ նույն Արծրունին արդեն հարցականի տակ էր վերցնում Անգլիայի «բարի նպատակը». «Եթե Անգլիան խաբեց Թուրքիայի պես մի զորեղ պետության, որքան ուրեմն ավելի հեշտ է նրան խաբել հայերի պես մի փոքրիկ ազգության» (57, № 15, 1878)։

Ամեն ինչ անորոշ էր, մոտավոր։ Տեսակետները չէին բխում գործնական հնարավորություններից։ Նրանց հեղինակներն անտեղյակ էին տերությունների պլաններից, մտադրություններից։ Պատահական չէր, որ Անգլիայից էին ակնկալում պաշտպանություն այն դեպքում, երբ հենց այդ տերությունն էր խափանելու Թուրքական տիրապետությունից ազատագրվելու ճիգերը։ Անգլիական դիվանագիտության այրերը չափազանց ճկուն էին գործում։ Նրանց տված խոստումները, քաղցր-մեղցր խոսքերը խայծի դեր էին խաղացել պատրիարքարանի «արտաքին-քաղաքական» կողմնորոշումը բանաձևելու գործում։ Այստեղ դրսևորվեց ազգի ղեկավարությանը հավակնած մարդկանց դեռևս հավաքական ուժ դարձած չլինելու, սեփական շահերը վերջնականապես ճշտած չլինելու հանգամանքը։ Որոշակի տեսակետի բացակայությունն իրեն զգացնել տվեց ամբողջ ժամանակ՝ Սան-Ստեֆանոյից մինչև Բեռլին, և շարունակվեց մշտապես՝ տասնամյակներ շարունակ։

Հայկական շրջաններում 16-րդ հոդվածի քննարկումները շարունակվեցին մինչև Բեռլինի կոնգրեսը։ Առանձնապես նրանով զբաղվեցին Կ. Պոլսի հայկական շրջանները։ Չէ որ նրանք հայկական նահանգներում ինքնավարություն ստանալու հույսեր էին փայփայում, իսկ 16-րդ հոդվածում այդ մասին ոչինչ չէր ասվում։ Ուշադրություն էր նվիրվում այն բանին, որ հստակորեն չէին ձևակերպված ո՛չ հայկական նահանգների սահմանները, ո՛չ բարենորոգումների բնույթն ու իրագործման ժամկետները։ Հայաստանի գործերում նախաձեռնությունը Ռուսաստանից խլելու նպատակով Կ. Պոլսի անգլիական դեսպանը, «նոր օսմանները» տարբեր ձևերով, խորամանկություններով ներազդում էին հայկական պատրիարքարանի, ազգային ժողովի անդամների վրա, բորբոքում ինքնավարության հնարավորության շուրջ եղած կրքերը, խորհուրդ տալով դիմելու եվրոպական տերությունների կառավարություններին, միայն թե նրանք հանդես գային Ռուսաստանի միակողմանի միջամտության և ազդեցության դեմ։ «Մշակ»-ը գրում էր, որ «Անշուշտ, Անգլիան, որ ամբողջ Եվրոպա կդղրդեր «իմ շահերս, իմ շահերս» աղաղակելով, գոհ չպիտի լիներ հոդվածից, վախենալով, որ Ռուսաստանի ազդեցությունը հայերի միջոցով կմեծանա Փոքր Ասիայում» (57, № 209, 1878)։

Ռուսական մամուլում հոդվածներ երևացին հայերի վերաբերյալ։ Խոսելով 16-րդ հոդվածի մասին, «Գոլոս» թերթը գրել էր, որ այն և «բնականաբար նրանից ծագող Հայաստանի ինքնավարությունը կլինեն բազմաչարչար ժողովրդի հա-

մար որպես վարձատրություն նրա բոլոր չարչարանքների համար, որոնք ամեն չափից անց են կենում, մանավանդ վերջին ժամանակներում» (57, № 113, 1878)։ Թերթը ցարական կառավարության առջև հարց էր հարուցում հայերի համար այնպիսի բարենորոգումներ իրականացնել, որպիսիք նախատեսվել էին Եվրոպական Թուրքիայի համար։ Թերթի կարծիքով, այդ դեպքում հայերը կվարձատրվեին այն օժանդակության համար, որ նրանք Ռուսաստանին ցույց էին տվել նրա բոլոր պատերազմներում Թուրքիայի և Պարսկաստանի հետ, սկսած Պետրոս Մեծի ժամանակներից, «և այն զրկանքների ու հետապնդումների համար, որոնց նրանք դրա հետևանքով ենթարկվել են իրենց մահմեդական իշխանավորների կողմից»։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՊԱՅՔԱՐԸ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍ

Անգլո-ավստրիական ընդդիմությունը ռուսական հաղթանակի պտուղներին: Սան-Ստեֆանոյի պայմանագրի դրույթները եվրոպական դիվանագիտության կրակի տակ: Բիքոնսֆիլդը Օսմանյան կայսրության ստնտուի դերում: Անգլո-ավստրո-ռուսական պատերազմի վտանգը և ցարական արքունիքի դիրքորոշումը: Անգլիայի արտաքին գործերի մինիստր Սոլսբերիի շրջաբերականը: Անգլիական և ավստրո-հունգարական դիվանագիտության հակառուսական համագործակցությունը: Սոլսբերի—Շուվալով համաձայնագիրը և Հայաստանը: Անգլո-թուրքական գաղտնի համաձայնությունը և Հայաստանը:

Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի ստորագրումից անցան օրեր, ամիսներ, բայց այն վերջնական իրավական ճանաչում չէր ստանում։ Ռուս-թուրքական հաշտության պայմանների շուրջ ծավալվեց նրբին ու բարդ դիվանագիտական պայքար, որի հիմնական բովանդակությունն արևմտաեվրոպական տերությունների ջանքերն էին՝ ուղղված Բալկաններում և Հայաստանում ռուսական զենքի հաղթանակի նսեմացման, Օսմանյան կայսրության ժառանգությունից իրենց համար առավելագույն օգուտ քաղելու նպատակին։

Ֆ. Էնգելսն ստեղծված միջազգային իրադրությունը բնութագրել է այսպես. երկար պայքարից հետո ռուսական զորքերը 1878 թ. հունվարին ընդհուպ մոտեցան Թուրքական մայրաքաղաքի դարբասներին, բայց հանկարծ Բոսֆորում երևացին անգլիական չորս զրահանավեր և ստիպեցին ռուսներին, որոնք արդեն տեսնում էին Սոֆիայի տաճարի գմբեթները, կանգ առնել և Սան-Ստեֆանոյի պայմանագրի իրենց նախագիծը հանձնել եվրոպական կոնգրեսի քննարկմանը (1. հ. XVI, մ. II, էջ 32)։

Նախ տեսնենք, թե ինչ էր կատարվում միջպետական հարաբերությունների ոլորտում, դիվանագիտության մարզում։ Տեսնենք, թե ինչպես ընկալեցին տերություններն Օսմանյան կայսրության դեմ Ռուսաստանի տարած հաղթանակը, ինչպես արձագանքեցին Բալկաններում և Արևելյան Թուրքիայում տեղի ունեցած ռազմաքաղաքական տեղաշարժերին, ինչ միջոցների էին դիմում անգլիական, ավստրիական և մյուս տերությունների դիվանագետները՝ նսեմացնելու համար ռուսական զենքի հաջողությունը, ամրապնդելու իրենց աշխարհակալ դիրքերը։

Զմոռանանք հիշել, որ Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի դրությունը թեթևացնելու գործն ստանձնած մարդիկ անտեղյակ էին և չէին էլ կարող իրազեկ լինել, թե ինչ էր կատարվում տերությունների կառավարական, դիվանագիտական գրասենյակներում, և իրենց գործողությունները կառուցում էին մոտավոր տեղեկությունների, հաճախ նաև՝ միտումնավոր, խորամանկ խորհուրդների հիմքի վրա, որ բխում էին անգլիական կամ թուրքական աղբյուրներից։ Չէ որ կապիտալիստական աշխարհն ուներ իր հին դիվանագիտությունը, որը չէր խոսում «պարզ ու բացահայտ ձևով» (2, հ. 38, էջ 164)։

«...Պատերազմը, որ նշանավորվեց ռուսական բանակի փայլուն հաղթանակներով, դեռ մինչև իր ավարտն արդեն հանգեցրեց Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի կառավարությունների և հասարակական կարծիքի զրգռման» (135, էջ 6)։ Թուրքիայի ստատուս քվոյի պաշտպանության քողի տակ ռուսական ազդեցության չեզոքացումը և Օսմանյան կայսրության փլուզումից առավել օգուտ քաղելը դարձավ

արևմտաեվրոպական դիվանագիտության գլխավոր մտահոգությունը և գործողության ծրագիրը։

Չափազանց դիպուկ է ասել Հակոբ Պարոնյանը. «Արևելյան խնդիրը կարծես յուր քաղաքական կերպարանքը մերկացավ ու ճաշակի վերաբերյալ խնդիր մը դարձավ. յուրաքանչյուր կառավարություն յուր ճաշակին համեմատ կուզե ձևել, կտրել զայն, միայն մեր ճաշակը ձայն չունի...» (68, հ. IV, էջ 35)։ Այս խոսքերը գրված են 1878 թվականի փետրվարին։

Հիրավի, մեծ տերություններից յուրաքանչյուրը մտածում և գործում էր իր շահերին համապատասխան։ Իհարկե, տարօրինակ կլիներ, որ Արևելքի գաղութացման համար պայքարող առաջատար կապիտալիստական տերություններն իրենց շահերին հակառակ իրապես մտահոգվեին թուրքական լծից հայերին ազատագրելու կամ նրանց վիճակը բարելավելու խնդրով։

Ըստ էության, եվրոպական տերությունների համար թույլ թուրքական կայսրության պահպանումն ավելի օգտավետ էր, քան հզգուտ Ռուսաստանի նրա փլուզումը։ Այդ փլուզումից չպետք է շահեր և չպետք է ուժեղանար Ռուսաստանը. ահավասի՛կ այն շարժիչը, որը հնարավոր էր դարձնում եվրոպական գլխավոր տերությունների միասնական ճակատը։ Այս հողի վրա էլ եվրոպական դիվանագետները հիմնականում համերաշխ էին ընդդեմ Ռուսաստանի։ Չգալի էր դարձել նաև Բալկանների երիտասարդ պետությունների շահերի ու ներհակությունների նշանակությունն ընդհանուր խնդիրների արծարծման և լուծման գործում։

Սան-Ստեֆանոյի պայմանագիրը Եվրոպայում շարության և կասկածների մի ամբողջ փոթորիկ առաջացրեց (163, էջ 351)։ Ռուսական դիվանագիտությունը փորձում էր ապահովել իր ռազմական հաղթանակի քաղաքական ճանաչումը եվրոպական կառավարությունների կողմից, առանց խախտելու հավասարակշռությունը մայրցամաքում։ Սա հեշտ խնդիր չէր։ Դեռևս 1877 թվականի օգոստոսի 6-ին Բիքոնսֆիլդը, խիստ անհանգստացած ռուսական բանակի հաղթանակից, հարց էր տալիս. «Ի՞նչ պետք է անել»։ Նա չէր տարակուսում, որ «Թուրքիան ավերակների կվերածվեր»։ «Ահա

թե ինչու,— ասում էր նա,— ես անհրաժեշտ եմ համարում մեր նավատորմը տեսնել նրա անմիջական ջրերում և Գալիպոլին գրավել որպես նյութական երաշխիք»։ «Այն ժամանակ մենք ի վիճակի կլինենք փրկելու Թուրքիան» (220, էջ 361)։

Մեծ Բրիտանիայում քաղաքական զրգռվածությունն իր գագաթնակետին հասավ 1878 թվականի հունվարին, երբ «անհոգս ջինգոիստները (ուռա-հայրենասերները, շովինիստները) հուշակեցին իրենց պատրաստակամությունը կռվի ելնել ամեն մի հնարավոր թշնամու դեմ» (205, էջ 141—142)։ Եվ հենց այդ պահին նրանք պատերազմի ճիչ արձակեցին.

«Մենք չենք ուզում պատերազմել, բայց, սատանան տանի, ստիպված ենք,
Մենք ունենք մարդիկ, մենք ունենք նավեր, մենք փող նույնպես ունենք» (214, էջ 70)։

Մամուլի, մյուզիկ-հոլերի, եկեղեցիների բեմերից և բազմաթիվ միտինգների միջոցով Բիքոնսֆիլդն այնպիսի շովինիստական աղմուկ բարձրացրեց, ինչպիսին Անգլիան, նույնիսկ Պալմերստոնի ժամանակներում, չէր իմացել (152, էջ 29)։ Անգլիական թերթերը գրում էին Մեծ Բրիտանիայի համար Սան-Ստեֆանոյի պայմանագրի անընդունելիության մասին (217, էջ 346)։

Հունվարի 14-ին անգլիական կառավարությունը հայտնեց Գորչակովին, որ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվելիք որևէ պայմանագիր, որը փոփոխություն կմտցներ 1856 թվականի Փարիզի և 1871 թվականի Լոնդոնի համաձայնագրերի մեջ, անվավեր կճանաչվեր առանց այն տերությունների հավանության, որոնք ստորագրել էին հիշյալ համաձայնագրերը։ Իսկ 1871 թվականի՝ Լոնդոնի կոնֆերանսի հայտարարության մեջ ասված էր, որ «ոչ մի տերություն չի կարող ազատվել տրակտատի պարտավորություններից կամ փոխել նրա որոշումներն այլ կերպ, քան մյուս պայմանավորված կողմերի համաձայնությամբ, որը ձեռք է բերվել սիրալիր համաձայնագրի միջոցով»։

Հունվարի 25-ին Պետերբուրգը պատասխանեց, թե մտադրություն չունի միայնակ կարգադրելու եվրոպական այն

խնդիրները, որոնք կապ ունեն ռուս-թուրքական խաղաղության հետ։ Սակայն հակառուսական պրոպագանդան շարունակվեց։ Անգլիան դարձավ հակառուսական աղմկարարության առաջապահը։ Հունվարի 29-ին անգլիական կառավարությունը հայտնեց ցարական կառավարությանը, որ Կաղանլիկում առաջարկված խաղաղության պայմանները վերաբերում էին Եվրոպային և պետք է իրագործվեին ու հաստատվեին եվրոպական համաձայնագրերը ստորագրած տերությունների գիտությամբ և հավանությամբ։ Մյուս օրը Գորչակովը պատասխանեց, թե մի քանի գլխավոր խաղաղարարական հիմունքների առաջադրումն անհրաժեշտ էր զինադադար կնքելու համար։ Սակայն, գրում էր նա, դրանք սկիզբն էին, և որ եվրոպական շահերին վերաբերող խնդիրները կարգադրվելու էին եվրոպական տերությունների մասնակցությամբ։

Տարակարծություններ, տարբեր մոտեցումներ էին առաջացել բրիտանական վերնախավում։ Ըստ Սետոն-Վաթսոնի՝ Արևելյան հարցում էականորեն տարբերվում էին Բիքոնսֆիլդի, Սոլսբերիի մոտեցումները։ Մյուս կողմից՝ ծայրահեղորեն հակոտնյա էին կառավարող կուսակցության և Գլադստոնի գլխավորած ընդդիմադիրների դիրքորոշումը (214, էջ VII, IX)։

Սետոն-Վաթսոնը գրում է, որ հունվարին ընդդիմադիր ուժերը կատաղի կրակ բացեցին ամբողջ երկրով մեկ։ Ընդդիմադիրները ցույց էին տալիս, որ հնարավոր չէ պատերազմել Ռուսաստանի դեմ առանց Թուրքիային պաշտպանելու։ Իսկ դա Անգլիայից կոտարացներ Բալկանների նոր անկախ պետություններին, նրա դեմ կհաներ եվրոպական հասարակական կարծիքը, որը քաղաքակրթված Եվրոպայի պարտքն էր համարում Արևելյան հարցի լուծումը (217, էջ 274, 278)։

Հունվարի վերջին անգլիական կառավարության ներսում ծագած տարակարծությունների ժամանակ Դերբին և գաղութների մինիստր Կարնարվոնը հանդես եկան Բիքոնսֆիլդի ագրեսիվ դիրքորոշման դեմ։ Դեմ լինելով Ռուսաստանի հետ բարդացումներին՝ երկուսն էլ հրաժարական տվեցին։ Առաջինը մնաց իր պոստում թագուհու միջամտությամբ, իսկ

երկրորդը հեռացավ պաշտոնից։ Ծովակալ Հորնբիի նավերը նորից ետ կանչվեցին Դարդանելից (165, էջ 445)։

Սետոն-Վաթսոնը գրում է, որ Մեծ Բրիտանիայի վարչապետը շրջանցում էր արտաքին գործերի մինիստրին, նրա գլխի վրայով անմիջական կապ պահպանելով և հրահանգավորելով Կ. Պոլսում դեսպան Լայարդին (217, էջ IX)։ Վերջինս էլ իր հերթին համոզում էր Բիքոնսֆիլդին հենվել Աբդուլ Համիդի վրա, նրան համարում էր իր իմացած «հաճելի» մարդկանցից մեկը, որին հատուկ էին «բարի պոռթկումներ» (217, էջ 45)։

Համիդը դեմ էր անգլիական նավերի մուտքին Դարդանել, վախենում էր դրանով առիթ տալ ռուսական բանակին գրավելու Կ. Պոլիսը։ Այնուամենայնիվ, փետրվարի 14-ին անգլիական վեց զրահանավեր երրորդ անգամ երևացին Դարդանելում, հետո խարիսխ ձգեցին Իշխանաց կղզիների մոտ, Մարմարա ծովում, բայց չհամարձակվեցին դեսանտ հանել։ «Մասիս»-ը գրում էր, որ «անգլիական նավատորմը Մարմարայի մեջ կդեգերի՝ առանց մայրաքաղաքիս նեղույցը մտնելու (53, № 2087, 1878)։

Այն պահին, երբ մամուլում քննարկվում էին տարբեր պլաններ, անգլիական դիվանագետները և ռազմական մինիստրությունը մշակում էին գործողությունների որոշակի պլան։ Անգլիան իսկապես լրջորեն պատրաստվում էր պատերազմի։ Զինանոցներում և գործարաններում ծավալվում էր թնդանոթների և հրաձգային զենքերի արտադրությունը։ Մալթա կղզում կենտրոնացվում էին ռազմական ուժերվներ։ Անգլիական գլխավոր շտաբը մշակել էր պատերազմական գործողությունների իր պլանը։ Նախատեսվում էր հարվածել Բոսֆոր—Դարդանելի, Անդրկովկասի (Տրապիզոն—Վան գծով) շրջանում, դեսանտ հանել Սև ծովի ափին։ Նախատեսվում էր նաև օգտագործել Հունաստանի տերիտորիան, այնուհետև մեծ թվով զորք կուտակել Ալեքսանդրետի շրջանում, հարավից հարվածել Անդրկովկասին։ Արդեն նշանակված էին այդ ռազմական գործողությունների հրամանատարները։ Բիքոնսֆիլդը միտում էր խալիֆաթի դրոշի տակ Ռուսաստանի դեմ հանել հպատակ մահմեդականությանը։ Այս գաղափարին

հավանություն էր տվել նաև Վիկտորիա թագուհին (173, էջ 236—237)։

Լեոն գրում է, որ «հարաբերությունները երկու պետությունների միջև այնքան լարվեցին, որ անգլո-ռուսական պատերազմն անխուսափելի էր համարվում» (32, էջ 196)։ Ճիշտ է, Անգլիայում հասարակական կարծիքի գերակշռող մասը տուրք էր տալիս Բիքոնսֆիլդի քաղաքական գծին, խնկարկում նրա իմպերիալիստական հաջողություններին, բայց լսելի էր նաև ընդդիմադիրների ձայնը։ Գլադստոնն ապացուցում էր, որ այդ քաղաքականությունը Եվրոպայի շահերին չէր ծառայում, որ եթե «Անգլիային այս անգամ էլ հաջողվեր ոտքի կանգնեցնել Թուրքիային՝ դա մեծագույն դժբախտություն կլիներ Եվրոպայի համար»։

Այնուամենայնիվ, Բիքոնսֆիլդը ստիպված էր բացահայտ պատերազմական գիծ չվարել, այլ դիմել դիվանագիտական զինանոցի զենքերին։ Բոլոր դեպքերում նպատակը նույնն էր. ավելի լավ էր Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդները «խորովվեին դժոխքի մեջ», քան անգլիական գաղութային տիրապետությունը տուժեր Արևելքում (32, էջ 195)։ Բիքոնսֆիլդը հակված էր մինչև վերջ պաշտպանել Թուրքիային։ Բայց նա դա չէր կարող անել բացահայտորեն, քանի որ նրա հակառակորդները՝ Գլադստոնն ու համախոհները, բուլղարական կոտորածը մերկացրել էին զայրույթի այնպիսի պաթոսով, որ այդ պահին բրիտանական թագավորությունում ոչ ոք չէր համարձակվում հանդես գալ օսմանների օգտին (118, էջ 464—465)։ Դա էր պատճառը, որ նրա գործողությունների մեջ նրբին և ճկուն քայլերը զուգակցվում էին սուր ճոճելու, սպառնալիքների դիմելու մեթոդի հետ։ Անգլիացի պատմաբան Մեգլիկոտն ընդգծում է, որ Բիքոնսֆիլդը Ռուսաստանը համարում էր Անգլիայի գլխավոր ախոյանը Մերձավոր Արևելքում։ Բայց նա հավասարապես պատրաստ էր սպառնալ պատերազմով կամ գործարքի մեջ մտնել ըստ հանգամանքների։ Նա օժանդակություն էր ակնկալում Բիսմարկից, որը նույնպես ձգտում էր չափավորել Ռուսաստանի ազդեցության տարածումը (200, էջ 232—233)։ Լոնդոնի գերմանական դեսպանը արտաքին գործերի մինիստր Բյուլովին շարադրում էր իր տե-

սակետը, գտնելով, որ «եթե ռուսները հաստատվեին Հայաստանում, Պարսից ծոցն ու Սիրիան շարունակ սպառնալիքի տակ պիտի ընկնեին»։

Բազմաթիվ ուսումնասիրողներ հակված են այն կարծիքին, որ Անգլիան և Ավստրո-Հունգարիան, անգիջում դիրք բռնելով Սան-Ստեֆանոյի պայմանագրի իրականացումը խափանելու հարցում, հնարավոր էին դարձնում պատերազմի բռնկումը Անգլիայի, Ավստրիայի և Ռուսաստանի միջև (135)։ Մեզլիկոտը նշում է, որ Բիքոնսֆիլդի գլխավոր խնդիրներից մեկը Անդրաշիին համոզելն էր, թե անգլո-ավստրիական հակառուսական համաձայնությունն անհրաժեշտություն էր, ինչը պետք է սահմանափակեր Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի հաղթանակի արդյունքները (200, էջ 243)։

Դիվանագիտական ակտիվ գործողություններին զուգընթաց, ռուսական բանակի գլխավոր շտաբում կազմվել էին ռազմական գործողությունների համապատասխան պլաններ բալկանյան և կովկասյան ռազմաբեմերի համար այն դեպքում, եթե Անգլիան և Ավստրիան պատերազմ հայտարարեին (129, էջ 46)։ Ալեքսանդր II-ը մարտի կեսերին գրում էր Նիկոլայ Նիկոլաևիչին, թե «Անգլիան միայն առիթ էր փընտրում մեզ պատերազմ հայտարարելու համար», դժվարացնում էր կոնգրեսի գումարումը Բեռլինում։ Մի քանի օր անց՝ Ալեքսանդր II-ը Անգլիայի հետ հարաբերությունների խզումն անխուսափելի էր համարում (165, էջ 474, 475, 479)։

Անգլիական պրոպագանդան շինծու աղմուկ էր բարձրացրել Հնդկաստանի մատույցներին ռուսական վտանգի հարցի շուրջ։ Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայման վրա պնդելով, անգլիական դիվանագետները երեք փաստարկ էին ընդգծում՝ դեմ էին, որ Բաթումը դառնար ռուսական ռազմածովային բազա. անթույլատրելի էին համարում ռուսական ազդեցության տարածումը Եփրատի հովտի վրա. առարկում էին, որ Տրապիզոն—Պարսկաստան ավանդական առևտրական ճանապարհը անցներ ռուսական տիրապետության տակ (213, էջ 1124)։

Անգլիական իմպերիալիստներին ամենևին չէին հետաքրքրում հայերի ծանր վիճակը, նրանց ձգտումները։ Թող

պահպանվեր թուրքական տիրապետությունը Փոքր Ասիայում, միայն չտուժեին անգլիական շահերը. սա էր նրանց հավատո հանգանակը։ 1876 թվականի տվյալներով, ինչ խոսք, զգալի էր Տրապիզոն—Բայազետի վրայով անցնող անգլիական առևտրի ծավալը։ Տրապիզոնի վրայով արտահանությունը Մեծ Բրիտանիա կազմել էր 95.560 ֆունտ ստեռլինգ, Պարսկաստանի արտահանումը Մեծ Բրիտանիա՝ 104.081 ֆունտ ստեռլինգ։ Մեծ Բրիտանիայից ներմուծումը նույն ճանապարհով կազմել էր 83.526 ֆունտ ստեռլինգ, իսկ Պարսկաստան՝ 754.764 ֆունտ ստեռլինգ (223, էջ 361)։

Ահա թե ինչու անգլիական իմպերիալիստական քաղաքականության գլխավոր ղեկավարներից մեկը՝ Սոլսբերին, աղմկում էր Տրապիզոն—Բայազետ—Թավրիզ քարավանային ճանապարհը Ռուսաստանի հսկողությունից ազատ պահելու խնդրի շուրջ։ «Հայաստանի ամրոցներն ստանալը,— ասում էր նա,— պատճառ կդառնա, որ այդ նահանգների ժողովուրդը կենթարկվի ամրոցներին տեր դարձող իշխանության անմիջական ազդեցությանը» (57, № 62, 1878)։ Իսկ Կ. Պոլսում անգլիական զինվորական կցորդներ Հոմը և Սայմոնսը միակողմանիորեն տեղեկացնում էին Լոնդոն այն վտանգների մասին, որ դեպի Հայաստան ռուսական առաջխաղացումը կառաջացներ անգլիական շահերի համար Եփրատի ու Տիգրիսի հովիտներում, Մերձավոր և Միջին Արևելքում (188, II, 1878, էջ 163—164)։ Անգլիայում ձայներ էին լսվում Հայաստանը Ռուսաստանի կողմից գրավվելու դիմաց Անգլիայի կողմից Եգիպտոսն ու Կիպրոսը գրավելու մասին։ Արևելյան հարցի մասնագետ, անգլիացի պատմաբան Անդերսոնը նույնպես գտնում է, որ 1878 թվականի գարնանը անգլո-ռուսական պատերազմը ռեալ բան էր (174, էջ 5)։

Բալկաններում ռուսական ազդեցության ամրապնդմանը, սլավոնական ժողովուրդների պետական զարգացմանն ու համերաշխությանը բոլոր միջոցներով ընդդիմանում էր ավստրո-հունգարական արքունիքը։ Նա խոչընդոտում էր Սերբիայի, Չեռնոգորիայի, Բոսնիա-Հերցեգովինայի ջանքերի միավորմանը, դեմ էր մեծ Բուլղարիայի ստեղծմանը։ Վիեննան ձգտում էր իր իշխանությունը տարածել սլավոնա-

կան հողերի, առաջին հերթին՝ Բոսնիայի և Հերցեգովինայի վրա։ «Թուրքիան մի պատնեշ էր Ավստրիայի համար ընդդեմ Ռուսաստանի...»,— նշել է Կ. Մարքսը 1878 թվականի փետրվարի 4-ին (1, հ. XV, էջ 380—381)։ Եվ ավստրիական արքունիքը ձգտում էր այն բանին, որ այդ պատնեշն ամբողջովին ի վնաս իրեն չխորտակվեր։ Ավստրիական կայսրը պնդում էր, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ոտնահարում էր իր պետական կենսական շահերը (129, էջ 9)։

Ֆրանսիացի պատմաբան Դեբիդուրը նշում է, որ Ֆրանց-Իոսիֆն արդեն ոչ մի դեր չէր խաղում ո՛չ Իտալիայում, ո՛չ Գերմանիայում և մտածում էր իր կայսրությունն ընդարձակել Արևելքում՝ Բալկանների հաշվին, մանավանդ որ Բիսմարկը նրան խոստացել էր օգնել այդ գործում (118, էջ 463)։ Նա պնդում էր եվրոպական կոնգրես հրավիրելու վրա, գտնելով, որ միայն այդ միջոցով էր հնարավոր ապահովել կայսրության արևելյան շահերը։ Աստիճանաբար գծագրվում էր անգլո-ավստրիական միացյալ ճակատ ընդդեմ Ռուսաստանի։

1878 թվականի փետրվարի 5-ին, մինչև Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքումը, Ավստրո-Հունգարիան մի նոտայով դիմեց 1856 թվականի Փարիզի պայմանագիրը և 1871 թվականի Լոնդոնի կոնվենցիան ստորագրած տերություններին, առաջարկելով Վիեննայում հրավիրել եվրոպական կոնֆերանս, քննարկելու համար ռուս-թուրքական պատերազմի հետևանքով ծագած վիճելի հարցերը։ Սկզբում ժամանակ շահելու և որոշակիություն հաստատելու նպատակով կանցլեր Գորչակովը հետաձգեց պատասխանը, իսկ ապա մերժեց կոնգրեսը Վիեննայում հրավիրելու առաջարկությունը։ Բայց նա դիմեց Բիսմարկին, խնդրելով նրան հանդես գալ միջնորդի դերում։ Ռուսական արտաքին քաղաքականության ղեկավարը ձգտում էր այդ միջոցով կանխել ավստրո-անգլիական մերձեցման հնարավորությունը։ Բիսմարկը փետրվարի 17-ին ռայխստագում հայտարարեց, որ Գերմանիան ոչ ոքի չի հարկադրի իր տեսակետները, իրավարարական դատավորի դեր չի ստանձնի, այլ կսահմանափակվի ազնիվ միջնորդի դերով, որը ցանկանում է, որպեսզի վիճող

կողմերի միջև իսկապես համաձայնություն կայանա»։ Գերմանացի մի բանկիր իսկույն նկատել էր, որ ազնիվ միջնորդներ երբեք չեն լինում (152, էջ 172)։

Միաժամանակ Բիսմարկը շեշտում էր Արևելյան հարցում Գերմանիայի անմիջական շահագրգռվածության բացակայությունը։ Ըստ Բիսմարկի՝ Արևելյան հարցի հետ կապված խնդիրները պետք է լուծվեին շահագրգռված կողմերի՝ Ավստրո-Հունգարիա—Ռուսաստան, Անգլիա—Ռուսաստան բանակցությունների միջոցով, իսկ ինչ վերաբերում է տերիտորիալ փոփոխություններին, ապա Փարիզի պայմանագիրը ստորագրած բոլոր տերությունների համատեղ համաձայնությամբ։

Մարտ ամսվա ընթացքում, երկու շաբաթ շարունակ, Լոնդոնի և Պետերբուրգի միջև աշխույժ բանակցություններ էին տեղի ունենում։ Ալեքսանդր II-ը, հույս ունենալով ապահովել Ավստրո-Հունգարիայի չափավորությունը, մերժեց եվրոպական կոնգրեսի քննարկման առարկա դարձնել պայմանագրի այն կետերը, որոնք գլխավորապես վերաբերում էին Ռուսաստանին և Թուրքիային։ Սա հավասարազոր էր Անգլիայի հետ բացահայտ կոնֆլիկտի։ Իհարկե, որոշ ուսումնասիրողներ, ժամանակակիցներ, դեպքերի ականատեսներ հարցականի տակ են վերցնում Ռուսաստանի դեմ միայնակ պատերազմելու Անգլիայի պատրաստակամությունը։ Սակայն, այնուամենայնիվ, «քանի դեռ Սան-Ստեֆանոյի պայմանագրի պայմանները վերանայելու շուրջ բանակցությունները շարունակվում էին,— գրում է ռուս հեղինակ Սկալկովսկին,— Անգլիան և Ավստրո-Հունգարիան իսկապես զինվում էին, իսկ ռուսական բանակը Կ. Պոլսի պատերի տակ կոտորվում էր տիֆից» (159, էջ 227)։

Քաղաքական աշխարհն ուշադրությամբ և անհամբեր հետևում էր անգլիական կառավարության գործողություններին։ Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն, ի՞նչ էր լինելու Սան-Ստեֆանոյի հաշտության հետևանքը։ Այդ հարցի պատասխանն այնչափ անորոշ էր, որչափ մշուշապատ և անհասկանալի՝ Լոնդոնի տնօրենների գործողությունների իմաստը։ Ինչպես նկատում էր Կ. Պոլսի «Մասիս» թերթը, անգլիական մինիստրները «կես պատերազմական, կես սպառնական և

կես խաղաղասիրական հայտարարություններով լի ճառեր կխոսին» (53, № 2120, 1878)։

Բեռլինի կոնգրեսի մասնակից ռուս գեներալ Դ. Բոբրիկովն իր հուշերում հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում այն մթնոլորտի մասին, որ ստեղծվել էր Սան-Ստեֆանոյի պայմանագիրը վերանայելու շուրջ Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի դիվանագիտության կողմից (92, 1889, հ. 205)։ Նա գրում է, որ «մենք ընդհանրապես զիջողական էինք», որ միջազգային բարդացումներից խուսափելու համար ռուսական դիվանագիտությունը հեշտությամբ էր զիջումներ անում։ Նա նկատում է, որ փորձ անգամ չէր արվում միջամուխ լինել, թե արդյոք տերությունների պահանջախնդրությունների հետևում առկա՞ էր նոր պատերազմի վճռականություն (92, 1889, հ. 205, էջ 8—9)։

Սակայն փաստը մնում էր փաստ, որ Ռուսաստանը բոլոր միջոցներով խուսափում էր Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի հետ ռազմական ընդհարումից։ Բոբրիկովը Բալկանների ազգային-քաղաքական պրոբլեմներին քաջատեղյակ անձնավորություն էր, հանդիսացել էր Գորչակովի և Շուվալովի խորհրդականը։ Նա ընդունում է, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը պաշտպանելն անհնարին էր, քանի որ չափազանց խախուտ էին նրա հիմքերը։ Դրա պատճառներից մեկը նա համարում էր այն փաստը, որ ռուսական դիվանագիտությունը, առաջին պլան մղելով բուլղարական շահերը, երկրորդական նշանակություն տվեց բալկանյան մյուս ժողովուրդներին, նրանց վանելով Ռուսաստանից։ Հետագայում սրանց ներկայացուցիչները Բեռլին եկան իրենց առանձին-առանձին խնդրագրերով, բողոքներով և չմիավորվեցին Ռուսաստանի շուրջ (153, 1913, հ. 153, էջ 286—288)։

Հունական մամուլը գրում էր այն մասին, որ Թուրքիայի հետ Ռուսաստանի բանակցությունների ժամանակ ոտնահարվել էին Հունաստանի շահերը։ Չպետք է մոռանալ, որ ապագա բուլղարական իշխանության մեջ զգալի էր հույն հարուստների դերն ու նշանակությունը։ Ե՛վ Ռումելիայում, և՛ Կ. Պոլսում հույներն ուրախ էին, որ պատերազմում պարտվել էին թուրքերը, բայց դժգոհ, որ չէին շահում իրենք (141, էջ 29)։ Թուրքական թերթերը շարունակում էին հա-

մոզել իրենց ընթերցողներին, որ անգլո-ավստրիական դաշինքը Եվրոպայի պաշտպանությամբ կստիպի Ռուսաստանին հրաժարվել խաղաղության պայմանագրի կետերի կեսից։ Հույները գրում էին ավստրո-անգլո-հույն-ռումինական միասնական, հակառուսական ճակատ ստեղծելու մասին։ «Ես համոզված եմ,— այդ օրերին գրում էր Մոլչանովը,— որ Անգլիան երբեք այլևս չի ունենա այսպիսի հարմար առիթ Ռուսաստանի դեմ մահմեդականներին զինելու և դրանով իսկ պահպանելու իր հեղինակությունն Արևելքում...» (141, էջ 195)։

Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստր Անդրաշին պահանջում էր, որ տերությունները ճանաչեին իր տերության հատակ իրավունքները Բոսնիայում և Հերցեգովինայում ու նրանից հարավ, թույլ չտալ Չեռնոգորիայի ելքը դեպի Ադրիատիկ ծով։

Գորչակովը որոշեց զիջումներ անել Ավստրո-Հունգարիային, քան Անգլիային, որը Սան-Ստեֆանոյի պայմանագրի պայմանների լրիվ վերանայման հարց էր դնում։ Այս դեպքում Անգլիան միայնակ ոչ մի դեպքում չէր համարձակվելու պատերազմել Ռուսաստանի դեմ։ Բացի այդ, Գորչակովը հույս ուներ, որ Բիսմարկը ճնշում կգործադրեր Ավստրո-Հունգարիայի վրա՝ չափավորելով նրա պահանջները։

Մարտի 9-ին Անգլիայի արտաքին գործերի մինիստր Դերբին լորդերի պալատում հայտարարեց, որ անգլիական կառավարությունը դեմ չէր կոնգրեսը Բեռլինում գումարելուն, որի մասին հայտնել էր ավստրիական կառավարությանը։ Նա գտնում էր, սակայն, որ խաղաղության բոլոր պայմանները քննվելու էին, և նախորդ միջազգային փաստաթղթերում հաստատված իրավիճակի մեջ նոր փոփոխություններն ընդունելի էին համարվելու կոնգրեսի վավերացումից հետո։ Անգլիան ուզում էր, որ Սան-Ստեֆանոյի ամբողջ դաշնագրի վրա կոնգրեսի իրավունքը պարտավորիչ լիներ։ Ռուսաստանը եվրոպական նշանակության և իրավասության հարց էր համարում միայն նեղուցների խնդիրը։ Անգլիական դիվանագիտությունը եռանդուն ջանքեր էր գործադրում հակառուսական կոալիցիա ստեղծելու համար։

1878 թվականի մարտին, Դերբիի անկման նախօրյակին, մի նախագիծ էր կազմվել, որ կոչվում էր «Միջերկրականի լիգա»։ Մարտի 13-ին Դերբին ցուցում էր տվել Հռոմի անգլիական դեսպանին՝ ներազդել Իտալիայի կառավարության վրա, որպեսզի նա միանար Ֆրանսիային, Անգլիային, Ավստրո-Հունգարիային և Հունաստանին, «պաշտպանելու համար» իրենց առևտրական և քաղաքական շահերը Միջերկրականում և նեղուցներում (220, էջ 382)։

Միջերկրական տերությունների լիգա ստեղծելու նախագիծը Բիքոնսֆիլդը թագուհուն գրած նամակում անվանում էր «Գաղտնիքների գաղտնիքը»։ Ըստ այդ պլանի՝ Անգլիան նախատեսում էր չխանգարել Ավստրիային գավթելու Բոսնիան, Իտալիան գրավելու էր Ալբանիան, Ֆրանսիայի համար նախատեսվում էր Թունիսը, իսկ՝ Բիսմարկի համաձայնությամբ։ Հունաստանը նույնպես մասնակից էր դառնում այդ լիգային (217, էջ 326)։

Իտալիայի արտաքին գործերի մինիստր Կորտին խուսափեց հակառուսական բլոկի մեջ մտնելուց։ Անգլիական դիվանագիտությունն իր նպատակին չհասավ (220, էջ 383)։

Երբ Իտալիայի արտաքին գործերի մինիստր Կորտին մերժեց մասնակցել այդ ձեռնարկին, դա պատճառաբանելով Եվրոպայում չեզոքություն պահպանելու իր քաղաքականությամբ, Բիքոնսֆիլդը հրաժարվեց այդ պլանից, ավելի ու ավելի իր ուշադրությունը կենտրոնացնելով Մերձավոր Արևելքում նոր Ջիբրալթար փնտրելու վրա (217, էջ 327)։

Մարտի 13-ին անգլիական կառավարությունը հայտնում էր, թե մինչև եվրոպական ֆորում հրավիրելը անհրաժեշտ է կատարյալ վստահություն ունենալ, որ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված համաձայնագրի բոլոր հոդվածները կենթարկվեին կոնգրեսի քննությանը, որպեսզի կարելի լիներ որոշել, թե ո՞ր հոդվածները պետք է ընդունված լինեին այլ տերությունների կողմից և որոնք՝ ոչ։

Մարտի 17-ին Գորչակովն անգլիական դեսպան Լոֆտուսի միջոցով հաղորդում էր անգլիական կառավարությանը. «Կրկին վստահեցնում եմ բրիտանական կառավարությանը, թե Ռուսաստանի և Թուրքիայի միջև կապված խաղաղության հիմնական դաշնագրի ճիշտ օրինակը կհաղորդվի մեծ

տերություններին կոնգրեսի գումարումից առաջ, և թե կոնգրեսում ամեն մի տերություն կատարյալ ազատություն կունենա իր դիտողությունների և գործողությունների համար»։ Գորչակովն ասել էր Լոֆտուսին, որ Պետերբուրգը պատրաստ էր վիճելու այն կետերի շուրջ, որոնք վերաբերում էին եվրոպական շահերին։ Գորչակովն ապացուցում էր, որ Հայաստանում գրավված վայրերը Ռուսաստանի համար ունեն ոչ թե հարձակողական, այլ զուտ պաշտպանողական նշանակություն։ Նա հիշեցնում էր, որ Կարսի նման բերդաքաղաքը երրորդ անգամ էր արդեն վերցնում ռուսական բանակը և դա միայն արվում էր սեփական սահմանների ապահովության համար։

Ֆորին օֆիսը Սան-Ստեֆանոյի պայմանագրի պաշտոնական տեքստի օրինակն ստացավ մարտի 23-ին, որից հետո ստեղծվեց մի հատուկ կոմիտե, որի մեջ մտնում էին Բիքոնսֆիլդը, Սոլսբերին և ուրիշներ։ Կոմիտեն մշակեց և կառավարության քննարկմանը ներկայացրեց իր եզրակացություն-հուշագիրը՝ Սան-Ստեֆանոյի պայմանագրի նկատմամբ անգլիական դիրքորոշման մասին։ Պայմանագրի 16-րդ հոդվածի մասին այնտեղ ասված էր. «Մենք կարծում ենք, որ այս հոդվածում նախատեսված բարելավումներն ու ռեֆորմները պետք է երաշխավորվեն մի պարտավորությամբ, որ ստանձնելու են բոլոր տերությունները և ոչ թե միայն Ռուսաստանը, և որ դրանք պիտի հանդիսավոր կերպով դրվեն յուրաքանչյուր տերության նշանակած անդամներից կազմված հանձնաժողովի հսկողության տակ» (220, էջ 369)։

Այնուհետև փաստաթղթում ասված էր. «Ինչ վերաբերում է Հայաստանում տերիտորիալ կորուստների փոխհատուցմանը, մենք գտնում ենք, որ պետք է եռանդուն ջանքեր գործադրվեն դեպի արևելք այնքան հեռու ետ մղելու նախատեսվող անեքսիայի արևմտյան սահմանները, որքան թույլ է տալիս Տրապիզոնից Պարսկաստան ներկա առևտրական ճանապարհը Թուրքիայի տերիտորիայում պահելու համար» (220, էջ 370)։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքումից անմիջապես հետո «Թայմս»-ը գրեց, որ Հայաստանի տերիտորիաների

անցումը Ռուսաստանին հարկադրում էր Անգլիային «գրավել և պաշտպանել Եգիպտոսը» (53, № 2098, 1878)։

Մարտի 27-ին տեղի ունեցավ կառավարության կարևոր նիստ, որտեղ Բիքոնսֆիլդն առաջարկեց մի շրջաբերական հրապարակել, ցույց տալով դենքի դիմելու Մեծ Բրիտանիայի պատրաստակամությունը։ Նա անհրաժեշտ էր համարում Հնդկաստանից բերված զորքերով Կիպրոսը և Իսկենդերունը օկուպացնել, որպեսզի «չեզոքացնել ռուսական նվաճումները Հայաստանում» (203, էջ 266)։ Այս առաջարկությունը չընդունվեց Ֆորին օֆիսի կողմից, մինչև որ Սոլսբերին դարձավ արտաքին գործերի մինիստր՝ մարտի 31-ին հրաժարական տված Դերբիի փոխարեն։ Անգլիական պաշտոնական դիրքորոշումը որոշակի դարձավ, երբ Սոլսբերին անցավ իր պաշտոնական պարտականությունների կատարմանը, ինչը նա սկսեց «դրամատիկ մանևրայով» (214, էջ 71)։ Գործի անցնելուց քսանչորս ժամ հետո արդեն պատրաստ էր նրա աղմուկ հանած շրջաբերականը։

Ռոբերտ Արթուր Սոլսբերին—Սեսիլը (1830—1903) ծագումով ազնվական ընտանիքից էր։ 1866—1867, ապա 1874—1878 թվականներին նա Հնդկաստանի գործերի մինիստրն էր Դերբիի և Բիքոնսֆիլդի կառավարություններում, անգլիական ինտենսիվ նվաճողական, գաղութային քաղաքականության ակտիվ կազմակերպիչներից ու իրականացնողներից մեկը։ Սոլսբերիին է պատկանում «Փայլուն մեկուսացման» (Splendid isolation) քաղաքականության գաղափարը։ Նրա դիվանագիտական բուռն գործունեության առաջին շրջանը համընկնում է 1875—1878 թվականների արևելյան ճգնաժամի հետ։ 1876 թվականին Կ. Պոլսում գումարված տերությունների կոնֆերանսում Սոլսբերին սուլթանական Թուրքիայի շահերը նրբորեն «պաշտպանում էր» մյուս պետությունների «ոտնձգություններից»։

Արտաքին գործերի մինիստր դարձած Սոլսբերիի անդրանիկ քայլը կտրուկ բողոքն էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի դեմ։ Այս դեմարշը ծրագրված, որոշակի նպատակներ հետապնդող գործողություն էր։ Չցանկանալով բանը հասցնել Ռուսաստանի հետ բացահայտ ռազմական ընդհարման, Սոլսբերին, միևնույն ժամանակ, սպառնալիքների միջոցով ձգտում էր տիպել վերանայելու ռուս-թուրքական պայմանագիրը ի վնաս հաղթանակած Ռուսաստանի։

Սոլսբերիի նշանակումով անգլիական քաղաքականությունը դարձավ ավելի ագրեսիվ և անհաշտվողական։ 1878 թվականի ապրիլին Լոնդոնում հակառուսական միտինգներ կազմակերպվեցին։ Թուրքասեր ցուցարարները ջարդեցին Գլադստոնի տան պատուհանները, իսկ Հայդ պարկում հռետորները պատերազմի կոչ էին անում ընդդեմ Ռուսաստանի։ Բիքոնսֆիլդը հրաման արձակեց պահեստայիններին բանակ զորակոչելու մասին։ Սա առիթ հանդիսացավ, որպեսզի Դերբին մեկընդմիշտ հեռանար քաղաքական ասպարեզից, և ագրեսիվ կուրսի կողմնակիցները եռանդուն գործունեություն ծավալեին Անգլիայում (165, էջ 470—471)։

Ռազմական մինիստր գնդապետ Ստենլին քննարկում էր հնդկական զորամասերը Եվրոպա տեղափոխելու, ծախսերը ճշտելու և հոգալու հարցերը (213, էջ 1143)։

Ապրիլի սկզբին նույնիսկ էրզրում լուր հասավ այն մասին, թե Անգլիան պատերազմ էր հայտարարել Ռուսաստանին (123, էջ 27, 29)։ Սա Սոլսբերիի շրջաբերականի արձագանքն էր։

Սոլսբերիի ապրիլի 1-ի շրջաբերականն ուղարկվեց բրիտանական բոլոր դեսպաններին, որը մի սպառնալի մեղադրական ակտ էր Ռուսաստանի հասցեին (լրիվ տեքստը տե՛ս 220, էջ 372—380)։ Նա հակառուսական դիրքերից խստագույնս քննադատում էր Սան-Ստեֆանոյի համաձայնագիրը, այն գնահատում որպես «Մեծ Բրիտանիայի օրինական շահերին անհամատեղելի բան» (118, էջ 485)։ Ռուսաստանին ամբաստանելով Արևելքում տիրապետող դիրք հաստատելու մտադրությունների մեջ, վիճարկելով մեծ Բուլղարիայի ստեղծումը, Բալկաններում կատարվող փոփոխությունները, Սոլսբերին միաժամանակ ընդգծում էր, որ Հայաստանի ամրոցները գրավելով և նրա բնակչությանն իրենից կախման մեջ դցելով, ռուսական կառավարությունն իբր խոչընդոտներ էր հարուցում եվրոպական առևտրին, որն իրականացվում էր Տրապիզոն—Պարսկաստան գծով։ Նա պնդում էր, որ Ռուսաստանի իշխանությունը տարածվելու

էր մի տերիտորիայի (իմա՝ Հայաստանի) վրա, որը «Մեծ Բրիտանիայի համար մեծագույն հետաքրքրություն է ներկայացնում»։ Լայարդը կառավարությանն ուղղած մի գրության մեջ ասում էր. «Թուրքիան պահպանելու քաղաքականությունը մեր սեփական նպատակի և մեր ապահովության համար է, և ոչ թե թուրքերի ու նրանց կրոնի նկատմամբ վերացական սիրո համար։ Այս քաղաքականությունն ընդունված և գործադրված է մեր ամենամեծ պետական մարդկանց կողմից, ուստի վերջին մի քանի ամիսների դեպքերը չեն կարող այն տապալել» (73, էջ 401)։

Իգնատևը հեռագրում էր Պետերբուրգ. «Այստեղ գտնում են, որ լորդ Դերբիի հրաժարականից հետո մեզ պատերազմ է սպառնում։ Անգլիացիները հրահրում են ռումիններին, սերբերին, հույներին և ամբողջ տեղական մամուլը՝ ընդդեմ Ռուսաստանի։ Դրությունը լուրջ է» (129, էջ 47)։

Թուրքական կառավարությունը կոնգրեսի նախօրյակին մի հիշատակագիր հղեց մեծ տերություններին, որտեղ բողոքում էր Սան-Ստեֆանոյի դաշնագրի պայմաններից։ Թուրքական դիվանագիտությունը փորձում էր ապացուցել, որ Սան-Ստեֆանոյի փաստաթուղթն իր ներկայացուցիչները ստորագրել էին սպառնալիքների տակ, որոնց ժամանակ չէր տրվել ծանոթանալու տերիտորիալ կորուստներին, աշխարհագրական քարտեզի մանրամասներին։ Այս հիշատակագրում ասվում էր, որ պայմանագրով ռուսներին էին անցել տերիտորիալ կետեր, որոնք Թուրքիայի ձեռքում էին գտնվում և այլն (57, № 96, 1878)։

Ուժեղացել էին հակահայկական տրամադրությունները բուն պաշտոնական շրջանակներում։ Բացահայտ կոչեր էին արվում պետական ապարատից քրիստոնյա պաշտոնյաներին հեռացնելու մասին, գտնում էին, որ պետությունը պետք է զուտ թուրքական, մահմեդական լիներ։ Մոլչանովը հավաստում է, որ կառավարական ապարատի կրտսեր աշխատողներն իրենց պետի մասին ասում էին «մի հավատացեք նրան, նա հայ է», «մեզ մոտ միայն թուրքերն են ազնիվ, մնացածները դավաճաններ են» (141, էջ 15—23)։

1877 թվականի վերջին թուրքական կառավարությունը ֆրանսերեն լեզվով կազմված մի կեղծ ժողովածու հրատարակեց և տարածեց Եվրոպայում, փորձելով ռուսական բանակին մեղադրել գրավված վայրերում դաժանությունների և սպանությունների մեջ (175, 179)։ Այդ կեղծագրի հիմնական նպատակն էր Եվրոպային ցույց տալ պատերազմի ժամանակ ռուսների և բուլղարների կատարած «չարագործությունները» թուրք բնակչության նկատմամբ։ Գրքում տեղադրված էին իբր թե մահմեդական ժողովրդի կողմից գրված և ստորագրված բողոքի տեքստեր, ուղղված կոնգրեսի նախագահ Բիսմարկին։ Այս հրատարակությունը մեզ հիշեցնում է 1915 թվականին երիտթուրքերի կողմից հրապարակված կեղծագիրը, որտեղ իբր ճշմարտություններ էին ասվում հայկական կոտորածների մասին։ Հասկանալի է, որ երիտթուրքերի կեղծիքն ու ստախոսությունը հին ավանդություններ և խոր արմատներ ունեն։

Անգլիայի դժգոհությունն արտահայտելով Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանի ձեռք բերած նվաճումներից, Սոլսբերին հատկապես վիճարկում էր փոփոխությունները Ասիական Թուրքիայում։ Նա գտնում էր, որ վտանգված էին իր երկրի դիրքերը, ոտնահարված էին նրա շահերը, դեմ էր, որ Ռուսաստանը «Հայաստանի... ժողովրդի վրա պիտի տարածի իր ազդեցությունը» (64, էջ 10—11), թեև անգլիական պառլամենտում հռետորներն ընդունում էին, որ Հայաստանը փափագում էր ռուսաց իշխանության տակ անցնել։ Սոլսբերին հատուցում էր պահանջում «Ռուսաստանի ազդեցությունը Հայաստանում չեզոքացնելու համար»։ Լայարդը գրում էր Սոլսբերիին, որ Հայաստանի ինքնավարությունը «արտաքոց բան է, ռուսների սադրանք», «թե Հայաստանի հողերը բոլորովին անպատրաստ են ինքնավարության, և ինքնավար Հայաստանը չի կարող գոնե մեկ ամիս տոկալ քրդերի դեմ և պիտի դիմի ռուսների օգնության» (218, էջ 410, 424)։ Ահա թե ինչն էր մտահոգում Լոնդոնի վարիչներին, և նրանք դիմում էին բոլոր միջոցներին՝ ձախողելու Ռուսաստանի ռազմաքաղաքական հաջողությունը։

Այս տեսակետից սխալ է Ն. Բելյաևը, երբ գրում է, թե Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի աչքում փոքրասիական հարցերին վերաբերող հոդվածները «ինքնուրույն մեծ նշա-

նակություն չունեին» (89, էջ 423)։ Ավստրո-Հունգարիայի համար, գուցե, այդպես էր, բայց Անգլիան, ընդհակառակն, շատ մեծ շեշտ էր դնում Ասիայում Ռուսաստանի ազդեցությունը սահմանափակելու անհրաժեշտության վրա։

Լորդ Սոլսբերին եվրոպական գլխավոր տերություններում իր դեսպաններին հաղորդում էր կառավարության տեսակետը. «Հայաստանի բերդաքաղաքների նվաճումն այդ մարզի բնակչությանը կդնի այն տերության ազդեցության տակ, որը դրանք կտիրապետի, մինչդեռ եվրոպական ծավալվող առևտուրը, որ իրականացվում է Տրապիզոնի վրայով դեպի Պարսկաստան, Քուրդիստանում որոշ վայրեր գիջելու հետևանքով կենթարկվի վտանգի ամեն անգամ, երբ որ դա ցանկալի լինի Ռուսաստանին...» (125, էջ 183)։ Նա անթույլատրելի էր համարում, որ Սև ծովի վրա հաստատվեր Ռուսաստանի լիակատար ազդեցությունը։ Նրա կարծիքով, Թուրքիայի անկախությունը դառնում էր թափանցիկ մի բան, և այդ վիճակն անհամատեղելի էր համարում Մեծ Բրիտանիայի «օրինական» շահերի հետ (118, էջ 485)։

Իհարկե, անգլիական պառլամենտում վիճաբանությունները չէին դադարում, բայց Բիքոնսֆիլդի ֆանտաստիկ դաղափարներն ու առաջարկությունները, որպես կանոն, ընդունելի էին դառնում թագուհու համար (214, էջ 66)։ Նա գլխավորում էր անգլիական դաղութատիրական քաղաքականության բուռն վերընթացը։ Փառասիրության մոլուցքով տարված Բիքոնսֆիլդը հաջողությամբ գլխավորում էր բրիտանական իմպերիալիզմի աշխարհակալական նկրտումները։

Ապրիլի 8-ին լորդ Բիքոնսֆիլդը պառլամենտում առաջարկեց շնորհակալության ուղերձ հղել թագուհուն, պատասխանելով նրա պատգամագրին, որով ցամաքային պահեստի զորքերը զենքի էին հրավիրվում։ Այդ առաջարկությունն ընդունվեց, թեև կառավարության պատերազմական նախապատրաստությունների դեմ հանդես եկան մի քանի դեպուտատներ, այդ թվում՝ Դերբին։ Նա գտնում էր, որ դիվանագիտական բոլոր միջոցները սպառված չէին։ «Կառավարությունը,— ասում էր նա,— Սան-Ստեֆանոյի դաշնագրի դեմ ծանր առարկություններ անելուց անմիջապես հետո զինված է և իբրև թե սպասում է պատերազմի։ Ծափահարություններով ընդունեցին այդ քաղաքականությունը, իբրև աներկյուղ և որոշիչ քաղաքականություն։

Բայց ի՞նչ է լինելու դրա հետևանքը։ Կամ, թերևս, Ռուսաստանն ընդունի Անգլիայի պահանջները, և մենք մի փառավոր հաղթանակ կտանենք դիվանագիտության մեջ. բայց քանի որ Ռուսաստանից պահանջվում է հրաժարվել իր շահերի մեծ մասից, որոնք պատերազմով է ստացել, դժվար է հավատալ, որ կարելի է այդպիսի հետևանքի հասնել։ Եվ կամ, թերևս, մենք զիջումներ անելով փոխենք մեր ծանր առարկությունները»։

Ավելի լավ կլիներ բանակցություններով կարգադրել գործը, առանց պատերազմական արտաքին ցույցերի, եզրակացնում էր նա։ Նա ծաղրում էր Բիքոնսֆիլդին, որը պառլամենտի ամբիոնից հայտարարել էր, թե Ռուսաստանի բանակը կարող է սպառնալ Եգիպտոսին Ասորեստանի (Միջագետքի) վրայով։ Արտաքին գործերի մինիստրի պաշտոնից հեռացած Դերբին շարունակում էր դեմ արտահայտվել պատերազմին։ Նա գտնում էր, որ Անգլիան չի կարող կռվել Ռուսաստանի դեմ, «որին Նապոլեոնը չկարողացավ նվաճել 500 հազար մարդով»։ Նա համոզված էր, որ պատերազմի դեպքում Անգլիան առանց դաշնակիցների կմնար։ «Ֆրանսիայում,— ասում էր Դերբին,— մի քաղաքական մարդ չեք գտնի, որ հանձնառու լինի երկրորդ անգամ Ղրիմի պատերազմն սկսել՝ դրա պատասխանատվությունն իր վրա վերցնելու համար։ Դերբին հույս չուներ Գերմանիայի, Իտալիայի վրա, իսկ ինչ վերաբերում էր Ավստրիային, ապա, նրա կարծիքով, «խոհեմ չէր լինի վստահել» նրան, նա «չի կարող վստահելի դաշնակից լինել»։ «Ահա այսպիսին է մեր դաշնակիցների հարցը. և ես հարցնում եմ. պարտավո՞ր ենք, ինչպես շատերը մտածում են, գահավիժել պատերազմի մեջ» (57, № 65, 1878)։

Բիքոնսֆիլդը, հույսը կտրելով Ավստրիայի հետ համաձայնության հանգելու և Ռուսաստանի դեմ միացյալ ճակատ կազմելու հարցում, գտնում էր, որ պատերազմն անխուսափելի է նաև առանց դաշնակիցների (217, էջ 293)։ Ռուսաստանի դեմ 300 հազար զորք հանելու դիմաց նա Ավստրիա-

յին շահավետ փոխառություն էր խոստացել (217, էջ 322), բայց երկու տերությունները համաձայնության չէին հանգել։ Պատերազմի հակառակորդներն ապացուցում էին, որ Ռուսաստանն այնքան հոգնած չէր, որ չկարողանար կռվել Անգլիայի հետ, որ Թուրքիան լիարժեք դաշնակից չէր, հնդկական բանակը լրիվ պատրաստ չէր, որ Ավստրիան խուսափում էր որոշակի դեր ստանձնելուց և այլն (217, էջ 248)։

Բիքոնսֆիլդը և Սոլսբերին իրենց հրապարակային ելույթներում այնպիսի էքստազի մեջ էին ընկնում, որ ժամանակին սրամտում էին, թե Անգլիան ուզում էր փրկել Օսմանյան կայսրության ամբողջականությունը, իսկ Թուրքերը՝ ոչ։ Սովետական արևելագետ Շպարոն նկատում է, թե «որքան էլ տարօրինակ է, ոչ ոք Ռուսաստանում մինչև Բեռլինի կոնգրեսի ավարտը չգիտեր, որ անգլիական պետական գործիչները վաղուց իրենց փոխհատուցում էին նախատեսել Կիպրոսը, և պատերազմի հրելով Թուրքիային, հանգիստ սպասում էին, թե երբ պետք է նա ջախջախվեր» (172, էջ 99)։

Թեև Անգլիան շարունակեց ընդմիջված բանակցությունները կոնգրես հրավիրելու մասին, բայց, այնուամենայնիվ, իր առաջարկած նախկին պայմանը Սան-Ստեֆանոյի պայմանագիրը վերանայելու մասին չփոխեց։ Այդ օրերին դեսպան Լայարդը սիրում էր ասել, թե ինքը ո՛չ ռուսատյաց էր, ոչ էլ թրքասեր։ Բայց իրավունք չուներ մոռանալ իր երկրի շահերը։ Իսկ այդ շահերը, ասում էր նա, թելադրում էին, որ ինքնավար փոքր պետություններ, օրինակ՝ Հայաստանը, չկազմվեին, քանի որ նրանք ենթակա կդառնային ռուսական ազդեցությանը։ 1878 թվականի ապրիլին նա գրում էր Սոլսբերիին, թե անգլիական շահերին համապատասխանում էր Թուրքիայի ընդհանուր բարենորոգումն ու ամրապնդումը, մի կողմ թողնելով զանազան ազգությունների «զգացական տեսությունները»։ Նա գտնում էր, որ լավ կազմակերպված կառավարման սիստեմի դեպքում Թուրքիան սքանչելի բանակ կունենար և կկարողանար դիմագրավել հայկական բարձրավանդակի վրայով դեպի հարավ ձգտող ռուսական տարածմանը (195, էջ 201)։

Անգլիական կառավարող շրջանները ղեկավարվում էին Մեծ Բրիտանիայի գաղութատիրական, քաղաքական, տնտեսական ու ռազմական շահերով։ Անգլիական դիվանագիտությունը, քաղաքական գործիչները Կ. Պոլսի հարուստ վերնախավի մեջ անգլիասեր հայերի առկայությունն օգտագործում էին տակտիկական խնդիրների լուծման համար, իսկ ստրատեգիայում, անգլիական գլոբալ շահերի տեսակետից նրանց առկայությունը գրոշի արժեք չուներ։ Տվյալ դեպքում խընդրի առարկան բուն Հայաստանի հայությունն էր, որը «փաստորեն ռուսասեր էր և ճիշտ այդ պատճառով էր, որ Մեծ Բրիտանիան ոչ միայն հակառակ էր հայ տարրի անունով որևէ բարեկամության, այլև չէր ճանաչում նույնիսկ Հայաստան անունով երկրի գոյությունը» (29, էջ 111)։ Պատահական չէր, որ Սոլսբերին և Բիքոնսֆիլդը շուտով Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը խմբագրելիս դուրս նետեցին Հայաստան անունը, իսկ Հայաստան ուղարկված հյուպատոսներին Քուրդստանի հյուպատոսներ էին կոչելու պաշտոնապես։

* * *

Օրեցօր ռուսական կառավարության մոտ հասունանում էր այն մտայնությունը, որ «Ռուսաստանի համար միանգամայն անհնարին է Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի՝ իրեն հետաքրքրող դրույթների համար նոր պատերազմի մեջ մտնել Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի հետ» (89, էջ 422)։ Սոլսբերիի շրջաբերականից հետո ռուսական արքունիքը համաձայնեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրն ամբողջապես դնել եվրոպական կոնգրեսի քննարկմանը։

«Երկու ամիս էր արդեն անցել Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի ստորագրման օրից, իսկ խաղաղության կամ պատերազմի մասին հարցը ոչ մի քայլով չէր մոտեցել հանգուցալուծման,— գրում է Ս. Ս. Տատիշչևը։— Անգլիայի և Ավստրիայի զինվելը առաջ էր բերել Ռուսաստանի եռանդուն սպառազինում, նրա բոլոր ուժերի մոբիլիզացիա, մի ամբողջ բանակի կենտրոնացում Ավստրիայի սահմանին և

Սեծովյան ծովափի երկայնքով մեկ։ Դիվանագիտական բանակցությունները ձգվում էին անաշխույժ և անպտուղ, հաջողության հույս չներշնչելով» (164, էջ 484)։ Նույն հեղինակը նշում է, որ Ռուսաստանի համար ստեղծվել էր ծանր վիճակ։ Մայիսի կեսերին Պետերբուրգում որոշեցին հոգնեցուցիչ անորոշությունից դուրս գալու համար նորից դիմել Բեռլին՝ Բիսմարկի օժանդակությունը հայցելով։ Այդ միջոցին Բիսմարկի հետ ինտենսիվ բանակցություններ էր վարում Բիքոնսֆիլդը։ Նրան հաջողվեց մերձենալ և առաջիկա եվրոպական վեհաժողովի բնույթի, գլխավոր խնդիրների շուրջ պայմանավորվածության հանգել գերմանական կանցլերի հետ (153, 1913, հ. 153, էջ 283)։ Վերջինս ընդհանուր առմամբ համամիտ էր թե՛ Բալկաններում և թե՛ Արևելքում Ռուսաստանի ազդեցության ամրապնդմանը խոչընդոտելու անգլիական դիրքորոշմանը։

Մայիսի 9-ին Սոլսբերին Կ. Պոլիս Լայարդին հաղորդում էր Ասիական Թուրքիայի վերաբերյալ անգլիական կառավարության դիրքորոշումը։ Այս փաստաթուղթը հրապարակված է Թեմպերլիի և Պենսոնի գրքում (220, էջ 384—385)։ Այնտեղ ասված էր. «Մեծ խնդիրը, որ Թուրքերը պետք է լուծեն իրենց հողից ռուսական բանակի հեռանալուց հետո, այն է, թե ինչպես պահպանել ասիական կայսրության ամբողջականությունը»։ Ինչպես տեսնում ենք, անգլիական մինիստրի գլխավոր մտահոգությունը սուլթանի իշխանության պահպանումն էր ասիական տերիտորիաների վրա, քանի որ «ասիական զինվորների» միջոցով էր հնարավոր պահպանել Թուրքերին Կ. Պոլսում։ Սակայն «խնդիրն այն էր, թե ինչպես սուլթանը պահպանի իրեն Ասիայում. ռուսների ներկայությունը Կարսում՝ առաջիկա այս փոփոխությունը կտարածվի ամբողջ Փոքր Ասիայի, Միջագետքի և Սիրիայի վրա։ Նա խոսում էր Բոմբեյին, Հնդկաստանին սպառնացող վտանգի մասին։

«...Թուրքերի միակ փրկությունը դաշինքն է որևէ մեծ տերության հետ. և միակ առկա տերությունը Անգլիան է»։ «...Հանուն քրիստոնյաների փրկության,— անսքող լկտիությամբ գրում էր Սոլսբերին,— հումանիզմի որևէ նկատառումներով իմ ձեռքը զուսպ չի դառնա ռուսների հետագա

առաջխաղացումը կանխելու համար։ Ասիական Թուրքիայի բնակչության մեծամասնությունը մահմեդականներ են, որոնց համար Թուրքական կառավարությունը հարազատ բան է և այնքան լավ, որքան այլ մահմեդականներ կբացառեին մեր սեփական կառավարման ձևը» (220, էջ 385)։

Այսպիսով, Սոլսբերիի և անգլիական մյուս գաղութակալ պարագլուխների համար գրոշի արժեք չունեին հայ ժողովրդի կենսական շահերը, ազատության նրա ձգտումները, քանի որ նրանք մտահոգված էին իրենց իմպերիալիստական խնդիրների լուծմամբ։ Նույն ժամանակ էլ Սոլսբերին Լայարդին տեղյակ էր պահում Կիպրոսի վերաբերյալ կառավարության մշակած ծրագրին, մատնանշելով, որ եթե Ռուսաստանը «պահպանի իր նվաճումները Հայաստանում, Մեծ Բրիտանիան պաշտպանողական դաշինքի մեջ կմտնի Թուրքիայի հետ, Բ. Դոնից երաշխիքներ պահանջելով Ասիական Թուրքիայում կառավարման բարելավման համար» (201, էջ 21)։

Սետոն-Վաթսոնը գրում է, որ 1878 թվականի մայիսին պրեմիեր-մինիստրի իմպերիալիստական երևակայությունը պտտվում էր Վառնայի, Բաթումի, Միտիլինայի, Կրետեի և Բասրայի շուրջ։ Բայց հայկական հողերի նվաճումներից Ռուսաստանին զրկելու անհնարինության ակնհայտ դառնալը բրիտանական կաբինետի ախորժակն աստիճանաբար կենտրոնացնում էր Կիպրոսի վրա (217, էջ 422)։ Եթե Բաթումն անցնելու էր Ռուսաստանին, գրում էր Բիքոնսֆիլդը թագուհուն, ապա «մենք պետք է օկուպացնենք մի որևէ կղզի կամ կայան Փոքր Ասիայի ափերին, որը չեզոքացներ Ռուսաստանի ներկայությունը Հայաստանում»։ Սետոն-Վաթսոնը գրում է, որ նա ամեն գնով մաքսիմալ օգուտներ էր փնտրում Անգլիայի համար (217, էջ 410)։ 1878 թվականի մայիսին Լայարդը, պատասխանելով Թուրքիայի հետ պայմանագիր կնքելու մասին Բիքոնսֆիլդի հանձնարարականին, գրում էր, որ հայերի զարգացումը անգլիացիներին կստիպեր Հնդկաստանի հետ կապը պահպանել արդեն Հյուսիսային Սիրիայի, Տիգրիսի և Եփրատի դաշտավայրի վրայով (217, էջ 424)։

Լոնդոնի ռուսական դեսպանը տագնապալից հաղորդումներ էր հղում Պետերբուրգ Ռուսաստանի համար պատերազ-

մի ահեղ վտանգի մասին, առաջնահերթ խնդիր էր համարում Ավստրո-Հունգարիայի և Անգլիայի մերձեցման կանխումը։ Մինչև եվրոպական կոնգրեսի հրավիրումը այդ տերությունների կառավարությունների հետ լիակատար փոխըմբռնումը նա համարում էր խիստ անհրաժեշտ։ Սա էր պատճառը, որ Բիքոնսֆիլդին որոշակի զիջումներ անելու գործում Լոնդոնի ռուսական դեսպան Շուվալովն ակներև նախաձեռնություն ցուցաբերեց։

Մայիսի 2-ին անգլիական «Թայմս»-ը, հաղորդելով Կ. Պոլսում Իգնատևի փոխարեն Լոբանով-Ռոստովսկու դեսպան նշանակվելու մասին, ընդգծում էր զիջումների դիմելու ռուսական դիվանագիտության ցանկությունը։ «Մշակ»-ը գրում էր, որ Ռուսաստանին հարկավոր էր խաղաղություն՝ առևտուրը վերսկսելու, դադարեցված արդյունագործությունը զարգացնելու համար։ «Ռուսաստանը թեև հաղթող է դուրս եկել ծանր պատերազմից, բայց այդ պատերազմը չափից ավելի լարել է ամբողջ երկրի տնտեսական ուժերը։ Այժմ հարկավոր է տևողական հանգիստ, ժամանակավորապես խանգարված տնտեսական հավասարակշռությունը նորից վերականգնելու համար» (57, № 63, 1878)։

«Թուրքիայի հետ կոնգրեսի օգնությամբ խաղաղություն կնքելու ռուսական կառավարության ցանկությունն ապացուցում էր,— գրում է Բիսմարկը,— որ Ռուսաստանը, բաց թողնելով Կ. Պոլիսը գրավելու հարմար պահը, ռազմական տեսակետից իրեն բավարար ուժեղ չէր զգում, որպեսզի գործը պատերազմի հասցներ Անգլիայի և Ավստրիայի դեմ, (90, էջ 194)։ Միաժամանակ նա սրամտել էր, թե Թուրքերը հույս ունեին Ռուսաստանի և Անգլիայի պատերազմական բախումից օգուտ քաղել, մոռանալով, որ նրանց միջև ծագած վեճը Թուրքիայի հաշվին էր կարգադրվելու (53, № 2145, 1878)։

Ցարի հրավիրած բարձր խորհրդակցությունում ռազմական մինիստր Միլյուտինը, ֆինանսների մինիստր Ռեյտերը և մյուսներն արտահայտվեցին պատերազմը կանխելու օգտին։ Նրանք թե՛ ֆինանսապես, թե՛ ռազմականապես Ռուսաստանը պատրաստ չէին համարում Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի դեմ պատերազմի համար։

Լոնդոնում ռուսական դեսպան Շուվալովին ցուցում տրվեց համաձայնության եզրեր փնտրել Անգլիայի կառավարության հետ։ Անհրաժեշտ էր պարզել, թե որոնք էին անգլիական կառավարության կոնկրետ պահանջախնդրությունները Սան-Ստեֆանոյի պայմանագրի նկատմամբ և ինչ փոփոխությունների հիման վրա էր հնարավոր համաձայնության հանգել։ Շուվալովը հանդիպումներ ունեցավ Բիքոնսֆիլդի հետ, որից հետո ճանապարհվեց Պետերբուրգ։ Գերմանիայում նա բանակցություններ վարեց Բիսմարկի հետ, հույս ունենալով շահել նրա օժանդակությունը։

Պետերբուրգում անգլիական պահանջախնդրությունները հանգամանալից քննարկման ենթարկվեցին։ Հատուկ խորհրդակցությունը հակվեց Անգլիայի հետ համաձայնություն կայացնելուն։ 1878 թվականի մայիսի 24-ին Շուվալովին տրված հրահանգում ցարական կառավարությունը հանձնարարում էր նրան՝ հայտնել անգլիական կառավարությանը, որ Ռուսաստանը մտադիր չէր Բաթումից և Կարսից այն կողմ ընդլայնելու իր տիրույթներն Ասիայում (114, էջ 342)։

Լոնդոնի «Թայմս»-ն արձագանքում էր Շուվալովի Պետերբուրգ վերադառնալու, Ալեքսանդր II-ին անգլիական տեսակետները ճշտորեն հաղորդելու հարցերին։ Թերթը հիշատակում էր Սոլսբերիի շրջաբերականում առաջ քաշված պահանջախնդրությունները, գտնում էր, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը միակողմանիորեն մեծ առավելություններ էր ընձեռում Ռուսաստանին, անտեսում եվրոպական երկրների շահերը, Թուրքիային դնում վասալ դրության մեջ։ Թերթի տնօրենները (իսկ դրանք նույն անգլիական կառավարողներն էին) պահանջում էին, որ Սան-Ստեֆանոյում գծված «Բուլղարիան շատ փոքրանա» և այդ խնդրում լինելիք «զիջումներից է կախված Հայաստանի սահմանագլուխների նոր գծի փոփոխվելը կամ չփոփոխվելը» (53, № 83, 1878)։ Բիքոնսֆիլդը Շուվալովին պայման էր դնում. ոչ մի մեծ Բուլղարիա, Հայաստանը չպետք է ռուսական լինի (տե՛ս Андре Моруа, Карьера Дизраэли, М., 1934, стр. 346)։

Երբ Շուվալովը Պետերբուրգում Ալեքսանդր II-ին պատմեց անգլիական կառավարության հետ իր վարած բանակցությունների մանրամասների մասին, վերջինս չէր հավա-

տում, որ Անգլիան համաձայնել էր Ռուսաստանին թողնել Կարսն ու Բաթումը և համոզված էր, որ ընդհանուր պայմանագրի ստորագրման պահին Անգլիան անպայման կհրաժարվեր այդ բանից։ Պատահական չէ, որ Բիսմարկն էլ զարմացավ, երբ Շուվալովը նրան հայտնեց Կարսն ու Բաթումը Ռուսաստանին հանձնելու վերաբերյալ անգլիական կառավարության համաձայնության մասին (136, հ. 59, 1933, էջ 96)։

Անգլո-ռուսական համաձայնագրով Ռուսաստանը հրաժարվում էր Ալաշկերտի հովտից և Բայազետ բերդաքաղաքից, համաձայնում էր, որ հայերի նկատմամբ հովանավորությունն իրականացվեր ոչ թե միայն Ռուսաստանի, այլև եվրոպական տերությունների կողմից, միաժամանակ պարտավորվելով այլևս սահմանները չտարածել դեպի Ասիական Թուրքիայի խորքը (164, էջ 486—489)։ Շուվալովը Լոնդոն վերադարձավ նորից Բեռլինի վրայով, շարունակելով բանակցությունները Բիսմարկի հետ կոնգրեսը գումարելու և Գերմանիայի դիրքը պարզելու խնդիրների շուրջ։

1878 թվականի մայիսի 18 (30)-ին հասնելով Լոնդոն, Շուվալովն իր ստացած լիազորություններին համապատասխան անգլիական կառավարության հետ կնքեց անգլո-ռուսական գաղտնի համաձայնագիր (լրիվ տեքստը տե՛ս 45, էջ 99—103), որը կիսով չափ կրճատում էր Ռուսաստանին Սան-Ստեֆանոյի պայմանագրի ընձեռած օգուտները։

Այսպիսով, մինչև համաեվրոպական կոնգրեսի հրավիրումը անգլիական դիվանագիտությանը հաջողվեց ձևակերպել մի համաձայնագիր՝ «Համաձայնագիր Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև Սան-Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխելու մասին» (30 մայիսի 1878 թ. Սոլսբերի—Շուվալով համաձայնագիրը), որը նսեմացնում էր պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակը, ռուս-թուրքական խաղաղության հարցը վերածելով միջազգային խնդրի։ Սան-Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված մեծ Բուլղարիան ջլատվում էր հօգուտ Թուրքիայի։ Յոթերորդ հոդվածում ասված էր. «Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրի մեջ Հայաստանի վերաբերյալ պարունակվող խոստումները պետք է տրվեն ոչ թե բացառապես Ռուսաստանի,

այլ նաև Անգլիայի անունից»։ Տասներորդ հոդվածով անգլիական դիվանագիտությունը հասավ այն բանին, որ Ալաշկերտի հովիտը և Բայազետ քաղաքը վերադարձվեին սուլթանին՝ «քանի որ այդ հովիտը հանդիսանում է դեպի Պարսկաստան տանող տրանզիտային մեծ ճանապարհ և թուրքերի աչքում ունի հսկայական նշանակություն» (45, էջ 100)։ Ըստ էության, Բեռլինի կոնգրեսը միայն Եվրոպայի համաձայնությամբ ձևակերպելու էր անգլո-ռուսական համաձայնագրի արդյունքները։ Ռուսական հասարակական կարծիքն իրազեկ չէր անգլո-ռուսական գաղտնի պայմանագրին և դրա համար մեծ հույսեր էր կապում կոնգրեսի հետ (147, էջ 52)։

Չնայած ստորագրված համաձայնագրի առկայությանը, Ալեքսանդր II-ը տարակուսանքի մեջ էր։ Կոնգրեսի նախօրյակին Պետերբուրգում հրավիրված բարձր խորհրդակցությունում ցարը հակվեց այն տեսակետին, որ եթե Բ. Դուրը չհամաձայնվեր Բաթումը Ռուսաստանին հանձնել, ապա ինքը չէր կատարելու Բեռլինի կոնգրեսի որոշումները, մասնավորապես, Էրզրումը կհանձներ Օսմանյան կայսրությանը Բաթումն ստանալուց հետո (165, էջ 450)։

Իսկ տեսակետները մասնավորություններում բավականին տարբեր էին. ցարական կառավարության հանձնարարությամբ Բաթումի և Ասիական Թուրքիայի մյուս տերիտորիալ նվաճումների վերաբերյալ գրավոր զեկուցագրերով արտահայտվել էին կովկասյան բանակի շտաբի պետ Պավլովը, գեներալ Ստեբնիցկին, գեներալ-ադյուտանտ Լորիս-Մելիքովը։ Վերջինս ընդգծել էր Բաթումի՝ որպես ռազմական նավահանգստի անհարմարությունները Փոթիի համեմատությամբ, միաժամանակ նշելով նրա՝ առևտրական նպատակների հաջողությամբ ծառայելու ապագա հնարավորությունները։ Սա նկատի ունենալով, Լորիս-Մելիքովը, ի տարբերություն մյուս էքսպերտների, Ռուսաստանի համար ավելի օգտավետ էր համարում Կարսի, Էրզրումի և Ալաշկերտի հովտի միացումը (140, էջ 117—119)։

Անգլիան մասնակից էր դառնում արևմտահայության քաղաքական դրության հարցերի արծարծմանը, դրա համար չունենալով ոչ մի հիմք, բացի Ռուսաստանին ընդդիմանա-

լու և Թուրքիայի շահերը «պաշտպանելու» իր նեղ գաղութատիրական շահերից։ «Անգլիան,— ասում էր Սոլսբերին,— չի կարող Ռուսաստանին թույլ տալ Թուրքիան իջեցնել լրիվ իրեն ենթակայության աստիճանի» (85, էջ 48)։

Սովետական պատմաբան Շպարոն գրում է, որ 1878 թվականի գարնանը Սոլսբերին և դեսպան Լայարդը մշակել էին Թուրքիայի ասիական տիրույթներում ռեֆորմների իրենց նախագիծը, նպատակ ունենալով անգլիական պրոտեկտորատ հաստատել Թուրքիայի վրա (172, էջ 38)։

Սոլսբերին Լայարդին ուղղած գրության մեջ նշում էր, որ Ասիական Թուրքիայում ապրող ժողովուրդները «ընդունակ չեն ինքնավարության», որ նրանք, իբր, անկախության ձգտում չունեն և «իրենց հանգստության և քաղաքական բարեկեցության համար պարտական են սուլթանին»։ Նա անհանգստություն էր արտահայտում Թուրքիայի արևելքում «խառնակության» հնարավորությունից, որ Բաթումի, Արդահանի և Կարսի Ռուսաստանին անցնելը Բ. Դոան «ամբողջականությանը մեծ վտանգ է ներկայացնում» (184, էջ 266—267)։ Դրան դիմագրավելը Սոլսբերին հնարավոր էր համարում Ասիական Թուրքիայում սուլթանի իշխանության ամրապնդման միջոցով, որին Անգլիան օժանդակելու էր այն պայմանով, եթե սուլթանը առաջիկա կոնգրեսում պաշտպաներ ընդհանուր բարենորոգումների ծրագիրը և Անգլիային հանձներ Կիպրոսը։

Բիքոնսֆիլդը թագուհուն համոզում էր, որ Կիպրոսի կոնվենցիայի կնքումով Թուրքիան մի ուժեղ պատնեշ կդառնար Ռուսաստանի դեմ, քան էր պատերազմից առաջ, որ այլևս թագուհին հարկ չէր ունենա վախենալու միապետների կոալիցիայից, որ Անգլիայի հովանավորության ներքո Թուրքիան ամենաէֆեկտիվ և միակ հնարավոր պատնեշը կլիներ «ագրեսիվ Ռուսաստանի» ճանապարհին (217, էջ 423)։

Կոնգրեսի բացման նախօրյակին Սոլսբերին հայտարարեց, թե հայոց խնդիրը պետք է ներկայացվեր կոնգրեսի քննությանը, որ պետությունները ցանկանում էին արդար վերաբերվել այդ խնդրի նկատմամբ, և Անգլիան էլ այդ էր կամենում։ Այս խոսքերը տպագրվել էին անգլիական «Գլոբ» թերթի էջերում (57, № 90, 1878)։ Այնուհետև նույն բանը նա կրկնեց անգլիական պառլամենտի լորդերի պալատում (57, № 95, 1878)։

Պատասխանելով հունիսի 6-ին լորդ Շաֆթեսբյուրիի հարցապնդմանն այն մասին, որ հայերը բավարարված չեն Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով, որտեղ նրանց մասին «այնպես թեթև է ասված, որ այն նրանց համար օգտակար չի լինի», և թե Անգլիան ուշադրություն կհատկացնի կոնգրեսի նիստերում հայկական հարցին, Սոլսբերին պատասխանում է. «Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, Թուրքիայի այլ քրիստոնյաները մասնավորապես հիշված չեն պայմանագրի մեջ։ Այդ պայմանագիրը շնորհում է օրենսդրություններ քրիստոնյա նահանգներին։ Այնտեղ, ուր բնակիչների մեծ մասը քրիստոնյա է, կարելի է մասնավոր օրենսդրություններ հաստատել, բայց այն նահանգներում, ուր ժողովուրդն ազգությունների և կրոնների մեկ անորոշ խառնուրդ է կազմում, անկարելի կլիներ մասնավոր օրենքներ հաստատել քրիստոնյաների համար, առանց նույնպես մասնավոր օրենքներ կիրառելու ամեն մի ազգության համար. այդ էլ կլիներ մի անկանոն բան։ Ահա այն դժվարությունը, որի դեմ պարտավոր ենք կռվել, երբ մոտենում ենք Հայաստանի խնդրին, որովհետև հայերը, թեև քրիստոնեական կրոն ունեն և առանձին ազգություն են, բայց այնպես են ցրված և թուրք ժողովրդի հետ խառնված են, որ հարկավոր կլինի կամ՝ թուրքերի, քրդերի և հայերի համար հավասարապես գործադրելի կարգադրություններ անել և կամ օրենքների զանազան կատեգորիաներ հաստատելով մի այնպիսի անկանոն բան շինել, որի մասին այժմ խոսեցի։

Այս իրողությունները հիշեցնում եմ ցույց տալու համար լորդ Շաֆթեսբյուրիին, թե այն հանգամանքները, որոնց մեջ գտնվում են հայերը, բոլորովին նման չեն Թուրքիայի այլ քրիստոնյաների հանգամանքին»։

Միաժամանակ անգլիական դիվանագիտությունը թուրքական կառավարությանն ապակողմնորոշում էր այն կարծեցյալ վտանգով, որն իբր շարունակվում էր Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի կողմից։ Անգլիական կառավարու-

թյունը Թուրքերից թաքցնում էր ռուսական ներկայացուցիչների հետ ձեռք բերված համաձայնությունը և օրավուր շիկացնում մթնոլորտը Բ. Դոնից ավելի մեծ զիջումներ կորզելու համար՝ ոչ պակաս հատուցում Անգլիայի «Թուրքապաշտպան» դիրքի դիմաց։ Անգլիական դիվանագետներին, մասնավորապես Լայարդին հաջողվել էր համոզել սուլթան Համիդին, որ իրենց կառավարությունն ամեն ինչ անելու էր Ռուսաստանի դեմ, նրան զրկելով Կ. Պոլսի մատույցներում և Հայաստանում ամրանալու հնարավորությունից։

Անգլիական կառավարությունը գաղտնի բանակցություններ ձեռնարկեց Բ. Դոան հետ։ Սարսափահար իրենց վերջին ծանր պարտությունից, Թուրքական կառավարողները նորից բարեկամության ու համագործակցության մասին Լոնդոնի խոստումները լուրջ հիմքեր համարեցին իրենց քաղաքականության ուղղությունը որոշելիս։ Անգլիական ճարպիկ դիվանագետների վարած այդ բանակցությունների մեթոդների ու ձևերի համեմատությամբ Սան-Ստեֆանոյի «գաղտնի և խորհրդավոր բանակցությունները» կարծես թե լոկ սպորտային խաղեր լինեին (214, 73)։ Մյուս կողմից՝ Բիքոնսֆիլդը համոզել էր կառավարության անդամներին Ասիական Թուրքիայի մասին Բ. Դոան հետ կոնվենցիա կնքելու անհրաժեշտության մասին, իհարկե, մասնավորապես ընդգծելով Ռուսաստանի առաջխաղացումը կանխելու անհետաձգելիությունը (185, էջ 110—111)։

Մայիսի 23-ին Սոլսբերին հեռագրեց Լայարդին. «Առաջարկիր, խիստ գաղտնի, սուլթանին հետևյալ պաշտպանական դաշինքը՝ ապագայում ապահովելու համար նրա տերիտորիան Ասիայում...»։ Այնուհետև կրկնվում էին այն պայմանները, որ նա նախորդ հաղորդումներում ասել էր դեսպանին։ Սոլսբերին վերջինիս հանձնարարում էր սուլթանի վրա ճնշում գործադրել՝ պայմաններն անհապաղ ընդունելու և 48 ժամվա ընթացքում պատասխան տալու համար։ Դեսպանը պետք է հասկացներ Համիդին, որ «ներկա պատեհությունը եթե կորցվի, ապա երբեք չի կրկնվի», որ մերժելու դեպքում «բանակցություններն անմիջապես կընդհատվեն, և Կ. Պոլսի զավթումն ու կայսրության բաժան-բաժան անելը կլինեն դրա անմիջական արդյունքը» (214, էջ 75)։ Անգլիական դիվանագիտությունն ընտրել էր ճիշտ պահը և վախեցնելու խորամանկ լեզու էր բանեցնում։ Սուլթանը դրական պատասխան տվեց առաջարկված պայմաններին մայիսի 25-ին։ Լայարդը գոհ էր իր ջանքերի արդյունքներից։ Մայիսի 30-ին նա հրահանգ ստացավ արագացնել բաղձալի համաձայնագրի կնքումը։

Ուշադրության արժանի է այս հրահանգի այն հարցադրումը, թե Բրիտանական կայսրությանը պետք էր միայն «ձևականորեն հավաստիացնել Բ. Դոան մտադրության մասին անհրաժեշտ ռեֆորմներ իրականացնելու քրիստոնյաների համար»։ Ընդ որում ցանկալի էր համարվում այդ բանն անել ոչ ավելի, քան անորոշ, ընդհանուր պարտավորությամբ, մանրամասները թողնելով հետագա բանակցություններին (214, էջ 76)։

Այսպիսով, անգլո-ռուսական հուշագրի ստորագրումից մոտ մի շաբաթ անց՝ կնքվեց անգլո-թուրքական կոնվենցիան, որն ստորագրել էին մեծ վեզիր Սաֆվետ փաշան և Լայարդը։ Մի նոր Ջիբրալթար ավելացավ Բրիտանական կայսրությանը, և Բիքոնսֆիլդի իմպերիալիստական ձգտումներից մեկն էլ իրականացավ։ Սուլթանը հավատացել էր, թե Անգլիան օժանդակելու էր իրեն ոչ միայն Էրզրումը, այլև Կարսն ու Բաթումը վերստանալու գործում։ Իսկ երբ անգլիական մի կաշառված պաշտոնյայի միջոցով մայիսի 31-ին Լոնդոնի «Գլոբ» թերթի էջերում լույս աշխարհ հանվեց հրապարակման չենթակա անգլո-ռուսական համաձայնության տեքստը, Լայարդն սկսեց սուլթանին համոզել, թե Բաթումը Ռուսաստանին չտրվելու դեպքում ռուսական զինված ուժերն ավելի կմխրճվեին Փոքր Ասիայի խորքը։ Նա ապացուցում էր, թե մեծ բան չէր Բաթումի՝ ռազմական տեսակետից այդ թույլ կետի կորուստը։ Լայարդն անհրաժեշտ էր համարում համակերպվել ստեղծված դրությանը, նոր ամրոցներ կառուցել Ռուսաստանի դեմ ապագայում հաջող պայքար մղելու համար (141, էջ 502)։

Անգլո-ռուսական համաձայնագրի քննադատությամբ հանդես եկավ «Թայմս»-ը։ Այդ թերթի Բեռլինի թղթակիցը, 1878 թվականի հունիսի 17-ին շարադրելով հայերի պահանջներն ինքնավարության մասին (նոր նահանգ Կարինի,

վանի կուսակալությունների, Դիարբեքիրի մի մասի հիման վրա, հայ նահանգապետով, զինվորականությամբ, ոստիկանությամբ), շեշտում էր այն միտքը, թե այդպիսի Հայաստանը մի ուժեղ պատնեշ նծառայեր Ռուսաստանի առաջխաղացման ճանապարհին, և Անգլիայի պատվիրակներին կոչ էր անում պաշտպանել հայերի օրինավոր բաղձանքները։ Այդպիսի հարցադրումն իրականում արտահայտությունն էր այն դժգոհության, որ Անգլիան իբր զիջումներ էր արել Ռուսաստանին, նրան թողնելով հայկական տերիտորիաները։ Ըստ էության, անգլիական քաղաքականության մեջ շեղում էր դիտվում այն նախնական դիրքորոշումից, երբ Լոնդոնի ղեկավարները, Համիդի հետ միասին իրենց հովանու տակ ինքնավար Հայաստանի գաղափարն արծարծելով, ձգտում էին Ռուսաստանին չթողնել ոչ միայն Էրզրումն ու Բայազետը, այլև Բաթումը, Կարսն ու Արդահանը.

Անգլիայի հետ համաձայնություն կայացնելուց հետո ռուսական կառավարությունը նորից դիմեց Բիսմարկին կոնգրեսը հրավիրելու հարցով։ Ցարական արքունիքը մեծ հույսեր էր կապում նրա բարյացակամության հետ։ Մանավանդ լավատես էր կանգնել Գորչակովը։ Նա հպարտանում էր, որ վաթսունական թվականներին մի զրույցի ժամանակ Բիսմարկն իրեն նրա աշակերտն էր համարել։ Գորչակովը շտապել էր պատասխանել, թե հնարավոր էր, որ Բիսմարկն իրեն վերաբերվում էր այնպես, ինչպես Ռաֆայելը Պերուջինոյին (102, էջ 309)։ Գորչակովը գտնում էր, որ Բիսմարկը երախտամոռ չէր լինի ֆրանս-գերմանական պատերազմի ժամանակ Ռուսաստանի չեզոքության, գերմանական պետության կազմավորման գործում Պետերբուրգի դիրքի և այլնի համար։ Գորչակովն անտեսում էր այն էական տեղաշարժերը, որ կատարվել էին Եվրոպայում, այն նոր դերը, որ նվաճում էր բիսմարկյան Գերմանիան եվրոպական գործերում։

Բիսմարկը հավանություն տվեց Բեռլինում եվրոպական տերությունների կոնգրեսը գումարելուն։ Իսկապես որ մակլերի դեր ստանձնեց, բայց արդյո՞ք ազնիվ։

1878 թվականի մայիսից պայմանավորվածություն ունենալով ռուսական կառավարության հետ և հաստատ համոզված լինելով, որ նա նոր պատերազմ վարելու ոչ մի հնարավորություն ու մտադրություն չուներ, Բիքոնսֆիլդն ու Սոլսբերին խորամանկորեն խաբեցին սուլթանի կառավարությանը, նրան սպառնալով Ռուսաստանի կողմից նոր պատերազմով և 1878 թվականի հունիսի 4-ին կորզեցին Կիպրոսի մասին կոնվենցիան՝ «Պաշտպանողական դաշնակցություն Անգլիայի և Թուրքիայի միջև» (45, էջ 104—105)։ Սա անգլիական դիվանագիտության բացահայտ հաղթանակն էր։

Անգլո-թուրքական այդ համաձայնագրի ստեղծման հանգամանքները վառ ապացույցն էին մաքիավելական այն մեթոդների, որ գործադրում էր անգլիական դիվանագիտությունը Մեծ Բրիտանիայի իմպերիալիստական վերընթացի տարիներին։ Դիվանագիտական այդ հաջողությունը խաբեության, խորամանկ կոմբինացիաների արգասիք էր և իր սուր ծայրով ուղղված էր, նախ, Ռուսաստանի, դրանով իսկ հայ ժողովրդի կենսական շահերի դեմ, ինչպես նաև Օսմանյան կայսրության ամբողջականության դեմ՝ հօգուտ անգլիական գաղութատիրության ընդարձակման։

Դիվանագիտական այդ ակտով անգլիական իմպերիալիստները զավթեցին Կիպրոսը՝ իրենց ազդեցությունը տարածելով Միջերկրականի ավազանի արևելյան մասում։ Անհրաժեշտ է հիշել, որ դա ոչ թե պատահական դիպվածի, այլ երկարամյա, հետևողական էքսպանսիոնիստական քաղաքականության արդյունք էր։ Ռուս-թուրքական պատերազմը հրահրելով, Անգլիան Միջերկրականի արևելյան մասում ռազմածովային հենակետ էր փնտրում։ Կիպրոսի հարցը Բեռլինի կոնգրեսի նախօրեին չէր, որ առաջ եկավ։ Այն անգլիական դիվանագիտության քուրայում մշակվել էր նախօրոք, ամենայն հետևողականությամբ։

Լայարդն ամեն ինչ անում էր, որպեսզի Կարաթեոդորին (այդ կրթված և բանիմաց հույնը, որը ծառայում էր սուլթանին) չխանգարեր իրեն անգլո-թուրքական պայմանների մեջ Միտիլինա կղզին Անգլիային հանձնելու մասին կետ մուծելուն։ Գործարքին մասնակցեցին Համիդը, Լայարդը և Սաֆվետը։ Վերջինս անգլիացիներից մեծ կաշառք էր ստացել։ Հունաստանում իմացան Միտիլինան Անգլիային հանձնելու

նախագծի մասին և 400 զինված հույների արագ տեղափոխեցին այդ կղզին։ Բիքոնսֆիլդն անհանգստացավ. նա մտադրություն չուներ բորբոքել Հունաստանին։ Բ. Դուրը համառում էր Թենեդոս կղզին Անգլիային հանձնելու գործում։ Որոշեցին Միտիլինա կղզին փոխել Կիպրոսով. Թուրքիան լրացուցիչ վարձատրություն պահանջեց։ Անգլիացիները Մալթայից զորք տեղափոխելու մասին հրաման արձակեցին, իսկ զրահանավերն ուղարկվեցին Կիպրոսի ափերը՝ կանխելու համար Միտիլինայի հետ կրկնված պատմությունը (141, էջ 507—508)։

Ռուս հեղինակ Կ. Սկալկովսկին նշում է, որ լորդ Բիքոնսֆիլդը հեշտությամբ շրջանցել էր Լոնդոնում ռուսական դեսպան Շուվալովին, և վերջինս չէր էլ կասկածել, թե կնքված էր անգլո-թուրքական համաձայնագիր Կիպրոսը Անգլիային զիջելու և Փոքր Ասիայի վրա անգլիական պրոտեկտորատ հաստատելու մասին (159, էջ 226)։

Անգլիական պետական գործիչների, պատմագիտության և մամուլի հարյուրամյա փարիսեցիությունն այն մասին, թե Կիպրոսը Մեծ Բրիտանիային պետք էր Հնդկաստանի մատույցները պաշտպանելու համար, բացահայտ խաբեություն է։ Այդ զավթման առաջնահերթ խնդիրն էր՝ նպաստավոր պայմաններ ապահովել Օսմանյան կայսրության ասիական տիրույթների վրա անգլիական տիրապետությունը հաստատելու, Եգիպտոսում ամրանալու համար։ Իսկ ինչ վերաբերում էր Հնդկաստանի մատույցները պաշտպանելու մասին խոսակցություններին, ապա դրանք Ասիայում կատարված բրիտանական բոլոր գաղութատիրական զավթումների մշտական ուղեկիցներն էին։ Լորդ Քերզոնը չափազանց անսքող է գրել. «Չլիներ Հնդկաստանը, լորդ Բիքոնսֆիլդը չէր կարողանա գնել Սուեզի ջրանցքի բաժնետոմսերը, չլիներ Սուեզի ջրանցքը, մենք այժմ չէինք լինի Եգիպտոսում, չլիներ Հնդկաստանը... մենք չէինք թեակոխի Աֆրիկայում տիրույթներն ընդլայնելու ուղին... Հնդկաստանը զրդեց մեզ զավթելու Ադենը և պրոտեկտորատ հաստատելու հարևան մարզերի վրա Արաբիայում...» և այլն (172, էջ 17)։

1878 թվականի հունիսի 4-ի կոնվենցիայով Անգլիան հանդես էր գալիս Թուրքիայի դաշնակցի, սուլթանի ասիական տիրույթների պաշտպանի դերում։ Փաստաթղթում Հայաստանը որպես առանձին միավոր, երկրամաս չէր հիշատակվում, իսկ բարենորոգումների խնդիրն արծարծված էր ընդհանրապես Ասիական Թուրքիայի քրիստոնյաների առումով։ Համաձայնագրի առաջին հոդվածում արձանագրված էր. «Եթե Ռուսաստանն իր ձեռքում պահելով Բաթումը, Արդահանը, Կարսը կամ նրանցից մեկնումեկը, այսուհետև երբևիցե փորձ անի տիրելու Ասիայում նորին կայսերական մեծություն սուլթանի ունեցած այն երկրներից որևէ մի մասին, որը խաղաղության վերջնական դաշնագրով պիտի որոշվի, այն ժամանակ Անգլիան պարտավորվում է միանալ նորին կայսերական մեծություն սուլթանի հետ՝ զենքի ուժով այդ երկրները պաշտպանելու համար։ Ի փոխհատուցում, նորին կայսերական մեծություն սուլթանը խոստանում է Անգլիային՝ անհրաժեշտ բարենորոգումներ մըտցընել, որոնք հետո պիտի մանրամասնաբար որոշվեն երկու պետությունների միջև և որոնք նպատակ ունեն Բ. Դռան քրիստոնյա և այլ հպատակների բարվոք կառավարումն ու պաշտպանությունը խնդրո առարկա երկրներում, և որպեսզի Անգլիան իր պարտականությունը կատարելու համար հարկավոր եղած միջոցներն ապահովի, նորին կայսերական մեծություն սուլթանը հավանություն է տալիս նույնպես, որ Կիպրոս կղզին գրավվի և կառավարվի Անգլիայի կողմից» (45, էջ 104)։

Անգլո-թուրքական համաձայնագիրը հակասում էր Փարիզի տրակտատի 7-րդ կետին, ըստ որի՝ Բ. Դռան տերիտորիալ ամբողջականությունը եվրոպական կոմպենսացիա էր հռչակված։ Կիպրոսի գրավումն այդ միջազգային համաձայնության կոպիտ խախտում էր նշանակում։ Իսկ Անգլիան, նույն փաստաթղթի վրա հենվելով, պահանջում էր վերանայել Սան-Ստեֆանոյի պայմանագիրը։ Նույնպիսի խախտում էր արևելյան Անատոլիայի վրա անգլիական պրոտեկտորատի հաստատումը։ Սա նույնպես 1856 թվականին համաեվրոպական իրավասությանը ենթակա խնդիր էր։

«Պայմանագիրը լույս աշխարհ եկավ որպես մի կատարյալ սյուրպրիզ»,— գրում է Մոլչանովը։ Նա հաղորդում է, որ ռուսական դեսպանությունը Կ. Պոլսում ժամանակին չէր

իմացել այդպիսի դաշինքի ռեալության մասին։ Շուվալովը, բանակցություններ վարելով Սոլսբերիի հետ, նույնպես անտեղյակ էր այդ ակտից (142, էջ 514—515)։

Երբ Անդրաշին իմացավ հունիսի 4-ի անգլո-թուրքական կոնվենցիայի մասին, Սոլսբերին թախանձագին խնդրում էր նրան՝ լեզուն փակ պահել և դժվարություններ չհարուցել։ Բիսմարկը նույնպես այդ մասին իմացավ, բայց լռեց, նրա հետ խոսել էր Բիքոնսֆիլդը (201, էջ 109)։

Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Վադինգտոնն էլ հանկարծակիի էր եկել Կիպրոսի հարցում, խոստովանելով, թե ինքն սպասում էր ավելի շուտ Միտիլինայի գրավումը (201, էջ 112)։ Մայիսի 9-ին ֆրանսիական ազգային ժողովում պատասխանելով Արևելյան հարցում Ֆրանսիայի քաղաքականության մասին արված հարցապնդմանը, Վադինգտոնը խուսափեց պարզել մանրամասները, բավարարվելով այն հայտարարությամբ, թե Ֆրանսիան ոչ մի պարտավորություն չի ստանձնել և վարելու է խաղաղասիրական քաղաքականություն (57, № 78, 1878)։

Մեծ Բրիտանիայի դիվանագիտական կարևոր գործողությունները պաշտպանած ֆրանսիական հանրապետական կուսակցության ղեկավարները ոչ միայն զարմացան, այլև զայրացան, որ հունիսի 4-ի կոնվենցիան կնքվել էր առանց իրենց գիտության, առանց հաշվի առնելու Ֆրանսիայի շահերը։ Սակայն այդ դժգոհությունը գործնական քայլերի չվերածվեց, մանավանդ որ անգլիական դիվանագետներն ամեն առիթով ընդգծում էին Ֆրանսիայի հետ Անգլիայի համերաշխությունը, նրա շահերը և շահագրգռվածությունն առաջավոր Ասիայում հարգելու պատրաստակամությունը (213, էջ 1144)։

Բ. Դոան հետ կայացած համաձայնությամբ Անգլիան իր վրա երկակի պարտականություն էր վերցնում՝ ռազմական, ըստ որի նա պետք է պաշտպաներ հայկական սահմանն ընդդեմ Ռուսաստանի, և քաղաքացիական, որը նրան իրավունք էր տալիս և պարտավորեցնում հետևել, որպեսզի այդ նահանգում ռեֆորմներ իրականացվեին։ Այդ կոնվենցիայի առաջին հոդվածով նախատեսվող ռեֆորմները պետք է Անգլիայի և Բ. Դոան միջև հատուկ համաձայնության առարկա հանդիսանային։ «Այդ ժամանակից սկսած,— գրում է Մելքոլմ Մակ-Կոլը,— Անգլիան ոչինչ չարեց իր հանդիսավոր պարտականությունը կատարելու համար, որ ստանձնել էր այդ կոնվենցիայի հիման վրա։ Մինչդեռ հայերի համար շարունակվում էր այն սարսափելի կյանքը, որ նկարագրում են հյուպատոսական հաղորդումները» (86, էջ 194)։ Փաստորեն Անգլիան պայմանավորվում էր զենքը ձեռքին պաշտպանել սուլթանի ասիական տիրույթները, եթե նրանց սպառնար Ռուսաստանը։ Սրա դիմաց սուլթանը խոստանում էր բարենորոգումներ անցկացնել իր ասիական տիրույթներում Անգլիայի հովանու ներքո և վերջինիս զիջել Կիպրոսը (165, էջ 509)։

Ստացվում էր այսպես. եթե Ռուսաստանն իր զորքերն ուղարկեր թուրքական տիրույթները՝ վերջ դնելու համար նոր թափով շարունակվող անօրինականություններին, սուլթանն իրավասու էր անգլո-թուրքական կոնվենցիայի հիման վրա դիմելու «քրիստոնյա» Անգլիային, իր զորքերն ուղարկելու այն բանի համար, որպեսզի «նրան հնարավորություն ապահովվեր անխոչընդոտ սպանելու և տանջելու քրիստոնյա հպատակներին»։ «Մենք որոշեցինք,— գրում է Մակ-Կոլը,— պահել Կիպրոսը և պաշտպանել սուլթանի տիրույթները Փոքր Ասիայում, քանի դեռ Ռուսաստանը չէր վերադարձրել Կարսը և Բաթումը...» (86, էջ 194)։

Այսպիսով, 1878 թվականի հունիսի 4-ի անգլո-թուրքական համաձայնագրով Անգլիան ստացավ ոչ միայն Կիպրոսը, այլև իրավունք՝ հսկողություն սահմանելու Ասիական Թուրքիայի վրա։ Անգլիական սպաներին հնարավորություն ընձեռվեց թափանցել Թուրքիայի խորքերը, իսկ ռազմական նավերին՝ մուտք գործել Միջերկրական ծովի նավահանգիստները։ Անգլիական պառլամենտի անդամ Կարլայլ Մակ-Կոանը հրատարակեց «Մեր նոր պրոտեկտորատը» գիրքը, որտեղ Փոքր Ասիան համարում էր «մի տերիտորիա, որը 1878 թ. հունիսի 4-ի կոնվենցիայով նախատեսված է որպես անգլիական պրոտեկտորատ և շատ հավանական է նաև մեր կառավարման համար» (122, հ. 1, էջ 134)։

Թեև համաձայնագիրը կնքված էր, բայց Բ. Դուռը չէր շտապում դրան իրավական ուժ տալ։ Սուլթանը տակավին

չէր սթափվել անգլիական դիվանագիտության մանվածապատ խաղերի հետևանքով ստացած հարվածներից։ Իսկ անգլիական կառավարությունն շտապում էր համաեվրոպական կոնգրես ներկայանալ վահանավորված, իրավական ուժ ստացած պաշտոնական փաստաթղթերով։ Ահա թե ինչու, նպատակին հասնելու համար, նա դիմում էր նոր խորամանկություններին։ 1878 թվականի հունիսի 4-ին Սոլսբերին Բեռլինից հեռագրում էր Կ. Պոլիս, դեսպան Լայարդին, պահանջելով իրազեկ պահել Բ. Դոանը, որ Բիսմարկն արդեն ծրագիր է մշակել Էպիրոսը, Թեսալիան և Կրետեն Հունաստանին հանձնելու մասին, որ այդ պլանը քննարկումից հանվել է միայն Անգլիայի ջանքերի շնորհիվ։ Սոլսբերին պահանջում էր անհապաղ ֆերման հրապարակել Կիպրոսը Անգլիային հանձնելու մասին, այլապես, գրում էր նա, ինքը չէր կարողանա խոչընդոտել Բիսմարկի պլանի իրականացմանը (195, էջ 98)։ Սա բացահայտ առևտուր էր, բանսարկություն հանուն դաղութային նոր զավթումների։ Դրանից տուժում էին ճնշված ժողովուրդները, այդ թվում հայերը, որոնք գրկվում էին Ռուսաստանի հովանու տակ Ալաշկերտի հովիտը, Բայազետը պահելու և անհամեմատ ապահով կյանք ստեղծելու հնարավորությունից։

Ըստ էության, Անգլիան Թուրքիային վերջնագիր տվեց։ Բ. Դուրը հունիսի 4-ին ստիպված էր ստորագրել Կիպրոսի կոնվենցիան։ Այնուամենայնիվ, սուլթանը հրաժարվեց ֆերման հրապարակել Կիպրոսը Անգլիային հանձնելու մասին։ Բիքոնսֆիլդը հրամայեց օկուպացնել կղզին առանց սուլթանական ֆերմանի (132, էջ 129)։

Այժմ արդեն Անգլիան պատրաստ էր մասնակցելու համաեվրոպական կոնգրեսին։ Անգլո-Թուրքական համաձայնագրի կապակցությամբ անգլիական կառավարության ղեկավարը, ուժ տալով դեմագոգիային, ճամարտակում էր. «Թուրքական սուլթանը վերջապես կարող է հանգիստ ձեռնամուխ լինել իր պետության վերածնության գործին, իմանալով, որ որևէ վտանգի դեպքում նա կարող է հույս դնել դաշնակցի (Անգլիայի) օգնության վրա, որը, ինչպես ասում են, գտնվում է այստեղ, ձեռքի տակ»։ Անգլիան հանդես էր գալիս Օսմանյան կայսրության ռազմական դաշնակցի դերում՝ ընդդեմ Ռուսաստանի։

Պատահական չէ, որ դիվանագիտության պատմությանը նվիրված արևմտաեվրոպական մասնագետների ուսումնասիրություններում բրիտանական դիվանագետների հաջողությունը գնահատվում է որպես «բոլոր ժամանակների գլուխգործոց»։ Ինչպես նկատում է ակադեմիկոս Ֆ. Ա. Ռոտշտեյնը, Բիքոնսֆիլդի կառավարությանը հաջողվեց ապահովել «Թուրքական կայսրության գոյությունը, որտեղ այնքան շատ անգլիական կապիտալներ էին ներդրված, ավելացրեց Բրիտանիայի տիրույթների թիվը— այս ամենը առանց թեկուզ մեկ կրակոցի, ոչ այնքան թանկ նստած թատերական ցույցի միջոցով» (152, էջ 30)։

Այսպիսով, դեռևս կոնգրեսի բացումից երկու շաբաթ առաջ, անգլիական դիվանագիտությունը մեկը մյուսի հետևից հավաքում էր իր խորամանկ խաղերի պտուղները՝ մայիսի 30-ի անգլո-ռուսական համաձայնագիրը, հունիսի 4-ի անգլո-թուրքական կոնվենցիան և հունիսի 6-ի անգլո-ավստրիական համաձայնագիրը։ Անգլիական դիվանագիտության այս հաջողությունների համար է, որ արևմտաեվրոպական պատմագրության մեջ գովասանքներ են շռայլում Բիքոնսֆիլդի՝ «հանճարեղ ավանտյուրիստի», հասցեին, նրան նույնիսկ դասում «պատմության առասպելների» շարքը (217, էջ VIII)։

Թե՛ անգլո-ռուսական համաձայնագիրը, թե՛ անգլո-թուրքական կոնվենցիան ուղղակիորեն վերաբերում էին նաև հայկական հարցին։ Ըստ էության, առաջին փաստաթղթով Անգլիան արդեն իր մասնակցությունն էր ապահովել 16-րդ հոդվածի իրագործման մեջ։ Երկու ախոյաններ, պարզ է, միատեսակ չէին մտածելու ու գործելու։ Երկրորդ՝ դիվանագիտական հաջողությամբ Անգլիան, առանց Ռուսաստանի մասնակցության, Փոքր Ասիայում միայնակ գործելու իրավունք էր նվաճում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայման եվրոպական պահանջը հայերի ընկալմամբ: Անգլիական դիվանագիտության նրբին խաղերը: Թուրքական կառավարության խորամանկ դիրքորոշումը: Խրիմյանի պատվիրակությունը Հռոմում, Փարիզում, Լոնդոնում: Լոնդոնի և Մանչեստրի հայկական գաղութի ակտիվությունը: Անգլիական հասարակական գործիչները, մամուլի օրգանները կառավարության որդեգրած քաղաքական գծի ծառայության մեջ: «Եվրոպայի անտարբերությունը մեզ համար հուսահատեցուցիչ էր»,— գրում էր Կ. Պոլսի «Մասիս» թերթը:— Նար-Պեյը Պետերբուրգում. հանդիպումներ ռուսական պետական գործիչների հետ:— Նար-Պեյը և Լուսինյանները:

Այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը քննարկման էր դրվելու եվրոպական տերությունների կոնգրեսում, Կ. Պոլսի հայկական վերնախավի ղեկավար կորիզն անմիջապես նախաձեռնեց եվրոպական կառավարություններին դիմելու գործը: Այդ բանին խթանեցին մի քանի գործոններ՝ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի բովանդակությունն ու երաշխիքներն անբավարար էին նկատվում, հայկական ինքնավարության գաղափարն իրականանալի բան էր ներկայանում: Այս

մտայնության խորացմանը խորամանկորեն նպաստում էին անգլիական դիվանագետները, թուրքական պաշտոնատար անձինք, մասնավորապես՝ սահմանադրականները:

Քննարկվող խնդիրների շուրջ «Նոր կյանք» պարբերականում մի շարք հոդվածներ հրապարակած Արփիար Արփիարյանը գրել է, որ «Հայ ազգության ապագան անվթար պահպանել փափագող մեր քաղաքագետները բնականաբար պիտի ցանկանային բարեփոխված տեսնել Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը»: Այս նպատակով էլ «Օտյանի խումբն այդ ապագային փրկությանը համար ինքնավար Հայաստանի մը հիմնարկությունը ծրագրեց»: Այնուհետև նա եզրակացնում է, որ այս միջոցով «միայն Անգլիա ջնջեց 16-րդ հոդվածը» (62, № 6, 1899, էջ 82):

Այս խնդրի մասին դեպքերի ականատես, Կ. Պոլսում Պետերբուրգի «Նովոյե վրեմյա» թերթի թղթակից Մոլչանովն անում է ուշագրավ դատողություններ: Նա գրում է. «...հայերը, որ մինչև հիմա քիչ էին տարվում իրենց ազգության իրավունքների վերականգնման խնդրով, այժմ բացահայտ ասում են, որ Անգլիան կտիպի և՛ Ռուսաստանին, և՛ Թուրքիային ճանաչելու Հայաստանի ինքնավարությունը» (141, էջ 25):

Մոլչանովը տարակուսում էր, որ հնարավոր լիներ իրականացնել Հայաստանի ինքնավարության գաղափարը, թեև նշում էր, որ «չպետք է տեսադաշտից հանել այն, որ Անգլիան ուղղակի շահ ունի ռուսական կովկասյան սահմանի վրա ստեղծելու չեզոք իշխանապետություն, որը սահմանդներ ռուսական առաջխաղացմանը» (145, էջ 25): Ահավասիկ, այսպիսի հնարավորությունն իրականություն դարձնելու նկատառումով սկսեցին գործել Կ. Պոլսի հայկական ղեկավար շրջանները: 16-րդ հոդվածը «մի սկիզբ էր, և պետք էր նրա հետևանքն ընդարձակելու վրա աշխատել՝ որչափ կարելի էր»,— գրում էր Կ. Պոլսի հայկական վերնախավի ձայնափող «Մասիս» թերթը (53, № 2145, 1878):

Եվրոպային դիմելու և պատվիրակություն ուղարկելու գլխավոր նպատակն այն էր, որպեսզի առաջին անգամ պաշտոնապես և հանդիսավոր կերպով Եվրոպային ներկայացվեին հայ ազգի ցանկություններն ու ձգտումները (213,

էջ 1122)։ Իր հիմքում սա ազգի ինքնաճանաչման, համախմբման և կազմավորման վերջնթաց պրոցեսի արտահայտություն էր, բուրժուական առաջադիմական զարգացման ակնհայտ դրսևորում։ Այս պրոցեսը ղեկավարելուն, նրան ուղղություն տալուն հավակնող մարդիկ՝ մի մասը սքեմավոր, մի մասը թուրքական պետական ծառայության մեջ գտնված ու կաշկանդված, այնուամենայնիվ, մի միտք էին փայփայում՝ հայրենիքի գաղափարը։ Տակավին թույլ էին, չհամախմբված այն ուժերը, որոնք պետք է ազգային-ազատագրական մի հզոր հորձանուտի մեջ միավորված՝ գրոհեին և խորտակեին թուրքական դժնի տիրապետության կապանքները։ Այդ մարդիկ արդարություն և պաշտպանություն էին ակնկալում արտաքին ուժերից, տենչում բալկանյան ժողովուրդների օրինակով, ռուսական օգնության միջոցով հասնել իրենց նպատակների իրագործմանը։ Դեռևս ամբողջ խորությամբ չէր ըմբռնված միջպետական մրցակցության այն բացասական դերը, որ արտաքին ուժերը խաղալու էին հայկական հարցի արծարծման հետագա ընթացքում։

Վ. Ի. Լենինը մի առիթով նկատել է, որ «պատմական ծառայությունների մասին դատում են ոչ թե նրանով, թե ինչ շեն տվել պատմական գործիչները ժամանակակից պահանջների համեմատությամբ, այլ նրանով, թե նրանք ինչ նոր բան են տվել իրենց նախորդների համեմատությամբ» (2, հ. 2, էջ 225)։ Կարևորն այն է, որ դեպքերն ու մարդկանց գործերը տեսնել, լուսաբանել և քննարկել տվյալ ժամանակի մեջ, պատմական զարգացման տվյալ պայմանների, հնարավորությունների շրջանակներում, այսինքն՝ չոտնահարել պատմականության գիտական մեթոդը։ Իսկ նորն այն էր, որ դրվում էին ազգի քաղաքական ինքնաճանաչման, հայրենիք ստեղծելու, նրա բախտը սեփական ուժերով տնօրինելու հիմքերը։ Նորն այն էր, որ փորձ էր արվում քաղաքականապես ճանաչվելու արտաքին ուժերի, արտաքին աշխարհի կողմից։ Միևնույն խնդիրների արծարծման, միևնույն նպատակների իրագործման ասպարեզում, ինչ խոսք, առկա էին տարբեր մոտեցումներ, դասակարգային շահեր, հակասություններ, հատվածայնության հետ կապված խնդիրներ, որոնք պայմանավորված էին հայ ժողովրդի պատմական

ճակատագրով, տարբեր պետական իշխանությունների տակ գտնվելու հանգամանքով, ժողովրդի տարբեր հատվածների սոցիալ-տնտեսական, կուլտուր-քաղաքական զարգացման պայմանների տարբերություններով, աշխարհագրական դիրքով և այլ հանգամանքներով։

Այնուամենայնիվ, օտարերկրյա տիրապետությունից ազատագրվելու, թուրքական վայրենաբարո ֆեոդալիզմի դեմ պայքարի այդ պահին հայկական բուրժուական շրջանները փորձում էին հանդես գալ ամբողջ ազգի անունից։ Նրա գաղափարախոսությունը նախ և առաջ կապված էր ազգի, ազգային բուրժուական պետության ստեղծման գաղափարների հետ։ Նրա ներկայացուցիչների առաջին քայլերը, գործողություններն արտաքին-քաղաքական, դիվանագիտական մարզում նույնպես կատարվում էին ամբողջ ժողովրդի անունից, երբ հայրենասիրության հողի վրա ստեղծվել էր շահերի որոշակի մերձեցում։

Անտարակույս, արևմտահայ, ավելի ճիշտ՝ պոլսահայ ղեկավարների գործողությունները թելադրված էին արևմտահայ բուրժուազիայի զարգացող ու հասունացող տրամադրություններով ու մտադրություններով։ Դրանք դեռևս վերջնականապես չձևավորված և որոշակի տեսք չընդունած ձգտումներ էին։ Տակավին հեղհեղուկ էին ազգային բուրժուազիայի և նրա մտավորական ձայնափողերի քաղաքական ծրագրերը։ Սրանք ավելի հակասական էին դառնում այն օբյեկտիվ պայմանների հետևանքով, երբ ռուսահայ բուրժուական ու հասարակական մյուս ուժերը և արևմտահայկականը տարբեր դիրքերից էին մոտենում ազգային ազատագրության, հայրենիք ստեղծելու խնդիրներին։ Սա ոչ միայն տարբեր պետությունների ենթակա լինելու արգասիքն էր, այլև տարբեր սոցիալ-քաղաքական, կուլտուր-տնտեսական միջավայրի արդյունք։ Իսկ եթե չանտեսենք այն հանգամանքը, թե որքան ահռելի էր անդունդը բուն Արևմտյան Հայաստանի սոցիալ-քաղաքական պայմանների, գավառահայ գյուղացիության, աշխատավորների, մանրբուրժուական, առևտրական խավերի և Կ. Պոլսի միանգամայն այլ պայմաններում մտածող ու գործող մեծահարուստ դասակարգի միջև, ապա պարզ կդառնա, թե որքա՜ն բարդ պայմաններում էր ընթա-

նում հայկական բուրժուական ազգի ինքնահաստատման, լինելության պրոցեսը, որքա՜ն հակասական, իրարամերժ, ոչ հետևողական էին լինելու բուրժուական հայրենիք ստեղծելու շուրջ երկու հատվածների՝ հայ հասարակական-քաղաքական հոսանքների և ուժերի մտածելակերպն ու գործողությունները։

Ռուս-թուրքական պատերազմի ավարտին թուրքական պետականության կենտրոնում՝ Կ. Պոլսում, ծվարած հայկական առևտրաբուրժուական վերնախավը, մտավորականությունը, եթե ոչ ամբողջովին, գիտակցում էին Ռուսաստանի ռեալ դերը հայկական հողերի ապագան որոշելու, արևելյան բոնատիրական կարգերի հետամնացության ու բարբարոսության ճիրաններից ժողովուրդը փրկելու գործում։ Բայց նրանք քիչ էին կապված մայր հողի հետ, հեռացել, օտարացել էին, կտրվել բուն երկրի միջավայրից ու պայմաններից, իսկ ցանկության դեպքում չէին էլ համարձակվում սուլթանների որջում օրը ցերեկով բացահայտորեն հանդես գալ օսմանյան պետության թշնամի տերության՝ Ռուսաստանին, փարվելու, նրա միջոցով թուրքական կայսրությունից անջատվելու օգտին։ Հնարավոր չէր հազարավոր կիլոմետրերի հեռավորությունից ճիշտ ուղղություն և ղեկավարություն իրագործել արևմտահայ ժողովրդական զանգվածների ազատագրական ձգտումներին, գործնականում հաջողությամբ իրականացնել հայրենիք ստեղծելու գաղափարը։

Ինչի՞ էր հանգում 1878 թվականի գարնանը պոլսահայ ղեկավար կորիզի դիվանագիտական առաքելության իմաստը։

Ներսեսի կարծիքով, Ռուսաստանին երախտագետ լինելով, պետք էր ապահովել Անգլիայի բարյացակամությունը, Եվրոպայի միջամտությամբ իրականացնել ազգային ինքնավարության գաղափարը։ Հայաստանի ինքնավարություն՝ հայերի համար։ Ահա նրա ֆորմուլան։

Սա չափազանց դժվարին խնդիր էր, քանի որ հայ գատի օգտին ապահովել միաժամանակ և՛ Ռուսաստանի, և՛ Անգլիայի բարյացակամությունը անհնարին էր։ Անգլիական դիվանագետները, գաղութատիրական շրջանները հայերին հիշում, նրանց մասին խոսում էին միմիայն Ռուսաստանի պլան-

ները ձախողելու, նրա ակտիվությունը շրջափակելու, առաջխաղացումը դեպի Առաջավոր Ասիա կանխելու համար։

Որդեգրված ուղեգիծը կենսագործելու նպատակով որոշվեց մի պատվիրակություն ուղարկել Եվրոպա։ Նրա գլուխ կարգվեց Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմյանը։ «Թիֆլիսկի վեստնիկ» թերթը Խրիմյանի մասին գրում էր. «Նախ և առաջ նա ժողովրդի որդի է։ Նրա ձեռք բերած ժողովրդականությունն օգնեց նրան հոգևորական բարձր աստիճանին՝ պատրիարքության հասնելու։ Նա նշանավոր է որպես գրող. նրա գրքերը շատ տարածված են թուրքահայերի մեջ։ Թուրքահայաստանի երկրագործ դասը նրան ուրիշ կերպ չի անվանում, բայց եթե հայրիկ» (57, № 87, 1878)։ Այնուհետև գրվում էր, թե «Ներսեսը հարուստների և կրթված դասակարգերի քարոզիչ է», իսկ Խրիմյանը «ժողովրդական քարոզիչ է անկիրթ և աղքատ դասերի»։

Խրիմյանը հայկական պատվիրակության ղեկավար նշանակվեց Գրիգոր Օտյանի խորհրդով։ Ճիշտ է, նա եվրոպական ոչ մի լեզու չգիտեր և այն հարցին, թե ինչ լեզվով պիտի կատարեր իր պաշտոնը, նա պատասխանեց՝ լացով ու տառապանքի լեզվով, բայց քաջատեղյակ էր Արևմտյան Հայաստանի ներքին վիճակին, եղել էր պատրիարք, իր դիրքով ու դեմքով ազդեցիկ էր, տպավորություն թողնող անձնավորություն։

Պատվիրակության քարտուղար և թարգման նշանակվեց Մինաս Չերազը, որն անփորձ, քսան տարեկան երիտասարդ էր։ Նա թեև գիտեր ֆրանսերեն, բայց ուսուցչությունից բացի ոչ մի գործ չէր կատարել։ Մինաս Չերազը խոստովանել է, որ ինքը դիվանագիտական այդ պաշտոնին հարմար թեկնածու չէր։ Նրա կարծիքով, ամենահարմարը Գրիգոր Օտյանն էր, որը, սակայն, չուզեց իր «ապագան խորտակել», մասնակցելով «հակաթուրքական ձեռնարկի» (5)։ Սա նույնպես բնորոշ նրբերանգ էր Կ. Պոլսի էֆենդիական վերնախավի ներկայացուցչի համար։

Ահա այսպիսին էին հայ առաջին դիվանագետները, որոնք ասպարեզ էին իջնում եվրոպական և թուրքական դիվանագիտության քուրայում թրծված փորձառու մարդկանց մոտ պաշտպանելու հայոց ազգային դատը։ Ավելի ուշ Բեռլինում

Նրանց միացավ Ստեփան Փափազյանը, որը լիազոր ներկայացուցիչ էր նշանակվել պատվիրակության վրա հսկելու, որպեսզի նա չհեռանար Ներսես պատրիարքի նշած ուղեգծից։ Ռուսական կառավարությանը հայկական ինքնավարության ծրագիրը ներկայացնելու համար պատվիրակ նշանակվեց Բեշիքթաշի արքեպիսկոպոս Խորեն Նար-Պեյը։

«Թիֆլիսսկի վեդոմոստի»-ն գրել էր, որ Ներսեսը «քաղաքագիտական ընդունակություններ ունի, որոնք մանավանդ նրա հոտի ներկա թշվառ դրության ժամանակ երևեցան»։ Հիշատակելով, որ նրա բողոքների հիման վրա հայկական նահանգներում հարստահարությունների մասին իրազեկ դարձան Անգլիայում ու Ֆրանսիայում, թերթն ընդգծում էր հայոց պատրիարքի «հնարագիտությունը և այն կախարդանքը», որ նա ուներ «Թուրքաց կառավարության առաջ» և «կարողացավ քնացնել նրա կասկածները» (57, № 89, 1878)։

Այսպիսով, դիվանագիտության ոլորտում, տերությունների մայրաքաղաքներում հայոց հարցի հարուցումն ու պաշտպանությունն ստանձնեցին հայ ընթերցողին քաջածանոթ Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջեր» շարքի պոլսահայ գործիչներից մի քանիսը։

Գր. Արծրունին ողջունում էր դիվանագիտության մարզում կատարվող քայլերը, գրում էր, թե «Թուրքիայի հայոց հոգևորականությունն արժանի է դառնում ամբողջ ազգի խորին համակրության։ Այո՛, երբ Ներսես պատրիարքը շողոքորթում էր Թուրքաց տերությանը, անհոգ էր ժողովրդի կարիքների մասին, զոհում էր ազգի շահերն իր անձնական շահերի համար,— մենք նրա վրա անխնա կերպով հարձակվում էինք։ Այժմ մենք չենք կարող չհայտնել նրան մեր կատարյալ համակրությունը, մեր հարգանքը...»։ Նա նշում էր, որ «այժմ մենք չունենք իշխաններ, բայց ունենք աշխարհական ինտելիգենցիա»։ Նա գտնում էր, որ «մեր արդի հոգևորականությունը» «թող նրանց հետ ձեռք-ձեռքի տված, մոռանալով իր նեղ, սահմանափակ կաստային շահերը» «գործե հօգուտ ազգի առաջադիմության, և այն ժամանակ կարելի է հուսալ ազգի բախտավոր ապագայի համար» (57, № 110, 1878)։

Ի՞նչ էր իրենից ներկայացնում եվրոպական տերություններին և Ռուսաստանին ներկայացվող հայկական ծրագիր-խնդրագիրը։ Նրա բովանդակությունը հիմնականում հանգում էր հետևյալին.

Հայ գավառների գլուխ պետք է կարգվեր քրիստոնյա կառավարիչ, նախընտրաբար հայ, հինգ տարվա պաշտոնավարությամբ, որը կարող էր պաշտոնանկ արվել տերությունների հավանությամբ։ Նա օժտված էր լինելու գործադիր իշխանության իրավունքներով։ Նահանգապետի նստավայր նախատեսվում էր Էրզրումը (Կարին)։ Ոստիկանների թիվը պետք է հարաբերականորեն համապատասխաներ թուրք և հայ բնակչության թվին։ Հանրային պաշտոնյաները նշանակվելու էին նոր ստեղծվելիք ընդհանուր ժողովի միջոցով։ Հողային հարկը փոխարինելու էր տասանորդին (աշար)։ Հարկահանությունից ստացվող եկամտի 20 տոկոսը ստանալու էր ֆինանսների մինիստրությունը, մնացյալը պետք է հատկացվեր ճանապարհաշինության, լուսավորության, առողջապահության և արհեստների զարգացման պետքերին։ Նախատեսվում էր դավանանքի ազատություն, դատական և վարչական գործերի մեջ մահմեդականների և քրիստոնյաների հավասարություն։ Ընդ որում մահմեդականների դատական գործն իրականացվելու էր նորից շերիաթի միջոցով, իսկ քրիստոնյաների համար կազմվելու էին քրեական և քաղաքացիական նոր օրենսգրքեր։

Վաչկատուն ցեղերի ասպատակություններից ընդհանուր և անհատական ապահովության նպատակով նախատեսվելու էր տեղական ոստիկանական ուժերի ստեղծում՝ եվրոպացի սպայի հրամանատարությամբ, որը ենթարկվելու էր ընդհանուր կուսակալին։ Վաչկատուն ցեղերը պետք է զինաթափվեին։ Մայրենի լեզուն գործածության մեջ էր դրվելու վարչական և դատական մարմիններում։ Ազգերը, հայտարարությունները, բացի Թուրքերենից, կատարվելու էին նաև հայերեն։ Այս բոլոր բարենորոգումները կիրառելու և հսկելու էր միջազգային հանձնախումբը (8, № 93, 1888)։

Ինչպես տեսնում ենք, ծրագրում Թուրքիայից անջատվելու խնդիր չէր առաջադրվում։ Ռուսական տիրապետությանն ամբողջովին ենթարկվելու հարցը վեհեր էր հառուցել։ Նրանց

պատկերացմամբ տերությունները պետք է օգնեին հայերի գոյության համար ապահովելու Թուրքական կառավարության երաշխավորված պաշտպանությունը։ Այդ ծրագիրը հանգելու էր պետությունների վերահսկողության ներքո վարչական ինքնավարության հաստատմանը հայկական մարզերում, մի ձև, որն արդեն կիրառվել էր Լիբանանում և տվել դրական արդյունքներ։

Բացի ինքնավարության ծրագրի նախագծից, պատրաստվել էր մի հուշագիր, որտեղ բացատրություններ էին տրվում և մեկնաբանություններ արվում ծրագրի դրույթների մասին։ Բանն այն է, որ այդ պահանջները չէին հանգում ո՛չ Թուրքահայաստանի անկախությանը, ո՛չ հայկական նահանգների միացմանը Ռուսաստանին, այլ լոկ հայերի վիճակը բարելավելու բարենորոգումներին։

Դա բուրժուական կիսատ-պռատ ռեֆորմների մի ծրագիր էր, որն իրականացվելու էր միջազգային երաշխիքների կիրառումով և կոչված էր ապահովելու անվտանգ կյանքի պայմաններ Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում։ Ըստ էության, ծրագիրը կրկնությունն էր Բալկաններում ժամանակ առ ժամանակ տարբեր ձևերով կիրառված բարենորոգումների, որոնք աստիճանաբար սլավոնական ժողովուրդներին ապահովեցին ինքնավարություն, ապա նաև՝ ինքնուրույնություն և անկախություն Թուրքական տիրապետությունից։ Ինքնավարությունը տարածվելու էր գլխավորապես Էրզրումի և Վանի նահանգների վրա։

Այնուհետև հայերի հարստահարությունների մասին Կ. Պոլսի ազգային ժողովը պատրաստել էր մի տեղեկագիր, որն անգլերեն և ֆրանսերեն լեզուներով տարածվեց Եվրոպայի մայրաքաղաքներում (10, նիստ ժ, 6.X.1878, էջ 175)։ Հայ բնակչության թվի մասին ճիշտ պատկերացում տալու, հայերի ցրվածության, արևելյան նահանգներում փոքրամասնություն լինելու մասին Թուրքական կառավարության կեղծ տվյալները հերքելու նպատակով կազմվեց վիճակագրություն, որը նույնպես ներկայացվեց եվրոպական կառավարություններին։

Ըստ այդ վիճակագրության՝ Օսմանյան կայսրությունում ապրում էր 3 միլիոն հայ։ Պատրիարքարանի պատրաստած

տեղեկագրում ցույց էր տրվում, որ երեք միլիոն հայերից 400 հազարը գտնվում են Կ. Պոլսում և Բալկանյան թերակղզում, 600 հազարը՝ Փոքր Ասիայում և Կիլիկիայի հարթավայրում, 670 հազարը՝ Փոքր Հայքում (Սվասի վիլայեթ և Կայսերիի սանջակ) և 1.330 հազարը՝ Թուրքական Մեծ Հայքում, որն իր մեջ ընդգրկում էր Էրզրումի և Վանի վիլայեթները, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը, Սղերդի սանջակի հյուսիսային մասը և այլն (151, էջ 8—9)։

Էրզրումի և Վանի վիլայեթների բնակչությունն ուներ հետևյալ պատկերը. Հայեր՝ 1.150 հազար, Թուրքեր՝ 400 հազար, քրդեր՝ 80 հազար և այլք, ընդամենը՝ 1.700 հազար։ Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասում հայեր՝ 180 հազար, Թուրքեր՝ 130 հազար, քրդեր՝ 40 հազար, ընդամենը՝ 362 հազար մարդ։ Այս տարածքում, այսպիսով, հայերի թիվն էր 1.330 հազար, Թուրքերինը՝ 530 հազար, քրդերինը՝ 120 հազար, մյուս ազգություններինը՝ 82 հազար։ Ընդամենը 2.062 հազար մարդ։

Հետագայում միտումնավոր և հակասական տվյալներն Ասիական Թուրքիայում ապրող հայերի վերաբերյալ սովորական բան դարձան։ Էրզրումի անգլիական հյուպատոս մայոր Տրոտտերը 1880 թվականին Փոքր Ասիայի հինգ վիլայեթներում 780 հազար հայ էր հաշվում, Ռոլեն Ժեքմենը՝ 1.330 հազար, ֆրանսիացի Վիտալ Քինեն՝ 838 հազար, ռուս գեներալ Զելենովը՝ 913 հազար, գերմանացի պրոֆ. Զուպանը՝ 921 հազար, Թուրքասեր պրոֆ. Վամբերին՝ 1.131 հազար, անգլիացի Լինչը՝ 1.058 հազար և այլն (27, էջ 222)։

Պոլսահայ ղեկավար գործիչների ծրագրին զուգընթաց, իր նախագիծն էր կազմել նաև եգիպտահայ մեծահարուստ Նուբար փաշան։ Նա XIX դարի 60—70-ական թվականներին հայտնի էր դարձել Եգիպտոսում իրականացրած իր վարչատնտեսական բարեփոխումներով, այդ երկրի հետամնաց տնտեսությունն ու ֆինանսները կապիտալիստական Եվրոպայի պահանջներին համապատասխանեցնելու միջոցառումներով։ 1864 թվականին Նուբարը եգիպտական խեդիվի անունից Փարիզում բանակցություններ էր վարել Սուեզի ջրանցքի կառուցման ընկերության հետ։ 1867 թվականին իրականացրել էր դատարանային դործի ռեֆորմ Եգիպտո-

սում և ճանաչում ստացել (70)։ Նրան նույնիսկ Եգիպտոսի «մեծ ռեֆորմատոր», «ֆելլահների», «արդարության հայր» էին հորջորջել ժամանակի արևմտաեվրոպական մամուլում (176, 1916, հ. IV, № 38, էջ 66—68)։ Իրականում հանդիսանալով եգիպտական խեդիֆ Իսմայիլ փաշայի առաջին մինիստրը այն պահին, երբ թուրքական տիրապետությունն այդ երկրում օրեցօր անվանական էր դառնում, նա նպաստել էր Եգիպտոսի ֆինանսների վրա անգլո-ֆրանսիական հսկողության հաստատմանը և արժանացել կապիտալիստական արևմուտքի դրվատանքին։ Դեռևս 1878 թվականին նա գտնում էր, որ «Եգիպտոսի բարօրությունն ապահովելու լավագույն, եթե ոչ միակ, միջոցը այն էր, որ Անգլիան թևարկություն մը հաստատեր երկրին վրա» (62, № 2, 1.V.1899, էջ 28)։

Նուբարի մշակած նախագծում ոչ մի ակնարկ չկար քաղաքական անկախության մասին։ Նա Եգիպտոսում իրականացրած իր փորձն էր դրել իր նախատեսած վարչական բարենորոգումների հիմքում։ Նա ընդգծում էր, որ հայերը քաղաքական գոյության, քաղաքական անկախության աչք չունեն. քաղաքացիական ազատություններ են ուզում, հաստատություններ, որոնք երաշխավորում են իրենց ունեցվածքը, ընտանիքների պատիվը, իրենց կյանքի իրավունքը և այլն։ Ըստ Նուբարի՝ հայերը «աչք չունեին» նաև «օսմանյան պետությունից որևէ բաժանման» (206, 63, էջ 158—161)։

Նուբարի ծրագրի էական կետը եվրոպական հովանավորության ներքո հայ նահանգապետի նշանակումն էր, որը հայկական ինքնավարության նախնական սաղմն էր պարունակում։ Ըստ նրա ծրագրի՝ բարենորոգումները պետք է իրականացվեին 6—7 տարվա ընթացքում։ Նուբար փաշան հիշեցնում էր Լիբանանի օրինակը, ցույց տալիս, որ եթե թանզիմաթներն իրականացվեին, ապա հայերի վիճակն այդքան աղետալի չէր լինի։ Նա կառավարման ձևերի բարելավման, վարչական, դատական օրգանների բարեփոխման խնդիր էր առաջադրում, վատ երևույթները վատ պաշտոնյաների առկայությամբ բացատրում։

Նրա ծրագիրը չէր ճշտում բարենորոգումների իրականացման սահմանային շրջանակները։ Ինչպես ավելի ուշ

հայտնի դարձավ, նա հակված էր հայերին տրվող ինքնավար իրավունքներն իրականացնել Կիլիկիայում։ Նա ընդգծում էր Կովկասում ապրող հայության բարվոք վիճակն արևմտահայության համեմատությամբ, փաստերով ցույց տալիս, որ ռուսաց իշխանության ներքո հայոց թիվը Երևանի ռուս-հայկական նահանգում երեսուն տարվա ընթացքում կրկնապատկվել էր։ Նա հույս ուներ, որ պատերազմի ժամանակ գրավված հայկական հողերի վրա նույնպես ռուսական վարչությունն օգտակար կլիներ։ Մյուս կողմից՝ նա անհիմն կերպով գրում էր, թե հայերը «օսմանյան պետությունեն որևէ բաժանման» դեմ են (63)։

Քաղաքական առումով Նուբարի ծրագիրը գնահատվեց որպես թերի և պակասավոր։ Նա իր ծրագիրը ներկայացրել էր Փարիզում Գերմանիայի դեսպան Հոհենլոհեին, Անգլիայի դեսպան Լայնսին և, ըստ Արշ. Զոպանյանի, արժանացել հավանության։ Այս ծրագրին հակվել էր նաև Լորիս-Մելիքովը, որին կանդրադառնանք ստորև։ Այնուհետև նա նույն ծրագիրն ուղարկում է Կ. Պոլիս և խնդրում իրեն պաշտոն տալ Բեռլին գնալու և այն «ազգի կողմից» կոնգրեսին ներկայացնելու։ Այս խնդրի շուրջ բուռն վեճեր և տարակարծություններ են ծագում։ Ներսեսը մերժում է նրա խնդրանքը։ Հետագայում նա իր մերժումը բացատրում էր նրանով, թե ինքը անկախության գաղափարն էր փայփայում, մինչդեռ Նուբարը միայն վարչական բարենորոգումների պահանջ էր առաջադրել։ Բանն այն չէր, թե ինչ խորությամբ և ինչ ձևերով էին իրականացվելու բարենորոգումները։ Էական նշանակություն ստացավ խնդրի այն կողմը, թե ում միջոցով է իրականացվելու ծրագիրը։ Պաշտոնամոլությունն էր նաև տարակարծությունների դրդապատճառը։

Ի հեճուկս Կ. Պոլսի հայ ջոջերի, Նուբարին պաշտպանում էին Լոնդոնում պարսից հայազգի դեսպան Մելքոն խանը, Խրիմյանը և ուրիշներ (7, 1907, № 6—9, էջ 151)։ Հակառակ տեսակետի կողմնակիցները կարծում էին, թե հայկական ինքնավարության խնդիրն արդեն լուծված էր և հանկարծ իրենց նախաձեռնած գործի՝ «ինքնավար Հայաստանի» կառավարչի պաշտոնին կտիրանար Նուբարը։

Նահանգապետի թեկնածուների թիվը շատ մեծ էր։ Այդ պաշտոնին էր հավակնում Նար-Պեյի եղբայր Գվիդոն Լուսինյանը (նախկինում՝ Ամբրոսիոս վ. Գալֆայան), որին Ֆրանսիայի միջոցով պաշտպանում էին կաթոլիկ գործիչները։ Մյուսներն առաջադրել էին Գրիգոր Օտյանի և Լորիս-Մելիքովի թեկնածությունները։ Խոսք էր գնացել նաև Ստեփան փաշա Ասլանյանի և Սերվիչենի մասին։

Հիրավի, էֆենդիները երազը ռեալություն էին համարում, ինքնավարությունը՝ մոտիկ իրականություն և, խմբերի ու թայֆաների բաժանված, կռիվ էին տալիս «ազատ» Հայաստանի կուսակալի պաշտոնին տիրանալու համար։

Այսպիսով, Եվրոպային դիմելու ծրագրի և հարցադրումների ասպարեզում նույնպես տարաձայնություններ կային։ Նշմարելի էր երկու մոտեցում։ Եգիպտոսի ճանաչված ռեֆորմատորի, մինիստրի, անգլիական կողմնորոշում ունեցող մեծահարուստ մասնավոր մարդու ծրագրով անհրաժեշտ էր նշանակել հայ նահանգապետ, իրականացնել որոշ վարչական բարելավումներ դատարանի, ոստիկանության, հարկահավաքման ոլորտներում։

Կ. Պոլսի հայոց ազգային վարչության կամ պատրիարքարանի նշանակած պատվիրակությունը պահանջում էր ինքնավարության իրավունք շնորհել Թուրքահայաստանին։ Այս ծրագրերի տարբերությունը թեև մեծ չէր, բայց կրքերի բորբոքման առիթ տվեց։ Ամենագլխավորն այն էր, որ բացակայում էին համերաշխությունը և միասնականությունը։ Հետագայում, տարիներ անց, երբ չէին դադարում վեճերը Բեռլինի կոնգրեսի նախօրյակին որդեգրված քաղաքական ուղղության շուրջ, գրվում էր և այն մասին, թե գուցե ավելի լավ կլիներ ընթանալ պակաս հավակնոտ, բայց և ռեալ ուղիով։

Իհարկե, եվրոպական դիվանագիտության օգնությամբ ակնկալվող բարեփոխությունները Հայաստանի համար տարբեր ձևով էին ընկալվում տարբեր դասակարգերի ու խավերի կողմից։ Հայ բուրժուազիան նոր հնարավորություններ էր տեսնում իր տնտեսական բարգավաճման, նոր շուկաների, իր շահերին համապատասխանող նոր դյուրությունների համար։ Կ. Պոլսի հայ մտավորականներն ու պետական պաշտոնյաները մտածում էին իրենց ազդեցության ընդլայնման, պետական հիերարխիայում դիրք գրավելու, տիտղոսներ ստանալու մասին։ Աշխատավոր դասակարգերն էին, որ ազգային ու սոցիալական կապանքները թոթափելու, աղքատության ու թշվառության ճիրաններից ազատվելու երազներով էին մխիթարվում։ Կ. Պոլսի հայկական փողոտեր վերնախավը չափազանց զգայուն էր արևմտաեվրոպական դիվանագիտական գործողությունների նկատմամբ՝ սեփական շահը փնտրելու տեսակետից։ «Հայկական խնդրոյն վրա մայրաքաղաքիս բոլոր ազգայինները կպատրաստվին Հայաստանի կուսակալ ըլլալու»,— գրում էր Հ. Պարոնյանը (68, հ. 4, էջ 83)։

Անշուշտ, տարօրինակ էր ներկայանալու Ներսես Վարժապետյանի գործողությունների իմաստը։ Նա, մի կողմից, սիրաշահում էր Ռուսաստանի ներկայացուցիչներին. Նար-Պեյին Պետերբուրգ և Իզմիրլյանին էջմիածին էր ուղարկում, նրանց միջոցով դիմումներ անում, աղերսագրեր ներկայացնում, փորձելով հայկական ինքնավարություն ձեռք բերել Ռուսաստանի հովանու տակ։ Մյուս կողմից՝ Կ. Պոլսի անգլիական դեսպանի միջոցով փորձում էր հայցել Անգլիայի աջակցությունը։ Նույն դերում էր լինելու Խրիմյանը՝ «Վասպուրականի արծիվը», Լոնդոնի մեջ, երբ Անգլիայի օժանդակություն ստանալու մտահոգությամբ փաստաբանում էր Օսմանյան կայսրության ամբողջությունը, «մոռացության» տալով իր իսկ ստեղծագործած «Վանգույժն» ու «Հայդույժը», մոռանալով թուրքական ռեժիմի դարավոր սարսափները։

Արփիար Արփիարյանը գրում է, որ «երբ որոշվեցավ Բեռլին վեհաժողով մը գումարել, Ներսես պատրիարք ուզեց ավելի բան մը ձեռք բերել. հանրային կարծիքը Հայաստանի թագավորություն մը կպահանջեր։ Միևնույն պատրիարքը, որ 1876-ին ռուսական քաղաքականության դեմ թրքական պզտիկ գործիք մը եղած էր՝ անգիտակցաբար, որ պատերազմին սկզբնավորությանը հակառուս հանդիսացած էր, որ պատերազմեն ետքը հակաթուրք և ռուսասեր եղած էր, հիմա նորեն միևնույն պատրիարքը Ռուսիո շահերը հարվածողներուն և Թուրքիան պաշտպանողներուն գործիքներեն մեկն պիտի ըլլար» (62, № 19, 1.X.1898, էջ 291)։

Այս ամենը մեկ մարդու, տվյալ դեպքում՝ Ներսեսի սուբյեկտիվ ցանկության արդյունքը չէր։ Այսպես մտածելով կարելի է միայն պարզունակ դարձնել այն բարդ, հակասական իրավիճակի ըմբռնումը, որ այն ժամանակ առկա էր հայ ժողովրդի համար։ Թուրքական սուլթանների մայրաքաղաքում անհնարին էր անսքող թշնամական ձեռնոց նետել Թուրքական պետականությանը, բացահայտորեն փարվել նրան հակառակորդ տերությանը։

Հիրավի, բարդ իրադրության պայմաններում էր կատարվում հայկական հարցի մուտքը միջազգային դիվանագիտության ոլորտը։

* * *

1878 թվականի հունվարի վերջին «Մասիս» թերթի տնօրեններն այսպես էին խորհրդածում. չպետք է արտոնություններ շնորհել միայն «ապստամբյալ գավառաց», որ պետք է «բարվոքման նպաստավոր ծրագիր» իրականացնել բոլորի համար, առանց խտրություն դնելու հայի և սլավոնի, օրթոդոքսի և կաթոլիկի միջև։ «Իրարու հավասար քաղաքացիներ կըլլան, յուրաքանչյուր տարր և ազգություն միևնույն իրավունքն ու արտոնությունները և միևնույն շահերն ունենալով»։ Թերթը հանդես էր գալիս «երկրի ինքնիշխանությունն ու հողային ամբողջությունն անաղարտ» պահելու պահանջով։ Հիշեցվում էր անթույլատրելիությունն այն «անարդարության», երբ «ով որ չապստամբիր ավելի գնչ իրեն համար», «Արդարությունը կպահանջե, որ հավատարիմ և հնազանդ մնացող գավառներն և տարերք ապստամբաց բաղդատմամբ աննպաստ վիճակի մեջ չդրվին. ապա թե ոչ՝ հավատարմությունն ու օրինապահությունն անօգուտ լինելով, յուրաքանչյուրին վիճակին բարվոքման համար ապստամբութենե զատ միջոց մնացած չլինիր և ամեն կարդ վեր ի վայր կըլլա» (53, № 2077, 1878)։ Գրիգոր Օտյանի համախոհ Կ. Ութուճյանն իր խմբագրած թերթի էջերում փաստորեն «նոր օսմանների» և անգլիական դիվանագետների տեսակետներին էր տուրք տալիս։

«Մասիս»-ը գրում էր, որ «Այա-Ստեֆանոյի դաշնագրության 16-րդ հոդվածին տրամադրած վերացական բարենորոգումներն անհնար է, որ բարիք մը համարվին»։ Թերթը գտնում էր, որ հայը չի կարող «բաժանման սկզբունքն յուր շահին նպաստավոր համարել, յուր հայրենակցաց մեծագույն մասին հետ յուր մտերմական հարաբերությունները վտանգել կամ կայսերական կառավարության քով յուր ունեցած պատվավոր դիրքը թողուլ...»։ «Կարծենք հայուն զգացումը ճշտիվ կբացատրենք, եթե ըսենք թե յուր փափագը Թուրքիո ընդհանուր բարենորոգումն է՝ Եվրոպիո շահոց համաձայն, առանց երկիրը բաժանելու և պառակտելու, հորմէ ինք ևս իբրև մաս մը վնաս պիտի կրե։ Արդարություն և հավասարություն ամենուն համար, ինչպես բուլղարին, այնպես նաև հայուն, իսլամին, հույնին և այլն» (53, № 2116, 1878)։

«Մենք ապստամբություն չենք արել, մեզ մի մոռացեք», «Մենք ավելի հավատարիմ ենք, քան ապստամբները», «Բարվոքումներ ամբողջ երկրում և ոչ թե ապստամբների համար, որոնք օրինազանցներ են» և այլն և այլն։ Ահա պոլսահայ վերնախավի մոտեցումների, մտածելակերպի իմաստը։

Կ. Պոլսի «Լևանտ Հերալդ» թերթը, որ անգլիացիների ձայնափողն էր, մարտի վերջին գրում էր, որ 16-րդ հոդվածը չէր կարող գոհացնել հայերին և որ «հայ ազգը տերության խորհրդին պիտի դիմի և յուր դատը պաշտպանի, խնդրելով, որ մյուս քրիստոնյա ժողովրդոց համար գործադրվելիք պայմաններն իրեն ալ տրվին» (53, № 2103, 1878)։

Մարտի 8-ին «Թայմս»-ը առանց այլևայլության պնդում էր, թե եվրոպական երաշխավորության ներքո ինքնավարություն ստանալու համար հայերն Անգլիայի օգնությունը խնդրելով ցույց էին տալիս, որ «իրենց ազգային բնական հակումներով առավել անգլիական աշխարհավարության կհարին, քան թե Ռուսիո» (53, № 2101, 1878)։ Սա բացահայտ կեղծիք էր, որ կատարվում էր հայկական հարցն անգլիական քաղաքականության շահերին հարմարեցնելու նպատակով։

Ֆրանսիական մի թերթ հաղորդել էր, թե սուլթանը խորհուրդ էր տվել հայոց պատրիարքին՝ Հայաստանի համար ինքնավարություն խնդրել։ Հետո նույն թերթը հերքում էր տպել, գրելով, որ «հայոց պատրիարքն ինք իրմե և ոչ ուրիշի խորհրդով օսմանյան Դռնեն ինքնօրինություն խնդրած է Հայաստանի համար։ Դուռը դեռ պատասխան չէ տված այս խնդրանաց» (53, № 2096, 1878)։

Կ. Ութուճյանն իր խմբագրած «Մասիս»-ում նորից պաշտպանում էր անգլիական սխեման։ Նա գրում էր. «Եթե դեսպանախորհուրդն Անգլիո ծրագրին համեմատ Թուրքիո բոլոր հպատակաց լավագույն վարչություն մը ապահովի՝ առանց խտրության իսլամին և քրիստոնեին, բուլղարին կամ հայուն, այն ժամանակ Արևելքից անդորրությունն իրոք կհաստատի» (53, № 2088, 1878)։

Իսկ ինչպիսի՞ն էր հայկական ինքնավարության, եվրոպական տերություններին դիմելու խնդրում թուրքական կառավարության դիրքորոշումը։ Խնդրի որոշ ասպեկտներ տակավին մութ են մնում այն պատճառով, որ մենք զրկված ենք թուրքական պետական արխիվների նյութերից օգտվելու հնարավորությունից։ Թե՛ Ներսես պատրիարքը, թե՛ Մկրտիչ Խրիմյանը մի շարք առիթներով կիսաբերան արտահայտվել էին որոշ կարևոր գաղտնիքներ չբացահայտելու անհրաժեշտության մասին։ Օրինակ, 1878 թվականի հուլիսին Ներսեսը անհնարին էր համարում հայկական հարցի արծարծման, նախապատրաստման և նրա լուծման համար գործադրված քայլերի բոլոր պարագաները հրապարակել։ Նա ասում էր. «Պատմության կպատասխանեմ, իսկ ձեր դատապարտությունը կրելու պատրաստ եմ» (10, նիստ 6, 21.VII.1878, էջ 69)։ Ներսես պատրիարքն ազգային ժողովում հայտարարեց, թե «Հանուն ազգային պատկառելի շահաց՝ պետք է նախամեծար համարիմ՝ կրել դատապարտություն անիրավ՝ նաև ազգիս կողմեն, քան թե հրապարակել զամենայն» (53, № 2155, 1878)։ Ըստ էության, այդ չհրապարակված «զամենայն»-ը մինչև այսօր էլ մնում է ոչ լրիվ վերծանված։ Միայն կարելի է կռահումներ անել այն մասին, որ գաղտնիքը վերաբերում էր թուրքական կառավարության դիրքորոշմանը, նրա խաղացած դերին։

Եվրոպային դիմելու և ինքնավարության խնդիր արծարծելու Կ. Պոլսի հայկական վերնախավի մտահղացումների խրախուսողները եթե անգլիական դիվանագետներն էին, ապա ռուսական առաջխաղացումը կանխելու նպատակով թուրքական հովանու տակ հայկական ինքնավարության գաղափարն օգտագործելու հակառակորդները, համենայն դեպս, միդհատական նացիոնալիստները չէին։ Վերջիններս ամբողջ թուրքական պետականության բարենորոգման շրջանակներում էին հայկական նահանգներում բարելավումներ իրականացնելու հնարավորություն արծարծում։ Սուլթան Աբդուլ Համիդ II-ը դիվանագիտական այդ խաղն օգտագործելուն հետևությամբ չհակվեց։ Սան-Ստեֆանոյի դիվանագիտական հաղթարշավի պահին, երբ ռուսական քաղաքականության վերընթացի ճնշող ներգործությունը հասնում էր իր գագաթնակետին, նա ստիպված էր հայկական խնդիրը յուրովի օգտագործելու ուղիներ փնտրել։ Այդ միջոցով նա հակադրվում էր Ռուսաստանին։ Նա փորձում էր օգտվել Ռուսաստանի փոքրասիական սահմաններին անգլո-թուրքական շահերի ներդաշնակությունից։

Բ. Դուռն իր անելիքը լավ գիտեր։ Նա գիտեր, որ Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածն իրականություն էր, որի «ջնջումը պետք էր դյուրացնել նույնիսկ հայոց միջոցով, անիրականանալի երազներու պահանջումով»։ «Կառավարությունն իր բարյացակամության մեջ այնքան առաջ գնաց, որ հրամայեց արտաքին գործերի պաշտոնատան ծածկագիր հեռագիրներու տնօրենին, որ հայ մըն էր, հայոց պատրիարքարանին համար մասնավոր ծածկագրություն մը պատրաստել» (62, № 19, 1.X.1898)։ «Մասիս»-ը գրել է, որ «Օսմանյան տերությունն հազար աչքով նայեց մեր ազգին պահանջներին և խափան չեղավ ս. պատրիարքին աշխատությանց» (53, № 2145, 1878)։ Կ. Պոլսի անգլո-ֆրանսիական թերթը նույնպես չէր թաքցրել, որ հայոց պատգամավորները Բեռլին էին ուղարկվել Բ. Դռան հաճությամբ (53, № 2147, 1878)։ Թուրքական կառավարությունը հայ պատվիրակության առաքելությանը ոչ միայն արգելք չհարուցեց, այլև Բեռլինի ու Գում-Գափուի միջև փոխանակված հեռագրերը չվերծանեց ու չկարդաց։ Խրիմյանը մի նամակում խոստովանել էր, թե այդ

ամենի մեջ «թաքուն խորհուրդ» կար, շատ պատճառներ ուներ, որ ինքը չէր կարող գրով պատմել այդ ամենի մասին (58, № 7, 1906, էջ 92—94)։

Բալկանյան սլավոններին առանձնաշնորհումներ չտալու, նրանց պահանջները մերժելու նպատակով արտաքին գործերի մինիստր Սաֆվեթ փաշան հորդորում էր Ներսես Վարժապետյանին, նրա վրա ճնշում գործադրում, որպեսզի նա դիմեր եվրոպական տերություններին, հայերի համար նույնպես բարենորոգումներ պահանջեր (73, էջ 266)։ Նպատակը պարզ էր. այս միջոցով թուրքական առաջնորդները փորձում էին փրկել կայսրության ամբողջականությունը, եվրոպական տերություններին համոզելով, որ բարենորոգումները պետք են ամբողջ պետության համար, որ իրենք այդ ուղու կողմնակից են, և որ արդեն ընդունվել է սահմանադրությունը, և Օսմանյան կայսրությունն այսուհետև ընթանալու է առաջադիմության և կարգուկանոնի հաստատման ուղիով։ Այս ուղեգիծն անգլիական դիվանագիտության զավակն էր։ Այն ուղղված էր Բալկաններում կամ Փոքր Ասիայում Ռուսաստանի առաջխաղացման, նրա ազդեցության տարածման դեմ։ Այս մասին ռուս հեղինակ Սկալկովսկին նկատել է, որ թուրքական պետական պրոպագանդան քնած չէր։ Ազատագրության ծարավի ժողովուրդների ձգտմանը հակադրվում էր այն միտքը, թե պետք չէ հոգ տանել ինքնավարության, անջատման մասին, քանի որ Օսմանյան կայսրության ոլորտից դուրս գալու դեպքում նրանք կընկնեին ուրիշ պետությունների ազդեցության, տիրապետության տակ, ընդ որում, իբր թե, շատ ավելի ծանր պայմաններով (159, էջ 216)։ «Միդհատ փաշան և իր խումբը, որ ամենից առաջ թուրք ազգայնականներ էին,— գրում է Սարուխանը,— հայտնապես քաջալերում էին հայոց պատրիարքին և ղեկավարող շրջանները, որոնք, անկասկած, գործում էին այն միջոցին նրանց գաղտնի թելադրությամբ» (73, էջ 129—130)։

1878 թվականի հունիսին Կ. Պոլսի ազգային ժողովի նիստում Ներսեսը խոստովանում էր, որ «ամենեն առաջ Բ. Դուռը վկայած է ու կվկայե մեր այս իրավունքին» (10, նիստ Ա, 1878, էջ 8—9)։ Ֆրանսիացի Վիկտոր Բերարը նույնպես հաստատում է, որ Բ. Դուռը քաջալերեց հայոց դիվանագիտական ակտիվությունը, ղեկավարվելով Ռուսաստանին ընդդիմանալու մտահոգությամբ (180, էջ 146)։

Պատահական չէ, որ Ներսես Վարժապետյանը ազգային ժողովում հայտարարեց, թե Բ. Դուռը համաձայն էր ազգային ինքնավարության ծրագրին։ Իսկ ավելի ուշ Ստ. Փափազյանին նա գրել է, թե կոնգրեսում թուրք լիազորն ընդդիմացավ հայոց խնդրին, թեև ընդդիմանալու մասին կառավարությունից հրահանգ չուներ։ Իրականում, ժամանակի ընթացքում և հանգամանքների փոփոխմանը համապատասխան փոխվել էր նաև թուրքական կառավարության տակտիկան։ «Մասիս»-ը գրում էր. «Կլսենք թե ս. պատրիարք հայրը Բեռլին երթալու դիտավորության վրա կպնդե» (53, № 2136, 1878)։ Սակայն սադրազամը կտրականապես մերժեց Ներսեսին Բեռլին գնալ։ Նա խոսում էր այն մասին, թե կատարվելիք բարենորոգումներում հայ ազգն էլ իր բաժինը կստանա, և պահանջում էր բավարարվել Խրիմյան արքեպիսկոպոսին Եվրոպա ուղարկելով։ Միաժամանակ թուրքական կառավարության ղեկավարը խոստացավ կարգադրել իր ներկայացուցիչներին՝ Բեռլինում ամեն կերպ օգտակար լինել հայոց պատվիրակությանը։ Իբր այսպիսի բովանդակությամբ նա նույնիսկ հեռագիր է հղել Բեռլին (53, № 2132—2133, 1878)։ Նա թույլատրեց օգտվել հեռագրի իրավունքից՝ սեփական ծածկագրով։ Ծածկագրի հեղինակը Բ. Դուռն ծածկագրության դիվանի պետ Խաչիկ Օտյանն էր, Գրիգոր Օտյանի եղբայրը (73, էջ 450, 72, № 154, 1907)։

Հետագայում, Բեռլինի կոնգրեսում թուրք գլխավոր պատվիրակ Կարաթեոդորին ասել է, թե Բ. Դուռն խորհրդով էր, որ հայությունը պատվիրակ էր ուղարկել և դիմել եվրոպական տերությունների կոնգրեսին։ Հիմնական նպատակն էր Եվրոպային ցույց տալ, թե Եվրոպական Թուրքիայի քրիստոնյաների համար բացառիկ վիճակ ստեղծելը աննպատակահարմար է, քանի որ այդ վիճակին ենթարկված ուրիշ քրիստոնյաներ էլ կան, որոնք իրենց պահանջներն են դնում. ուրեմն, ընդհանուր բարենորոգումների միջոցով պետք է լուծել այդ խնդիրները (41, № 4, 1938, էջ 16)։

Սա մի մաքիավելական մեթոդ էր, նենգ դիվանագիտություն, որի միջոցով հայկական բարենորոգումների, ինքնա-

վարության մասին հարցադրումները խեղդելու էին ընդհանուր, համակայսերական բարենորոգումների շուրջ սարքված խոստումնալից հարցադրումների մեջ։

Բ. Դուրը պատրիարքին արտոնեց կոնգրեսին դիմել, պատվիրակություն ուղարկել, պայմանով, որ ինքն անգիտանար այդ մասին։ Անգլիական դեսպանը նպաստեց այդ միտքին, նպատակ ունենալով հայերին հեռու պահել ռուսական ազդեցության ոլորտից։ Անդրե Մանդելշտամը գրում է, որ Բ. Դուրը վախենալով, որ Ռուսաստանը ցանկանում էր Հայաստանը կցել իրեն, ինքը հայերին մղեց ինքնավարության պահանջին՝ Թուրքական պետականության հովանու ներքո (199, էջ 193)։ Այս միտքը հաստատում են և՛ Ռոլեն Ժեքմենը, և՛ Գրիգոր Զոհրապը, և՛ ուրիշներ։

Ազգային ժողովի ատենապետը՝ Ստեփան փաշա Ասլանյանը, 1887 թվականի մարտի 30-ին Ստեփան Փափազյանին գրում էր, թե հայոց խնդիրը չէր կարող չծագել և «ասոր ապացույցն ալ այն է, որ տերությունն ալ մասնակցեցավ ազգայիններու ջանքերուն». նա ամեն ինչ Ներսես Վարժապետյանին վերագրելը գտնում էր սխալ, թե «ամեն գործ անունի մը կարոտ է», նրա անունն է կպել այդ գործին, «թեև սխալ ըլլա» (7, № 6—9, 1907, էջ 143)։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումից մինչև Բեռլինի կոնգրես ընկած ժամանակահատվածում հանգամանքները փոփոխվեցին, և Թուրքերը մերժեցին ոչ միայն քաղաքական, այլև վարչական ինքնավարության գաղափարը։ Գր. Օտյանին հաջողվեց համոզել Թուրք նախարարներին, որ պատրիարքի ձեռնարկած գործը համապատասխանում է իրենց շահերին։ Նա բացատրում էր, որ Հայաստանը Լիբանանի նման ինքնավար նահանգի վերածելով և Եվրոպայի հսկողության տակ դնելով մի միջնորդ կհաստատվեր Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Քանի որ այն պետք է դրվեր մեծ տերությունների երաշխավորության ներքո, ուստի Ռուսաստանն այլևս չէր կարողանա մխրճվել Անատոլիայի խորքը առանց Եվրոպայի հետ ընդհարվելու։ Մ. Չերազը հավաստում է, որ նման փաստարկումը բավական համոզիչ թվաց Թուրքերին, որոնք արդեն պարտված լինելով և հոռետեսության մատնված՝ ի սկզբանե չհակառակվեցին պատրիարք Ներսեսի ձեռնարկին (66, էջ 15—16)։

Հայկական խնդրի նման արծարծումը սուլթանի համար մի միջոց էր խանգարելու հայկական նահանգները Ռուսաստանին կցելուն, օգնել ջնջելու Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը։ Մ. Սերոբյանը սխալվում է գրելով, թե 1878 թվականի սկզբին Ներսես պատրիարքը ղեկը կորցրած նավի էր նմանվում, թե նա առագաստ էր բացում ամեն հովի առջև, առանց լուրջ խորհրդածության (74, էջ 60)։ Միայն մարտ ամսին Սան-Ստեֆանոյի պայմանագիրը եվրոպական կոնգրեսում քննելու և վերանայելու առաջիկա անխուսափելիությունն իմանալով, նա ինքնավար Հայաստանի ծրագիր ներկայացրեց սուլթանին։ Նա և իր համախոհներն ստեղծված իրավիճակից ավելին ստանալու լավատեսական մտքով էին տարված։ Միջազգային իրադրությունից օգտվել էին ուզում հայ դատի լուծման ղեկավարությանը հավակնած մարդիկ։

Աբդուլ Համիդ II-ը տակավին թույլ էր։ Մի կողմից՝ արտաքին-քաղաքական դժվարին կացությունը, մյուս կողմից՝ սահմանադրականների ազդեցիկ դիրքը նրան ստիպում էին խուսանավել, խորամանկել։ Ահա թե ինչու նա չարգելակեց պատրիարքին պատվիրակություն ուղարկելու Բեռլին՝ կոնգրեսին ներկայացնելու հայոց պահանջները։ Փաստերին ծանոթ ուսումնասիրողներն այդ գործողությունը գնահատում են սուլթանի պատրաստած մի որոգայթ, որի մեջ էր քաշելու Ռուսաստանին ապավինել ցանկացող մարդկանց, որոնք գործել էին Թուրքական պետականության շահերին հակառակ։ Պատրիարքի վրա ճնշում գործադրելով, նա ավելի էր հրահրելու հայ ժողովրդի ռուսասեր ձգտումները և «ամբողջ հայ ժողովուրդն իր պետին հետ ռուսին գիրկը պիտի նետեր»։ Նա նախընտրեց խորամանկելու ուղեգիծը։ «Թուրք կառավարությունը, իրեն կռնակ ունենալով Անգլիան, որ կուզեր Ռուսիան հանել Բարձր Հայաստանեն, Ներսեսը պաշարեց քաղցր և շողշողուն խոստումներով։ Իսկ հայ էֆենդիները համոզեցին Ներսեսը, թե Թուրք կառավարությունը մտադիր է հայոց շնորհել շատ ավելին, քան ինչ որ Ռուսիո ձեռքով պիտի ստանային, և թե անխոհեմություն էր գիրկը իյնալ «ազգակուլ ռուսին»։ Ոմանք (Հովհաննես Նուրյան և ուրիշ-

ներ) «միջնորդի և մատնիչի դեր կատարեցին», մյուսներն «անգիտակցաբար ծուղակն» ընկան և «Թուրքին գործը շինեցին» (Ներսես Վարժապետյան, Գրիգոր Օտյան, Սերվիչեն և այլք)։ Արշ. Զոպանյանը եզրակացնում է, որ «այս ազգասերները շարաշար խաբվեցան և սխալ գործեցին» (7, № 3, 1899, էջ 89)։

Վերոհիշյալ մարդիկ, ոգևորված Թուրքիայի տկարացումից և ծանր կացությունից, համոզված էին, որ սուլթանից կստանան ակնկալվող առանձնաշնորհումները։ Անգլիացիները նույնպես դրդում էին նրանց հրաժարվել միայն Ռուսաստանին ապավինելու գաղափարից։ Առարկայացավ այն մտայնությունը, թե ավելի նպաստավոր է օգտվել պարտված Թուրքիայի անելանելի վիճակից և Եվրոպայի վեց տերություններին դիմելով շատ ավելին ստանալ (ոմանք գերագաստում էին արդեն անկախ պետականության գաղափարը), քան ռուսական գրավումն էր։ Անգլիական դիվանագետների սև դերն այն էր, որ իբր նպաստելու էին այդ բաղձանքների իրականացմանը։

Սա էր պատճառը, որ Նար-Պեյին Ս. Պետերբուրգ ուղարկած Ներսես պատրիարքն աճապարում է նամակ ծանուցել, թե նրա լիազորությունները վերջնական չեն ցարին ներկայանալու և խնդրագիր ներկայացնելու։ Պատահական չէր, որ «Մասիս» թերթում հրապարակված այդ ծանուցումը տարածում էր գտնում եվրոպական թերթերում (7, № 3, 1899, էջ 90)։ Սակայն ոչ մի պաշտոնական փաստաթղթում Ռուսաստանի վճռական դերը չէր անտեսվում։ Մի կողմից՝ փորձ էր արվում ռուսական պաշտոնատար անձանց մոտ շեշտել հայկական ինքնավարության անհրաժեշտությունը, Ռուսաստանի շահերին այդ ակտի համապատասխանությունը, մյուս կողմից՝ ջանքեր էին գործադրվում խնդրի լուծման համար ստանալ եվրոպական տերությունների օժանդակություն։ Ամեն ինչ բարեհաջող էր թվում։ Կ. Պոլսից գրում էին Թիֆլիս՝ «Մշակ»-ին, թե չնայած արևելյան հարցում Ռուսաստանի և Անգլիայի ախոյանությանը, երկու տերությունների կառավարություններն էլ համաձայնության էին եկել հայոց հարցի շուրջ։ Մտածում էին կոնգրեսին մի նոր առաջարկություն ներկայացնել (57, № 64, 1878)։

«Եվ ահա առաջին ոճիրը հայ ազգին դեմ գործված,— գրում է Արշ. Զոպանյանը։— Հայոց կողմե ադիկա նախատինք մըն էր Ռուսիո դեմ։ Ռուսիո բանակը երթալե և ռուսական պաշտպանությունը խնդրելե հետո Ներսես պաշտոնապես ետ կառներ իր դիմումը, կուրանար իր նախկին ընթացքը» (7, № 3, 1899, էջ 90)։ Թեև Ներսեսի և նրա համախոհների կարծիքով ռուս-անգլիական ախոյանությունից և Թուրքիայի թուլությունից օգտվելով պետք է հենվեին Անգլիայի շահագրգռության վրա և Ռուսաստանի ու Թուրքիայի սահմանագլխին հիմք դնեին ինքնավար Հայաստանին։

1878 թվականի հոկտեմբերին ազգային ժողովի երեսփոխան Պեկեյանը, քննադատելով պատրիարք Ներսեսի քաղաքականությունը, հիշատակում էր, որ այդ միտքն էր փայփայվել նրա և Խրիմյանի կողմից։ Վերջինս Լոնդոնում «հայոց ազգը Ռուսիո և Տաճկաստանի միջև պատվար մը կարենալ ըլլալու իբր միակ տարր ներկայացուց Անգլիո կառավարության և ապահովցնել ուզեց զայն հայերուն այդ դերը կարենալ կատարելու մասին» (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 183—184)։ Անգլիական «դիվանագետները ժպտալով մեր պատգամավորներուն ուսը կշոյեին» և նրանք էլ Կ. Պոլիս ծածկագիր էին հղում, թե «ամեն բան կարգին է» (7, № 3, 1899, էջ 90)։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում 1878 թվականի ապրիլի 12-ին Սերվիչենի կողմից կաթողիկոս Գևորգին հղած նամակի բովանդակությունը։ Այստեղ առկա է արդարանալու որոշակի երանգ։ Նա գրում էր, որ բուլղարները, հույները, բոսնիացիները, նաև արաբները «ազգայնության խնդիր են» մեջտեղ բերել, «մենք, հայք, ի՞նչ պետք էր որ ընեինք։ Տաճկաց հետ միանա՞լ, անցյալը արդեն ապացուցած է, որ անոնց հետ միանալու համար ուրիշ ճար չկար, այլ մահմեդական ըլլալ, այսինքն ազգը ուրանալ։ Ահա հայ խնդիրն այսպես երևան ելավ. մենք երևան չհանեցինք, պարագաները հանեցին»։ Սերվիչենը նկատում էր, որ «միանգամայն ազգ կազմելու կամ անհետանալու խնդիրը կա մեջտեղը», որ «ոչ միայն ռուսաց, այլ գերմանացիների, անգլիացիների, ֆրանսացիների և ամբողջ Եվրոպային դիմեցինք, ազգին համար քաղաքական ապագա մը ճարելու հա-

մար։ Ով որ մեզի հետ է, մեզ բարեկամ է» (73, էջ 325—327)։

Հիրավի, չափազանց բարդ արտաքին-քաղաքական դժվարին պայմաններում էին տեղի ունենում սեփական պետականության սաղմերն ստեղծելու այդ առաջին փորձերը։ Դժվարությունները կապված էին ոչ միայն Օսմանյան կայսրության սոցիալ-անտեսական, քաղաքական դժվարությունների, այլև եվրոպական դիվանագիտության հարուցած խոչընդոտների հետ։

Այն ժամանակ Կ. Պոլսում շատերն էին գիտակցում, որ «եթե Անգլիան պահպանի Թուրքական տիրապետությունը Հայաստանում այն դրությամբ, ինչպես զնում են այժմ գործերը, քիչ ժամանակից հետո հայ ազգը կանհետանա»։ Այս տողերը «Մշակ»-ը արտատպել էր Կ. Պոլսի «Վանտ հերալդ» թերթում հրապարակված մի հայ գործչի զրույցից (57, № 72, 1878)։

Բեռլինի կոնգրեսի ընթացքին իրազեկ գերմանացի մի դիվանագետ նույնպես նշել էր, որ Ներսեսի գործողությունները Միդհատ—Օտյան խմբակի թելադրությունն էին։ «Հայ պատվիրակները գործակցեցին Թուրք պատվիրակների հետ», մոռանալով, որ Թուրքիան չուզեց ինքնավարություն տալ Բուլղարիային և նախընտրեց պատերազմը, ինչպե՞ս կարող էր հեշտությամբ համաձայնել հայկական ինքնավարությանը (16, էջ 285—286)։ «Անգլիան և հայերը» ֆրանսերեն գրքի հեղինակները հավաստում են, որ այդ գործում չափազանց ակտիվ էր գործում Անգլիայի դեսպան Լայարդը, որի ներշնչմամբ Ներսես պատրիարքը հանգեց եվրոպական մայրաքաղաքները պատվիրակություն ուղարկելու մտքին (194, էջ 19)։

Այս այն դիվանագետն էր, որին Ռոլեն Ժեքմենը թեև համարում է Արևելքի գործերին քաջատեղյակ մարդ, միաժամանակ նշում է, թե նա չափազանց «անորոշ» և «անբարյացակամ» դիրքերից էր արտահայտվում հայ ժողովրդի մասին։ Լայարդն այնպես էր ներկայացնում խնդրի էությունը, որ կարծես մինչև 1878 թվականը հայ ժողովուրդը «գոյություն էլ չէր ունեցել», այլ «վերականգնվել էր» «մի բուռ բանսարկուների գործողությունների հաջողության» շնորհիվ (151, էջ 57)։

Լայարդի քաղաքական ծրագիրն էր «հայերի միջոցով Հայաստանը պահել օսմանյան տիրապետության տակ»։ Նրա հույսը հայ եկեղեցականների դիրքորոշումն էր, հայ եկեղեցական դիվանագիտությունը, որը մտահոգվում էր, թե Հայաստանի ռուսական դրավումով կվտանգվեր հայ եկեղեցու գոյությունը։ Լայարդը հորդորում էր Ներսես պատրիարքին, թե Անգլիան, իբր, որոշել էր Հայաստանը դարձնել մի բուֆեր պետություն Հնդկաստանի մատույցների ապահովության համար (34, էջ 85)։ Իսկ պատրիարքն ինչ-որ չափով հավատացել էր դրան, քանի որ ավելի ուշ Բիսմարկին ներկայացրած իր ծրագրում գրում էր Հայաստանում մի շեղոք գավառ կազմելու մասին, ինչը կնպաստեր երկու կողմերի, իմա՝ Անգլիայի և Ռուսաստանի, գրգռությունների վերացմանը (74, էջ 55)։

Ազգային ժողովում հոկտեմբերի 6-ին Ներսես պատրիարքը հայտարարեց. «մեր ազգային քաղաքականությունը խիստ պարզ և հայտնի էր. շնորհակալ եղանք Ռուսիո, որ Սան-Ստեֆանոյի դաշնագրին մեջ հայոց համար հոդված մը հավելցուց, և այս շնորհակալությունենիս բոլոր կառավարությանց դաշիլիներուն հայտնեցինք։ Ամենևին դժգոհություն կամ ցավ չհայտնեցինք ընդդեմ Ռուսիո, որ մինչդեռ Սան-Ստեֆանոյի մեջ ամեն բան իր ձեռքն էր, բուլղարաց նման մեր ազգին ալ ինքնավարություն տալ չկամեցավ...» (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 187)։ Այս նպատակով էլ Նար-Պեյին Պետերբուրգ ուղարկեցին։

Եվրոպական դիվանագիտության օգնությամբ ավելի արմատական հայանպաստ լուծումների հասնելու ուղուն տուրք տվեցին նաև Կովկասում, որտեղ 1878 թվականի ապրիլ-մայիսին որոշակի զարգացավ այն մտայնությունը, թե եվրոպական տերությունների բարյացակամությունն ապահովելու ուղղությամբ կատարված ջանքերը բացի օգուտից վնաս չէին բերելու ազգային գործին։ «Թուրքահպատակ հայերն ապստամբության տեղ ընտրեցին իրենց համար դիվանագիտական ճանապարհը,— դժգոհում էր Գր. Արծրունին։ — Գոնե պետք է աշխատեն հաստատ քայլերով, մինչև վերջը շարունակել այդ իրենց բռնած ընթացքը, պետք է ամեն ջանք գործ դնեն այդ ճանապարհի մեջտեղում չկանգնել, այլ նույն

ընթացքով մինչև վերջը տանեն իրենց սկսած գործը» (57, № 51, 1878)։

Բեռլինի կոնգրեսի նախօրյակին Զեյթունը պատրաստ էր ապստամբելու։ Բայց, ինչպես հաստատում է Արշ. Չոպանյանը, Կ. Պոլսի հայ ջոջերն ամեն ինչ արեցին զինված ելույթը կանխելու համար (7, 1907, № 6—9, 153)։

«Փորձ»-ը հարց էր տալիս. «Բայց դիցուք թե Ռուսաստանը յուր ասիական սահմանները փոքր-ինչ առաջ տանի Թուրքիայի հողերի վրա. մի՞թե դրանով խնդիրը կվճռվի։ Մի՞թե Հայաստանի մեծ մասը չի մնա դարձյալ օսմանյան իշխանության ներքո...»։ Թերթը հաղորդում էր, որ Վիեննայի վրայով տեղեկացվել էր Կ. Պոլսում անգլիական դեսպանի հորդորանքների մասին, որպեսզի հայոց պատրիարքը Հայաստանի ինքնավարության պահանջով հանդես գար։ Թերթի տնօրեններն այն կարծիքին էին, որ «Անգլիան ոչինչ շահ չի կարող ունենալ հայերին խաբելու» (80, № 3, 1877—78, էջ 361)։ Հետո ոգևորությունն այնպիսի չափեր ընդունեց, որ իր թերթի էջերում Գր. Արծրունին նույնպես տուրք էր տալիս Եվրոպայից հայօգուտ բարիք ակնկալելուն։ «Հուսանք,— գրում էր նա,— որ Թուրքիայի հայերի պատգամավորը, Խրիմյան արքեպիսկոպոսը կկարողանա բացի Իտալիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի համակրությունից՝ գրավել և անգլիական տերության համակրությունը դեպի բազմաչարչար հայոց ազգի անմխիթար վիճակը» (57, 21.IV, 3.V 1878)։

«Փորձ»-ը սրբազան պարտավորություն էր համարում օտար մամուլի միջնորդությամբ արծարծել և մշակել Թուրքահայաստանի ինքնավարության գաղափարը, անընդհատ նյութ մատակարարելով եվրոպական թերթերին «Հայաստանի փառավոր անցյալի և ներկայի թշվառ դրության մասին, պարզելով ազգի հերոսական ջանքերը՝ յուր վայել տեղը բռնելու լուսավոր ազգերի շարքում» (80, № 4, 1877—78, էջ 483)։

1878 թվականի մայիսի սկզբին Գրիգոր Արծրունին այնքան լավատես էր դարձել, որ նորից հիշեցնում էր, թե երկրի ինքնավարությունն իրականացնելու համար Թուրքահայերը պետք է իրենց Կ. Պոլսի ազգային ժողովը տեղափոխեին Հայաստանի հողի վրա։ Նա ասում էր. մի՞թե նրանք այնքան միամիտ են, որ ձգտելով «նահանգական ինքնավարության, կարծում են, որ իրենց տեղական գործերը, իրենց երկիրը պետք է շարունակեն Կ. Պոլսից կառավարել»։ Նա գտնում էր, որ հարկավոր է գործել բուն Հայաստանում (57, № 63, 64, 1878)։ Իսկ առայժմ հայկական պատվիրակությունը ելք էր որոնում նրանից դուրս։

* * *

Հայոց պատվիրակությունը Կ. Պոլսից Եվրոպա մեկնեց 1878 թվականի մարտի սկզբին, որտեղ մնաց մինչև հուլիսի վերջը։ Պատվիրակության մյուս քարտուղար Նար-Պեյը Պետերբուրգից Բեռլին հասավ հունիսի 15-ին և այնտեղ մնաց մինչև հուլիսի 17-ը։

Առաջին մայրաքաղաքը, որ այցելեց հայկական պատվիրակությունը, Հռոմն էր։ Նախօրյակին Ներսես պատրիարքը լավատեսորեն էր արտահայտվել, ասելով, որ Գերմանիայի և Իտալիայի «համակրության ու օժանդակության վրա բոլորովին վստահ ենք» (56, էջ 89)։

Խրիմյանի պատվիրակությունը 1878 թվականի մարտի 15(27)-ին ընդունեց Իտալիայի արտաքին գործերի մինիստր Կորտին։ Խրիմյանի այցետոմսի վրա գրված էր. Արքեպիսկոպոս Մկրտիչ Խրիմյան, նախկին պատրիարք և պատվիրակ Օսմանյան Հայաստանի։ Ընդունելությունը կատարվում էր դիվանագիտական բոլոր պատշաճություններով։ «Ուրեմն այսօր Խրիմյան ալ դիպլոմատ պիտի ըլլա։ Եվրոպա եկողը չի կրնար դիպլոմատություն չընել, որովհետև այսօր դիպլոմատիան ամեն բանի վրա կթագավորե»։ Այսպես էր նա ընկալում և պատկերացնում իր առաքելությունը։

Բայց, ի զարմանս իրեն, եվրոպական տերության պաշտոնական անձանց հետ առաջին իսկ հանդիպումից պարզ դարձավ, թե որքան աղոտ էին եվրոպացիների պատկերացումները հայոց հարցի մասին։ Կորտին հարցրեց, թե հայերը վարչական ինքնավարություն են պահանջում Եվրոպա՞կան, թե Ասիական Թուրքիայում (73, էջ 367)։ Համապա-

տասխան բացատրություններ ստանալուց, պատվիրակության կազմած տվյալներին ծանոթանալուց հետո Իտալիայի արտաքին գործերի մինիստրն ընդհանուր խոսքերով խոստացավ զորավիգ լինել հայերին ինչպես Բեռլինի ապագա կոնգրեսում, այնպես էլ նրանից դուրս։

Հայոց հարցում Կորտիի լղարիկ գիտելիքները պատահական չէին։ Կ. Մարքսը 1853 թվականի ապրիլին գրում էր, թե շատ ժամանակ չէր անցել այն պահից, երբ արևմտաեվրոպական և ամերիկյան հասարակայնությունը հնարավորություն ստացավ մոտավոր ճշմարիտ գաղափարություն կազմելու թուրքական գործերի մասին։ Նա նկատում է, որ մինչև հունական ապստամբությունը Թուրքիան terra incognita էր բոլոր տեսակետներից և նրա մասին տարածված պատկերացումներն ավելի շատ խարսխվում էին «Հազար ու մի գիշերվա» հեքիաթների, քան պատմական փաստերի վրա։ Կ. Մարքսը հարցականի տակ է վերցնում նաև պաշտոնական դիվանագետների իմացածը Թուրքիայի մասին, քանի որ նրանց իմացածն էլ հիմնականում խարսխված էր հույն թարգմանների և ֆրանկ վաճառականների տենդենցիոզ պատմածների վրա։ Այդ պարոնայք, գրում է Կ. Մարքսը, բոլորովին չէին հետաքրքրվում ժողովրդով, երկրի հիմնարկություններով և սոցիալական վիճակով. նրանք զբաղվում էին միայն պալատով և հունական ֆանարիոտներով (Կ. Պոլսի արվարձան Ֆանարում ապրող հունական հարուստ ընտանիքների անդամներ)։ «Երկար ժամանակ արևմտյան դիվանագիտության բոլոր ելույթները Թուրքիայի նկատմամբ խարսխվում էին և նույնիսկ ներկայումս էլ խարսխվում են այդքան խղճուկ ինֆորմացիայի վրա հիմնված ավանդական պատկերացումների և հասկացողությունների վրա»,— եզրակացնում է Կ. Մարքսը (1, հ. IX, էջ 387)։

Ժամանակի ընթացքում, հնարավորությունների ընդլայնմանը զուգընթաց, ավելի մեծ թվով եվրոպացիներ՝ առևտրականներ, բանասերներ, հնէաբաններ, արևելագետներ, քաղաքական լրտեսներ սկսեցին այցելել Օսմանյան կայսրություն, ծանոթանալ նրա ներքին դրությանը, իրավական վիճակին, կրոնական և ազգային փոխհարաբերություններին։ XIX դարի առաջին կեսին, այնուհետև 50-ական

թվականներին առանձնապես մեկը մյուսի հետևից լույս տեսան եվրոպական ուսումնասիրողների ճանապարհորդական նոթեր, գրքեր, որտեղ նկարագրվում էին Օսմանյան կայսրության ներքին դրության մանրամասները։ Լամարթինը հրապարակեց իր «Ճանապարհորդություններ դեպի Արևելք» երկհատորանոց աշխատությունը, որտեղ նա անդրադարձավ հայերին։ 1852 թվականին Վիեննայում տպագրվեց Լորենց Ռիգլերի «Թուրքիան և նրա բնակչությունը» գիրքը։ 1853—54 թվականներին լույս տեսավ Ուրիշինիի «Նամակներ Թուրքիայից» աշխատությունը։ Ֆրանսիացի Դյուլորիեն հայերին համեմատում էր հոլանդացիների հետ, իսկ Բրուսալին Մարսելում, Բորդոյում, Մոնպելիեում կարդացած իր դասախոսություններով հանդես էր գալիս հայերի իրավազուրկ վիճակի նկարագրությամբ և նրանց իրավունքների պաշտպանության կոչերով (151, էջ 5)։

Այսպիսով, Եվրոպայում տակավին վատ գիտեին Օսմանյան կայսրության ներքին դրության վիճակը, ճնշված ժողովուրդների պայքարի և մաքառումների հանգամանքները։ Իսկ Խրիմյանը Կորտիից վարչական ինքնուրույնություն էր մուրում, որպեսզի, ինչպես ինքն էր ասում, «ասիական աշխարհին մեջ ծավալենք քրիստոնյա քաղաքակրթությունը»։

Պատվիրակության առաջին քայլերի մասին լուրերը Կ. Պոլիս էին հասնում լավատեսական գունավորումներով, թե՝ «Հայրիկը մեծ ընդունելություն է գտել Հռոմի մեջ, որ յուր այցելած առաջին մայրաքաղաքն է։ Իտալական կառավարությունը գոհացուցիչ խոստումներ է տվել Հայրիկին և հուսադրել է, թե հայոց խնդիրը պաշտպանելու էր դեսպանաժողովում» (57, № 64, 1878)։

Տեսակցության ժամանակ Խրիմյանը Կորտիին ապացուցում էր, որ Օսմանյան կայսրության մեջ սլավոն տարրերից հետո հայ ժողովուրդն ամենաբազմաթիվն է քրիստոնյաների շարքում, որ շատ ավելի է տուժում, քան բալկանյան ժողովուրդները։ Նա կանխատեսում էր, որ Բալկաններում անհաջողություն կրած և դուրս քշված մահմեդական տարրը Ասիա է նետվելու, «իրենց սրտի մեջ կրելով առելություն խաչին դեմ և վրեժխնդրություն քրիստոնեից դեմ»։ Նա ինքնավարության իրավունք ստանալը հիմնավորում էր նաև

նրանով, որ հայերն «արդի Ասիայի ամենեն ավելի քաղաքակիրթ ժողովուրդն են», որ հայերենով կարելի է կարդալ հին հույն և լատին հեղինակներին և այլն և այլն։ Նա «հայ ինքնօրեն կազմակերպություն էր» պահանջում «օսմանյան Հայաստանի այն մասի համար, որ չպիտի միանա Ռուսաստանին» (65, էջ 37)։

Ընդհանուր խոստումներ ստանալով Իտալիայի մայրաքաղաքում, պատվիրակությունն իր դիվանագիտական առաքելությունը շարունակեց Փարիզում և Լոնդոնում։

Մարտի 19(31)-ին պատվիրակությունը հասավ Փարիզ։ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Վադինգտոնին տրված այցելության ժամանակ նրանք լսեցին քաղցր խոսքեր ու խոստումներ։ «Կարող եք ապահով լինել,— հայտարարեց մինիստրը,— որ Ֆրանսիան անտարբեր չէ Հայաստանի վիճակին։ Ես անձամբ համակրում եմ ձեր դատին, որովհետև շրջել եմ Ասիայում, ուսումնասիրել եմ ձեր ժողովրդի պատմությունն ու գրականությունը և ճանաչել եմ բազմաթիվ նշանավոր հայերի։ Ես տրամադիր եմ ձեր դատը պաշտպանել կոնգրեսում, որ ոչ ոք ինձնից լավ չի ճանաչում ձեր ազգն ու ձեր երկիրը...»։

Զրույցի ժամանակ Վադինգտոնը, անդրադառնալով Հայաստանի ինքնավարության խնդրին, ավելորդ չհամարեց ասել, որ Հայաստանը չի կարելի նմանեցնել Լիբանանին։ Իսկ սա էական դիտողություն էր, որին հայ պատվիրակներն ըստ էության նշանակություն չտվին։ Նա հատկապես մատնացույց էր անում այն հանգամանքը, որ Լիբանանում Թուրքեր չէին բնակվում, իսկ հայկական նահանգներում նրանք զգալի թիվ էին կազմում։ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը չխորշեց Խրիմյանին ասելու, թե կոնգրեսում մարդիկ քարսիրտ էին լինելու և չէին բավարարվելու պլատոնական փաստերով ու փաստաթղթերով։

Ֆրանսիայի մայրաքաղաքում Խրիմյանը հանդիպում է Գերմանիայի դեսպան Հոհենլոհեին, որը Բեռլինից ստացել էր Կ. Պոլսում գերմանական դեսպանին պատրիարքի հանձնած հուշագիրը և իրազեկ էր անգուդարձին։ Նա Խրիմյանին հավաստիացնում էր, որ Գերմանիան «լրիվ համակիր է Ձեր դատին» (29, էջ 98)։ Միաժամանակ Գերմանիայի դեսպանը

Խրիմյանին հարցուփորձ էր անում հրոսակներին զսպելու և երկիրը կառավարելու հայերի ուժի և կարողության մասին։ Խրիմյանը հավաստում էր հայերի պատրաստականությունը, զենք և օգնություն ստանալու խնդիր էր դնում։

Փարիզում անգլիական դեսպան Լայանսը նույն մտահոգությունն էր արտահայտում, ասելով, թե հայերը զինվորական ուժից զուրկ էին, և խորհուրդ էր տալիս չափավոր պահանջներ ներկայացնել։ Խրիմյանը նրան պատասխանում էր, թե Կ. Պոլսի բեռնակիրները զինվորական համազգեստ հագնելով՝ պատկառելի զինվորներ կդառնային։

Ֆրանսիական մամուլի որոշ օրգաններ 1878 թվականի մարտ-ապրիլին հանդես եկան հայերին ինքնուրույնություն շնորհելու նպատակահարմարության օգտին։ «Դեբա» լրագրում տպագրված մի հոդվածում ասվում էր, որ «Արևելքի ժողովուրդներից ոչ մեկը հայոց չափ արժանի չէ ոչ միայն Ֆրանսիայի, այլև համայն արևմտյան ազգերի ամենաջերմ համակրությանն ու բարոյական ձեռնտվությանը»։ Թերթը նշում էր, որ հայերենի են թարգմանվում Կորնելյի, Ռասինի, Վիկտոր Հյուգոյի գործերը, որ Հայաստանը «մի մտավորական օազիս է» հետամնացության ծովում և այլն։ Հոդվածագիրն ընդունում էր, որ ռուսահայերը «նյութական բարեկեցություն էին վայելում», իսկ թուրքահայերը «թշվառ էին», «ամեն տեսակի կեղեքումի մատնված և անպաշտպան»։ Արվում էր այն եզրակացությունը, որ «Հայաստանը հատուկ իրավունքներ ունի Ֆրանսիայի պաշտպանությունը վայելելու» (53, № 2144, 1878)։

Ֆրանսիական մի այլ թերթ գրել էր, թե՝ «եթե անկախություն տրվեր» հայերին, «խիստ շատ պիտի վարանեին անոր վրա։ Դարերե ի վեր օսմանյան լուծին ներքև մնալով, անոր հարմարած են. անոր ներքև խոնարհած են իրենց հատուկ եղած դյուրաթեքությամբ և կրցած են միշտ տերության մեջ համեստ՝ բայց իրենց շահավետ դեր մը խաղալ։ Իրոք, հայերը միայն քիչ մ՚արդարության և ապահովության պետք ունին...» (53, № 2154)։

Կոնստանդնուպոլսաբնակ հայերն այս թերթերին ներկայանում էին որպես ամբողջ արևմտահայ ժողովուրդ և այդ չափանիշներով էլ դատողություններ էին արվում նրանց մասին։

Փարիզում գտնված օրերին հայոց պատվիրակության նպատակների, ծրագրերի մասին գրում էին եվրոպական տարբեր երկրների թերթերը։ Գերմանական մամուլն ընդհանուր առմամբ թուրքասիրական դիրք էր գրավել (57, 27. IX—9.X, 1878)։ Սակայն եղան թերթեր, որոնք համակրանքով արտահայտվեցին հայկական ինքնավարության խնդրի շուրջ։ Հայերի հասցեին եվրոպական մամուլի էջերում տեղ գտած բացասական կարծիքները քննադատելով, նրանք գրում էին, որ իրենց նախահայրերի արյամբ ոռոգված Հայաստան երկրում ապրում էին երեք միլիոն հայեր, որոնք «քաջ և աշխատասեր հողագործներ են», «վաճառականության և ձեռարվեստի» «քաղաքական բարձր և փափուկ» գործերի մեջ հմտացած։ Օրինակ էին բերում Ռուսաստանի և Պարսկաստանի հայազգի պետական գործիչներին, ռուսական բանակի հայ զորավարներին։ Նշվում էր, որ հայերը Եվրոպայից շատ հեռու գտնվելով, իրենց վրա բավականին ուշադրություն չեն բևեռել և արևելյան քրիստոնյաների խնդրի կարգավորման պահին հաշվի չեն առնվել, որ հայ ժողովուրդը «բուլղարներին և այլ քրիստոնյա ժողովուրդներն ավելի ճնշված ու հարստահարված ըլլալով, անոնցմե ավելի իրավունք ունի ինքնօրինություն պահանջելու» (53, № 2167, 1878)։

Նույն պահին «Մշակ»-ը արձանագրում էր, որ «Ավստրիան ցույց չի տալիս, թե ինքը որ կողմը կլինի։ Նրա քաղաքականությունը նույնքան երկդիմի, նույնքան նենգավոր է, որքան Անգլիայի քաղաքականությունը (57, № 62, 1878)։ Ավստրիական թերթերը մի շարք հոդվածներ տպագրեցին հայերի մասին։ Եվրոպական մայրաքաղաքներում շատ լավ հայտնի էր, որ հայ «ազգի մեծամասնությունը բարձրաձայն Ռուսաստանի հետ միանալու ցանկություն է հայտնում»։ Այսպես էր գրում Վիեննայի ազդեցիկ թերթերից մեկը, տպագրելով Կ. Պոլսի իր թղթակցի հոդվածը։ «Թուրքիան հայերին այնքան ծանոթ է, որ նրանք համոզված են, թե Եվրոպայի արած բոլոր խոստումներին հակառակ Հայաստանում թուրքերն իրենց անկարգություններն առաջվա նման կշարունակեն»։ «...Ավելի լավ է ռուսաց հպատակներ դառնալ, քան նորից փաշաների հարստահարություններին ենթարկվել»,— մատնանշում էր ավստրիական թերթը (57, № 53, 1878)։

Այս բաները ոգևորում էին հայ մարդկանց, հրահրում ապագայի նկատմամբ նրանց վառ հույսերը։ Ոմանք էլ հնարել ու ոգևորվում էին այն բանով, թե, իբր, Անդրաշին՝ Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստրը, ծագումով հայ էր և, իբր, մի նամակով Լորիս-Մելիքովին հայտնել էր իր խորին համակրությունն ու վառ զգացմունքը «իրեն ծնող հայ ազգի» նկատմամբ (57, № 61, 1878)։

Հայկական հարցին արձագանքում էին նաև եվրոպական այլ երկրներում։ Բելգիական թերթերից մեկը, հերքելով Անգլիայում տարածված ստահոդ լուրը, որ Հայաստանի գրավումով Ռուսաստանն իբր սպառնում էր Հնդկաստանում Անգլիայի դիրքերին, ապացուցում էր, որ հայերը սլավոններից ոչ պակաս էին հարստահարվում Թուրքիայում, և հանդես էր գալիս «ազատ Հայաստան» ստեղծելու առաջարկությամբ։ Գերմանական թերթերից մեկը հոդված էր նվիրել հայոց հարցին։ Հոդվածագիրը, ցույց տալով թուրքական պետականության սնանկությունը, վարչական օրգանների կաշառակերությունը, գովում էր հայերին, նրանց համարելով «քրիստոնեական քաղաքակրթության կարապետներ Ասիայում»։ Լրագիրը նշում էր, որ հայերն Ասիայի շվեյցարացիներ են, և իր խոսքն ավարտում էր ասելով, որ հայերին ինքնավարություն տալը ձեռնտու կլինի ինչպես Թուրքիայի, այնպես էլ Եվրոպայի համար» (57, № 115, 1878)։ 1878 թվականին Իենայում լույս տեսավ Հայաստանին նվիրված Լերխենֆելդի գիրքը (196), հետո հոդվածներ, նյութեր երևացին գերմանական թերթերի էջերում։ Ամեն ինչ եվրոպական մայրաքաղաքներում հայկական պատվիրակությանը թվում էր հուսադրող և լավատեսական։ Նրա տեսադաշտից դուրս էր մնում միջպետական այն կատաղի մրցապայքարը, որ տեղի էր ունենում ռուսական, անգլիական, ֆրանսիական, ավստրո-հունգարական դիվանագետների միջև՝ հանուն իրենց տերությունների դիրքերի ամրապնդման։

* * *

Ապրիլի 24-ին Խրիմյանի պատվիրակությունը ժամանեց Լոնդոն։

Այն տարիներին Անգլիայի հայ գաղութը թեև փոքրաթիվ էր, բայց ազդեցիկ դեր էր կատարում։ Առանձին անհատներ, գլխավորապես Արևելքի երկրների հետ գործի և համեմունքների միջնորդ առևտրով զբաղվող կոնստանտնուպոլսեցի, իզմիրցի ու պարսկահայ վաճառականներ կապեր էին ստեղծել անգլիական առանձին հասարակական դեմքերի հետ և փորձում էին նրանց միջոցով եվրոպական հանրության ուշադրությունը բևեռել հայոց խնդրի վրա։ Այդ մարդիկ սերտորեն կապված էին Կ. Պոլսի հայկական վերնախավի և պատրիարքարանի հետ և իրերի բերումով համեմատաբար ակտիվ դեր էին խաղալու եվրոպական դիվանագիտության միջոցով հայկական հարցը արծարծելու ասպարեզում։

Առանձնապես աչքի էր ընկնում Մանչեստրի հայ գաղթօջախն իր մեծահարուստ վաճառականությամբ։

Մանչեստրի հայ վաճառականական տները հիմնվեցին և փարթամ գործունեություն ծավալեցին գլխավորապես 1850—1860-ական թվականներին։ Հետզհետե դրանք զորացան և բարգավաճեցին։ Հայտնի էին Սինանյան, Յուսուֆյան, Կյուլպենկյան, Թոքատյան և այլ ազգանուններ։ Մանչեստրի հայության թիվը մեծ չէր, 1863 թվականին ընդամենը 30 մարդ (54, էջ 33, 44, 47), որոնց փողերով այնտեղ հայկական եկեղեցի էր կառուցվել։ Դեռևս այն տարիներին ջանքեր էին գործադրվում՝ անգլիական պաշտոնական շրջանների համակրանքը շահելու, նրանց հովանավորությունից օգտվելու նպատակով։

Անգլիական վերնախավի հետ կապեր էին հաստատել մասնավորապես հնդկահայ մեծահարուստ մարդիկ, հատկապես Սեթ Աբգարը կամ Աբգարյանը, որին հետագայում «հայոց Ռոտշիլդ» էին հորջորջում (57, № 85, 1878)։ Պատահական չէ, որ 1866 թվականին Զմյուռնիայում լույս տեսած մի գրքույկում նույնիսկ «ապացուցվում էր», որ Մեծ Բրիտանիայի թագուհին սերել է Արշակունի հայ թագավորներից (76)։

Բալկանյան ճգնաժամի, այնուհետև ռուս-թուրքական պատերազմի պահին Լոնդոնի, Մանչեստրի հայ վաճառականները որոշակի քաղաքական ակտիվություն ծավալեցին հայկական հարցի արծարծման ուղղությամբ։ Փաստերը վկայում են, որ այդ քայլերն արվում էին Կ. Պոլսի պատրիարքարանի և հայ վերնախավի գիտությամբ ու խրախուսանքով։

Անգլիական հայ գաղթօջախի և նրա մարդկանց գործունեությունների մասին հարուստ տեղեկություններ է պարունակում Մուշեղ եպիսկոպոսի «Մանչեստրի հայ գաղութը» ուսումնասիրությունը։ Հեղինակն օգտվել է Լոնդոնի և Մանչեստրի հայկական եկեղեցիների արխիվների նյութերից, Կ. Պոլսի հայ պատրիարքի գրություններից, որոնք գաղափար են տալիս անգլիական հայ գաղութը հայկական հարցի դիվանագիտական լուծմանը մասնակից դարձնելու ջանքերի վերաբերյալ։ Հեղինակը գրքում տեղադրել է փաստաթղթերի ֆոտոֆաքսիմիլներ (56, էջ 90—93), որոնք արժեքավոր սկզբնաղբյուրներ են խնդրի ուսումնասիրության համար։ Հետագայում նույն Մուշեղ եպիսկոպոսը Սերոբյան ազգանունով մի շարք գրքեր հրապարակեց հայկական հարցի պատմության խնդիրներին նվիրված։

Մանչեստրում 1876 թվականի հոկտեմբերի 4-ին կայացած ընդհանուր ժողովում քննարկվում է «ազգին ցավերը» Անգլիայի ժողովրդին ներկայացնելու, նրա համակրությունը շահելու, «նոցա պաշտպանությունը խնդրելու» հարցը։ Այս նպատակով նախնական քայլեր արվեցին անգլիական մամուլում նյութեր տպագրելու ուղղությամբ։ Գլխավոր մտահոգությունը թուրքական կառավարությանը շգրգռելն էր։ Սակայն ժողովը միահամուռ արձանագրում էր, որ հնազանդությունն անօգուտ էր եղել, որ հայ ժողովուրդը «կեղեքվում» և «խոշտանգվում է», որ «գավառացի հայոց ցավալի կացությունը բարվոքելու համար մեզ միմիայն միջոց մնացած է Եվրոպայի քրիստոնյա կառավարությանց գթությունը հայցելով դարման խնդրել» (56, էջ 68—69)։ Նույն ժողովում որոշվում է ողջունել պատրիարքարանին՝ գավառական հարցաստահարությունների խնդրում Բ. Դռան նկատմամբ նրա դիրքորոշման համար և հրահանգներ պահանջել նրանից (56, էջ 70)։

Այսպիսի մտայնությունը գործնական հողի վրա էր դրվել նաև Լոնդոնում։ Այստեղ առանձնապես ակտիվ էր Սեթ Արգարը, որը մի շարք հրատարակություններ էր նախաձեռնել, նպատակ ունենալով անգլիացիներին ծանոթացնել Հայաստանը, նրա պատմությունը և ներկա ծանր վիճակը։ Իր նախաձեռնությունն իրականացնելու համար Սեթ Արգարն օժանդակություն է խնդրում Մանչեստրի հայ գաղութից։ 1876 թ. նոյեմբերի 21-ի ժողովում որոշվում է ընդառաջել նրան, և հայ ազգայիններին մի դիմում է հղվում Մանչեստրի հոգևոր հովվության առաջնորդ Ղևոնդ վարդապետ Փիրղալեմյանի և Արիստակես Մարտիրոսյանի կողմից՝ հանդանակություն կազմակերպելու համար (56, էջ 71)։ Դեռևս 1875 թվականին Փիրղալեմյանի նախաձեռնությամբ դրամական օգնություն էր կազմակերպվել Հայաստանի սովյալներին։ Այն ժամանակ հրավիրեցին «զգթություն բրիտանական մեծ, հզոր, ողորմած և մարդասեր ազգին» ուշադրությունը հայ ազգի դժբախտություններուն վրա (56, էջ 64)։ Այսպիսի դիրքորոշման համար 1875 թվականի ապրիլի 25-ին Ներսես պատրիարքը № 48 կոնդակով հատուկ շնորհակալություն էր հայտնում Փիրղալեմյան վարդապետին։

Լոնդոնում ստեղծված «Արևելյան հարցի ընկերությունը» (Eastern Question Association) նպատակ էր դրել ուսումնասիրել քրիստոնյաների դրությունը Մերձավոր Արևելքում և միջոցներ առաջարկել «արևելյան քրիստոնյաների» վիճակը բարելավելու համար։ Որոշակի աշխատանք էր կատարվում, որպեսզի եվրոպական մամուլը, հասարակական կարծիքը շահագրգռվեին, իմանային հայկական նահանգներում կատարված հարստահարությունների մասին։ Այդպիսի գործունեության շնորհիվ էր, որ Լոնդոնում և Փարիզում լույս տեսան Հայաստանին նվիրված հատուկ տեղեկագրեր, որոնց նյութերը քաղված էին Կ. Պոլսի պատրիարքարանի թաքրիրներից (212, 197)։

Աստիճանաբար ավելանում էր այն մարդկանց թիվը, որոնք հանդես էին գալիս մյուս Թուրքահպատակ քրիստոնյաների օրինակին հետևելու, եվրոպական տերությունների, Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ցավերը դարմանելու օգտին։ Բազմաթիվ նամակներ, խնդրագրեր են հղվում անգլիական պաշտոնական անձանց։ Թերթերի խմբագրություններին մատակարարում են նյութեր, տեղեկություններ։ Իսկ անգլիական քաղաքականության ղեկավարները դեմ չէին իրենց շահերին համապատասխան օգտագործելու այդ տրամադրությունները։ Արտաքին գործերի մինիստր Դերբիի համար դժվար չէր ընդհանուր խոստումներ շռայլել, հայ մարդկանց հավաստիացնել, թե պաշտպանելու է հայոց խնդիրը պաշտոնապես (57, № 54, 1878)։

Այդ օրերին Անգլիայում հայերի մասին առաջին հոդվածագիրներից մեկը Ջեյմս Բրայսն էր, որը Սան-Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումից քիչ անց «Ֆորտնայթլի ռևյու» հանդեսում 1878 թվականին հրապարակած «Ասիական Թուրքերի ապագան» իր հոդվածում ըստ էության շարադրում էր անգլիական ազդեցիկ շրջանների տեսակետը Հայաստանի մասին։ Ջեյմս Բրայսին նույնիսկ հումորով անգլիական պառլամենտի համայնքների պալատում Հայաստանի անդամ էին անվանում։ Նա անգլիական քաղաքականության գլխավոր նպատակը համարում էր «հպատակ ցեղերի վիճակի բարվոքումը և Ռուսաստանի առաջխաղացման արգելակումը»։ Նա դժվար խնդիր էր համարում հեռու գտնվող հայերին օգնելը, նշում էր նրանց խառը բնակված լինելու փաստը, ասելով. «Թեև իրենց ամբողջական թիվը Թուրքիայում չորս միլիոն է, բայց բավական զորավոր չեն բուն Հայաստանի մեջ որպեսզի անկախ իշխանություն դառնան»։ Նա չէր թաքցնում իր գլխավոր միտքը, գրելով. «Եթե ուզում եք Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Ասիա կասեցնել, ապա հայ ազգության զարգացումը անբաղդատելի կերպով ամենալավ, թերևս միակ տևական միջոցը կընձեռի» (17, էջ 106—109)։ Պետք է զգուշացնել հայերին անգլիական օժանդակությամբ՝ ջնջելու համար ռուսական միջամտության պատրվակները, եզրակացնում էր Բրայսը։ Մարտի 20-ին Լոնդոնի «Թայմս»-ը կոչ էր անում «ճանաչել և պաշտպանել հայերի պահանջները», որ այդպիսի մոտեցումը համապատասխանում էր Անգլիայի շահերին։ Թերթը գտնում էր, որ հայերին պետք էր ընձեռել նույնպիսի իրավունքներ, ինչպիսիք նախատեսվում էին կայսրության մյուս քրիստոնյա հպատակների համար։ Սա Ռուսաստանի ձեռքից նախաձեռ-

նությունը խլելու անգլիական պաշտոնական քաղաքականության անսքող դրսևորումն էր։

Լոնդոնում 1878 թվականի սկզբում հրատարակվեց Ֆրանսերեն մի գրքույկ՝ «Արևելյան խնդիրը և հայերը» (193) վերնագրով, որի բովանդակությունը ժամանակին թարգմանաբար տպագրվեց «Փորձ»-ում։ Գրքույկում ասված էր, որ եթե Եվրոպական Թուրքիայի ստրուկը բուլղարն էր, ապա Ասիական Թուրքիայի ստրուկը հայն էր, որ հայերի տառապանքները ոչնչով չէին զիջում բալկանյան ժողովուրդների կրած տառապանքներին։ Վերջիններս գոնե շրջապատված չէին ավազակաբարո ցեղերով։ Ասիական Թուրքիայում «պաշտոնները շնորհվում էին ամենից ավելի խոստացողներին», ժողովուրդներն անգթաբար հարստահարվում էին, օրենքն ու արդարությունն անխտիր մերժվում, ավերումն ու հափշտակությունն անպատիժ մնում, ավազակություններն ու սպանությունները ամեն օր էին պատահում։ Ահա այս վիճակի մեջ էին հայերը պատերազմից առաջ։ Եկավ պատերազմը և տեսարանը ավելի տխուր կերպարանք ստացավ։ Բալկաններից քշված մուհաջիրները գալով Հայաստան, «իրենց ատելությունն ու կատաղությունը հագեցնելու համար Հայաստանի քրիստոնյաներից էին հանում այն վրեժը», որ ունեին սլավոնների նկատմամբ (80, № 3, 1879, էջ 165—167)։

«Արևելյան հարցի ընկերությունը» հրապարակեց մի այլ գրքույկ (211), որտեղ նկարագրվում էին հայոց տառապանքները, ցույց էր տրվում բարենորոգումների շնորհիվ Լիբանանում ստեղծված անհամեմատ բարվոք վիճակը, Լիբանանին տրված արտոնությունները հայերին նույնպես շնորհելու անհրաժեշտությունը։

1878 թվականի մարտին Լոնդոնում հրատարակված «Կոնֆերանսը և հայերը» գրքույկում (222) ասվում էր, որ հայերն «անհանգիստ տատանվում են հույսի և երկյուղի միջև իրենց ապագա վիճակի» հարցում, որ նրանք ավելի քիչ չեն տանջվել, քան բուլղարները, և հարց էր տալիս. «ինչո՞ւ հայերին ևս չպետք է տալ լիակատար ազատություն և ինքնավարություն»։ Գրքույկի հեղինակները գրում էին, թե՝ «ավա՜ղ, Հայաստանի լեռները խիստ բարձր են և թշվառ զոհերի աղաղակների արձագանքը Եվրոպային չհասած խեղդվում է Եփրատի հովտի մեջ»։

Գրքույկը տալիս էր հայերի ներկա վիճակի պատկերը. ընդգծում, որ Օսմանյան կայսրությունում նրանց թիվը 3 միլիոնից ավելի էր, այնուհետև ցույց տալիս սուլթանների խոստացած բարենորոգումների խաբեական բնույթը։ Դրան հակադրվում և գովաբանվում էր անգլիացիների «դրական», «քաղաքակրթիչ» դերը Հնդկաստանում, ապա արվում հետևյալ եզրակացությունը. «Այս իրադարձությունները հիշելով, մեր նպատակն այն է, որ հաստատենք, թե անտարակույս մի մեծ բարեբախտություն կլիներ Թուրքիայի համար, եթե Անգլիան հանձն առներ այս երկիրը կառավարելու պաշտոնը, ինչպես որ արել է Հնդկաստանի վերաբերությամբ»։ Գրքույկի հեղինակները փորձում էին ապացուցել, որ «լուսավորյալ թուրքերից շատերը» «հուսահատված են իրենց հայրենիքի ապագա բարօրության մասին և նույն մեր համոզմունքներն ունեն» (80, № 4, 1877—78, էջ 434—447)։ Ակնհայտ է, որ նախապատրաստվելով առաջիկա կոնգրեսին, անգլիական կառավարող շրջանները մշակում էին հասարակական կարծիքը, ընդգծում այն միտքը, թե միայն Հայաստանում պետք չէր բարենորոգումներ իրականացնել, այլ ամբողջ Օսմանյան կայսրությունում, այն էլ անգլիական հովանավորության ներքո։

Հիշատակելով Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, գրքույկում ասվում էր, որ նրա ամենակարևոր պայմաններից մեկն այն էր, որ Ռուսաստանը իրեն միացներ Հայաստանի մի մասը։ Գրքույկի հեղինակներն առաջ էին քաշում հետևյալ միտքը. «Եթե այս պատերազմն սկսելու ժամանակ Ռուսաստանի գլխավոր նպատակը... Թուրքիայի քրիստոնյաների համար ազատագրություն ձեռք բերելն էր և ոչ թե իր երկիրը ընդարձակելը, ապա ինչի՞ չի ազատում հայերին էլ բուլղարների պես, նրանց համար էլ ինքնավարություն ձեռք բերելով»։

«Ինքնավարության» մասին շատախոսելով էր, որ բրիտանական դիվանագետները աշխատում էին ի չիք դարձնել Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը, խոչընդոտել Ռուսաստանին բարելավելու հայ ժողովրդի դրությունը։ Այլապես ինչո՞վ

բացատրել, որ Բեռլինի կոնգրեսում անգլիական կառավարության ղեկավարները լսել անգամ չուզեցին այդ մասին։ Լոնդոնի կառավարական օրգանների կողմից հրահանգավորված և թիված այդ գրքույկը եվրոպական հասարակական կարծիքը շփոթեցնելու, Կ. Պոլսի հայկական վերնախավին իր կողմը քաշելու պրոպագանդիստական, խաբեական նպատակ էր հետապնդում։ Ի դեպ, գրքույկի ապոթեոզը ներքոհիշյալ միտքն էր, որ դրվեց նաև Թուրք-անգլիական համաձայնագրի (1878 թվականի հունիսի 4-ի) հիմքում։ Գրքույկում ասված էր. «Մենք վստահ ենք, որ Մեծ Բրիտանիան չի խնայի թե՛ հայերին և թե՛ Բ. Դռան այլ հպատակներին իր բարոյական օգնությունը ներկա հանգամանքներում հասցնել...», թե հայերը կարող էին իրենց ինքնավարությունն ստանալ «Անգլիայի հզոր օժանդակությամբ»։ Անգլիական քաղաքագետները չէին խորշում փարիսեցիաբար հայտարարելու, թե «Անգլիային օգուտ է հայերի համար էլ այնպիսի առանձնաշնորհումներ ձեռք բերել, ինչպես Ռուսաստանը ձեռք բերեց բուլղարացիների համար»։

Իսկ անգլիական պաշտոնական «Կապույտ գրքում» ասվում էր, որ եթե Եվրոպան իմանար այն բռնությունների մասին, որ կատարվում էին Հայաստանում, ապա բուլղարական տանջանքները շատ կնսեմանային (181, № 1, 1878, էջ 64)։

Այս ամենը բրիտանական դաղութատիրական կառավարության մշակած լայն նվաճողական ծրագրի տակտիկական նրբերանգներն էին, որոնք իրենց հիմքում հակառուսական նպատակներ ունեին և բնականաբար վնասելու էին հայ ժողովրդի շահերին։ Անգլիական պառլամենտի նիստերում նույնպես չափազանց մեծ չափեր էր ընդունել «հայասիրությունը»։

Անգլիական պառլամենտի անդամ Հարկվարտը հարցապնդում էր արել, թե արդյոք պետք չէ՞, որ Անգլիան նախքան Ռուսաստանի դեմ պատերազմ հայտարարելը՝ Հայաստանում Թուրքական կառավարության իշխանությունը պահպանելու համար իմանա հայ ազգի կարծիքը։ Նա գտնում էր, որ Ռուսաստանի դեմ սպասվելիք պատերազմը, համենայնդեպս, չպետք է Հայաստանը Թուրքիայի տիրապետության

տակ թողնելու նպատակ հետապնդի (57, № 13, 1878)։

Հենց որ հայտնի է դառնում Սան-Ստեֆանոյի պայմանագրի բովանդակությունը, հայկական խնդրին նվիրված մի ժողով է հրավիրվում Ջեյմս Բրայսի տանը, որին մասնակցում են ինչպես Լոնդոնի և Մանչեստրի հայերը, այնպես և անգլիացիներ, թվով 20 մարդ։ Ըստ Մուշեղ եպիսկոպոսի՝ այդ ժողովի նախաձեռնողը Գ. Փափազյանն էր, որը համոզել էր Ջ. Բրայսին։ Սակայն 1878 թվականի մարտի 19-ին գումարված այդ ժողովը չէր կարող անգլիական պաշտոնական շրջանների գիտությամբ չլինել, քանի որ այնտեղ քննարկվելու էր առաջիկա կոնգրեսին Հայաստանի բարենորոգումների վերաբերյալ ծրագիր ներկայացնելու խնդիրը (56, էջ 74)։ Ժողովի մասնակիցներն ուսումնասիրում էին Հայաստանի քարտեզը, քննարկում ընակչության թիվը, ինքնավարության տարբերակները և այլ հարցեր։ Որոշվում է մի հուշագիր ներկայացնել լորդ Դերբիին, խնդրելով նրա աջակցությունը հայկական խնդրի լուծման գործում։ Ստեղծվում է հայոց հարցը պաշտպանող երկու հանձնաժողով. մեկի գլխին առաջարկվում է կարգել արտաքին գործերի մինիստր Դերբիին, սակայն նրա հրաժարվելուց հետո հավանություն է ստանում Ջոն Քենուեյի թեկնածությունը։ Մյուսի նախագահ է դառնում սկզբում Սեթ Աբգարը, հետո մի այլ մեծահարուստ հայ՝ Մելիտոսը։

1878 թվականի մարտի 22-ին Հովհ. Անդրիասյանի անունից ծանուցվում էր մի ընկերության կազմումը, որը պետք է հետապնդեր հայոց իրավունքները պաշտպանելու խնդիրը (Society for promoting the Interests of Armenia)։

Փաստ է, որ Ջեյմս Բրայսը նրբորեն կատարում էր անգլիական դիվանագիտական վարիչների հրահանգները։ Փաստ է, որ նրա տանը 1878 թվականի մարտի 7(19)-ին տեղի ունեցած հավաքի որոշումները դրվեցին Բ. Դռանը ներսես պատրիարքի ներկայացրած (1878 մարտ) ծրագրի հիմքում։

Բրայսի կարծիքով, «հայոց կրած տառապանքը ճանաչել պետք է, որպեսզի անոնց դարման տրվի և Ռուսիո միջամտության առաջքն առնվի և ասոր լավագույն եղանակ կհամարի ազգային զինվորություն և ինքնակառավարություն

հաստատելով՝ իրենք զիրենք պաշտպանելու միջոցներ տալ հայոց» (53, № 2137, 1878)։ Սեթ Աբգարը պետությունների հղած իր հուշագրում բացահայտում էր իրական վիճակը Թուրքահայ նահանգներում, ցույց էր տալիս հայերի զոհողությունները պատերազմի ժամանակ, Թուրքական կառավարության անկարողությունն ու անձեռնհասությունը և առաջարկում էր Լիբանանի օրինակով ինքնավարություն շնորհել Հայաստանին (221)։ Լոնդոնում Սեթ Աբգարի հետ միասին գործում էր Գարեգին Փափազյանը, որն իզմիրցի էր, մշտական նամակագրություն ուներ Ներսես պատրիարքի հետ։ Նրա նախաձեռնությամբ էր, որ Լոնդոնում ստեղծվեց հայկական կոմիտե (56, էջ 71—72)։

Մանչեստրի հայերը, մասնավորապես Հովհ. Անդրիասյանը, տեսնելով, որ Հայաստանի իրավունքների պաշտպանության գործը Խրիմյանին է հանձնված իբրև լիազոր պատվիրակի, ապրիլի 17-ի շրջաբերականով ծանուցում են մարտի 22-ին ստեղծված ընկերության կազմալուծումը (56, էջ 98)։

Լոնդոնահայերը մեծ շուքով դիմավորեցին Փարիզից Լոնդոն ժամանած Խրիմյան հայրիկին։ Այնուհետև նա մեկնեց Մանչեստր։ Այստեղ էր նա ասել, թե պիտի խոսեր լացի լեզվով, պատասխանելով այն հարցին, թե ինչ լեզվով պիտի հանդես գար դիվանագետների առջև։ Մի հատուկ ուղերձով Խրիմյանին ողջունեցին Մանչեստրի հույն հոգևորականները, շնորհավորելով նրան «ազգային իրավունքներն ստանալու ամենաբարձր գաղափարն ունենալու համար»։ Նրանք հաջողություն էին մաղթում «սուրբ նպատակին» (56, էջ 97)։

Խրիմյանն ասում էր, որ Անգլիա է եկել Մեծ Բրիտանիայի կառավարությունից և ժողովրդից «արդարություն և պաշտպանություն խնդրելու, որովհետև Օսմանյան Հայաստանի քրիստոնյայք ոչ քրիստոնյա ցեղերու մոլեռանդութենեն անխնա կչարչարվին» (53, № 2119, 1878)։

Խրիմյանը Անգլիա ժամանեց իր ձեռքում ունենալով Ներսես պատրիարքի կոնդակը (1878 թ. մարտի 1), որտեղ դիմում էր արվում Անգլիային, աղերսելով նրա օգնությունը հօգուտ քրիստոնյա հայերի (56, էջ 78—81)։ Նա մի շարք այցելություններ է տալիս պետական, պաշտոնական գործիչների, տեսակցություններ ունենում պառլամենտի անդամների, ժուռնալիստների հետ։ Նրա պատվին կազմակերպվում են ընդունելություններ։ Սակայն փաստերը վկայում են, որ առկա էր ակնբախ սառնություն, հաշվենկատություն, որոշակի բան չասելու, խոստումներ չտալու միտում։ Աստիճանաբար լավատեսությունն ընկճվում էր, հանդիպելով անգլիական շահախնդիր որոգայթներին։

Այս բանի ապացույցն էր այն խուսափողական պատասխանը, որ Անգլիայի արտաքին գործերի նոր մինիստր Սոլսբերին տվեց հայկական պատվիրակությանը 1878 թվականի մայիսի 10-ին, երբ վերջինս Մեծ Բրիտանիայի օժանդակությունն էր խնդրում Հայաստանի երեք նահանգներին ինքնավարություն շնորհելու հարցում։ Խրիմյանն ասել էր, թե «Բ. Դռան դեմ թշնամական մտքով չէր խոսում», թե «իր ժողովուրդն Օսմանյան կայսրությունից բաժանվելու դիտավորություն չունի», այլ խնդրում է տերություններից նկատի ունենալ հայոց շահերը ապագա կոնգրեսում» (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 175)։ «Անկեղծ համակրանք» արտահայտելով հայ պատվիրակին (53, № 2130, 1878), Սոլսբերին ամեն ինչ պայմանավորեց առաջիկա կոնգրեսով, ընդհանուր խոսքերով վստահեցնելով, թե հայերի համար կապահովվի այնպիսի մի վարչություն, որը նրանց «կերաշխավորի բարեկեցություն, ազատություն և խաղաղություն»։ Շաղակրատություն, դատարկ ֆրազներ էին սրանք, դիվանագիտական խաբկանքներ, առանձնապես հատուկ այն ժամանակվա բրիտանական թրծված դիվանագետներին։ Սոլսբերին շտապում էր հայտնել Կ. Պոլիս՝ իր դեսպան Լայարդին, թե ինքը Խրիմյանին ընդհանուր օժանդակություն է խոստացել՝ «մեր բոլոր ջանքն ի գործ կդնենք իրենց վիճակը բարվոքելու»։ Բայց «հարկ չհամարեցի տերությունների խորհրդի կողմից գործադրվելիք մասնավոր միջոցների մասին խոստումներ տալ» (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 175)։ Անդրադառնալով Անգլիայում հայոց պատվիրակության գործունեությանը, Արշ. Զոպանյանը նկատում է, որ «անգլիացի դիվանագետները ժպտալով մեր պատգամավորներուն ուսը կշոյեին, և մեր պատգամավորներն ալ Պոլիս կծածկագրեին, թե «ամեն բան կարգին է»» (7, № 3, 1899, էջ 90)։

Լոնդոնում լորդ Բիքոնսֆիլդը հայկական պատվիրակությանը չընդունեց, իր քարտուղարի միջոցով հայտնելով, թե չափազանց զբաղված է և որ պատվիրակության խնդիրը քաղաքական է և վերաբերում է արտաքին գործերի մինիստրին, որն արդեն ունկնդրել էր հայ պատվիրակներին (29, էջ 102)։ Լոնդոնում Խրիմյանից ստացած հիշատակագրին արտաքին գործերի մինիստրությունը պաշտոնական պատասխան չտվեց, բավարարվելով այն Բեռլին ուղարկելով։ Միաժամանակ հասկացնել տվին հայ պատվիրակությանը, որ հայերի ինքնավարությունը հնարավոր չէր, քանի որ մյուս ազգերն էլ այդպիսի իրավունքներ կպահանջեին։ Արտաքին գործերի մինիստրության կարծիքով, լավագույն լուծումը հայ կառավարչի իշխանության ներքո Հայաստանի բոլոր բնակիչների ազգային և կրոնական հավասարությունն էր (53, № 2147, 1878)։ Իսկ Նուբար փաշայի հետ հայկական բարենորոգումների մասին խորհրդակցելուց հետո Բիքոնսֆիլդը լորդերի պալատում հայտարարեց, թե «Փոքր Ասիայի քրիստոնյաներին երջանկացնելու համար բավական է բարենորոգել թուրքական դատարանները» (21, № 2(93), 28. X. 1899)։ Հատկանշական է, որ Լոնդոնում պարսից հայազգի դեսպան Մելքոն խանը նույնպես Նուբար փաշայի նման կոնդրեսին «համեստ պահանջներ ներկայացնելու տեսակետին էր» (73, էջ 379)։

Քենտրբերիի արքեպիսկոպոսին տված այցելության ժամանակ Խրիմյանը նկարագրում էր հայ ժողովրդի ծանր վիճակը թուրքական 500-ամյա սպանիչ լծի տակ։ Նա իր ուղերձի մեջ հիշեցնում էր, որ բուլղար ու հույն ժողովուրդների համեմատությամբ շատ ավելի վատ էր հայ քրիստոնյաների վիճակը և նրանից օգնություն էր հայցում գավառներում սոսկալի հարստահարությունների և անլուր ոճիրների ենթարկված հայ ժողովրդի համար։ Նա դիմում էր նրա «քրիստոնեական մարդասիրությանը», հույս հայտնելով, որ անգլիական պետության «հզոր և ազատասեր ձեռքը կարձակի հինգդարյա գերության շղթան» (56, էջ 102—103)։ Անգլիական եկեղեցու ղեկավարը բավարարվեց լոկ քաղաքավարական պատշաճությամբ և համակրական արտահայտություններով։

Խուսափողական էր նաև Գլադստոնի կեցվածքը, թեև հայասերի անուն ուներ, և նրա հետ հույսեր էին կապում այն ժամանակվա հայ գործիչները։ Նա Խրիմյանին հյուրասիրում է իր տանը, ծանոթացնում իր կնոջ և դստեր հետ, երկար-բարակ խոսում հայոց լեզվի և գրականության մասին։ Իսկ քաղաքական թեմային անդրադառնալով՝ ասում է. «թեև համակրում է հայկական դատը, բայց աջակցություն չի խոստանում, քանզի իշխանությունից հեռու լինելով, այսօր մեծ ազդեցություն չունի» (73, էջ 389)։

Այս մասին «Մասիս»-ը հետևյալն էր հաղորդում. «Խրիմյան սրբազան ի ճաշ հրավիրվեցավ լորդերուն խորհրդարանին գլխավոր անդամ Արգայլի դուքսեն, որու որդին թագուհվույն փեսան է։ Նմանապես ի ճաշ հրավիրվեցավ պ. Գլաթըստոնեն, որ Արգայլի դուքսին պես հայոց խնդրի վրա յուր ջերմ համակրությունը հայտնելե և հուսալից խոստումներ տալե ետքն, արևելյան լեզվաց և գրականության վրա երկար խոսակցելով պ. Մինաս Չերազի հետ, և շատ գոհ ըլլալով՝ յուր լուսանկար պատկերն ընծայեց անոր՝ տակն ստորագրությունը դնելով. մեծ պատիվ մը, որուն իրավամբ արժանի գտնված է պ. Մ. Չերազ (53, № 2130, 1878)։

Մուշեղ եպիսկոպոսը նկատում է, որ անգլիական քաղաքականությունը «բարեկամ և դաշնակից էր» Թուրքիային, որ Անգլիայի «բոլոր ձեռնարկներն ուղղված էին խափանելու միմիայն Ռուսիո դեպի Փ. Ասիա առաջխաղացումի և ընդլայնումի քաղաքականությունը»։ Որքան քիչ ժամանակ էր մնում եվրոպական կոնդրեսի բացմանը, այնքան որոշակի, ոչ հայանպաստ էր դառնում անգլիական պաշտոնական գիրքավորումը։

Գտնվել էին մարդիկ, որոնք անգլիական թերթերի էջերում վատաբանում էին մեր ժողովրդին։

«Թայմս»-ի էջերում հանդես եկած Տրապիզոնի նախկին անգլիական հյուպատոս Բալկրավը գրում էր, թե «Հայաստան անուն երկիր կամ բավական թվով հայոց ազգ կամ ժողովուրդ չկա, որպեսզի վերոհիշյալ ձևով կառավարական դրություն մը կարելի ըլլա անոր» (53, № 2148, 1878)։

Բրայսը և Ռոուլինսոնը, «կուսակցությունների քաղաքական ձգտումներով կուրացած, գտնում են, որ Հայաստանը

ինքնավարության անընդունակ է»,— գրում էր «Գոլոս»-ը։ «Հայերն ինքնավարության ընդունակ չե՞ն։ Այն հայերը, որոնք դարերի երկար շարքեր անցկացրին և պաշտպանեցին իրենց գոյությունը, կարծես, անհաղթելի արգելքներու մեջ, չկորցնելով երբեք հավատը ոչ իրենց սեփականացրած քրիստոնեական քաղաքակրթության սկզբունքների մեջ, ոչ իրենց բարձր կոչումի մեջ՝ այն սկզբունքների ներկայացուցիչներ և միջնորդներ լինել Ասիայի խորքում, ուր Հակոհաուզենի խոսքերով՝ «վիճակված է նրանց դեպի կյանք հրավիրելու մտավոր կյանքի համարյա թառամած սերմերը»» (57, № 116, 1878)։

«Գոլոս» թերթը քննադատել էր Ջեյմս Բրայսին, որը Հայաստանը համարում էր ոչ թե երկիր, այլ աշխարհագրական տերմին, որ նա, իբր, չուներ բնական սահմաններ, ցեղական միություն և այլն։ Քննադատվում էր նաև անգլիական մի այլ գործիչ՝ Հենրի Ռոուլինսոնը, որը ժխտում էր Հայաստանի ինքնավարության հնարավորությունը։ Ռուսական թերթը ցույց էր տալիս, որ առաջարկվող հայկական նահանգապետության 2.062 հազար բնակիչների ընդհանուր թվից 1.330 հազարը հայեր էին լինելու՝ 530 հազար թուրքերի, 120 հազար քրդերի և 82 հազար հույների, ասորիների, լազերի և եզդիների կողքին, Էրզրումի և Վանի տերիտորիայում։ «Այսպիսի թվանշաններ նկատի ունենալով, չի կարելի չընդունել հայոց ցեղը, իբրև տիրապետող տարր Մեծ Հայաստանի թուրքաց մասում»,— եզրակացնում էր թերթը (57, № 110, 1878)։ Որոշ ժամանակ անց, նույն թերթը մի առաջնորդող նվիրեց հայոց հարցին, որտեղ ապացուցում էր, որ 16-րդ հոդվածը շատ ավելի մեծ իրավունքներ էր խոստանում հայերին, քան այն, ինչ նախատեսել ու չէր կատարում Անգլիան (57, № 112, 1878)։

Հետաքրքրական է Լոնդոնում թուրքական դեսպան, ազգությամբ հույն Մուսուրուս փաշայի խորհուրդն այն մասին, թե եվրոպական տերությունների վրա հույս չպետք է դնել, քանի որ «նրանք ուժ չունեն Ասիական Թուրքիայում» (73, էջ 390)։ Նույնպիսի խորհուրդ էր տալիս հայ պատվիրակներին անգլիական պառլամենտի անդամ Ֆորստերը։ Նա Խրիմյանին հորդորում էր «չվշտացնել» Ռուսաստանին, որը «ձեր դրացին է». «մի դարձեք այստեղ գործիք ոչ պահպանողական կուսակցության և ոչ էլ մեր՝ ազատականների ձեռքում»։ Նա գտնում էր, որ հայերն ուժ չունեին իրենց ինքնավարությունը պաշտպանելու համար, իսկ «Անգլիայի օգնության վրա հույս չի կարելի դնել», որ «դժվար է Անգլիայի համար հսկել Հայաստանի վրա, որն այնչափ հեռու է մեզնից» և այլն (73, էջ 391. 22, էջ 111—112)։ Ժամանակ անց, Ներսեսը 1879 թ. մարտի 21-ին գրել էր Փափազյանին, թե «Անգլիացիք անտառներու մեջ բնակած ատեն, հայերը Ավետարանի լույսով լուսավորյալ էին, պետք չունին բնավ նոր լուսո, և այն ալ Անգլիո մառախլապատ արևմուտքե» (56, էջ 77)։ Սակայն սա ուշացած խոստովանություն էր։ Այդ պահին արդեն սկսվել էր հիասթափության և արժեքների վերագնահատման շրջանը։

1878 թվականի հունիսի սկզբին անգլիական պառլամենտի համայնքների պալատում առաջին անգամ արծարծվեց հայկական խնդիրը։ Երեք օր անց, լորդերի պալատում, պատասխանելով իրեն ուղղված հարցապնդմանը, Սոլսբերին անհնարին էր համարում հայերի համար առանձին բարենորոգումների իրագործումը, դա պատճառաբանելով Թուրքիայում հայ բնակչության ցրվածությամբ։ Միակ ելքը անգլիական մինիստրը տեսնում էր Օսմանյան կայսրությունում ընդհանուր բարենորոգումներ անցկացնելու մեջ։ Այս դիրքավորումը նախօրյակին արդեն պարզ գծագրվում էր անգլիական մամուլի էջերում հրապարակված նյութերում։

Անգլիան ցանկանում էր «պահպանել Թուրքիան նույնությամբ՝ իբր պատվար ռուսին առջև, Թուրքիան պաշտպանելով՝ զայն Անգլիո ճորտը դարձնել և տիրապետել այնտեղ միահեծան»։ Անգլիական պահպանողականները ոչինչ այլ բան չէին խոստանում քրիստոնյաներին, «բայց եթե պարզ հանգստություն, հալածանքի դադարում, ընդհանուր բարեկարգություն, օրինապահության նպաստում»։ Սոլսբերին Խրիմյանին Լոնդոնում ասում էր, որ «Թուրքիան պիտի վերանորոգվի, և թե հայերն էլ պիտի ունենան «բարօրություն, խաղաղություն և ազատություն», բառեր, առանց երաշխավորության, նման ժեռն թյուրքերու խոստումներուն» (7, 1907, № 10—12, էջ 162—163)։

Հուլիսի 1-ին, Բեռլինի կոնգրեսի բացման նախօրյակին, Լոնդոնի անգլո-հայկական հանձնաժողովի հրավերով երուսաղեմյան դահլիճում, Վեստմինիստրի աբբայի նախագահությամբ, տեղի ունեցավ հայանպաստ մի միտինգ, որտեղ Ճառախոսեցին պառլամենտի անդամներ, հոգևորականներ, մտավորականներ։ Հիմնական դիծն այն էր, որ ապահովվեր անգլիական ծրագրերի իրագործումը առաջիկա կոնգրեսում։

Անգլիական պառլամենտի անդամներ Շեֆտսբյուրին, Գրենվիլը, Քորնարվոնը և ուրիշներ խոսում էին Ռուսաստանի դեմ, հայտարարում, թե «հայոց ազգը պահանջում է ինքնավարություն»։ Նրանցից մեկն ասում էր. «մի ազգ, որ չնայած իր քաշած նեղություններին պահպանել է իր անհատականությունը, օգնության արժանի է»։ Այս ամենն արվում էր միմիայն ռուսական ազդեցությունը սահմանափակելու նպատակով։ Միտինգում հանդես եկած Գ. Փափազյանը գտնում էր, որ հայերը Եվրոպայից պահանջում են «հավասար արդարություն» իրենց համար, բուլղարների և մյուս քրիստոնյաների համար նախատեսվածի նման, որ ինքնավարություն տրվի հայերին սուլթանի իրավասության ներքո և եվրոպական երաշխավորությամբ, որ «նոքա չեն նկրտիր օսմանյան տերությենե անկախ հանդիսանալ» (56, էջ 105)։

Միտինգում որոշում ընդունվեց հարց հարուցել պրեմիեր-մինիստր Բիքոնսֆիլդի առջև Բեռլինի կոնգրեսում սատար լինել հայկական հարցին։ Իսկ Լոնդոնում Գերմանիայի դեսպան Մյունստերը պատվիրակությանը հայտարարեց, թե հայերն իրենց հույսերի իրականացումը կգտնեն Բեռլինում, որտեղ «Բիսմարկն աշխատում է ճնշված քրիստոնյաներին ազատագրել օսմանյան լծից» (214, էջ 80)։

Փարիզի «Ժուռնալ դե դեբա» թերթը հունիսին մի հոդված էր նվիրել հայերին, որտեղ գրում էր, թե «արևելյան և ոչ մի ժողովուրդ չունի այնպիսի բարձր ատիճան համակրության և բարոյական օգնության կարոտություն, որքան հայ ժողովուրդը, ոչ միայն Ֆրանսիայի, այլև բոլոր արևմտյան տերությունների մոտ» (57, № 132, 1878)։ Թերթն ապացուցում էր, որ Անգլիայում սառը վերաբերմունքի արժանացած հայ պատվիրակները պաշտպանություն պետք է փնտրեին Ֆրանսիայում։

Շատ ժամանակ չպահանջվեց, որպեսզի «Մասիս»-ի տնօրենները խոստովանեին, որ «Եվրոպայի անտարբերությունը մեզ համար հուսահատեցուցիչ էր» (53, № 2145, 1878)։

* * *

Ի՞նչ ընթացք ունեցավ արքեպիսկոպոս Խորեն Նար-Պեյի առաքելությունը Պետերբուրգ։ Նախ՝ ո՞վ էր Նար-Պեյը։ Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջեր» շարքում առաջինի պատվին արժանացած Նար-Պեյը սկզբում կաթոլիկ էր, հետո էջմիածնական։ Մեծ երգիծաբանի վերաբերմունքը նրան խիստ բացասական է։ «Խորեն եպիսկոպոս, աստվածաբան, կատակերգակ, ազգային երեսփոխան, բանաստեղծ, 1861-ին Գալֆայան, 1870-ին Նար-Պեյ, 1879-ին Լուսինյան...» (68, հ. III, էջ 13)։

Խորեն Նար-Պեյը ծնվել է Կ. Պոլսի Բերա եվրոպական թաղամասում 1837 թվականին։ Գրել է բանաստեղծություններ (Խորխորունի ստորագրությամբ), մինչև եպիսկոպոս ձեռնադրվելը կրում էր Գալֆայան ազգանունը։ Իրեն համարում էր Լուսինյան թագավորական տոհմի շառավիղ։ Ուսումնառությունը շարունակել էր Վենետիկի ս. Ղազար կղզու կաթոլիկ միաբանությունում։ Նա ուսանել էր Գ. Այվազովսկու և Հյուրմյուզյան եղբայրների մոտ։ Ոմանք Գալֆայան ազգանունը կապում են թուրքերեն «գալֆա» բառի հետ, որը նշանակում է վարժապետի օգնական։ Նրա ավագ հարազատներից մեկը՝ Գալֆա գնդապետը, ժամանակին թուրքական սուլթանի դեմ ապստամբած՝ Եգիպտոսի խեդիֆ Մեհմեդ Ալիի մերձավորագույն խորհրդականներից էր։

Խորեն Նար-Պեյը գրում և խոսում էր ֆրանսերեն, հայերեն, իտալերեն, լատիներեն, հունարեն, թուրքերեն և ռուսերեն։ Առանձնապես ծանոթ էր Լամարթինի հետ, գրաբարի էր թարգմանել նրա բանաստեղծությունները։ Կապեր ուներ իտալական բանաստեղծների հետ։ «Թիֆլիսսկի վեստնիկ» թերթը գրել էր, որ «Խորեն Նար-Պեյին խկապես դիպլոմատիական մարդ կարելի է անվանել» (57, № 93, 1878)։

Նար-Պեյի անունը կապում էին մի շարք հայկական հոգևոր դպրոցների հիմնադրության հետ (լիցել էր հիմնել

Փարիզում, հոգևոր ուսումնարան՝ Թեոդոսիայում, մեծ ծառայություն մատուցել Կ. Պոլսի արվարձաններ Բերայի և Բեշիկթաշի հոգևոր դպրոցների բարեկարգությանը)։ Ժամանակին նա փորձում էր մրցել Խրիմյանի հեղինակության հետ, որը Վարագի օրինակելի հոգևոր դպրոցի, Վանի, Էրզրումի և Երզնկայի մի քանի միջնակարգ դպրոցների հիմնադիրն էր։

Դիվանագիտական միսիա ստանձնելու պահին նա Կ. Պոլսի Բեշիկթաշ թաղի արքեպիսկոպոսն էր, Ներսես Վարժապետյանի, Գրիգոր Օտյանի և մյուսների համախոհը, թեև ավելի ընդգծված էր հանդես գալիս Ռուսաստանին ապավինելու խնդրում։

Ռուսաստանում հաջողության հասնելու նպատակով Էջմիածնի Գևորգ Դ կաթողիկոսի մասնակցությունն ու օժանդակությունն ապահովելու համար սկզբում Ներսես պատրիարքը մտադրվում է նրա մոտ ուղարկել եպիսկոպոս Իզմիրլյանին։ Պատերազմի առաջացրած դժվարությունների, թե այլ պատճառով սրան չի հաջողվում Կովկաս անցնել։ Սակայն իր հերթին Իզմիրլյանը նամակ է հղում Գևորգ կաթողիկոսի վրա ազդեցություն ունեցող Վահրամ եպիսկոպոս Մանկունուն, նրան շարադրելով խնդրի էությունը։ Նամակում մասնավորապես ասված էր, որ Թուրքիան պարտված է, որ «ամեն պարագային մեջ Ռուսիո պաշտպանությունը կկարոտինք։ Փութանք միշտ նրա համակրությունն ու սերը գրավել»։ Նա անհրաժեշտ էր համարում հայկական հարցը մեջտեղ բերել և Ասիական Թուրքիայի խնդրի արծարծման ժամանակ «մեր երկրին վրա մեր բաժնին տերն ըլլանք» (73, էջ 322—323)։ Փաստերը վկայում են, որ երբ Իզմիրլյանը վերջապես հասավ Էջմիածին և փորձեց գործնական հողի վրա դնել իրենց փայփայած ծրագրերը, հանդիպեց խուլ ընդդիմության և խուսափողական պատասխանների։ Գևորգ կաթողիկոսն ըստ էության բոյկոտեց հայկական հարցը Պետերբուրգի օգնությամբ լուծելու համար գործադրված ջանքերը։ Նա մերժեց միջնորդել ռուսաց գահի մոտ, չօժանդակեց Պետերբուրգ հասած Նար-Պեյին, խիստ բացասաբար արտահայտվելով Կովկասում ցարական քաղաքականության հասցեին (41, 1938, № 4, էջ 16)։

Ըստ Խորեն Նար-Պեյի խոսքերի՝ նրա պատգամախոսության նպատակն էր՝ խնդրել ռուսաց կառավարությունից, որպեսզի նա ավելի ընդարձակ և իրական գործադրություն պահանջեր Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի համար (57, № 50, 1878)։ Հետագայում ազգային ժողովում ծագած վիճաբանությունների ժամանակ ասվում էր այն մասին, որ Նար-Պեյը Պետերբուրգ էր ուղարկվել 16-րդ հոդվածում նախատեսվածից ավելին ակնկալելով, քանի որ սկզբունք էր ընդունվել պահանջել այն, ինչ տրվելու էր բալկանյան ժողովուրդներին։ Արդեն ասվում էր այն մասին, որ Խրիմյանը Լոնդոնում ուրիշ լեզվով, իսկ Խորեն Նար-Պեյը Պետերբուրգում մի այլ լեզվով էին խոսում, որ մեկը հյուսիս, մյուսը արևմուտք ուղարկված լիազորների քաղաքականությունը հակոտնյա էր (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 183—184)։

Խորեն Նար-Պեյի մասին հոդված-ինտերվյու էր տպագրել «Սևեռնի վեստնիկ» թերթը։ Պետերբուրգ գալու իր նպատակի մասին նա ասել էր, որ խնդրելու էր թագավոր կայսրից պաշտպանել հայերին եվրոպական կոնգրեսում։ «Անզեն հայ ազգաբնակության աշխարհագրական դիրքը, գինված, ռազմական մահմեդական ցեղերի մեջ նրա գտնվելը թույլ չէին տալիս բոսնիացիների և հերցեգովինացիների պես զենք վեր առնել և որ հայերի դրության միակ ճանապարհը դիվանագիտական ճանապարհն է»,— ասում էր նա։

«Մեր հայրենակիցները, որոնք բնակվում են Ռուսաստանում, ավելի ազատ և ապահով դրության մեջ են, քան Թուրքիայի հայերը. այդ պատճառով մենք ամենից շատ պետք է դիմենք Ռուսաստանին, խնդրելով նրանից, որ մեզ համար ձայն տա կոնֆերանսում»։ Նա բացատրում էր, որ «մենք չունենք անձնական ազատություն, մենք կառավարիչների սարուկներ ենք, մեր ժողովուրդը սեփական հող չունի, հայերը կախված են թուրք աստիճանավորների կամայականությունից։ Նա մտահոգություն էր արտահայտել, որ «Թուրքերը վրեժխնդիր կլինեն հայերից, որովհետև նրանք լավ ընդունեցին ռուսաց զորքերին Փոքր Ասիայում, իսկ հայերն անզեն են» (57, № 49, 1878)։

Պետերբուրգում Խորեն Նար-Պեյը պատրիարքի «Հայկա-

կան ինքնավարության ծրագիրը» դիմումի հետ միասին ներկայանում է ռուսական կառավարությանը, տեսակցություններ ունենում Գորչակովի, Իգնատևի և ուրիշների հետ։ Այնուհետև նրան ընդունում և ունկնդրում է Ալեքսանդր II-ը։ Նար-Պեյը շեշտում էր բացառապես Ռուսաստանի հովանավորությունն ու գերիշխանությունը ապագա «ինքնավար Հայաստանի» վրա։ Նա Պետերբուրգի հայոց եկեղեցում հանդիսավոր պատարագ և գոհունակության մաղթանք է կատարում ռուսաց կայսերական տան համար, պերճախոս քարոզով ավետելով բոլորին, թե կայսրը հատուկ հոգածություն ունի Թուրքահայերի նկատմամբ (53, № 2116, 1878)։

Ռուսական պետության ղեկավարներին նա ներկայացրեց իր առաքելության նպատակները, պարզեց խնդրանքի էությունը՝ Հայաստանի վարչական ինքնօրինություն Ռուսաստանի հովանու ներքո։ Նա թախանձագին խնդրում էր, որ ռուսական զորքը Հայաստանում իր գրաված վայրերից չհեռանար, քանի դեռ Հայաստանի ինքնավարությունը չէր իրականացվել (73, էջ 328)։ Գլխավոր միտքն այն էր, որ Հայաստանի ինքնավարությունը հնարավոր էր միայն Ռուսաստանի հավանությամբ և նրա պաշտպանության ներքո։ Իր հիշատակագիրը դիվանագետ արքեպիսկոպոսը 1878-ի մարտի 14-ին ներկայացրեց իշխան Գորչակովին, թախանձագին խնդրելով նրա աջակցությունը։ Գորչակովն իր և ցարի անունից հավաստիացնում էր նրան, որ ուզում էր հայկական խնդրին «լավագույն» լուծում տալ, բայց դրան խանգարում էր Անգլիան։ Մարտի 18-ին Նար-Պեյին ընդունում է Ալեքսանդր II-ը։ Սա ասում էր, թե քաղաքական հանգամանքները եթե ներեին, ամեն ինչ կաներ հայերի ապագայի համար, թե սիրում էր հայոց ազգին և այլն (73, էջ 330—332)։

Միաժամանակ Գորչակովը չէր թաքցրել իր գժգոհությունը եվրոպական մյուս տերություններին դիմելու փաստից։ Նա մանրամասնորեն իրազեկ էր ամեն ինչին և Նար-Պեյին ընդունում է «թթու երեսով», ասելով. «խնդրեմ դիվանագիտություն չխաղալ ինձ հետ, monseigneur, ձեր պատրիարքը ուղարկել է Եվրոպա իր մարդկանց, թող նրանք պաշտպանեն ձեր դատը Ռուսաստանի ոխերիմ թշնամիների ատյանի առջև» (58, 1907, № 2, էջ 64)։ Ինչ խոսք, որ հակասական

իրավիճակ էր ստեղծվում։ Իրարամերժ պահանջներ էին հրապարակ բերված։ Ցարին ներկայացված հուշագրով անվերապահորեն Ռուսաստանի հովանավորության խնդիր էր դրվում, իսկ կոնդրեսին ներկայացված հուշագրով՝ վեց տերությունների պաշտպանություն։ Եվրոպական կառավարություններին դիմելով, Ներսես պատրիարքը հայ ժողովրդի քաղաքական կյանքի խնդիրները կապում էր եվրոպական տերությունների դիվանագիտության հետ, թուլացնում ռուսական մենաշնորհ դիրքը այդ մարզում։ «...Համենայն դեպս հարկ չկար Բեռլին մարդիկ ուղարկելու, որոնց միջամտությունից Թուրքիայի հայերն ավելի կտուժեն, քան թե կշահեն»,— նկատում էր ռուսական կանցլերը (58, 1907, № 2, էջ 65)։ Պետերբուրգում ցարական պաշտոնատար անձինք հասկացրին Նար-Պեյին, թե գժգոհ էին այն դիմադրությունից, որ Կ. Պոլսի հայերը ժամանակին ցույց էին տվել Իգնատևի ծրագրերին (74, էջ 66)։

Բեռլինի կոնդրեսի օրերին հնչում է Կարապետ Փանոսյանի ձայնը.

«Ի՞նչ եք անում, ո՞ւր եք տանում ազգը, սնազլուխ և ինքնակոչ դիվանագետներ. ո՞վ կտա մեզ ինքնավարություն, ո՞րի վրա եք դնում ձեր հույսը,— այն շահամոլ և ենթադ Եվրոպայի վրա, որն ուզում է պահպանել Թուրքիայի գոյությունն իր շահասիրական նպատակների համար։ Բեռլին պատվիրակություն ուղարկելով չէ՞ որ հայ ազգի կատաղի և անհաշտ թշնամի պիտի դարձնենք Թուրքիան, որի մեջ մեր տկար տեղովը 4—5 դար լավ թե վատ ազգը կարողացել է պահել իր կրոնը, լեզուն և բոլոր հատկանիշները»։ Նա կոչ էր անում չհավատալ Թուրքիայի պետական մարդկանց սիրալիր ժպիտին ու պատրաստակամ հավանությանը՝ Բեռլին պատվիրակություն ուղարկելու մասին. «այդ մարդիկ ուզում են փորձել մեզ և մեր հավատարմության իսկական չափը ճանաչել»։ Նա գտնում էր, որ չպետք է հրապուրվել Իգնատևի հայասիրական խոսքերից, որ 16-րդ հոդվածը «նա մեր սիրույն համար չէ մտցրել...»։ Բեռլին պատվիրակ ուղարկելը «հակաթուրքական և հակառուսական մի ցույց պիտի նկատվի...»,— եզրակացնում էր նա (58, 1907, № 2, էջ 61—62)։

Այսպիսով, ոմանք ոգևորված էին հայոց հարցը եվրոպական դիվանագիտության սեղանին դրվելու փաստով, մյուսները դա դիտում էին սուլթանի հերթական խաղերից մեկը՝ Ռուսաստանի ձեռքից մենաշնորհ իրավունքը խլելու և այդ խնդիրը եվրոպական հակասությունների սովորական խառնաշփոթում խճճելու նպատակով։

Ներսես պատրիարքի կազմակերպած բեռնակիրները ջարդուփշուր են անում Փանոսյանի տպարանը, մեքենաները, ցիրուցան անում գրադարանը։ Կ. Պոլսում նրան հոչակում են դավաճան։ Իսկ այդ օրերին Կ. Պոլսում գրում էին. «Խորեն եպիսկոպոսի մասին գոհացուցիչ լուրեր կստանանք։ Պետերբուրգի մեջ լավ ընդունելություն գտնելը կհուսադրե զմեզ»։ Գերմանական թերթերը գրել էին, թե իշխան Գորչակովը փոխադարձ այցելություն էր տվել Խորեն Նար-Պեյին (57, № 64, 1878)։

Նար-Պեյը հաղորդել էր Կ. Պոլիս՝ Ներսեսին, որ չնայած իրեն տրված բարձր ու ջերմ ընդունելությանը, պատասխանը եղել էր «անորոշ, ինչպես ամբողջ արևելյան քաղաքականությունն է ներկայումս» (141, էջ 217)։ Ռուսաստանի բարի կամքից ու տրամադրությունից չէր կախված ինքնավարության ծրագրի հաջողությունը, գրում էր նա և տարակուսանք հայտնում, որ դժվար թե առաջիկա կոնգրեսում այդ ծրագիրը գտներ Ռուսաստանի պաշտպանությունը (73, էջ 332)։

Նա Պետերբուրգից մի ջերմ նամակ էր հղել գյուղում գտնվող հիվանդ Իգնատևին, ցավ հայտնելով նրա առողջական վիճակի և կոնգրեսին չմասնակցելու առիթով։ «Բոլորից ավելի լավ դուք կարող էիք մեզ պաշտպանել և նկարագրել մեր դժբախտ դրությունը,— գրում էր նա։— Դուք կարող էիք կոնգրեսում լինել մեր լավագույն հովանավորը և պաշտպանը Եվրոպայի առջև և ամենաընդունակը ապահովելու համար մեր ազատագրումը, որ այդքան լավ սկզբնավորվել էր ձեր ջանքերով»։ Այնուհետև Նար-Պեյը նշում էր, որ հայերը չէին մոռանա այդ ռուս դիվանագետի ջանքերը «մեր փրկության համար»։ «Ապագա պատմաբանը կասի, որ գեներալ Իգնատևին է պատկանում առաջին անգամ եվրոպական պայմանագրում հայերին հիշատակելու պատիվը,

երբ թուրք ճնշողները ստիպված էին պաշտոնապես, հանդիսավոր ակտով ճանաչելու մոռացված, անարդարացիորեն տառապող քրիստոնեական ժողովրդի գոյությունը։ Դուք նվաճեցիք մեր ամբողջ ժողովրդի երախտապարտության անմոռաց իրավունքը» (129, էջ 100)։

Նար-Պեյի առաքելության պատճառով Բ. Դոան և հայոց պատրիարքարանի միջև հարաբերությունները լարվեցին։ Թուրքական կառավարողները տեղեկացել էին Նար-Պեյի գործողություններին, որ նա Ռուսաստանի հովանավորությունն էր խնդրել, ասել և գրել էր, որ հայերն այլևս չեն կարող օսմանյան իշխանության տակ մնալ և այլն (57, № 93, 1878)։

Մինչդեռ Բ. Դուոը ոչ միայն չէր դժգոհել, այլև ինքն էր արտոնել Խրիմյանի պատվիրակության ուղևորությունը Եվրոպա, ապա չափազանց զայրացել էր Նար-Պեյի առաքելության ու նրա գործունեության մասին տեղեկանալով։ Սուլթան Համիդը Ներսեսից պահանջում է ետ կանչել Նար-Պեյին Կ. Պոլիս։ Վերջինս ստիպված անցնում է Եվրոպա, միանում Խրիմյանի պատվիրակությանը՝ Բեռլինի կոնգրեսի բացման օրերին։

* * *

Բացի իր ստանձնած պաշտոնական հանձնարարությունը կատարելուց, Պետերբուրգում Նար-Պեյն իր ժամանակի մեծ մասը ծախսում էր մի այլ խնդրի լուծման վրա։

Հ. Պարոնյանը կծու սարկազմով գրում է, որ Նար-Պեյը երազ է տեսնում, թե ինքը Լուսինյաններից է սերել։ «Այդ երազին մեջ Նար-Պեյ Լուսինյան կներկայանա Խորեն եպիսկոպոսին և անոր կրսե. «Ես եմ Նար-Պեյ Լուսինյան, որ 1798-ին Կիպրոս տաճիկներու հարստահարություններեն փախչելով՝ Եգիպտոս գացի և Նապոլեոնե մեծ պատվով ընդունվեցա. դու ինե սերած ես. շուտ ըրե ել, հագվի և մականունդ փոխե»։ «Նկատելով, որ Ռուսաստանի մեջ Լուսինյան մը կա, որ նամակով ինձի կիմացնե, թե ես իրեն եղբոր որդին եմ» (68, հ. III, էջ 17—18)։ Նա իսկապես հույսեր էր փայփայում ապագա ինքնավար Հայաստանի կառավարչի

պաշտոնում իր ավագ եղբորը՝ Գվիդոնին կարգելու մասին և այդ ուղղությամբ մեծ ակտիվություն էր ծավալել Պետերբուրգում։

Այնտեղ նրան հաջողվում է որոնել և գտնել Գոնշարնայա փողոցի մի աղքատիկ բնակարանում իր կյանքը քարշ տվող տխրահռչակ Լուի Լուսինյանին, որը ժամանակին իրեն հրուշակել էր Լևոն VII և իր թագավորական իրավունքները վերականգնելու շուրջ արկածային աղմուկ-աղաղակ հանել։ Այժմ նա տկար էր և ապրում էր իր որդու հետ աղքատիկ պայմաններում։ Նար-Պեյը նրան ապացուցում է, որ իր պապը նույնպես Լուսինյաններից էր, Լուի հոր՝ Խրոստոդուլ Լուսինյանի եղբայրը։ Նա պատմում էր, որ իր պապերը Կիպրոսից անցել էին Եգիպտոս, հարստացել, ապա տեղափոխվել Կ. Պոլիս։ Թուրքերը, տեղեկանալով, որ նրանք Կիպրոսի և Կիլիկիայի հայկական թագավորության Լուսինյաններից են, հետապնդել էին նրանց, վնասել նրանց բանկային գործերը։

Այս զրույցները տեղի են ունենում ռուսական բանակի գնդապետ Բորշչևի ներկայությամբ։ Խորեն Նար-Պեյը խոստանում է զբաղվել Լուի դը Լուսինյանի ու նրա որդի Միքայելի գործերով, եթե նրանք ճանաչեին և հաստատեին իրենց արյունակցական կապը։

1878 թվականի մայիսին կազմվեց ֆրանսերեն երկու փաստաթուղթ, որոնք պաշտոնապես հաստատվեցին պետական նոտարիուս Վիլհելմ Կինգի կողմից (57, 142, 1878)։ Առաջինում արձանագրված էր Խորեն Նար-Պեյի Լուսինյանների թագավորական ընտանիքից սերվելու փաստը։ Երկրորդում Նար-Պեյը (Խորեն Լուսինյանը) Լուի դը Լուսինյանին՝ «Կիպրոսի, Երուսաղեմի և Հայաստանի թագավորական իշխանին», հայտարարում էր, որ ինքը և իր եղբայրները (իշխան Լև Յուսուֆը և իշխան Գվիդոն Նար-Պեյը) Լուսինյաններ են, ծագում են Ամորի Յուսուֆ Նար-Պեյից, որն առաջինն էր ընդունել այդ ազգանունը, երբ նա 1791 թվականին Կիպրոս կղզուց անցել էր Եգիպտոս, թաքցնելով իր իսկական ազգանունը, նրա արաբերեն մոտավոր թարգմանությամբ (Լուսինյան անունը «լույս» բառից էր, իսկ արաբերենում «նար» նշանակում է լույս)։ Լուսինյանը դարձել էր

Նար-Պեյ։ Ոմանք էլ «Նար-Պեյը» թարգմանում էին նաև «հրեղեն կոմս»։

Ըստ Խորեն Նար-Պեյի կազմած փաստաթղթի՝ Ամորի Յուսուֆ Նար-Պեյը խուսափել էր մոլեռանդ թուրքերի հետապնդումներից, որոնք Եկատերինա II-ի օրոք հայկական թագավորություն վերստեղծելու խոսակցություններն ընդունում էին ընդգծված թշնամությամբ։

Այն բանից հետո, երբ Խորեն Նար-Պեյը պաշտոնապես հաստատել տվեց իր և իր եղբայրների լուսինյանական ծագման մասին փաստաթուղթը, նա երաշխավորեց խնամքի տակ վերցնել ծեր «հրեղեղորը» և ստանձնեց այն գործի ծախսերն ու հոգսերը, «որի համար պայքարել և իր կյանքն էր նվիրել Լուի դը Լուսինյանը»։ Այս ամենից հետո ծերունի Լուին Գոնշարնայա փողոցից տեղափոխում են Սևեռնայա փողոցի վրա գտնվող շքեղ բնակարանը։ Նրան տրվեց մի մեծ գումար և նշանակվեց թոշակ՝ ամիսը երկու հարյուր ֆրանկ։

Շուտով այդ փաստաթղթերով զինված Նար-Պեյ եղբայրները Փարիզում, Էլաուի (հետագայում՝ Վիկտոր Հյուգոյի) փողոցի վրա գտնվող իրենց սեփական հյուրանոցում ժողովներ էին գումարելու, պլաններ էին մշակելու հայկական ինքնավարության և նրանում իրենց կատարելիք դերի շուրջ։ Իսկ ավելի ուշ եռանդուն գրագրություններ էին վարելու եվրոպական կառավարությունների հետ՝ Կիպրոսում իրենց իրավունքների վերականգնման, թուրքական կառավարության կողմից բռնագրավված կապիտալները և անշարժ գույքը վերստանալու և այլնի շուրջ (մանրամասն տե՛ս 95)։

«Ռուսսկի վեստնիկ»-ում Կ. Բորոզդինը ծաղրանքով է խոսում Նար-Պեյի գործողությունների մասին, գրելով, որ այդ ամբողջ անցուդարձը լի էր դրվագներով, որոնք «հարուստ սյուժե են ընձեռում օպերետի համար»։

Գերմանական թերթերը նույնպես հաղորդեցին, որ Նար-Պեյն աշխատում էր ապացուցել, թե ինքն ուղղակի գծով ծագում է Լուսինյանների տոհմից» (57, № 132, 1878)։ Այնուհետև նրա մասին հոդված տպագրեց Փարիզի «Թան» թերթը, որտեղ ասված էր, թե «Նար-Պեյը Լուսինյանների կրտսեր սերնդի երկրորդ եղբայրն է»։ Թերթը հաղորդում էր, որ

Նար-Պեյն ու իր երկու եղբայրները հուլիսի 24-ին մի նամակ էին հղել Սոլսբերիին, որտեղ, պատմական ակնարկի միջոցով, ապացուցելով Կիպրոսի նկատմամբ իրենց ժառանգական իրավունքները, պահանջում էին, որպեսզի անգլիական կառավարության հունիսի 4-ի կոնվենցիայի 3-րդ և 4-րդ հոդվածներում արտացոլվեր այդ (57, № 142, 1878)։

Այս հարցերը քննարկման նյութ դարձան Կ. Պոլսի «Մասիս»-ի էջերում, որտեղ արտատպվում և մեկնաբանվում էին արևմտաեվրոպական մամուլի գրածները։ Ասվում էր այն մասին, որ Նար-Պեյի եղբայրները Պետերբուրգի Լուի դը Լուսինյանի հետ միասին մի նամակ էին գրել Սոլսբերիին, որտեղ ապացուցում էին իրենց իրավունքները Կիպրոսի և Երուսաղեմի նկատմամբ, պահանջում էին այն ոսկին, որ ժամանակին պահ էր տրվել Աթոնաս արքեպիսկոպոսին և 1821 թվականի ապրիլին բռնագրավվել Բ. Դուան կողմից (53, № 2163, 1878)։ «Խորեն եպիսկոպոս մեծ մարդ է. ավելի մեծ պիտի ըլլա անշուշտ, եթե հաջողի Կիպրոսի մեջ Լուսինյանք մնացած կալվածներն Անգղիո ձեռքեն առնել. և աս ալ անհավատալի բան մը չէ»,— հումորով գրել է Հակոբ Պարոնյանը (68, հ. III, էջ 21)։

Պետերբուրգից Բեռլինի «Ալգեմայնե ցայտունգ» թերթի թղթակիցը հաղորդել էր, որ այնտեղ բնակվող Կիպրոսի վերջին գահակալ Լուսինյանների տոհմից մի «խեղճ ծերուկ» համաձայնել էր Կիպրոսի վրա ունեցած իր «իրավունքները» թողնել Անգլիային, համապատասխան փոխհատուցման դեպքում։ Իսկ ֆրանսիական «Թան» թերթը հերքել էր այս լուրը, գրելով, որ «Կիպրոսի ու Հայաստանի թագավոր Լուսինյանների ժառանգն ու հաջորդն է» Խորեն Նար-Պեյը, որի մի եղբորորդին նույնպես «Փարիզ կրնակի»։ Այս լուրերը տպագրելով, «Մասիս»-ն իր կողմից ավելացնում էր. «Կցավինք, որ գեր. Խորեն Նար-Պեյ սրբազան մինչև ցարդ չէր հայտնած յուր թագավորական տոհմե՝ մանավանդ Կիլիկիո հայկական աթոռույն վերջին գահակալ Լուսինյանց ազգատոհմեն սերյալ ըլլալը, որ ստուգիվ մեծ մխիթարության և պարծանաց առիթ մը պիտի ըլլար ամեն ազգասեր հայոց։ Գոհ ենք, որ գաղիական «Թան» լրագիրը, Նար-Պեյանց համեստության քողը պատռելով, երևան կհանե այս մեծ իրողությունն, որ ստուգությանը վրա կասկածելու պատճառ մը չենք տեսներ, քանի որ Նար-Պեյանց կողմե հերքված չէ» (53, № 2154, 1878)։

Բեռլինի կոնգրեսից հետո Խորեն Նար-Պեյը Փարիզում այցելում է Ֆրանսիայի բարձրաստիճան մարդկանց։ Նա հանդիպումներ ունեցավ Վադինգտոնի, հանրապետության նախագահ Մագմահոնի հետ։ Վերջինս խոստանում է, որ Ֆրանսիայի կառավարությունը կանի ամեն բան «հայոց ազգին բարօրության համար» (53, № 2158, 1878)։

Իսկ Գվիդոն Լուսինյանը, կամ Ռուբինյան Ամբրոսիոս վարդապետը, 1879 թվականին Կովկաս այցելելով 2000 ոսկի է հավաքում իբր Բաբերդում երկրագործական վարժարան բացելու նպատակով, բայց փողը յուրացնում է և վարկաբեկվում (62, № 10, 1900, էջ 149)։

Ահա այսպիսին էին այն մարդիկ, որոնք հավակնում էին անօրինել հայ ժողովրդի դիվանագիտական-քաղաքական գործերը։

—◆—

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԸ

Կոնգրեսի մասնակիցները: Հայկական պատվիրակությունը Բեռլինում: Ռուսական կենքի հաղթանակի դիվանագիտական վերաքննությունը: Բիսմարկի դերը: Ռուսական դիվանագիտության ջանքերը: Անգլո-ֆրանսիական կոմպրոմիսը: Բալկանների վերաբերյալ Սան-Ստեֆանոյի պայմանագրի հոդվածների վերանայումը: Մեծ Բուլղարիայի ստեղծման կանխումը արևմտաեվրոպական տերությունների կողմից: Անգլիական դիվանագիտությունը հայկական ինքնավարության կատաղի հակառակորդ: Հայաստանում ռուսական նվաճումների վերանայումը: Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի էությունը: Էնգելսը Բեռլինի կոնգրեսի մասին:

Բեռլինի կոնգրեսը բացվեց 1878 թվականի հունիսի 13-ին և իր նիստերն ավարտեց հուլիսի 13-ին: Կոնգրեսին մասնակից տերությունների լիազոր-ներկայացուցիչներն էին.

Ռուսաստան՝ կանցլեր Գորչակով, Լոնդոնում դեսպան Շուվալով և Բեռլինում դեսպան Ուբրի. Ավստրո-Հունգարիա՝ արտաքին գործերի մինիստր Անդրաշի, Բեռլինում դեսպան Կարոլի և Հռոմում դեսպան Գայմերլը. Անգլիա՝ առաջին մինիստր Բիքոնսֆիլդ, արտաքին գործերի մինիստր Սոլսբերի և Բեռլինում դեսպան Ռոսսել. Գերմանիա՝ կանցլեր Բիսմարկ, արտաքին գործերի մինիստր Բյուլով և Փարիզում դեսպան Հոհենլոե. Ֆրանսիա՝ արտաքին գործերի մինիստր Վադինգտոն և Բեռլինում դեսպան Սեն-Վալլյե. Իտալիա՝ արտաքին գործերի մինիստր Կորտի և Բեռլինում դեսպան Դելոնե. Թուրքիա՝ Կարաթեոդորի փաշա, Մեհմեդ Ալի փաշա և Բեռլինում դեսպան Սաադուլլահ բեյ:

Վիեննայի կոնգրեսից ի վեր Եվրոպան այսպիսի ներկայացուցչական և կարևոր դիվանագիտական ֆորում չէր տեսել: Նրա աշխատանքը լուսաբանելու համար Բեռլին էին ժամանել օտարերկրյա 80 թերթերի թղթակիցներ (57, № 109, 1878):

Բեռլին էին ժամանել նաև Հունաստանի, Ռումինիայի, Սերբիայի, Չեռնոգորիայի, Իրանի ներկայացուցիչները, որոնք, սակայն, կոնգրեսում իրավահավասար մասնակցության իրավունք չստացան: Սրանցից միայն հույներին և ռումիններին լսեցին առանձին նիստերի ընթացքում (151, էջ 38): Մյուսներն ստիպված էին բավարարվել կոնգրեսի աշխատանքներից դուրս տարբեր պատվիրակությունների հետ հանդիպումներով: Սրանց շարքում էր նաև հայոց պատվիրակությունը, որը Բեռլին ժամանեց 1878 թվականի հունիսի 13-ին, մնաց այնտեղ քառասուն օր, բայց նրան մասնակից չդարձրին կոնգրեսին:

Մկրտիչ Խրիմյանը և Խորեն Նար-Պեյը՝ «այդ երկու ականավոր անձնավորությունները», գրում են ֆրանսիական պաշտոնական հրատարակության հեղինակները, կոնգրեսի մասնակիցներին բաժանեցին Հայաստանի վերակառուցման մասին իրենց փաստաթուղթը: Հրապարակելով հայկական ինքնավարության ծրագիրը, այդ հեղինակները նշում են, որ «ծրագիրը միանգամայն չափավոր էր, սակայն կոնգրեսը չբարեհաճեց նրա իրագործման մասին որոշում ընդունել» (213, էջ 1122—1123):

Կոնգրեսի բացման նախօրյակին, 1878 թ. հունիսի սկզբին, Ներսես պատրիարքը Կ. Պոլսի ազգային ժողովում հաշվետվություն էր տալիս իր ձեռնարկումների մասին: Նա ասում էր. «Հայոց խնդիրն իր արժանավոր կերպովը ներկայացած է թե՛ Բ. Դռան և թե՛ եվրոպական տերությանց: Բ. Դուռն իր պաշտպանությունը խոստացավ: Եվրոպական

տերությունք ամենն ալ իրենց համակրությունը հայտնեցին ու ամենեն ալ խոսք առած եմ, որ դեսպանաժողովին մեջ նկատողության պիտի առնվի մեր ազգին վիճակն ալ. հասարակաց կարծիքն ալ այսօր Եվրոպայի մեջ ոչ ևս անտարբեր է մեզի համար»։ Նա ժողովին հայտնեց, որ իրենից կախված ամեն ինչ արել է ազգի շահերի պաշտպանության համար, որ երկու եպիսկոպոսները (Խրիմյան և Նար-Պեյ) եվրոպական մայրաքաղաքներում ազգի դատը պաշտպանելուց հետո գնացել են Բեռլին՝ «միաբան աշխատելու համար դեսպանաժողովին քով»։ Առաջարկություն է մտցվում Ներսեսին շնորհել «Պաշտպան Հայրենյաց» տիտղոսը, բայց նա մերժում է ընդունել այն (10, նիստ Ա, 8.VI.1878, էջ 8—9)։

1878 թվականի հունիսի 23-ին ազգային ժողովը մի հատուկ ուղերձ է ընդունում Ներսես պատրիարքին, նրան շնորհակալություն հայտնում Եվրոպայում հայերին ճանաչել տալու համար։ Ազգային ժողովը հույս է հայտնում և արդարություն սպասում «օգոստոսափառ սուլթանից» և «եվրոպական Արեոպագոսից»։ Ազգային ժողովը խոստանում էր հայերին կրթել եվրոպական քաղաքակրթության և գիտության ոգով (10, նիստ Գ, 23.VI.1878, էջ 10—11)։

Իրականում ամեն ինչ ընթանալու էր այս լավատեսական սպասումներին հակառակ։ «Եվրոպացիք մեզ մարդու տեղ չդրին»,— հետագայում խոստովանում էր Խրիմյանը (7, № 3, 4, 5, 1907, էջ 69)։ Անգլիայի թե Գերմանիայի, Ֆրանսիայի թե Ավստրո-Հունգարիայի իմպերիալիստ կառավարողները քար անտարբերությամբ վերաբերվեցին հայոց ճիչին։

* * *

Կոնգրեսի բացման առաջին նիստում նախագահ ընտրվեց կանցլեր Բիսմարկը։ Խոսք վերցնելով նա հայտարարեց. «Մենք հավաքվել ենք այստեղ այն բանի համար, որպեսզի Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ենթարկենք այն կառավարությունների ազատ քննարկմանը, որոնք ստորագրել են 1856 և 1871 թվականների պայմանագրերը» (151, էջ 38)։

Ռուսական զենքի հաղթանակների արդյունքներն ու արժեքը վերագնահատվելու էին եվրոպական ատյանում։ Իսկ կոնգրեսի նախօրյակին ցարական արքունիքում տիրող տրամադրությունն ընդգծված պաշտպանողական էր։ Այն ճշտորեն արտացոլված է ռազմական մինիստրի խոսքերում, որ նա ասել էր Շուվալովին՝ վերջինիս Բեռլին մեկնելու նախօրյակին։ Երբ Շուվալովը կոնկրետ հրահանգներ ստանալու հարց դրեց, Միլյուտինը նկատեց, թե ինչի՞ համար էին նրան պետք այդ հրահանգները։ «Դուք գիտեք վիճակը։ Մենք այլևս չենք կարող կռվել։ Մենք դա չենք կարող անել ո՛չ ֆինանսական, ոչ էլ ռազմական նկատառումներով։ Պաշտպանեցեք այն կետերը, որոնք դուք հնարավոր կհամարեք պաշտպանել և զիջումներ արեք։ Ավելի լավ է զիջեք ամենը, միայն թե կոնգրեսը չտապալեք» (136, հ. 59, 1933, էջ 101)։

Իր առաջին ճառում Բիքոնսֆիլդն առանց այլևայլության հայտարարեց. «Մենք Անգլիայից այստեղ ենք ժամանել կարգավորելու Թուրքական սուլթանի գործերը և նրան լրիվ հնարավորություն ընձեռելու դրսևորել իր իշխանությունը Թուրքիայում. մենք չենք կարող ժամանակ վատնել» (85, էջ 60)։ Դերիդուրը վկայում է, որ կոնգրեսի բացումով էլ սկսվեցին Անգլիայի թշնամական հարձակումները Ռուսաստանի նկատմամբ (118, էջ 492)։ Բիքոնսֆիլդն առանձնապես ճկունորեն Հայաստանը հակադրում էր բալկանյան սլավոններին, ավստրո-հունգարական շահերը ռուսականին, տիրախաղում Բիսմարկի, Անդրաշիի, Վադինգտոնի հետ, ամեն կերպ խոչընդոտում Բալկաններում Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը։

Ուսումնասիրողները նշել են այն հանգամանքը, որ կոնգրեսում Բիքոնսֆիլդին հաջողվել էր փոխըմբռնում հաստատել Բիսմարկի հետ։ Բեռլինի կոնգրեսի պատմության ճանաչված մասնագետ Մեդլիկոտը նկատում է, որ անգլիական պետական բոլոր գործիչներից կարծես թե ամենաքիչը Բիքոնսֆիլդն էր դրդում Բիսմարկին։ Հավանաբար, սկզբում նա լրջորեն չէր վերաբերվում այդ «պահպանողական քաղաքագետի և ռոմանտիկ վիպասանի խառնուրդին»։ Սակայն Բեռլինի կոնգրեսից հետո, երբ նրա աշխատանքներում

պատշաճ դեր խաղաց «ծեր հրեան», Բիսմարկը Բիքոնսֆիլդի մասին արտահայտվում էր ընդգծված հարգանքով։ Հետագայում, 1878 թվականի սեպտեմբերին, Բիքոնսֆիլդը գոհունակությամբ թագուհուն պատմում էր Բիսմարկից ստացած իր լավ տպավորության մասին (200, էջ 225)։

Կոնգրեսում հանդիպելով Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի միասնական թշնամական գործողություններին, ռուսական դիվանագիտությունը փորձում էր օժանդակություն ստանալ «ազնիվ միջնորդ» Բիսմարկից։ Բայց իզուր։ Ավստրո-ռուսական հակասությունների ասպարեզում նա մշտապես հակառուսական քայլեր էր անում, թեև ձգտում էր վերջնականապես չխզվել Ռուսաստանից։ Իսկ ֆրանսիական արտաքին քաղաքականության գլուխ անցած Վադինգտոնը հանրապետականների աջ թևի ներկայացուցիչն էր։ Նա ֆրանսիական քաղաքականության ռուսական կողմնորոշումը փոխել էր անգլիականով ու կոնգրեսում պաշտպանում էր Անգլիային։ Վադինգտոնն Անգլիայից գիջումներ էր ակնկալում գաղութների հարցում և նրա հետ համագործակցություն էր փնտրում Թուրքական պարտքերի առաջիկա կարգավորման ասպարեզում (132, էջ 130)։

Վադինգտոնի մտահոգությունն այն էր, որ կոնգրեսում Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի և սուրբ վայրերի (Երուսաղեմ) վերաբերյալ արդեն հաստատված համաձայնագրերը քննարկման չենթարկվեին, այլապես հրաժարվում էր իր պատվիրակները կոնգրես ուղարկել (53, № 2103, 1878)։ Սրա դիմաց Անգլիան էլ մտադրություն չուներ Կիպրոսի խնդիրը դարձնել կոնգրեսի քննարկման առարկա։

Վադինգտոնին հաղորդելով Թուրքիայի հետ կնքված գաղտնի պայմանագրի՝ Կիպրոսը Անգլիային հանձնելու մասին, Սոլսբերին հարցրեց, թե ինչպիսի՞ փոխհատուցումներ էր հավակնում Ֆրանսիան։ Հանկարծակիի եկած Վադինգտոնը չհամարձակվեց պատասխանել։ Այն ժամանակ անգլիական մինիստրն ինքը խոսք բացեց նրա հետ Թունիսի մասին (137, էջ 8—9)։ Վադինգտոնը անսքող բավականությամբ ընդունեց Սոլսբերիի առաջարկությունը։ Սոլսբերին տվեց նրան երաշխիքներ, որ Անգլիան Ֆրանսիային չէր խանգարի հաստատվելու Թունիսում։ Իսկ Բեռլինից Փարիզ

վերադարձած Վադինգտոնը պարծենում էր, թե իր պորտֆելում Ֆրանսիայի համար բերել է Թունիսը (137, էջ 9)։

Այսպիսի պայմաններում, պարզ է, Վադինգտոնը չէր ընդդիմանալու Անգլիային, չէր պաշտպանելու ռուսական դիվանագետներին և արևմտահայության իրավունքները։ Այս ամենը չէր կատարվել առանց Բիսմարկի։ Զգալով Ֆրանսիային հեռացնել Վոգեզյան սահմանից՝ նա Բեռլինի կոնգրեսում ընդառաջում էր Վադինգտոնին։ Բիսմարկը գոհ էր, որ ֆրանսիական զորքերը հեռանում էին Եվրոպայից, կռվի գնում Սահարան և Հնդկաչինը նվաճելու համար (137, էջ 8)։

Հետագայում, երբ հասունացավ Ֆրանսիայի կողմից Թունիսին տիրանալու պահը, նա հանդիպեց Անգլիայի և Իտալիայի դիմադրությանը։ 1881 թվականի մայիսին Սոլսբերին արդեն ուզում էր ուրանալ Վադինգտոնին տված իր երաշխիքները և անսքող հայտարարում էր, թե այդպիսի բան չի հիշում։ Այնինչ նույն բանը հաստատված էր նաև այլ փաստաթղթերով։ Օրինակ, 1881 թվականին լորդ Գրենվիլը Փարիզի անգլիական դեսպանին հղած հեռագրում գրել էր, թե «Թագուհու կառավարությունն առանց որևէ նախանձի կտեսնի ֆրանսիական ազդեցության հաստատումը Թունիսում» (137, էջ 9)։ Այս փաստերը բավական են համոզվելու, որ արևմտաեվրոպական ազդեցիկ տերությունների ներկայացուցիչները կոնգրես էին եկել ոչ թե ճնշված ժողովուրդների իրավունքները ճանաչելու ու հարգելու, այլ իրենց գաղութատիրական ծրագրերն իրականացնելու համար։

Կոնգրեսի առաջին նիստում զուր էր իշխան Գորչակովը փորձում ապացուցել, որ ռուսական կառավարության նպատակն է Օսմանյան կայսրության քրիստոնյա ազգերին ապահովել և երաշխավորել ինքնավար գոյություն։ Նրա պերճախոսությունը հանդիպում էր արևմտաեվրոպական դիվանագետների միացյալ ճակատի քամահրանքին։ Մերունազարդ, մշտապես հիվանդ ռուսական կանցլերն իր ճառերից մեկում հույս հայտնեց, որ կոնգրեսը ռուսական հերոսական բանակի դափնիները կվերածի ձիթենու ընձյուղների։ Նրան կծու սարկազմով պատասխանեց լորդ Բիքոնսֆիլդը՝ ասելով, թե

Գորչակովի «ճարտար ճառը նրա առողջության բարելավման երջանիկ նշան է համարում» (163, էջ 359)։

Կոնգրեսի բացման հենց առաջին պահից Բիսմարկը լիիրավ տանտիրոջ և ազդեցիկ քաղաքագետի դերումն էր։ Շուվալովը գրել է, որ «կոնգրեսը հանդիսացավ Բիսմարկի մտավոր գերազանցության փայլուն ապացույցը»։ Այնուհետև դա խոստովանում է, որ Բիսմարկը «մեզ վերաբերվում էր ինչպես ենթասպաների հետ, և բոլորը տանում էին դա»։ Երբ նիստերից մեկի ավարտին Թուրքական պատվիրակներից մեկն իր երկար ու ձիգ ճառում սկսում է բողոքել բուլղարների վարքագծի դեմ, Բիսմարկն ընդհատում է նրան և ասում. «Ողորմած տեր, Դուք ժամը հինգին հրավիրված եք ճաշի։ Այնտեղ Դուք կարող եք մեզ պատմել ձեր հեքիաթները։ Պարոնայք, նիստը փակված է» (102, էջ 309, 135, էջ 22)։ «Հենց սկզբից,— գրում է Սետոն-Վաթսոնը,— Բիսմարկը շատ ավելի մեծ չափով, քան Մետերնիխը 1814-ին, իշխում էր Ասամբլեայում իր ուժի և ճկունության զուգակցումով, մերթ հմայքով, մերթ կոպտությամբ» (217, էջ 434)։

Կարևորագույն հարցերը քննարկվում և լուծվում էին ոչ թե կոնգրեսի նիստերում, այլ Անգլիայի, Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի ներկայացուցիչների մասնավոր հանդիպումների ժամանակ։ Հարկ չկա հանգամանորեն քննարկել կոնգրեսի նիստերում արծարծված բոլոր խնդիրները։ Եթե հարցերի պայմանական բաժանում կատարենք, ապա հիշատակելով Բալկաններում կոնգրեսի կատարած վերաձևումները, մենք հանգամանորեն կանդրադառնանք Ասիական Թուրքիայի, Հայաստանի հետ կապված խնդիրներին։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի՝ Բալկաններին վերաբերող հոդվածներն ամբողջությամբ վերանայվեցին։ Առաջին նիստերից հետո, հաջորդ վեց նիստերը նվիրվեցին Բուլղարիային։ Անգլիական և ավստրիական ներկայացուցիչները համատեղ հանդես եկան սլավոնական ժողովուրդների իրավունքները բռնադատողների դերում։ Սոլսբերին հայտարարեց, թե Անգլիայի նպատակն է, եթե ամբողջությամբ չվերացնել պատերազմի արդյունքները, ապա Բ. Դոանը վերադարձնել այնպիսի ինքնուրույնություն, որը նրան հնարավորություն կընձեռեր հաջողությամբ պաշտպանելու իր ստրա-

տեգիական, քաղաքական և առևտրական շահերը (165, էջ 494)։

Անգլո-ռուսական պայմանագրով Անգլիան արդեն կանխել էր մեծ Բուլղարիայի ստեղծումը։ Սակայն այդ փաստաթղթում Բուլղարիայի սահմանների մասին ասված էր ընդհանուր առմամբ։ Իսկ կոնգրեսի նիստերում Բիքոնսֆիլդն անհաշտ դիրք բռնեց. չէ որ դեռ հրապարակված չէր անգլո-թուրքական համաձայնագիրը, և նրան Անգլիայում մեղադրում էին ավելորդ «զիջողականության» մեջ։ Տորիների կուսակցությունը վիրավորված էր, որ Բիքոնսֆիլդն ու Սոլսբերին կոնգրես էին մեկնել ձեռքերը կապելով նախնական համաձայնագրերով (129, էջ 94)։ Սա համարվում էր «փայլուն մեկուսացման» քաղաքականության խախտում։ Գրգռված ու կատաղած Բիքոնսֆիլդը հուսահատական ջանքեր էր անում Թուրքական տիրապետությունը Բալկաններում պահպանելու, Սոֆիան Թուրքերին թողնելու համար (53, N 109, 1878)։ Բանը հասավ այնտեղ, որ նա սպառնաց, թե ժամանակից շուտ կմեկնի կոնգրեսից (132, էջ 131)։

Անգլո-ավստրիական մեքենայությունների հետևանքով Բուլղարիան բաժանվեց երկու մասի։ Ընդ որում ավելի հարուստ մասը, որն Արևելյան Ռումելիա անվանումն ստացավ, նորից մնալու էր Թուրքական կառավարման ներքո։ Բուլղար ժողովուրդն առժամանակ զրկվեց միասնական պետության մեջ միավորվելու հնարավորությունից։ Կազմվեց ինքնավար Բուլղարիայի իշխանապետությունը, իսկ Արևելյան Ռումելիան թողնվում էր Թուրքիայի կազմում։ Մակեդոնիան թողնվեց Թուրքական կառավարման ներքո, հատուկ հոդվածով Բ. Դոանը պարտավորեցնելով բարենորոգումներ իրականացնել այնտեղ։ Բոսնիան և Հերցոգովինան անցնում էին Ավստրո-Հունգարիայի հովանավորության տակ։

«Թուրքիայի ասիական նահանգներից,— գրում է Ս. Ժիգարյովը,— Բեռլինի կոնգրեսն ուշադրություն դարձրեց միայն Հայաստանին» (125, էջ 207)։ Եթե Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչներն իրենց դրսևորեցին իբր օսմանյան պետության շահերի կատաղի «պաշտպաններ» նրա եվրոպական տիրույթների խնդրի քննարկման ժամանակ, ապա ասիական նոր սահմանը հաստատելիս նրանց «մղումը չու-

ներ սահման և հասնում էր կատաղության» (154, հ. 205, 1889, էջ 34)։ Նրանք խնամքով թաքցնում էին Կիպրոսի վերաբերյալ իրենց զավթողական պլանները, Թուրքիայի ասիական տիրույթների նկատմամբ անգլիական պրոտեկտորատ հաստատելու մտադրությունը։

Ռուսական և անգլիական պատվիրակների հանդիպումների ժամանակ անգլիական կողմը, ի փոփոխումն նույնիսկ անգլո-ռուսական համաձայնության, պնդում էր, որպեսզի Ռուսաստանը Թուրքիային վերադարձներ ոչ միայն Էրզրումը, Ալաշկերտի հովիտն ու Բայազետը, այլև Բաթումը, Կարսն ու Արդահանը (73, էջ 464—465)։ Ռուս դիվանագետների խընդիրը չափազանց ծանր էր։ Անգլիական դիվանագիտության խաղերը չափ ու սահման չունեին։ Մի կողմից՝ այն ձգտում էր թուրքական ներկայացուցիչներին ցույց տալ իր հետևողական «պաշտպանությունը» Թուրքիային, մյուս կողմից՝ թե՛ նրանից, թե՛ Ռուսաստանից ավելի մեծ զիջումներ կորզելու աննահանջ դիծ էր վարում։ Գերմանացի դիվանագետ Հոհենլոեն նկատել է, որ կոնգրեսի նիստերում Բիքոնսֆիլդն իր ամենակատաղի, ամենագգացմունքային հակառուսական ճառն արտասանել էր Հայաստանի տերիտորիաների կապակցությամբ (201, էջ 110)։

Հայաստանում ռուսական նվաճումների հարցը բուռն վիճաբանությունների և ընդհարումների պատճառ դարձավ։ Անգլիական ներկայացուցիչները փորձեցին չճանաչել դրանք, մանավանդ այն բանից հետո, երբ անգլիական մամուլում անսպասելիորեն հրապարակվեց մայիսի 30-ի անգլո-ռուսական գաղտնի համաձայնագրի տեքստը։ Անգլիական մամուլը, հասարակական կարծիքը հանդես եկան անգլիական կառավարության վճռական քննադատությամբ, նրան մեղադրելով զիջումներ անելու մեջ։

Սոլսբերին եռանդուն կերպով ընդդիմանում էր Կարսը և Արդահանը ռուսներին հանձնելուն, պատճառաբանելով, թե այդ բանը չափազանց բացասական նշանակություն կունենա Ասիայում «սուլթանի հեղինակության» համար։

Հուլիսի 5-ին Լայարդը հայտարարեց Սոլսբերիին, թե, իբր, իրեն հաջողվել էր համոզել սուլթանին՝ ֆերման արձակել Կիպրոսի օկուպացման վերաբերյալ (201, էջ 111)։ Չնայած

անգլիական ճնշմանը, Բ. Դուրը հայտարարեց, որ չի կարող անգլո-թուրքական համաձայնության մասին ֆերման հրապարակել այդ պահին, քանի որ առիթ կտար Ռուսաստանին չվերադարձնելու Բայազետն ու Ալաշկերտը, իսկ մյուս տերություններին՝ նոր փոխհատուցումներ պահանջելու իրենից (150, էջ 150)։ Սոլսբերին չափազանց դժգոհ էր թուրքական կառավարությունից, նրան մեղադրում էր «արտառոց դավաճանության և երախտամոռության» մեջ ի պատասխան նորին մեծության ջանքերի «փրկելու Թուրքիան» (195, էջ 32—33)։

Ֆրանսիական աղբյուրից տեղեկանում ենք, որ հուլիսի սկզբին անգլիական լիազոր ներկայացուցիչները տաղնապալից լուրեր էին ստացել Լոնդոնից, որտեղ նրանց նորից կշտամբում և նշավակում էին զիջումների համար, մեղադրում այն բանում, որ նրանք Բեռլին են գնացել նսեմացնելու Անգլիային։ «Այն ժամանակ դա իսկապես բավականին հիմնավորված էր թվում»,— կարդում ենք այդ հրատարակությունում։ «Նրանք իրենց գրպանում ունեին հունիսի 4-ի պայմանագիրը, որով նրանք համոզված էին, որ անմիջապես ժողովրդականություն էին նվաճելու, սակայն, չէին համարձակվում այն ցույց տալ, քանի դեռ չէր լուծվել Բաթումի հարցը։ Հասարակական կարծիքի և Անգլիայի շահերի դիտակցման կրկնակի ճնշման տակ նրանք, այդպիսով, Ասիայի նոր սահմանների հարցում իրենց պահում էին որպես անզիջողականներ» (213, էջ 1124)։

Սոլսբերին հայտարարեց Շուվալովին, որ ստիպված էր լինելու հրաժարական տալ, քանի որ ինքն էր ստորագրել մայիսի 30-ին կնքված այդ պայմանագիրը, իսկ Ռուսաստանը ստիպված կլիներ հրաժարվել Բաթումից, որովհետև Լոնդոնը ետ կվերցներ իր համաձայնությունը։ Սա բացահայտ ուխտադրժություն էր, քանի որ Սոլսբերի—Շուվալով համաձայնագրում ասված էր, որ այն «կոչված է կոնգրեսում Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի լիազորների համար ծառայելու որպես փոխադարձ պարտավորություն» (45, էջ 102)։

Մտահոգված դեպքերի այսպիսի զարգացմամբ, Շուվալովը դիմեց Բիսմարկի միջնորդությանը։ Վերջինս դա պայմանավորեց անգլո-ռուսական գաղտնի համաձայնագրին

ծանոթանալու անհրաժեշտությամբ։ Միայն այդ փաստաթղթից հետո Բիքոնսֆիլդն անձնատուր եղավ։ Այն բանից հետո, երբ Շուվալովը կոնգրեսի նիստում հաստատեց Ռուսաստանի հրաժարումը Սան-Ստեֆանոյի պայմանագրով իրեն տրված Բայազետից և Ալաշկերտի հովտից, հայտարարեց, որ իր կառավարությունը մտադիր է Բաթումը վերածել պորտֆրանկո, անգլիական լիազորը հանեց իր առարկությունը Բաթումը, Արդահանը և Կարսը Ռուսաստանին հանձնելու վերաբերյալ (165, էջ 504—505)։

Բիսմարկը թուրքական լիազոր-ներկայացուցիչներին հայտարարեց, որ կոնգրեսի որոշումները մի ամբողջություն են, և եթե Թուրքիան ընդունել էր դրանք, ըստ որոնց նրան էին վերադարձվում Բուլղարիայի կեսը և Հայաստանի մի մասը, ապա նա պետք է ընդուներ և այն որոշումը, ըստ որի կորցնելու էր Բոսնիան և Հերցեգովինան, Էպիրոսի և Թեսալիայի մի մասը (213, էջ 748)։

Բեռլինի պայմանագրի 60-րդ հոդվածում արձանագրվեց. «Սան-Ստեֆանոյի պայմանագրի 19-րդ հոդվածով Ռուսաստանին զիջված Ալաշկերտի հովիտը և Բայազետ քաղաքը վերադարձվում են Թուրքիային։ Թուրք-պարսկական սահմանագծման անգլո-ռուսական խառն հանձնաժողովի որոշման համաձայն, Բարձր Դուռը Պարսկաստանին է զիջում Կոտուր քաղաքը և տերիտորիան» (45, էջ 127—128)։ Բեռլինի կոնգրեսի որոշմամբ Օսմանյան կայսրությանը թողնվող Ալաշկերտի և Բայազետի շրջանների տարածությունը կազմում էր 9.600 կմ² (151, էջ 8)։

* * *

Ինչի՞ էր հանգում հայկական պատվիրակության գործունեությունը Բեռլինում։

Թեև պատվիրակությունը կոնգրեսի նիստերին մասնակցելուց զրկվեց, այնուամենայնիվ շարունակում էր հույսեր տածել, որ «քրիստոնեասեր» Եվրոպան անուշադրություն չէր մատնի հայ ժողովրդի սպասումները։ Սակայն, ինչպես խոստովանել է պատվիրակության անդամ Ստ. Փափազյանը, բոլորն էլ երես էին դարձնում իրենցից, «գուցե ամաչելուց»։

«Մեր քովն ալ լավ պնդերեսություն կա»,— գրում է նա (7, № 3, 4, 5, 1907, էջ 58)։

Արևմտաեվրոպական դիվանագետներին տրված այցելություններն ամեն անգամ ավարտվում էին ընդհանուր, կոնկրետ ոչինչ չասող խոսակցություններով։ Քիչ բան է պահպանվել հայկական պատվիրակության բեռլինյան օրերի գործունեության մասին։ Որոշ մանրամասներ կարելի է քաղել Ստեփան Փափազյանի հուշատետրից, որ ժամանակին հրապարակել և մեկնաբանել է Արշակ Չոպանյանը «Անահիտ»-ի էջերում, Խրիմյանի հուշերից, Մինաս Չերազի հրապարակումներից, Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի ատենագրություններից և այլ աղբյուրներից։ «Ես և Չերազ,— գրում է Ստեփան Փափազյանն իր հուշատետրում 1878 թվականի հունիսի 27-ին,— երկու-երեք անգամ մտախոհ և հուզված սկսեցինք պատվել կոնգրեսի շենքի առաջ. խնդրեցինք աստծուց, որ ողորմի բյուրավոր անմեղ զոհերի արյունին և միլիոնավոր հայերի աղաղակին և ապա աչքերս արցունքով լի տուն դարձանք» (7, № 3, 4, 5, 1907, էջ 60)։

Պատվիրակության կազմը խիստ աններդաշնակ էր։ Նրա անդամները չունեին լուրջ տեսական-քաղաքական գիտելիքներ, տարբեր տեսակետների և մոտեցումների էին տուրք տալիս։ Նրա երկու անդամների՝ Խրիմյանի և Նար-Պեյի. հակոտնյա տեսակետները համահարթելու նպատակով Կ. Պոլսից Բեռլին ուղարկվեց Ստ. Փափազյանը (10, նիստ Ժ. 6.X.1878, էջ 183—184)։

Նար-Պեյը սկզբում պնդում էր միայն Ռուսաստանին ապավինելու վրա։ Խրիմյանն ուզում էր Փարիզից կանչել Նուբարին, որպեսզի այդ «փորձված քաղաքագետը» առաջ մղեր հայկական հարցը։ Այս երկու տեսակետները շարունակ բախվում էին, երկպառակություն հարուցելով պատվիրակության ներսում։ Այնուամենայնիվ, վեճը շատի ու քչի շուրջն էր, իսկ ընդհանուր առմամբ՝ հայ պատվիրակները չէին տարակուսում, որ «ստանալու են գոնե իրենց պահանջած իրավունքների մի մասը» (81, էջ 213)։ Հայկական դիվանագիտությունն իր անդրանիկ քայլերն էր անում անմիաբան և անորոշ ծրագրով։ Ստ. Փափազյանին հանձնարարված էր ապահովել պատրիարքարանի հրահանգների կատարումը,

հեռագրական կապը պատրիարքարանի և պատվիրակության միջև։ Նրա ձեռքումն էր գտնվում նաև ծածկագրի գաղտնիքը (73, էջ 447)։ Սրա մասին Հակոբ Պարոնյանը գրում է, որ «Գնաց նստավ Բեռլին գացող երկու պատվիրակներու մեջտեղ» (68, հ. III, էջ 116)։

Հայ պատվիրակներից ոչ մեկը գերմաներեն չգիտեր։ Այդ բացը լրացնելու համար Փարիզից հրավիրվել էր գերմաներենի հմուտ գիտակ Բեյլերյանը։ Պատվիրակությանն օժանդակում էր նաև Բեռլինում թուրքական դեսպանատան խորհրդական Օհան էֆենդի Բաղդադլյանը։

Արշ. Չոպանյանը նշում է հայ պատվիրակների «գործունեության ոստոստուն, հարափոփոխ և անհեռատես հանգամանքը» (7, № 6—9, 1907, էջ 150)։ Դատելով Ստ. Փափազյանի հուշատետրով, նա գտնում է, որ վերջինս «քաղաքական ըմբռնողությունից, մտավոր լայն զարգացումից զուրկ էր»։ Իսկ հուշատետրի հեղինակն իր հերթին Նար-Պեյին մեղադրում էր այն բանում, որ նա շռայլ և ցոփ կյանք էր վարում, անձնական շահերի համար ավելի շատ ժամանակ էր գտնում, քան իրեն հանձնված պաշտոնի կատարմանը։ Նար-Պեյը կողմնակից էր գրավված հայկական հողերի վրա ռուսական իշխանության հաստատմանը, Ռուսաստանի միջոցով Լորիս-Մելիքովին ընդհանուր կառավարիչ նշանակելուն, իսկ Կիլիկիայի մեջ Ռուսաստանի օգնությամբ «հայկական ինքնուրույն կազմակերպություն ստեղծելուն»։ Էմսի ջրերից Բեռլին աճապարած Լորիս-Մելիքովն ըստ էության հայ պատվիրակությանը նույն խորհուրդն էր տալիս. գրավված հողերը թողնել Ռուսաստանի տնօրինությանը, իսկ ինքնավարության խնդիրն արծարծել միայն Կիլիկիայի վերաբերյալ (22, էջ 103)։ Լորիս-Մելիքովը հայ պատվիրակներին հորդորում էր հրաժարվել «մեծ Հայաստանի» գաղափարից։ Նա համոզում էր, որ ռուսաց քարտեզների վրա պատվիրակության հուշագրում ակնարկված նահանգներն արդեն նշված են իբրև ռուսաց ապագա տերիտորիայի բաղկացուցիչ մաս, որ շատ ավելի նպատակահարմար կլիներ շեշտը դնել հարավի՝ Կիլիկիայի վրա։ Այս վերջին տարբերակի վրա ծանրացած Նուբար փաշան մի քանի տարի անց շարունակում էր Լորիս-Մելիքովի հետ, Ֆրանսիայի հարավային ծովափում, քննարկել չիրականացած պլանները, երբ նա արդեն պաշտոնանկ էր և շնորհազուրկ (116)։ Սակայն նրա արծարծած ծրագիրը չէր համընկնում Կ. Պոլսի վարիչ շրջանակների հրահանգներին, ըստ որոնց խոսքը վերաբերելու էր Վանի, Էրզրումի, Տիգրանակերտի նահանգի հյուսիսային և Խարբերդի նահանգի արևելյան մասերին։

Բեռլինի կոնգրեսի օրերին «Գոլոս» թերթը հանդես եկավ հայերի ներկայացրած ծրագրի պաշտպանությամբ։ Նա գրում էր. «Մեծ Հայաստան երկիրը, որ դարերի ընթացքում հարստահարված էր թուրքաց կառավարությունից, պատերազմի ժամանակ սիստեմատիկաբար ավերվեցավ թուրքաց կանոնավոր զորքերից և ամեն տեսակ բաշիբոզուկներից, որոնք Բ. Դռանն էին ծառայում։ Եվ սրանից հետո ի՞նչ են պահանջում կոնգրեսից հայոց պատգամավորները. նրանք չեն պահանջում անջատվել կայսրությունից, չեն պահանջում անկախություն, այլ միմիայն ինքնավարություն, որ ապահովեր բնակիչների սեփականության և անձնական իրավունքները։ Կոնգրեսի ստեղծած Հարավային Բուլղարիո նահանգի նման, որ արդեն «Արևելյան Ռումելիա» է կնքված. հայերը ցանկանում են, որ մեծ Հայաստանի մի մասին առանձին վալիություն տրվի...»։ «Ռուսաստանը, որ մերկացրեց իր սուրը թուրքահպատակ քրիստոնյաների ազատության համար, իհարկե, պատրաստ է պաշտպանել թուրքահայերի այս համեստ ցանկությունները կոնգրեսում...»,— եզրակացնում էր Պետերբուրգի թերթը (57, № 110, 1878)։

Այնուհետև, Պետերբուրգի թերթերը գրում էին, որ ներկայացված ծրագիրը չի կարող «ապահովել երկրի քաղաքական զարգացումը»։ «Եթե Բեռլինի կոնգրեսը ճշմարիտ հանձն է առել թուրքահայաստանի դրությունը լավացնելու խնդիրը, նա պետք է շնորհի այդ երկրին կատարյալ ինքնավարություն գոնե Արևելյան Ռումելիայի օրինակով» (57, № 113, 1878)։

Լորիս-Մելիքովի ո՛չ Բեռլին գալը, ոչ էլ նման ծրագրի արծարծումն ու քննարկումը հավանաբար առանց Ս.-Պետերբուրգի գիտության չէին կատարվում։ Լորիս-Մելիքովը հիվանդությունը բուժելու պատրվակով Կովկասից մեկնեց 1878 թվականի ապրիլի կեսերին (134, էջ 504)։ «Մոսկովս-

կին վեղոմոստի», «Կավկազ» թերթերը լուրեր էին տպել այն մասին, որ նա ուղարկվել էր Բեռլին որպես «դինվորական պատվիրակ հայոց գործի համար» (57, № 105, 1878)։ Այս ժամկետը համընկնում է եվրոպական մայրաքաղաքներում հայկական պատվիրակության ակտիվ գործողությունների և այցելությունների հետ։ Պետք է ենթադրել, որ ցարական արքունիքը, ինչ-որ չափով անհանգստացած դրանից, փորձում էր իր տեսադաշտում և հսկողության տակ պահել հայ պատվիրակների գործողությունները։

1878 թվականի հունիսի 24-ին Նար-Պեյը Բեռլինից մի նամակ էր գրել Կ. Պոլիս Պեկեյանին, որտեղ ընդգծել էր. «մեր ջանքն այն է, որ մեր առանձին ինքնավարությունը ձեռք ձգենք. այլ եթե այդ անկարելի լինի՝ հարկավ պետք է գլուխ ծռենք և Անգլիո հովանավորությունն ընդունենք, որ կրնա մեր հայրենիքը բեղմնավորել և բարեկարգել» (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 184)։ Նար-Պեյի տրամադրության փոփոխությունն ակնհայտ է։ Պարզ է, որ դա կատարվել էր անգլո-թուրքական պայմանագրի կնքումից հետո։ Հակոբ Պարոնյանը կծու հեգնանքով նկատում էր, որ «Խորեն եպիսկոպոսը կարծիքներուն հետ ալ այնպես կվարվի, ինչպես յուր մականուններուն հետ, միայն սա տարբերությամբ, որ կարծիքներն ինն օրը անգամ մը կփոխե. մինչդեռ մականունները ինը տարին անգամ մը» (68, հ. III, էջ 18—19)։

Հայերի համար առաջնահերթ խնդիր էր ընտրություն կատարել առկա տարբերակների միջև, որոշակի ուղեգիծ որդեգրել։ Որո՞նք էին դրանք. նախ անհրաժեշտ էր պնդել ռուսական զորքերը գրավված վայրերում պահելու վրա, քանի որ նրանց հեռացումը ծանր վիճակ էր ստեղծելու հայ բնակչության համար, իսկ վատագույն դեպքում ռուսական զորքերի քաշվելուց առաջ հայկական նահանգներում հայազգի նահանգապետի նշանակման վրա պնդել։ Բանն այն չէ, որ հայերի ցանկության հետ հաշվի չէին նստելու։ Բանն այն է, որ որոշակի, հստակ ծրագրի առաջադրումը կվկայեր ժողովրդի հավաքական շահերն ըմբռնելու և պաշտպանելու հանգամանքը, դիվանագիտական լրջմիտ կեցվածքը։ Լորիս-Մելիքովի խորհուրդը Հայաստանի մեջ ռուսական հովանավորության, իսկ Կիլիկիայում ինքնավարության պահանջ

դնելու մասին ըստ էության շարժանացավ պատվիրակության լրջմիտ ուշադրությանը։ 1878 թ. հունիսի 16(28)-ին մի հանդիպման ժամանակ նա ասում էր. «Ց դար է, որ հայ ազգին այսպիսի բարեպատեհ առիթ մը չէր պատահած. օգուտ քաղելու է»։ «Մի ջանացեք մեծ Հայաստանի մեջ ինքնավարություն ձեռք ձգել, աչքերդ դեպի Կիլիկիա դարձրեք, ռուսները կօգնեն ձեզ այնտեղ» (7, № 10—12, 1907, էջ 161—162)։ Լորիս-Մելիքովը սկզբում մերժել էր նահանգապետի ապագա պաշտոնում իր թեկնածությունը, բայց ավելացրել, թե ազգի ցանկության դեպքում կհամաձայնի։

Թեև պատվիրակությունը «Նուբարին մերժել էր հայոց դատի ներկայացուցչի պաշտոնը հանձնել» (7, № 10—12, 1907, էջ 161), այնուամենայնիվ, Բիսմարկն ավելի ուշադիր էր վարվում նրա առաջարկներին։ Բիքոնսֆիլդն ուղղակի մերժեց Նուբարի նախագիծը, վկայակոչելով անգլո-թուրքական կոնվենցիայով Հայաստանի նկատմամբ Անգլիայի ստանձնած պարտավորությունները։

Այսպիսով, կոնդրեսում ռուսական դիվանագիտությունը միայնակ չէր կարող Հայաստանին տալ այն, ինչ նրանք ցանկանում էին, իսկ Անգլիան ու Թուրքիան բացահայտ դեմ հանդես եկան այդ ծրագրերին։ Չմոռանանք նշել նաև, որ կոնդրեսի նիստերը գաղտնի էին։ Այնտեղի անցուդարձի, գործարքների և կոմպրոմիսների մասին հայկական պատվիրակությունը կա՛մ ուշացումով էր իրազեկ դառնում, կա՛մ ամենևին բան չէր իմանում։ Իսկ ամենահիմնականն այն էր, որ Կիպրոսի մասին անգլո-թուրքական կոնվենցիայի վերաբերյալ նրանք ոչինչ չգիտեին (214, էջ 82)։

Քանի որ կոնդրեսի երկրորդ նիստում որոշվել էր, որ նրա քննությանը ոչ մի գրություն, խնդրագիր չէր կարող ներկայացվել առանց տերությունների մեկի լիազոր-ներկայացուցչի դիտության և հարուցման (10, նիստ 7, 6.X.1878, էջ 176), ապա Ֆրանսիայի արտաքին գործերի միանիստր Վադինգտոնի խորհրդով և միջնորդությամբ հունիսի 25-ին Խրիմյանը և Նար-Պեյը Անգլիայի, Ավստրիայի, Գերմանիայի, Իտալիայի ու Ռուսաստանի պատվիրակությունների ղեկավարներին են հանձնում իրենց խնդրագիրը, Հայաստանի ինքնավարության վերաբերյալ ծրագիրը և Կա-

րինի, Վանի վիլայեթների, Տիգրանակերտի վիլայեթի հյուսիսային մասի վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ։ Վադինգտոնին այս ամենը հանձնված էր վաղօրոք։

Կանցլեր Բիսմարկին, որպես կոնգրեսի նախագահի, հանձնվում է նաև Ներսես պատրիարքի պաշտոնական գրությունը հայոց խնդիրը կոնգրեսի օրակարգի մեջ մտցնելու մասին։ Այս փաստաթղթի մեջ ասված էր. «Մենք քաղաքական ազատություն չէ, որ պահանջում ենք և ոչ էլ երբեք ուզում ենք բաժանվել Թուրքական կառավարությունից։ Մենք ուզում ենք Թուրքահայաստանի մի բաժնում՝ այն է Էրզրումի և Վանի վիլայեթներում և Դիարբեքիրի (Տիգրանակերտի) վիլայեթի հյուսիսային մասում... ունենալ մի հայ վալի (նահանգապետ), որ պետությունների հավանությամբ կարգվի Բ. Դռան կողմից» (73, էջ 419)։ Հայկական պատվիրակության ներկայացրած թղթերն անուշադրության մատնվեցին, քննարկման չդրվեցին։ Լիազոր-ներկայացուցիչներից ոչ մեկը հայոց խնդիրը ներկայացված ձևով չէր ստանձնել և օրակարգի մեջ մուծելու վրա չէր պնդել։

Կ. Պոլսի հայ ազգային ժողովում խնդրի հետագա քննարկումների արձանագրություններում կարդում ենք. «Գաղիո արտաքին գործոց պաշտոնյան և առաջին լիազոր դեսպանը հանձն առած էր, որ ինք ներկայացուցի ու փաստաբան կանգնի մեր դատին՝ Ավագաժողովին մեջ»։ Նույն տեղից իմանում ենք, որ կոնգրեսի նախագահ Բիսմարկը նույնպես «մասնավոր ուշադրությամբ քննած էր մեր խնդիրն ու գրերն ամենայն»։ Նա ծանոթացել էր Կ. Պոլսի հայոց պատրիարքի նամակին, որն ուղղված էր իրեն, հայ պատգամավորների խնդրագրին, Հայաստանի վարչության ծրագրված կանոնագրին, Հայաստանի վիճակագրական տեսությանը։ «Այսպես ահա,— կարդում ենք արձանագրություններում,— ներելի էր մեզի հուսալ, թե խնդիրն ի հիմանց պիտի քննվեր և հիմնական պիտի ընդուներ լուծում։ Այլ ճիշտ այս միջոցին երևան ելավ գաղտնի դաշնագրությունը ընդ մեջ Թուրքիո և Անգլիո՝ Ասիո նկատմամբ» (10, նիստ Ե, 21.VII.1878, էջ 65)։

Պետք է ասել, որ եվրոպական երկրների մայրաքաղաքներում, այնուհետև Բեռլինի կոնգրեսի ժամանակ հայ պատ-

վիրակության գործելակերպը հանգում էր նրան, որ գոհունակություն էր հայտնվում Թուրքական կառավարությունից, մեղադրելով գավառական կյանքի հարստահարությունների, կողոպուտի պատասխանատուներին և մեղավորներին։ Բնականաբար, ավելի շատ հիշատակվում էին քրդական և չերքեզական խժդժությունները։ Սա անգլիական դիվանագետների և Բ. Դռան շահերին համապատասխան, նրանց թելադրած սխեման էր։ Նպատակն էր՝ կանխել արտաքին (իմա՝ Ռուսաստանի) միջամտությունը, ցույց տալ, որ Թուրքական կառավարությունը կձեռնարկեր և կիրականացներ օրինաղանցությունները կանխելու, կարգուկանոն հաստատելու համար անհրաժեշտ բարեփոխումները։

Բեռլինում Օսմանյան կայսրության դեսպան Սաադուլլահը, առաջիններից մեկը հանդիպելով հայ պատվիրակներին, իր դժգոհությունը հայտնեց նրանց կողմից հարուցված ինքնավարության պահանջից և առաջարկեց գոհանալ կուսակալ ունենալու հարցադրումով, լինել չափավոր։ Նա խոստանում էր հեռագրել Կ. Պոլիս, կատարել հայերի այս ցանկությունը մինչև Եվրոպայի պաշտոնական միջամտությունը, եթե հայերը համաձայնեին ավելին չպահանջել։ Նար-Պեյը, Սաադուլլահի հետ համաձայնվելով, անհրաժեշտ էր համարում այդ խնդրում Եվրոպայի երաշխավորության ապահովումը։ Իսկ Թուրքական պատվիրակության ղեկավար Կարաթեոդորին և Մեհմեդ Ալին մերժեցին Սաադուլլահի խոստացածը (Ֆ, № 10—12, 1907, էջ 163)։ Նրանք հայ պատվիրակներից բացատրություն պահանջեցին այն մասին, թե ո՞ւր էին գնացել և ո՞ւմ հետ հանդիպել (73, էջ 452)։

Երեք Թուրք պատվիրակները ստացել էին Աբդուլ Համիդի անձնական հրամանը՝ իրենց ջանքերը կենտրոնացնել Վանան, Բաթումը և Հայաստանը «փրկելու վրա» (217, էջ 444)։ Սետոն-Վաթսոնը մատնացույց է անում խնդրի այն կողմը, որ Թուրքական զլխավոր պատվիրակ, ազգությամբ հույն ֆանարիոտ Կարաթեոդորին պետք է ապահովեր Օսմանյան կայսրության շահերը հունական պահանջախնդրություններից (217, էջ 445)։ Սա նույնպես զավեշտ է։

Ֆրանսիական «Թան» թերթի թղթակիցը հուլիսի 12-ին Բեռլինից հաղորդել էր, որ օսմանյան լիազոր-պատվիրակ-

ները «սաստիկ կերպով հակառակվում են հայոց պատվիրակների ներկայացրած նախագծին» (57, № 121, 1878)։ 1878 թվականի հոկտեմբերին Կ. Պոլսի հայ ազգային ժողովում Բեռլինից վերադարձած պատվիրակները վերհիշում էին, որ «Կարաթեոդորի փաշան մեր աղերսագիրը չհիշեց և կոնգրեսին ընդունել ևս չաշխատեցավ» (10, նիստ Ժ, 6.X.1878)։

Երբ սուլթանը ծանոթացավ անգլո-ռուսական համաձայնագրի բովանդակությանը, այլևս անհանդուրժելի համարեց հայկական պատվիրակության ներկայությունը Բեռլինում։ Կարաթեոդորին հեռագրել էր Բ. Դուռ, թե հայոց խնդիրն ավելի նշանակություն ունեցավ, քան սպասվում էր։ Նա խորհուրդ էր տալիս Հայաստանի համար բարենորոգումներ ձեռնարկել (պարզ է՝ արտաքին էֆեկտի համար) և «աշխատեցեք, որ հայ պատվիրակները վերադառնան Կ. Պոլիս»։ Սուլթանն արձագանքեց նրա խորհրդին։ Ալի Շեֆիկ բեյին անմիջապես նշանակեց հայկական շրջաններում կատարված անօրինությունների քննիչ, պահանջեց ազգային ժողովում քննել խնդիրը և պատասխան տալ։ Ժողովը որոշեց մերժել նրա առաջարկությունը, Բ. Դռան հայեցողությանը թողնելով շարագործությունների հեղինակներին պատժելու խնդիրը (57, № 112, 1878)։ Ժողովը, անտեղյակ Բեռլինի անցուդարձից, այնտեղից էր խնդրի լուծման վերջնական պատասխան սպասում։

Պատվիրակությանը Բեռլինից ետ կանչելու համար սուլթան Համիդը Ներսես պատրիարքի մոտ է ուղարկում Արթին Դադյան փաշային։ Ներսեսը պատասխանում է, թե կգերադասեր կախվել պատրիարքարանի դռնից, ինչպես կես դար առաջ արեց հույն պատրիարքը, բայց այդ քայլին չէր դիմի (10, նիստ Ժ, 6.X.1878)։ Չէ որ Խրիմյանը Բեռլինից «ավետիս» էր ուղարկել իր մի բարեկամին այն մասին, թե Հայաստանը երկնում է, «միայն ծնելիք զավակը մա՞նչ պիտի ըլլա թե աղջիկ, այդ չենք կրնար որոշել» (10, նիստ Ժ. 6.X.1878, էջ 178—179)։

Մի փոքր անց, Կիպրոսի մասին անգլո-թուրքական համաձայնագրի հրապարակումից հետո միայն այդ լավատեսները հասկացան բանի էությունը։ Նրանք խուճապի մատնվեցին, երբ ծանոթացան այդ փաստաթղթի բովանդակությանը, գիմեցին Բիսմարկին և Սոլսբերիին, ունկնդրություն խնդրեցին, բայց մերժում ստացան։

Լուր առնելով կոնգրեսում իր ծրագրի անհաջողության մասին, Ներսես Վարժապետյանն շտապեց Կ. Պոլսում անգլիական դեսպանատուն։ Նա փորձում էր համոզել Լայարդին պահպանել անգլիական կառավարության խոստումը, որ տրվել էր Լոնդոնում Խրիմյանին։ Անգլիական դեսպանն արդեն հարկ չէր համարում ուշադրությամբ ունկնդրել Ներսեսին։ «Երբեք,— ասաց նա,— Անգլիան չի համաձայնի հայոց ինքնավարությանը. դա կնշանակեր հայերին Ռուսաստանի գործիք դարձնել»։ Ներսեսը, պատասխանելով դեսպանին, ասում է. «Դուք մեզ, այնուամենայնիվ, չեք արգելի ճոգով ռուսներ լինել, որովհետև միայն Ռուսաստանին և Սան-Ստեֆանոյի դաշնագրի որոշումներին ենք պարտական մեր վիճակի այն փոքր բարելավումների համար, որ մենք ստանալու ենք Բեռլինի կոնգրեսից։ Դուք՝ անգլիացիք, միայն թուրքերին եք համակրում, և արևելյան քրիստոնյաների վիճակը ոչինչ նշանակություն չունի Ձեզ համար»։ Այս ամենը Պետերբուրգ էր հաղորդում «Դոլոս» թերթի Կ. Պոլսի թղթակիցը։ Լայարդը վիրավորվել էր պատրիարքի պատասխանից և փորձել էր համոզել, թե Անգլիայի հովանավորությունը Հայաստանին Ռուսաստանի օգնությունից ավելի շահավետ կլինի։ «Ոչ, ոչ,—կրկնեց պատրիարքը,— անգլիացիք և թուրքերը այժմ մեզ համար միևնույնն են, հայերը թուրքերից ոչինչ սպասելիք չունեն» (57, № 127, 1878)։

Կ. Պոլսում ռուսական դեսպան Լոբանով-Ռոստովսկուն Ներսեսի այցելությունից հետո դեսպանը հեռագրեց Բեռլին՝ հայկական հարցին բավարար ուշադրություն նվիրելու անհրաժեշտությունը շեշտելով։ «Դոլոս» թերթը գրել էր, թե սա դեր էր խաղացել 61-րդ հոդվածը խմբագրելիս ռուսական դիրքորոշումը որոշակի և հետևողական դարձնելու տեսակետից (57, № 127, 1878)։

Սակայն «Կիպրոսի դաշնագիրը մահացու եղավ հայերի և Հայաստանի համար, և Բեռլինին մնում էր լինել գերեզմանափորը հայության» (74, էջ 68)։ Բիքոնսֆիլդը չընդունեց հայ պատվիրակներին։ 1878 թվականի հունիսի 29-ին ֆրանսիական մի ընդունելության ժամանակ Նար-Պեյը և Ջերակը

Մելքոն խանի միջոցով ներկայացան Բիքոնսֆիլդին, պայմանով, որ «քաղաքական նյութի վրա չխոսվի» (7, № 10—12, 1907, էջ 163)։ Հանդիպման ժամանակ նա ոչինչ չասաց, բացի մի քանի արտահայտությունից այն մասին, թե «հայ արքեպիսկոպոսների հաղուստը շատ նման է Աթոս լեռան կրոնավորների... զգեստին...» (73, էջ 460)։ «Գոլոս» թերթի թղթակիցը Կ. Պոլսից հաղորդում էր, որ «այստեղ, Բերայում, առավել ամենքին գրգռում է կոմս Բիքոնսֆիլդի վարմունքը կոնգրեսում» (57, № 118, 1878)։

Տարիներ անց, քննադատելով հայկական պատվիրակության գործունեությունը Բեռլինում, Արշ. Չոպանյանն անվիճելի էր համարում, որ Ներսես Վարժապետյանն ու իր համախոհները Անգլիայի վրա «չափազանց հույս դնելու սխալը գործած էին»։ «...Պետք էր ըմբռնել, թե անգլիական դիվանագիտությունը «թշնամի էր» հայոց ներքին սուրբ բաղձանքներուն, մինչդեռ Ռուսաստանը՝ իր շահերաց բերմամբ՝ դաշնակից էր հայուն և հոժար՝ Հայաստանի մեջ իրական խաղաղություն, ապահովություն, զարգացման նպաստավոր պայմաններ ստեղծելու, իսկ Կիլիկիո մեջ աջակցելու ինքնավարության հաստատման» (7, № 10—12, 1907, էջ 166)։

Երբ ամեն ինչ պարզ էր, Բիսմարկը Խրիմյան հայրիկին անում էր պաղ դիտողություն, թե «որևէ քաղաքական իրավունք պահանջելու համար պետք է ներկայանալ դեսպանաժողովին ոչ թե խոնարհ աղերսագրով, այլ Զեռնոգորիայի ներկայացուցչի պես հաղթական սրի վրա կոթնած» (58, № 2, 1907, էջ 65)։

Ինչ խոսք, որ դիվանագիտական պրակտիկան օտար էր հայկական պատվիրակության անդամներին։ Պետականության բացակայությունը նշանակում էր խարխափել անորոշության մեջ և լոկ հանդես գալ խնդրատուի, այլ ոչ թե պահանջողի, մաքառողի դերում։ Հզոր ազգային-ազատագրական շարժման, զինված պայքարի, հավաքական ուժի, բռունցքի բացակայությունը ի չիք էին դարձնում եվրոպական տերությունների կողմից հայկական հարցադրումներին լրջորեն վերաբերվելու հնարավորությունը։

Բիսմարկը հրաժարվում էր պաշտպանել պատվիրակության հարցադրումները, դա պատճառաբանելով չեզոք մնալու իր ցանկությամբ, և գերադասեց քարտուղարի միջոցով կապ պահպանել։ Քարտուղարն էլ հրաժարվեց Խրիմյանին ընդունել, պատճառաբանելով նրա կրոնական տարազը (29, էջ 103)։

Ֆրանսիայի լիազոր Վադինգտոնը նույնպես մերժում է ընդունել Զերազին։ Արշ. Չոպանյանը հավաստում է, որ նա չափազանց մեծ հույս էր դրել ֆրանսիական դիվանագետի վրա, որը «միշտ խոստումներով օրորում էր պատգամավորությանը և ոչինչ ըրած էր» (7, № 10—12, 1907, էջ 167)։ Պատահական չէ, որ ֆրանսիական պաշտոնական շրջանները մեջտեղ էին բերել կեղծ տվյալներ արևմտահայության թվի մասին։ Օրինակ, Էրզրումի ֆրանսիական հյուպատոս Ժիլբերն իր կառավարությանը հաղորդել էր, թե, իբր, Արևմտյան Հայաստանում ընդամենը կես միլիոն հայ կար (88, էջ 33)։ Եվ այս թիվը հոլովվում էր ամենայն լրջությամբ։ Վադինգտոնն ասել էր Խորեն Նար-Պեյին, թե հայերի ներկայացրած ինքնավարության ծրագիրը «պարկեշտ ձևի տակ սքողյալ մի միտում է անկախության» (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 180)։ Անհիմն է Պաստրմաջյանի պնդումն այն մասին, թե, իբր, ի տարբերություն Բիսմարկի և Բիքոնսֆիլդի, Վադինգտոնն ու Սոլսբերին բարյացակամ էին տրամադրված հայ պատվիրակների նկատմամբ (208, էջ 323)։

Իր խոստումը Վադինգտոնը չկատարեց, բայց կրքոտությամբ պաշտպանեց կաթոլիկների իրավունքները, պնդելով պայմանագրի մեջ մտցնել մի հատուկ հոդված ինչպես Բուլղարիայում, այնպես էլ ամբողջ Օսմանյան կայսրությունում կաթոլիկ եկեղեցու և նրա սպասավորների իրավունքների անձեռնմխելիությունը հարգելու մասին (165, էջ 496)։

Ավելի ուշ, 1878 թվականի հուլիսի 14-ին, Վադինգտոնը պրեմիեր-մինիստր Դյուֆոյին հաղորդում էր, որ չէր մասնակցել Հայաստանի սահմանների շուրջ Սոլսբերիի հուլիսի 12-ի նիստի աղմուկին, բայց խոստովանում էր, որ ձգտել էր մեղմացնել Թուրքիայի կորուստները այդ շրջանում, որտեղից ապահովվում էր Եվրոպայի և Պարսկաստանի հաղորդակցությունը Տրապիզոնի վրայով (16, էջ 237)։

Տարիներ անց, 90-ական թվականներին, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության հրապարակած դիվանագի-

տական փաստաթղթերի «Դեղին գրքում» ֆրանսիական դիվանագետները փորձում էին հիմնավորել այն միտքը, թե 1877—78 թվականներին գեռևս «հայ ազգության զարթոնքի նշաններ չկային, իսկ հայկական անկախության գաղափարը գոյություն ուներ միայն մի քանի առաջավոր հայերի» մոտ։ Այնուհետև կրկնվում էր թուրքական պաշտոնական շրջանների հնարած վարկածը հայերի փոքրաթիվ, ցրված լինելու մասին, ինչով և, ըստ ֆրանսիական դիվանագետների կարծիքի, Հայաստանի աշխարհագրական և մյուս պայմանները տարբերվում էին Բուլղարիայից, Հունաստանից և դժվարացնում խնդրի դրական լուծումը (97, էջ 92)։

Հանդիպելով թուրքական լիազորների համառ ընդդիմությանը, եվրոպական մյուս տերությունների անտարբերությանը, հայկական պատվիրակությունը նորից ամպարեց դիմելու Ռուսաստանի ներկայացուցիչների օգնությանը։

Իսկ Անդրկովկասում անհամբեր լավատեսությամբ բարի լուրեր էին սպասում Բեռլինից։ «Մշակ»-ում Գրիգոր Արծրունին հույս էր հայտնում, թե «անհավատալի է, որ թուրքահայերի ներկայացրած համեստ պահանջներն էլ կոնգրեսը չընդունի»։ Միաժամանակ, դատելով մամուլում անգլիական քաղաքականության մասին առկա լուրերով, համոզված էր, որ արգելքը կլինի Անգլիայի կողմից, որը «Փոքր Ասիան և մանավանդ Հայաստանը կդարձնի մի երկրորդ Հնդկաստան։ Նա կպահի տնտեսական ստրկության մեջ բնիկ ժողովուրդը, կհարստահարի նրան։ Հայերին և առհասարակ բնիկներին կդարձնե օրական մշակներ, ինչպես արել է հնդկացիների հետ, իր ձեռքը կգցի Հայաստանի հանքերը, ջրերը, անտառները, բնական հարստությունները...» (57, № 111, 1878)։

Բեռլինի կոնգրեսի արձանագրությունները (198) չափազանց համառոտ են և լրիվ պատկերացում չեն տալիս անցուդարձի, տեսակետների մանրամասների մասին։ Ինչպես նկատել է ֆրանսիացի Հանոտոն, կոնգրեսի «արձանագրություններն ընդգրկում են սեսիաների ոչ լրիվ պատկերը» (214, էջ 80)։ Կոնգրեսի մասնակիցների հուշագրություններից, պատմաբան ուսումնասիրողների գրքերից տեղեկանում ենք քննարկումների որոշ ոչ պակաս էական հանգամանքների մասին։

Կոնգրեսի 12-րդ նիստում խոսք բացվեց Հայաստանի մասին։ Սոլսբերին անդրադարձավ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածին։ Զատարկելով հոդվածի այն տողերին, որոնք վերաբերում են բարենորոգումների կիրառմանը, նա պահանջեց կրճատել նրա վերջին մասը, այսինքն՝ առաջադրեց ռուսական զորքերը դուրս բերելու խնդիրը։ Նա գտնում էր, որ բարենորոգումները կարող են իրականացվել և առանց ռուսական զորքի ներկայության։

Շուվալովը մտահոգված էր, որ մինչև բարենորոգումները զորքերի դուրսբերումը ծանր հետևանքներ կունենար մասնավորապես հայերի համար և, պատրաստ չլինելով հարցի հանգամանալի արծարծմանը, խնդրում է դիտողությունները հետաձգել այլ նիստի (213, էջ 1123)։ Երբ Սոլսբերին ստիպված համաձայնում է և նախագահից ևս մեկ օր խնդրում «հայկական հարցի» համար, Բիսմարկը բղավելով ասում է. «Անցնենք ուրիշ հարցի», չքողարկելով իր ակնհայտ գժկամ անհամբերությունը (215, էջ 80)։

1878 թվականի հուլիսի 3-ին Շուվալովն Ալեքսանդր II-ին ծանոթացրեց անգլո-ռուսական տարաձայնություններին, որոնք ի հայտ էին եկել քննարկումների ժամանակ։ Միայն հուլիսի 5-ին Պետերբուրգից ստացվեցին նոր հրահանգներ, և հուլիսի 6-ին վերսկսվեցին վիճաբանությունները քննարկվող հարցերի շուրջ (213, էջ 1124)։

Հուլիսի 6-ին Բիսմարկը հաղորդեց, որ մի կողմից՝ Անգլիան պահանջում է Բաթումը վերածել ազատ նավահանգստի և Բայազետն ու Ալաշկերտը վերադարձնել Թուրքիային, իսկ մյուս կողմից՝ ռուսական ներկայացուցիչներն արդեն անհրաժեշտ լիազորություններ էին ստացել իրենց վերջնական խոսքն ասելու։ Այսպիսով, մինչև 14-րդ նիստի գումարումը հիմնական տարաձայնությունները հարթված էին (213, էջ 1124)։

14-րդ նիստում կոնգրեսը քննարկեց Սոլսբերիի առաջարկությունը 16-րդ հոդվածը վերախմբագրելու, փոփոխելու մասին։ Հրապարակելով բարենորոգումները եվրոպական տերությունների հսկողությամբ իրականացնելու վերաբերյալ իր ձևակերպումը, նա երեսպաշտորեն հայտարարեց, թե «հայերի շահերը պետք է պաշտպանվեն» և որ «առաջար-

կության նպատակն է նրանց հույսեր տալ անհապաղ բարելավումների և մոտ ապագայի համար» (213, էջ 1124)։ Սոլսբերին փորձում էր ապացուցել եվրոպական տերությունների կոլեկտիվ երաշխիքների արդյունավետությունը, հերքել Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրի տեսակետը, թե, իբր, այդպիսի մոտեցումը ոչինչ չէր տալու հայերին (182, էջ 451)։

«Անգլիական պատվիրակությունը հայկական հարցն օգտագործում էր միայն Ռուսաստանի դեմ պայքարի և Թուրքիայում իր դրությունն ամրապնդելու համար»,— գրել է Լլոյդ Ջորջը (119, էջ 390)։

Ռուսական լիազորները պահանջում էին հայերին վերաբերող հոդվածով նախատեսվող բարենորոգությունները գործադրել մինչև ռուսաց զորքերի դուրսբերումը։ Նրանց պաշտպանեցին ֆրանսիական դիվանագետները։ Իսկ Բիբոնսֆիլդը վճռականապես հակառակվեց։

Հուլիսի 6-ին փոքրասիական տերիտորիաների խնդրի քննարկման ժամանակ Սոլսբերին ապացուցում էր, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ և 19-րդ «հոդվածները խարխլում են Բ. Դուռն իշխանությունն ու հեղինակությունը Ասիայում», և հայտարարում էր, որ եթե Ռուսաստանը մտադիր էր մնալ և ամրանալ Կարսի ու Արդահանի ամրոցներում, ապա Անգլիան իրեն իրավունք էր վերապահում իր շահերին համապատասխան գտնել բնակչության վրա իր ազդեցությունը պահպանելու միջոցներն ու ձևերը (201, էջ 110)։

Սոլսբերին 16-րդ հոդվածի երկրորդ մասը խմբագրում էր այնպես, որ Բ. Դուռն իր ձեռք առած միջոցառումների մասին պետք է հաշվետու լիներ ոչ թե միայն Ռուսաստանին, այլև՝ վեց տերությունների կառավարություններին (198, էջ 497)։ Թուրքական պատվիրակ Կարաթեոդորին առաջարկում է իր ձևակերպումը. «Բ. Դուռը պետք է հաղորդի վեց տերություններին այն միջոցների մասին, որ արդեն ձեռք է առել»։ Շուվալովը գերադասում է համաձայնել Սոլսբերիի ձևակերպմանը (198, էջ 497—498)։ Նա գտնում էր, որ Բ. Դուռը միջոցներ է ձեռք առել, բայց դրանք չի գործադրել, ուրեմն ավելորդ է դա արձանագրել։

Հայերին վերաբերող հոդվածի վերջնական խմբագրությունը Սոլսբերին անգլիական և թուրքական պատվիրակությունների անունից կոնգրեսին ներկայացրեց հուլիսի 9-ի նիստում (198, էջ 42)։ Թուրքական լիազորները համերաշխել էին անգլիացիների հետ, որովհետև համոզվել էին, որ 16-րդ հոդվածի փոխարինումը նոր ձևակերպումով իրենց ազատում էր Ռուսաստանի ռեալ հսկողությունից։ Ինչ վերաբերում է հայերին, «ապա այդ փոփոխությունը նրանց ենթարկում էր իրենց բռնակալների հարաճուն ատելությանը, զինաթափելով և տկարացնելով երկրի աշխարհագրական պայմանների տեսակետից միակ պաշտպանին» (իմա՝ Ռուսաստանին) (86, էջ 80—81)։

Բիսմարկը ձայնը տվեց Սոլսբերիին, որը և հրապարակեց այն ձևակերպումը, ինչը հայտնի է որպես Բեռլինում ստորագրված պայմանագրի 61-րդ հոդված։ Ահավասիկ հոդվածի տեքստը. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից։ Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը» (45, էջ 128)։ Իսկ այն մասին, որ 1878 թվականի հունիսի 4-ի կոնվենցիայով Անգլիան պարտավորվել էր նպաստել ռեֆորմներ իրականացնելուն ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Ասիական Թուրքիայում, Բեռլինի տրակտատում ոչ մի հիշատակություն չկար։

Կանցլեր Գորչակովը հայ պատվիրակներին ընդունեց 1878 թվականի հուլիսի 6-ին, կոնգրեսում 16-րդ հոդվածի քննարկումից հետո։ Նա չթաքցրեց իր դժգոհությունը մյուս տերությունների դիրքորոշումից, որոնք Ռուսաստանին խանգարում էին հանդես գալ որպես ոչ միայն սլավոնների, այլև Օսմանյան կայսրության մյուս քրիստոնյա ժողովուրդների վիճակով շահագրգռված կողմ։ Գորչակովը հրաժարվեց պաշտպանել հայերի վարչական ինքնավարության պահանջը (29, էջ 106), պատճառաբանելով, որ դա չի նախատեսված իր ստացած հրահանգներում (73, էջ 463)։ Ռուսական

կանցլերը չէր կարող ստիպել կոնգրեսին զբաղվել Հայաստանի ինքնավարության խնդրով, որն ընդհանրապես մատնվեց անուշադրության գլխավորապես անգլիական դիվանագիտության խարդավանքների հետևանքով։

Շուվալովը հայ պատվիրակներին հայտարարեց, թե Բիսմարկն ուզում է ավարտել կոնգրեսը, և այլևս ժամանակ չի մնում հայերի հարցով զբաղվելու։

Սոլսբերին մեկիկ-մեկիկ մկրատեց հայ պատվիրակության հիշատակագիրն ինքնավարության հարցում, թեև պահպանեց բարենորոգումների գաղափարը, այն էլ անգլիական պառլամենտում ընդդիմադիրներին գոհացում տալու համար։ Այնուամենայնիվ, նա չէր խորշում հայ պատվիրակներին պլատոնական խոստումներ տալուց։ Նա ասում էր, թե «հայերն իրավունք ունեն վարչություն պահանջելու», թե նրանք կարող են վստահ լինել, որ կոնգրեսը կգտնի ճիշտ ուղին հայերին շնորհելու կառավարման այնպիսի ձև, որպեսզի ապահովվի նրանց «բարօրությունը, ազատությունը և խաղաղությունը»։ Արշակ Չոպանյանը «տարտամ», «խաբեական» է անվանում Սոլսբերիի վերոհիշյալ խոստումները, քանի որ անգլիական դիվանագիտությունը ոչ թե ի նպաստ հայոց բանաձև փնտրեց, այլ ուրիշների առաջարկած բանաձևերը ջնջելու կամ ուժաթափելու ուղղությամբ գործեց։ «Միակ բանաձևը, որ ինքը հղացավ և Կիպրոսի դաշնադրությամբ հայտնեց, սպանումն էր հայկական հարցին», — եզրակացնում է նա (7, № 10—12, 1907, էջ 168)։

Հենց որ պատրիարքարանը Բեռլինից լուր է ստանում հայերին վերաբերող հոդվածի բովանդակության մասին, անմիջապես, հուլիսի 13-ին, հեռագրով հրահանգում է բողոքել (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 185)։ Նա չէր կարող չնկատել, որ հոդվածում հիշված էր ոչ թե «Հայաստան» բառը, այլ «հայաբնակ մարզեր» արտահայտությունը։ Պայմանագրի ստորագրումից երկու ժամ առաջ կոնգրեսի մասնակիցներին ներկայացվեց մի բողոքագիր, որտեղ ասված էր, թե «հայերը հասկացան, որ խաբված են և թե իրենց իրավունքները չեն ճանաչվել, որովհետև խաղաղասեր են եղել... որ ոչինչ չստացան իրենց հնագույն ազգությունը պահպանած լինելու համար»։ Շեշտելով «խաղաղասեր» բառը, փաստաթղթի հեղինակները կարծես թե արդեն ընդունում էին, որ ազատության ճանապարհն աղերսանքը չէ։

Սան-Ստեֆանոյի համաձայնագրի 16-րդ հոդվածը Բեռլինի համաձայնագրի 61-րդ հոդվածով փոխարինելը նշանակում էր հայերին հետաքրքրած խնդիրների լուծումը վերցնել Ռուսաստանի ձեռքից և հանձնել եվրոպական տերությունների տնօրինությանը։ «Բեռլինում հայերն ուզում էին որոշ բան ավելի ստանալ, քան այն, ինչ նրանց տրվել էր 16-րդ հոդվածով։ Փոխանակ լրացուցիչ որևէ բան ստանալու, նրանք շատ ավելին կորցրին, որն արդեն ունեին»։ Ամերիկյան պրոֆ. Սարգսյանը դեռևս 30-ական թվականներին հրապարակած ուսումնասիրության մեջ գալիս է այն եզրակացության, որ միակ ռեալ երաշխիքը, որը կտար բաղձալի արդյունք, դա այն էր, «ինչ առաջադրել և ստանձնել էր Ռուսաստանը» (214, էջ 83, 85)։ Ռոլեն Ժեկմենը նկատում է, որ շնորհիվ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի հայկական հարցը պողիտիվ միջազգային իրավունքի բնագավառը մուտք գործեց ոչ թե դիվանագիտության քմահաճությամբ, այլ որպես տրամաբանական հետևանք նախորդ փաստերի և ակտերի (151, էջ 2)։ Հայկական հարցն Օսմանյան կայսրության ներքին խնդրից՝ ռուսական զենքի հաղթանակի շնորհիվ Ռուսաստանի հովանավորությամբ լուծվելու հնարավորությունից վերածվում էր միջազգային հարցի, որի համար պատասխանատվություն էին ստանձնում, նրաշխիքներ տալիս Բեռլինի պայմանագիրը ստորագրած եվրոպական տերությունները։

Պայմանագրի 61-րդ հոդվածում չէր հիշատակվում Հայաստան անունը։ Խոսվում էր միայն հայաբնակ շրջանների մասին։ Իսկ որո՞նք էին այդ շրջանները, որտե՞ղ էին սկսվում և ավարտվում դրանք, ինչպիսի՞ բարենորոգումներ էին իրականացվելու այնտեղ, այդ մասին ոչինչ չէր ասված պայմանագրում։ Ամեն ինչ ձևակերպված էր տարտամ և առաձգական։ Ահա թե ինչու կոնգրեսից անմիջապես հետո սուլթան Համիդն իր առաջնահերթ խնդիրը համարեց հետևողականորեն ի չիք դարձնել «հայաբնակ շրջաններ» հասկացությունը, կամայականորեն վերաձևելով վարչական միավորները, կեղծիքի և աչքակապության միջոցով ապացուցելու

համար, թե Արևելյան Անատոլիայի ոչ մի վայրում, իբր, հայերը մեծամասնություն չէին կազմում։

Կոնգրեսն օրինականացրեց Օսմանյան կայսրության ներքին գործերին մեծ տերությունների միջամտության ավանդական քաղաքականությունը, մի քաղաքականություն, որը ոչ մի լավ բան չէր տալու հայ ժողովրդին, բացի Թուրքական սուլթանի կատաղությունը գրգռելուց։ Նա էր երկրի տերը և յուրովի էր վարվելու իր հպատակների հետ։ Այն ժամանակ չկար մի ուժ, որը Թուրքական դժոխքը դրախտ դարձներ։ Չկար մի ուժ, որը շուտ տար հետամնաց արտադրահարաբերությունները Թուրքիայում, առաջադիմության և ազգային աղատագրության դուռ բացեր կեղեքված ժողովուրդների համար։

Ֆրանսիական հեղինակները փորձում էին ամեն ինչ պայմանավորել նրանով, որ Եվրոպայում վատ գիտեին հայ իրականության մասին։ «Եթե Եվրոպան լավ իրազեկ լիներ այդ փաստերին,— գրում էին նրանք,— ապա հայերը Եվրոպայում կօգտվեին ոչ պակաս նույնպիսի աշխույժ համակրանքից, ինչպես մյուս ժողովուրդները, որոնք շատ ավելի պակաս էին արժանի դրան» (213, էջ 1122)։

Եվրոպական պետություններն անհամեմատ քիչ էին շահագրգռված Փոքր Ասիայի գործերով։ Անգլիան «Փոքր Ասիայի քրիստոնյաների պաշտպանության ապերախտ դերն ստանձնեց, որպեսզի Ռուսաստանն ավելին չպահանջի»։ Հետագայում փորձելով արդարացնել իր հայրենակիցներին, Ջեյմս Բրայսը գրում էր, թե 1878 թ. «Եվրոպան տակավին չէր ըմբռնել հայկական հարցի գոյությունն ու էությունը, քանի որ մարդկանց տեսադաշտում Բուլղարիան, Բոսնիան և Մակեդոնիան էին։ Նրանք, ովքեր ամենավատ կարծիքն ունեին Թուրքերի մասին, խոսում էին պարզապես նրանց Եվրոպայից դուրս քշելու մասին, կարծես թե դրանով լուծված կլիներ հարատև ապրող արևելյան հարցը» (182, էջ 445)։ Հետագայում, ինչ խոսք, հեշտ էր հայտարարել, թե 1878 թվականին «միայն Ռուսաստանն էր իրավասու իր միջամտությունը պահանջելու հայկական նահանգների ներքին կառավարման գործերին. նրա պրոտեկտորատն ավելի ռեալ էր, այլ ոչ թե ֆիկտիվ» (86, էջ 78)։ Սակայն «այդպիսի հետանքից մենք զոհ չէինք,— շարունակում է անգլիացի հեղինակը,— և դա Բեռլինի պայմանագրի այն կետերից մեկն էր, որի փոփոխման վրա պնդում էին, դրանով իսկ զգալի չափով խեղաթյուրելով Սան-Ստեֆանոյի համաձայնագիրը»։ Քննադատելով Անգլիայի քաղաքականությունը, տասնամյակներ անց նա խոստովանում էր, որ «ոչինչ ավելի վնասաբեր հնարավոր չէր հնարել քրիստոնյաների շահերի համար» (86, էջ 80)։

«Եթե չլիներ մեր շարաբաստիկ միջամտությունը,— հետագայում խոստովանում էր Լլոյդ Ջորջը,— ապա հայերի մեծամասնությունը 1878 թվականի Սան-Ստեֆանոյի պայմանագրով անցած կլիներ ռուսական դրոշի պաշտպանության տակ» (119, էջ 390)։ Հիրավի, իմպերիալիստական Անգլիան իր քաղաքականությամբ տապալեց Ռուսաստանի օգնությամբ և հովանավորությամբ արևմտահայության քաղաքական ճակատագրի մեջ դրական բեկում առաջացնելու ջանքերը։

«Գոլոս» թերթը «Հայերը և անգլո-Թուրքական համաձայնությունը» վերնագրով մի հոդված տպագրեց, որտեղ ասված էր.

«Եվրոպայի պատմությունը հարստացավ էլի մեկ խայտառակ էջով. մի պետություն, որը պարծենում էր իր ազատ հիմնարկություններով, դաշն կապեց ամենաբարբարոս բռնակալության հետ, գաղանությունները և ինքնակամությունը պաշտպանելու համար»։ Անգլո-Թուրքաց համաձայնագրից «սիրտ առնելով», Բ. Դուռը «Կ. Պոլսի հայոց պատրիարքից պահանջում է հետ կանչել Բեռլինից հայոց պատգամավորներին, Հայաստանը կրկին բռնաբարության և սպանության ասպարեզ է դառնում»։ Վանում կատարված բռնությունների, կողոպուտների կապակցությամբ տեղի Թուրք նահանգապետը հեգնաբար հայոց եպիսկոպոսին խորհուրդ էր տվել «օգնություն որոնել Խորեն Նար-Պեյի մոտ Պետերբուրգում» (57, № 116, 1878)։

Ինչպես գրում է Բոբրիկովը, «Սան-Ստեֆանոյի պայմանագրով մեր ասիական սահմանը առաջ էր քաշվում դեպի Հայաստանի կենտրոնը՝ Էրզրում, մեր սահմանների մեջ նե-

բառելով բարեբեր հարթավայրեր, համարյա ամենուրեք հայերով բնակեցված։ Բեռլինի կոնգրեսը, մեծերրիտանական լիազորների պնդմամբ, սահմանը քաշեց շատ ետ, Հայաստանի հարստագույն և ամենաբնակեցված մասը թողնելով Թուրքիային»։ Այնուհետև նշելով, որ 61-րդ հոդվածը մնաց անկատար, ռուս գեներալը գրում է. «այսպիսով, մեծ թվով հայեր մնացին միևնույն ողորմելի դրության մեջ, որ գոյություն ուներ մինչև վերջին պատերազմը» (93, 1913, № 154, էջ 255)։ Այսպիսի լուծման պատասխանատվությունը դնելով անգլիական կառավարության վրա, նա ընդգծում էր ռուսական իրականության առավելությունները հայ ժողովրդի համար (93, 1913, № 154, էջ 255).

Խոսելով Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի առավելությունների և հայերի համար ռուսական հովանու անհրաժեշտության մասին, Համբ. Երամյանը գտնում է, որ Անգլիայի հակառուս քաղաքականությունը ոչ միայն չքայքեց իրական հույսերը, այլև հայերի դեմ զինեց Ելիզվետի բոլենուն (22, էջ 330)։

«Բեռլինի տրակտատը,— գրում է ակադեմիկոս Վ. Մ. Խվոստովը ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստր Ա. Ա. Գրոմիկոյի խմբագրությամբ հրատարակված «Դիվանագիտության պատմություն» գրքի երկրորդ հատորում,— հայ ժողովրդի զգալի մասը թողեց Թուրքերի լծի տակ։ Պատմությունը ցույց տվեց, որ կապիտալիստական տերությունների այդ որոշումը ճակատագրական եղավ Թուրքահայերի համար. այն նրանց մատնեց ֆիզիկական ոչնչացման» (132, էջ 333)։

Բազմաթիվ հեղինակներ ժամանակին մատնանշել են Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի կատարած խիստ բացասական դերը հայ ժողովրդի քաղաքական կյանքում սուլթանական պետականության սահմաններում։ Այդ հոդվածը, որ «տեսականորեն ենթադրվում էր որպես հայ ժողովրդի փրկության միջոց, գործնականում դարձավ նրա կործանման գործիք» (84, էջ 35)։ Հոդվածը չորս միջոց էր սահմանել. ռեֆորմներ, հայերի ապահովություն անհիշխանական ցեղերից, պարբերական ծանուցումներ պետություններին և նրանց վերահսկողություն։ Անցան տասնյակ տարիներ, բայց սրանցից և ոչ մեկը չգործադրվեց։

Այո՛, քառասուն տարի անց, Եվրոպայի կողմից «պաշտպանյալ» այդ նահանգներն էին, որ դժնդակ հեգնությամբ կոտորածներով սրբվեցին։ Նույն իմպերիալիստական Եվրոպան 1915 թվականին ոչ միայն չպաշտպանեց արևմտահայությանը Թուրքական սպանիչ հարվածից, այլև ինքն անմիջական մեղսակիցը դարձավ արևմտահայության համապարփակ ողբերգության։

* * *

Բիքոնսֆիլդը կոնգրեսից վերադարձավ որպես հաղթանակած հերոս։ Անգլիական շովինիստների՝ ջինգոիստների, ուրախությանը չափ ու սահման չկար։ Անգլիայում ցնծությամբ դիմավորեցին նրան (213, էջ 1147)։ Բիքոնսֆիլդին ու Սոլսբերիին հաջողվել էր ոչ միայն ընդդիմանալ Ռուսաստանի ռազմաքաղաքական հաջողությանը, այլև Թուրքիայից թոցնել մի յուղալի պատառ՝ Կիպրոսը։ Շովինիստական շմոլքը համակել էր բուրժուական Անգլիայի լայն խավերին։ Գաղութատիրության միջնարերդը ցնծում էր։ Լոնդոնի Զարինգ Կրոսս կայարանի հրապարակում Բիքոնսֆիլդին դիմավորեցին «հաղթական հանդեսով», «շնորհակալական ուղերձներով» նրա «հայրենասիրական ջանքերի համար»։ «Երբեք ոչ մի իշխան, ոչ մի կայսր այսպիսի օվացիայով չի ընդունվել Լոնդոնում»,— գրում էին թերթերը (57, № 121, 1878)։ Նա հայտարարեց, որ կոնգրեսի արդյունքները «պատիվ կբերեն թագուհուն» և «բախտավոր հետևանքներ կունենան երկրի և եվրոպական խաղաղության համար» (57, 1878, № 124)։

Բիքոնսֆիլդը երեսպաշտորեն հայտարարեց «հաշտություն և պատիվ»։ Իսկ մի քանի օր անց, լորդերի պալատում արտասանած իր երկուժամանոց ճառում պարծենկոտությամբ երկինք էր հանում անգլիական դիվանագիտության հաջողությունը։ Անդրադառնալով կովկասյան սահմանին, նա հայտարարեց. «Եթե չմիջամտեինք Ասիայում մեր շահերը պաշտպանելու համար, Թուրքիայի այդ մասը կդառնար կա՛մ անիշխանության զոհ, կա՛մ Ռուսաստանի որս» (32, էջ 200)։ Նրա ճառը լի էր հօգուտ Թուրքական պետականության,

սուլթանի իշխանության պահպանման մասին փարիսեցիական բացականչություններով։ Նա լկտիաբար հայտարարեց, թե մանր ազգությունները պետք է իմանային, որ Բեռլինի կոնգրեսը Թուրքիան բաժանելու համար չէր գումարվել, որ «Թուրքիայում կարգ ու հանգստություն պահպանելու ամենալավ գրավականը տալիս է միայն սուլթանի իշխանության պահպանումը»։

Այն ժամանակ գրում էին, որ Ռուսաստանը Բալկաններում կորցրեց հարյուրհազարավոր մարդկային կյանք և միլիոնավոր ռուբլիներ, այնինչ Ավստրիան միայն թանաք ու թուղթ էր ծախսել։ Իսկ Անգլիան այդ էլ չէր արել։ Անգլիական դիվանագիտությանը հաջողվեց Բեռլինի կոնգրեսում սեպ խրել ավստրո-գերմանո-ռուսական հարաբերությունների մեջ։ Սկսած Բեռլինի կոնգրեսից աստիճանաբար թուլացան, հետո սառեցին ու վատացան ռուս-գերմանական հարաբերությունները։ Իտալիայում դժգոհ էին կոնգրեսի արդյունքներից. Ավստրիայի հաջողությունը խոր հուզում առաջացրեց Իտալիայում։ Հռոմում ժողովրդական մեծ ցույց տեղի ունեցավ, որտեղ հանդես եկած Գարիբալդին Տրիեստի բնակիչներին կոչ արեց ապստամբել ավստրիական տիրապետության դեմ (53, 1878, № 2152)։ Ավստրո-Հունգարիայի դիրքերի ամրապնդումն Ադրիատիկ ծովի ափերին չէր համապատասխանում Իտալիայի շահերին։

Բեռլինի կոնգրեսի արդյունքներից Օսմանյան կայսրության վերին խավերը գոհ էին։ Կայսրությունը պահպանվում էր։ Մինչդեռ նախօրյակին սուլթանը Բոսֆորի շքեղ պալատներից և դրախտավայրերից հեռանալու, Ասիա գաղթելու մասին էր մտորում։ Նա շարունակելու էր յուրովի, թուրքական ձևով կառավարել իր երկիրը, շահագործել ժողովուրդներին, լափել բյուջեն, վայելել իր հարեմների ցոփ կյանքը (213, էջ 1144—1145)։

Սակայն այսօր Արևմուտքում գտնվում են իմպերիալիստական քաղաքականությանը ծառայամիտ, հաճոյակատար հեղինակներ, որոնք փորձում են համակրանքի խոսքեր շռայլել օսմանյան բռնակալության օգտին։

Ամերիկուհի Բ. Ելավիչը վերջերս լույս ընծայած իր «Օսմանյան կայսրությունը, մեծ տերությունները և նեղուցների

պրոբլեմը 1870—1887 թթ.» գրքում մոդեռնացնում է քննարկվող հարցերը, նրանց մոտենում այսօրվա Թուրքիան ամերիկյան իմպերիալիզմի ազդեցության ոլորտում պահելու շահերից, փաղաքշում և սիրաշահում թուրքերին պատմական ճշմարտությունների հաշվին։ Նրա կարծիքով, բոլոր կոնֆլիկտներում Թուրքիան թույլ կողմ էր հանդիսանում, թե, իբր, XIX դարի միջազգային դիվանագիտական խաղում ամենամեծ ձախորդն էր, և դրա համար նա արժանի էր պաշտպանության։ Նա չի թաքցնում, որ իր համակրանքը Թուրքիայի կողմն է (190)։ «Վոպրոսի իստորիի» ամսագրում (№ 5, 1976) սովետական պատմաբան Վ. Ն. Պոնոմարյովը գիտականորեն քննադատում է ամերիկյան հեղինակի պնդումները, ցույց է տալիս, որ նա կորցնում է չափի զգացողությունը, կոպիտ կերպով աղավաղում պատմական իրողությունը։ Պոնոմարյովը հիշեցնում է, որ Օսմանյան կայսրությունը բազմիցս «երդումներով» խոստացել էր ռեֆորմներ անցկացնել այն նահանգներում, որտեղ ոչ թուրք ժողովուրդներ էին բնակվում, բարելավել նրանց դրությունը։ Այդ պարտավորություններն, օրինակ, արձանագրված էին ինչպես Փարիզի 1856 թվականի, այնպես և Բեռլինի կոնգրեսի 1878 թվականի պայմանագրերում, բայց չկատարվեցին։

Բիսմարկը կոնգրեսի արդյունքները բնութագրեց որպես մեծ ներդրում Եվրոպայի խաղաղության և պետությունների միջև հարաբերությունները կարգավորելու և ամրապնդելու գործում, որ կոնգրեսն «արժանացավ Եվրոպայի շնորհակալությանը» (135, էջ 9)։ Իրականում կոնգրեսից գոհ էին Անգլիան, Ավստրիան և Գերմանիան, որոնք առանց պատերազմին մասնակցելու շահեցին։ Եթե առաջին երկուսը տերիտորիալ նոր զավթումներ կատարեցին, ապա Գերմանիան ապացուցեց այդուհետև Եվրոպայի գործերում իր վճռական դերի հետ հաշվի նստելու անհրաժեշտությունը։

Բիսմարկը փորձում էր ապացուցել, որ Բեռլինի պայմանագրի արդյունքները չափազանց նպաստավոր էին Ռուսաստանի համար, քանի որ նա նոր նվաճումներ էր ձեռք բերել ինչպես Ասիական Թուրքիայում, այնպես և Բալկաններում, իսկ թուրքական տիրապետությունը թուլացել էր։ Նա դժգոհում էր Գորչակովից և ռուսական մամուլից, որոնք գոհ

չէին Գերմանիայի դիրքից։ «Իրականում,— գրել է Բիսմարկը,— Բեռլինի կոնգրեսում չի եղել և ոչ մի ռուսական ցանկություն, որի ընդունմանը չի ձգտել Գերմանիան, երբեմն նույնիսկ անգլիական պրեմիեր-մինիստրի առջև եռանդուն քայլերի միջոցով» (90, էջ 100, 101)։

Ինչ խոսք, որ Ռուսաստանում ամբողջ խորությամբ գիտակցում էին կատարվածի բացասական իմաստը։ Սակայն պետական մարմինները մամուլի օրգանների միջոցով անցկացրին այն գիծը, թե ռուսական դիվանագիտության կատարած գիջումները չեն նսեմացնում Սան-Ստեֆանոյի պայմանագրի աննախընթաց դրական արդյունքները (213, էջ 1144)։

«Ռուսաց հասարակայնությունը վրդովված է եվրոպական շահասեր դիպլոմատիայի դեմ, նա անբավական է մանավանդ Ավստրիայից, որն ամեն տեսակ օգուտներ քաղեց» (57, 1878, № 109)։ Ցարական արքունիքը, սլավոնոֆիլները չափազանց դժգոհ էին Անգլիայի ու Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Ֆրանսիայի բռնած հակառուսական դիրքից։ Բեռլինի կոնգրեսի արդյունքները պատերազմում հաղթանակած Ռուսաստանի արտաքին քաղաքականության անհաջողությունն էին նշանավորում։ Երբ Շուվալովը Բեռլինից վերադարձավ Պետերբուրգ, իր հետ բերելով ստորագրված պայմանագիրը, Ալեքսանդր II-ը նրան դիմավորեց հետևյալ խոսքերով. «Խոստովանեցեք, սակայն, որ կոնգրեսի արդյունքները խիստ ցավալի են մեզ համար»։ Գորչակովն իր ներկայացրած հաշվետվության մեջ Բեռլինի տրակտատը բնութագրել էր որպես իր աշխատանքային գործունեության ամենասև էջը։ Այդ գրության վրա ցարը մակագրել էր. «Ինձ համար նույնպես» (136, հ. 59, 1933, էջ 106—109)։

Ռուս պատմաբան, քաղաքականագետ Գ. Կ. Գրաղովսկին Բեռլինի կոնգրեսը գնահատել է որպես «մի դատ հաղթողների նկատմամբ» (116, էջ 90), որ իրականացրին եվրոպական մեծ տերությունները։

Տասնամյակների ընթացքում, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, ռուսական պատմագիտության, քաղաքական-հասարակական հրապարակախոսության մեջ, ինչպես նաև հետո, սովետական պատմագիտության մեջ շատ է գրվել և խոսվել Բեռլինի կոնգրեսում ծավալված դիվանագիտական անցուդարձի, ռուսական լիազորներ Գորչակովի և Շուվալովի կատարած սխալների, նրանց անմիաբանության և այլնի մասին։ Ռուսական զենքի տարած հաղթանակների և դիվանագիտության ոլորտում ձեռք բերված համեստ արդյունքների ակնհայտ տարբերությունը բազմաթիվ զինվորական և դիվանագիտական հուշերի և այլ գրքերի հեղինակների մղել են առանձին անհատների գործողությունների մեջ փնտրելու երևույթների, իրադարձությունների դրդապատճառներն ու արմատները։ Չմբռնելով կապիտալիստական Եվրոպայի իմպերիալիստական զարգացման օրինաչափությունները, անտեսելով միջպետական հարաբերությունների բուն էությունը, ուժերի փոխհարաբերությունը, գաղութային զավթումների քաղաքականության ներքին զսպանակները, ոմանք գերագնահատել են դիվանագետների սուբյեկտիվ դերը, ոմանք գիտական, քննական-վերլուծական մոտեցումը նենգափոխել են՝ կարևորություն տալով դիպվածին, առերևութայինին։

Ն. Կրավչենկոն սխալը տեսնում է արդեն այն փաստում, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը չպետք է անվանվեր նախնական, այլ պետք է լիներ վերջնական, ինչը սողանցք չէր թողնի հետագա փոփոխությունների և վերանայման համար (135, էջ 13—15)։

Թեև ժամանակին տաղանդավոր Գորչակովը հսկայական քաղաքական փորձ ունեցող դիվանագետ էր, բայց տարիները, ֆիզիկական տկարությունը նրան կերպարանափոխեցին։ Ռուս հեղինակ Յու. Կարցևը նշում է նրա մոտ առաջացած եսամոլության, ցուցամոլության, մեծամտության մասին, որ հատուկ էին իշխանի բնավորությանը։ «Կարո՞ղ էր արդյոքսի՝ իրեն սպառած և սմքած մարդը լինել այն պատմական իրադարձությունների բարձրության վրա, որ ամպրոպի ամպի նման շարժվում էին Ռուսաստանի վրա»,— հարց է տալիս այդ հեղինակը։— «Զբաղված բացառապես ինքն իրենով, արտաքին քաղաքականության գործերում իշխանը տեսնում էր միայն այն շրջանակը, որի մեջ գծագրվում էր իր անձնավորությունը։ Բիսմարկին նա համարում էր իր աշակերտը և նրան չէր ներում իրեն գերազանցելու համար։ Իր

ենթականերից նրա աչքի փուշն էր դարձել Ն. Պ. Իգնատևը», — գրում է Կարցևը (133, էջ 4)։

Սովետական պատմաբան Ս. Բուշուևը նշում է, որ Բեռլինի կոնգրեսում բացակայում էր անհրաժեշտ համաձայնեցվածությունը կանցլեր Գորչակովի և Շուվալովի միջև։ Վերջինս ղեկավարվում էր բացառապես անձնական շահադիտական մոտիվներով։ Իսկ Գորչակովը ծեր էր, 81 տարեկան, հիշողությունը կորցրած, և իր հիվանդ վիճակի պատճառով չկարողացավ նույնիսկ ներկա գտնվել կոնգրեսի բոլոր նիստերին (99, էջ 106)։

Գորչակովը հիվանդության պատճառով մասնակցեց կոնգրեսի միայն երեք նիստի։ Սովետական պատմաբան Մ. Բելյաևը գրում է, որ Շուվալովն էր փաստորեն գլխավորում ռուսական պատվիրակությանը, իսկ նա «ամենևին չէր համապատասխանում դիվանագետի դերին, որը պետք է արիաբար և խելոք կերպով պաշտպաներ ռուսական արտաքին քաղաքական շահերը» (89, էջ 427)։

Բորրիկովը քննադատում է Գորչակովին, որն արդեն տկար էր, կորցրել էր ճիշտ և արագ կողմնորոշվելու ունակությունը, թեև պահպանել էր արտաքինն ու պերճախոսությունը։ «Ծերության հասած դիվանագետները,— գրում է նա,— առանձնապես եթե նրանց գործունեությունը հասել է փառքի գագաթնակետին, վտանգավոր են նրանով, որ չափից ավելի են վախենում վարկաբեկվելուց և դառնում են անվճռական ու զիջողական» (153, հ. 153, 1913, էջ 80—81)։ Բորրիկովը Շուվալովին նույնպես քննադատաբար է վերաբերվում։ Սա չափից ավելի ինքնավստահ էր և ծայրահեղ փոփոխական բնավորությամբ, որի հետևանքով հեշտությամբ իր վրա էր վերցնում դժվար լուծելի խնդիրներ, նույն արագությամբ էլ զիջումներ էր անում, չմբռնելով դրանց կարևորությունը։ Միաժամանակ նշում է, որ այնպիսի փորձված դիվանագետ, ինչպիսին թուրքական գործերին քաջատեղյակ Իգնատևն էր, չմտցվեց Բեռլինի կոնգրեսի ռուսական պատվիրակության կազմի մեջ (153, հ. 153, 1913, էջ 80—81)։

Ոչ պակաս բացասական նշանակություն ունեցավ այն հանգամանքը, երբ ռուսական պատվիրակությունը որևէ

վերջնական որոշում ընդունելուց առաջ Բեռլինից հարցում էր անում Պետերբուրգ՝ Ալեքսանդր II-ի վերջնական կարծիքն իմանալու համար։ Մինչդեռ անգլիական պատվիրակությունը գլխավորում էր լիիրավ լիազորություններով օժտված պրեմիեր-մինիստր Բիքոնսֆիլդը, որն ինքն էր վերջնական որոշումներ կայացնում իր գլխավորած կառավարության անունից։

Ռուս պատմաբան Ս. Ժիգարյովը քննադատում է Պ. Ա. Շուվալովին, գտնում է, որ նա չէր կարող հաջողություն ունենալ դիվանագիտության մարզում, քանի որ մշտապես աշխատել էր ոստիկանությունում՝ օբերոստիկանապետից մինչև ժանդարմերիայի պետի պաշտոնը։ Նա գտնում է, որ Շուվալովի հակումները, ինչպես նաև երրորդ բաժանմունքը, ոչ մի ընդհանուր բան չունեին արտաքին քաղաքականության հարցերում Ռուսաստանի շահերի հետ։ Դեսպանի պաշտոնը զբաղեցրած Շուվալովին Լոնդոնից Բեռլին ուղարկելը՝ Արևելյան «հարցի լուծմանը» նրա մասնակցությունն այնպիսի նրբին և կրթված դիվանագետների՝ Բիքոնսֆիլդի կամ Բիսմարկի մրցակցության պայմաններում, Ժիգարյովը համարում է կոպիտ սխալ։ Շուվալովն «իր ամբողջ դարը անցկացրել էր ոստիկանական վարչության բնագավառում» և չէր կարող հաջողության հասնել հանուն Ռուսաստանի, եզրակացնում է Ժիգարյովը (125, էջ 525)։

Փոքր Ասիայի քարտեզը վատ գիտեին ոչ միայն Գորչակովը, այլև նրա զինվորական խորհրդականները։ Նրանք ուղղակի ծանոթ չէին կովկասյան բանակի ռազմական գործողությունների մանրամասներին (85, էջ 100)։

Փոքրասիական քարտեզի իմացությամբ բոլորովին չէր փայլում նաև Բիքոնսֆիլդը։ Երբ Սոլսբերին Շուվալովից իմացավ, որ ասիական սահմանների վիճելի խնդրի լուծումն ստանձնել են Գորչակովն ու Բիքոնսֆիլդը, սարսափահար բացականչեց. «Բայց, իմ թանկագին կոմս, Բիքոնսֆիլդը չի կարող այդ բանակցությունները վարել, նա երբեք չի տեսել Փոքր Ասիայի քարտեզը» (136, հ. 59, 1933, էջ 107)։ Սակայն դա չխանգարեց Բիքոնսֆիլդին օգտվել Գորչակովի անփութությունից և կովկասյան սահմանագիծը որոշելիս դժվարություններ հարուցել Ռուսաստանին, պաշտպանել Թուրքիային

և վնասել հայ ժողովրդի կենսական շահերին (147, էջ 52)։

Ա. Անուչինը հաստատում է այդ եզրակացությունը։ Նա գրում է, որ իշխան Գորչակովը, «ծերունական ցրվածության» պատճառով, Բեռլինի կոնգրեսի վերջին նիստերից մեկում, որտեղ չէր էլ քննարկվելու Փոքր Ասիայի սահմանների խնդիրը, անզգուշությամբ անգլիացի դիվանագետ Օտտ Ռոսսելի առջև պաղում է փոքրասիական ռազմաճակատի զինվորական քարտեզը։ Վերջինիս վրա ցույց էին տրված ոչ միայն ռուս-թուրքական նախապատերազմյան, այլև Սան-Ստեֆանոյի պայմանագրով որոշված և դրանից հետո նախատեսվող հնարավոր զիջումների սահմանագծերը (85, էջ 62)։ Գաղտնիքը պարզվում է անգլիական դիվանագետներին, որոնք չտեսնված համառությամբ պնդում են հօգուտ Թուրքիայի սահմանագիծը հաստատելու վրա։

Երբ Գորչակովը փորձում է հակառակն ապացուցել, դիմում է քարտեզին և, Սան-Ստեֆանոյի պայմանագրով ընդունված սահմանագիծը ցույց տալով, հայտարարում, թե Բիքոնսֆիլդը համաձայնել էր դրան իրենց հանդիպման ժամանակ, վերջինս վկայակոչում էր անգլիական քարտեզի վրա արտանկարված սահմանագիծը և ցինիկաբար բացականչում, թե Գորչակովը բոլորովին այլ բան է ասում։ Այս խնդիրը յուրովի է բացատրում անգլիացի պատմական Մեդլիկոտը։ Նա գրում է, որ միմյանց չըմբռնելու պատճառը ոմանք բացատրում էին երկու պետական գործիչների՝ Գորչակովի և Բիքոնսֆիլդի, ծերությամբ։ Հետո ավելացնում է, թե Ալաշկերտի շուրջը ծավալված վեճի ժամանակ պարզվեց, որ մեծ տարբերություն կար ռուսական և անգլիական քարտեզների միջև (201, էջ 119—120)։ Նա գրում է, որ վերջապես հանձնարարվեց Շուվալովին, Սոլսբերիին և Հոհենլոեին՝ տալ վերջնական եզրակացություն սահմանային հարցի վերաբերյալ։ «Հոհենլոեն առաջարկեց մի կոմպրոմիսային գիծ, որն անցնում էր մյուս երկուսի միջև, և Շուվալովն ընդունեց այդ սահմանագիծը, այսպիսով լուծելով խնդիրը»,— գրում է Մեդլիկոտը։ «Ոչ ոք մեզանից չգիտեր, թե դա լիարժեք սահմանագիծ էր, թե ոչ,— գրում է Հոհենլոեն։— Հայաստանի այդ մասին վերաբերող քարտեզներն այնքան անփույթ և հակասական էին գծված, որ չափազանց դժվար էր դրանցով

որոշել սահմանները» (201, էջ 119)։ Հայաստանի սահմանների շուրջ տեղի ունեցած միջադեպը նկարագրում է նաև Անդրե Մորուան՝ Դիզրաելիին նվիրված իր գրքում (Карьера Дизраэли, էջ 357—359)։

Այս միջադեպն էր պատճառը, որ Սոլսբերիին և Շուվալովին հանձնարարվեց պարզություն մտցնել վեճի մեջ, ճշտել սահմանագիծը։ Անգլիացու համառությունից հետո, Հոհենլոեի միջնորդ մասնակցությամբ խնդիրը լուծում ստացավ արդեն զուտ մեխանիկորեն. քարտեզի վրա սևեռվեց մի սահմանագիծ, որն անցնում էր Սան-Ստեֆանոյի պայմանագրով հաստատված գծի և ռուսական քարտեզի վրա նախատեսված հնարավոր ծայրահեղ զիջումների գծի միջով։ Այսպիսով, նոր սահմանը վիճելի տերիտորիան կիսեց հավասար մասերի, մի հսկայական տարածք թողնելով Թուրքիային (136, հ. 59, 1933, էջ 108)։

* * *

Ինչ խոսք, ռուս-թուրքական պատերազմում ռուսական զենքի տարած հաղթանակի, բալկանյան ժողովուրդների հակաթուրքական ազգային-ազատագրական պայքարի բուռն պոռթկումների վերընթացը շղթայվեց Բեռլինի կոնգրեսի որոշումներով։

Բեռլինի կոնգրեսը կամայականորեն մոտեցավ բալկանյան ժողովուրդների բնականոն ձգտումներին։ Ազգային հարցը Բալկաններում չլուծվեց. Բոսնիայի և Հերցեգովինայի սլավոնները բաժին դարձան Ավստրո-Հունգարիային, իսկ Մակեդոնիայի սերբերն ու բուլղարները մնացին սուլթանի տիրապետության տակ։ Հունական թագավորությունում ապրում էր ամբողջ հույն ժողովրդի կեսից պակասը։

Եվրոպական տերությունների բուրժուակալվածատիրական կառավարություններն իրենց կամքն էին պարտադրում ժողովուրդներին։ Այդպիսին էին դարաշրջանի հատկանշական պայմանները, այդպիսին էր ուժերի փոխհարաբերությունը։ Բուրժուական-պրոգրեսիվ, ազգային-ազատագրական և դեմոկրատական-ազատագրական շարժումների դարաշրջանում երկարատև, հոգնատանջ, բայց և համառ կռիվների, անթիվ ու անհամար զոհերի միջոցով ժողովուրդները

թոթափում էին օտարերկրյա տիրապետողների լուծը, գրոհում միջնադարի ամրոցները, բայց արդյունքը տնօրինելուն հավակնում էին աշխարհի հզորները։ Նրանք դիվանագիտության և ռազմական ուժի միջոցով ասպարեզ էին իջնում իրենց տնտեսական ու քաղաքական շահերին համապատասխան տերիտորիաները վերաձևելու, ազգային և էթնիկական սկզբունքները ոտնահարելու միջոցով ազդեցության ոլորտներ հաստատելու, իմպերիալիստական քաղաքականություն իրականացնելու համար։

Անդրադառնալով միջազգային հարաբերություններում Բեռլինի կոնգրեսի խաղացած դերին, Ֆ. Էնգելսն իր «Ռուսական ցարիզմի արտաքին քաղաքականության մասին» հայտնի հոդվածում նշում է, որ նրա ընդունած որոշումները հսկայական տեղաշարժեր էին նշանավորում Եվրոպայի և Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում։ Ռումինիան, Սերբիան, Չեռնոգորիան անկախ դարձան, Բալկանները խլվեցին Թուրքերից և զինաթափվեցին, Բուլգարիան և Արևելյան Ռումելիան Թուրքական վասալությունից անցան Ռուսաստանի հովանու տակ, ետ վերադարձվեց 1856 թվականին կորցված Բեսարաբիան։ Ռուսաստանը նոր, կարևոր հենակետեր նվաճեց Հայաստանում։ Ավստրիան, զավթելով Բոսնիան, դարձավ Թուրքիայի բաժանման մասնակից և սերբերի միավորման ու անկախության անխուսափելի հակառակորդ։

Եթե էլզասլոթարինգիական հարցը Ֆրանսիային հրեց Ռուսաստանի գիրկը, ապա արշավը Կ. Պոլսի վրա և Բեռլինի պայմանագիրը Ավստրիային նետեցին Բիսմարկի գիրկը։ Մայրցամաքի խոշոր տերությունները բաժանվեցին երկու մեծ, մեկը մյուսին սպառնացող լագերի. Ռուսաստանը և Ֆրանսիան՝ մի կողմից, Գերմանիան և Ավստրիան՝ մյուս կողմից։ Սրանց շուրջը համախմբվում էին փոքր պետությունները։ Սա միաժամանակ ցարիզմին զրկում էր Կ. Պոլիսը նվաճելու վերջին, վճռական քայլից, որը կհասցներ համաշխարհային պատերազմի։ Այս խնդրում էական էր Անգլիայի դիրքը (1, հ. XVII, մ. II, էջ 33)։

«Թողնելով չլուծված կոնֆլիկտների կարևորագույն հանգույցները Բալկաններում՝ սերբերի վերջնական ազգային միավորումը, որոնց զգալի մասը մնաց Ավստրո-Հունգարիայի սահմաններում, մակեդոնական, կրետա-հունական, հայկական հարցերն ու Թուրքական կայսրության քրիստոնյաների ընդհանուր հարցը, և սրելով ռուս-ավստրիական ու սերբ-բուլղարական մրցակցությունը, Բեռլինի տրակտատը դարձավ ելակետային, իսկ Բալկանները՝ կոնֆլիկտների օջախ, որը էապես նպաստեց 1914—1918 թթ. առաջին համաշխարհային պատերազմի ծագմանը»,— գրում է սովետական պատմաբան Ս. Դ. Սկազկինը (122, հ. 1, էջ 232)։

Բեռլինի կոնգրեսից հետո ռուս-գերմանական հարաբերությունները թեակոխեցին սառեցման փուլը։ Բիսմարկը նախապատրաստեց և իրականացրեց ավստրո-գերմանական դաշինքը. 1879 թվականի հոկտեմբերին ստորագրվեց ավստրո-գերմանական համագործակցության պայմանագիրը։ 1882 թվականի մայիսի 20-ին այդ պայմանագրին միացավ նաև Իտալիան, որի դժգոհությունը Ֆրանսիայի կողմից Թունիսը գրավելու փաստից՝ ճկունորեն օգտագործեց Բիսմարկը։ Եռյակ դաշինքը ձևակերպված էր։

Մարքսը բազմիցս նշել է Թուրքական հարցի լուծման կապը եվրոպական պատերազմի հնարավորության հետ։ Նա գտնում էր, որ «կառավարություններն իրենց հնաձև դիվանագիտությամբ երբեք չեն լուծի այդ դժվարությունը։ Թուրքական, ինչպես և բազմաթիվ այլ խնդիրների լուծումը բաժին կընկնի եվրոպական հեղափոխությանը»,— եզրակացնում էր նա (1, հ. IX, էջ 395)։

Այսպիսով, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան ամեն կերպ խոչընդոտեցին Ռուսաստանի ակտիվ մասնակցությամբ և նրա օգտին արևմտահայության քաղաքական դրության բարելավմանը։ Վերջին դեպքում կշահեր հայ ժողովուրդը, ռուսական պետության հովանու տակ առաջին հերթին կապահովվեր նրա ֆիզիկական գոյությունը, նրա համար կստեղծվեին տնտեսական և կուլտուրական ավելի ապահով, արագ զարգացման պայմաններ։

Սակայն խնդրի նման լուծումն անհարիր էր իմպերիալիստական Արևմուտքի պլաններին, միջպետական ախոյանության շահերին։ Եվրոպական կառավարությունների համար հայկական հարցը սոսկ մի միջոց էր ուզած ժամանակ

Օսմանյան կայսրության գլխին մահակը պահելու, նրա ներքին գործերին միջամտելու համար։ Հայկական հարցը լուծելու և ոչ մի մտադրություն չունեին աշխարհի վերաբաժանման, նոր գաղութների նվաճման համար գոտեմարտի բռնված մեծ տերությունները։

Ահա թե ինչու միջիմպերիալիստական հակասությունները, մասնավորապես «ռուս-անգլիական մրցակցության հետևանքները չափազանց ցավալի եղան։ 90-ական թվականներին հայերի կոտորածները՝ զանգվածային և անհատական, դարձան թուրքական քաղաքականության սկզբունքներից մեկը» (144, 12.XII.1912)։

Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով, համապատասխանաբար նրանց 16-րդ և 61-րդ հոդվածներով սկիզբ է առնում հայկական հարցի դիվանագիտական պատմությունը։ Սրանցով սկիզբ էր դրվում հայ հասարակական-քաղաքական կյանքում եվրոպական դիվանագիտության օգնությամբ թուրքական լուծը թոթափելու, ժողովրդի միավորումն իրականացնելու, սեփական պետականություն ստեղծելու մտայնությանն ու գործելակերպին, որը շարունակվեց մինչև առաջին համաշխարհային պատերազմն ու նրա ավարտը։ 16-րդ և 61-րդ հոդվածները, նրանց հիմքի վրա կառուցված տեսություններն ու ենթադրությունները, սպասումներն ու նախագծումները տասնամյակներ շարունակ օրորելու էին հայկական ազգային ու ազգայնական կուսակցություններին, նրանց հետևից ընթացող մարդկանց թվալու էին իրագործելի, բայց մնալու էին և մնացին անօգուտ թղթի կտորներ, բացի վնասից ոչ մի լավ բան չտալով բազմաչարչար հայ ժողովրդին։

Այնուամենայնիվ, այդ պայմանագրերում արձանագրված կետերը 1878 թվականից մինչև XX դարի 20-ական թվականները հայկական ազգային շրջանների, կուսակցությունների համար դիվանագիտության օգնությամբ թուրքական ծանր բեռը թոթափելու իրական ազդակներ էին համարվում բալկանյան նախօրինակների կրկնման հնարավորության լավատեսական սպասումների շնորհիվ։

Սակայն այլ բան էին Բալկանները, XIX դարի սոցիալ-քաղաքական պայմանները, միանգամայն ուրիշ էին Արևելյան Անատոլիան, Արևմտյան Հայաստանը, XX դարի իրադրությունը և տերությունների իմպերիալիստական քաղաքականությունը։ Այլ բան էին ցանկությունը, հնարավորությունները, մեկ այլ բան՝ ռեալականությունը, ազատագրական շարժումների և եվրոպական դիվանագիտության փոխհարաբերությունը, ուժերի հարաբերակցությունը իմպերիալիզմի դարաշրջանում։

XX դարի սկզբից հայ ժողովրդի ազատագրությունն ու փրկությունը աղերսվեցին ռուսական պրոլետարիատի, նրա հեղափոխական գոռ մարտերի և հաղթանակի հետ։ Միայն սովետական իշխանությունը հայ ժողովրդին հնարավորություն տվեց ունենալու իր հայրենիքը, ընթանալու սոցիալիստական վերածնության ուղիով։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԻՑ ՀԵՏՈ

Կոնգրեսի որոշումների այնագանքները հայկական միջավայրում: Վիճաբանությունները Կ. Պոլսի ազգային ժողովում: Առաջին վերագնահատումներն ու հիասթափությունները: Գաղթը դեպի Անդրկովկաս: Սուլթան Համիդի ծրագրած հակահայկական քաղաքականությունը: Զուլումի շրջանի սկիզբը: Շարժում դեպի «երկիր»: Սեփական ուժերին կռթնելու մտայնությունը: Արևմտաեվրոպական դիվանագիտության խաղերը շարունակվում են:

Բեռլինի կոնգրեսի որոշումներն իրարամերժ տրամադրություններ հարուցեցին, նոր սպասումների ու հիասթափությունների, քննարկումների ու վերագնահատումների ալիք բարձրացրին հայկական միջավայրում: Եվրոպական դիվանագիտությունը մերժեց արևմտահայերին ինքնավարություն շնորհել, իսկ սուլթան Աբդուլ Համիդ II-ը ձեռնամուխ եղավ հայահալած լայն ծրագրի իրականացմանը:

Թեև խնդրի էությունը խորապես ըմբռնող մարդիկ կատարվածը որակեցին որպես ձախողում, բայց Կ. Պոլսի վերնախավի ազգային ջոջերը, հարցի հարուցման անմիջական մասնակիցները, սկզբում փորձեցին 61-րդ հոդվածի երաշխիքները ներկայացնել որպես մեծագույն հաջողություն, պաշտպանվելով քննադատության հարվածներից: Կ. Պոլսի հայոց մայր եկեղեցին լցված էր բազմությամբ, երբ Բեռլի-

նից ձեռնունայն վերադարձած Խրիմյանն իր տպավորություններն էր պատմում կոնգրեսի մասին: Նրա խոսքը կառուցված էր հարիսայի օրինակի վրա, տոգորված էր այն գաղափարով, որ օտարների վրա այլևս հույս չպետք է դնել, որ ժողովուրդը կազատագրվի զենքի ու իր բազուկի ուժով: Խրիմյանը շարադրեց իր հավատամքը, որ հետագայում դարձավ մի թևավոր խոսք, բազմիցս կրկնվելով գրավոր գործերում, անցնելով բերաններան: Նա պատմում էր. գնացի Եվրոպա. Բեռլինում դրված էր մի մեծ պղինձ, մեջը լիքը հարիսա. գալիս էին զանազան ազգերի պատվիրակները երկաթե շերեփներով և հարիսայից վերցնում ու գնում... բուլղարը, սերբը, ղարադաղցին (չեռնոգորցին)— բոլորն էլ վերցրին իրենց բաժինը: Երբ հերթը հասավ հայերիս, ձեռքիս աղերսաթուղթը ցույց տալով, աղաչեցի, որ ամանս հարիսա լցնեն: Այնժամ կաթսայի գլխին կանգնած մեծավորները հարցրին, թե ո՞ւր է շերեփս: Հիրավի, այստեղ հարիսա է բաժանվում, բայց շերեփ չունեցողը չի կարող նրան մոտենալ: Այսուհետև իմացիր, եթե շուտով այդ հարիսան նորից բաժանվի, այնժամ առանց շերեփի չգաս, քանի որ նորից պարապ ետ կդառնաս: Խրիմյանն ասում էր, որ բուլղարների ու չեռնոգորցիների վրա կախված սրերից «արյուն կվազեր»: «Այնժամ դարձրի երեսս և իբր թե կփնտրեի իմ «զեյթունցի, սասունցի և մշեցի քաջերս»,... որպեսզի «նոցա արյունոտ թուրերը եվրոպացոց աչքը խոթելով բարձրաձայն աղաղակեի, թե՝ տեսեք, ահա, հոս է շերեփը: Բայց չկար...Մի աղերսաթուղթ ունեի ձեռքիս, ան ալ թրջվեց ու հարիսայի մեջ մնաց, ուստի եկած եմ այսպես դատարկաձեռն... ահ, շերեփները. ատոր մասին մտածեցեք» (8, № 7, 1886):

Բեռլինի կոնգրեսից անմիջապես հետո Ներսես Վարժապետյանն ասում էր. «Կրնայինք ըսել թե Եվրոպիո զգացումն մեր կողմն էր. զգացո՞ւմ ավաղ, առաջուց գիտեի, թե այս դարուս մեջ շահը միայն կխոսի և մանավանդ շահը միայն պիտի խոսի այն ծերացյալ ու գործոց մեջ կարծրացյալ քաղաքագիտաց ակումբին մեջ, որ պիտի գումարեր ի Բեռլին» (10, նիստ Ե, 21.VII.1878, էջ 65): Անգլիասեր քաղաքականությանը տուրք տված Հովհաննես Մկրյանն արդեն 1878 թվականի հուլիսի 18-ին իր մի նամակում խոստովանել էր,

որ «Բիքոնսֆիլդի հրեամիտ քաղաքականության և Լայարդի թրքամոլության զոհ գնաց հայոց խնդիրը»։ Նա գրում էր այն մասին, թե Անգլիան կառչում էր Թուրքիայից, որպեսզի «առավել ևս ինք հաստատություն գտնե Հայաստանի մեջ» (56, էջ 115)։

Կ. Պոլսի վերնախավի մտայնության մեջ ձևավորվեց երկու ծայրահեղ տեսակետ։ Մի մասն այն կարծիքին էր, թե պատրիարքը և իր համախոհները «դիտմամբ այս ձևը տվին հայոց խնդրին՝ որպեսզի չհաջողի կամ անկատար մնա. ասել կուզեն թե դավաճանություն գործված է»։ Մյուս մասը, ընդհակառակն, հարցականի տակ էր դնում խնդրի արծարծման անհրաժեշտությունը, պնդելով, թե դա «հայոց ազգին խընդիրը չէ, այլ պատրիարքն հնարած է զայն. ազգն իր վիճակն գոհ է, պատրիարքն է վեր ի վայր հուզողը զայն» (10, նիստ Ե, 21.VII.1878, էջ 68)։

Այս տեսակետները բախվեցին ազգային ընդհանուր ժողովի նիստերում, որտեղ ամիսներ շարունակ չէին դադարում վեճերը և քննարկումները։ Ատենագրություններից իրազեկ ենք դառնում, որ հայոց ընդհանուր ժողովը միաձայն մերժեց այն մեղադրանքը, թե Ներսես պատրիարքն էր առաջ քաշել հայկական խնդիրը, առանց ազգի գիտության ու ցանկության (10, նիստ Ե, 21.VIII.1878, էջ 74)։ Ժողովը որոշեց ընտրել մի նախաքննիչ հանձնաժողով, որը համապատասխան ուսումնասիրություններից հետո պետք է տար իր եզրակացությունը հայկական խնդրի հետ կատարվածի մասին։ Օգոստոսի 4-ի նիստն անցավ աղմուկ-աղաղակի պայմաններում։

Վեց հոգուց բաղկացած մի հանձնաժողով ընտրվեց, որի մեջ ընդգրկվեցին երեք հոգևորական և երեք աշխարհական, որոնք պետք է պարզություն մտցնեին վիճելի հարցերում։ Հանձնաժողովը, ծանոթանալով Ներսես պատրիարքի բոլոր թղթերին ու գրություններին՝ կապված հայկական հարցի հարուցման հետ, գտավ, որ նրա գործողությունները «արժանի են վստահության և շնորհակալության» (10, նիստ Թ, 22.IX.1878, էջ 133)։

Երեսփոխան Քափամաճյանը, խոսք վերցնելով, ընդգծում էր, որ կոնգրեսը չի ընդառաջել «ազգի խնդրածին» և

«սուլթանի գերիշխանության և եվրոպական տերությանց հսկողությանը ներքև Հայաստանի համար ինքնօրինություն» չի շնորհել։ Նա առաջարկեց «դժգոհություն հայտնել կոնգրեսի որոշման դեմ», որպեսզի չկարծվի, թե հայ ազգն անտարբեր է իր շահին (10, նիստ Ե, 21.VII.1878, էջ 69)։

Ամբրոսիոս վարդապետը պահանջում էր պարզաբանել, թե Էջմիածնի վեհափառ կաթողիկոսն ինչ պատասխան էր տվել նրան հղված դիմումին։

Երեսփոխան Պեկեյանը գտնում էր, որ «սա անպիտան գրություններով մեր վիճակը կեղծեցինք՝ խաբեցինք» կոնգրեսին։ Նա ասում էր, թե «մենք մեր հիվանդությունը կեղծեցինք. ուստի տրված դեղն ալ կեղծ էր»։ Նա գտնում էր, որ «մեր պատրիարքը խաբված է. խաբված են նաև անոր գործակից եպիսկոպոսունք» (10, նիստ Ե, 21.VII.1878, էջ 70)։ Պեկեյանի հարցադրումների շուրջ կրքերը բորբոքվեցին։

Այդ նիստերում Պեկեյանն ապացուցում էր, որ կոնգրեսը ոչ թե քննարկեց հայկական հարցը, այլ վերանայեց Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը որոշ տերությունների «շահին համաձայն», «առանց նկատողության առնելու հայոց ամենադառն վիճակը»։ Նա եզրակացնում էր. «ցավալի է, որ խմբագրյալ այդ 61-րդ հոդվածը հեռի է ազգին ազետիցը գործնական և անմիջական ազատ դարման ըլլալ, մինչդեռ 16-րդ հոդվածը զուրկ չէր այդ հանգամանքներեն» (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 177)։ Նա փորձում էր ապացուցել, որ հայոց հարցն անկեղծորեն, որոշակիորեն չէր դրվել տերությունների դիվանագետների ֆորումի առջև։ Նա Ներսեսին մեղադրում էր այն բանում, որ նա խաղալիք էր դարձել Բ. Դուան ձեռքում, «կոնգրեսին բնավ կամք չներկայացուց պաշտոնապես»։ Պեկեյան էֆենդու քննադատությունը հանգում էր երեք կետի. ա) նրա կարծիքով, ազգի կամքը օրինավոր և հանդիսավոր կերպով չէր հայտնվել Եվրոպային. բ) «տարբեր կամք էր» հայտնվել Եվրոպային, իսկ կոնգրեսին «բնավ կամք չներկայացրին պաշտոնապես». գ) քաղաքական սխալներ գործեցին, մերթ այս և մերթ այն քաղաքականության հետևելով, որով ներկային մեջ մեկմեկու հետ մրցող երկու հզոր քաղաքականության ալ վստա-

հութիւնն ու համակրութիւնը կորսնցուցին» (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 159)։

Պեկեյանը, հիշեցնելով 1876 թվականի դեկտեմբերի 10-ին պատրիարքին տրված հանձնարարականը, նշում էր, որ այն խաղաղ ճանապարհով Արևելյան հարցը լուծելու ուղղությամբ տերությունների ներկայացուցիչների դումարած դեսպանաժողովին էր արված, այլ պայմաններում։ Մինչդեռ ռուս-թուրքական պատերազմից հետո միանգամայն այլ իրադրություն էր և անհրաժեշտ էր, որ ազգային ժողովը նոր հանձնարարական արտոներ Ներսես պատրիարքին։ Նրա ասելով, վերջինս խուսափել էր ժողովի միջոցով գործել։ Նա անօրինական էր համարում, որ պատրիարքը խուսափել էր 1878 թվականի հունվարից մինչև հունիսի 14-ը՝ Բեռլինի կոնգրեսի բացման հաջորդ օրը, նիստեր գումարել, կոթնելով տարբեր պատճառաբանությունների (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 161—166)։

Այս երեսփոխանը հիշեցնում էր, որ Օսմանյան կայսրության ուրիշ ազգեր «զենք առնելով և ապստամբելով» իրենց ցավերն ու հանրական կամքը Եվրոպային հայտնեցին։ Իսկ «մեր ազգն՝ որ ոչ զենք առավ և ոչ ալ կուզե երբեք զենք առնել, պետք է որ օրինավոր և հանդիսավոր կերպով իր ցավերը իմացներ և իր իսկական կամքը հայտներ կոնգրեսին»։ Նա գտնում էր, որ ազգի կամքը պետք է հաստատվեր և վավերացվեր ազգային երեսփոխանական ժողովի կողմից և պաշտոնապես հանձնվեր Բեռլին մեկնող Կարաթեոդորի փաշային (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 168—169)։

Ներսես պատրիարքը փորձում էր ապացուցել, որ քննադատողները խղճմտանքից կդողան, եթե իմանան, «թե ինչ սուրբ հայրենասիրությամբ վառված էին» գործ անողները «առանց որևէ փառքի կամ համբավո ակնկալության», որ նրանք գերադասեցին «զոհել իրենց շահն ու անձը, քան թե նշանախեց մը զոհել ազգային ծրագրեն»։ Նա ցույց էր տալիս, որ ազգային դատին լծված մարդիկ գործում էին «արհամարհելով դժվարություններն ու վտանգները»։ Նա հերքում էր ոմանց այն մեղադրանքը, թե հայկական հարցը հնարել էր ինքը՝ պատրիարքը, թե իբր «ազգը չուներ մասնակցություն» (10, նիստ Ե, 21.VII.1878, էջ 66—67)։

Ներսես պատրիարքը պարզում էր իր ծրագիրը, ասելով, թե նա «Հայաստանի մեջ հայոց վարչության» խնդիր էր դրել։ Դիմելով երեսփոխաններին, նա ասում էր. «ըսեք, ազգին խնդիրը չէ՞ այն, որ ներկայացուցի»։ Նա ցույց էր տալիս, որ նույն երեսփոխաններն իրեն չէին ների, եթե ինքը ձեռքերը ծալած նստեր այն պահին, երբ Եվրոպան զբաղվում էր Թուրքիայով, Արևելյան խնդրի քննարկմամբ։ Նրա կարծիքով, դա պետք է արվեր «գեթ անոր համար, որ Եվրոպա գիտնա թե հայ ազգ մ՚ալ կա Արևելքի մեջ»։ Նա հարց էր տալիս. «Ըսեք. պիտի ներեի՞ն և պիտի ներեի՞ք, եթե խոչ և խութ առ ոտն հարկանելով մինչև Եվրոպա չհասցուցեինք Ազգին աղաղակը»։ Այդպես չվարվելը նա գնահատեց ազգուրացություն (10, նիստ Ե, 21.VII.1878, էջ 67)։ Նրա կարծիքով, չկար և ոչ մի կորուստ։ Ընդհակառակն, դրական էր համարում, որ «Հայոց ազգին անունն անցավ հանդիսավոր դաշնադրության մեջ», «հարստահարութենե ազատեցան հայերը» (?), «Եվրոպայի ժողովուրդներն ու տերությունները» ճանաչեցին և սիրեցին հայ ազգին, դրվեց հայոց ապագայի հիմքը։ Ընդգծելով, որ «մեր խնդիրն անմիջապես և կատարելապես չէ իրականացած», նա հիշեցրեց, թե այդ մասին բողոքել էր Բեռլինի լիազորներին։ «Բողոքը տկարին իրավունքն է»,— ասում էր նա, և միշտ չէ, որ հաջողությամբ է պսակվում։ «Այսպիսի գործեր ոչ մեկ օրվան մեջ, ոչ մեկ մարդու ձեռքով կրնան կատարվիլ։ Պատրաստվինք մեր ապագային»։ Նա առաջ էր քաշում նոր թեզ. «Նախ չկենանք հոս, Հայաստան երթանք, Հայաստան ղրկենք ինչ որ ունինք ազգին մեջ բանիբուն, տաղանդավոր, ազգասեր, ուսումնասեր եկեղեցականներ, Հայաստան երթան մեր դաստիարակներ, ուսուցիչներ, մեր այնքան վառվռուն երիտասարդներ, Հայաստան երթան մեր արվեստագետներ, վաճառականներ, Հայաստան երթան մեր այնքան դժբախտ պանդուխտներ։ ...Ոչ ևս աշխատության խափանում,— ասում էր նա.— ուղիներ պիտի բացվին, ջրանցքներ պիտի շինվին, գործարաններ պիտի կառուցվին... Հնդկաստանեն, Անգլիայեն, Թուրքիայեն, Ռուսիայեն, Ավստրիայեն ու մինչև Պարսկաստանեն միանան, ձեռք ձեռքի տան բոլոր հայերը» (10, նիստ Ե, 21.VII.1878, էջ 68)։

Նա չէր անտեսում, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը Բեռլինում վերանայվեց և 61-րդի փոխվեց անգլո-թուրքական համաձայնագրի կնքման հետևանքով (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 187)։ Բեռլինի կոնգրեսից հետո պարզ դարձավ, որ «ամեն ծրագիր, որ կհակասեր ռուսական քաղաքական ձգտումներուն, դատապարտված էր վիժել իր ծնունդի խանձարուրքին մեջ» (56, էջ 109)։

Ներսես Վարժապետյանը 1878 թվականի հուլիսի 5(17)-ին Լոնդոն՝ Գ. Փափազյանին հղած իր նամակում փորձում էր վերլուծել հայ դիվանագիտության անդրանիկ առաքելության ձախողման պատճառները։ Նա նշում էր Լայարդի թրքամոլությունը և նրա տեղեկագրերի սխալ տեղեկություններն անգլիական կառավարությանը, որը «տաճկաց հաճո ըլլալու ձգտեցավ», նրանց հետ գաղտնի «դաշնադրություն եղավ» (56, էջ 110)։

Սեպտեմբերի 22-ին երկար-բարակ վիճաբանություններից, փոխադարձ վիրավորանքներից հետո ժողովը որոշեց պահանջել Պեկեյան էֆենդուց իր հիշատակած թղթերը ներկայացնել հանձնաժողովի քննությանը։ Հոկտեմբերի 6-ին Ներսես պատրիարքը, իր հրաժարական տալու մտադրությունը պարզելով, ժողովում ասում էր. «Ես չեմ կրնար հանդուրժել, որ ազգին համար մահն աչքս առնելով չարաչար աշխատելես եւ կասկածավոր և դավաճան նկատվիմ ազգին առջև...»։ Արդեն «զի անկարելի է ինձ այս վիճակին մեջ այլևս շարունակել» (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 157)։ Պատասխանելով իր ընդդիմախոսներին, նա ասում էր. «Դուք կարծում եք, որ մենք Խորեն Նար-Պեյին հրահանգ տվինք՝ թե գնա Ռուսիայի գիրկը նետվի և Խրիմյան սրբազանին՝ թե գնա Անգլիայի գիրկը նետվի. դա քաղաքականություն չէր լինի, այլ հիմարություն։ Մենք ոչ ոմու գիրկը նետվելու, ոչ մեկին անձնատուր լինելու, ոչ ոմու մասնավոր շահին գործիք լինելու քաղաքականություն չենք ունեցել, այլ միայն մեր ազգային շահերի գործիքն ենք եղել, այն պահպանել ենք ջանացել. և Ռուսաստանի և Անգլիայի նակընդեմ քաղաքականության մեջ չեզոք մնալով, այնտեղից մեր ազգային քաղաքականության օգուտ հանել նկրտած ենք»։ Միաժամանակ շեշտում էր, որ «ոչ Անգլիայի քաղաքականությունը կարող

էինք փոխել, ոչ Ռուսաստանինը»։ Սրանով նա պատասխանում էր իրեն երկդիմության մեջ մեղադրողներին, որոնք ապացուցում էին, թե «մերթ այս, մերթ այն քաղաքականության հետևելով» միմյանց հետ մրցող «երկու հզոր քաղաքականության վստահությունն ու համակրությունը կորցրին» (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 181—185)։

Միաժամանակ պատրիարքի հաշվետու զեկուցագրում նշված էր, որ անգլո-թուրքական համաձայնագիրը «արգելք եղավ», որ հայ ազգի խնդիրն ամբողջությամբ նկատողության առնվեր և եթե այն չլիներ, ապա «տերություններ իրենք այդ ծրագիրը պիտի որոշեին» (10, նիստ Ե, 21.VII.1878, էջ 66)։ Ներսես պատրիարքը վերապահությամբ էր արտահայտվում 61-րդ հոդվածի մասին. եթե այս հոդվածը մի ցավալի բան ունի, այն է, որ մեր խնդրի լուծումը հետաձգում է, չի կործանում ազգի հույսերը, բայց և չի պսակում անմիջապես։ Նա արդարանում էր՝ պատասխանելով այն հարցին, թե «ինչո՞ւ սկսեցինք, եթե պիտի չհաջողեինք». «երբևիցե հաջողելու համար,— ասում էր նա,— այս օրեն սկսելու էր» (10, նիստ Ե, 21.VII.1878, էջ 66)։

Թեև նա գալիս էր այն եզրակացության, որ կոնգրեսից հետո և նրա ազդեցության տակ «սկսան ամենքը մտածել, թե արդյոք Ռուսիո պետք չէ՞ դարձնել մեր աչքն ու հույսը։ Մինչև հիմա Թուրքիո մեջ որ ազգ որ հառաջացավ, զատ մարմին կազմեց, և մինչև անկախության ելավ, բոլորը Ռուսիո պաշտպանության շնորհիվ եղավ...»։

Ներսես պատրիարքը Պեկեյանին անվանեց «դեռ շատ խակ կոնգրեսի ոգին ըմբռնելու և գործառնություններին խելամուտ լինելու» (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 181)։ «Տեսարք երեսփոխանք, այս առաջին անգամ հայոց ազգը պատգամավորություն մը ղրկեց Եվրոպա։ Կրոնական ազգի մը քաղաքական այս անդրանիկ շարժումը ունեցավ յուր մեծ նշանակությունը քաղաքական աշխարհի առջև։ Ձեր պատգամավորք ներկայացան իբրև կարևոր ազգի մը դեսպաններ»,— ասում էր Նար-Պեյը ազգային ժողովում։ Նրա կարծիքով, «միով բանիվ եվրոպական դիվանագիտությունը լուրջ ընդունելություն մը ըրավ հայոց պատգամավորներուն։ Ասիկա անձնական պատիվ չէր նոցա, այլ պատիվ էր այն ազգին, որ

գիտցավ ժամանակին հանգամանքներեն օգտվիլ, և Եվրոպիո ներկայացունել յուր պետքերը, տենչը, իրավունքը» (57, 1878, № 211)։

Խորեն Նար-Պեյը, 1878 թվականի նոյեմբերի 10-ին ազգային ժողովի նիստում վերապատմելով իր և մյուսների առաքելությունների մասին, ասում էր, որ «հայոց պատգամավորությունը չէր կարող դեպքերը հեղաշրջել, չէր կարող փոփոխել իրերի հանգամանքները, ինչպես չկարողացան փոփոխել նույնիսկ զորավոր պետությունների դեսպանները և դիվանագետները այդ Արեոպագոսի մեջ»։ Նա հաջողություն էր համարում, որ առաջին անգամ հայի անունը կրոնականից հեռանալով քաղաքական կերպարանք էր ընդունում, որ հայկական հարցը դառնում էր միջազգային խնդիր, մտնում միջազգային պայմանագրի մեջ։ «Անպատրաստ ազգը դեռ առաջին քայլերն էր արել,— ասում էր նա,— և ինչ որ կարելի էր այն շահեց»։ Նրա կարծիքով, հայերը տունկ ձեռք բերին, իսկ բնության օրենքով անհնարին է «այսօր սերմանել և այսօր բաղձալի հունձքը վայելել»։ Նա կոչ էր անում փայփայել, մշակել այդ տունկը, որպեսզի այն բերք տար, այլապես «կխամրի, կչորանա անհոգ և տգետ մշակի ձեռքում»։ «Ազգն իր ձեռքով է դարբնում իր ճակատագիրը»,— ասում էր նա, կոչ անելով «այս դժբախտ ազգի հույսերը ի դերև չհանենք»։ «Քրեական հանցանք է այսուհետև չգործելը»,— ասում էր նա (10, նիստ ԺԲ, 10.XI.1878, էջ 214—216)։

Վեճերն ու քննարկումները, վերագնահատումներն ու փոխադարձ ամբաստանությունները չպարփակվեցին ազգային ընդհանուր ժողովի նիստերում։ Դրանք դուրս բերվեցին մամուլի էջերը։ Սկզբում 61-րդ հոդվածի ոգևորությունն այնքան մեծ էր, որ Կ. Պոլսի բոլոր թաղերում հայ հացթուխը, կոշկակարն ու դերձակը, բախալն ու համալը բորբոքված էին այն հույսով, թե շատ շուտով վեց վիլայեթները պիտի Եվրոպան անջատեր օսմանյան տերությունից, ինքնավարություն շնորհեր, ուստի գրել, կարդալ ու ֆրանսերեն էին սովորում, որ դիպլոմատիկական տեղ գրավեն երկրի նոր պաշտոնեության շրջանում։ Նույնիսկ «հարյուր տարի, երկու դար առաջ որևէ անցագրով Լևանտեն դարձածները և նրանց սերունդները վերադառնում էին «ազգի ծոցը», հայերեն էին սովորում, որ Հայաստանում կարողանան դեղատուն բանալ կամ պլանտացիա, ֆաբրիկա հիմնել և իրենց սերնդին ապագա պատրաստել» (11, էջ 8)։ «Մասիս»-ը գրում էր, որ «Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածը միայն մեկ օգուտ մ'ունի, որ առաջին անգամ ուղղակի հարաբերություն կհաստատե հայոց և Եվրոպիո միջև» (53, 1878, № 2171)։

Որոշակի էր գրգռվածությունը «էֆենդիներու դասակարգին դեմ»։ Ինչպես Բեռլինի կոնգրեսից հետո, այնպես և տարիներ անց շատերը փորձում էին անհաջողության արմատները գտնել պատվիրակության անդամների, նրանց գործողությունների մեջ, սուբյեկտիվ հաշիվներ մաքրելով՝ նրանց վերագրել դավաճանություն, սխալականություն և այլն, միաժամանակ անտեսելով օբյեկտիվ ռեալականությունը, պայմանները, մեծ տերությունների քաղաքականության որոշիչ դերը։ Քավության նոխազ էին դարձել Ներսես պատրիարքը և նրա աշխարհական ու կղերական գործակիցները։ Քննադատների կարծիքով, հայոց ռեֆորմների և ինքնավարության ծրագրերը վիժել էին, քանի որ Ներսեսը, Խրիմյանը իրենց անիսոհեմ քայլերով գրգռել էին կառավարությանը, գործել էին ինքնագլուխ, անփորձ դիվանագետներ էին եղել և հայկական հարցն անշնորհք ձևով էին ներկայացրել Եվրոպային։

Այն ժամանակ Կ. Պոլսի հայ բնակչությունը հասնում էր 150 հազարի։ Կոնգրեսի որոշումների մասին տեղեկանալով, հազարավոր հայեր հավաքվեցին եկեղեցիներում, բողոքեցին ինքնավարությունը մերժելու դեմ։ Հայոց վերնախավի ղեկավարներն անհանգստանում էին, որ հայերի մեջ դժգոհությունը մեծ չափեր կընդուներ և վտանգավոր շարժման կվերածվեր (57, 1878, № 115)։ Սա էր պատճառը, որ հասարակական կարծիքը հանգստացնելու նպատակով Ներսես պատրիարքը հանձնարարեց Մինաս Չերազին՝ լավատեսական դիրքերից ամփոփել ու հրատարակել Բեռլինի կոնգրեսում հայոց հարցին վերաբերող նյութերը (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 187)։ Սա արվում էր ընդդիմախոսներին ցույց տալու համար, որ որդեգրված ուղղությունը, կատարված քայլերը միանգամայն ճիշտ էին, որ ավելին հնարավոր չէր անել, իսկ

ստացածն, իբր, չափազանց շոշափելի և դրական բան էր։

Դատելով Չերազի ձևակերպումներով ու դատողություններով, տեսնում ենք, որ դա մի փորձ էր պատասխան տալու հակասական իրավիճակից ծագած տրամադրություններին։ Նրա կարծիքով, 16-րդ հոդվածն ապահովություն էր խոստանում միայն ռուսական զորքի կողմից գրավված Հայաստանի մի մասին, հատկապես Կարինին, Իսկ Բեռլինի հոդվածով, գրում էր Չերազը, «Բարձրագույն Դուռը հանձն առավ պաշտպանել հայերն ամենուրեք, ամեն հայաբնակ նահանգի մեջ, ամբողջ Հայաստանի մեջ։ Նա հարկադրվեցավ խոստանալ ոչ միայն ոստիկանական կարգադրություն, այլ ամենայն բարենորոգումներ. նա հարկադրվեցավ պատասխանատվություն ստանձնել ոչ Կարինի ներկային համար միայն, այլ Հայաստանի ներկային և ապագային համար», — բացականչում էր հրճվանքով Մինաս Չերազը (64, էջ 47—48)։

Մինաս Չերազը գրում էր. «ուրախ եմ, որ ազգս ոչ միայն վնաս չկրեց, այլ մեծապես շահեցավ Բեռլինի վեհաժողովեն, որ մենք շատ ավելի շահեցանք Բեռլինի, քան Սան-Ստեֆանոյի մեջ, և անհնար էր ավելի շահել լեզվով ու գրիչով» (64, էջ 8, 17)։

Մինաս Չերազը, մեծարելով Ներսես Վարժապետյանին, իր գրքույկում գրում էր, որ նա հայությունը կրոնական ժողովրդից վերածեց «քաղաքական ազգի», նրա դատը «անվնաս պաշտպանելով» «եվրոպական աշխարհին առջև»։ Այո՛, Չերազը ոգևորված էր. նա հարց էր դնում. «պետք է միաբան աշխատիլ հայ հայրենիքին մեջ, օսմանյան ոստանին մեջ, եվրոպական աշխարհին մեջ, մեր իրավունքը պահանջերով այն ազգերից, որոնք հայկական խնդիրը ճանաչեցին պաշտոնապես և դարերից ի վեր մոռացված հայ անունն անմահացրին մի հանդիսավոր դաշնագրի մեջ»։ Նրա կարծիքով, Բեռլինի կոնգրեսի որոշումներից «մի ոսկե հանք շահեցինք. մեզ հարկ է խիզախել և հանել ոսկին» (64, էջ 27—29)։

«Թե ինչ շահեցինք Բեռլինի վեհաժողովեն» գրքույկը քննադատվեց «Մշակ»-ի էջերում։ Տպագրված գրախոսականում ասված էր. «Պատգամավորները վերադարձան, բայց դժբախտաբար ոչ նրանք և ոչ պատրիարքը չդիմեցին ազգին և չհայտնեցին նրան ի պաշտոնե թե ի՞նչ գործեցին, ի՞նչ կերպով վարեցին և պաշտպանեցին ազգային դատը, այնպես որ ամբողջ ազգը մինչև այսօր ևս միայն մասնավոր և արտաքին լուրերի միջոցով տեղեկություններ ստացավ այդ գործի մասին» (57, № 209, 1878)։

Հետագա տասնամյակներին Մ. Չերազը գրեց ու տպագրեց իրարամերժ կարծիքներ, հերքեց ու վերանայեց իր տեսակետները։ Բնորոշ է, որ դարի վերջերին նա իր կրծքին շարունակում էր կրել թուրքական մի երկրորդական մեդալ, որ վաղուց ժանգոտել էր (47, 1939, № 2(206), էջ 116)։ Իսկ 1878 թվականի և հետագա տարիների ընթացքում կատարվածի շուրջ դատողությունները չէին դադարում։ Կ. Պոլսում Բ. Դռանը գեմ-հանդիման մնացած ազգային ջոջերը, անհանգստացած առաջիկա բարդացումներից, հեշտությամբ վերանայում էին իրենց երեկվա դիմորոշումը, ընկնում ծայրահեղությունների մեջ։ Նրանք հրապարակավ մի բան էին ասում, իսկ իրականում այլ բան մտածում։ «Բեռլին տեսած ըլլալեն» բացի ուրիշ օգուտ չունեցանք, իր հուշատետրում դասնացած արձանագրում էր Ստեփան Փափազյանը (7, 1907, № 6—9, էջ 150)։

Կարճ ժամանակ անց, Գր. Օտյանը խոստովանում էր. «Հաջողեցանք 61-րդ հոդված մը դնել Բեռլինի դաշնագրի մեջ, իցիվ թե հաջողեինք ջնջել զայն» (82, էջ ԺԵ)։ Գր. Օտյանը Փարիզում հայտարարել էր, թե 61-րդ հոդվածը «վնասակար է հայկական հարցի համար», իսկ Սերվիչենը «արցունքոտ աչքերով խոստովանել էր, թե սխալվել էին, բայց միամտությամբ և խաբված» (81, էջ 216)։ Ինչ խոսք, այս խոստովանություններում ազգային ջոջերին առաջին հերթին անհանգստացնում էր թուրքական կառավարողների հետ հարաբերությունները չփչացնելու մտահոգությունը, քան հարցի հետագա ընթացքը։ Հակասականը, հարափոփոխ գնահատականները սովորական բան էին նրանց գրվածքների համար։ Իսկ վերջերս Բեյրութում հրապարակած իր գրքում Կ. Իզմիրլյանն առանց այլևայլության գրում է, թե «Բեռլինի 61-րդ հոդվածը հայ քաղաքական կյանքի մեջ մի նոր դարագլուխ բացեց» (29, էջ 109)։

Իրականում «փոքրիկ, սահմանափակ բարիքների փոխարեն, որոնք սպասվում էին Բեռլինի դաշնագրի համարյա անփոփոխորեն նետված 61-րդ հոդվածից, նա, այդ հոդվածը, առաջ բերեց հայ ժողովրդի համար անսպասելի տառապանքներ, որոնք թերևս գերազանցեցին անցած դարերի թշվառությունները...» (84)։

Հակոբ Պարոնյանը Բեռլինի կոնգրեսի որոշումները գովաբանողներին նկատի ուներ, երբ հեգնանքով գրում էր. «Թեպետ և չգիտցվեցավ թե ինչու չկրցին ավագաժողովին ներկայանալ, սակայն շատերը պնդեցին այն ատեն, թե ազգը մեծ օգուտ քաղեց անոնց ուղևորութենեն, թե ձայն հանելու չէ, այդ օգուտին ինչ ըլլալը վերջեն պիտի հասկցվի։ Եթե այս օգուտներուն երևակայականն մեկդի նետելով իրականին դառնանք՝ սա օգուտը կգտնենք, որ առաջ գավառներու մեջ եթե տարին հարյուր հոգի կսպանվեին, այսօր հազար կըսպանվին և այս ալ մեծ օգուտ է անշուշտ անոնց, որք բազմութենեն չեն ախորժիր» (68, հ. III, էջ 19)։

Ներսես պատրիարքին քննադատում էին այն բանի համար, որ նա ոչ միայն ապստամբության չհորդորեց արյունաքամ ժողովուրդը, այլ, ընդհակառակն, իր կոնդակներով շարունակ հորդորեց բացարձակ հավատարմություն հանդեպ Թուրքիայի գահին» (74, էջ 46)։ Նրան քննադատում էին այն բանի համար, որ տերությունների դիմելով, նա խափանեց 16-րդ հոդվածով նախատեսված բարենորոգումների իրագործումը, որ ռուսական կողմը միանգամայն օգտակար դիրքերից պայմանավորում էր իր զորքի ներկայությամբ» (194)։

Քննադատողների ձայնը մնաց անլսելի։ Հոկտեմբերի 6-ին մի հատուկ բանաձևով ազգային ընդհանուր ժողովը «խորին և անմոռաց շնորհակալություն հայտնեց Ներսես ազգասեր պատրիարքին, հայկական խնդրին՝ սկզբից ի վեր իր մատուցած անշահասեր և անձանձիր ծառայությունների համար»։ Իսկ Պեկեյանի քննադատությունը որակվեց որպես «անտեղի և առ ոչինչ» (10, նիստ Ժ, 6.X.1878, էջ 188), իսկ ապա պաշտոնապես պարսավանքի ենթարկվեց ազգային ժողովում։ Փոխադարձ ամբաստանություններն ու վիրավորանքները շարունակվեցին ամիսներ շարունակ (10, նիստ ԺԱ, 27.X.1878, էջ 199, նիստ ԺԳ, 24.XI.1878, էջ 240—244)։

Տարիներ անց, Արշ. Զոպանյանը ապացուցում էր, որ ամեն գնով հարկավոր էր ընդդիմանալ եվրոպական դիվանագիտության խաբկանքներին և կառչել ռուսական պետականության հովանավորությունից։ Սրա մեջ էր նա տեսնում հաջողության միակ զրավականը։ Նրա կարծիքով, Ներսեսը «փախցուցած էր թանկագին առիթ մը»։ «Թուրքը, տեսնելով Ներսեսին Ռուսիո բանակը երթալը, և հետո՝ Բեռլինի վեհաժողովին մեջ հայ ազգին համար անկախություն խնդրելու հանդգնելը իմանալով, որոշեց վերջնական միջոցներ ձեռնարկել՝ հայը ջախջախելու համար»։ «Անգլիան հեռվից դիտեց այս դժոխային խաղը, պղատոնական համակրություն մը միայն ցուցնելով հայերուն, որ մերինները այնչափ աղհատալի կերպով սխալ ըմբռնեցին»։ Նա այն կարծիքին էր, որ Ռուսաստանի ձեռքից հայոց դատը չպետք է հանձնվեր 6 տերությունների դատին (7, № 3, 1899, էջ 92, 93, 144)։

Կոնգրեսից անմիջապես հետո նրա որոշումների նկատմամբ ավելի որոշակի քննադատական դիրք բռնեցին Անդրկովկասում, թեև այստեղ նույնպես հակասական կարծիքներ արտահայտվեցին։

Արդեն 1878 թվականի հուլիսին Գրիգոր Արծրունին գրում էր. «այժմ պարզ երևում է, որ Ռուսաստանի շահերը պահանջում էին քաղաքական կյանք տալ Հայաստանին, իսկ Անգլիայի շահերը պահանջում էին խեղդել հայոց ազգի մեջ ձգտում դեպի քաղաքական կյանքը»։ «Հայերն Անգլիայի անսիրտ վաճառականական քաղաքականության զոհ դարձան»,— եզրակացնում էր նա (57, № 116, 1878)։

«Բեռլինի ավագաժողովը վերջացավ. արևելյան խնդրին տրվեցավ վճիռ։ Հայաստանի վերաբերմամբ մեր ունեցած ակնկալություններն ի դերև ելան։ Հայերին համարյա ոչինչ չտվին»,— «Մշակ»-ում տպագրված «Հայոց խնդիրը» հոդվածում, կոնգրեսից հետո, գրում էր Քալանթարը։ «Հայերը հույս ունեին ստանալ ինքնավարություն», «մտավոր ու տնտեսական կյանքի բարվոքման գործի մեջ անկախություն», «ազգային իրավունքների պաշտպանության համար սեփական զինվորական ուժ» և այլն։ «Եվրոպական ավագաժողովը մի հոդվածով այդ բոլորը քանդեց և տվավ նրա փոխարեն իր հնարած նոր դրություն»։ Անդրադառնալով 61-րդ հոդվածի

նշանակությանը, հոդվածագիրը գրում էր. «Մի՞թե այդ հոդվածն այն հազարավոր անհամ և անհյութ խոստումներից մեկը չպետք է համարել, որ այնքան առատ թափվել են հայի առաջ ամեն կողմից, երբ միևնույն Թուրքիան այժմ բացարձակ ասում է, որ Եվրոպական Թուրքիան նրա անցյալն էր, իսկ Փոքր Ասիան նրա ներկան է և ապագան պետք է լինի» (57, 1878, № 122)։

Իսկ Գրիգոր Արծրունու եղբայր Ա. Արծրունին օդոստոսի սկզբին գրում էր Բեռլինից, որ հայերը «պետք է գոհ լինեն իրենց պատգամավորներից, որոնց հաջողվեց առաջին քայլն անել Հայաստանի և Եվրոպայի միջև հարաբերություններ կապելու համար»։ Պատվիրակներն իրենց պարտականությունը կատարեցին «խղճմտաբար», նրանք պահանջեցին ավելի ընդարձակ իրավունքներ իրենց հայրենիքի համար, իսկ եթե չստացան, իրենք մեղավոր չեն, այլ կոնգրեսի գործերի ընթացքը և չնախագուշակած իրողությունները» (57, 1878, № 133)։ Նա այն կարծիքն էր հայտնում, որ Հայաստանի հարցը «բարդացավ անգլո-թուրք դաշնագրից հետո» (57, 1878, № 127)։

Ոմանք կոնգրեսի որոշածը «շատ և շատ մեծ բան» էին համարում։ Սրանք նշում էին, որ դարերով ստրկության և բռնակալության տակ հեծած անդեն, անուժ ազգը, տգիտության շղթաները չթոթափած ժողովուրդը պետք է բավարարվեր ձեռք բերածով և պատրաստվեր ազատություն և անկախություն նվաճելու համար։ Նորից հիշատակվում էին բուլղարները, որոնք վերջին պատերազմից 50 տարի առաջ էին ոտքի ելել, կրթել և պատրաստել էին երիտասարդ մարտիկների մի քանի սերունդ և իրենց ուսերի վրա տարան ազատագրության փառավոր գործը։

1878 թվականի սեպտեմբերին Բաֆֆին քննարկում էր 61-րդ հոդվածին համապատասխան Արևմտյան Հայաստանում իրականացվելիք բարենորոգումների խնդիրը։ Նա գրում էր, որ ա) երկրագործը, գյուղացին սեփական հող ունենա և նրան ապահովություն տրվի ազատ մնալ հին բռնավորների, հարստահարիչների ավազակություններից. բ) հայերն իրավունք ունենան զենք կրելու ինչպես իրենց դրացի ազգերը, և փոխանակ զինվորական տուրք վճարելու, նույն վճարով կազմեն ազգային միլիցիա հարստահարիչներից իրենց կյանքը և կայքը պահպանելու համար. գ) հայոց ազգային սահմանադրությունը նոր իրավունքներով և արտոնություններով կատարելագործվելով, տարածվի բոլոր հայաբնակ գավառներում. դ) ազգը և ազգային առանձնությունները պահպանելու համար այնպիսի կարգադրություններ լինեն, որ սահման դրվի մահմեդականների մոլեռանդությանը, և բռնի հավատափոխություններին, առևանգումներին վերջ դրվի։ Այլև վանքերի և ազգային դպրոցների առաջադիմությունը սահմանափակող Թուրքիայի գործ դրած խորամանկ միջոցները հեռացվեն, որ ուսումը և կրթությունը անարգել ընթացք ունենան (57, 1878, № 163)։

1880 թվականին հրապարակային մի դասախոսության մեջ Գր. Արծրունին Բեռլինում հայկական պատվիրակության անհաջողությունը բացատրում էր նրա կազմով, որ անդամները հոգևորականներ էին։ Նրա կարծիքով, եթե պատվիրակության անդամներն աշխարհիկ լուսավորյալ մարդիկ լինեին և, բացի հայ ժողովրդի թվի մասին տվյալներից, ներկայացնեին նաև թվեր ու փաստեր հայերի տնտեսական դրության, նրանց կուլտուրական արժանապատվության, ընդունակությունների մասին, ապա «դուցե Եվրոպան համոզվեր, որ Հայաստանը նույնպես արժանի է ազատագրության Թուրքական տիրապետությունից, արժանի է անկախ քաղաքական կյանքի, ինչպես այն երկրները, որոնք ազատագրվեցին Թուրքիայի լծից»։ «Իսկ Եվրոպան չգիտի Հայաստանը և հայերին, —գրում էր նա։ —Երբ բարձրացվեց հայկական հարցը, Եվրոպան նույնիսկ ուշադրություն չդարձրեց հայերի արժանապատվությանը և պահանջեց իր դիվանագիտական գործակալներից միայն տվյալներ նրանց թվի մասին» (88, էջ 33)։

Սրանք առաջին մեկնաբանություններն էին, առաջին բնորոշումները, որոնց հետևելու էին նորերը, անընդմեջ՝ տասնամյակներ շարունակ։ Վերագնահատումների, ափսոսանքների շրջան էր դա։ «Գոլոս» թերթը սեպտեմբերի 28-ին մի հոդված էր տպագրել, որտեղ ցույց էր տալիս, թե Կ. Պոլսի հայությունը ցավում էր, որ ազգը պատերազմի ժամանակ բացորոշ «չընկավ Ռուսաստանի գիրկը և որ ասիական

Թուրքիայի հայերը եվրոպական Թուրքիայի բուլղարների նման չապստամբեցին, զենքը ձեռքին անկախություն կամ ինքնավարություն ձեռք բերելու համար ռուսաց կայսրի հովանավորության տակ» (57, 1878, № 171)։

Ծերենցը վախ էր արտահայտում, որ «դիվանագիտությունը կամ աշխարհավարությունը» վերջնականապես «դառնացնելու էին Հայաստանի վիճակը»։ «Ան ատեն,— գրում էր նա,— մեր թերամտության սխալ կարծիքները կուղղենք, մեր արևմուտքեն առած շատ անգամ սուտ և կեղակարծ գաղափարները կսրբագրենք, կքննենք և վերահասու կլինենք թե մեծազոր ինքնակալություն մը կա (իմա՝ Ռուսաստանը), ուր մեր միլիոնի մոտ եղբայրները կապրին խաղաղ և հանգիստ...»։ Ծերենցը Ռուսաստանի պաշտպանության ու հովանավորության մեջ էր տեսնում արևմտահայ ժողովրդի փրկության ուղին (53, 1878, № 2148)։

Էրզրումի թղթակից Գրիգոր Նիկողոսյանը «Մշակ»-ին գրում էր (15.VIII.1878). «Երբ ատենահայերի լրագիրները հասցրին այստեղ Բրիտանիայի լիազորի խոսքերը ուղղված հայոց ազգի դեմ, որին նա կոչել է թուլասիրտ և կնաբարո, այնպիսի մի կատաղի զայրույթ և ատելություն բորբոքվեց բոլորի սրտում...»։ Թղթակիցը դա համարում էր «տգիտություն կամ գիտակցական արհամարհանք» Բիքոնսֆիլդի կողմից և եզրակացնում. «Բնական է այժմ, որ որչափ զզվանք են զգում հայերը դեպի Անգլիան, այնչափ ևս համակրություն դեպի Ռուսաստանը։ Ռուսաստանը տվավ Հայաստանին 16-րդ հոդվածը, իսկ Անգլիան ջանք արեց կոնգրեսում նվազեցնել և ջնջել այդ հոդվածի զորությունը...» (57, 1878, № 131)։

«Զարմանալի չէ, որ Թուրքիայի հայերը վրդովված են անգլիացիների դեմ, նրանց խարդախ, նենգավոր քաղաքականության պատճառով»,— օգոստոսի 4-ին գրում էր Գր. Արծրունին «Թուրքահայաստանի վիճակը» առաջնորդողում (57, 1878, № 132)։

Մինչդեռ Թիֆլիսում ու Պետերբուրգում, Կ. Պոլսում և եվրոպական մայրաքաղաքներում հայ մտավորականները շարունակում էին գրել ու խոսել հայ ազգի դարդուցավից, ծրագրեր էին մշակում, երկրում հայությունը գալարվում էր զուլումների ու կրակի մեջ. արյուն էր փսխում, ոտքի կոխան էր դառնում, ի վիճակի չլինելով առաջադրված պահանջներն արդյունավետ միջոցներով հետապնդելու։

Հիրավի, «Պատերազմի արդյունքը չարդարացրեց այն սպասումները, որ նրա հետ կապում էին,— գրում է Յուրի Վեսելովսկին։— Թուրքահայաստանի մեծ մասը նախկինի նման մնաց Թուրքերի իշխանության տակ. մի ժամանակ շատ մոտիկ թվացող ազատագրությունը կամ, ծայրահեղ դեպքում, ինքնավարության ու բարենորոգումների իրականացումն այդպես էլ դուրս չեկան երազանքների ու պլանների շրջանակներից... Հայկական հասարակության մեջ և մտավորականության շրջանում հայրենասիրական ոգևորության պոռթկումին հետևեցին հիասթափությունը, վհատվածությունը, անբավարարության զգացողությունը» (101, էջ 16)։

Ռուսական բանակի հեռանալով անտանելի դրություն էր ստեղծվում արևմտահայ նահանգներում։ Ռուսական հովանավորությամբ հայերի համար բարենորոգումներ իրականացնելու մտավախությունը վերացավ Թուրքական կառավարության համար։ Բռնությունները հայերի նկատմամբ վերսկսվեցին։ Խուճապահար ժողովուրդը նորից համակվեց հայրենի տունը-տեղը լքելու, ռուսական տերիտորիան անցնելու մտադրությամբ։

Օգոստոսի 25-ին ռուսական զորքը մտավ Բաթում, ուրեմն ըստ պայմանի Թուրքերին պետք է հանձնվեր Էրզրումը։ Հայերը երես առ երես մնում էին Թուրքական իշխանությունների հետ։ Ռուսական գրավման ամիսներին Էրզրումի փողոցներում «մոլլայի կամ էֆենդիի անցնելիս խանութպան հայերն առաջվա սովորությամբ ոտքի չէին կանգնում և խոնարհ ողջույն տալիս— ասել է՝ հայերը հպարտացել են ռուսների գալու պատճառով»։ Գյավուր ասելն արգելվել էր։ Մոտ հարյուր հայեր աշխատանքի էին անցել ռուսական ոստիկանության մեջ։ «Ցաճիկները սրտով ատում էին ռուսներին, բայց նոցա վարմունքից ամենևին չէին նեղանում, այնինչ երեկվա յուրյանց հպատակ, գյավուր հայերի գլուխ բարձրացնելը միանգամայն անտանելի էր թվում յուրյանց և

տաճկական ամբոխն օրեցօր դրգռվում էր հայոց դեմ»,— այդպես էր գրում ականատեսը (23, էջ 162)։

Թուրքերը հակահայկական քայլերի դիմեցին դեռ մինչև ռուսական զորամասերի հեռանալը։ Իսկ թուրքական մի պաշտոնյա յուրայիններին խրատ էր տվել. «անպիտաններ, չէի՞ք կարող քանի մը օր ալ սպասել, որ ռուսները երթային, հետո սկսեիք» (23, էջ 175)։ Էրզրումի նահանգապետ գեներալ Դուխովսկին քաղաքը թողնելուց առաջ հավաստիացնում էր հայերին, թե Բ. Դուռը խոստացել է բարենորոգումներ մացնել Հայաստանում, որ ինքը դուրս չի գնա Կարինից, մինչև որ շհանձնի քաղաքը օսմանյան օրինավոր իշխանությանը (80, № 1, 1879, էջ 164—165)։ Սակայն խուճապը շարունակվում էր։ Հայկական հոծ զանգվածներ բռնում էին գաղթի ճամփան։

Կ. Պոլսի «Մասիս» թերթը մատնանշում էր, որ «Համարյա չկա Էրզրումում մի անվանի տուն, մի հարուստ օջախ, մի նշանավոր գերդաստան, որ մնացած լինի Պասկևիչի ժամանակվանից առաջ, բոլորը Էրզրումից տեղափոխվել են անցյալ պատերազմով ռուսաց սահմանը և նրանց փոխարինել են նորեկներ Դիարբեքիրից, Խարբերդից, Բիթլիսից, Մշից, Վանից և ուրիշ տեղերից» (53, 1878, № 2174)։ Այժմ սրանք էին հեռանալու հայրենի վայրերից։ Նույն թերթը հավաստում էր, որ «Ալաշկերտի հայերն անհրաժեշտ և անփոփոխ իմն առաջադրած են գաղթել ռուսաց բանակին հետ»։ Ականատեսը հաղորդում էր, որ ռուսաց նահանջից հետո «այն կողմերու հայոց վիճակը դառնագույն պիտի լինի» (53, 1878, № 2169)։

Գեներալ Լազարևը մի շրջաբերական հրապարակեց, որտեղ հայերին հանգստացնելով, կոչ էր անում չգաղթել Էրզրումից։ Նա Կամսարականին նշանակեց Էրզրումի ժամանակավոր գլխավոր հյուպատոս (57, 1878, № 151)։ Պատրիարքն իր հերթին հեռագրել էր Կարին՝ պատվիրելով համոզել ժողովրդին և ապահովցնել, որ չգաղթեն» (57, № 152, 1878)։ Սակայն ի՞նչ կարող էին անել այդ հրամաններն ու կարգադրությունները, երբ ժողովուրդը փրկության երաշխիքը համարում էր ռուսական հովանավորությունը։

Թեև ռուսական հրամանատարությունը հրամայել էր

թույլ չտալ տեղահանություն և գաղթ դեպի ռուսական սահմանները, սակայն Ալաշկերտը գաղթում էր, չնայելով արգելքներին (80, № 1, 1879, էջ 181—185)։ Մի կողմից՝ արևմտահայության ստվար զանգվածները ձգտում էին անցնել ռուսական հպատակության, ապահով հանգրվան գտնել Անդրկովկասում, մյուս կողմից՝ հայրենիքի վաղվա օրվա մասին մտածողները ձգտում էին ժողովրդին պահել տեղում, չնպաստել թուրքական պետական քաղաքականության իրագործմանը, որի նպատակն էր դատարկել Հայաստանը հայերից։ Ռուսական իշխանություններն էլ իրենց հերթին պատրաստ չէին զանգվածային վերաբնակեցում իրականացնելուն։ Ամեն ինչ մատնվում էր տարերայնության, անլուծելի դժվարություններ հարուցում։ 1878 թվականի սեպտեմբերին «Մասիս»-ի տնօրեններն արդեն բողոքում էին, որ տերությունները «Հայաստանի համար ապահովիչ բարենորոգումներ չտնօրինեցին և ահա այս ախոյանաց հետևանքը եղավ ներկա գաղթականությունը» (54, 1878, № 2173)։

Արդեն 1878 թվականի սեպտեմբերին Էրզրումից և նրա սանջակից 200 հազար հայ անցավ «Ռուսաց նոր կալվածները Հայաստանում»։ «Հայերի այս ահագին գաղթականության պատճառը բեկերից «բռնաբարություններ կրելու երկյուղն է, որոնք վաղուց է, որ պատրաստվում են և սպառնում կոտորել բոլոր հայերին»։ Մինչև այժմ դրանց «այս կոզոպտչական ձգտումները սանձահարված էին ռուսաց զորաբաժիններով» (57, 1878, № 170)։ Կ. Պոլսի թերթերն այդ օրերին գրում էին, թե «քիչ ատենեն Հայաստանի մեջ մեկ ծայրեն մյուսը բնավ հայ չպիտի մնա»։

Երբ ռուսական բանակը թողնում էր Էրզրումը, թուրքական կառավարության ներկայացուցիչը դեպի ռուսական հողը հայերի գաղթելու մասին արտահայտվում էր թշնամաբար։ Դեռևս այն ժամանակ Գր. Արծրունին նկատում էր, որ թուրքական իշխանությունները «ձգտում են նույնիսկ եթե հնարավոր է նրանց սրբել երկրի երեսից» (88, էջ 32)։ Իսկ Էրզրումի հայ ազգային դեմքերը դեռևս հույսեր էին փայփայում, բարելավում էին ակնկալում թուրքական իշխանություններից։ 1879 թվականին նրանք կազմեցին նահանգի բարենորոգման մի ծրագիր, որը ներկայացրին կառավարու-

թյան ներկայացուցիչներին։ Տեքստը տպագրված է «Փորձ»-ում (1879, № IX, էջ 181—197)։ Գլխավոր խնդիրը հանգում էր սոցիալական և վարչական անիրավությունների կանխմանը։

1879 թվականի փետրվարից հարստահարությունների և խոստացված բարենորոգումների խնդիրը բուռն քննարկումների առարկա էր Կ. Պոլսի ազգային ժողովի նիստերում։ Հարցապնդումներ էին արվում հայկական հարցի շուրջ, Հայաստան անունը Քուրդիստանի փոխելու, հայկական գավառներում մահմեդական գաղթականներ հաստատելու, բարենորոգումների և այլնի մասին։ Ընդ որում հայկական հարցը քննարկվում էր դռնփակ, իսկ արձանագրություններն այլևս չէին տպագրվում (10, նիստ ԺԷ, 9.II.1879, նիստ ԻԲ, 23.III.1879)։

* * *

Բեռլինի կոնգրեսից հայերը շոշափելի ոչինչ չստացան, բայց շահեցին Թուրքական իշխանության բացահայտ թշնամությունը։ Սուլթան Համիդը որոշակի հակահայկական քաղաքականություն որդեգրեց։ Սկսվում էր զուլումի շրջանը, որը տասնամյակների ընթացքում ուժասպառ արեց արևմտահայությանը։

Որքան շատ էր խոսվում եվրոպական հովանավորության մասին, այնքան սաստկանում էր հակահայկական քաղաքականությունը (148, էջ 417)։ Ջեյմս Բրայսը հաստատում է, որ Բեռլինի կոնգրեսից հետո թշնամությունը հայերի նկատմամբ անչափ ուժեղացավ (182, էջ 523)։ Հետագայում նույն հեղինակը Լեպսիուսի «Քրիստոնեական Արևելք» հանդեսում տպագրած մի հոդվածում ապացուցում էր, որ հայության բնաջնջման ծրագիրը Համիդը հղացավ Բեռլինի կոնգրեսից անմիջապես հետո (47, 1928, № 10(70), էջ 90)։ Փակելով պառլամենտը և վերացնելով ժողովրդական ներկայացուցչության հետքերը, Համիդը կտրուկ քայլերով հաստատում էր իր միահեծությունը, իրեն շրջապատում հլու-հնազանդ կամակատարներով։ Եղբզ-Քեռշկ պալատը դառնում էր հետադիմության և բռնակալության ամրոց։

Տարեցտարի մեծանում էր գաղտնի ոստիկանության ու լրտեսության դերը. բանտերն ու աքսորավայրերը լցվում էին անմեղ զոհերով. բռնակալության մղձավանջը թևածում էր ամբողջ կայսրությունում։ Հատուկ պահակախմբերով իր պալատում շրջափակված սուլթանը ժողովրդին պահում էր ահ ու սարսափի ճիրաններում։ Թուրքիայի ներքին ու արտաքին քայքայումը տեղի էր ունենում արյան ու ավերածության, բանտերի ու կախաղանների, եվրոպական տերությունների ֆինանսատնտեսական ներխուժման պայմաններում և դրանց հետևանքով։

Սեպտեմբերին Վանից գրում էին, որ թեև կոնգրեսից հետո երեք ամիս է անցել, բայց «ցավ ի սիրտ ստիպված ենք ասել, որ ամենաթեթև փոփոխություն մը անգամ տեղի ունեցած չէ դեպի լավը, այլ դեռ նույն ցավալի դրության մեջ է և հետզհետե կվատանա... այժմ տեղվույս կառավարությունն ու Թուրք ժողովուրդն ավելի խստացեր են հայոց դեմ և ամեն առիթի մեջ թշնամություն կանեն հայհոյանքով և սպառնալյոք...» (57, № 180, 1878)։

Թուրքական կառավարությունը, ձգտելով իր սովորության համեմատ խաբել Եվրոպային, մի կոմիսար ուղարկեց Հայաստան, նրան հանձնարարելով տեղում ուսումնասիրել գործերի վիճակը և այդ մասին իրազեկ պահել Բ. Դռանը։ «Քսան անգամ, եթե ոչ ավելի, այդպիսի կոմիսարներ ուղարկվել են Հայաստան,— գրում էր «Գոլոս» թերթը,— և այս բանը դեռ ոչ մի անգամ ամենափոքր օգուտ ևս չի բերել հայերին» (57, 1878, № 127)։

Գրգռված ու շարացած հայոց ինքնավարության հարցադրումից, Բեռլինի կոնգրեսից հետո մեծ վեզիր Քեմալ փաշան իր գործընկերներին խորհուրդ էր տալիս. «Եթե եվրոպական Թուրքիայում մենք սնուցինք օձեր (բալկանյան ժողովուրդներ), միևնույն հիմարությունը մենք չպետք է կրկնենք ասիական Թուրքիայում»։ Նրա կարծիքով, «խոհեմությունը» պահանջում էր «ոչնչացնել և սրբել մեր երկրի վրայից այն բոլոր տարրերը», որոնք կարող են հետագայում մեզ փորձություն պատճառել, միջամտությունների դուռ բանալ և եվրոպական պետությունների ձեռքում մեր դեմ

գործիք դառնալ։ Մեր շահը պահանջում է խուսափել որևէ միջամտության առիթից կամ հիմքից։ Թուրքական կառավարության դեկավարի տեսակետով, «այդ սրբազան նպատակին հասնելու համար անհրաժեշտ է վերացնել ամենաանշան կասկածելի երևույթներն ու տարրերը և ապահովել մեր ապագան»։ Այդ է պահանջում պետական շահը։ «Հայկական ազգը մենք պետք է սրբենք և արմատապես վերացնենք մեր երկրից»։ «Այս նպատակին հասնելու համար մենք ունենք այնպիսի միջոցներ, ինչպես քրդերը, չերքեզները, շրջանային ոստիկանները, դատավորները, հարկահավաքները, առհասարակ բոլոր այն տարրերը, որոնք կարող են սրբազան պատերազմ սկսել մի ազգի դեմ, որը ոչ զենք ունի, ոչ պաշտպան։ Ուրեմն, եթե այդ ժողովուրդը բնաջնջվի և քրիստոնյա Եվրոպան անկարող լինի Փոքր Ասիայում որևէ քրիստոնյա գտնելու, այն ժամանակ նա հանգիստ կձգի մեզ և մենք կարող կլինենք մեր ներքին գործերով և բարեկարգություններով զբաղվել» (80, 1879, № 7—8, էջ 104—205)։

Մինչև 70-ական թվականների վերջերը թուրքական կայսրության քաղաքականության առանցքը Բալկաններն էին։ Ընկրկելով Արևմուտքում՝ թուրք կառավարողները մղվում էին դեպի Արևելք։ Կ. Պոլիսը մշտապես մնում էր վտանգի տակ, իսկ Փոքր Ասիան և Արևելյան Հայաստանի նահանգները դառնում էին նրա քաղաքական գոյության հիմքը։ Գծագրվում էր զուտ ասիական պետություն դառնալու նրա ապագան։ Թուրքական նացիոնալիստների համար շահավետ առավելություն էր գլխավորել թուրանական ժողովուրդների ազգային ինքնագիտակցության պրոցեսն Արևելքում։ Այս ճանապարհին ցցվում էր հայության խոչընդոտը։ Դրան գումարած Բեռլինի երաշխիքը՝ բարենորոգումներ կատարել հայերի օգտին։ Բեռլինից հետո հայ-թուրքական հարաբերությունները դարձան լարված և չափազանց բարդ բնույթ ընդունեցին։ Սուլթանական իշխանությունը մտահոգված էր հայկական վտանգը վերացնել հայության թվի կրճատման, նաև ոչնչացման միջոցով։

«Սուլթանի կառավարության ցուցումով,— գրում է սովետական արևելագետ Գ. Բոնդարևսկին,— հայերը ենթարկվում էին վերաբնակիչների ամենադաժան բռնություններին, կոպիտ ու լկտի հետապնդումներին» (94, էջ 58—59)։

Անդրադառնալով սուլթանական կառավարության հայահալած քաղաքականության էությանն ու դրդապատճառներին, Գրիգոր Զոհրապը 1910 թվականի փետրվարին ասում էր. «վքեր ծանոթ են Թուրքիայի կյանքի մանրամասներին, գիտեն, թե «տաճիկ կառավարությունը առաջին անգամ հայերուն վրա չէ, որ ի գործ դրավ ջարդի քաղաքականությունը, այլ հելլեններուն, սերբերուն, բոսնիակներուն, բուլղարներուն համար ալ ըրավ նույնը»։ «Այս պատմական փաստը չգիտնալ, կնշանակե կոտորածները հայ հեղափոխական շարժումներուն վերագրել»։ Այնուհետև, Գ. Զոհրապը ցույց էր տալիս, որ «ռուս-թուրք պատերազմեն հետո Թուրքիան սթափեցավ և սկսավ ինք իր մասին մտածել։ Հունաստան շատոնց զացած էր, Սերբիա, Բուլղարիա, Բոսնիա նույնպես բաժանված էին, և իրը ազգային ձգտումի տեր ու քրիստոնյա ազգ՝ մնացեր էին միայն հայերը, որոնք ձեռք բերեր էին իրենց 16-րդ և 61-րդ հոդվածները։ Թուրքերը վտանգ մը տեսան այդ բանին մեջ և անհրաժեշտ հեռատեսություն նկատեցին հայերը տակավ առ տակավ հեռացնել այն կարևոր դիրքերեն, զորս կգրավեին կառավարական շրջանակներու մեջ։ Պետք է գիտնալ, որ հալածանքներուն ամենեն աղետավորները ջարդերը չեն, այլ անոնք՝ որոնք կուղղվին մտքի և սրտի դեմ։ Եվ այդ տեսակի էին 16-րդ հոդվածին հաստատումեն անմիջապես հետո հայոց դեմ սկսած հալածանքները։ Գավառացիները ենթարկվեցան խստություններու, վարժարաններ փակվեցան, աչքի ընկնող երկրորդական անձնավորություններ բանտարկվեցան։ Եվ այս բոլորը այն ատեն, երբ ոչ մեկ հեղափոխական շարժում կատարված չէր։ Ըմբոստացումը այդ հալածանքներուն բնական մեկ հետևանքը եղավ։ Իսկ ջարդերը եղան վերջաբանը մեր դեմ ուղղված հալածանքներուն և ոչ թե սկզբնավորությունը։ Զրպարտություններուն ամենեն գարշելին է հեղափոխությունը պատասխանատու բռնել հայկական կոտորածներուն համար (4, 1910, № 205)։

«Երեկվան ստրուկները ելած էին բարեկարգություն, եվրոպական պաշտպանություն, ինքնօրինություն անգամ պա-

հանջելու» (17, էջ 24),— մտածում էր Համիդը։ Ուրեմն, եթե Բեռլինի 61-րդ հոդվածն էլ չլիներ, հայկական վտանգը փաստ էր և պետք էր նրա առաջն առնել։ Նա սահմանափակեց պատրիարքարանի իրավունքները, սկսեց հետապնդել դրպրոցական գործը, արգելել պատմության դասագրքերը, ազգային երգարանները և այլն։ Այլևս նա չէր շոյում պատրիարքին։ Իսկ մի առիթով մերժելով ընդունել նրան, Համիդը հանձնարարեց հայտնել պատրիարքին, որ խիստ զբաղված է... «Ռուսաց դեսպանին նրա հղած զեկուցագրերը կարդալով...» (7, 1899, № 3, էջ 93)։

Այնուամենայնիվ, սուլթանը Կ. Պոլսի հայոց վերնախավի հետ նրբին գիծ էր վարում։ 1878 թվականի դեկտեմբերին Գ. Նիկողոսյանը Կ. Պոլսից հաղորդում էր, որ Զեյթունի ապստամբությունը հաղթահարելու, ապստամբներին հնազանդեցնելու գործում Բ. Դուրը դիմել էր պատրիարքարանի միջնորդությանը։ Թղթակցության մեջ կարդում ենք, որ «պատրիարքարանն անգիտաբար խաբվեցավ, դարձյալ քաղաքագետներու գործիք եղավ» (57, 1878, № 206)։

Հատուկ որոշման համաձայն, ատիճանաբար պետական հիմնարկներից դուրս էին անում հայ պաշտոնյաներին, նրանց փոխարինում մահմեդականներով։ Հայերը մեղադրվում էին անհավատարմության մեջ, զրկվում իրենց նախկին դիրքից։ Եթե որոշ օղակներում դանդաղում էր այդ պրոցեսը, ապա դա ոչ թե հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների բարյացակամության արդյունքն էր, այլ լիարժեք փոխարինողների բացակայության հետևանք։

Արգելվեց հայ ժողովրդի պատմության դասավանդումը (15, էջ 15)։ Արևմտահայը, իբրև քաղաքական հանցավոր, բանտերի մեջ երևաց 1870-ական թվականների վերջին, Էրզրումում՝ ռուս զինվորների այնտեղից դուրս գալուց անմիջապես հետո։ «Թուրքերն ատամ էին կրճտացնում հայերի դեմ այն ժպտուն և ուրախ տրամադրության պատճառով, որ նրանք ցույց տվին ռուսների Էրզրում մտնելու օրերին։ Վրեժ առնելու առիթներ էին որոնում»։ 1882 թվականին Էրզրումի բանտում 400 հայ քաղաքական «հանցավոր» կար։

Նկարագրելով թուրքական բանտերի սարսափները, նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ բանտարկյալները «երանի էին տալիս փողոցներում և տների մեջ խողխողված իրենց եղբայրներին և քույրերին», որ «ինկվիզիցիայի» տանջանքները նսեմանում էին բանտի սարսափների համեմատությամբ, երբ «երկաթե դուռը ահագին շռինդով բացվում էր և զինվորները կարմրած աչքերով՝ յաթաղանները ձեռքներին ներս էին մտնում և ջոկում անպաշտպան հայերին...» (52, էջ 14—16)։

Պաուլ Ռոհրբախը գրում է, որ սուլթան Համիդը «զառնացած էր» այն բանից, որ հայերը «ճիգեր էին գործադրել արտաքին տերություններին իրենցով շահագրգռելու համար։ Նա «ամենից ավելի հետապնդում էր այն միտքը», որ սասունցիներ հարստահարությունները, «հարկերը տասանորդել», «ըստ կարելույն շատ անհատներ իսլամացնել և բովանդակ ժողովուրդը անտանելի դարձած ճնշումներով հայրենի հողից գաղթելու բռնադատել և վերջապես փչացնել» (44, էջ 39—40)։

1879 թվականին հայկական նահանգները գործուղված կառավարական ներկայացուցիչ Բեքիր Սամի փաշան ոչ թե բարենորոգումների խնդրով էր զբաղվում, այլ քրդական վերնախավին համոզում, որ «հայերն են իրենց թշնամիները, որոնք եվրոպացիների միջոցով ձգտում են իշխանություն ձեռք բերել նրանց, այսինքն՝ քրդերի վրա»։ Սրա առաքելության դառնաղետ հետևանքները շուտով ջրի երես ելան, որովհետև հայկական գյուղերի ավարառությունները նոր թափ ստացան։ Ըստ էության Բեքիր Սամիի այս առաքելությամբ էր հիմք դրվում ապագա «Համիդիե» անկանոն զորքի ստեղծման գաղափարին, որը դառնալու էր հայերի բնաջնջման գլխավոր գործիքը սուլթան Համիդի ձեռքում։ 1880 թ. հուլիսի 2-ին Խրիմյանն անհանգստացած էր, որ «քրդական մի միություն է կազմակերպված կենտրոնական կառավարության դրդումով, որն ուզում էր անդամալուծել հայոց հարցը։ ...Այս միության հոգին օսմանյան քաղաքականությունն է» (74, էջ 85—87)։

Համիդն արգելեց «Հայաստան» անվան հիշատակումը։ 1880 թվականին Վանում գումարված քուրդ ցեղապետների համագումարին թուրքական պաշտոնատար անձինք դաղտնորեն առաջարկում էին վերջնականապես վերացնել հայե-

ին Քրդստանից։ Այս առաջարկը մերժվում է։ Քուրդ ցեղապետներից մեկը նկատել էր, թե հայերից հետո հասնելու էր քրդերի հերթը։

Գ. Նորատունկյանը, որ 1878 թվականին իբրև թուրքական արտաքին գործերի մինիստրության պաշտոնյա, ռուս-թուրքական սահմանը քննող հանձնախմբի անդամ էր, գրում էր Գարեգին Սրվանձտյանին քրդերի հետ մերձենալու, նրանց հետ համագործակցելու անհրաժեշտության մասին։ «Քրդերը մարմին մը կկազմեն ցեղով և զենքով, հայքս ալ ազգով և լեզվով. պետք է, որ իրարու հետ բախվելե առաջ իմաստասիրեմք այն օգուտները, որ կարելի է քաղել նոցա հաղորդակցութենեն և միաբանութենեն։ Եվրոպական իրավագիտությունը կպատվի նախ զենք ի ձեռին ունեցողը, ապա լուսավորեալը»,— գրում էր նա (6, էջ 345—346)։

«Դժբախտ հայերը սթափվելով իրենք զիրենք գտան ամենավտանգավոր վիճակի մը մեջ։ Հայաստանի և Եվրոպիո միջև ենթադրված բարոյական դաշնակցությունը երազ մըն էր, մինչ այն հին հարմարացումը ընդ մեջ հայոց և Բ. Դռան վերջացած էր։ ...Աբդուլ Համիդ զհայս կնկատեր իբրև բարոյապես բաժանված Թուրքիայեն և Եվրոպիո հարած...» (18, էջ 89)։

Թուրքական կայսրության պատմությանը նվիրված իրենց ուսումնասիրության մեջ Էվերսլին և Զիրոլը, բացահայտելով 1878 թվականին Սան-Ստեֆանոյում և Բեռլինում կնքված միջազգային պայմանագրերի նկատմամբ Սուլթան Համիդի բոյկոտը, նշում են, որ ավելի սաստկացավ նրա թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ։ Փորձելով արդարացնել հայկական հարցում արևմտյան դիվանագիտության բռնած դիրքի կործանարար բնույթը, այդ հեղինակները խոստովանում են. «Եթե մեծ տերություններն ըմբռնեին, որ այդ խոստումները չէին կատարվելու, նրանք, հավանաբար, այդքան դաժան չէին լինի և Թուրքիային ետ չէին վերադարձնի այդ երկու նահանգները (Էրզրումը, Բայազետը), որ այնքան խիտ բնակեցված էին հայերով» (186, էջ 339)։

Ջեյմս Բրայսը գտնում է, որ սուլթան Աբդուլ Համիդը հայերի նկատմամբ ավելի սանձարձակ դարձավ 1883 թվականից հետո, երբ տերությունները դադարեցրին իրենց ակ-

տիվությունը։ Նա առանձնապես դա կապում է Ալեքսանդր II-ի մահվան հետ։ «Սուլթանը,— գրում է նա,— առիթը հարմար գտավ առավել սանձարձակությամբ իրականացնելու իր նոր քաղաքականությունը հայերի նկատմամբ»։ Բրայսը դա համարում է նոր քաղաքականություն, որն ամբողջապես տարբերվում էր նախորդ միապետների «սովորական դանդաղկոտությունից և անտարբերությունից»։ Սա սիստեմատիկ էր, հետևողական և հիմնված որոշակի սկզբունքի վրա։ Դա կանխամտածված ճնշման քաղաքականություն էր, որը վերջապես հասունացավ և վերածվեց արմատախիլ անելու քաղաքականության։ «Սուլթանը տհավոր վախեցել էր բուլղարական ազգային շարժման հաջողությունից... Նա հայկական ազգային շարժման մեջ տեսնում էր իր ասիական տերիտորիաների մի ծավալուն մասն անջատելու համանման պլանի սկզբնավորումը» (182, էջ 471)։

Սուլթան Համիդը «կանգնեց վարչական և կրոնական հետապնդումների հաստատուն գծի վրա» (182, էջ 471)։ Դատարաններն ավելի թշնամական դիրք բռնեցին հայերի նկատմամբ, իսկ բանտերը լցվեցին մարդկանցով։ Հայոց դպրոցները փակվում էին։ Բանտ էին նետվում բոլոր նրանք, ում մոտ հայերեն գրքեր էին գտնում (182, էջ 472)։ Սուլթանը «հայկական հարցից ազատվելու ճանապարհը հայերից ազատվելու մեջ էր» տեսնում, դա համարելով պետական ղեկավար սկզբունք։ Բրայսը խոստովանում է, որ բրիտանական կառավարությունը ձգտում էր սուլթանի հետ «պահպանել բարեկամական հարաբերություններ»։ Իսկ բարենորոգումներ իրականացնելու ամբողջ հույսն օտարացավ (182, էջ 475)։

Վարչական նոր բաժանումների միջոցով Բ. Դուռը ձգտում էր բնակչության ընդհանուր թվի մեջ ստեղծել նոր փոխհարաբերություններ, հայերին բոլոր նահանգներում ցույց տալ որպես փոքրամասնություն։ Օրինակ, Էրզրումի մեծ նահանգից ստեղծվեցին Կարինի, Վանի, Հեքիարիի և Մուշի նահանգները, ընդ որում Բիթլիսը դարձավ ընդարձակ սանջակ և մտցվեց Մուշի վիլայեթի մեջ (1878)։ Պատրիարք Ներսեսն անմիջապես նոր հաշվարկներ կատարեց, ցույց տալով, որ նոր ստեղծված նահանգներում նույնպես

հայերը համեմատական մեծամասնություն էին կազմում։

1880 թ. Համիդ II-ը նորից փոփոխություններ արեց վարչական բաժանումների մեջ։ Թուրքական կառավարությունն իր սովորության համաձայն «շարունակում էր խաբել Եվրոպային, նրան համոզելով այն բանում, որ նրա պաշտոնյաները ամբողջությամբ զբաղված էին բնակչության ճակատագիրը թեթևացնելուն լավագույն ձևով նպաստելու միջոցառումներով» (151, էջ 76)։

* * *

Հիասթափությունը Բեռլինի կոնգրեսի որոշումներից, սուլթան Համիդի օրեցօր ուժեղացող բռնությունները, բացահայտ հակահայկական քաղաքականությունը ժողովրդի ազատագրության նոր ուղիներ որոնելու խնդիր էին առաջադրում։ Տեղի էր ունենում արժեքների վերագնահատում։ Սկսվում էր արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը։ Ոմանք երկիր գնալու, խաղաղ զարգացման, կուլտուրային, կրթությանը զարկ տալու խնդիրներ էին առաջադրում։ Մյուսները հետևողական պայքարի կոչ էին անում, զենքի դիմելու, բալկանյան ժողովուրդների օրինակին հետևելու գաղափարն էին փայփայում ու քարոզում։ Ոմանք էլ անկումային, անգործունյա վիճակից այդպես էլ դուրս չեկան։

Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը «իրենով սկզբնավորեց թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի՝ 80-ական թվականներին վերսկսած պայքարի ու մաքառումների նոր շրջանը (49, էջ 282)։ Ատրպետը, որ դեպքերի ականատեսն էր, դերասանություն էր արել Կարինի հայկական թատրոնում՝ վերոհիշյալ կազմակերպության ակտիվ անդամ Խաչատուր Կերեկեյան-Ղազազի ղեկավարությամբ, գրում է, որ հեղափոխական խմբի գործունեությանը մասնակցում էին նաև թուրքեր, քրդեր, թուրքմեններ, եզդիներ, ասորիներ, «որոնք բոլորն էլ տենչում էին կործանել իսլամի սյունի կղերի օլիգարխիան, խալիֆաթը, որը ազգաբնակչության հետ վարվում էր այնպես, ինչպես վարվում են ոչխարների հետ» (11, էջ 20)։

Սկսվեց ինքնաքննադատության, ինքնաճանաչման, նոր ուղիներ որոնելու մի շրջան։ Դժգոհ միջազգային դիվանագիտության ընդունած որոշումներից՝ դրվեց Արևմտյան Հայաստան գնալու, այնտեղ գործի անցնելու, դպրոցներ բացելու, երկիրը շենացնելու, ժողովրդին կրթելու և լուսավորելու խնդիրը։ Այլևս հայկական հարցի լուծումը եվրոպական դիվանագետների գրասենյակներում, կոնֆերանսներում չպիտի որոնել, այլ բուն Հայաստանում, մտածում էին մարդիկ։ «Դեպի երկիր» կոչը դարձավ ամենատարածված կարգախոսը։ Հայրենիք ունենալու համար ամեն ինչ արդեն համարվում էր թույլատրելի. ոմանք զենքի դիմելու, ապստամբություն անելու, ոմանք էլ՝ խաղաղ միջոցներով ազգը զորացնելու ուղղությամբ էին գործում։

«Որքան էլ ժլատ էին եվրոպական վեց պետությունների երաշխավորությամբ վկայագրված այդ խոստումները, այնուամենայնիվ, նրանք կարծես հարություն տվին թուրքական լծի տակ տանջված ու մաշված ժողովրդին և արծարծեցին նրա մեջ մոտալուտ լավագույն ապագայի հույսեր» (84)։

Պատահական չէ, որ չափավոր լիբերալ Գր. Օտյանն արդեն ասում էր. «Երբ զինվորին հատուկ եղած պատվի զգացումը զարգանա մեր մեջ ալ, այն ատեն հայը պիտի գտնե իր նախնի նկարագիրը, զոր պիտի վերականգնե գլորման և ապականության վիճակեն, ուր ինկած է... Հայտնենք աշխարհին, որ մենք ալ մարդ ենք և արիություն ունինք»։ Սա արդեն ուրիշ ձայն էր, սա արդեն կռվի անհրաժեշտության ճանաչումն էր։

Այո, ազգային ջոջերն էլ սկսեցին հասկանալ ստեղծված իրավիճակի էությունը։ Բայց Համիդի կիրառած հալածանքների հարվածներից սարսափած Կ. Պոլսի մեծամեծները Բեռլինի կոնգրեսից հետո տեսան, որ վտանգավոր փուլ են թևակոխում, որ արյան վտանգը մեծանում է։ Իսկ ազգի ազատագրության համար պայքարելը Բոսֆորի ափերին փարթամ կյանք վայելել չէր, այլ համարձակություն, ինքնազոհություն։ Նրանք ետ քաշվեցին, նորից հավատարիմ հպատակի տեսք ընդունեցին։

Սակայն շարժումն այլևս կանգնեցնել հնարավոր չէր։ Տարիներ անց, խրիմյանների ու վարժապետյանների հաջորդ

սերունդը՝ օրմանյանականությունը, շրջեցավ նախորդների արահետով։ Հայ կղերը, փողատեր վերնախավն ամբողջությամբ խոհեմության քարոզների դիրքորոշում որդեգրեցին։ Հայկական հետադիմականությունը, հակահեղափոխականությունը դարձան հլու-հնազանդ սուլթանի իշխանությանը, վնասեցին պայքարի ոգուն, որովհետև մայրաքաղաքի տարբերակ ապարանքներում թառած՝ սարսափում էին սեփական դիրքը, հարստությունը կորցնելու վտանգից։ Իսկ եվրոպական մամուլի էջերում շարունակում էին գրել այն մասին, թե քանի դեռ «հայերը խաղաղասեր ժողովուրդ են, տանջվում են, բայց չեն ապստամբում, ապա եվրոպական դիվանագիտությունն էլ անտարբեր է մնում նրա տանջանքների նկատմամբ» (151, էջ 45)։

70-ական թվականների ավարտը և 80-ական թվականների սկիզբը մաքերի, նոր հարցադրումների շրջան էր։ Մինչդեռ եվրոպական դիվանագիտության համար 61-րդ հոդվածը միջոց էր Թուրքիայի ներքին գործերին միջամտելու, նրա ասիական նահանգները Ռուսաստանի ազդեցությունից հեռու պահելու համար, ապա հայկական հասարակական շրջաններին նույն միջազգային երաշխավորությամբ ընձեռվածը ներկայանում էր որպես գործելու հիմքեր տվող իրավունք։

Սակայն, «ինչ ներելի էր նախքան Բերլինի վեհաժողովը, թերևս, աններելի էր նրանից հետո։ Այդ ժողովը փորձության հնոց էր հայ հասարակական մտքի համար։ Հայ գործը երկփեղկվեց, ընտրելով տարբեր ուղիներ՝ փոթորկի և աշխատանքի ուղիներ։ Բերլինի սառը ջուրը սթափեցրել էր շատերին»,— գրել է Ն. Ադոնցը (3, էջ 74)։

Թեև խանձարուրի մեջ, բայց արդեն արծարծվում էր այն միտքը, թե արևմտահայ ժողովուրդը պետք է կազմակերպվեր, կրթվեր և զինվեր, ուժ ցուցադրեր, որպեսզի ստիպեր իր շահերի հետ հաշվի նստել։ Նպատակ էր առաջադրվում ցույցերի, ելույթների միջոցով հարկադրել մեծ տերություններին՝ միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին, ստիպել Բ. Դռանը՝ կատարելու իր պարտավորությունները։ Առարկայանում էր այն մտայնությունը, թե արդեն իրավատեր էին, երաշխավորված և հաստատված էր 61-րդ

հոդվածը, հայկական հարցը վերածվել էր միջազգային հարցի, մեծ տերությունների իրավասության և շահագրգռության առարկա։ Սակայն եվրոպական դիվանագիտությանը ներկայանալով «անեղջյուր, անասպարտ», անպատրաստ և մուրացիկի դերում, հնարավոր չէր հասնել գործնական հաջողության։ Սկսվում էր շարժումը դեպի «ավետյաց երկիր», սկզբում՝ դանդաղ, հետո՝ շատ ավելի մեծ չափերով։

Այսպիսով, միջազգային քաղաքական կյանքի փոփոխությանը, նոր իրադրությանը զուգընթաց հայրենասիրական զգացմունքներն ստանում էին նոր ձև ու նոր բովանդակություն։ Ազգային մթնոլորտը շնչում էր նոր չափանիշներով, վերափոխվում նոր ուժերի վերելքի ու նոր պահանջների ասպարեզ իջնելու հետ մեկտեղ։ Կովկասի հայ մամուլի էջերում մեծ թափով արծարծվում էր այն խնդիրը, թե անհրաժեշտ է հաստատվել Արևմտյան Հայաստանում, գործել ու զարկ տալ ազգապահպանման աշխատանքներին, հիմնել դպրոցներ, կուլտուրական օջախներ, զարկ տալ ժամանակակից երկրագործությանը և այլն։ Գլխավոր խնդիր էր համարվում նոր սերունդը դաստիարակել այնպիսի ոգով, որպեսզի նա ի վիճակի լիներ նվիրվելու Հայաստանի ազատագրության գործին, կարողանար տեղից շարժել տիղմի մեջ խրված սայլը։

Գ. Սրվանձտյանը հուսախաբված էր կոնգրեսից. նա առաջարկում էր հույս չդնել դիվանագիտության վրա, փրկությունը տեսնում էր բուն Հայաստանում ուժ հավաքելու մեջ։ Նրա կարծիքով, եվրոպական պետություններն իրենց շահերի համար ստեղծեցին 61-րդ հոդվածը, որ առիթ ունենային միջամտելու Օսմանյան կայսրության գործերին։ «Այդ կեղծ բարեկամները ոչ հայի հորեղբայրն էին, ոչ հայի քեռին, այլ՝ ավելի ճարպիկ որսորդներ ու մսագործներ», որ հայերին «ոչխարների» և «կովերի» տեղ դնելով, «մեզ փարախեն կուզեին խրտցնել, հեռացնել և իրենց ձեռքը ձգելով ի սպանդ մատուցանել» (20, էջ 124—125)։ Նրա կարծիքով, հայության ամենամեծ չարիքն այն էր, որ նա բուն հայրենիքը դարձրել էր մոռացված մի անկյուն։ Նա առաջնահերթ խնդիր էր համարում հեղափոխությունը բուն երկրում, որ «այնտեղ է մեր ապագան», որ «Հայաստանի մեջն է բուն հայկա-

կան խնդիրը և մենք Բեռլինի մեջ կորոնենք զայն»։ Գ. Սրվանձտյանը պատրիարքարանին ներկայացրած մի տեղեկագրի մեջ գրում էր. «Իմ սկզբունքս է քարոզել, թե օտարեն պետք չէ բան հուսալ, ջանանք մենք զմեզ հոգալ, պատրաստվիլ և ցույց տալ ազգաց, թե մենք ալ ազգ մըն ենք»։ Նա հարց էր դնում զորանալ լուսավորության զենքերով, գիտությամբ և միությամբ։ «Այս է մեր միակ փրկության ճամփան, և ահա այս էր իմ առաքելությանս ավետարանը» (80, 1879, № 4, էջ 165—166)։

Արդեն 1878 թվականի հուլիսին, կոնգրեսից հետո, Բաֆֆին «Մշակ»-ում գրում էր. «Դատարկ հույսերով ենք ապրում... դիակները միայն լուռ համբերություն ունեն։ Ազատություն տրվում է այն ազգերին, որոնք իրենց ազատությունը սրով պաշտպանել գիտեն»։ Բաֆֆին ոչ միայն գեղարվեստական խոսքի բացառիկ վարպետ էր, այլև հրապարակախոս, հասարակական-քաղաքական խորունկ մտածող, զինված՝ հայոց պատմության և հասարակական կյանքի բազմակողմանի իմացությամբ։ Նա հանգել էր այն կարծիքին, որ սուլթանի իշխանությունից ակնկալել որևէ լավ բան ժողովրդի դրությունը բարվոքելու համար, սպասել, թե Թուրքիան կվերածնվեր՝ իր հետ առաջադիմության մղելով և հայերին, անհույս բան էր։

1880 թվականին լույս տեսավ «Խենթը», ապա՝ «Ջալալէդդինը» (1884), «Կայծերի» առաջին հատորը և այլն։ Այս գրքերում ամփոփված էին ժողովրդի ազգային ազատագրության ուղիների և մեթոդների մասին Բաֆֆու հայրենասիրական հայացքները, որոնք հսկայական ազդեցություն գործեցին ազգի ինքնաճանաչման, սեփական իրավունքները պաշտպանելու մտայնության վրա։ Նրա հերոսները ժողովրդի դարդուցավի, խոհերի ու զգացմունքների արտահայտիչներն էին, ժամանակի ոգու, բուն երկրի իրավիճակի ծնունդը, օժտված խոր դեմոկրատիզմով և հայրենասիրությամբ։ Խենթի երազն ազգի հավաքականության, ազատ հայրենիք ստեղծելու երազն էր։

Բեռլինի հուսախաբությունից հետո Բաֆֆին հարևան քուրդ ու մյուս ժողովուրդների հետ համատեղ հակաթուրքական ապստամբության մեջ էր փնտրում արևմտահայ ժողովրդի ազատության ուղին։ Նրա գրքերում, հրապարակախոսական հոդվածներում ակնհայտ էր դառնում Նալբանդյանի հայացքների ազդեցությունը, կովկասահայ երիտասարդության մեջ տարածում ստացող ազգային-նարոդնիկական տրամադրությունների ու հայացքների կնիքը։ Պատահական չէ, որ արդեն այն ժամանակ Բաֆֆու ազգային-դեմոկրատական հայացքները հանդիպեցին թշնամական վերաբերմունքի։ «Կայծերի» հերոսները բնութագրվեցին որպես նարոդովոլական, ցարասպան Ժելյաբովի և Կիբալչիչի հետևորդներ, իսկ Վարդանի երազը՝ որպես Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպի հերոսուհի Վերա Պավլովնայի երազի կրկնօրինակ (Աշ. Հովհաննիսյան, «Արծրունու և Բաֆֆու գաղափարական ներհակության ակունքը», «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 1, էջ 22, 30)։

Մամուլի էջերում, վիպասանության մեջ լայնորեն քննարկվում էր արևմտահայության քաղաքական, իրավական, տնտեսական ու կուլտուրական վիճակը։ Փորձեր էին արվում բնութագրելու բնակչության տարբեր խավերի, դասակարգերի շահերը, նպատակները, մշակվում էին բռնակալության ճիրաններից փրկվելու ուղիները։ Հաճախ տեսակետների բախումների մեջ կորչում էր գլխավորը, նպատակայինը։ Քննադատվում էր կղերը։ Առաջին քայլերն էին արվում հայ գյուղացու տառապանքները վեր հանելու, հարկահանի ու վաշխառուի կեղեքումները ցույց տալու ուղղությամբ։ Նկարագրվում էին բռնագրավումներն ու բռնությունները, գյուղացու քայքայումն ու գաղթը։ Ամեն ինչ պատվում էր սեփական հայրենիք ունենալու, օտար լծից ազատագրվելու խնդիրների, արժանապատվության համար մարտնչելու անհրաժեշտության շուրջը։ Ամեն ինչ նորովի էր սկզբնավորվում, լինելության պրոցես էր ապրում։

1878 թվականի հոկտեմբերին Գր. Արծրունին, ոգևորված Զեյթունի ապստամբությամբ, գրում էր. «Անգլիան հերքում էր հայոց ազգության գոյությունն անգամ, իսկ այժմ, երբ թուրքահայերը ապստամբվում են, լուսավորված Անգլիան ստիպված կլինի ճանաչել հայերի գոյությունը»։ Նա հիշեցնում էր ընթերցողներին, որ զենք վերցրած, ապստամբ ազգություններին եվրոպական դիվանագիտությունը շնորհեց

ինչ-որ իրավունքներ, իսկ հայ ազգը ոչինչ չստացավ, որովհետև հնազանդ էր մնացել տերությանը։ Եթե հայերը չապստամբեցին, ասում էին Եվրոպայի դիվանագետները, նշանակում է, թե գոհ էին Թուրքական տիրապետությունից, ուրեմն հայերին կարելի է անտես անել, նրանց հարկավոր չէ շնորհել մարդկային իրավունքներ։ «Ահա եվրոպական դիպլոմատիայի բարոյական փիլիսոփայությունը,— գրում էր Արծրունին,— ով չի ապստամբվում, նա գոյության իրավունք չունի, նույնիսկ նրա գոյությունն էլ կարելի է հերքել... Հայերն այդ շատ ուշ հասկացան և այժմ միայն, երբ պատերազմը վերջացավ ապստամբվում են Թուրքական տերության անտանելի լծի դեմ...» (57, 1878, № 165)։

XIX դարի կեսերին շատ տարածված էր «Je m'insurge, donc je suis» («Ես ապստամբում եմ, հետևապես ես գոյություն ունեմ») նշանաբանը։ Հիշատակելով սա, Դր. Արծրունին այն միտքն էր զարգացնում, որ, դուցե, հայերը նույնպես պետք է փոխեն իրենց՝ «Ես աշխատում եմ, ես տառապում եմ, հետևապես ես գոյություն ունեմ» նշանաբանը, և իրենց գոյությունը հաստատելու համար դիմեն զենքի, ապստամբության և արյունահեղության։ Այստեղ նա անում էր մի ուշագրավ ենթադրություն, որը հաստատվեց պատմության դեպքերի հետագա ընթացքով։ «Եթե Թուրքահայերը,— գրում էր նա,— չհաղթեն, ապա նրանք կամ կոչընչացվեն, կամ կվերաբնակվեն այլ երկրներում, և եթե նրանց հայրենիքը զրկվի իր սեփական որդիներից, ապա խայտառակություն Եվրոպային, որը չօգնեց նրանց իրագործելու ապագայի քաղաքակրթության սկզբունքներից մեկը»։ Հիրավի, բուրժուական Եվրոպան ոչ միայն չօգնեց, այլև նպաստեց արևմտահայության ողբերգության խորացմանը, դարձավ սուլթանական և երիտթուրքական չարագործությունների մեղսակիցը։ Հայը զինվում է ինքնապաշտպանության համար, եզրակացնում էր Արծրունին, «դա միակ միջոցն է Թուրքական լծից նվաղած հայերի համար պաշտպանելու և վտանգազերծելու իր ազգային գոյությունը» (88, էջ 35—36)։

Արևմտահայերի զինման, պաշտպանության, ինչպես նաև Արևմտահայաստանի ուսումնասիրման նպատակով 1879 թվականին Արծրունու ղեկավարությամբ Թիֆլիսում կազմակերպվել էր Երեքի կոմիտե, որի մեջ ակտիվ դեր էր խաղում «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության և նրա անդամ Խ. Կերեկեցյանի հետ կապերի մեջ մտած Արսեն Թոխմախյանը։ Կոմիտեն 1880 թվականին հրապարակեց Արսեն Թոխմախյանի կազմած մի «Թռուցիկ-թերթ» կամ կոչ, որտեղ պարզաբանվում էին Եռյակի հետապնդած նպատակներն ու խնդիրները։ Եռյակի կազմն ընդարձակվելով հետագայում հասավ իննի. Արծրունուց և Թոխմախյանից բացի, նրա կազմում հիշվում էին Գ. Սունդուկյանը, Բ. Նավասարդյանը, գեներալ Տեր-Ասատուրյանը, Բարսեղ Մելիք-Գրիգորյանը, Աբր. Դաստակյանը և ուրիշներ (Աշ. Հովհաննիսյան, «Արծրունու և Բաֆֆու գաղափարական ներհակության ակունքը», «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 1, էջ 20)։

Ա. Թոխմախյանը 1881 թվականի մայիսին Թիֆլիսում կարդացած մի դասախոսության մեջ կոչ էր անում «առանձին ուշադրություն դարձնել, ուսումնասիրել ամեն կողմից ազգայնության արմատ հանդիսացող գյուղացու կյանքը, ճանաչել նորան, ճանաչել նորա բնական աշխարհը, որին հայրենիք ենք ասում» (26, էջ 11)։ Այստեղ առկա են հետքերն այն ազդեցության, որ ռուսական հեղափոխական նարոդնիկները ներգործում էին Մոսկվայի և Պետերբուրգի հայ ուսանողության վրա։ «Դեպի ժողովուրդ» կարգախոսը հայ ուսանողներն ընկալում և փորձում էին իրականացնել նաև արևմտահայության նկատմամբ։

Բնական է, որ միջազգային դիվանագիտական ակտերին, Բեռլինի կոնգրեսի որոշումներին առաջինը ծանոթացան գրագետ մարդիկ, ուսանողները, ուսուցիչները։ 80-ական թվականների սկզբին Ռուսաստանում հայ ուսանողության 85 տոկոսը մանրբուրժուական, տերտերական ծագում ուներ, հավաստում է Ատրպետը (11, էջ 26)։ Սրանցից շատերն արդեն ներգրավված էին ռուսական հեղափոխական կազմակերպությունների մեջ, մասնակցում էին ցարիզմի դեմ ծավալված ըմբոստ ելույթներին, ահաբեկչական գործողություններին։ Նարոդնիկական գաղափարներով տարված երիտասարդներից շատերը մեծ հետաքրքրությամբ համակվեցին սեփական ժողովրդի քաղաքական ճակատագրի հանդեպ, գործնական քայլերի դիմեցին։ Նրանք ուսումնասիրում

էին հայերեն, հայոց պատմություն, Արևելյան հարցի էությունը, Թիֆլիսում և Անդրկովկասի այլ կենտրոններում պարապմունքներ կազմակերպում արևմտահայ մշակների շրջանում և այլն։ Հայտնի են ճարտղնիկ ուսանողուհի Թամարա Ադամյանի գործունեությունը Թիֆլիսում, Երևանում կազմված «Պոռչյանի մարտիկների դնդի» քայլերը, որի թվով երեսուն ուսանող, ուսուցիչ անդամներ նպատակադրվել էին աշխատանք տանել Վանի շրջանում, և բազմաթիվ այլ փաստեր։ Այս խմբակներում ընդգրկված էին «Կայծերի» քավոր Պետրոսը, հայ ազգային-ազատագրական հեռագա կռիվներից ծանոթ Արարատ, Մարդար վարժապետը, Արսեն Թոխմախյանը և ուրիշներ (75, էջ 123)։ Սրանց ջանքերով էր, որ սկսած 1880-ական թվականների սկզբից արևմտահայկական գավառներն անցան բազմաթիվ ուսյալ երիտասարդներ՝ դնելով Թուրքական տիրապետության դեմ զինված պայքարի նոր փուլի հիմքերը։ Իսկ ոմանք էլ գրական-պրոպագանդիստական աշխատանքի ձեռնարկեցին Եվրոպայի մի շարք կենտրոններում, հիմնադրելով թերթեր և քաղաքական կազմակերպություններ։ Սրանք հրապարակ իջան Թուրքական տիրապետության դեմ պայքարի դրոշ պարզած, բայց շարունակում էին կառչած մնալ եվրոպական դիվանագիտության խոստացած բարենորոգումներից։

80-ական թվականների սկզբին Արևմտյան Հայաստանում պայքար ծավալելու գործում ուշադրության կենտրոնում մնում էր բալկանյան փորձը, բուլգարների օրինակը։ Տպագրվում էին գրքեր, որտեղ ցույց էր տրվում, որ չկա Թուրքահպատակ մի ազգ, որն առանց արյուն թափելու նվաճեր իր ազատությունը, գովաբանում էին բուլղար հայդուկների հերոսական գործերը, հակաթուրքական ազատագրական շարժումների տարբեր փուլերում նրանց խիզախ կռիվները։ Պրոպագանդվում էին Խրիստո Բոտևի, Վասիլի Լևսկու, Կարավելովի և ուրիշների խոսքն ու գործը (25)։

Մկրտիչ Փորթուգալյանը հիշատակում էր Բալկանների փորձը՝ «Թուրքահպատակ ազգերեն ո՞րը՝ հույնը, գարագաղցին, բուլղարը և այլն կրցան ազատիլ Թուրքիայի հարստահարող լուծից առանց արյուն թափելու»։ Նա 1876—78 թվականները համարում էր հայոց հարցի «մանկական շրջան, լալու, աղերսելու շրջան, իսկ այժմ անհրաժեշտ էր համարում անցնել բողոքի, պահանջի, «ապստամբության» շրջանին։ Նա աշխարհի բոլոր մասերում սփռված հայության առաջնահերթ խնդիրն էր համարում համախմբվել հանուն Թուրքահայաստանի դատի (20, էջ 151—153)։

Շուտով Փորթուգալյանը գրելու էր, որ «Հայերը Հայաստանը զենքի զորությունով ազատելու համար ոչ միայն ունին իրավունք, այլև ամեն մի հայի վրա սուրբ պարտք կա այդ սիրելի գործը կատարելու...»։ «Հայերի ոտքի ելնելը,— գրում էր նա,— Հայաստանի ազատության համար իրավացի գործ է...» (77, էջ 23)։ Արդեն գրվում էր հայրենասիրական հուրն այն աստիճան արծարծելու մասին, որ «այրև ու ջնջև նրա սրտի մեջ դարավոր ստրկության առաջ բերած վախկոտության զգացումն և ընդունակ դարձնի անձնազոհության վսեմ զգացման»։ Արդեն գրվում էր այն մասին, որ զենքի դեմ միայն զենքով է հնարավոր կռվել, որ զենքով խլվածը զենքով պետք է վերստանալ, որ զոհվող հայեր պետք է լինեին, որ վերականգնված Հայաստան լիներ և այլն։

* * *

«Դիվանագետներ, թագավորներ, կայսրեր, ամենքը միաբերան «Քրիստոնեից վիճակին բարվոքում» կըսեն, ի վերա այսր ամենայնի ես իմ վիճակիս մեջ բարվոքում մը չեմ կրնար կոր տեսնել»,— գրում էր Հ. Պարոնյանը (68, հ. IV, էջ 14)։

Հիրավի, արևմտաեվրոպական դիվանագիտությունը գործնական ոչինչ չարեց Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի կենսագործման ուղղությամբ։

Սոցիալ-դեմոկրատ Էդ. Բեռնշտայնը հետագայում իր կարդացած մի դասախոսության մեջ չէր ուրանում, որ «Հայ ժողովրդի և Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների համար գոնե, Ռուսաստանը իսկապես քանի-քանի անգամ պաշտպան է հանդիսացել»։ Նա ասում էր, որ «Բեռլինի պայմանագիրը զրկելով հայերին մի այնպիսի պաշտպանից, որի վրա գոնե քիչ թե շատ հույս կարող էին դնել, նրա (իմա՝

Ռուսաստանի) տեղը դրեց եվրոպական համաձայնությունը, որ շատ անպիտան պաշտպան եղավ հայերի համար...» (14)։

«Ավելի լավ կլիներ ոչինչ չարտասանել այդ ժողովրդի օգտին, քան նրա դժբախտություններին ավելացնել նաև չիրականացված հույսերի դառնությունը»,— լրացնում էր նրան Ռոլեն Ժեքմենը (151, էջ 43)։

1879 թվականի օգոստոսին Ալեքսանդր II-ը գերմանական կայզերին բողոքում էր անգլիացիներից ու ավստրիացիներից, որոնք բոյկոտում էին Բեռլինի կոնգրեսի որոշումները, օժանդակություն էր հայցում Գերմանիայից հանուն այն բանի, որ իզուր չկորչեր ռուս մարդկանց արյունը, որ թափվել էր Թուրքիայում քրիստոնյաների վիճակը բարելավելու համար (90, էջ 206)։ Միաժամանակ ցարական կառավարությունը հանդես եկավ մի հայտարարությամբ, որտեղ Արևելքի քրիստոնյաների վիճակի բարելավման գործում շեշտում էր տերությունների միասնությունը պահպանելու, համատեղ գործելու անհրաժեշտությունը։ Ինչ խոսք, որ Պետերբուրգում կոնգրեսի արդյունքները գնահատվում էին որպես դաժան պարտություն։ Իսկ պարտության հետևանքները վերացնելու համար ժամանակ էր պահանջվում։

Ստեղծված իրադրության մեջ ռուսական կառավարությունն ավելի մտահոգված էր Մերձավոր Արևելքում Օսմանյան կայսրության վրա անգլիական հսկողության հաստատմանը խոչընդոտելու մտքով։ Այս վտանգի կանխման մտահոգությունն էլ կանխորոշում էր ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականությունն այն տարիներին (160, էջ 104)։ Ցարիզմը չէր կարող համակերպվել երրորդ տերության կողմից նեղուցների վրա հսկողություն հաստատելու փաստին։

1878 թվականին Կ. Պոլսում ռուսական դեսպան նշանակված Լոբանով-Ռոստովսկուն վիճակված էր զբաղվել ռուս-թուրքական պատերազմի հետևանքով առաջացած դժվարությունների վերացմամբ։ Ի հակադրություն Ա. Մ. Գորչակովի, նոր դեսպանն այն կարծիքին էր, որ եթե Ռուսաստանը պետք է այս կամ այն զիջումն աներ, գերադասելի էր համարում դրանք անել ոչ թե Ռուսաստանին ընդդիմացող տերություններին, այլ՝ անմիջականորեն Թուրքիային, որ-

պեսզի չզրգռեր նրան և չմղեր Ավստրո-Հունգարիայի և Անգլիայի գիրկը։ Լոբանով-Ռոստովսկին, Ն. Կ. Գիրսի մահից հետո ստանձնելով արտաքին գործերի մինիստրի պաշտոնը, հանդես եկավ ռուսական արտաքին քաղաքականության կենտրոնը Հեռավոր Արևելք տեղափոխելու ջերմեռանդ կողմնակից (123, հ. II, էջ 49—50)։

1878 թվականի ամռանը ռուս գեներալ Բոբրիկովը ռազմական մինիստրին Կ. Պոլսից հղած իր զեկուցագրերում շարադրում էր Օսմանյան կայսրության նկատմամբ իրականացվելիք քաղաքականության շուրջ իր խորհրդածությունները։ Ռուսաստանի շահերին չէր համապատասխանում ստիպել Թուրքիային «մեռնել բռնի մահով և դրանով մեր սահմանների վրա առաջացնել խառնակչություն»,— գրում էր նա։ Նա ընդգծում էր ատիճանականության, զգուշավորության անհրաժեշտությունը, նշելով, որ թուրքական կայսրությունից Հունաստանի անջատմանը հետևեց Սերբիայի կազմավորումը, այնուհետև Մոլդավիա-Վալախիայի անջատումը և, վերջապես, Բուլղարիայի ստեղծումը։ «Այժմ հերթի է դրված Հայաստանի նախապատրաստումն ինքնուրույն կյանքի»,— մատնանշում էր նա, միաժամանակ զգուշացնելով, որ քանի դեռ Բալկանյան թերակղզու սլավոնական պետությունները չեն հասել քաղաքական հասունության, իսկ Հայաստանի նախապատրաստումը «չի վերածվի պատմական փաստի», «մեզ համար ոչ մի անհրաժեշտություն չկա վնասելու սուլթանի իշխանությանը» (93, հ. 154, 1913, էջ 254)։

1879 թվականի հունվարի 27-ին (8 փետրվարի) Ռուսաստանի և Թուրքիայի միջև Կ. Պոլսում մի տրակտատ կնքվեց, որի նպատակն էր «ամրապնդել խաղաղության վերականգնումը երկու կայսրությունների միջև և վերջնականապես որոշել Սան-Ստեֆանոյի խաղաղարար պայմանագրի այն պայմանները, որ պետք է ուղղակի համաձայնության առարկա հանդիսանային երկու պետությունների միջև» (125, էջ 209)։ Ցարական կառավարության արտաքին քաղաքականությունն ավելի շեշտված էր արտահայտում երկրի ներքին քաղաքականությունը, որը դառնում էր առավել սահմանափակային և ռեակցիոն։

Հիշեցնենք, որ 1877 թվականի սկզբից չէին դադարում դատավարությունները հեղափոխական կազմակերպությունների նկատմամբ. Կազանի հրապարակի ցույցի գործը, «մոսկովյան պրոպագանդիստների խմբակի», «հարավռուսական բանվորական միության» գործերը և այլն։ 1878 թվականի փետրվարի 7-ին Վերա Զասուլիչն ատրճանակի գնդակով ծանր վիրավորեց Պետերբուրգի քաղաքապետ գեներալ-ադյուտանտ Տրեպովին։ Հարյուրավոր ուսանողներ հեռացվեցին համալսարաններից, աքսորվեցին Սիբիր։ 1878 թվականի օգոստոսին դանակի հարվածով սպանվեց III բաժանմունքի պետ և ժանդարմների շեֆ գեներալ-ադյուտանտ Մեզենցովը։ «Զեմլյա ի վոլյա», «Նարոդնայա վոլյա» և այլ կազմակերպություններ ակտիվացրել էին իրենց գործունեությունը, ցնցելով ցարական ամբողջ վերնախավը, խուճապի մատնելով նրան։ ՇՇուտով ահարեկչի ռումբից սպանվելու էր նաև Ալեքսանդր II-ը։

Այս ամենն ազդեցություն էր թողնում արտաքին քաղաքականության, թուրքական տիրապետության դեմ ճնշված ժողովուրդների պայքարի նկատմամբ ռուսական արքունիքի դիրքորոշման վրա։ Ինչպես գրում է Բ. Բորյանը, «Բեռլինի կոնգրեսից հետո հայկական հարցը մեծ տերությունների դիվանագետների համար վերածվում է Թուրքիայի վրա ճնշում գործելու միջոցի. Անգլիական և ռուսական դիվանագիտությունները (1880, 1895—1896), իսկ հետագայում ռուսականն ու գերմանականը (1913—1914), հայկական հարցից օգտվում էին որպես Արևելքում իրենց գաղութային քաղաքականության մի միջոց» (96, հ. 1, էջ 24)։

70-ական թվականների վերջերին և 80-ական թվականների սկզբին թուրքական գործերում փորձում էր նախաձեռնության մենաշնորհն իր ձեռքում պահել անգլիական կառավարությունը։ Նրա հակասական, մանվածապատ գործողություններում գծագրվում էր էքսպանսիայի իմպերիալիստական քաղաքականության էությունը։ Սուլթանի կառավարության վրա ճնշում գործադրելու քաղաքականության մեջ անգլիական իմպերիալիստներն օգտագործում էին նաև հայկական հարցը։

Ֆրանսիացի դիվանագետ Վալիերը գրում էր Վադինգտոնին, որ Անգլիան թուրքերի հետ վարվում է այնպիսի վիրաբույժի նման, որը փոխանակ օգներ բուժելու ջարդած ոտքերը, կտրում էր նաև թևերը։ «Հենվիր իմ վրա, ես գալիս եմ քեզ օգնելու,— ասում էր Անգլիան Թուրքիային։— Նա սպառնում է քեզ Հայաստանում, ոչինչ, ես կվերցնեմ Սիրիան. նա կփորձի գրավել քո մայրաքաղաքը, ես այն կվերցնեմ նրանից շուտ, ահա այսպիսին էր կոնգրեսից հետո բրիտանական դիվանագիտությունը Արևելքում» (217, էջ 477)։

Ամերիկյան պրոֆ. Սարգսյանի կարծիքով, բարենորոգումների նկատմամբ ոչ միայն անտարբերություն ցուցաբերեց սուլթանի կառավարությունը, այլև Բիսմարկը պարզապես խոչընդոտեց դրանց իրագործմանը։ Նա գրում է, որ Ռուսաստանը Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերություններից միակն էր, որ արձագանքեց 1881 թվականի հունվարին անգլիական արտաքին գործերի մինիստր Գրենվիլի՝ Բ. Դոանը համատեղ բողոք ներկայացնելու կոչին։ Ավստրիայի, Ֆրանսիայի և Իտալիայի տատանումների պայմաններում Բիսմարկը «վայր դրեց իր շվին սեղանի վրա և հրաժարվեց մասնակցել կոնցերտին»,— դիպուկ արտահայտվել էին լրագրողները (215, էջ 60)։

Սակայն ամերիկյան պրոֆեսորի միակողմանի բնորոշումները չեն բացահայտում անգլիական իմպերիալիստների հետապնդած նպատակների էությունը։ Լոնդոնը ծավալողական լայն ծրագիր էր իրականացնում, նոր զավթումների ձգտում Ասիայում և Աֆրիկայում, նախապատրաստում Եգիպտոսի գրավումը և այդ խնդիրների իրականացման համար նրբորեն օգտագործում էր Բեռլինի պայմանագրով Օսմանյան կայսրության ստանձնած պարտավորությունները, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում նախատեսված բարենորոգումների հարցը։

Հայաշատ մի շարք կենտրոններում անգլիական փոխհյուպատոսներ նշանակվեցին։ Սրանց հաղորդագրությունները գավառահայության վիճակի և թուրքական իշխանությունների գործողությունների մասին ճկունորեն օգտագործվում էին Բ. Դուրը մշտապես լարված վիճակում պահելու համար։ Անգլիական հյուպատոսներին սկսեցին պաշտոնա-

պես անվանել Քուրդիստանի հյուպատոսներ, իսկ հայ անվան փոխարեն անգլիական պաշտոնական գրագրություններում գերակշռեց «քրիստոնյա» անվանումը։

1878 թվականի դեկտեմբերի սկզբին Գր. Արծրունին գրում էր. «Այժմ էլ ոչ ոքի համար տարակուսելի չէ կարող լինել, որ Թուրքահայաստանն Անգլիայի ձեռքում մի տեսակ մասնավոր սեփականություն է դառնում։ Անգլիան հետզհետե տիրապետում է ամբողջ Փոքր Ասիան և, մանավանդ, Հայաստանը, նշանակում է ամեն տեղ իր հյուպատոսներին... խոստանում է ռեֆորմներ մտցնել, բայց միևնույն ժամանակ աշխատում է որքան կարելի է ուշացնել իր խոստումների կատարումը (57, 1878, № 202)։ Նա գրում էր, որ «Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը պահանջում է պաշտպանել հարուստներին աշխատողների դեմ, կալվածատերերին մշակների դեմ, հարստահարողներին հարստահարվածների դեմ...», ընդգծում էր, որ անգլիացիները կճանաչեն քուրդ և թուրք կալվածատերերի ապօրինի իշխանությունը և չեն հարգի հայերի իրավունքները (57, 1878, № 204)։

1878 թվականի նոյեմբերին ասիական նահանգներում բարենորոգումների շուրջ Լայարդի բանակցությունները սուլթանի և Բ. Դոան հետ քաշքշուկի բնույթ ունեին։ Մերենցը գրում էր, որ Լայարդը «սրտով ու հոգով ավելի թուրք էր, քան թուրքերը» (80, 1879, № 1, էջ 207)։ Նա մեղադրում էր անգլիական կառավարությանը, գտնում, որ Անգլիան բարոյապես և նյութապես պատասխանատու և գործակից է բոլոր անիրավությունների համար, որ Արևմտյան Հայաստանում կատարվում էին 1878 թվականի հունիսի 4-ից, այսինքն՝ անգլո-թուրքական համաձայնագրի ստորագրումից հետո (80, 1879, № 1, էջ 201)։ Գլադստոնը հայտարարում էր, որ անգլիական ներկայացուցիչները Բեռլինում ազատությունը պաշտպանելու փոխարեն ստրկության կողմը բռնեցին, որ վարչապետն ու արտաքին գործերի նախարարը Մետերնիխի հետքերով ընթացան (16, էջ 243—245)։ 1878 թ. օգոստոսի 4-ին Բիքոնսֆիլդը պառլամենտում հայտարարեց, որ հայերն անկարող են իրենք իրենց կառավարել։ Իսկ անգլիական պառլամենտի «հայասեր երեսփոխան» Ֆորսթերն ասաց, որ հայերը «պատերազմելու հատկություն չունեն»։ «Այսպես,— գրում էր «Մասիս»-ը,— հայք մեկ-երկու ավուր մեջ երկու նշանավոր մարդոց բերնե գրեթե պարսավանք ընդունած եղան. մին զանոնք պատերազմելու, իսկ մյուսը կառավարելու անկարող կոչեց։ Այսպիսի պարսավանաց ամենեն լավ պատասխանն հառաջադիմությունն է, եթե մեր աչքը բանանք» (53, 1878, № 2158)։

Արձագանքելով արևմտաեվրոպական դիվանագետների այդ հայտարարություններին, Բեռլինի կոնգրեսից հետո Ռ. Պատկանյանը գրեց.

«Գիտեմ, խեղճ հային չեն տալ Հայաստան,
Մեզ ազգ կազմելու ամենքն են խափան,
Նախանձ, քեն և ահ տիրել է հոգին
Դեպի հայերուս շատ ու շատ ազգին։
Թև թուր վերնեինք՝ մեզ պիտ մորթեին,
Ոչ ոք պիտ ելներ պաշտպան խեղճ հային,
Երբ որ լուռ կեցանք մենք խոհեմաբար,
Ասին «մեռել եք հոգեպես իսպառ»»։

«Վեհաժողով», «Բողոք առ Եվրոպա», «Հայ արյուն» և այլ բանաստեղծություններով Ռ. Պատկանյանը ձաղկում էր եվրոպական դիվանագիտության սև գործերը։ «Մի՞թե անգլիական շահը կպահանջե,— գրում էր նա,— որ երկրիս վրա չլսված, չի տեսնված չարագործություններ կատարեն, որպեսզի միլիոնատեր լորդերը սնդուկների մեջ դիզեն հայի արյան և մահվան գնով ձեռք բերված ստեղինգները»։ «Անգլիական կառավարությունն անբարոյական է»,— ասում էր բանաստեղծը (Հայ նոր գրականության պատմություն, 1962, Երևան, հ. երկրորդ, էջ 295)։

Գաղութարար Մարկ Սայքսը, որ հայտնի է Պարսկաստանում անգլիական տիրապետությունը տարածելու իր ակտիվությամբ, այդ երկրի և Հնդկաստանի պատմությանը նվիրված գրքերում, Թուրքիայի հինգ նահանգներում կատարած ճանապարհորդական նոթերում չէր թաքցնում իր «ատելությունն ու արհամարհանքը» հայերի նկատմամբ լոկ այն պատճառով, որ նրանք ռուսասեր էին և Արևելքում Ռուսաստանի ազդեցության տարածմանն էին ծառայում։ «Հայասացության այս սիրահարները,— գրել է Ֆր. Պրեսանսեն,— շատ ճիգ էին թափում դարձնելու հասարակական կարծիքը

մի ժողովրդի դեմ, որ իրավունք ունի քաղաքակրթված աշխարհի դրական համակրության» (24, էջ 36)։

Երբ 1878 թվականի օգոստոսին Նուբար փաշան «XIX դար» ամսագրում տպագրեց իր ծրագիրը, որտեղ ընդգծում էր հայկական նահանգներում բարենորոգումների իրագործման մեջ անգլիացիների հատուկ դերը, ապա Լոնդոնի «Թայմս» թերթն անմիջապես գրեց, թե «անգլո-թուրքական համաձայնագիրն իրականացնելու գործը «ժամանակի կարոտ է»։ Թերթը գանում էր, որ Անգլիան պատասխանատվությունից չի խորշում, բայց սուլթանը չպիտի իր ժառանգությունից զրկվի, այլ խալիֆայության բարեկարգությամբ իսլամ աշխարհը քաղաքակրթության պիտի հրավիրվի (53, 1878, № 2170)։ Մեծ Բրիտանիան զենքի չէր դիմելու մի միապետի դեմ, նկատում էր Բրայսը, որին Կիպրոսի գրավումով վերցրել էր իր հովանավորության տակ, այլապես դա կնշանակեր Թուրքիային գցել մի այլ պետության գիրկը (182, էջ 450—451)։

Իոլանդացի հեղինակ Դիլոնը գրել է. «Մենք ձեռնամուխ եղանք հետևելու այն բանին, որպեսզի Թուրքիայի հայկական գավառներում հիմար կառավարման հետևանքով առաջացած չարիքը արագ և վերջնականապես սրմատախիլ արվի. և մենք ոչ միայն չկատարեցինք մեր պարտավորությունը, որ կամավոր վերցրել էինք մեր վրա, հրաժարվելով այն վստահել Ռուսաստանին, այլև թույլ տվեցինք, որպեսզի ապիկար կառավարման անկարգ սիստեմն աստիճանաբար վերաճեր անխիղճ ոչնչացման սատանայական քաղաքականության» (121, էջ 329)։

1879 թվականի սկզբին Կ. Պոլսում անգլիական դեսպան Լայարդը հաղորդում էր Սոլսբերիին. «Եթե Բարձր Դուռը չզգուշանա, եթե նա չգործի բանականորեն և հաշվենկատորեն, ապա Ասիայում մի գեղեցիկ օր կծագի հայկական հարցը, նման նրան, ինչպես ծագեց բուլղարականը Եվրոպայում, որի հետևանքն էր վերջին պատերազմը։ Ես մի քանի անգամ նախազգուշացրել եմ թուրքական մինիստրներին, որ եթե նրանք չշտապեն իրականացնել Բեռլինի պայմանագրի որոշումները հայերի մասին, ինչպես նաև հուլիսի 4-ի կոնվենցիայի որոշումները, և եթե, վերջապես, նրանք միջոցներ

ձեռք չառնեն բացարձակապես անհրաժեշտ քրիստոնյաների պաշտպանության և Ասիական Թուրքիայում նահանգների ավելի լավ կառավարման համար, ապա նրանք կնկատեն, բայց արդեն շատից ավելի ուշ, որ սուլթանը վտանգի կենթարկվի կորցնելու այդ նահանգներից մի քանիսը» (151, էջ 57)։ Դժվար չէ նկատել, որ անգլիական գաղութարար-դիվանագետների մտահոգությունը ո՞չ ճնշված ժողովուրդների իրավունքների պաշտպանությունն էր, ոչ էլ միայն Օսմանյան կայսրության ամբողջականությունը, այլ մի ուրիշ տերության, այսինքն՝ Ռուսաստանի ուժեղացման կանխումը։

1879—1880 թվականներին Անգլիան արտաքնապես չափաղանց «ակտիվ էր» թուրքական կառավարությունից հայերի օգտին բարենորոգումներ պահանջելու գործում։ Անգլիական դիվանագիտությունն այդ պահին գործի էր դրել սուլթանի վրա ներգործելու բոլոր լծակները։ Այսպիսի դիրքորոշման գլխավոր շարժիչը Եգիպտոսը խաղաղ ճանապարհով Թուրքիայից անջատելու ձգտումն էր։ Մյուս տերություններն ընդդիմանում էին Եգիպտոսի օկուպացման անգլիական քաղաքականության իրագործմանը, դրանով իսկ ի միջի այլոց վերաբերմունք էին դրսևորում հայկական հարցի շուրջ անգլիական դիվանագիտության գործողություններին։ Պատահական չէ, որ Եգիպտոսի խնդիրն իր օգտին լուծելուց հետո անգլիական դիվանագիտությունը ոչ միայն լռության մատնեց իր երեկվա հարցադրումները Հայաստանի վերաբերյալ, այլև կապույտ գրքերից իսպառ ջնջեց Հայաստան անվանումը։ Եգիպտոսի զավթման պահին Անգլիան մեծ զիջումներ էր անում Ֆրանսիային, դյուրացնում նրա ֆինանսական ներխուժումը Թուրքիա, միայն թե վերջինս չխանգարեր իրեն Սուեզի ջրանցքի և Եգիպտոսի խնդրում։

Նանոթանալով 1914 թվականին Բեռլինում լույս տեսած Կվադֆլիգի «Էքսպանսիայի ռուսական քաղաքականությունը 1774—1914» գրքին, Վ. Ի. Լենինը արել է մի շարք քաղվածքներ, ուշադրություն նվիրելով այն մտքին, թե Գլադստոնին թողնում էին վերցնել Եգիպտոսը, որպեսզի «Ռուսաստանն էլ կարողանա գրավել Հայաստանը,— ըստ Գլադստոնի, այդպիսի գրավումը կլիներ քրիստոնեական մի երկրի ազատագրում մահմեդական լծից» (2, հ. 39, էջ 825)։

Բիսմարկն ընդհանուր առմամբ պաշտպանում էր Անգլիային. «Եգիպտոսում ես անգլիացի եմ»,— ասում էր նա (137, էջ 10)։ 1881 թվականին նա տերություններից պահանջում էր մեկընդմիշտ մոռանալ հայերի վերաբերյալ ստանձնած պարտավորությունները, թույլ տալ սուլթանին հանգիստ կառավարել իր երկրում։ 1881 թվականին Բեռլին ուղարկվեց Համիդի արտակարգ և լիազոր ներկայացուցիչ Ալի-Նիզամի փաշան։ Այս պահից էլ հիմք էր դրվում Թուրքիայի նկատմամբ գերմանական հովանավորությանը։ Ճիշտ է, կայզերը պարտավորություն չստանձնեց երաշխավորել Թուրքիայի անձեռնմխելիությունն ու ամբողջականությունը, բայց թուրքերը գոհ էին, որ Եվրոպայում գտնվեց մի հզոր տերություն, որը չխորշեց բարեկամական հարաբերություններ հաստատել իրենց պետության հետ։ 1881 թվականին Բիսմարկը ձևական դաշինք չկնքեց Բ. Դոան հետ, բայց դրվեցին հետագա մերձեցման ու համագործակցության հիմքերը։

1882 թվականի սեպտեմբերի 12-ին Ֆ. Էնգելսը Կ. Մարքսին հղած նամակում, անդրադառնալով Մերձավոր Արևելքում տերությունների վարած քաղաքականությանը, նկատում էր. «Անգլիան պետք է խաղաղ ժամանակ գրավի Եգիպտոսը, որպեսզի խեղճ Ռուսաստանը դրա շնորհիվ ստիպված լինի ինքնապաշտպանության նպատակով նույնպես խաղաղ ժամանակ գրավել Հայաստանը։ Կովկասյան բանակն արդեն մոտեցված է սահմանին։ Միայն Կարսի մոտ լրիվ պատրաստության մեջ գտնվում է 48 գումարտակ։ Եվ որպեսզի ապացուցվի, որ Գլադստոնը համաձայն է թուրքերի անտանելի լծից ևս մեկ «քրիստոնեական» երկրի ազատագրման հետ, Բեռլինի կոնգրեսից հետո Փոքր Ասիայում ռեֆորմներ անցկացնելու համար ուղարկված անգլիական կոմիսարները հատկապես հիմա են դեմոնստրատիվ կերպով արձագանքում։ Հրապարակվում են նրանց զեկուցումները, որոնցից երևում է, որ թուրքերը նրանց հիմարներ են համարում, որ ամեն ինչ մնացել է ինչպես հնում էր, պաշտոնյաների կաշառվածությունը չի կարող արմատախիլ արվել։ Պալմերստոնը մեռած է, կեցցե Գլադստոնը» (1, հ. XXIV, էջ 578)։ Այն ժամանակ անգլիական կառավարությունը գլխավորում

էր Գլադստոնը։ Ֆ. Էնգելսը 1882 թ. սեպտեմբերի 16-ին Կ. Մարքսին հղած նամակում նորից գտնում էր, որ «Ռուսների մուտքը Հայաստան կարող է հանգեցնել ընդհանուր պատերազմի և դա, հավանաբար, համապատասխանում է Բիսմարկի ցանկություններին» (1, հ. XXIV, էջ 580)։

Եգիպտոսի վրա իրենց տիրապետությունը հաստատելիս անգլիական գաղութարարներն այնպիսի խարդավանքների նրբին տակտիկա բանեցրին, որ այն ժամանակ ասում էին, թե քաղաքականության մեջ մաքիավելիզմի ոգով անգլիացիները կարող էին դասեր տալ իրեն իսկ՝ Մաքիավելուն (159, էջ 232)։

Ահա այս գլխավոր քաղաքականության ընդհանուր քուրայում տեղ էր վերապահված նաև հայկական հարցին, որը որոշակի կատալիզատորի դեր պետք է խաղար հիմնական ծրագիրն իրականացնելու ճանապարհին։

Տերությունների միացյալ հուշագիրը՝ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի պահանջների կատարման անհրաժեշտության, «լիակատար և անմիջական իրագործման մասին», Բարձր Դռանը հանձնվեց 1880 թ. հունիսի 11-ին Կ. Պոլսում հավատարմագրված դեսպանների միջոցով։ Այնտեղ սուլթանից պահանջվում էր կատարել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունը, հաշվետվություն ներկայացնել ձեռք առնված միջոցների մասին։ 1880 թվականի հուլիսի 5-ին սուլթանի արտաքին գործերի մինիստր Աբեդին փաշան պատասխան նոտայում երեսպաշտորեն ամեն ինչ ներկայացնում էր ծուռ հայելու մեջ։ Այնտեղ ասվում էր, թե թուրքական կառավարությունը «հայրական հոգատարությամբ» է վերաբերվում հայերին, ինչպես և մյուս հավատարիմ հպատակներին (120)։

Աղավաղելով իրական փաստերը, նա գրում էր, թե Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթներում հայերի թիվը կազմում էր բնակչության 17 տոկոսը (151, էջ 94)։ Կեղծիքը և սուտը դառնում էին սուլթանական կառավարության զինանոցի հիմնական զենքը։ Համիդն ու նրա գործակիցներն այնպիսի դիրք ու խոսելաձև էին որդեգրում, որ կարծես թե իրենք դարձել էին «անարդարացի նախապաշար-

մունքների և սուր զրպարտության զոհ» (151, էջ 95)։ Իրականում ռեֆորմներ ձեռնարկելու ուղղությամբ ոչինչ չէր արված։

Երբ տերությունների նոտայի (1880 թ. հունիսի 11) պատասխանը ստացվեց Կ. Պոլսից, լորդ Գրենվիլը նրա կրկնօրինակները հղեց Փոքր Ասիայի բրիտանական հյուպատոսներին։ Վերջիններիս պատասխաններն այդ հարցումին հրապարակվեցին Կապույտ գրքում։ Դրանք բոլորն էլ քննադատում էին սուլթանական կառավարության գործունեությունը։ Գրինը խոստովանում է, որ «այդ ամբողջ գրագրությունը ձևական բան էր», քանի որ Բիսմարկն ընդդիմանում էր անգլիական քաղաքականության ակտիվությանը, «հայտարարելով, թե «հայկական հարցի գրգռումը կուղեկցվեր լուրջ բարդացումներով» (148, էջ 274—275)։

1880 թվականի սեպտեմբերի 11-ին մեծ տերությունները նոր նոտա հղեցին Բարձր Դռանը։ Այն ստորագրել էին Գացֆելդը, Դոտենը, Տիսսոն, Նովիկովը, Կորտին, Կալիչեն։ Այնտեղ հերքվում էին սուլթանի կառավարության ստերը, ցույց էր տրվում հայերի դրության իրական պատկերը։ Բնակչության թվի վերաբերյալ կազմվել էր հատուկ աղյուսակ, ըստ որի՝ Էրզրումում, Վանում, Մուշում, Բիթլիսում, Սվասում, Խարբերդում, Դիարբեքիրում և Հալեպում բնակչությունն ուներ հետևյալ պատկերը. 780.800 հայ, 320.000 թուրք, 254 հազար այլ քրիստոնյաներ, 380 հազար քոչվորներ՝ ընդամենը 1.831.300 մարդ (151, էջ 104)։

1880 թվականի հոկտեմբերի 3-ին իր պատասխան նոտայում սուլթան Համիդը շրջանցում էր տերությունների հիմնական հարցադրումները և նոր խոստումներ էր տալիս այն մասին, թե ինչ է մտադիր անելու առաջիկայում։ Ըստ այդ պատասխանի՝ ռեֆորմներն իրականացնելուն խանգարել էր ժամանակի սղությունը, իսկ այժմ խոստանում էր վերակառուցել դատական սիստեմը, Էրզրումում, Վանում, Բիթլիսում, Դիարբեքիրում երեք ամսվա ընթացքում ստեղծել ոստիկանություն և ժանդարմերիա, կարգավորել հարկահանության գործը և այլն։ Միաժամանակ նոտան հասկանալ էր տալիս տերություններին, որ 61-րդ հոդվածի իրականացումը կատարվելու էր իր հայեցողությամբ (151, էջ 104—106)։

Բանակցությունները ոչինչ չէին տալիս։ Չկար ոչ մի առաջխաղացում։ «Զգձգմանը հաջորդում էր նոր ձգձգում, խոստմանը նոր խոստում»,— գրում էր Բրայսը։ Սա հենց այն պահին էր, երբ անգլիական դաղութարարները Եգիպտոսի շուրջն էին պտտվում։ Լոնդոնի համար գլխավորն այն էր, թե որքան էֆեկտիվ կլիներ Կ. Պոլսի վրա իր ձեռնարկած ճնշման արդյունավետությունը։ Այս ամենը, որոշ ընդմիջումներով, տևեց երեք տարի։ Երբ Անգլիան Եգիպտոսում հասավ իր նպատակին, տակտիկան նորից փոխվեց։ Բրայսը մեղադրում է Բիսմարկին, բայց փորձում է արդարացնել Անգլիային։ Նա ծուռ հայելու մեջ է ներկայացնում կատարվածը։ Ըստ նրա՝ Եգիպտոսի օկուպացիան խանգարեց հայկական հարցի բարեհաջող լուծմանը, փոխանակ խոստովանելու, որ հայկական հարցի արծարծումը անգլիական դիվանագետներին պետք էր՝ Եգիպտոսի զավթումը դյուրացնելու համար։ Նա եզրակացնում է, որ այս ձախողումը վերջ դրեց «եվրոպական կոնցերտի» միջոցով ռեֆորմներն իրականացնելու հույսին (182, էջ 454—455)։

Ամփոփելով Բեռլինի կոնգրեսից հետո հայկական հարցում տերությունների գրաված դիրքի վերլուծությունը, Ռոլեն Ժերմենը եզրակացնում է, որ, այսպիսով, «ամեն ինչ սահմանափակվեց միայն դիվանագիտական կատակերգությամբ» (151, էջ 109)։

1881 թվականի սկզբին անգլիական դեսպանը Կ. Պոլսի հայոց պատրիարքին հայտարարեց, թե «Անգլիայի կառավարությունը հայկական խնդրի համար չի կարող սուլթանի դեմ զենքի դիմել» (72, 1907, № 154)։ Ամեն ինչ շարունակվելու էր առաջվա նման։ Վանում Ֆրանսիայի փոխհյուպատոս Պիեռ դը Ֆրանսը չափազանց բացորոշ ասում էր. «Ձեր պատրիարքների և առաջնորդների բողոքներով կամ նպաստավոր հայտարարություններով չէ, որ Եվրոպան գծում է իր քաղաքականությունը Ձեր խնդրի վերաբերյալ։ Եվրոպան իր հյուպատոսների միջոցով բոլոր իրադարձություններին քաջատեղյակ է, սակայն ուզած պահին է խնդիրը մեջտեղ բերում և հակառակ պարագային էլ թույլ տալիս, որ թուրքերն ուզածն անեն (22, էջ 180)։

1880 թվականի հուլիսի 31-ին Հակոբ Պարոնյանը «Հոսսոսի ձեռատետրում» ծաղրում էր մեծ տերությունների հակաթուրքական գործողությունների առարկայազուրկ լինելը։ «Եվ որովհետև նավային ցույցին զորությունը լոկ բարոյական է,— գրում էր նա,— կառաջարկեմ որ վեց տերությունները պարապ տեղը մեծ ծախքերու չենթարկվին՝ իրենց զրահավորները Թուրքիա զրկելով. հերիք է որ այդ զրահավորներուն պատկերները քաշել տան և շրջանակի մը մեջ անցանելով զրկեն մեզի, որ Բ. Դռան մեջ պատե մը կախենք» (68, հ. IV, էջ 82)։

«Արձագանք»-ը դժգոհում էր, որ թուրքահայ խնդրի արծարծման պահին Անգլիան ավելի շատ զբաղված էր աֆրիկյան գործերով (Արաբի փաշայի ապստամբությունը Եգիպտոսում և Մահդիի ապստամբությունը Սուդանում)։ Թերթը դժգոհում էր, որ Բարձր Դուռը ոչինչ չէր անում Թուրքահայաստանը ուսումնասիրելու, վիճակագրություն պատրաստելու և բարենորոգումների ծրագիր կազմելու ուղղությամբ։ Իսկ ներսես պատրիարքի բողոքներին սուլթանական իշխանությունները ոչ մի ուշադրություն չէին դարձնում։ Թերթը եզրակացնում էր, որ Անգլիան «յուր ցանկացած զիջումն ձեռք բերելուց հետո (Թուրքիայից) դարձյալ լռում էր» (9, 1884, № 12)։ Իսկ Արևմտյան Հայաստանում ավազակների գազանությունները և հափշտակությունները կրկնապատկվել էին, հրդեհը, սովը, ավարառությունը հաջորդում էին միմյանց, անասելի վնասներ պատճառելով հայ զանգվածներին։ Բնորոշ է գերմանացի մի հեղինակի դիպուկ նկատանքը Լայպցիգի մի շաբաթաթերթի էջերում տպագրած «Տաճկահայ հարցը» հոդվածում այն մասին, թե «Կ. Պոլսում ապրող հայ մեծ սեղանավորները հայրենի նահանգներից լսվող գանգատների համար լսելիք չունեն» (9, 1884, № 12)։

Եգիպտոսի կորուստը սրեց անգլո-թուրքական հարաբերությունները և, հետևապես (Նելիդովի կարծիքով), հող ստեղծեց ռուս-թուրքական «բարեկամության» համար։ Ռուսական դեսպանը չէր բացառում Եգիպտոսի զավթումը ռուսական կառավարության կողմից ճանաչելու դիմաց սևծովյան նեղուցները ստանալու հնարավորությունը՝ նույն Անգլիայի համաձայնությամբ։ Թուրքիայի տերիտորիալ կորուստները (Կիպրոս, Բոսնիա, Թունիս, Թեսալիա, Եգիպտոս) թվում էր, թե Օսմանյան կայսրության փլուզումը մոտալուտ բան էին դարձնում։ Սա էր պատճառը, որ Նելիդովը շտապում էր կազմել նեղուցների մասին իր զեկուցագիրը (1882 թվական)։ Ալեքսանդր III-ը զեկուցագրի վրա մակագրել էր. «Տա աստված, որ մենք ապրեինք մինչև այդ ուրախալի պահը» (169, էջ 182)։

Էնգելսը նշում է, որ անգլո-թուրքական հարաբերություններում լարվածությունն ուժեղացավ այն պահին, երբ «համընդհանուր խաղաղության պայմաններում» Անգլիան զավթեց Եգիպտոսը։ Դա «բացառում էր դաշինքի հնարավորությունը թուրքերի և անգլիացիների միջև, որոնք կողոպտել էին Թուրքիան, նվաճել թուրքական տիրույթը՝ Եգիպտոսը» (1, հ. XVI, մ. I, էջ 261)։ Դրանով իսկ ավելի էր խորանում թուրքական քաղաքականության գերմանական կողմնորոշումը։ 1883 թվականին Կ. Պոլիս ժամանեց ֆոն Դեր-Գոլցի զինվորական միսիան։ Միաժամանակ, ինչպես նկատում է Գ. Ա. Դիլը, 80-ական թվականների երկրորդ կեսին, Եգիպտոսը զավթելու շնորհիվ, անգլիացիների հետաքրքրությունը հայկական հարցի նկատմամբ ընկնում է, և հանդես է գալիս Դռան բարյացակամությունը շահելու ձգտումը։ Սա էր պատճառը, որ «Կապույտ գիրքը» դադարեց հրատարակել այն փաստաթղթերը, որոնք վերաբերում էին Հայաստանում գործերի վիճակին (120, էջ 419)։

Նորից անգլիական արտաքին քաղաքականությունն իրականացնում էր Սոլսբերին, որը՝ հավատարիմ հավասարակշռության իր տեսությանը, հենվելով Մեծ Բրիտանիայի արդյունաբերական հեգեմոնիայի և ծովային հզորության վրա, նվաճողական լայն ծրագիր էր իրականացնում։

Դիպուկ է ասել Վ. Ի. Լենինը. «Մենք կդադարենք մարքսիստ լինելուց, կդադարենք ընդհանրապես սոցիալիստ լինելուց, եթե սահմանափակվենք բարեհոգի ընդհանուր ֆրազների բարության քրիստոնեական, այսպես ասած, հայեցությամբ, չբացահայտելով նրանց քաղաքական իսկական նշանակությունը։ Մի՞թե մենք միշտ էլ չենք տեսնում, որ բոլոր իմպերիալիստական տերությունների դիվանագիտությունը պարծենում է ամենագեղեցկահոգի «ընդհանուր»

ֆրազներով և «դեմոկրատական» հայտարարություններով, այդպիսով ֆողարկելով փոքր ժողովուրդների կողոպտումը, բռնաբարումն ու խեղդումը» (2, հ. 23, էջ 234)։

Էլիզե Ռըկլյուն բացականչում էր. «Աշխարհի վրա կա՞ արդյոք մի վայր, որի անունը կարողանա մեզ ավելի հուզել, քան «Հայաստան» անունը»։ Նա եվրոպական կառավարողներին անվանում էր «դավաճաններ, վախկոտներ, կեղծավորներ», որոնք հայերին ուղարկում էին մահից ստրկություն, ստրկությունից մահ (24, էջ 25)։ Բրյուսելի համալսարանի պրոֆ. Պոլ Էրբերան՝ միջազգային իրավունքի ճանաչված մասնագետը, գրում է, որ «հայերը Բեռլինի դաշնագրով ամբողջ Եվրոպայի պաշտպանյալներն էին։ Եվ ամբողջ Եվրոպան նրանց լքեց» (24, էջ 27)։

«Կոտորած, հետո ռեֆորմների մասին խոստումներ, հետո խոստումների չկատարում։ Հետո նորից կոտորած, նորից խոստումներ, նորից խոստումների չկատարում... Այսպիսին է Թուրքական բարենորոգումների պատմությունը, որը շարունակվում է մինչև այսօր։ Ինչո՞ւ դա հենց այդպես է, ինչո՞ւ տերությունները չեն պնդում ավելի հետևողականորեն այն բանի վրա, որպեսզի Թուրքիան կատարի իր խոստումները։ Որովհետև դա իրենց առայժմ ձեռնտու չէ։ Եվրոպայի բուրժուական կառավարությունները գտնում են, որ Թուրքիայի բաժանման պահը դեռ չի հասել։ Եվ դրա համար ամեն անգամ, երբ Հայաստանը և Մակեդոնիան բարձրանում են ճնշման դեմ, երբ «մեռնող» Թուրքիային սկսում է սպառնալ բաժանման վտանգը, եվրոպական դիվանագետները խաղաղեցնում և խեղդում են ազատագրական շարժումը սուլթանի ձեռքերով, և ապա հայտարարում են բարենորոգումներ կիրառելու մասին եվրոպական ժանդարմերիայի հսկողության տակ» (149, էջ 250)։

61-րդ հոդվածը մեռյալ տառ էր մնում։ Սուլթանի կառավարությունը երբեք տերություններին չհաղորդեց որևէ տեղեկություն պայմանագրային պարտավորությունների կատարման մասին այն պարզ պատճառով, որ ոչ մի միջոց չէր ձեռնարկել։ Եվ տերություններն էլ հաշտվեցին Բ. Դուան նման խափանարար կեցվածքի հետ։ «Այդ չափազանց խայտառակ փաստի համար գլխավորապես և բոլորից առավել պատասխանատու էր Անգլիան» (86, էջ 195)։

Տասնյոթ տարի շարունակ, 1878 թվականից մինչև 1895 թվականը, գրում է Մակ-Կոլը, Անգլիան «մատը չշարժեց նրանց (իմա՝ հայերին) օգնելու համար»։ Եթե անգլո-թուրքական կոնվենցիան և Բեռլինի պայմանագիրը կնքել էր պահպանողական կառավարությունը, ապա լիբերալ կուսակցության կառավարությունը նույնպես ոչինչ չարեց իր ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ։

* * *

Արևմտաեվրոպական դիվանագիտությունը հայ ժողովրդին ոչինչ չտվեց։ Նրան սոցիալական և ազգային ազատություն բերեց հին աշխարհի դեմ ռուսաստանյան հեղափոխական պրոլետարիատի հաղթական պայքարը։

XIX դարի 80—90-ական թվականներին, ապա՝ XX դարի սկզբին արևմտահայության դրությունն ավելի ողբերգական դարձավ։ Թուրքական կառավարողները զանգվածային կոտորածների քաղաքականություն կիրառեցին։

Այդ տասնամյակներին հայ ժողովրդի քաղաքական ճակատագրում դիվանագիտության խաղացած դերին մենք կանդրադառնանք հետագա հրապարակումներում։

ՑՈՒՑԱԿ

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. К. Маркс и Ф. Энгельс, Соч., I изд., М.
2. Վ. Ի. Լենին, *Երկեր, 4-րդ հրատ., Երևան։*
3. Ադոնց Ն., *Մեծ եղեռնի տարելիցին, «Հայրենիք», 1928, № 8 (68)։*
4. *«Ազատամարտ», Կ. Պոլիս։*
5. Ալպոյանցյան Ա., *«Մ. Ջերազ», Կահիրե, 1927։*
6. Աղանյան Գ. *քահ., Դիվան հայոց պատմության, ԺԳ հատոր։*
7. *«Անահիտ», Փարիզ։*
8. *«Արմենիա», Մարսել։*
9. *«Արձագանգ», Թիֆլիս։*
10. *Ատենագրություններ ազգային ժողովս, Կ. Պոլիս։*
11. Ատրպետ, *50-ամյակ ոսկյա հոբելյան հայ հեղափոխության, 1878—1928, Լենինական, 1927։*
12. Արփիարյան Ա., *«Մկրտիչ Փորթուգալյան», «Նոր կյանք», Գ տարի, թիվ 17, 1.9.1900։*
13. Բերբերյան Ռ., *Երկու դարերի շեմքին, «Հայրենիք» ամսագիր, № 2, (206), 1939։*
14. Բեռնշտայն էդ., *Հայկական տանջանքները և Եվրոպան, դասախոսություն կարդացված Բեռլինում, 1902 թ. հունիի 26-ին, ժնև, 1906։*
15. Բրանդես Գ., *Հայաստանը և Եվրոպան, ժնև, 1907։*
16. Գարիկյան Խ., *Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ (1860—1880), Բեյրութ, 1962։*
17. Գարբիելյան Ս. Մ., *Հայկական ճգնաժամն և վերածնություն, Բոստոն, 1909։*
18. Գարբիելյան Ս. Մ., *«Հայ ցեղը», ազգային ատենախոսություններ, Նյու-Յորք, 1911։*

19. Գրական-գիտական ժողովածու, *Թիֆլիս, 1908։*
20. Գյուզալյան Գ., *Պատմական խնդիրներ, Մ. Փորթուգալյան, Բեյրութ, 1973։*
21. *«Դրոշակ», ժնև։*
22. Երամյան Հ., *Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1929։*
23. Երիցյան Ա., *Մի երես Կարնո նորագույն պատմությունից, «Փորձ», № 1, 1879։*
24. *Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին, ժնև, 1907։*
25. Թյուրունջիև Մ. Ս., *Ազատություն Բուլղարիո և կենսագրություն բուլղար ապստամբապետաց, Մարսել, 1888։*
26. Թոխմախյան Ա., *«Հայրենիքի պահանջներ և հայ գյուղացին», հրապարակախոսություն կատարված մայիսի 29-ին Արծրունու թատրոնում, Թիֆլիս, 1881։*
27. Թոփչյան Ե., *Երիտասարդ Թուրքիան և հայերը, 1909, Թիֆլիս։*
28. Թումայան Կ., *Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցի, Լոնդոն, 1905։*
29. Իզմիրլյան Կ., *Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկային, Բեյրութ, 1964։*
30. Լեո, *Հայոց հարցը, Թիֆլիս, 1906։*
31. Լեո, *Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915։*
32. Լեո, *«Գլազատոն», Թիֆլիս, 1899։*
33. Լեո, *«Գր. Արծրունի»։*
34. Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934։*
35. Լյուքսեմբուրգ Ռ., *Ազգային պայքարը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան, պրոֆ. Գ. Ղարիբջանյանի հրապարակումը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2։*
36. *Խնդիր միության հայոց, Փարիզ, 1864։*
37. Խրիմյան Հայրիկ, *Հայգույժ, աշխարհանք հայոց աշխարհին, Կ. Պոլիս, 1877։*
38. Խրիմյան Հայրիկ, *Հրավիրակ երկրին ավետյաց, Երուսաղեմ, 1892։*
39. Խրիմյան Հայրիկ, *Վանգույժ, «Փորձ», 1877—1878, № 2։*
40. Մերենց, *Լուսինյան տոհմի մասին, «Փորձ», 1878, № 10։*
41. Կեսար Ա., *Հայկական հարցը 19-րդ դարուն, «Վեմ», ԻԴ, 1938, № 4։*
42. Կրիմսկի Ա., *Մահմեդական աշխարհն ու նրա ապագան, Վաղարշապատ, 1906։*
43. Կոստանյան Կ., *Հայագիտությունն Արևմտյան Եվրոպայում, Թիֆլիս, 1910։*
44. *Հայաստան ըստ Ռոհրբախի 1919-ի տեսության, Կ. Պոլիս, 1919։*
45. *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972։*
46. *Հայոց մամուլը Ռուսաստանում և Կովկասի մեջ, Թիֆլիս, 1878,*

47. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն։
48. Հովհաննիսյան Արզար, Հայը և Հայաստանը օտարների աչքում, Թիֆլիս, 1881։
49. Հովհաննիսյան Ռ. Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց կազմակերպությունը», Երևան, 1965։
50. Ղազարյան Հայկ, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967։
51. Մ. Ա., Թուրքիայի հայերն ու իրենց դրացիները, Մարսել, 1890։
52. Մար, Թուրքական բանտերը, ժնև, 1906։
53. «Մասիս», Կ. Պոլիս։
54. Մրմրյան Յ. Դ. Մ., Թուրքահայոց հին վաճառականությունն ու վաճառականք, 1740—1840, Կ. Պոլիս, 1908։
55. Մուշեղ Արքեպիսկոպոս, Հայկական մղձավանջը, Բոստոն, 1916։
56. Մուշեղ Արքեպիսկոպոս, Մանչեստրի հայ գաղութը, Բոստոն, 1911։
57. «Մշակ», Թիֆլիս։
58. «Մուրճ», Թիֆլիս։
59. Նաթանյան Պ., Արտոսր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուս, Քարբերդի, Զարսանճագի, Ճապաղչուրի և Երզնկայի, Կ. Պոլիս։
60. Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, Երևան։
61. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ, 1850—1870, Երևան, 1955։
62. «Նոր կյանք», Լոնդոն։
63. Նուբար փաշա, Մեկ քանի նոթեր Հայաստանի վարչության մեջ մրցցրվելիք բարենորոգմանց մասին, «Անահիտ», 1899, № 5—6, մարտ-ապրիլ։
64. Չերազ Մինաս, Թե ինչ շահեցանք Բեռլինի վեհաժողովեն, Կ. Պոլիս, 1878։
65. Չերազ Մինաս, Հայաստան և Իտալիա։
66. Չերազ Մինաս, Հայկական խնդիր, Վենետիկ, 1917։
67. Չոպանյան Ա., Դեմքեր, «Մկրտիչ Խրիմյան», Փարիզ, 1924։
68. Պարոնյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, Երևան։
69. Պատմություն արևելյան պատերազմին, հ. Ա, Կ. Պոլիս, 1879։
70. Պերդրան Էմիլ, «Նուբար փաշա—1825—1899», Կ. Պոլիս, 1910։
71. Պոնար Անտոնի Քրաֆիր, Հայկական խնդիրը, ժնև, 1927։
72. «Ռազմիկ», Ֆիլիպպոլիս։
73. Սարուխան, Հայկական խնդիրն ու ազգային սահմանադրությունը Թուրքիայում, 1860—1910, Ա հատոր, Թիֆլիս, 1912։
74. Սերոբյան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937։
75. Սեան Ռ., Առաջին հայ հեղափոխական կինը (Թամար Ադամյան-Ներսիսյան), «Հայրենիք», 1936, № 4։
76. Վանանդեցի Մ. Ս., Վիկտորիա Անգլիո թագուհու Արշակունի հայ թագավորներև սերիը, Զմյուռնիա, 1866։
77. Վարդապետություն Հայաստանի ազատության, Մարսել, 1889։

78. Տեղեկագիրք գավառական հարստահարության, պաշտոնական հրատարակություն ազգային պատրիարքարանի, Կ. Պոլիս, 1876։
79. Փորթուգալյան Մ., «Արմենիա»-ի հուշարար, Ա տարեկան (1885—86), Մարսել, 1890։
80. «Փորձ», Թիֆլիս։
81. Օգանյան Գ., Հայապատում, հայուն պատմական դերը, Մարզվան, 1912։
82. Օտյան Գ., Սահմանադրական խոսքեր ու ճառեր-դամբանականներ, մահերուն առթիվ գրվածքներ, Կ. Պոլիս, 1910։
83. **Адамов Е.**, К вопросу об исторических перспективах развития восточного вопроса, сборник, «Колониальный восток», М., 1924.
84. **Амфитеатров А. В.**, Армянский вопрос, СПБ, 1906.
85. **Анучин А. С.**, Берлинский конгресс 1878, СПБ, 1912.
86. **Аргайльский**, герцог, «Ответственность Англии в восточном вопросе», факты и воспоминания за сорок лет, СПБ, 1908.
87. **Арцруни Г.**, Восточный вопрос, Тифлис, 1876.
88. **Арцруни Г.**, Экономическое положение турецких армян, М., 1880.
89. **Беляев М.**, Русско-турецкая война 1877—1878 гг., М., 1956.
90. **Бисмарк О.**, Мысли и воспоминания, т. 11, М., 1940.
91. **Бобриков**, В Царьграде в 1878—79 гг. «Русская старина». 1913, т. 153.
92. **Бобриков**, Воспоминания о берлинском конгрессе, «Русский вестник», 1889 г., XII, т. 205.
93. **Бобриков**, На Босфоре, «Русская старина», 1913, т. 154.
94. **Бондаревский Г. А.**, Багдадская дорога и проникновение германского империализма на Ближний Восток (1888—1903), Ташкент, 1955.
95. **Бороздин К.**, Последние Лузиняны, «Русский Вестник», 1891, кн. 1, 7, 9, 10.
96. **Борян Б. А.**, Армения, международная дипломатия и СССР, ч. I, М.—Л., 1928.
97. Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1897.
98. **Бушуев С. Б.**, Из истории внешнеполитических отношений в период присоединения Кавказа к России (20—70 гг. XIX в.), М., 1955.
99. **Бушуев С. Б.**, А. М. Горчаков, М., 1961.
100. **Вебер Георг**, Всеобщая история, перевод с немецкого, т. 15, часть II, М., 1893.
101. **Веселовский Ю.**, Трагедия турецкой Армении, М., 1917.
102. Вестник иностранной литературы, 1902, март.
103. Война 1877—1878 гг. в азиатской Турции, под редакцией ген. майора Зыкова, СПБ, 1882.
104. Война 1877—1878 гг. на Азиатском театре, СПБ, 1892.

105. Всемирная история, т. VII, М., 1960.
106. **Газенкампф М.**, Мой дневник 1877—1878 гг., СПБ, 1908.
107 **Г. Е.**, Восточный вопрос и условия мира с Турцией, Одесса, 1878.
108. **Гельферих Карл**, Накануне мировой войны, М., 1924.
109. Герцеговинское восстание и восточный вопрос, СПБ, 1876.
110. **Гиппиус А. И.**, Статистические таблицы вилайетов турецкой империи ближайших к Закавказью, Тифлис, 1889.
111. **Гирс А.**, Россия и Ближний Восток, СПБ, 1906.
112. **Гладстон**, Болгарские ужасы и восточный вопрос.
113. **Глинка С.**, Описание переселения армян, М., 1831.
114. **Горяинов С.**, Босфор и Дарданеллы, СПБ, 1907.
115. **Градовский Г .К.**, Война в Малой Азии в 1877 году, СПБ, 1878.
116. **Градовский Г. К.**, Из военных событий в Малой Азии, итоги (1862—1907). Историко-политические очерки и статьи. Киев, 1908.
117. **Гутор М. Д.**, Новейшая история Турции и Персии (XVIII, XIX и XX столетия), Тифлис, 1913.
118. **Дебидур А.**, Дипломатическая история Европы, т. II, М., 1947.
119. **Джордж-Ллойд**, Правда о мирных договорах, т. II., М., 1957.
120. **Диев Г. А.**, Армянский вопрос в Турции. Положение армян в Турции до вмешательства держав, М., 1896.
121. **Диллон Эм.**, Положение дел в турецкой Армении, Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896.
122. **Духовская В.**, Из дневника русской женщины в Эрзруме во время военного занятия его в 1878 г., СПБ, 1879.
123. Дипломатический словарь, т. I, II, М., 1950.
124. **Еремеев Д. Е.**, Этногенез турок, М., 1972.
125. **Жигарев С.**, Русская политика в восточном вопросе, историко-юридические очерки, М., 1896.
126. **Жирарден Э.**, Позор Европы (La Honte del' Europe), перевод с французского, СПБ, 1877.
127. **Залышкин М. М.**, Внешняя политика Румынии и румыно-русские отношения, 1875—1878 гг., М., 1974.
128. Зверства в Болгарии. Письма специального корреспондента «Daily News» Е. Д. Макгаана, СПБ, 1877.
129. **Игнатьев Н. П.**, После Сан-Стефано (записки), с примечаниями А. А. Башмакова, Петроград, 1916.
130. **Игнатьев Н. П.**, Сан-Стефано, «Исторический вестник», 1915, т. 139 (№ 2, 3), т. 140 (4, 5, 6).
131. **Иззет-фуад-паша**, генерал, упущенные благоприятные случаи..., перевод с турецкого, СПБ, 1907.

132. История дипломатии, т. II (автор тома В. М. Хвостов), М., 1963.
133. **Карцев Ю. С.**, За кулисами дипломатии, СПБ, 1908.
134. **Кишмишев С. О.**, Война в турецкой Армении 1877—1878, СПБ, 1884.
135. **Кравченко Н. Н.**, Очерки из истории международных отношений конца XIX века и начала XX века. Берлинский конгресс 1878, Саратов, 1925.
136. «Красный архив», М.
137. **Лемонен Э.**, Очерк истории англо-французских отношений, перевод с французского, с предисловием Ф. Ротштейна, М., 1923.
138. **Мартенс Ф. Ф.**, Восточная война и Брюсельская конференция, 1874—1878, СПБ, 1879.
139. **Мартенс Ф. Ф.**, Современное международное право цивилизованных народов т. II.
140. **Мегрелидзе Ш. В.**, Вопросы Закавказья в истории русско-турецкой войны 1877—1878, Тбилиси, 1969.
141. **Молчанов А.**, Между миром и конгрессом. Письма в «Новое время» корреспондента из Константинополя, СПБ, 1878.
142. **Муратов Х.**, Роль Англии в «восточном кризисе» (английская дипломатия и русско-турецкая война 1877—1878), «Историк-марксист», 1940, № 7.
143. Национальные процессы в странах Ближнего Востока и Среднего Востока, сборник, М., 1970.
144. «Новое время», СПБ.
145. **Овсянин Н.**, Болгария и болгары, СПБ, 1900.
146. **Петросян Ю. А.**, Младотурецкое движение (вторая половина XIX—начало XX вв.), М., 1971.
147. **Покровский М.**, Внешняя политика, Сборник статей (1914—1917), Восточный вопрос от Парижского мира до Берлинского конгресса. М., 1918.
148. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г. (речь Гладстона, статьи Ролен-Жекмена, Мак-Коля, Грина, Диллона, Диева и др.). Предисловие проф. Л. А. Комаровского, М., 1896.
149. **Реклю Элизе**, Турция и восточный вопрос. Балканские государства, перевод с французского, СПБ, 1906.
150. **Реутов Г.**, Из истории захвата Кипра Англией, «Вопросы истории», 1958, № 3.
151. **Ролен-Жекмен М. Г.**, Армения, армяне и трактаты, перевод с французского, 1887. Положение армян в Турции до вмешательства держав в 1895, СПБ, 1896.

152. **Ротштейн Ф. А.**, Международные отношения в конце XIX века, М.—Л., 1960.
153. «Русская старина», СПБ.
154. «Русский вестник», СПБ.
155. **Саркисян Е. К.**, Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв. Изд. АН Арм. ССР, Ереван, 1972.
156. Сборник турецких документов о последней войне. Составитель Ахмед-Мидхат Эфенди, перевод с турецкого, СПБ, 1879.
157. **Сигрист С.**, У порога великой войны. Балканы—как очаг европейских столкновений. Петроград, 1924.
158. **Синклер Т.**, Восточный вопрос, перевод с английского, СПБ, 1878.
159. **Скалковский К.**, Внешняя политика России и политика иностранных держав, СПБ, 1897.
160. **Сказкин С. Д.**, Конец австро-германского союза, т. I, М., 1928.
161. **Скалон Д. А.**, Мои воспоминания 1877—1878, СПБ, 1913.
162. Современное армянское общество. Армяне Оттоманской империи, перевел с французского Б. Тер-Акопов, Тифлис, 1878.
163. **Татищев С. С.**, Дипломатические беседы о внешней политике России, год первый, 1889, СПБ, 1890.
164. **Татищев С. С.**, Из прошлого русской дипломатии, СПБ, 1890.
165. **Татищев С. С.**, Император Александр II. Жизнь и царствование, т. II, СПБ, 1903.
166. **Убичини А.**, Современное состояние Оттоманской империи. СПБ, 1877.
167. **Улунян А. А.**, Болгарский народ и русско-турецкая война, 1877—1878, М., 1971.
168. **Фадеева И. Е.**, К характеристике общественно-политических взглядов Ахмеда Мидхат-паши. Сборник «Арабские страны, Турция, Иран, Афганистан, История, Экономика» Изд. Наука, М., 1973.
169. **Хвостов В.** Записка А. И. Нелидова в 1882 г. о занятии проливов, «Красный архив», т. 3 (46), 1931.
170. **Чернов С. Л.**, К вопросу о Сан-Стефанском договоре 1878, «История СССР», 1975, № 6.
171. **Чихачев П. А.**, Великие державы и восточный вопрос, М, 1970.
172. **Шпаро О. Б.**, Захват Кипра Англией, М., 1974.
173. **Эсадзе С.**, Историческая записка об управлении Кавказом, т. II, Тифлис, 1907.
174. **Anderson M. S.**. The Great Powers and the Near East, 1774—1923. Documents of modern History, London, 1970.
175. Appel des musulmans opprimés au congrès de Berlin. Leur situation en Europe et en Asie depuis le traité de San-Stefano. Constantinople, 1878.

176. „Ararat", London.
177. Annuaire diplomatique de L'Empire de Russie, pour L'Année 1878, S.-Pétersbourg.
178. „Armenia". Boston.
179. Atrocités russes en Asie et en Roumélie pendant les mois de juin, juillet et août 1877, Constantinople, 1877.
180. **Berar V.**, La politique du Sultan, Paris, 1897.
181. Blue books, Accounts and papers. State papers, London, 1877—1878.
182. **Bryce J.**, Transcaucasia and Ararat, London, 1896.
183. **Burnaby F.**, On Horseback through Asia Minor, London 1874.
184. **Cecil, Lady Gwendolen**, Life of Robert, Marquis of Salisbury, volume 2, London, 1921—1931.
185. **Choublier, Max**, La Question d'Orient depuis le Traité de Berlin, Paris, 1899.
186. **Eversley L. and Chirol V.**, The Turkish Empire from 1288 to 1914, New York, 1969.
187. **Gladstone W. E.**, Bulgarian Horrors and the Question of the East, London, 1876.
188. **Fortnightly Review**, London.
189. **Hacobian A. P.**, Armenia and the War, London, 1917.
190. **Jelavich B.**, The Ottoman Empire, the Great Powers and the Straits Question. 1870—1887. Indiana University press. Bloomington, London, 1973.
191. La question d'Orient et les Arméniens. Londres, 1878.
192. La question arménienne par M. Francis de Pressancé. Revue des Deux Mondes. Tome Cent trente-deuxième, 3e livraison, 1er décembre 1895, Paris.
193. La question d'Orient et le Congrès de Berlin, Paris, 1878.
194. L'Angleterre et les Arméniens (1839—1904), S-Gravenhage, 1918.
195. **Lee E. Dwight**, Great Britain and the Cyprus Convention policy of 1878, Cambridge, 1934.
196. **Lerchenfeld A. S.**, Armenien Ein Bild Seiner Natur und Seiner Bewohner Iena. 1878.
197. Les Arméniens de Turquie, Rapports du Patriarche arménien de Constantinople à la Sublime Porte, Paris, 1877.
198. Les protocoles du Congrès de Berlin avec le traité préliminaire de San-Stefano du 19 fevrier (3 mars) 1878 et le traité de Berlin du 13 juillet 1878. Annuaire Diplomatique de L'Empire de Russie, pour l'Année 1878, S.-Pétersbourg, 1878.
199. **Mandelstam A.**, Le sort de l'Empire Ottoman; 1917.
200. **Medlicott W. N.**, Bismark and Beaconsfield. Studies in Diplomatic History and Historiography, New York, 1962.

201. **Medlicott W. N.**, The Congress of Berlin and after. A Diplomatic History of the Near Eastern settlement 1878—1880, London, 1938.
202. Mémoire sur la situation actuelle des arméniens et sur leur avenir, respectueusement transmis aux chancelleries des grandes puissances, Londres, 1876.
203. **Monyprenny W. F.** and **Buckle G. E.**, The Life of Disrael, volume 6.
204. Mémorial Diplomatique, Paris, 1877.
205. **Newton, Lord Lyons**, A Record of British Diplomacy, vol. 2, London, 1913.
206. „Nineteenth Century", 1878, september.
207. **Norman**, Armenia and the Campaign of 1877, London.
208. **Pasdermadjian H.**, Histoire de L'Arménie, Depuis les origines jasqu'au Traité de Lausanne, Paris, 1964.
209. **Pears, Edwin**, Turkey and its people, London, 1911.
210. **Pressancé, M. F.**, La question arménienne. Revue des Deux Mondes. Tome cent trent-deuxième, 3e livraison, 1er décembre 1895, Paris, p. 678—679.
211. **Probyn, J. W.**, Armenia and Lebanon. London, 1877.
212. Rapports sur l'oppression des arméniens en Arménie, Londres, 1877.
213. Russes et Turcs, La Guerre d'Orient. deuxième volume, Paris, 1878.
214. **Sarkissian A. O.**, History of the Armenian Question to 1885, the University of Illinois press Urbana, 1938.
215. **Sarkissian A. O.**, Concert Diplomacy and the Armenians, 1890—1897, Studies in Diplomatic History and Historiography, New York, 1962.
216. **Schem A. I.**, The Conflict between Russia and Turkey, London.
217. **Seton-Watson**, R. W. Disraeli, Gladstone and the Eastern Question. A study in Diplomacy and party politics, London, first edition, 1935, reprinted 1962.
218. **Seton-Watson**, Russo-British Relations during the Eastern Crisis, „Slavonic review", 1924—1926.
219. **Sevasly M.**, Armenia in and before 1878, Boston, 1905—1906.
220. **Temperly H. W. V.** and **Penson L. M.**, Foundations of British Foreign Policy from Pitt (1792) to Salisbury (1902), or documents old and new, Cambridge, 1938.
221. The Armenians and the Eastern question, London, 1878.
222. The Conference and the Armenians, London, 1878.
223. **William Charles**, The Armenian Campaign. A Diary of the Campaign of 1878 in Armenia and Koordistan, London, 1878.
224. **Wittlin Alma**, Abdul Hamid, The Shadow of God, London, 1940.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3

Գլուխ առաջին

Արևելյան Հարցը և Արևմտյան Հայաստանը 6

Գլուխ երկրորդ

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Սան-Ստեֆանոյի հաշտությունը 92

Գլուխ երրորդ

Դիվանագիտության մրցապայքարը Սան-Ստեֆանոյի հաշտությունից մինչև Բեռլինի կոնգրես 155

Գլուխ չորրորդ

Հայոց պատվիրակները Եվրոպայում և Պետերբուրգում . . . 196

Գլուխ հինգերորդ

Բեռլինի կոնգրեսը 256

Գլուխ վեցերորդ

Բեռլինի կոնգրեսից հետո 300

Ցուցակ հիմնական աղբյուրների և գրականության . . . 354

Կիրակոսյան Ջոն Սահակի

Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը

Киракосян Джон Саакович

Буржуазная дипломатия и Армения

(70-е годы XIX века)

(На армянском языке)

Издательство «Айастан»,

Ереван, 1978

Խմբագիր՝ Ա. Գ. Աղոյան
Հրատ. խմբագիր՝ Լ. Ս. Պողոսյան
Նկարիչ՝ Ս. Վ. Պողոսյան
Գեղ. խմբագիր՝ Մ. Մ. Բաղդասարյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Վ. Հովհաննիսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Զ. Կ. Աղասյան

ИБ 65

Հանձնված է արտադրության 31/X 1977 թ.։
Ստորագրված է տպագրության 3/III 1978 թ.։
Թուղթ տպագրական № 1, 84×108¹/₃₂, տպագր. 11,38 մամ.=19,11 տպագր. պայմ. մամ., հրատ. 16,66 մամ.։
Պատվեր 2405։ ՎՖ 08820։ Տպաքանակ 15 000։ Գինը՝ 1 ռ. 90 կոպ.։
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպարան, Երևան, Թումանյան փողոց № 23/1։

Типография № 6 Госкомитета Совета Министров Арм. ССР
по делам издательств, полиграфии и книжной торговли.
Ереван, ул. Туманяна, 23/1.